Ա. Վ. ԲԱՌԼԱՔՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

С. В. БОРНАЗЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ В КИЛИКИЙСКОМ АРМЯНСКОМ ГОСУДАРСТВЕ В XII—XIV ВЕКАХ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1973

9(47.925)
Բ-36

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Վ. ԲՈՐՆԱԶՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ XII—XIV ԴԱՐԵՐՈՒՄ

563

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1973

9 (С43) 1
Բ 36

Աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի պատմության զարգացած ֆեոդալիզմի շրջանին։ Մանրամասն լուսաբանված են Կիլիկյան Հայաստանի տնտեսական դրությունը և քաղաքային կյանքը, առևտուրն ու հարկային սիստեմը, ֆեոդալական հողատիրության ձևերը, գյուղացիության սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը, սասակարգային հարաբերությունները և պետական կարգի առանձնահատկությունները։ Աշխատության մեջ քննարկված են Կիլիկյան Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների էությունն ու առանձնահատկությունները։

Բ $\frac{0161-005}{703\ (02)-73}$ 21—70

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈՒՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ներկա ուսումնասիրության նպատակն է, առկա նյութերի հիման վրա, պարզաբանել Կիլիկյան հայկական պետության ներքին կյանքը, ֆեոդալական հարաբերությունների զարգացման ներքին և արտաքին գործոնները, քաղաքական-հասարակական կառուցվածքը, ֆեոդալական հողատիրության ձևերը, աշխատավոր ժողովրդի սոցիալ-տնտեսական և իրավական դրությունն ու նրա պայքարը ֆեոդալական իշխող դասակարգի դեմ։

Աշխատել ենք բացահայտել Կիլիկյան հայկական պետության ֆեոդալական կարգերի վրա ներգործող ներքին և արտաքին գործոնները և ապա ցույց ենք տվել, որ այդ հարաբերությունները հիմնականում կազմավորվել են հայկական ֆեոդալիզմի տրադիցիաներով։ Այնուհետև փաստերի հիման վրա ժխտել ենք մի շարք բուրժուական պատմաբանների այն կարծիքը, որ Կիլիկյան հայկական պետության ֆեոդալական կարգերում հիմնականում տիրապետելիս է եղել արևմտաեվրոպական էությամբ, այսպես կոչված՝ ֆրանկական ֆեոդալիզմը և մերժել ենք նրանց այն պնդումը, թե Կիլիկյան հայկական պետության ֆեոդալական հարաբերությունները սկիզբ են առել, զարգացել և ձևավորվել արևմտաեվրոպական կամ ֆրանկ պետությունների անմիջական ներգործությամբ[1]։

Չժխտելով հանդերձ ոչ միայն արևմտաեվրոպական, այլև բյուզանդական ու արաբական ֆեոդալիզմի ազդեցությունը, աշ-

---

[1] Ղ. Ալիշան, *Սիսուան, Վենետիկ, 1885 թ., էջ 441—480։ Այսուհետև Սիսուան։* *J. de Morgan,* Histoire du peuple arménien. 1919, Paris. *Ed. Dulaurier,* Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite Arménie „Journal Asiatique", 1861, 5-ème série t. XVII et VIII. *V. Langlois,* Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie. 1860, St. Pétersbourg. *Այսուհետև* V. Langlois, Essai.

խատել ենք ցույց տալ այդ ազդեցությունների աստիճանն ու բնույթը։ Այնուհետև ցույց ենք տվել այդ հարաբերություններում տեղական՝ հայկական ֆեոդալիզմի որոշիչ դերը՝ նրա հայկական էությունը։

Թեմայի ուսումնասիրության ժամանակաշրջանը ընդգրկում է 12—14-րդ դարերը, երբ հայ ժողովուրդը ապրում էր ֆեոդալական հարաբերությունների ամենազարգացած շրջանը։ Բուն Հայաստանում այս ժամանակաշրջանը բնորոշ է՝ հարավում սելջուկյան արշավանքներից հետո ստեղծված մահմեդական ամիրայությունների տիրապետության ու նրանց միջև ներքին հակամարտերի, իսկ հյուսիսում՝ Վրաստանի դերի բարձրացման և այդ պայմաններում Հայաստանում Զաքարյանների ֆեոդալական ինքնավար իշխանության ստեղծման ու զարգացման և ապա մոնղոլական աշխարհավեր արշավանքների ժամանակաշրջանը։ Կիլիկիայում և նրան հարևան Լևանտյան երկրներում, խաչակրաց արշավանքների և հետագայում Եգիպտոսի մամլուկների հզորացման, բյուզանդական տիրապետության անկման և Կիլիկիայում հայկական թագավորության ծագման և ստեղծման ժամանակաշրջանը։

Կիլիկիայի ֆեոդալական հարաբերությունների զարգացման միջավայրը լինելով բուն Հայաստանից դուրս, կրելով բյուզանդական և հատկապես ֆրանկ պետությունների ֆեոդալական հարաբերությունների ազդեցությունը, ունեցել է որոշ առանձնահատկություններ։ Ուստի, սույն աշխատության նպատակներից մեկն էլ հանդիսանում է այդ առանձնահատկությունների երևան բերելն ու պարզաբանելը։ Կարևոր նշանակություն ունի նաև հայկական պետականության զարգացման տեսակետից, Կիլիկիայի հայկական պետության վարչական կարգի, ասպետական ինստիտուտի և միջազգային իրավունքի՝ ուսումնասիրումը որպես հայ պետականության զարգացման մեջ հանդես եկած նոր երևույթներ։ Այս տեսակետից տեղին է նշել, որ մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ հայ ասպետականությունը, օրդենական հողատիրությունը, աշխատավոր մասսաների սոցիալ-տնտեսական վիճակն ու նրանց շահագործման ձևերը, տեղական կառավարումը, հողի սեփականության իրավունքի հարցը, բացարձակ միապետության զարգացման աստիճանը և մի շարք ուրիշ հարցեր, որ քիչ են ուսումնասիրված, կամ բոլորովին չեն լուսաբանվել մեր նախորդների կողմից, քննության են առնվել մեր ներկա աշխատության մեջ։ Գիտակցաբար բաց են թողնված կամ համարյա բաց են թողնված արտաքին, ներքին և տարանցիկ առևտրի հարցերը։ Նրանց մասին կխոսվի այնքանով, որքանով դրանք կառնչվեն մեր առաջ դրված հարցերի լուսաբանմանը։ Մեր կարծիքով, այդ հարցերը քիչ թե շատ ամբողջական կերպով լուսաբանված են մեր նախորդների՝ հատկապես Կիլիկիայի հայկական պետության պատմության մասնագետ սովետական պատմաբան Գ. Գ. Միքայելյանի կողմից[2]։

Քանի որ մեր աշխատության մեջ քննարկվող մի շարք հարցերով զբաղվել են նաև ուրիշները, անհրաժեշտ ենք համարում մի համառոտ ակնարկ դցել մեզ հետաքրքրող հարցերի ուսումնասիրության պատմության վրա։

Ուսումնասիրության ենթակա հարցերի մասին եղած աշխատությունները կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին խմբում են այն ուսումնասիրությունները, որոնք գրված են նախասովետական շրջանում և պատկանում են կղերական և բուրժուական պատմաբանների գրչին, իսկ երկրորդ խմբում՝ այն ուսումնասիրությունները, որոնք գրվել են սովետական ժամանակաշրջանում սովետական պատմաբանների կողմից։

Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական պատմությունը առաջին անգամ սիստեմատիկ ձևով շարադրել է 18-րդ դարի հայ խոշորագույն պատմաբան Մ. Չամչյանը[3]։ Իր աշխատության 3-րդ հատորում նա կանգ է առնում և պարզաբանում է Կիլիկյան Հայաստանի ներքին կյանքի մասին աղբյուրներում եղած սոցիալական տերմինները, նրանց լեզվական իմաստն ու նշանակությունը։ Խոսում է թագավորների, իշխանների՝ ազատների մասին, որպես հողատեր դասակարգի ներկայացուցիչներ։ Վկայակոչելով մատենագրական աղբյուրները և ձեռագրաց հիշատակարանները, նրանց առաջին անգամ դնում է շրջանառության մեջ։

Կիլիկիայի հայկական պետության քաղաքական ու սոցիալ-տնտեսական հարաբերություններին ու աշխարհագրությանը նվիրված առաջին լուրջ, ընդարձակածավալ ուսումնասիրություններով[4] հանդես է եկել 19-րդ դարի երկրորդ կեսի բազմավաստակ հայագետ Ղ. Ալիշանը։ Նա իր աշխատություններում առաջին անգամ

---

2 *Г. Микаелян*, История Киликийского Армянского государства, глава VI и IX, Ереван, 1952. *Այսուհետև՝ Г. Микаелян*, История.

3 Միքայել Չամչյան, *Պատմություն հայոց*, Վենետիկ, 1786։ Այսուհետև՝ Չամչյան։

4 Ղ. Ալիշան, *Հայ-Վենետ*, Վենետիկ, 1896։ Ղ. Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901։

շրջանառության մեջ է դրել պատմական՝ բազմալեզվյան անհամեմատ բազմաքանակ աղբյուրներ և վկայություններ։ Սակայն նա իր առաջ խնդիր չի դրել տալու Կիլիկիայի քաղաքական և տնտեսական պատմության սիստեմատիկ շարադրությունը։ Նա հատկապես ծանրացել է Լևոն Բ-ի ժամանակաշրջանի վրա, որով, ըստ նրա, սկսվում է Կիլիկիայի տնտեսական և կուլտուրական կյանքի զարգացումը[5]։

Ինչպես Ղ. Ալիշանը, այնպես էլ Մ. Օրմանյանը[6] թեև վկայակոչում են բազմաթիվ մատենագրական աղբյուրներ, հիշատակարաններ, փաստաթղթեր, սակայն փորձ չեն կատարում այդ տեղեկությունները վերլուծել, դասակարգել։ Նրանց արժեքավոր դիտողությունները հաճախ վերաբերում են սոսկ դասերին, պետական և վարչական պաշտոնյաների հաջորդական թվարկության և այլն, իսկ Կիլիկիայի հայկական թագավորության հասարակության մեջ գրված նրանց դերի, դիրքի, տերունական իրավունքների ու պարտականությունների, հողատիրության ձևերի ու հողային հարաբերությունների, տարբեր դասերի ու դասակարգերի սոցիալ-տնտեսական դրության հարցերը գրեթե անտեսել են։ Այդ պատմաբանները Կիլիկիան պատկերել են այնպիսի մի երկիր, որտեղ համերաշխել են հասարակական բոլոր խավերն ու դասերը։

Կիլիկիայի հայկական պետության քաղաքական և տնտեսական վիճակի պատմության մի շարք հարցերի լուսաբանմանը որոշ տեղ են տվել պատմաբաններ Նիկողայոս Ադոնցը[7], Կ. Բասմաջյանը[8], Ա. Ալպոյաճյանը[9], Հ. Հ. Ոսկյանը[10], Հ. Տեր-Ղազարյանը[11] և մի շարք այլ բանասեր-պատմաբաններ, որոնք աղբյուրագիտական և բանասիրական փոքրածավալ հոդվածներով հանդես են եկել «Բազմավեպի»[12] և «Հանդէս Ամսօրեայի»[13] էջերում։

Ն. Ադոնցի և Կ. Բասմաջյանի հետազոտությունները ավելի

5 Սիսուան, էջ 515։

6 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, Կ. Պոլիս, 1913, մասն Բ, Կ. Պոլիս, 1914։

7 N. Adonz, L'aïeul des Roubéniens (Byzantion t. X. Bruxelles, 1935).

8 Basmadjian K. Les Lusignans de Poitou au trône de la Petite Arménie (Journ. Asiatique, 10-ème série, t. VII).

9 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրե, 1937։

10 Հ. Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957։

11 Յ. Տէր Ղազարեան, Հայկական Կիլիկիա, տեղագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1966։

12 Տե՛ս «Բազմավէպ», 1840—1962 թթ. համարները։

13 «Հանդէս Ամսօրեայ», 1870—1961 թթ. համարները։

շատ վերաբերվում են Ռուբինյանների և «Լուսինյանների» քաղաքական պատմությանը, այն էլ ոչ ամբողջական ձևով։ Իսկ Ա. Ալպոյաճյանը «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» մեծածավալ երկհատոր աշխատության մեջ կանգ է առնում Կիլիկյան Հայաստանի ֆեոդալական սիստեմի վրա, այնքանով, որքանով դա առնչվում է Փոքր Ասիայի հայ ֆեոդալական կազմավորումների քաղաքական և տնտեսական հարցերի պարզաբանմանը[14]։

Հ. Հ. Ոսկյանը օգտվելով բազմաթիվ մատենագրական և ձեռագրական հիշատակարաններից և սկզբնաղբյուրներից, բավարարվում է միայն դրանց մեջբերումներով։ Այդ տեսակետից նրա աշխատությունը ավելի շատ սկզբնաղբյուրներից վերցված քաղվածքների ժողովածու է, քան ուսումնասիրություն։

Կիլիկյան Հայաստանի աշխարհագրության և քաղաքական համառոտ պատմության են նվիրված հալեպարնակ բժիշկ Հ. Տեր-Ղազարյանի «Հայկական Կիլիկիա Տեղագրություն» խորագիրը կրող հետաքրքիր աշխատությունը։ Թեև ժրաջան հեղինակը չի զբաղվում Կիլիկյան հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությամբ, սակայն անընդունելի է նրա այն միտքը, որ իբր թե «հիմնապես սխալ տեսություն մըն է Կիլիկյան հայկական թագավորությունը ֆեոդալական կազմակերպությամբ զինված կառավարություն» որակելը, և որ նրա կարծիքով «Կիլիկյան իշխաններն ու թագավորներն առաջին օրէն իսկ ունեցած են դիկտատորական վարչակարգ»[15]։

Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերություններին նվիրված մի շարք ուսումնասիրություններով[16] հանդես է եկել 19-րդ դարի ֆրանսիացի պատմաբան-արևելագետ, հայագետ Վ. Լանգլուան։ „Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie" աշխատության մեջ Վ. Լանգլուան հետազոտելով Կիլիկիայի ֆեոդալական կարգերն ու նրանց առաջացումը, հատկապես ուշադրություն է դարձրել արևմտաեվրոպական կամ Սիրիայի ֆրանկ խաչակիր պետությունների ֆեոդալիզմի ազդեցության հարցին, կանգ առնելով հատկապես Կիլիկիայի քաղաքական կառուցվածքի վրա, լուսա-

14 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրե, 1937, հ. 1, էջ 300—501։ Այսուհետև Ալպոյաճյան, Պատմություն։

15 Յ. Տէր-Ղազարեան, Հայկական Կիլիկիա, Տեղագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1966, էջ 234։

16 Տե՛ս գրականության ցանկը։

բանելով այն կտրված հասարակական և տնտեսական հիմքից։

Որպես բուրժուական պատմաբան, նա չի ուսումնասիրել Կիլիկիայի աշխատավորության իրավական և տնտեսական դրությունը։ Նրան չի հետաքրքրում գյուղացիների՝ ֆեոդալական շահագործման ձևերն ու դասակարգային պայքարը, ճորտերի ու ստրուկների սոցիալ-իրավական վիճակը։ Պատահական չէ, որ այդ հարցերին նա նվիրել է ընդամենը տաս տող[17]։

Անտեսելով ֆեոդալական հիերարխիայի դասակարգային էությունը և նրա հիմքում ընկած ֆեոդալական շահագործումը, նա պատմության թատերաբեմում գործող թագավորների և իշխանների փոխհարաբերությունները դիտում է որպես անձերի գրությունը բնորոշող երևույթ՝ լավագույն դեպքում, որպես սենյորի և վասալի փոխհարաբերություններ, այն էլ իրավական տեսանկյունով[18]։

Վ. Լանգլուան ֆեոդալիզմի ծագումն ու զարգացումը Կիլիկիայում վերագրում է Սիրիայի ֆրանկ պետությունների ազդեցությանը և Լևոն Բ-ի բարեփոխություններին։ Այսպես, նա գրում է. «Լևոն Բ-ը Կիլիկիայի իշխանությունը վերցնելով իր ձեռքը, ֆրանկների օրինակով, բարոններին դարձնում է բերդերի, ամրոցների, գավառների և գյուղերի սեփականատերեր ու ավատատերեր, ենթարկելով նրանց իր սյուզերենությամբ որպես վասալներ»։ «Սա,— ասում է Վ. Լանգլուան,— ֆեոդալական սիստեմի սկիզբն էր Կիլիկիայում»։ Լևոն Բ-ին նախորդող շրջանի՝ 11—12-րդ դարերի հույն և հայ ֆեոդալական իշխանությունների պայքարը նոր հողեր գրավելու համար, նա դիտում է իբրև հետևանք ընտանեկան նախանձի և անձնական մրցակցության[19] և որպես ոչ ֆեոդալիզմին բնորոշ երևույթ։

Անտեսելով այն մեծ փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել բուն Հայաստանի ֆեոդալական սիստեմում 4—11-րդ դարերում, նա Կիլիկիայի ֆեոդալական հարաբերությունների զարգացումը համարում է ընդօրինակություն խաչակիր պետությունների կարգերի, ուստի դրսից ներմուծված մի երևույթ, «...ինչպես դա կատարվեց, ասում է Վ. Լանգլուան,— Սիցիլիայում, Նորմանների նվաճման հետևանքով[20]։

---

17 V. *Langlois*, Essai historique et critique..., p. 46.

18 Նույն տեղում, էջ 45—47, 59—71։

19 Նույն տեղում։

20 V. *Langlois*, Essai historique..., p. 45.

Նա միաժամանակ չի ժխտում Կիլիկյան ֆեոդալական սիստեմի արևելյան դրոշմը, «որը չի անհետանում նույնիսկ Լուսինյանների ժամանակ՝ Սսի թագավորության անկման շրջանում»[21]։ Իր սխալներով հանդերձ պետք է նշել Վ. Լանգլուայի այն մեծ ծառայությունը, որ նա կատարել է հայագիտության ասպարեզում՝ Կիլիկիայի հայկական պետության քաղաքական և տնտեսական պատմությունն ուսումնասիրելու բնագավառում։ Նա ի մի է հավաքել Եվրոպայի բազմաթիվ երկրների արխիվներում ընկած հրատարակված և չհրատարակված փաստաթղթերը՝ թագավորական հրովարտակները, առևտրական շնորհագրերը, հողային նվիրատվությունները, դիվանագիտական նամակները, առևտրական և նոտարական ակտերը, Կիլիկիայի թագավորների և արևմտաեվրոպական երկրների թագավորների ու Հռոմի պապերի միջև եղած թղթակցություններն ու նամակները, որոնց թիվը հասնում է 351-ի[22]։ Դրանց մի մասը նա վերահրատարակել է հատուկ ժողովածուով[23]։ Այս փաստաթղթերը լույս են սփռում Կիլիկիայի ներքին կյանքին վերաբերող մի շարք հարցերի վրա, որոնց մասին զլացել են հաղորդել հայ մատենագիրները։

Կիլիկիայի հայկական ֆեոդալական հասարակության քաղաքական կառուցվածքին նվիրված իր ուսումնասիրություններով՝ հայտնի է նաև 19-րդ դարի ֆրանսիացի պատմաբան, արևելագետ-հայագետ Էդվարդ Դյուլորիեն[24]։

Ֆեոդալական հարաբերությունների ստեղծումը հատկապես ֆեոդալական հողատիրությանը արևմտաեվրոպական երանգավորում տալը, Դյուլորիեն բացարձակորեն վերագրում է Լևոն Բ-ի անձին։ «Անկասկած, — ասում է Էդ. Դյուլորիեն,— այս իշխանն է վարչա-քաղաքական և սոցիալական ռեֆորմների հեղինակը»[25], ընդ որում նա, այդ ռեֆորմների անհրաժեշտությունը բացատրում է ոչ թե երկրում մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ու իրավական հարաբերությունների զարգացմամբ և փոփոխմամբ, այլ Կիլիկիայի թագավորի, որպես

---

21 Նույն տեղում։ (Լուսինյանները դահակալել են ընդամենը մեկ և կես տարի։ Թոֆիգոն Լուսինյանը՝ 1343—1344 թ., իսկ Լևոն Զ-ն 1374—1375 թ.)։

22 V. *Langlois*, Essai hist. et critique, pp. 3—4 et pp. 27—36.

23 V. *Langlois*, Le trésor des chartes d'Arménie, Venise, 1863. Այսուհետև V. Langlois, Le trésor.

24 Տե՛ս գրականության ցանկը։

25 *Ed. Dulaurier*, Recueils des historiens des Croisades. Documents arméniens, t. I, p. LX. (Այսուհետև նշվելու է միայն — Documents arméniens), իսկ T. II-ը Documents latins.

երկրի սուվերենի և նրան ենթարկվող վասալ ֆեոդալների՝ ֆրանկներին նմանվելու հակվածությամբ և ցանկությամբ՝ մուսուլմանների սպառնալիքի առման առկայությամբ[26]։

Չժխտելով հանդերձ խաչակիրների կողմից Կիլիկիայի հայկական թագավորությանը հասցված չարիքն ու վնասները[27], Դյուլորիեն սակայն ընդառաջելով և արտահայտելով 19-րդ դարի ֆրանսիական գաղութարարության նվաճողական ձգտումները Մերձավոր Արևելքում՝ խաչակիրների արշավանքները դիտում և գնահատում է որպես «քաղաքակրթող միջոցառում», որին ըստ նրա «մեծ ցանկությամբ սպասում էին հայերը»[28]։

Իր մեթոդոլոգիական սխալներով հանդերձ է. Դյուլորիեն ևս մեծ ծառայություն է մատուցել հայագիտությանը ի մի բերելով և գիտական շրջանառության մեջ դնելով հայ մատենագիրների երկերի ձեռագրաց հիշատակարանների և ժամանակագրությունների համապատասխան նյութերն և Եվրոպայի մի շարք երկրների արխիվներում պահպանված վավերագրերն ու փաստաթղթերը, թեև նա այդ արել է խաչակիր արշավանքների և Սիրիայի խաչակիր ֆրանկ պետությունների պատմության ուսումնասիրության համար[29]։

Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման պատմության նկատմամբ սխալ մոտեցում է ցուցաբերում նաև ֆրանսիացի բուրժուական պատմաբան և հայագետ Ժակ դը-Մորգանն իր «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության մեջ։ Նա Կիլիկիայի հայկական պետության ֆեոդալական կարգերի զարգացումը դիտում է ստատիկ վիճակում, այն համարում է արևմտաեվրոպական ֆեոդալիզմի ազդեցության և հատկապես Լևոն Բ թագավորի անձնական նախաձեռնության արդյունք։ Թեև նա փաստերի ճնշման տակ ընդունում է Կիլիկիայի պետության «արևելյան ընդհանուր նկարագիրը»[30] (արևելյան ասելով, նա նկատի չունի հայկական ֆեոդալիզմի տրադիցիաները)։

---

26 Նույն տեղում։

27 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1957, գիրք 1-ին, էջ 58—59։

28 *Ed. Dulaurier*, Doc. arm. T. I, Introduction, p. LIII.

29 *Ed. Dulaurier*, Documents arm., T. I, Introduction.

30 Ժակ դը-Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, էջ 269—270։

Նույնպիսի սխալ մոտեցում է ցուցաբերել վերոհիշյալ հարցերին նաև ֆրանսիացի պատմաբան Տուռնեբիզը[31]։

Արժեքավոր և ուշագրավ են նաև Ց. Կարստի ուսումնասիրությունները[32] հայ իրավագիտության վերաբերյալ։ Սակայն մեզ անընդունելի է նրա հետևյալ եզրակացությունը, որ իբր թե ոչ թե Սմբատ Սպարապետն է կազմել հիշյալ Դատաստանագիրքը[33], այլ նա միայն թարգմանել է Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագիրքը»[34]։

Ռուբինյանների, Հեթումյանների և Լուսինյանների Կիլիկյան Հայաստանում իշխող թագավորական դինաստիաների ծագման, հայ և օտար թագավորական և իշխանական տների հետ նրանց ունեցած ազգակցական կապերին է նվիրված Ռուտ-Կոլենբերգի[35] Փարիզում լույս տեսած խիստ ուշագրավ աշխատությունը։ Թեև հեղինակը չի անդրադարձել մեզ հետաքրքրող հարցերին, սակայն նա շրջանառության մեջ է դրել արևմտյան Եվրոպայի արխիվներում, ձեռագրատներում ու թանգարաններում պահ դրված բազմաթիվ հին և նոր վավերագրեր, որոնք ունեն աղբյուրագիտական մեծ արժեք։

Կիլիկիայի հայկական պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության մշակումը, առաջին անգամ մարքսիստական գիտական հիմքերի վրա դրվեց, սովետական հետազոտող, պատմաբան դոկտոր պրոֆեսոր Գրիգոր Միքայելյանի կողմից, իր «Կիլիկիայի հայկական պետության պատմությունը» ռուսերեն ստվարածավալ աշխատությամբ[36]։ Այնտեղ օգտագործված են հայ և օտար ուսումնասիրողների աշխատությունները, հայ և օտար սկզբնաղբյուրները, հանգամանորեն և մանրամասնորեն շարադրված է Կիլիկիայի հայկական պետության ստեղծման ծաղկման ու անկման պատմությունը, նրա մասնակցությունը միջազգային առևտրին։ Արծարծված են Կիլիկիայի սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող հարցերը։ Գ. Միքայելյանը իր առաջ խնդիր չի դրել տալու այդ հարաբերու-

---

31 *Tournebize, F.*, Hist. politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

32 *Karst, J.*, Sempadscher Kodex, Strassburg, 1905.

33 Ա. Դալլայան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 110։

34 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880։

35 *W. H. Rüdt-Collenberg*, The Rupenides, Hethumides and Lusignans, Paris, 1963.

36 *Г. Микаелян*, История.

թյունների ամբողջական ուսումնասիրությունը։ Սույն աշխատության էջերում, մենք աշխատել ենք լուսաբանել սոցիալ-տնտեսական կյանքի այն խնդիրները, որոնք չեն քննարկվել ու լուսաբանվել Գ. Միքայելյանի աշխատության մեջ։

Կիլիկյան հայկական պետության միջազգային-քաղաքական հարաբերությունները, նրա և Սիրիայի խաչակիր ֆրանկ պետությունների կապերը, ունիթոռական և հակաունիթոռական հոսանքների պայքարը, այնքանով, որքանով դրանք առնչվում են հայ ազատագրական մտքի պատմության հարցերին, հանգամանորեն լուսաբանվել են սովետական բազմավաստակ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատոր ստվարածավալ աշխատության Ա գրքում[37]։

Կիլիկիայի հայկական թագավորության 13-րդ դարի իրավական նորմերի և աղբյուրների գիտական մշակմամբ հանդես է եկել սովետական պատմաբան Ա. Գալստյանը[38]։ Նա իր մի շարք աշխատություններում փաստերով մերժում է այն կարծիքը, որ իբր թե Սմբատի «Դատաստանագիրքը» Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» թարգմանությունն է։ Նրա կարծիքով Սմբատի Դատաստանագիրքը ինքնուրույն մի երկ է և արտացոլում է Կիլիկիայի հայկական պետության ներքին կյանքին վերաբերող և դասակարգերի իրավական վիճակն արտացոլող մի փաստաթուղթ և դրանով ցույց է տալիս, որ այդ Դատաստանագիրքը «արժեքավոր ներդրում է եղել միջնադարյան իրավագիտական մտքի զարգացման մեջ»[39]։

Բացի վերևում հիշատակված ուսումնասիրություններից, մեր առաջ դրված խնդիրների, հատկապես բուն Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները լուսաբանող ուսումնասիրություններ են գրել բազմաթիվ հայ պատմաբաններ, բանասերներ և իրավագետներ[40], որոնց՝ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ արտահայտած տեսակետներին կանդրադառնանք հետագա մեր շարադրանքի ընթացքում։

---

37 Աշոտ Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, Երևան, 1957, գիրք 1-ին։

38 *Смбат Спарапет*, Судебник, Составитель текста перев., предисловие и прим. А. Г. Галстян. *Այսուհետև տվյալ աշխատությունը կնշվի հայերեն՝ Դատաստանագիրք։*

39 Ա. Գալստյան, *Սմբատ Սպարապետ*, Երևան, 1961, էջ 2։

40 *Տե՛ս գրականության ցանկը։*

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մեր ուսումնասիրության համար, սկզբնաղբյուրներ են հանդիսացել, առաջին հերթին մեզ հասած մատենագրական աշխատությունները։ Այդ աղբյուրները իրենց ձևով ու բնույթով տարբեր են և բազմապիսի։ Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել հայ և օտար մատենագիրների, հատկապես պատմագիրների, ժամանակագիրների, աշխարհագիրների ու ճանապարհորդների երկերը, եկեղեցական պատվիրակների զեկուցումներն ու նամակները, կաթողիկոսական թղթերն ու կոնդակները, օրենսգրքերն ու կանոնագրքերը, քարոզներն ու առակները, գեղարվեստական երկերը, ձեռագրերի հիշատակարանները, վիմական արձանագրությունները, դրամներն և որ գլխավորն է թագավորական հրովարտակներն ու առևտրական շնորհագրերը, արքունական և իշխանական նվիրատվությունների փաստաթղթերն ու նոտարական ակտերը։

Հայկական աղբյուրներ, հայ մատենագիրներ

Կիլիկիայի հայկական պետության 11—14-րդ դարերի ներքին կյանքի մասին տեղեկություններ են հաղորդում այդ դարերի հայ պատմիչներ՝ Արիստակես Լաստիվերտցին, Մատթեոս Ուռհայեցին, Գրիգոր Երեցը, Սամուել Անեցին և նրա շարունակողը, Վարդան Բարձրբերդցին, Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Ակներցին (Մաղաքիա Աբեղան), Մխիթար Այրիվանեցին, Վահրամ Ռաբունին, Սմբատ Սպարապետը, Հեթում Պատմիչը և այլ հեղինակներ[41]։

Ինչ վերևում ասվեց ընդհանրապես աղբյուրների մասին, մասնավորապես վերաբերում է նաև հայ պատմիչներին։ Քանի որ նրանք քիչ թե շատ հայտնի են մեր պատմագրության մեջ, հարկ չենք համարում շարադրել նրանց երկերի բովանդակությունը։ Սակայն այստեղ պետք է նշել Սմբատ Սպարապետի վերջերս հրատարակված «Տարեգրքի» մասին[42], որը ուշագրավ գործերից է և կարոտ է հատուկ ուսումնասիրության։ Այս «Տարեգիրքը» կարևոր է նրանով, որ ժամանակագիրը մեզ հետաքրքրող դեպքերի ականատեսն է։ Լինելով արքունի տան անդամ, և Կիլիկիայի պետական բանակի սպարապետ, իրազեկ է եղել դեպքերին մոտիկից և ավելի հանգամանորեն է շարադրել, դրանց մասին, քան թե մյուսները։

---

41 *Տե՛ս սկզբնաղբյուրների ցանկը։*

42 «*Սմբատ Սպարապետի Տարեգիրք*», Վենետիկ, Ս. Ղազար, 1956 թ., *այսուհետև՝ Տարեգիրք։*

«Տարեգիրքը» առատ նյութ ունենալով երկրի քաղաքական կյանքի մասին, ժլատ է երկրի ներքին կյանքին վերաբերող հարցերի նկատմամբ։

Հիշատակարաններ

Սույն ուսումնասիրության համար հիմնական աղբյուրներ են եղել նշված դարերից մեզ հասած հայկական ձեռագրերի հիշատակարանները։ Հարցերի ընդգրկման իրենց բազմակողմանիությամբ և կոնկրետությամբ հիշատակարանները բացառիկ տեղ են գրավում Կիլիկյան Հայաստանի 14-րդ դարի պատմության ուսումնասիրության և լուսաբանման ասպարեզում, քանի որ այդ շրջանի վերաբերյալ մենք ունենք միայն Հովհան Դարդելի ժամանակագրությունը։ Որպես պատմական սկզբնաղբյուրներ, դրանց առավելությունն այն է, որ դրանց գրիչների մի զգալի մասը, ականատես է եղել նկարագրվող դեպքերին ու երևույթներին և տվել այդ դեպքերի ու իրադարձությունների համեմատաբար օբյեկտիվ գնահատականը։

ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջաբանում Լ. Խաչիկյանը միանգամայն ճիշտ է նշում, որ հիշատակարանները միջնադարյան կյանքի պատմության լուսաբանմանը նպաստող առաջնակարգ սկզբնաղբյուրներն են[43]։

Հիշատակարանները մեզ տալիս են անգնահատելի մանրամասնություններ դեպքերի, դեմքերի ու թվականների ներքին, մտավոր ու մշակութային կյանքի մասին, որոնք հաճախ անտեսվել են մեր պատմիչների կողմից։ Մեր ուսումնասիրության համար օգտագործել ենք մինչև այժմ լույս տեսած բոլոր հիշատակարանները, որոնք տպվել են առանձին ժողովածուներում[44], կամ թե լույս են տեսել՝ «Հանդէս Ամսօրեայ» և «Բազմավէպ» պարբերաթերթերի ու ամսագրերի էջերում[45]։

---

43 Լ. Ս. Խաչիկյան, *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950։*

44 Բ. Սարգիսյան, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց, Վենետիկ, հ. 1, 2. 1914—1924։* Տաշյան Հ., *Ցուցակ հայերեն ձեռագրաց, ի Վիեննա, 1895,* Գ. Հովսեփյանց, *Յիշատակարանք ձեռագրաց, Բեյրութ, հ. 1։ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950։*

45 *Տե՛ս հատկապես 1952—1962 թթ. համարները։ 1945—1955, 1956 թթ. «Հանդէս ամսօրեայ»-ում տպված՝* Հ. Ակինյանի *կողմից վերջերս հայտնաբերված ձեռագրերի հիշատակարանները, որոնք առաջին անգամ տպված են վերոհիշյալ*

Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում նաև Վ. Հակոբյանի կողմից հրատարակված «Մանր ժամանակագրություններ»-ը[46]։

Արձանագրություններ, դրամներ

Աշխատությունը շարադրելիս օգտագործել ենք նաև այն արձանագրությունները, որոնք գերազանցապես պահպանվել են գերեզմանաքարերի, բերդերի ու վանքերի պատերի և պարիսպների վրա։ Այդ արձանագրությունները թվով խիստ սահմանափակ են, որովհետև մամլուկների ավերիչ արշավանքների հետևանքով դրանց մեծ մասը ոչնչացվել են։ Այդ արձանագրությունները մեջ են բերված Ղևոնդ Ալիշանի[47] և Վ. Լանգլուայի[48] աշխատություններում։ Վերջինիս հավաքած արձանագրություններից ամենահինը 12-րդ դարի երկրորդ կեսի Անազարբայի բերդի մատուռի դրսի պատի, իսկ մյուսը՝ Նոր բերդի մեծ աշտարակի վրայի արձանագրություններն են։ Կիլիկիայի հայկական թագավորության ամենաուշ ժամանակաշրջանի արձանագրությունը, որը պահպանվել է, դա Տարսոնի եկեղեցու սև մարմարիոնի՝ 1319 թվակիր արձանագրությունն է։ Մյուս կարևոր արձանագրություններից է Տարսոնի ս. Մարիամ եկեղեցու՝ 1228 թվակիր արձանագրությունը[49], որտեղ հիշատակվում է Տարսոնի պարսպի վերականգնման մասին Հեթում Ա-ի (1226—1276) կողմից։

Կիլիկիայի հայկական պետության պետական կառուցվածքի և տնտեսական դրության որոշ հարցերի վրա լույս են սփռում այդ շրջանից մեզ հասած դրամները։ Կիլիկիայի հայկական դրամները, առաջին անգամ ուսումնասիրության առարկա է դարձրել 18-րդ դարի դրամագետ Սեստինին, որը փորձել է դասակարգման ենթարկել իր ձեռքի տակ ունեցած դրամները։ Կիլիկիայի հայկական դրամների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հայտնի ֆրանսիացի հայագետ Մ. Բրոսսեն՝ 1840 թ. և 1843 թ. Վենետիկում գերմանացի գիտնական Ալբրեխտ Գրաֆը։ Վերջինս նկարագրա-

---

համարներում, որոնք արժեքավոր տեղեկություններ են հաղորդում մեր ուսումնասիրած հարցերի մասին։

46 Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ., հ. 1, Երևան, 1951։*

47 *Սիսուան։*

48 *V. Langlois,* Le voyage dans la Cilicie, Paris, 1861, V. Langlois, Inscriptions grecques, romaines, byzantines et arméniennes de la Cilicie, Paris, 1861.

49 *«Հայաստան» ամսագիր, 1850, № 10։*

563

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կան մի հոդված է հրատարակել Կիլիկիայի 18 դրամների մասին[50]։ Այդ ժողովածուն (նմուշանք) հետագայում հարստանում է Վենետիկի Մխիթարյան Հայր Կլմենտ Սիպիլյանի հայտնաբերած 17 նոր դրամներով։ Վիկտոր Լանգլուան 1855 թվին Կիլիկիա կատարած իր ճանապարհորդությունից հետո ամփոփում է նախորդների եզրահանգումները իր ուսումնասիրությունում «Դրամները միջնադարյան Հայաստանում» արժեքավոր հետազոտության մեջ[51]։ Կիլիկիայի դրամների ուսումնասիրությամբ զբաղվում է Հարություն Քյուրտյանը։

Առակներ, քարոզներ, թղթեր, կոնդակներ

Մեր ուսումնասիրությանը բավականին նյութ են մատակարարել առակներն ու քարոզները[52], թղթերն ու կոնդակները[53]։

Քանի որ վերոհիշյալ սկզբնաղբյուրները[54] մեծ մասամբ հայտնի են, մենք կարիք չենք զգում կանգ առնել դրանց բոլորի վրա։ Սակայն քարոզներից մինչև այժմ բոլորովին ուսումնասիրության առարկա չի դարձել Վահրամ Ռաբունու «Բան» ճառը, որը 1271 թ. արտասանել է Լևոն Գ. թագավորի օծման առթիվ։ Ինչպես հայտնի է, Վահրամ Ռաբունին Հեթում Ա-ի և նրա հաջորդ Լևոն Գ-ի արքունիքում վարում էր ջանցլերի արքունի դիվանի՝ ատենադպիրի կամ քարտուղարի կարևոր գործակալությունը։ Վերոհիշյալ ճառը խիստ արժեքավոր է, մի կողմից՝ Վահրամ Ռաբունու քաղաքական, փիլիսոփայական և պատմագիտական հայացքների ուսումնասիրության և մյուս կողմից՝ Կիլիկիայի ֆեոդալական միապետական կարգերի մեջ ինքնակալության դերն ու նշանակությունը և զարգացման աստիճանը բացահայտելու համար։ Լինելով իշխող վերնախավի գաղափարախոսը, նա հանդես է գալիս որպես սահմանադրական միապետության ջատագով։

Ճառի առաջին մասը ձոն է՝ նվիրված Լևոն Գ թագավորի անձնական բարեմասնություններին, որից հետո նա հիմնավորում է Ռուբինյանների և Հեթումյանների իրավունքները արքայական ծիրանին կրելու, սերելով նրանց Բագրատունիներից։

Ճառի երկրորդ մասում խրատներ է տալիս նորընծա թագավորին և նշում է երեք գործոններ, որոնք կարող են հաստատ պահել թագավորությունը։ Ըստ նրա, այդ երեք գործոնները հետևյալներն են. «Առաջին այս, զոր գրեցաքս բարեպաշտութիւն հաւատոյ և ուղղութիւն գործոց, և երկրորդ՝ սեռական և հայրենեօք իրաւացի՝ ի նախնեաց ունել զթագաւորութիւն. և երրորդ իմաստութեամբ և խոհականությամբ վարել զնոյն»[55]։ Ապա առանձին-առանձին կանգ առնելով յուրաքանչյուր գործոնի վրա, ցույց է տալիս և հիմնավորում է Լևոն Բ թագավորի՝ թագավորության հաստատուն լինելու հիմքերն ու պատճառները։

Ճառի երրորդ մասում պատասխանելով այն հարցերին, «թե զի՞նչ է թագաւորութիւն. և ապա թէ ո՞վ է առաջին թագաւոր և թէ յորմէ հետէ. և կամ զիա՞րդ սկսաւ թագաւորութիւն ի մարդիկ և թէ զի՞նչ են կարգ և իրաւունք թագաւորին»[56]. զարգացնում է մի ամբողջ տեսություն՝ պետության ներքին և արտաքին քաղաքական դերի, պետության ծագման, նրա դասակարգային էության, պետության հպատակների թագավորին ենթարկվելու և վերջապես, դասակարգերի՝ դասերի և հոգևորականների յուրաքանչյուրի՝ պարտականությունների, իրավունքների և փոխհարաբերությունների մասին[57]։

Ուղղակի մատնացույց անելով պետության կամ թագավորության ներքին և արտաքին քաղաքականության ասպարեզում կատարած դերը, նա գրում է. «թագաւորութիւնն է ըստ ուղիղ բանին ի վերայ աշխարհի որ իւր է վիճակեալ և նմա բնակելոյն իշխել, արդարացի հարկս և իրաւունս ի նոցանէ առնուլ և զնոսին և հաստատութիւն պահել։ Արտաքին թշնամեացն քաջութեամբ պատերազմաւ

---

[50] Տե՛ս E. Dulaurier, Documents arméniens, Intr. p. V.

[51] V. Langlois, Numismatique de l'Arménie au moyen âge. Paris, 1855.

[52] Марр Н. Я., Сборники притч Вардана. ч. I, СПб., 1898. Մ. Աբեղյան, *Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ, Երևան, 1935։*

[53] Ներսես Շնորհալի, *Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865։*

[54] Ներսես Շնորհալի, *Նամականի, Վենետիկ, 1838։* Գրիգոր կաթողիկոսի *Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ, 1865։* Ներսիսի Լամբրոնացոյ *Առենաբանութիւնք, թուղթք և ճառք,* Ներսիսի Լամբրոնացոյ *Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ, Վենետիկ, 1847։* Ներսիսի Լամբրոնացոյ, *Թուղթ առ Լևոն, 1865, Վենետիկ։* Վահրամ վարդապետի ատենադպրի Լևոն արքայի, *Բան ի Յայտնութիւն տեառն և յօծումն Լևոնի Գ արքայի, Երուսաղէմ, 1875։*

[55] Վահրամ վարդապետի ատենադպրի Լևոն արքայի՝ *Բան ի Յայտնութիւն տեառն և յօծումն Լևոնի Գ արքայի, Երուսաղէմ, 1875, էջ 56—57։ Այսուհետև՝ Ռաբունի։*

[56] *Նույն տեղում, 21—22։*

[57] *Նույն տեղում։*

յաղթել և կամ հաշտութեան հնարիւք զխաղաղութիւն ողջունել»[58]։ Շարունակության մեջ հիմնավորում է թագավորության աստվածային լինելը։ Ըստ նրա՝ միապետությունը կարգ ու կանոնի ներկայացուցիչն է անկարգության մեջ[59]։

Իհարկե վերոհիշյալ միտքը իր ժամանակի համար առաջադիմական է, եթե նկատի ունենանք Կիլիկիայի 13-րդ դարի երկրորդ կեսի միջազգային իրադրությունը, երբ մի կողմից նա ենթարկվում էր մամլուկների հաճախակի կրկնվող ավերիչ արշավանքներին, և մյուս կողմից ներքին ֆեոդալական երկպառակությունները թուլացնում էին նրան։ Հայտնի է, որ 1266 թվականի Մառիի ճակատամարտում Հեթում Ա-ի կրած պարտության պատճառներից մեկն այն էր, որ նրա ֆեոդալներից շատերը դավաճանելով նրան չներկայացան ռազմի դաշտ և փակվեցին իրենց ամրոցներում[60]։

Վահրամ Ռաբունին սահմանելով թագավորի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ խրատում է նրան լինել արդարադատ։ Հիշեցնում է, որ սկզբում մարդիկ եղել են ազատ և իշխել են բնության վրա, որ սկզբում չեն եղել թագավորներ և իշխաններ, որ բնության վրա իշխելու իրավունքը մարդկանց շնորհել է աստված, որոնցից այդ իրավունքը վերցրել է նույն ինքը՝ աստված, որովհետև ասում է նա, մարդիկ սկսեցին իրար դեմ դավել և դավաճանել[61]։ Ըստ նրա պատմագիտական մտածողության, թագավորներից առաջ եղել են ցեղային առաջնորդներ, որոնք թագավորներ չեն անվանվել։ Այդ առաջնորդները, նրա կարծիքով սկսել են բռնանալ մեկը մյուսի դեմ, ինչպես օրինակ՝ Տիտանյան Բելը բռնացավ ուրիշների վրա։ Բռնության մեջ է տեսնում նաև Ասորեստանի թագավորության առաջացումը և նրանից Պարսից և Մարաց թագավորությունների սերելը, որոնք կործանվեցին Ալեքսանդր Մակեդոնացու կողմից՝ բռնությամբ։ Հետևաբար բռնությունը բնորոշ էր բոլոր իշխողների համար և ըստ նրան՝ բռնության մեջ է նրանց կործանման պատճառները[62]։ Նրա կարծիքով Իսրայելի թագավորությունը աստվածատուր է եղել։ Սակայն, որպեսզի արդարացնի ժողովրդի շահագործումը և հարկապահանջությունը թագավորի կողմից՝ նա Իսրայելի թագավորի օրինակով ցույց է տալիս, որ ժողովուրդը ինքն է պահանջել թագավոր աստծուց, ուստի և նա պետք է ենթարկվի նրան և չդժգոհի նրանից, քանի որ աստված նրանց զգուշացրել էր, որ թագավորը «զուստերս ձեր առցէ և արասցէ իւր կառավարս և զհեծեալս և սուրհանդակս և զօրականս, և մշակս, կթել զգութս իւր, հնձել զհունձս իւր, և զդստերս և ձեր յիւղեփեացս, հացարարս և խորտկարարս, զընտիր այգիս ձեր և զթղենիս առցէ և աղաղակեսջիք յերեսաց թագաւորին ծերոյ առ Տէր և ոչ լուիցէ ձեզ»[63]։ Իսկ ժողովուրդը նրան իբր թե պատասխանում է. «Զամենայն յանձինս կալցուք, միայն տուր մեզ թագաւոր»[64]։

Այստեղից էլ նա հորդորում է ժողովրդին լինել հլու հնազանդ հպատակներ, ծառայել թագավորին, քանի որ նա իշխում է ժողովրդի պահանջով։ Հաջորդ տողերում նա քարոզում է դասակարգային հաշտություն՝ իհարկե թագավորին դասելով դասակարգերից վեր և օժտված աստվածային իրավունքներով։ Այնուհետև նա թագավորներին բաժանում է բարի և չար թագավորների, ընդ որում նրա կարծիքով բարի են այն թագավորները, որոնք եղել են և շարունակում են լինել առատաձեռն եկեղեցիների և հոգևորականների նկատմամբ, հոգ տանելով վերջինների կարիքները։ Այս առթիվ նա գովաբանում է բյուզանդական կայսրեր Կոստանդիանոսին, Թեոդոսին և Հայոց թագավոր Տրդատին, որոնք հոգացել են հոգևորականների կարիքները առատաձեռնությամբ[65]։

Վահրամ Ռաբունին իր ժամանակաշրջանի համար առաջադիմական մտքեր է արտահայտում, երբ նա ծառանում է ավելորդապաշտության, աստեղագիտության և հմայողության դեմ անվանելով նրանց՝ անմտություն և հիմքից զուրկ գիտություններ։ Նա խիստ դեմ է ճակատագրին, որը մարդուն դատապարտում է անգործության. այսպես նա գրում է. «Նախ յաստեղագիտութենէ, և յայնպիսեացն հմայողաց, ոչ միայն անբարշտութիւն զայնպիսեացն զեգերմունս համարել, այլ և անմտութիւն յոյժ, քանզի թէ ըստ նոցուն ասացելոյն՝ ծնեալքն յաստեղս չարի և բարի գոն և ի նոցին հայեցողութենէ լինի աշխարհի լաւն և վատթարն. եթէ ամենայն ինչի ի հարկէն ըստ բախտի և ըստ ճակատագրին լինի, ապա ոչ գոյ անձնիշխանութիւն»[66]։

58 Ռաբունի, էջ 22։

59 Նույն տեղում։

60 Մաղաքիայ աբեղայի (Գրիգոր Ակներցի) Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 40—42։

61 Ռաբունի, էջ 25։

62 Նույն տեղում, էջ 29։

63 Նույն տեղում, էջ 30։

64 Նույն տեղում։

65 Նույն տեղում, էջ 40։

66 Ռաբունի, էջ 41։

Վահրամ Ռաբունին անդրադառնալով ֆեոդալական երկպառակությունններին, թագավորին հորդորում է չանսալ չար մարդկանց բանսարկությունները։ Նկատի ունենալով մամլուկների վերահաս վտանգը, իշխաններին կոչ է անում ուժեղացնել երկրի պաշտպանունակությունն և հնազանդվել թագավորին, մշտապես զբաղվել զինավարժությամբ և վերջ տալ հարբեցողության։ Այնուհետև Ռաբունին խրատում է թագավորին չզբաղվել կաշառակերությամբ, առանց քննելու չպատժել մեղադրյալներին։ Նրա կարծիքով կաշառակերությունը հանդիսանում է թագավորության անկման պատճառներից մեկը։ Ֆեոդալական երկպառակության հիմնական պատճառը նա տեսնում է իշխանների կողմից հարստություն ձեռք բերելու տենչանքի՝ պատվի և պաշտոնների արժանանալու ցանկության մեջ[67]։

Ճառի վերջում նա հոգևորականությանը կոչ է անում լինել աստվածավախ և նրանց խորհուրդ է տալիս, ժողովրդական զանգվածներին սովորեցնեն հնազանդ լինել թագավորին։ «Բան»-ի վերջին տողերում նա հոգևորականներին պարտավորեցնում է ժողովրդին «ուսուցանել ծառայել մարմնավոր տեառն որպէս աստուծոյ. և զամենայն հարկս և զիրաւունս առանց տրտնջման յարքունիս վճարել»[68]։

Սրանով չի սահմանափակվում անշուշտ Վահրամ Ռաբունու պատմա-փիլիսոփայական հայացքները։ Մենք նրանց մասին կանդրադառնանք շարադրանքի ընթացքում։

Իրավագիտական գրականություն

Մեր ուսումնասիրությանը, որպես գլխավոր և արժեքավոր սկզբնաղբյուրներ են ծառայել Կիլիկիայում, Սիրիայի ֆրանկ պետություններում և Մերձավոր Արևելքի հայ գաղութներում օգտագործված իրավաբանական հուշարձանները[69], հատկապես Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», որ ստեղծվել է բուն Կիլիկիայում և արտացոլում է Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունները[70], խիստ արժեքավոր է քանի որ «ամեն մի դեպքում հասարակության տնտեսական կառուցվածքն այն իրական հիմքն է կազմում, որով և վերջին հաշվով պիտի բացատրվի յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանի իրավական և քաղաքական հաստատությունները, ինչպես նաև կրոնական, փիլիսոփայական և այլ հայացքների բովանդակ վերնաշենքը»[71]։

Օտար աղբյուրներ

Օտար աղբյուրները նույնպես իրենց բնույթով բաժանվում են մի քանի խմբերի։ Առաջին խմբին են պատկանում՝ արևմտաեվրոպական երկրների, Սիրիայի խաչակիր պետությունների, արաբական և բյուզանդական հեղինակների մատենագրական և իրավաբանական երկերը[72]. երկրորդ խմբին են պատկանում՝ եվրոպական մի շարք երկրների պետական արխիվներում[73] պահպանված արխիվային նյութերը, Կիլիկիայի հայկական պետության արքունիքի կամ նոտարական գրասենյակների կողմից բաց թողնված ակտերը, կամ թե պապի, արևմտաեվրոպական պետությունների, հարևան արաբական պետությունների և Կիլիկիայի հայկական թագավորության միջև եղած թղթակցությունները, ինչպես վերևում նշեցինք՝ պետական ատյանի կողմից բաց թողնված առևտրական շնորհագրերի և պայմանագրերի, հողային նվիրատվությունների և հաշտության պայմանագրերի լատիներեն, ֆրանսերեն, արաբերեն և հայերեն լեզուներով գրված բնագրերն ու պատճենները։

Մատենագրական աղբյուրների մեջ հատկապես արժեքավոր են Լևոն Զ թագավորի խոստովանահայր Հովհան Դարդելի «Ժամանակագրութիւն»-ը[74]։ Հովհան Դարդելը 1377 թ., որպես ուխտավոր,

---

67 Ռաբունի, էջ 47—50։

68 Նույն տեղում, էջ 53։

69 «Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացւոյ», Փարիզ, 1907։ Assises d'Antioche. Trad. d'Alishan, Venise, 1876. Assises de Jérusalem, Ed. Beugnot, Paris, 1841 et 1843. Смбат Спарапет, Судебник, 1958, Ереван. Կանոն ժողովոյն որ ի Սիս, 1243 թ., տես Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961։ Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, 1865, էջմիածին։ Այսուհետև՝ Թուղթ ընդհանրական։

70 Ա. Դալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 133—136։

71 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1932, էջ 31։

72 Recueil des Historiens des Croisades, Documents orienteaux, T. I et II. Historiens grecques, T. I et II, Historiens occidenteaux, T. I, II, III, Historiens arabes.

73 *V. Langlois*, Le trésor des chartes d'Arménie, Venise, 1863.

74 Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց, 1891, Ս. Պետերբուրգ։ Այսուհետև Դարդել, տե՛ս ֆրանսերեն տեքստը. Recueil des historiens des Croisades. Documents Latins. T. II, (Dardel J. Chronique de l'Arménie).

գալիս է Երուսաղեմ և Ճանապարհին այցելում է Լևոն Զ թագավորին, որը գտնվում էր Գահիրեում՝ Եգիպտոսի սուլթանի գերության մեջ։ Լևոն Զ-ի խնդրանքով Հովհան Դարդելը լինում է նրա խորհրդականը և խոստովանահայրը։ Շատ հավանական է, ինչպես ենթադրում է Կարիերը, Դարդելը՝ իր «Ժամանակագրությունը» գրել է Լևոն Զ-ի թելադրությամբ[75]։ Հեղինակը իր Ժամանակագրությունը սկսում է Աբգար թագավորին վերագրված առասպելից և բերում հասցնում է Անիի Բագրատունիների անկման ժամանակաշրջանը, ընդ որում վերոհիշյալ ժամանակաշրջանը շարադրելիս, օգտագործում է բազմաթիվ առասպելներ, որով և պատմությունը աղավաղվում է և արժեքազրկվում։ Շատ արժեքավոր են նրա «Ժամանակագրության» վերջին շրջանի (սկսած Լևոն Ե-ից 1321 թվից մինչև 1375 թվականների միջև ընկած ժամանակաշրջանի մասին եղած տեղեկությունները), որոնք միակն են իրենց տեսակի մեջ, քանի որ մենք այդ շրջանի սիստեմատիկ պատմությունը չունենք, եթե նկատի չունենանք բյուզանդական պատմիչներ Կանտակուզենի և Նիկիփոր Գրիգորիոսի, արաբական պատմագիրների, Հռոմի պապերի նամակների և կոնդակների, Ֆրանսիայի, Սպանիայի և Անգլիայի դիվանատներում գտնված մի քանի փաստաթղթերի և վերջապես ձեռագրերի հիշատակարանների կցկտուր հաղորդումները։

Հովհան Դարդելի «Ժամանակագրությունը», բացի 54 տարվա քաղաքական անցքերից, մեզ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կիլիկիայի և Կիպրոսի ֆեոդալական հողատիրության, պետական կարգի, գործակալությունների, երկրի տնտեսական կյանքի և մի շարք այլ հարցերի մասին։

12—13-րդ դարերի մի շարք հարցերի պարզաբանմանը լույս են սփռում լատին ժամանակագիրներ Գիլիում դը-Տիրը[76], Էրնուլի և Բեռնարդ Գանձապետի ժամանակագրությունները[77] և 1211—1212 թվականներին Կիլիկիա այցելող և ջրօրհնեքի ծիսակատարություններին ներկա գտնվող ավստրիական դքսի դեսպան՝ Վիլլեբրանտ Օլդենբուրգցու երկը[78]։

75 Դարդել, տե՛ս Կ. Եղյանի առաջաբանը։

76 Recueil des hist. des Croisades, Hist. occidenteaux. V. I, Guillaume de Tyr, Historico rerum.

77 Chronique d'Ernoul et Bernard le trésorier, տե՛ս «Բազմավեպ», 1913, էջ 288—299։

78 *Willebrand d'Oldenbourg*, Itinéraire. Hist. Occidenteaux v. II. Hambourg, 1859.

Որպես սկզբնաղբյուր օգտագործել ենք նաև Սիրիայի խաչակիր ֆրանկ պետությունների իրավաբանական հուշարձանները՝ ասիզները, որոնցից հատկապես Անտիոքի ասիզները[79]։ Այն շատ արժեքավոր իրավաբանական փաստաթուղթ է Կիլիկիայի ֆեոդալական-տեղական կառավարումը, վերին ատյանների հողատիրության մի շարք հարցերը և վերջապես սենյորի և վասալի փոխհարաբերությունները պարզաբանելու համար։ Ինչպես հայտնի է «Անսիզք Անտիոքայ»-ն մեզ հասել է Սմբատ Սպարապետի կողմից հայերեն թարգմանված օրինակով, որը ընդունված է որպես ֆրանսերեն բնագրի տեղ[80]։ Այս իրավաբանական հուշարձանը օգտագործվել է Կիլիկիայի դատարաններում[81] և հավանական է, որ մնացել է այդպիսին նույնիսկ Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը ստեղծվելուց հետո։

Վերոհիշյալ Ասիզները խիստ արժեքավոր են Կիլիկիայի ֆեոդալիզմի էությունը և հարևան ֆրանկ պետությունների՝ Երուսաղեմի թագավորության և Անտիոքի իշխանության ֆեոդալական կարգերի ազդեցությունը Կիլիկիայի ֆեոդալիզմի վրա բացահայտելու համար։

Ինչպես ասացինք վերևում, մեր ուսումնասիրության համար չափազանց կարևոր և արժեքավոր սկզբնաղբյուր են հանդիսացել Կիլիկիայի հայկական թագավորության արքունական դիվանի փաստաթղթերը։ Որ Կիլիկիայի թագավորության արքունիքում գոյություն է ունեցել պետական արխիվ, վկայում են 1201 թվականի Լևոն Բ-ի կողմից ջենովացիներին[82] և Լևոն Դ-ի կողմից, 1307 թ., վենետիկցիներին տրված առևտրական շնորհագրերը[83]։ Կիլիկիայի արքունի արխիվից մեզ հասել են հայերեն թվով վեց բնագիր, որոնք պահպանվել են Եվրոպայի արխիվներում։ Կիլիկիայի պետական արխիվը մի քանի անգամ այրվել է Եգիպտոսի մամլուքների կողմից՝ 1266[84], 1275 և 1375 թվականներին[85]։ Արխիվային

79 Assises d'Antioche, trad. d'Alishan, Venise, 1876. Assises de Jérusalem. Paris, 1841 et 1843.

80 Աշ. Գալստյան, Սմբատ Սպարապետ, 1961, Երևան, էջ 99—107։

81 «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 332—334։

82 *V. Langlois*, Le trésor des chartes d'Arménie, 1863, p. 105—107.

83 Նույն տեղում, էջ 179։ Կիլիկիայի արքունական-պետական կանցելարիայի և պետական արխիվի ու գրադարանների մասին վկայում է նաև Histoire des sultans Mamelouks d'Egypte, Paris, 1837, p. 162—163.

84 *Abulfaradj sive Bar Hebraei*, Chronicon Syriacum, Lepsiae, 1789, p. 568.

85 Դարդել։

նյութերի մեծ մասը, կրկնօրինակները, մնացել և պահպանվել են Ջենովայի, Վենետիկի, Միլանի, Տուրինի, Մալթայի, Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի, Նեապոլի, Վատիկանի և Մադրիդի պետական արխիվներում, որոնց ընդհանուր քանակը հասնում է 351-ի[86]։

Արխիվային վերոհիշյալ նյութերը առաջին անգամ հայտնաբերել և գիտական շրջանառության մեջ է դրել Սելվեստրը, 1805 թ. Ջենովայի գաղտնի արխիվում։ Այդ փաստաթղթերի մեջ հետաքրքիր է Լևոն Գ-ի կողմից 1288 թ. Ջենովայի վաճառականներին տրված առևտրական շնորհագիր-արտոնագիրը, որի լատիներեն տեքստի կողքին կա և հայերեն բնագիրը[87]։ Հետագայում Սելվեստրը հետազոտում է նաև Տուրինի արխիվը և հրատարակում է հայերի և ջենովացիների փոխհարաբերություններին վերաբերող իր ձեռքի տակ եղած փաստաթղթերը[88]։

Հայ-վենետիկյան հարաբերություններին վերաբերող մեզ հասած փաստաթղթերը պահվում են Վենետիկի frari (ֆրարի) արխիվում և հրատարակված են Patti ժողովածուում[89]։

Մալթա կղզու արխիվում պահվում են Կիլիկիայի թագավորության և հյուրընկալների հոգևոր ասպետական օրդենի հարաբերություններին վերաբերող փաստաթղթերը, որոնք հրատարակված են S. Paoli-ի[90] և վերահրատարակված են Վ. Լանգլուայի կողմից[91]։

Բացի վերոհիշյալ փաստաթղթերից, հրատարակված են նոտարական ակտեր, նամակներ և թղթեր հատուկ ժողովածուներով[92]։

Ինչպես վերևում ասվեց, վերոհիշյալ փաստաթղթերի բնագրերը (բացի 6-ից) ֆրանսերեն, լատիներեն և արաբերեն են և որոնք թարգմանված են Սսի «կանցելարիա»-ում կամ դիվանա-

[86] *V. Langlois*, Essai hist..., p. 6. Ed. Dulaurier, Documents arm., T. I, Introduction.

[87] Documents arm., T. I, Introd.

[88] Historiae patriae monumenta, p. 135—147, *որոնք հետագայում վերահրատարակել է Վ. Լանգլուան։*

[89] *V. Langlois*, Essai hist. et crit..., p. 7, *տե՛ս նաև* „Hist. de Chypre de Mas Latrie", Paris, 1861—1865, 3 v.

[90] *S. Paoli*, Codice diplomatica del sacro militare Ordine Gerosolimitano, Lucques, 1733—1737.

[91] *V. Langlois*, Le trésor des chartes d'Arménie, 1863.

[92] Rainaldi, Annales ecclisiastici, Continuant les Annales eccl. de Baronius. Desimioni, Actes passé en 1271, 1274 et 1278 à Aias.

տրնում հատուկ թարգմանիչների կողմից[93]։ Այսպես, 1271 թ. Լևոն Գ-ի կողմից վենետիկցիներին շնորհված առևտրական արտոնագրում կարդում ենք. «Սույնը թարգմանված և գրված է Ժոֆրուա ատենադպիրի կողմից բառ առ բառ, ինչպես նշված է հայերեն օրինակում»[94]։

Մեզ հասած հայերեն բնագրով վեց փաստաթղթերն են. ա. 1271 թ. Սարվանդիքարի սենյոր Կոստանդինի կողմից Տևտոնական օրդենին տրված բաժտուն ունենալու արտոնագիրը[95]։ բ. 1288 թ. Լևոն Գ-ի կողմից Ջենովայի վաճառականներին շնորհված առևտրական արտոնագիրը[96]։ գ. 1314 թ. Օշին թագավորի կողմից Մոմպելիեի վաճառականներին տրված շնորհագիրը[97]։ դ. 1321 թ. նույն շնորհագրի վերանորոգումը Լևոն Ե-ի կողմից[98]։ ե. 1331 թ. նոյեմբերի 24-ին Լևոն Ե-ի կողմից Սիցիլիայի վաճառականներին տրված արտոնագիրը[99] և զ. 1285 թ. Լևոն Գ-ի և Եգիպտոսի սուլթանի միջև կնքված հաշտության պայմանագիրը, որի արաբերեն բնագիրը միակ արաբերեն փաստաթուղթն է[100]։

Վերոհիշյալ բոլոր փաստաթղթերը ըստ իրենց բնույթի կարելի է խմբավորել հետևյալ ձևով[101].

ա. թագավորական հողային նվիրատվություններ տրված հոգևոր ասպետական օրդեններին։

բ. Հողային նվիրատվություններ և առևտրական շնորհագրեր՝ Կիլիկիայում բնակվող օտար վաճառականներին և նրանց գաղութներին։

գ. Առևտրական արտոնագրեր և շնորհագրեր՝ օտար վաճառականներին։

[93] *V. Langlois*, Essai hist..., p. 11.

[94] *V. Langlois*, Le trésor...., p. 152.

[95] *«Բազմավէպ», 1873, էջ 108—112։ (Վավերագիրը հայտնաբերված է և պահվում է Վենետիկի արխիվում)։*

[96] *V. Langlois*, Le trésor, p. 154—158.

[97] *Ed. Dulaurier*, Recherches sur la chronologie arménienne, technique et historique. T. I, Paris, 1859, p. 189. *Այսուհետև* Dulaurier, Recherches.

[98] *Նույն տեղում, էջ 189—190։*

[99] *«Բազմավէպ», 1847, էջ 92։*

[100] *V. Langlois*, Le trésor, p. 224—226. Recueil des historiens des croisades, Historiens arabes, T. II, p. 560.

[101] *Փաստաթղթերը հրատարակված են՝ V. Langlois*, Le trésor des chartes d'Arménie, Venise, 1863. *Տե՛ս նաև V. Langlois*, Essai hist. et critique, p. 21—37.

դ. Առևտրական համաձայնագրեր՝ հայ և օտար վաճառականների և գաղութների միջև։

ե. Մաքսային տարիֆներ։

զ. Հաշտության պայմանագրեր՝ Կիլիկիայի և մուսուլման պետությունների միջև։

է. Ամուսնական գործարքներ։

ը. Կտակներ։

թ. Թագավորների, ազնվականների և հոգևորականների նամակագրությունները Հռոմի պապի հետ երկրի քաղաքական, կրոնական և դավանաբանակ հարցերի շուրջը։

ժ. Հռոմի պապի թղթերը՝ հասցեագրված Կիլիկիայի թագավորներին, իշխաններին և բարձրաստիճան հոգևորականներին։

ժա. Հռոմի պապի պատվիրակների զեկուցումները՝ Կիլիկիայի քաղաքական և կրոնական դավանաբանական վիճակի մասին։

ժբ. Թագավորների նամակագրությունները արևմտաեվրոպական պետությունների հետ։

Փաստաթղթերը անգնահատելի և եզակի տեղեկություններ են մատակարարում Կիլիկիայում գործող ծովային օրենքների, հարկային տերմինների և միջազգային օրենքների կիրառման մասին, որոնց վրա մենք հանգամանորեն կանգ կառնենք մեր հետագա շարադրանքի ընթացքում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ 12—13-ՐԴ ԴԴ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորությունը ստեղծվել էր 12-րդ դարի վերջին, Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափերին, երեք աշխարհամասերի՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի մերձեցման կենտրոնում, Առաջավոր Ասիայի հին առևտրական և ռազմական ճանապարհների խաչաձևման հանգույցում։

Դեռևս սկսած հին դարերից մինչև 11-րդ դարը Կիլիկիայի բնակչության մի մասը կազմում էին հայերը, որոնք այստեղ բնակություն էին հաստատել հատկապես 6-րդ դարից։ Այդ բնակեցումը հետևանք էր Բյուզանդական կայսրության կողմից հայերին բուն Հայաստանից վտարելու և բռնի տեղափոխման քաղաքականության։ Այդ քաղաքականությունը առավել չափով ուժեղացավ 11-րդ դարում Վասպուրականի[1], Անիի[2] և Կարսի[3] հայկական թագավորությունները՝ Բյուզանդիայի կողմից վերացվելուց հետո։ Հայերի մասսայական տեղափոխումը դեպի Փոքր Ասիայի արևմտյան և հարավային շրջանները, հատկապես Կիլիկիա, էլ ավելի ուժեղացավ, երբ սելջուկյան արշավանքների հետևանքով Հայաստանում ստեղծվեց քաղաքական և տնտեսական խիստ անբարենպաստ պայմաններ[4]։

---

1 Թովմայ Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1882, էջ 307։ Սամուել Քահանայի Անեցւոյ, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104։ Այսուհետև Սամուել Անեցի։ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1869։ Այսուհետև Ուռհայեցի։ «Մխիթար Սպարապետի պատմութիւն», Մոսկվա, 1856, էջ 49։

2 Նույն տեղում, էջ 45—46։

3 Վարդանայ Բարձրբերդցւոյ, Պատմութիւն տիեզերական, 1861, Մոսկվա, էջ 136։ «Մխիթար Սպարապետի պատմութիւն», էջ 63։

4 Ուռհայեցի, էջ 217—218։

Կիլիկիայում հայկական բնակչության աճը, նրանց անկախության ձգտումը և ինքնուրույն հայկական պետության վերականգնման ցանկությունը մի կողմից և Կիլիկիայի տնտեսական վերելքն ու խաչակրաց արշավանքների զուգադիպումը մյուս կողմից, նպաստեցին հայկական իշխանությունների ստեղծմանը՝ Կիլիկիայում, Փոքր Հայքում, Միջագետքում և Ասորիքում[5]։

Այդ իշխանություններից առավել չափով նշանավոր և կայուն դարձավ 1080 թվականին, Կիլիկիայի լեռնային շրջանում ստեղծված Ռուբինյան իշխանությունը։ Վերջինս օգտագործելով սելջուկների և բյուզանդացիների հակամարտը, հենվելով Կիլիկիա գաղթող բնակչության օրեցօր աճող տնտեսական և ռազմա-քաղաքական ուժի վրա, սկզբում ամրանալով Լեռնային Կիլիկիայում, իսկ հետագայում՝ 12-րդ դարում, համառ պայքար մղելով Բյուզանդիայի, սելջուկ-Թուրքերի և խաչակիրների դեմ, օգտագործելով նրանց հակամարտությունները, մերթ դաշնակցելով մեկի հետ ընդդեմ մյուսների և մյուս կողմից, հիմք ունենալով Կիլիկիայի 12-րդ դարի երկրորդ կեսի տնտեսական վերելքը, կարողացավ հաղթանակով դուրս գալ այդ պայքարից։ Ռուբինյան իշխանությունը թոթափեց բյուզանդական լուծը, վերջ դրեց նաև վասալական կախմանը խաչակիր պետություններից և դրանով իսկ պայմաններ ստեղծվեցին նոր միջավայրում հայկական պետականության վերականգնման համար[6]։ 12-րդ դարի վերջին հաղթանակով ավարտվեց նաև Ռուբինյան իշխանության պայքարը Բյուզանդիայի վասալ՝ Լամբրոնի հայկական Հեթումյան իշխանության դեմ։ Այն 1202 թվականին միացվեց Կիլիկիայի հայկական թագավորությանը[7]։

Հայկական կենտրոնացված պետություն ստեղծելու քաղաքականությունը առավել չափով հաջողվեց իրագործել Կիլիկիայի հայկական պետության առաջին թագավոր Լևոն Բ-ին, որը կարողացավ օգտագործել ստեղծված իրադրությունը և հաղթահարել այն բոլոր դժվարությունները, որոնց հանդիպում էր նորաստեղծ երիտասարդ թագավորությունը։ «Լևոն Բ-ի գործունեությունը,— շատ ճիշտ կերպով գրում է Գր. Միքայելյանը,— ինչպես հայտնի է,

5 *Г. Микаелян*, Ист. Килик. Арм. государства, глава III.

6 Նույն տեղում, 139—176։

7 Կիրակոս Դանձակեցի, Պատմություն հայոց, 1961, Երևան, էջ 286։ Այսուհետև Դանձակեցի։

ընթացել էր միջազգային բարդ իրադրության մեջ։ Նա գործ ուներ Սալահ ադ-դինի, Ֆրիդրիխ Բարբարոսայի, Ինոկենտիոս Գ պապի և Փոքր Ասիայի սելջուկների հետ, ընդամին դրսևորելով դիվանագիտական արտակարգ ընդունակություններ նա տարավ մի շարք հաղթանակներ, որոնց հետևանքով զգալապես բարձրացավ Կիլիկյան հայկական պետության ռազմա-քաղաքական հեղինակությունը[8]։

Թագավորության հռչակումը և անկախության ամրապնդումը, երկրի միավորումը և ֆեոդալական մասնատվածության վերացումը իրենց հերթին նպաստում էին Կիլիկիայի տնտեսական կյանքի հետագա զարգացմանը։ Կիլիկիայի առաջին թագավոր Լևոն Բ-ի քաղաքական, վարչական և տնտեսական բարեփոխումները[9] պայմանավորված էին մի կողմից նախորդ շրջանում Կիլիկիայում տեղի ունեցած տնտեսական վերելքով և մյուս կողմից՝ Ռուբինյան իշխանության ռազմա-քաղաքական հաջողություններով և ֆեոդալական հարաբերությունների խորացմամբ։ Այդ բարեփոխումները իրենց հերթին էլ ավելի ամրապնդեցին երկրի անկախությունն ու պաշտպանությունը և նպաստեցին երկրի տնտեսական կյանքի հետագա էլ ավելի զարգացմանը։

Լևոն Բ-ի առաջին ձեռնարկումներից էր Կիլիկիայում դեռևս ինքնանկախ մնացած առանձին ֆեոդալական տների հնազանդեցումը, այդ թվում Բյուզանդիայի վասալ, անջատողական ձգտումներ ունեցող Լամբրոնի իշխանության ենթարկումն ու միացումը կենտրոնական պետությանը՝ արքունիքին[10]։

Այնուհետև նա հոգ տանելով երկրի սահմանների ամրացմանը, Կիլիկիայի սահմանամերձ շրջանները հանձնեց առավել խոշոր չորս իշխանների[11], հյուրընկալների և տաճարականների ասպետական հոգևոր օրդենների[12] հսկողությանը։ Առատ «պարգևներով» սիրաշահելով ֆեոդալներից առավել աչքի ընկնող իշխաններին, Սմբատի վկայությամբ «Այսպիսի խոհեմ իշխանօք և քաջ զօրօք և առատ պարգևօք և ընդարձակ սեղանով զամէնն յօժար կազմէր ի կռիւ։ Ուր և դիպէր՝ քաջապէս վարէր զթշնամիսն և չդադարէր ի գերելոյ և յափշտակելոյ զազգն յանօրինաց»[13]։

8 *Г. Микаелян*, История, стр. 175.

9 Սիսուան, էջ 435—485։

10 Դանձակեցի, էջ 286։

11 *V. Langlois*, Le trésor, p. 126.

12 Նույն տեղում, էջ 114—123։

13 Տարեգիրք, էջ 253։ Հմմտ. «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», Մոսկվա, 1856, էջ 102։

Լևոն Բ-ն ձեռնարկեց նաև երկրի վարչական օրգանների վերակառուցմանը և նորերի ստեղծմանը։ Այս մասին մենք մանրամասնորեն կխոսենք սույն աշխատության համապատասխան բաժիններում։

Մեծ ուշադրություն դարձրեց երկրի տնտեսական կյանքի հատկապես առևտրի զարգացման վրա։ Կարգի բերվեցին նավահանգիստները, կամուրջները, առևտրական ու ռազմական ճանապարհներ, կառուցվեցին իջևաններ, պանդոկներ և շուկաներ։ Այնուհետև ստեղծվեց առևտրական նավատորմիզ[14] և շրջանառության մեջ դրվեցին ոսկյա և արծաթյա դրամներ[15]։

Լևոն Բ-ի մահից մի քանի տարի հետո, 1226 թ. Կիլիկիայի թագավորությունն անցավ Հեթումյան դինաստիային։

Հեթում Ա-ի թագավորության տարիներին (1226—1270) Մերձավոր Արևելքում տեղի ունեցան քաղաքական խոշոր իրադարձություններ։ Հեռավոր Արևելքից մոնղոլ-թաթարական ցեղերը 13-րդ դարի 30-ական թվականների սկզբին խոշոր զանգվածներով ներխուժեցին Մերձավոր Արևելք. 1243 թ. մոնղոլական զորավար Բաչուի գլխավորությամբ նվաճեցին Իկոնիայի սելջուկյան սուլթանության տերիտորիայի մի մասը և սահմանակից դարձան Կիլիկիային։ Մոնղոլական վտանգը կանխելու նպատակով Հեթումը 1243 թ. հատուկ դեսպանություն ուղարկեց Բաչուի մոտ՝ Կեսարիա, առաջարկելով երկու պետությունների միջև բարեկամություն հաստատել և դաշինք կնքել։ Այդ քաղաքականությունը բխում էր հայկական թագավորության համար ստեղծված իրադրությունից, քանի որ Կիլիկիայի հայերը չէին կարող միայն իրենց ուժերով պաշտպանել թագավորության սահմանները և արգելել մոնղոլական բանակների մուտքը երկիր։ Մյուս կողմից այդ դաշինքը շատ ձեռնտու էր նաև մոնղոլների համար, որովհետև Կիլիկիան օգնելու էր մոնղոլներին, վերջիններիս հզոր թշնամի՝ եգիպտական սուլթանության դեմ։ Հետագայում, 1246 թ., մոնղոլների պահանջով Հեթում թագավորն իր Սմբատ եղբորն (Սպարապետին) ուղարկեց Կարակորում՝ մեծ խանի մոտ[16]։ Սմբատը հավաստիացրեց նրան, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը դաշնակից կմնա մոնղոլներին և հարկ կվճարի։

14 Տե՛ս Ա. Տիրացյան, Կիլիկյան հայկական պետության սեփական նավատորմիզ ունենալու հարցի շուրջը, 1957, «Էջմիածին», № զ., էջ 43—49։

15 Սիսուան, էջ 377—378։

16 Գանձակեցի, էջ 364։

Ավելի ուշ, 1254 թվին Հեթում թագավորը ստիպված էր անձամբ հեռավոր ճանապարհորդություն կատարել դեպի Կարակորում և ներկայանալ Մանգու խանին[17]։ Խանը համաձայնվեց պակասեցնել Կիլիկիայից մուծվող հարկի քանակը և խոստացավ չխառնվել երկրի ներքին գործերին։ Միաժամանակ երկու կողմերն էլ պարտավորվում են օգնել միմյանց պատերազմի ժամանակ։ Կիլիկիայի հայերը պարտավոր էին զինվորական ուժով օգնել մոնղոլներին՝ Միջագետքը, Ասորիքն ու Պաղեստինը գրավելու գործում, իսկ մոնղոլներն էլ՝ պաշտպանել Կիլիկիայի թագավորությունը Իկոնիայի, Եգիպտոսի և այլ պետությունների հարձակումներից։

Այսպիսով, կնքված դաշինքը որոշ չափով շահավետ էր Կիլիկիայի թագավորության համար։ Այն, նախ և առաջ երկիրը հեռու էր պահում մոնղոլների ավերածություններից և դրանով ապահովում էր թագավորության ինքնուրույն գոյությունը։ Այնուհետև, այդ դաշինքի շնորհիվ Կիլիկիայի և նրա տերիտորիայով անցնող այլ երկրների առևտրականների համար ազատ ել ու մուտի հնարավորություն էր ստեղծվում դեպի մոնղոլական լայնածավալ պետության խորքերն ու Հեռավոր արևելյան երկրները, իսկ այդ կարող էր մեծ չափով նպաստել արհեստագործության ու առևտրի զարգացումը Կիլիկիայում։

Մոնղոլական պետության և Կիլիկիայի թագավորության հարաբերությունների մասին խոսելիս, պատմագետներից ոմանք այն կարծիքն են հայտնում, որ Կիլիկիայի թագավորությունը հանդիսացել է մոնղոլական մեծ խաների բացարձակ վասալը։ Մինչդեռ եղած աղբյուրները հաստատում են, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը չի մտել մոնղոլական պետության կազմի մեջ և եղել է ինքնուրույն իշխանություն։

Սակայն Կիլիկիայի հայկական թագավորությունը ինքնուրույն պետություն լինելով հանդերձ, զգացել է մոնղոլական պետության հովանավորության անհրաժեշտությունը և ճանաչել նրա ավագությունը։ Այդ երկու պետությունների միջև ստեղծվել էր այնպիսի հարաբերություն, որպիսին կարող էր ստեղծվել իրար հետ համագործակցող և ընդհանուր թշնամու դեմ պայքարող մեծ ու փոքր պետությունների միջև[18]։ Կիլիկիան տարեկան որոշ հարկ է տվել

17 Նույն տեղում, էջ 364—372։

18 «Հայ ժողովրդի պատմություն», պրակ 4, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում 9—13-րդ դարերում, Երևան, 1958, էջ 228։

մոնղոլական պետությանը, որը ունեցել է հաճախ նվիրատվության բնույթ, իսկ գլխավորը մնում էր զինվորական օգնությունը։

Ի կատարումն վերոհիշյալ դաշինքի, երբ մոնղոլների իշխան Հուլավուն 1257 թվականին արշավեց Ասորիք, Հեթումն իր զորքով միացավ նրան։

Հայ-մոնղոլական այդ դաշինքը ունեցավ նաև բացասական հետևանքներ Կիլիկիայի համար, որովհետև Կիլիկիայի հայկական թագավորության հզորացումը մտավախություն էր առաջ բերում Եգիպտոսի սուլթանությունում, հատկապես վերջինս դժգոհ էր, որ Կիլիկիան օգնում էր ոչ միայն մոնղոլներին, այլև պաշտպանում էր Անտիոքի դքսությանը, նրա հարձակումներից. այդ պատճառով եգիպտական սուլթան Բիպարսը օգտվելով մոնղոլների մեջ առաջացած երկպառակություններից ու ընդհարումներից, ճիշտ կռահելով, որ նրանք այլևս հայերին չէին կարող օգնել, արշավեց Կիլիկիա։ 1266 թ. Մառիի ճակատամարտում հայերը պարտվեցին, Սիսը գրավվեց թշնամու կողմից. սակայն հայերը կարողացան դուրս հանել թշնամուն։

Այնուհետև Եգիպտոսի մամլուկների արշավանքների սպառնալիքի տակ, Հեթում Ա-ին հաջորդող Լևոն Գ-ի ժամանակ Կիլիկիան ստիպված էր նորից դիմել Արևմտյան Եվրոպայի երկրների օգնությանը։ Այս քաղաքականությունը էլ ավելի գրգռեց Եգիպտոսին, և 1275, 1276, 1279, 1280, 1281, 1282 թվականներին պարբերաբար կրկնվող եգիպտական արշավանքները թուլացրին Կիլիկիայի թագավորությունը։ Լևոն Գ-ն ստիպված էր հաշտություն կնքել Եգիպտոսի հետ 1285 թ.։ Այս հաշտությունը մերթ ընդ մերթ խախտվելով ու վերահաստատվելով, իր ուժը պահպանեց մինչև 14-րդ դարի 20-ական թվականների սկզբները։

13-րդ դարի վերջին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան նոր իրադարձություններ։ Հռոմի պապի նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու փորձերը, որին ուզում էր միանալ նաև Լևոն Գ-ը, մատնվեց անհաջողության. այս հանգամանքը օգտագործեց Եգիպտոսը և վերջ տվեց խաչակիր իշխանությունների մնացորդներին։ Եգիպտական ուժերը 1291 թ. գրավեցին Աքրան, որը խաչակիրների վերջին հենակետն էր Ասորիքում։ Մեկ տարի հետո գրավեցին նաև կաթողիկոսի աթոռանիստ Հռոմկլա բերդը և սկսեցին սպառնալ Կիլիկիային։

Հայ-մոնղոլական դաշինքը նորից գործողության մեջ մտավ 1299 թ., երբ Ղազան իշխանը մեծ զորքով արշավեց Ասորիքի վրա։ Այդ արշավանքին մասնակցում էր նաև Կիլիկիայի թագավոր Հեթում Բ-ը։ Ղազանի արշավանքը նույնպես վերջացավ անհաջողությամբ։

Ասորիքը նվաճելու համար Հուլավյանների համարյա կես դար տևող պայքարը հաջողություն չունեցավ։ Եգիպտական սուլթանների տիրապետությունը Պաղեստինում և Ասորիքում ամրացավ, իսկ Կիլիկիայի հայկական թագավորության դրությունն ավելի վատացավ։

13-րդ դարի վերջին, 14-րդ դարի սկզբին խոշոր փոփոխություններ տեղի ունեցան նաև մոնղոլական իշխանության ներսում։ Նրա լայնածավալ տերիտորիայում ապրող և ճնշման ենթարկվող ժողովուրդների տնտեսական կյանքի անկումով սպառվեցին մոնղոլական կայսրության տնտեսական երակները սնող հարկային եկամուտները։ Այդ պատճառով էլ նա կորցրել էր իր նախկին հզորությունը և այլևս հուսալի դաշնակից չէր կարող լինել Կիլիկիայի հայկական թագավորության համար։ Այդ բոլորին պետք է ավելացնել նաև այն, որ Ղազան խանի ժամանակ մոնղոլներն ընդունեցին մահմեդականություն, որը նույնպես ծանր անդրադարձավ հայ-մոնղոլական դաշինքի վրա և այն վերջնականապես քայքայվեց, որի հետևանքով Կիլիկիայի հայկական թագավորությունը զրկվեց իր դաշնակցից և մնաց մենակ՝ ընդդեմ մամլուկների հզորացող սուլթանության։ Այս պայմաններում Կիլիկիայի հայկական թագավորությանը մնում էր հայ-մոնղոլական թուլացած և քայքայման եզրին հասած դաշինքի փոխարեն ձեռք բերել եվրոպական պետությունների օգնությունն ու հռոմեական պապականության բարյացակամությունը։ Վերջինս այդ օգնությունը ցույց տալու համար պահանջում էր, որ հայկական եկեղեցին ընդունի կաթոլիկական եկեղեցու արարողություններն ու սկզբունքները, այսինքն ենթարկվի Վատիկանին։ 1307 թ. Սիսում և 1316 թ. Ադանայում այդ պահանջները ընդունելու համար հրավիրված եկեղեցական ժողովների որոշումները վնասակար հետևանքներ ունեցան Կիլիկիայի հայկական թագավորության միջազգային դրության համար։ Կիլիկիայի հարևան սելջուկ-թուրքական իշխանությունները և եգիպտական մամլուկները այդ որոշումները դիտեցին որպես խաչակիրներին նորից Արևելք բերելու շարժառիթ, հետևաբար նրանց թշնամական վերաբերմունքը ավելի ուժեղացավ Կիլիկիայի թագավորության նկատմամբ։

Սկսած 1321 թվականից Եգիպտոսի սուլթանությունը և թուրքմեն բեկությունները դաշն կապեցին Կիլիկիայի դեմ և երկու ճակա-

տով հարձակվեցին նրա վրա։ Այդ հարձակումներն անընդմեջ շարունակվեցին մինչև 1337 թ.։ Կիլիկիան օգնություն չստանալով Եվրոպայից, ստիպված եղավ ծանր պայմաններով հաշտություն կնքել Եգիպտոսի հետ։ Հաշտության պայմանագրով Կիլիկիան Եգիպտոսին զիջեց Այաս նավահանգիստը և առափնյա տերիտորիան մինչև Պիրամիս գետը։

Մամլուկների և թուրքմենների ասպատակությունները, հսկայական ռազմատուգանքի գանձումը, բնակչության գերեվարությունը և Այաս նավահանգստի գրավումը՝ արագացրին Կիլիկիայի տնտեսական և քաղաքական թուլացման և ապա վերջնական կործանման պրոցեսները։

Երկրի միջազգային դրությունը ավելի վատացավ, երբ 1343 թվականին Կիլիկիայի հայկական պետության գահին ապօրինաբար նստեց Կիպրոսի թագավորության Լուսինյան դինաստիայի ներկայացուցիչը, որը սերտ կապեր ուներ պապականության հետ։ Այս վերջին հանգամանքը նորից դրդեց Եգիպտոսին վերսկսել իր հարձակումները Կիլիկիայի վրա։ Իշխանության գլուխ անցած Գվիդոն Լուսինյանը օգնություն խնդրեց Հռոմի պապից։ Վերջինս խոստացավ օգնել նորից այն պայմանով, որ հայերը կաթոլիկություն ընդունեն։ Գվիդոնի այս քաղաքականությունից դժգոհ հայ ֆեոդալները, մի տարի հետո սպանեցին նրան։ Թագավոր հռչակվեց Հեթումյան մեծ իշխան Կոստանդինը (1344—1363 թթ)։ Նա շարունակեց բանակցությունները պապի հետ։ Պապը խոստացավ օգնել, եթե հայ եկեղեցին հնազանդվի նրան։ Շահադիտական նպատակներով արված այս խոստումը իհարկե չկատարվեց, հայերն էլ Հռոմի եկեղեցուն չենթարկվեցին։

Եվրոպական պետությունների՝ հայերին տված օգնության խոստումները միայն վնաս էին հասցնում Կիլիկիային։ Մամլուկները կրկին վերսկսեցին իրենց հարձակումները։ 1359 թվականին եգիպտական զորքերը գրավեցին Տարսոնն ու Ադանան, իսկ Կոռիկոս նավահանգիստը անցավ Կիպրոսի թագավորությանը։ Այսպիսով, Կիլիկիայի հայկական թագավորությունը կորցրեց ամբողջ դաշտային Կիլիկիան և տնտեսական ու ռազմա-ստրատեգիական նշանակություն ունեցող նավահանգիստներն ու սահմանային ամրոցները։ Այնուհետև, մինչև 1375 թվականը ընկած ժամանակաշրջանում անընդմեջ շարունակվում էին եգիպտական մամլուկների և թուրքմենական բանակների հարձակումները։ 1374 թ. թուրքմենական 15 հազարանոց մի բանակ պաշարեց Սիս քաղաքը, իսկ հաջորդ՝ 1375 թ. փետրվարին թշնամու ուժերին միացան նաև Հալեպի ամիրայի զորքերը։ Թշնամու գերակշռող ուժերի ճնշման ներքո ընկավ Սիսը և նրա անառիկ ամրոցը։ Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն Զ-ն իր ընտանիքով գերի ընկավ։

Թեև աղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցող հետագա դեպքերի մասին, սակայն հայտնի է, որ 1375—1376 թվականներին Եգիպտոսի սուլթանի կողմից որպես Սսի կառավարիչ նշանակված է մի ոմն Եագուպ՝ Հակոբ Շահ Ամիրա անունով մի դավաճան[19]։

Հայերը երբեք չհաշտվելով երկրում ստեղծված իրադրության հետ, երկրի առանձին շրջաններում՝ հատկապես լեռնային Կիլիկիայում շարունակում են պայքարը թշնամու դեմ։

1375—1424 թվականներին որպես երկրի կառավարիչ է հիշատակվում Կոստանդին Դ թագավորի թոռ՝ Կոստանդին իշխան՝ զորավարի անունը[20]։

Լեռնային Կիլիկիայի առանձին վայրերում իրենց իշխանությունները շարունակում էին պահպանել մի շարք հայ իշխաններ, որոնցից հիշատակվում են Թորոս՝ որդի Օշինի[21], Ստեփանոս իշխանը[22], Թորոս՝ Կոստանդին Դ-ի թոռան որդին (մահացած 1425 թվականի օգոստոսի 9-ին)[23] և Կարապետ Սսի իշխան (1402 թ.) նույնպես Կոստանդին թագավորի թոռներից[24]։

Այսպիսով, Կիլիկյան հայկական թագավորության անկումից հետո (1375 թ.) մոտավորապես 50 տարի, հայերը թեև կարողացան պահպանել իրենց գոյությունը, սակայն նեղվելով թուրքմենների և մամլուկների միջև մղվող պատերազմներից և դրանց հետևանքով ստեղծված ծանր դրությունից, ստիպված թողեցին երկիրը և ապավինեցին «Ֆրանկստան» Կիպրոս, Հռոդոս կղզին, Իտալիա, Ֆրանսիա և այլ երկրներ։ Իր անտիպ «ժամանակագրության» մեջ Մաղաքիա դպիրը 1402 թ. ներքո գրում է. «Ի սոյն ժամանակի որ յետ բառնալոյ թագաւորութեան հայոց ի Սսոյ ժողովեցան թագաւորազունք և իշխանք և բազումք ի ժողովրդոց, մտեալ ի նաւ գնացին ի Ֆրանկստան»[25]։ Երկու տարի անց,

---

19 Rüdt-collenberg W., նշված աշխատությունը, էջ 75։

20 Rüdt-collenberg W., էջ 77։ Սամուել Անեցի, էջ 170։ Ալպոյաճեան, Պատմութիւն, հ. II, էջ 555։

21 Rüdt-collenberg W., p. 77։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, էջ 79։ Տե՛ս նաև Սիսուան, էջ 261։

24 Նույն տեղում, էջ 79։

25 Սիսուան, էջ 542։

1404 թ. ներքո Կիլիկիայի ժամանակագիրը հաղորդում է. «Մեծ ժողով եղեւ Կիլիկեցոցն ի դուռն Կարապետ կաթողիկոսին, որ վասն գալստեան Ռամազանին և այլ պատերազմաց ձանձրացեալ ի նեղութենէ, և տեսեալ զաւերումն իւրեանց երկրին և զօրանալն անհաւատից, անցան յայնկոյս ծովուն, տուին ԼՌ (30000)... Երեքշաբթի գնաց պարոն Կարապետն Թոռն Կոստանդին Թագաւորին, և չորեքշաբթի գնաց պարոն Ասլպեկն և իրիցուքն նոցա Յովհաննէս և Վահան, Գրիգոր և Ստեփանոս և ոչ ոք մնաց ի մեծատանց և յիշխանաց և ի պարոնաց և ի Թագաւորի ցեղիցն. ոչ այր և ոչ կին, ոչ արու և ոչ էգ, համայնքն իւրաքանչիւր ցեղիս և ազգականօքն կօչեցին (իմա՝ քոչեցին)։ Եւ յետ երթալոյն իշխանացն և մեծատանցն ի Սիս մնացեալ աղքատք և չքաւորք՝ որ ոչ ունէին զկարողութիւն փախչելոյ՝ ետուն զՍիս, յունիսի վեց»[26]։ 18-րդ դարի ժամանակագիր Ավետիք Տիգրանակերտցու մոտ նույն տեղեկանքը պահվել է այս խմբագրությամբ. «Յետ բառնալոյ Թագաւորութիւն հայոց ի Սըսա ժողովեցան Թագաւորազունք և իշխանք ի ժողովրդենէն. մտեալ ի նաւ Ֆրանկիստան ԼՌ (30.000) տուն քրիստոնեայք հայ ազգաւ»[27]։

Այսպիսով, արևմտաեվրոպական երկրներից օգնություն աղերսող Կիլիկիայի քաղաքագետ-դիվանագետների ապարդյուն հայցերն ու հույսերը, անարդյունավետ և կործանարար դուրս եկան Կիլիկիայի հայկական պետության հետագա գոյության համար՝ 14-րդ դարում մոնղոլների թուլացման և արևմտաեվրոպական երկրների նոր խաչակրաց արշավանքներ ոգեշնչող ու կազմակերպող պապականության անկարողության, Եվրոպայում՝ Ֆրանսիայի և Անգլիայի միջև սկսած հարյուրամյա պատերազմի (1337—1453) շրջանում։

Կիլիկիայի իշխող շրջանների վերոհիշյալ քաղաքականության հետևանքով Կիլիկիայի հայկական պետությունը թուլացավ, ընդ որում նրա տկարացման, դիմադրության և կործանման առավել չափով պատճառ դարձան նաև երկրի ներսում ծավալվող կրոնադավանաբանական սնամեջ վեճերը, որոնք հետևանք էին Կիլիկիային ռազմական օժանդակության սին խոստումների դիմաց լատինականացում, մշակութային և նույնիսկ լեզվական հպատակեցում պահանջող պապերի անվերջ առաջարկները, որոնք խախտում էին երկրի բարոյա-քաղաքական միասնությունը և սրում էին հարաբերությունները, մի կողմից ունիտորների՝ թագավորի, բարձր հոգևորականության և Արևմուտքի հետ սերտ առևտրական կապերի կողմնակից առևտրական դասի և մյուս կողմից, հակաունիտորների՝ երկրի անկախության ու ինքնուրույնության նախանձախնդիր և լատինականացման ընդդիմադիր՝ հայ ֆեոդալների, ցածր հոգևորականության և այդ երկպառակությունից առավել չափով տուժող և շահագործվող քաղաքային և գյուղական բնակչության՝ ժողովրդական մասսաների միջև։

Արդարև Կիլիկիայի թագավորության անկման գլխավոր պատճառներն էին՝ ֆեոդալների կենտրոնախույս ձգտումների ուժեղացումը, գյուղացիության աղքատացումը, առևտրի ու արհեստների անկումը, հռոմեական պապերի քաղաքականության պատճառով բորբոքված կրոնական վեճերը և Կիլիկիայի եվրոպական կողմնորոշումը։ Այս հանգամանքները թուլացրին դիմադրական ուժը արտաքին թշնամիների հանդեպ և Եգիպտոսի մամլուկների ու թուրքմեն բանակների հարվածների տակ ընկավ Կիլիկիայի հայկական պետությունը։

Հիմնված լինելով Ասիայի և Եվրոպայի սահմանագծի վրա, ռազմա-առևտրական ճանապարհների խաչաձևման վայրում, Կիլիկիայում հայկական թագավորությունը աչքի ընկնող տնտեսական և կուլտուրական զարգացում ունեցավ և քաղաքական մեծ դեր խաղաց հայ ժողովրդի պատմության ընթացքում։ Նրա 300-ամյա գոյությունը, այն ժամանակ, երբ բուն հայրենիքում հայերը զրկված էին պետականությունից, հայ ժողովրդի անկախության ձգտման և շինարար գործունեության լավագույն ապացույցն էր։

---

26 Սիսուան, էջ 542։

27 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 11—12-ՐԴ ԴԴ.

Կիլիկիայի հայկական պետությունը, իր երեքհարյուրամյա գոյության ընթացքում հիմնականում անցել է երկու շրջան. առաջինը հայտնի է որպես ֆեոդալական մասնատվածության շրջան, որը սկսվում է 1080 թ. և վերջանում է 1198 թ., երկրորդը՝ կենտրոնացած միապետության շրջան, որը սկսում է 1198 թ. և վերջանում է 1375 թ.՝ Կիլիկիայի հայկական պետության կործանումով։

Այս երկու շրջանները հասարակական-քաղաքական կառուցվածքով սերտորեն կապված են իրար հետ, ընդ որում երկրորդ շրջանը հանդիսանում է առաջինի տրամաբանական և բնական շարունակությունը, ավելի բարձր զարգացած աստիճանում։

Ֆեոդալական մասնատվածության շրջանը սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման մակարդակով ավելի ցածր է, քան կենտրոնացած պետության շրջանը։ Սակայն, առաջինում նախադրյալներ են ստեղծվում Կիլիկիայի տնտեսական և քաղաքական կյանքի հետագա զարգացման համար։ Հատկանշական է, որ Կիլիկյան հայկական պետությունը թեև կազմավորվել և իր գոյությունը պահպանել է բուն Հայաստանից դուրս, սակայն հասարակական-քաղաքական կառուցվածքով հանդիսանում է հայկական պետական կյանքի կազմակերպվածության «առավել զարգացած ֆեոդալական հարաբերությունների ժամանակաշրջան»[1]։

Առաջին շրջանի հիմնական առանձնահատկությունն է ֆեոդալական մասնատվածությունը և նրան ուղեկցող ֆեոդալական

[1] *С. Т. Еремян*, Опыт периодизации истории Армении эпохи феодализма (Вопросы истории, № 7 за 1951, стр. 59).

երկպառակությունները ու պայքարը կենտրոնացած պետության համար։ Այդ պայքարը, ինչպես վերևում ասվեց, մի կողմից տարվում էր օտար տիրապետողների՝ Բյուզանդիայի, սելջուկ-թուրքերի և Անտիոքի իշխանության դեմ և մյուս կողմից՝ երկրի ներսում առաջնության համար պայքարող անկախ Ռուբինյան իշխանության և Բյուզանդիայի վասալ Լամբրոնի Հեթումյանների միջև։ Այդ պայքարը վերջանում է Ռուբինյան իշխանության հաղթանակով, որի հետևանքով 12-րդ դարի վերջին, 1198 թ. կազմավորվում է Կիլիկյան հայկական թագավորությունը։ Ինչպես նշեցինք, առաջին շրջանի պետական կարգի հիմնական առանձնահատկությունը հանդիսանում էր բազմիշխանությունը։ Այդպես է բնորոշում այդ շրջանը Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականում» գրելով «Յաղագս ժամանակի չարութեան և բազմիշխանութեան»[2]։

Այս շրջանում յուրաքանչյուր իշխանության գլուխ կանգնած էր իշխանաց իշխանը կամ մեծ իշխանը։ Այսպես են կոչում աղբյուրները Մարաշի և Քեսունի հայ իշխան Գող Վասիլին[3] (1085—1112)։ Ռուբինյան իշխաններ՝ Թորոս Ա-ին[4] (1100—1129), Թորոս Բ-ին[5] (1145—1170), Մլեհին[6] (1170—1175), (գերագույն իշխանաց իշխան) և այլ Ռուբինյան իշխաններին։

Ինչպես հայտնի է, «իշխանաց իշխան» կոչումը Բագրատունիների ժամանակ եղել է բարձր պաշտոն, որը սովորաբար վարում էր թագավորի եղբայրներից մեկը, կամ թագաժառանգը[7]։ Սրան էին ենթարկվում երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները՝ զորավարներն ու հարկահանները, և նա պատասխանատու էր բոլոր վասալների վարքի ու կատարած գործերի համար։ Դա միայն պատվավոր մի տիտղոս կամ պաշտոն չէր արքունիքում, նույնիսկ հետագայում, Կիլիկիայի թագավորության շրջանում, իշխանաց իշխանը կամ ավագ պարոնը, փաստորեն հանդիսանում էր «երկրորդ արքա»։ Թագավորության շրջանում իշխանաց իշխանը նախագահում էր թագավորական խորհուրդը կամ արքունի ատյանը (Curiae Regis)։

[2] Թուղթ ընդհանրական, էջ 9։

[3] Ուռհայեցի, էջ 306, 366։

[4] Documents arm., T. I, p. 76.

[5] Ուռհայեցի, էջ 418։

[6] Գանձակեցի, էջ 108—109։

[7] «Հայ ժողովրդի պատմություն», Ա մաս, ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար, էջ 210—211։

Բոլորովին այլ իմաստ և բովանդակություն է ունեցել իշխանաց իշխան տերմինը առաջին ժամանակաշրջանում։ Այստեղ իշխանաց իշխանը երկրի կամ իր տիրապետության տակ գտնվող գավառների և փոքր այլ իշխանությունների միակ սյուզերենն էր հանդիսանում և վայելում էր թագավորական պատիվ[8]։ Նրա մոտ ծառայության մեջ էին գտնվում բազմաթիվ մեծ և փոքր իշխաններ։ Նրանք իշխանաց իշխանից ստանում էին պարգևներ՝ հողեր և կալվածներ[9], որոնց դիմաց պարտավորվում էին կատարել վասալական պարտականություններ՝ գործակալական պաշտոններ, հատկապես զինվորական ծառայություն։

Աղբյուրները վկայում են, որ դեռևս Թորոս Բ-ի ժամանակ 1145 թ. հյուրընկալների օրդենը Թորոսից ստանալով, Սիրիայի տահմանամերձ Սարատա ամրոցը, պարտավորվել է զինվորական օգնություն ցույց տալ Թորոս սենյորին, եթե վերջինս դրան կարիք ունենար[10]։

Իշխանաց իշխանը նստում էր իշխանանիստ բերդ-քաղաքում՝ Վահկայում[11], իսկ հետագայում Սսում[12], որտեղ և պահվում էին իշխանության պետական արխիվը։

Իշխանաց իշխանին էին ենթարկվում գավառապետներն ու պարոն-իշխանները[13]։ Այս շրջանից հայտնի են սպարապետության (1188 թ. հիշատակվում է Սիր բարոն Բաղդին Գունդստաբլ-Սպարապետը)[14] և պայլության գործակալությունները[15]։

Իշխանաց իշխանը պահում էր մշտական զորք, որի կորիզը հանդիսանում էր ազատներից կազմված հեծելազորը՝ «Հայոց հեծյալը»[16] և ռամիկներից կազմված հետևակը։ Ինչպես հայտնի է, հայ իշխանները Հայաստանից Կիլիկիա և Փոքր Ասիայի բյուզանդական նահանգները գաղթել էին ազատներից կազմված զորքերով և ռամիկ հետևակով[17]։ Այստեղ՝ Կիլիկիայում այդ իշխանները

8 Տարեգիրք, էջ 139։
9 Նույն տեղում, էջ 192։
10 Guillaume de Tyr, LV. 18 ch. 22, 23, Liv. 19, ch. 9.
11 Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վենետիկ, 1896, էջ 479։
12 Ն. Լամբրոնացի, Մեկնութիւն պատարագի, էջ 531։
13 Թուղթ ընդհանրական, էջ 92—104։
14 Տարեգիրք, 1956, էջ 100։
15 Սամուել Անեցի, 1893, էջ 218։
16 Տարեգիրք, էջ 177—179։
17 Ուռհայեցի, էջ 49, Սամուել Անեցի, էջ 58, 116—117։ «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 24, 27, 58։

իրենց զորքերը դնում էին իշխանաց իշխանի տրամադրության տակ, երբ վերջինս կռվում էր արտաքին թշնամիների դեմ[18]։ Բանակի զինվորները ստանում էին թոշակ կամ ռոճիկ, որը կոչվում էր հռոգ[19] կամ բաժին ռազմական ավարից[20] և կամ ռազմական գերիների փրկագնից ստացված եկամուտներից[21]։

Իշխանաց իշխանի ընդհանուր եկամուտների մեջ էին մտնում, բացի ռազմական ավարից ստացված եկամուտներից, նաև բնակչությունից գանձված հարկը[22]։ Վերոհիշյալ բոլոր տեսակի եկամուտներից, հատկապես հարստանում էին իշխանաց իշխանները։ Սմբատ Սպարապետը Մլեհ գերագույն իշխանաց իշխանի հարստության մասին գրում է. «Եւ լցաւ ոսկւով և արծաթով և յղփացաւ փարթամութեամբ ի զրկանաց անմեղաց»[23]։

Մեծ էր եկամուտը արտաքին և տարանցիկ առևտրից մաքսերի և տուրքերի ձևով[24]։ Այդ բոլոր եկամուտները պահվում էին իշխանանիստ բերդ-քաղաքի իշխանաց իշխանի գանձարանում[25]։ Իշխանանիստ քաղաքում էր նիստեր գումարում իշխանաց իշխանին ենթարկվող և նրա նախագահության ներքո գործող վերին ատյանը։

Այսպիսով, իշխանաց իշխանը հանդիսանում էր ամբողջ երկրի իշխանների գլխավոր իշխանն ու սյուզերենը, առանց թագավորական թագի։ Ռուբինյան իշխանաց իշխաններից Թորոս Բ-ից սկսած (12-րդ դարի երկրորդ կեսից) փաստորեն չէին ենթարկվում ոչ մի պետության, և եթե անգամ վասալական կախման մեջ էին Անտիոքի խաչակիր իշխանությունից, դա ավելի շատ կրում էր ձևական բնույթ, որը վերջնականապես թոթափվեց 1194 թ.[26] Լևոն Բ իշխանաց իշխանի օրոք։ Այս վերջին հանգամանքը կարևոր է նրանով, որ իշխանաց իշխանը չէր նմանվում արաբական խալիֆաթի ժամանակաշրջանի իշխանաց իշխանին, որը հանդիսանալով երկրի իշխանների՝ ամբողջ Հայաստանի իշխանաց իշ-

18 Տարեգիրք, էջ 129։
19 Թուղթ ընդհանրական, էջ 100։ Սիսուան, էջ 484։
20 Սամուել Անեցի, էջ 217։
21 Նույն տեղում, էջ 59։
22 Տարեգիրք, էջ 190։
23 Նույն տեղում։
24 Սիսուան, էջ 59։
25 Տարեգիրք, էջ 177—178։
26 «Բազմավէպ», 1913, էջ 293—294։

յան, վերջին հաշվով ենթարկվում էր արաբական խալիֆի ոստիկանին և հանդիսանում էր վերջինիս հարկատու վասալը[27]։

Ռուբինյան իշխանության կազմավորման շրջանում արևմտաեվրոպական և բյուզանդական ֆեոդալիզմին հատուկ պետական-քաղաքական կարգերին վերաբերող մի շարք տերմիններ մուտք են գործում և սկսում են կիրառվել Կիլիկիայի քաղաքական պետական կառուցվածքում։ Այսպես, խաչակիր ֆրանկ իշխանները Ռուբեն Ա-ի որդի Կոստանդինի (1095—1100) իշխանությունը կոչում էին կոմսություն, իսկ Կոստանդինին անվանում էին մարքիզ[28]։ Այս տերմինները հետագայում կենտրոնացված պետության շրջանում շարունակվեցին օգտագործվել և, նույնիսկ 14-րդ դարում Կոռիկոսի նահանգապետ և Լևոն Ե թագավորի խնամակալ Պայլ Օշինը (1307—1321) Կոռիկոսի կունթ (կոմս) տիտղոսն էր կրում[29]։ Մարքիզը, իշխան իմաստով մի անգամ ևս օգտագործվում է Սմբատի Դատաստանագրքում[30]։

Բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանից իշխանաց իշխանները և իշխանները կրում էին սևաստոս, պան սևաստոս և պրոսևաստոս տիտղոսները, որոնք, հատկապես տրվում էին բյուզանդական կայսրության վասալ՝ Լաբրոնյան-Հեթումյան իշխանաց իշխաններին և իշխաններին[31]։ Վերջիններիս իշխանությունները կոչվում էին սեբաստոսություն[32]։

Հետաքրքիր է, որ Քեսունի Գող Վասիլը և Ռուբինյան իշխանաց իշխան Թորոս Բ-ն, որոնք բյուզանդական կայսրից երբեք վասալական կախման մեջ չեն եղել, ստացել են վերջինից՝ սևաստոս, պանսևաստոս և պրոտոսևաստոս տիտղոսները։

Վերոհիշյալ տիտղոսները գործածության մեջ էին մտել բյուզանդական կայսր Ալեքսեյ Կոմնենոսի ժամանակ (1081—1118) և տրվելիս են եղել կայսերական ընտանիքից դուրս, կայսրի առաջին աչքի ընկնող վասալներին, նպատակ ունենալով սիրաշահել և բյուզանդական կայսրությանը ենթարկել այդ տիտղոսներն ստացող իշխաններին։ Կայսրից հետո, պանսեբաստոսը հանդիսանում էր հինգերորդ կարևոր տիտղոսը, պրոտոսևաստոսը՝ 13-րդ, իսկ սևաստոսը 17-րդ[33]։

Առաջին շրջանի քաղաքական-պետական կառուցվածքի մասին այլ տեղեկություններ չեն հասել։ Սակայն վերոհիշյալ տեղեկություններն էլ բավական են ցույց տալու, որ այդ ժամանակաշրջանում Կիլիկիայում բավականին բարձր զարգացման էին հասել պետական կառավարման կարգերը։

2. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կիլիկյան հայկական իշխանության՝ թագավորության վերածելը հետևանք էր՝ 12-րդ դարում Կիլիկիայի սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման, Կիլիկիայի միջազգային դրության բարելավման և նրա միջազգային հեղինակության բարձրացման։ Կիլիկիայի Ռուբինյան իշխանների հաղթական պայքարը սելջուկ-Թուրքական, բյուզանդական կայսրության և խաչակիր իշխանությունների դեմ մի կողմից (որի հետևանքով ընդարձակվում է Ռուբինյան իշխանաց իշխանի տերիտորիան, ընդգրկելով Կիլիկիայի լեռնային, քարային և դաշտային շրջանները) և մյուս կողմից՝ խոշոր հողատիրության զարգացումը և գյուղացիության ֆեոդալական շահագործման ուժեղացումը, Կիլիկիայի ներքին և արտաքին առևտրի աճը, ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը, Կիլիկիայի հայկական բնակչության աճը և վերջապես տնտեսության հետագա վերելքը, պայմանավորեցին թագավորության կազմավորումը։

12-րդ դարի վերջին (1198 թ.) ստեղծվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, որը հանդիսանում էր ինքնամփոփ կենտրոնացված մի պետություն։ Անշուշտ, դրանով նոր պայմաններ էր ստեղծվում Կիլիկիայի ֆեոդալական հասարակության հետագա զարգացման համար։

Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական-պետա-

---

27 Ա. Տեր-Ղևոնդյան. «Հայոց իշխանը» արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 2, էջ 122։

28 Սամուել Անեցի, էջ 214, «Արարատ», 1870 թ., էջ 355։ Գ. Հովսեփյանց, Ցիշատակարանք ձեռագրաց, էջ 265—266։

29 Documents armeniens, T. II. էջ 267.

30 Դատաստանագիրք, էջ 8։

31 Միսուան, էջ 70—71, 80—82, 313։ Գ. Հովսեփյանց, Ցիշատակարանք ձեռագրաց, էջ 551—554։

32 Նույն տեղում, էջ 544։ «Հանդէս ամսօրեայ», 1955, էջ 40, 1954, էջ 5—7։ «Ընդհանրական թուղթք...», Երուսաղեմ, 1871, էջ 86։

33 Doc. arm., T. I. p. LXXX.

կան կարգերում հիմնականում շարունակում էին պահպանվել նախորդ շրջանի բնորոշ գծերը։ Եթե համեմատելու լինենք ֆեոդալական մյուս պետությունների քաղաքական կառուցվածքի հետ, ապա կտեսնենք, որ Կիլիկիայի թագավորության պետական կարգը որոշ չափով նման էր Անգլիայի, Ֆրանսիայի կամ Լանդի խաչակրաց պետությունների քաղաքական կառուցվածքին։ Սակայն, ինչպես վերևում ասեցինք, այդ կարգերում հիմնականում պահպանվում էին նաև բուն Հայաստանի Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունների կառուցվածքը և ավանդույթները, ընդորում Կիլիկիայի հայկական թագավորության պետական կարգը հանդիսանում էր բուն Հայաստանի ֆեոդալական-պետական կառուցվածքի առավել զարգացած բարձր աստիճանը։ Սակայն չենք կարող անտեսել Կիլիկիայի հայկական թագավորության պետական կարգի վրա ազդող բյուզանդական և արևմտաեվրոպական ֆեոդալական կարգերի ազդեցությունը, ասենք՝ արքունիքի պաշտոնյաների անվանումը, որոշ գործակալությունների հորջորջումը։ Դա բնական էր այնքանով, որքանով որ Կիլիկյան հայկական թագավորությունը գտնվում էր Եվրոպայի և Ասիայի մայր ցամաքների սահմանագլխին և հատկապես կազմավորվում էր բյուզանդական նախկին նահանգի տերիտորիայի վրա և սերտ շփման մեջ էր արևմտաեվրոպական ֆեոդալական կարգերի նմանությամբ կազմավորված Լանդի խաչակիր ֆրանկ իշխանությունների հետ։ Ֆ. Էնգելսը խոսելով ֆեոդալական հարաբերությունների զարգացման ձևերի մասին գրում է, որ ֆեոդալիզմը իր ամենաուժեղ արտահայտությունը գտավ Երուսաղեմի թագավորության կարգերում, և որ «նա (ֆեոդալիզմը) ամենից շատ իր իդեային մոտեցավ Երուսաղեմի վաղանցիկ թագավորության մեջ, որն իրենից հետո Երուսաղեմյան ասիզներում թողեց ֆեոդալական կարգի դասական արտահայտություն»[34]։

«Երուսաղեմի ասիզների նկատմամբ Էնգելսի տված այս գնահատականը,— գրում է Աշոտ Գալստյանը,— կարելի է տարածել նաև Կիլիկիայի հայոց թագավորության վրա։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Կիլիկյան հայկական ֆեոդալիզմն էլ իր արտահայտությունն է գտել Սմբատի Դատաստանագրքում»[35]։

Սմբատի Դատաստանագիրքը արտացոլում է Կիլիկիայի հայ-

34 К. Маркс и Ф. Энгельс, Соч. XXIX, стр. 394.

35 Գալստյան Ա., Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 136։

կական թագավորության սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական կարգերի գրեթե բոլոր կողմերը։

Ըստ Դատաստանագրքի, Կիլիկիայի ֆեոդալական հիերարխիայի հիմքում ընկած է արևմտաեվրոպական ֆեոդալիզմին, հատկապես ֆրանսիական ֆեոդալիզմին հատուկ «իմ վասալի վասալը իմ վասալը չէ» սկզբունքը[36]։ Կիլիկիայի հայկական թագավորության ֆեոդալական հասարակության հիերարխիկ կառուցվածքը նման էր մի բուրգի, որի գագաթում կանգնած էր Կիլիկիայի թագավորը՝ որպես առաջինը ֆեոդալների մեջ։ Հաջորդ աստիճանում էին գտնվում ֆեոդալ հողատերերը՝ խոշոր իշխանները, իշխանաց իշխանի և թագավորի վասալները։ Այնուհետև երրորդ աստիճանում էին գտնվում թագավորի, իշխանաց իշխանի և մյուս (պարոն) իշխանների ասպետները։ Այս բուրգի պատվանդանում գտնվում էր աշխատավորական մասսան։ Այդ պատվանդանից վեր կանգնած աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների եկամուտների հիմնական աղբյուրը հանդիսանում էր աշխատավոր ժողովրդի՝ գյուղացիության և քաղաքային բնակչության՝ արհեստավորների և ռամիկների ֆեոդալական շահագործումը։ Դատաստանագրքի բոլոր հոդվածների հիմնական նպատակն էր ամրապնդել թագավորի հեղինակությունը և իշխանությունը, այսինքն ուժեղացնել կենտրոնական իշխանությունը։ Այդ իհարկե անհրաժեշտ էր հատկապես 13-րդ դարի երկրորդ կեսին, երբ գնալով էլ ավելի էր վատանում Կիլիկիայի միջազգային դրությունը մամլուկների շղթարող հարձակումների հետևանքով։

Դատաստանագրքի հոդվածներից պարզ երևում է, որ թագավորին, որպես առաջին խոշոր ֆեոդալի՝ վերագրվում են լայն լիազորություններ և իրավունքներ, որոնք տարբերվում են մյուս բոլոր ֆեոդալ իշխանների, ներառյալ իշխանաց իշխանի կամ ավագ պարոնի՝ լիազորություններից և իրավունքներից։ Դատաստանագրքի առաջին հոդվածում խոսելով թագավորի իրավունքների մասին ասված է. «Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ դեկան շինել՝ և քաղաք և բերդ»[37]։ Ապա 76-րդ հոդվածում խոսելով թագավորի աստվածային լինելու մասին, նրան դասում է բարձր մյուս իշխաններից, կոչում է նրան ինքնակալ։

Նույն հոդվածի հիմքում ընկած է «իմ վասալի վասալը իմ

36 Դատաստանագիրք, էջ 81—83։

37 Դատաստանագիրք, էջ 9։

վասալը չէ» սկզբունքը։ Այդ մասին ուղղակի մատնացույց է արված հետևյալ հատվածներում. «Հայոց լինի դատաստանս և ընդ իւրաքանչիւր պարոնայքն առհասարակ՝ և ընդ իւրեանց ճորտերն»[38]։ Ապա մյուս հատվածում նորից մատնացույց անելով վերոհիշյալ սկզբունքին, գրում է. «և իշխան՝ զոր ինք թագաւորն լինին իշխանացուցել, նա ինք կարէ ձգել. երբ ու կամի՝ յիշխանութենէն, և խրատել ու այնել զինչ իր պիտի։ Բայց զայլ ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան դրել, նա չկարէ առանց այլ իշխանաց որ իր ընկերք լինին՝ ոչ զնա աքսորել և ոչ ձգել»[39]։

Ինչպես տեսնում ենք, Սմբատը ինքնակալ է կոչում թագավորին։ Լևոն Բ-ի թագավորության մասին Միքայել Ասորին գրում է. «Եւ ցուցաւ ինքնագլուխ և ճոխ իշխանութեամբ»[40]։ Ներսես Լամբրոնացին Լևոն Բ-ին ուղղած նամակում գրում է, որ Լևոն Բ-ն իշխում է «ինքնակալությամբ»[41]։

Սակայն դա չի նշանակում, որ Կիլիկիայի թագավորը իշխում էր անսահմանափակ իրավունքներով կամ թե բացարձակ միապետի լիազորությամբ։ Նկատելի է, որ 13—14-րդ դարերում միջազգային դրության փոփոխման զուգընթաց փոխվել են նաև նրա իրավունքներն ու լիազորությունները։ Սակայն, գլխավորն այն է, որ ամբողջ իշխանությունը պատկանում էր ֆեոդալական դասակարգին, որը իրականացվում էր արքունիքի միջոցով։ Արքունիքի գլուխ էր կանգնած թագավորը, որն իր մեջ էր մարմնավորում երկրի գերագույն իշխանությունը։ Նա էր պատերազմ հայտարարում, հաշտություն կամ դաշինք կնքում ուրիշ պետությունների հետ, լուծում երկրի ներքին կյանքին վերաբերող կարևորագույն հարցերը և հրապարակում՝ օրենքներ և վճիռներ։ Ինչպես ասեցինք, այդ բոլորը նա իրականացնում էր արքունիքի միջոցով և նա չուներ անսահմանափակ իշխանություն այդ բոլոր հարցերը լուծելիս։

Ղ. Ալիշանի, ֆրանսիացի պատմաբաններ Վիկտոր Լանգլուայի, Էդուարդ Դյուլորիեի և Ժակ դը Մորգանի կարծիքով, Կիլիկիայի պետական կառուցվածքը բացարձակապես ձևավորվում է միայն Լևոն Բ-ի ժամանակ, և անփոփոխ ձևով մնում մինչև թագավորության անկումը։ Մեր կարծիքով, նրանց այդ սխալ եզրակացությունը հետևանք է այն բանի, որ նրանք չեն ուսումնասիրել իշխանական շրջանի (11—12-րդ դդ.) սոցիալ-տնտեսական ու սոցիալ-քաղաքական կառուցվածքը, 13-րդ դարի երկրորդ կեսի և ավելի ուշ՝ 14-րդ դարի Կիլիկիայի պետական կարգը։ Հատկապես Ղևոնդ Ալիշանը իր արժեքավոր, ստվարածավալ «Սիսուան» աշխատության մեջ բավարարվում է Լևոն Բ-ի ժամանակաշրջանի ուսումնասիրությամբ։ Կիլիկիայի պետական կառուցվածքի հետագա զարգացման վրա քիչ ուշադրություն է դարձրել նաև Գ. Միքայելյանը։

Լանգլուան, Դյուլորիեն և Ժակ դը Մորգանը բավական լուրջ ուսումնասիրություններ են կատարել այդ ուղղությամբ, բայց նրանց աղբյուրները եղել են թերի, իսկ տեսակետները՝ միակողմանի։ Նրանց ձեռքի տակ չեն եղել, հետագայում հայտնաբերված, այնպիսի կարևոր իրավաբանական հուշարձաններ, ինչպիսիք են Սմբատի Դատաստանագիրքը և Անտիոքի Ասիզները։ Մյուս կողմից Վիկտոր Լանգլուան և Էդուարդ Դյուլորիեն խիստ հակված են այն տեսակետին, որ Կիլիկիայի պետական կառուցվածքը հար և նման է արևմտաեվրոպական և Սիրիայի ֆրանկ պետությունների պետական կառուցվածքին և որ կարևորն է Կիլիկիայի պետական կարգը ձևավորված է առաջինների բարենպաստ ազդեցության տակ։ Վիկտոր Լանգլուան, ինչպես արդեն ասվել է, չկարողանալով ժխտել Կիլիկիայի քաղաքական կարգի վրա Հայաստանի պետական ու քաղաքական կարգերի ազդեցությունը, շրջելով դա հաստատելու ապացույցներ հայտարարում է, որ Կիլիկիայի պետական կարգի էությունը վերջին հաշվով հայկական էր իր՝ արևելյան դեղահատով[42]։

Ի տարբերություն բուն Հայաստանի, Արշակունյաց և Բագրատունյաց ժամանակաշրջանի թագավորական արքունիքի և պետական կառավարման, այստեղ, Կիլիկիայում արևմտաեվրոպական և Սիրիայի ֆրանկ պետությունների օրինակով արքունիքում կազմակերպվել էր, որպես երկրի կառավարման օրգան, բարձրագույն կամ վերին կամ արքունի ատյան։ Թեև վերջինս հանդիսանում էր խորհրդատու օրգան, սակայն ձևով և բովանդակությամբ նման չէր Արշակունյաց ժամանակաշրջանի «աշխարհաժողովներին»[43]։

38 Նույն տեղում, էջ 15։

39 Նույն տեղում, էջ 81։

40 «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարք», Երուսաղէմ, 1871, էջ 503։

41 Ներսիսի Լամբրոնացւոյ Առեւնարանութիւնք և թուղթք և ճառք, Վենետիկ, 1838, էջ 235։

42 V. Langlois, Essai, էջ 45։

43 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 59։

Վերին ատյանը փաստաթղթերում լատինական արտահայտությամբ կոչվում է թագավորական կուրիա (Curia regis)։ Այս տերմինը առաջին անգամ հանդիպում ենք Լևոն Բ-ի կողմից 1201 թ. ջենովացիներին շնորհված առևտրական արտոնագրում, որտեղ Լևոն Բ-ն ասում է, որ այդ շնորհագիրը գրված է «Կուրիայի համաձայնությամբ» (assense Curiae)[44]։ Հետաքրքիր է, որ ավելի ուշ շրջանի փաստաթղթերում այլևս չենք հանդիպում այդ ձևակերպմանը, այլ թագավորը շնորհում է «իր անձնական կամքով» moto proprio[45]։ Ընդ որում, ինչպես մենք ցույց կտանք ներքևում, այդ ատյանը 13-րդ դարի երկրորդ քառորդից հիշատակվում է որպես թագավորական խորհուրդ[46]։ Սմբատի Դատաստանագրքում կան մի շարք հոդվածներ, որտեղ սահմանվում է թագավորի և վերին ատյանի իրավունքները։ Սմբատը Դատաստանագրքի ՀԶ (76) հոդվածում ընդգծելուց հետո, որ թագավորները «յԱստուծոյ են կարգած», որ ոչ ոք իրավունք չունի աքսորելու նրանց, սակայն հոդվածի շարունակության մեջ գրում է, որ եթե իշխանները և ժողովուրդը դժգոհ լինեն թագավորից, ապա եկեղեցու և երկրի բնակչության ու իշխանների ընդհանուր համաձայնությամբ կարող են թագավորին աքսորել երկրից[47]։

Ներսես Լամբրոնացին Լևոն Բ-ին ուղղած իր հայտնի նամակում, հիշատակում է արքունական ատյանի մասին այսպես. «Եթէ իրաւացուցանէ քո արքունական ատեանդ (ընդգծումը մերն է— Ս. Բ.) առանց քննելոյ և դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ զնոյն որպէս Քրիստոսի աթոռակցութիւն»[48]։ 13-րդ դարի վերջում արքունական կուրիան՝ ատյանը հայկական աղբյուրներում անվանվում է արքունական «դիւան», որը մեր կարծիքով նույն արքունական կուրիան է, սակայն այն տարբերությամբ, որ այս շրջանում այն մեծ նշանակություն չի ունեցել, քանի որ հրովարտակների մեծ մասում չի հիշատակված, որ թագավորը շնորհում է դրանց՝ կուրիայի կամ դիվանի համաձայնությամբ։

1243 թ. Սսի եկեղեցական ժողովի կանոնների մեջ հիշատակված հետևյալ հատվածը, որտեղ ասված է, որ կանոնները խախտողները պատժվում են «առաջի արքային Հեթմոյ, և հօր իւրոյ Կոստանդեայ և ամենայն իշխանացն[49], արտահայտությունը, մեր կարծիքով վերաբերում է այդ բարձր ատյանին։

Վերին ատյանը, որը 13-րդ դարի երկրորդ կեսից և 14-րդ դարի ընթացքում թուլանում և դառնում է թագավորական խորհուրդ, նման չէր Երուսաղեմի թագավորությունում գործող վերին ատյանին, որի հետ շփոթում է Վիկտոր Լանգլուան[50]։ Կիլիկիայի հայկական թագավորության արքունիքում գործող արքունական կուրիան կամ դիվանը (Curiae regis) նման չէր Երուսաղեմի թագավորությունում գործող պարոնների կուրիային (Curia baronum), որտեղ հավասարության իրավունքի (judicium parum) թեորիան էր կիրառվում[51]։ Երուսաղեմի թագավորությունում պարոնների կուրիայի նպատակն էր պաշտպանել ազնվականների իրավունքները ընդդեմ թագավորին։ Վերջինս նման չէր Անգլիայում 11—12-րդ դարերում, մինչև 1215 թվականը Ազատությունների մեծ խարտիայի հռչակումը, գործող պարոնների ատյանին, որը քննում էր թագավորի և նրա ֆեոդալների միջև ծագած վեճերը, ասենք գինվորական ծառայության մեջ թերացող ֆեոդալների կամ ֆեոդալ վասալների միջև ծագած կալվածատիրական և այլ հարցերի՝ կարգավորումը։ Անգլիական արքունական վերին ատյանում թագավորը հանդես էր գալիս առաջինը հավասարների մեջ։ Այս վերջին հանգամանքը որոշ չափով մեզ թույլ է տալիս ասելու, որ Կիլիկիայի արքունիքում գործող թագավորական ատյանը նման էր անգլիական թագավորական՝ արքունական վերին ատյանին։

13-րդ դարի երկրորդ կեսին արքունական դիվանը դադարում է գործադիր օրգանի որևէ դեր կատարելուց, իսկ նրա տեղը հանդես է գալիս թագավորական խորհուրդը։ Հետագայում՝ 14-րդ դարի 40-ական թվականներից մինչև պետության անկումը, թագավորական խորհուրդը ընդլայնում է իր իրավունքները, թագավորի նկատմամբ։ Ինչպես հայտնի է, այս շրջանում Կիլիկիայի հայկական թագավորությունը սկսում է ապրել քաղաքական խիստ ճգնաժամ, երբ մի կողմից՝ մամլուկների հարձակումները թուլացնում էին նրա ռազմական ուժը և մյուս կողմից՝ երկրում կրոնադավանաբանական հարցերի շուրջ ծավալվող դատարկ վեճերը ծվատում էին երկրի ներքին միասնությունը և թուլացնում թագավորի քաղաքական ու տնտեսական հզորությունն ու իշխանությունը

---

44 *V. Langlois*, Le trésor, p. 106.

45 Նույն տեղում։

46 «Հեթում պատմիչ թաթարաց», Վենետիկ, 1842, էջ 42։

47 Դատաստանագիրք, էջ 81—82։

48 Ներսես Լամբրոնացի, Թուղթ առ Լևոն, Վենետիկ, 1865, էջ 214։

49 Դանձակեցի, էջ 307։

50 *V. Langlois*, Essai, p. 47.

51 Enc. Britanica, T. 6, p. 780—781.

նը։ Այս շրջանում ուժեղանում է նաև ֆեոդալական կենտրոնախույս ուժերի պայքարը կենտրոնական իշխանության՝ թագավորի դեմ։ Սրանով պիտի բացատրել թագավորական խորհրդի ուժեղացումը։

Կիլիկյան հայկական թագավորության կարևորագույն խնդիրները քննվում էին «աշխարհաժողովներում»։ Ինչպես հայտնի է «աշխարհաժողովներ» գումարվում էին նաև Արշակունյաց Հայաստանում[52]։ Այդ ժողովները գումարվում էին հատկապես կաթողիկոսների ընտրության ժամանակ, իսկ երբեմն էլ այն դեպքում, երբ երկրին սպառնում էր արտաքին վտանգը։ Այսպիսի աշխարհաժողովների գումարումը օրինականացված է Սմբատի Դատաստանագրքում։ Աշխարհաժողովների գումարումը հատկապես անհրաժեշտ է դառնում, երբ թագավորության վերջին շրջանում թուլանում է թագավորի իշխանությունը և սպառնալից է դառնում Եգիպտոսի մամլուկների արշավանքները։

Ունիայի հարցը լուծելու համար 1307 թ. Սսում և 1316 թ. Ադանայում գումարված եկեղեցական ժողովները վերածվում էին աշխարհաժողովների. դա երևում է նրանից, որ եկեղեցական ժողովների գումարման վայրում և դրա ընթացքում դրսում մեծ բազմություն էր հավաքվում՝ ներգործելու եկեղեցական ժողովների որոշումների վրա[53]։

Աշխարհաժողովների մասին վկայություն ունի նաև Հովհան Դարդելը։ Այսպես, «ջատագովութիւնն զոր տային զանձանց, եւ յաւուր միում գումարել ի ժողով ի գահլիճն արքունական զեպիսկոպոսունս և զվարդապետս աշխարհին զաւագանին և զասպետս և զտիկնայսն և զժողովուրդն առհասարակ»[54]։ Ըստ Դարդելի այդ ժողովում բացի ազատներից մասնակցում էր նաև ժողովուրդը[55], որը իհարկե պետք է հասկանալ քաղաքի բնակչության առևտրական և արհեստավորական դասերի ներկայացուցիչներին։ Սակայն Սսի և Ադանայի եկեղեցական ժողովների առիթով հավաքված բազմությունը բաղկացած էր նաև արհեստավորական ցածր խավերից՝ ռամիկներից։

Ինչպես վերևում նշեցինք, ամբողջ իշխանությունը պատկանում էր ֆեոդալական դասակարգին։ Այդ իշխանության կենտրո-

52 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 79։

53 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1784—1789, 1819։ Սամուել Անեցի, էջ 156։

54 Դարդել, էջ 107։

55 Նույն տեղում։

նական օրգանը հանդիսանում էր արքունիքը։ Վերջինիս գլուխն էր կանգնած թագավորը։ Բացահայտեցինք նաև թագավորի ֆունկցիաները և նրա փոխհարաբերությունը իշխանական տոյանի կամ խորհրդի նկատմամբ։ Մի քանի խոսք «թագավոր» տիտղոսի մասին։

Բնական էր, որ «թագավոր» տիտղոսը հանդես պետք է գար 1198 թ., երբ Լևոն Բ իշխանաց իշխանը թագադրվեց իր իսկ հիմնադրած Կիլիկյան հայկական թագավորության թագավոր։ Թագավոր տերմինը դրանից հետո նշվում է բոլոր փաստաթղթերի և վավերագրերի տակ։ Մեզ հետաքրքրող հարցը այստեղ այն է, թե թագավորները ինչպիսի՞ լիազորություններով էին հանդես գալիս վերոհիշյալ փաստաթղթերը ստորագրելիս։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է, որ սովորաբար Լևոն Բ-ն ստորագրելիս է եղել հետևյալ ձևով՝ «Լևոն շնորհաւքն Աստուծոյ-թագաւոր Հայոց» Leo Dei gratia rex Armeneorum լատինական արտահայտությամբ, կամ ստորագրում էր պարզ ձևով «Շնորհաւքն Աստուծոյ թագաւոր հայոց»[56]։ Նույն ձևով է ստորագրել նաև Հեթում Ա-ը «Հեթում Աստուծոյ շնորհաւքն թագաւոր հայոց» (Hetom, Dei gratia, rex Arméniae)[57]։ Մի քիչ այլ կերպ է ստորագրել Լևոն Գ թագավորը (1270—1289)։ Այսպես, «Լևոն ի Քրիստոս Աստուած հաւատացեալ թագաւոր ամենայն Հայոց»[58]։ Այսպես է ստորագրել նաև Լևոն Դ-ը[59]։

Լևոն Ե-ը (1320—3342) սիցիլիացիներին տրված շնորհագրում ստորագրում է. «Լևոն ի Քրիստոս Աստուած հաւատացեալ. շնորհաւքն և ողորմութեան նորին թագաւոր ամենայն Հայոց»[60]։ Leon, feal en Iesus-Crist, par la Grace et la misericorde de Dieu, roy de tous Arménis.

Այստեղ պետք է նշել, որ Լևոն Գ-ի թագավորության ժամանակաշրջանում հանդիպում ենք «թագաւոր ամենայն Հայոց» հորջորջմանը։ Այսպես, Լևոն Գ-ից մեզ հասած դրամներից մեկում կարդում ենք «Լևոն թագաւոր ամենայն Հայոց», սակայն հետաքրքիրը այն է, որ այս տիտղոսը չի օգտագործված մինչև Լևոն Ե-ի ընկած ժամանակաշրջանում, երբ վերջինից մեզ հասած սիցիլիացի վաճառականներին շնորհված առևտրական արտոնագրը-

56 V. Langlois, Essai..., p. 9.

57 V. Langlois, Le trésor..., p. 144.

58 Նույն տեղում, էջ 9—12։

59 Նույն տեղում, էջ 9։

60 Նույն տեղում։

բում նորից լույս աշխարհ է գալիս «Լևոն թագավոր ամենայն Հայոց» տիտղոսը[61]։

Մեր կարծիքով «Ամենայն Հայոց» տերմինը օգտագործելով Կիլիկիայի թագավորները հանդես են եկել ոչ թե ամբողջ Հայաստանի, այսինքն՝ Կիլիկյան Հայաստանի և բուն Հայաստանի սյուզերեն թագավոր, այլ նրանք այդ արել են նպատակ ունենալով ներկայացնել այն հայերին, որոնք 11—14-րդ դարերում ցրված էին Միջերկրական ծովի արևելյան ափերին՝ Կիլիկիայում, Կիպրոսում, Ասորիքում, Սիրիայում, Պաղեստինում, Եգիպտոսում և հատկապես Սիրիայի ֆրանկ պետություններում, որի մասին ուղղակի մատնացույց է անում խաչակիր ժամանակագիր Էրնուլը[62]։

Այդ երկրների հայերը Կիլիկիայի թագավորին անվանել են «թագավոր մեր»[63]։ Այսպես են անվանել նույնիսկ Իտալիայի հայ գաղութի հայերը, ընդ որում մեզ հասած հիշատակարաններից մեկում Կիլիկիայի թագավորին կոչում են «իրենց թագավորը»[64]։ Ճիշտ չենք համարում Ղևոնդ Ալիշանի այն ենթադրությունը, որ իբր թե Լևոն Գ-ն իրեն անվանելով «Ամենայն Հայոց թագավոր», նկատի ուներ նաև բուն Հայաստանը։

3. ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես տեսանք թագավորը երկիրը կառավարում էր արքունիքի միջոցով։ Արքունքը կազմված էր կենտրոնական պետական կառավարող օրգաններից՝ գործակալություններից։ Վերջիններս գլխավորում էին Կիլիկիայի անվանի և առավել խոշոր ֆեոդալական տների ներկայացուցիչները։ Այդ պարտականությունները, որոնք ֆեոդալները կատարում էին թագավորի՝ արքունիքի նկատմամբ, կոչվում էր «ծառայություն», «հնազանդություն»[65] և «գործ» կամ «գործակալություն»։

Այդ «ծառայությունը», որը արտահայտվում էր թագավորի նկատմամբ թագավորի վասալների կատարած մի շարք վարչական և զինվորական պարտականություններով, կազմում էր ֆեոդալական հիերարխիայի հիմքը և շաղկապված էր հողատիրության իրավունքի հետ։

61 Սիսուան, էջ 482։
62 «Բազմավէպ», 1913, էջ 294—295։
63 Սիսուան, էջ 482։
64 Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 201։
65 Դատաստանագիրք, էջ 15։ Assises d'Ant., p. 9.

Ուշագրավ է նշել, որ Կիլիկիայում ֆեոդալական վասալական հիերարխիայի յուրաքանչյուր աստիճանի կապն ու կախումը իրենից վերև գտնվող աստիճանից արտահայտվել է նույն տերմիններով, ինչպիսի տերմիններով է արտահայտվել միջնադարյան Եվրոպայում և բուն Հայաստանում։ Հայ նախարարները, ինչպես հայտնի է, անվանվում էին «ծառայ» հայ Արշակունյաց թագավորների։ Այն պարտականությունները, որ նրանք ունեին թագավորի հանդեպ կոչվում էին ծառայություն։ Հայաստանի նախարարական կազմակերպությանը հատուկ «ծառայ» և «ծառայություն» համապատասխանում են, ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը, ֆեոդալական Եվրոպայի Servis, servitum և Ռուսաստանի Служ, служба բառերին[66]։

Նույնը մենք տեսնում ենք Կիլիկիայում։ Լամբրոնի իշխան Կոստանդինը ապստամբում է Հեթում Ա թագավորի դեմ, բայց ապստամբությունը մատնվելով ձախողության, արքայից խնդրում է թողնել Լամբրոն բերդը իրեն այն պայմանով, որ իր որդին մտնի թագավորի ծառայության մեջ։ Այսպես՝ «Ապա յղեաց Կոստանդին դեսպանս առ արքայն՝ (Հեթում Ա.) խնդրել զհաշտութիւն և տալ զորդիս իւր արքայի ի ծառայութիւն (ընդգծումը մերն է— Ս. Բ.) և ինքն մնալ ի բերդին։ Եվ արքայ ոչ կամեցաւ»[67]։

Լևոն Բ-ի թագավորության տոնահանդեսներին մասնակցած մի շարք իշխանների մասին, Սմբատ Սպարապետը իր տարեգրության մեջ գրում է. «Արդ այս վերոգրեալ բերդերս ժամանակ մի ծառայեցին (ընդգծումը մերն է—Ս. Բ.) թագաւորին Լևոնի, և ապա դարձան ի սուլտանն։ Եւ յետ Պեմունտ բրնձին մահուանն՝ բազում զինուորք եկին ի ծառայութիւն թագաւորին Լեւոնի»[68]։ Լևոն Բ-ը Լամբրոնի իշխան Հեթումին բանտ նետելուց հետո, «ապա հանեալ ի բանտէն ետ նմա գեղորայս բազումս և պատուով ընդունէր զնա. և նա ծառայէր (ընդգծումը մերն է—Ս. Բ.) նմա միամտութեամբ ըստ իմաստութեան իւրոյ»[69]։

Որ ծառայությունը եղել և պայմանավորվել է հիմնականում թագավորից ստացված «հայրենի ժառանգության» դիմաց, այդ՝ օրենքով սահմանում է Սմբատը իր Դատաստանագրքում։ Այնտեղ ասված է. «Թէ իշխան կամ այլ ոք՝ որ ի թագաւորի ծառութիւն (ընդգծումը մերն է—Ս. Բ.) (ծառութիւնը իրավացիորեն Սմ-

66 Н. Адонц, Арм. в эпоху Юст., стр. 459.
67 Գանձակեցի, էջ 287։
68 Տարեգիրք, էջ 210։
69 Նույն տեղում, էջ 212։

բատի Դատաստանագրքի ռուսերեն թարգմանության մեջ Աշոտ Գալստյանը թարգմանել է служба) և ի հնազանդութիւն լինի, և իրք պատճառ այնէ թագաւորին, հայնց որ մեռնի իրաւնաւք, նա եղբարքն և որդիքն՝ որ յառաջագույն լեալ լինին՝ նա վասն հաւրն մեղացն չլինին զրկածք ի հայրենեցն ի ժառանգութենէ[70] (ընդգծումը մերն է—Ս. Բ.)։

Կիլիկիայի թագավորին՝ որպես սյուզերենին ծառայող ֆեոդալները կոչվում էին նաև լիճ-ճորտք[71], իսկ վասալական պարտականությունները սյուզերենի հանդեպ կոչվում էր լճություն[72]։ Այսպես էր կոչվում նաև յուրաքանչյուր սյուզերեն ֆեոդալի և նրանից կախում ունեցող ստորին շերտում գտնվող վասալ ֆեոդալի փոխհարաբերությունները։ Լճության հիմքում ընկած էին հողատիրության՝ ֆեոդալական, ժառանգական և պայմանական ձևերը։

Այսպես, ուրեմն ֆեոդալները թագավորից ստանալով կալվածներ և բերդեր, մտնում էին նրա լճության մեջ, նրան ճանաչում էին երկրի վեհագույն տեր և կատարում էին վարչական և ռազմական մի շարք ծառայություններ։

Ինչպես Արևմտյան Եվրոպայում և բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում ֆեոդալական տները պարտավոր էին և այդ նրանց հիմնական պարտականությունն էր, պատերազմի ժամանակ սենյորին, թագավորին տրամադրել իրենց ենթակա զինվորական ուժերը։ Զինվորական պարտականությունը առավել ևս կարևոր էր Կիլիկիայի թագավորության համար, որը ինչպես հայտնի է, անընդհատ գտնվում էր միջազգային բարդ իրադրության մեջ, հաճախ ենթարկվելով արտաքին թշնամիների հարձակմանը։

Ֆեոդալների՝ թագավորի նկատմամբ կատարած ծառայության մյուս բնագավառը, ինչպես ասվեց, հանդիսանում էր քաղաքացիական կամ վարչական պարտականությունները։ Վերջինս արտահայտում էր հատուկ պաշտոնավարական պարտականություններով արքունիքում և պետության կառավարման զանազան ճյուղերում։

Արքունիքում նրանք իրենց ներկայությամբ առանձին փայլ էին տալիս թագավորական շքախմբին, հատկապես տոնական

70 Դատաստանագիրք, էջ 15։

71 Նույն տեղում, էջ 82։

72 Assises d'Antioche, p. 8—9.

մեծ հանդեսներին։ Վիլլեբրանտ Օլդենբուրգցին, որը ներկա է եղել 1212 թվականի ջրօրհնեքի առիթով կազմակերպված շքեղ զորահանդեսներին, նկարագրելով տոնահանդեսների ժամանակ թագավորին ուղեկցող շքախումբը, խոսում է մի շարք աստիճանների և արքունական գործակալությունների մասին[73]։

Առավել հետաքրքիր է աստիճանավորների՝ գործակալների մասնակցությունը թագավորի օծման հանդեսներին։ ԺԴ դարից մեզ հասել է թագավորի օծման և դրան հաջորդող ծիսակատարությունների մասին մի փաստաթուղթ, որը գտնվել է Սսի կաթողիկոսարանում[74]։ Փաստաթուղթը վերնագրված է. «Այս է կարգաւորութիւն օրհնութեան թագաւորի. ըստ մեծի եկեղեցւոյն Հռոմայ»[75]։

Ինչպես հայտնի է, 14-րդ դարում ուժեղացավ կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը արքունիքում և շատ հավանական է, որ դա առաջին անգամ օգտագործվել է 1343 թ. Գվիդոն Լուսինյանի, ծագումով ֆրանսիացի, օծման ժամանակ։ Այստեղ մեզ հետաքրքրողն այն է, որ փաստաթղթում նկարագրված է բազմաթիվ գործակալությունների և գործակալների՝ աստիճանավորների մասնակցությունը այդ օծությանը և թագավորի հանդեպ նրանց կատարած պարտականությունները։

Քաղաքացիական պաշտոնները, ինչպես հայտնի է, Արշակունյանց և Բագրատունյաց Հայաստանում կոչվում էին «գործ», պաշտոնավարությունը՝ «Գործակալություն»[76], իսկ պաշտոնյան «գործակալ»։ Համաձայն Ն. Ադոնցի՝ գործ և գործակալ տերմինները համապատասխանում են արևմտաեվրոպական ֆեոդալիզմի office և officier տերմիններին։

Կիլիկյան Հայաստանում ֆեոդալների գործակալական ծառայությունը թագավորի հանդեպ արտահայտվել է զանազան տերմիններով։ Ներսես Լամբրոնացին Լևոն Բ-ին ուղղված հայտնի իր նամակում օգտագործում է «գործ» և «գործակալ» տերմինները[77]։ Բացի «գործակալ»-ից մեծ չափով օգտագործվել են «աստիճանավորք»[78], լիճ ճորտք[79] և գործավորք[80] տերմինները։ Այդ պաշտոն-

73 Սիսուան, էջ 476։

74 Սիսուան, էջ 472—476։

75 Նույն տեղում։

76 Н. Адонц, Арм. в эпоху Юст., стр. 467. Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 60—74։ Ե. Սամուելյան. Հին հայ իրավունքի պատմություն, էջ 216։

77 Թուղթ ընդհանրական, էջ 210—211։

78 Դատաստանագիրք, էջ 69—70։

79 Սիսուան, էջ 472։

80 Նույն տեղում, էջ 475։

ներր աստիճանավոր[81] են կոչվել ըստ իրենց գրված պաշտոնի նշանակության և դիրքին։ Հատկապես թագավորական օծման ծիսակատարություններին գրված դիրքին։

Աստիճանավորները կամ գործակալները արքունիքում գրվում էին իրենց հատուկ տեղերը, ըստ իրենց գրված պաշտոնի կարևորության և նշանակության[82]։

Ինչպես ասվեց վերևում, գործակալության պարտականության հիմքում ընկած էր ֆեոդալական հողատիրության իրավունքը, հետևաբար այդ պաշտոնը հաճախ կրում էր ժառանգական բնույթ։ Այս կարգը, որը դեռևս գոյություն ուներ Արշակունյաց և Բագրատունյաց Հայաստանում[83], որոշ չափով պահվում էր նաև Կիլիկյան Հայաստանում։ Սակայն, սկսած թագավորության հիմնադրման ժամանակաշրջանից, այն հաճախ խախտվում էր։ Ինչպես վկայում են աղբյուրները, արդեն գործակալներ և աստիճանավորներ էին նշանակվում առավել հմուտ և ընդունակ ֆեոդալները, այլև չենք խոսում այն մասին, որ 14-րդ դարում ապրանքադրամական հարաբերությունների, առևտրական բարձր խավի՝ մեծահարուստների և «մեծատունների» առաջացման ժամանակաշրջանում, այդ պաշտոններում և նույնիսկ թագավոր[84] են նշանակվել և ընտրվել պարոն մեծատունները նկատի ունենալով նրանց հարստությունն ու փարթամությունը։

Դեռևս Լևոն Բ-ի ժամանակ, երբ հիմնականում նոր էր կազմակերպվում արքունիքը, նրա գործակալների ու պաշտոնյաների ընտրության հարցում խախտվել էր տոհմականության և ժառանգականության կարգը։ Սմբատ Սպարապետը վկայում է, որ Լևոն Բ-ն «և ուր իմանայր թէ գոյ այր պիտանի ի գործ (ընդգծումը մերն է — Ս. Բ.) ինչ և աջողակ, առաքէր և կոչէր խոստմամբ և բերեալ հանգուցանէր առատաձեր պարգևօք»[85] Սմբատի Տարեգրքի 1956 թ. հրատարակության մեջ գործին կից ավելացվել է «կամ ի զինվորություն կամ ի խօսս և ի պատասխանիս» արտահայտությունը, որը առավել ևս հաստատում է, որ վերոհիշյալ «այր իմաստուն և գիտուն» ֆեոդալները գործակալներ էին, որոնք կատարում էին և զինվորական, և վարչական պարտականություններ։ Այնուհետև Սմբատը խոսելով իր մասին ասում է. «և հանգուցանէր պարգևօք, յօրոյ մի ես եմ Սմբատ Սպարապետ, թարգմանող տառիս և պատմութեանս»[86]։ Այս հատվածից պարզ երևում է, որ նրանք՝ պաշտոն ստացողները գործակալներ էին, քանի որ սպարապետության գործակալություն լինելը ոչ մի կասկած չի կարող առաջացնել։

Գործակալությունների և արքունական պաշտոնների թվի, էության, անվանման և պարտականությունների մասին տեղեկություններ են հաղորդում Ներսես Լամբրոնացին, Սմբատ Սպարապետը, Հովհան Դարդելը և հատկապես՝ թագավորական կամ արքունական արխիվից մեզ հասած մոտ 375 փաստաթղթերն ու վավերագրերը։

Լևոն Բ-ի ժամանակաշրջանում գործող գործակալությունների թվի, անվանման և գործառների մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ներսես Լամբրոնացին. վերջինն իր հայտնի թղթում, որը ուղղված էր Լևոն Բ-ին՝ նրան կշտամբում է արևմտաեվրոպական ազդեցության ենթարկվելու և մի շարք գործակալական տերմիններ արևմտաեվրոպական հորջորջումներով կոչելու համար։ Ներսես Լամբրոնացին գրում է. «Մի կայք բացագրելուս ըստ լատինացւոց իշխանացն և թագաւորացն, զոր հայք մարգասկաթացն ասեն ձև, այլ դիք չարփուխ՝ որպէս ձեր նախնիքն աճեցուցէք զհերս և զմորուս, որպէս ձեր հարքն, զգեցիք զուռայլայն և թաւ, և մի փիլոն և զսպեալ պատմուճանս, հեծէք ի սախտեալ երիվարս ճուլանով, և ոչ յանսախտս լատինս լեհլով. տուք պատիւ անուանց՝ ամիրայ և հեճուպ և մարզպան, և սպասալար և այսպիսին, և մի սիր և պրօքսիմոս և գունդստապլ և մարաջախտ և ձիաւոր և լէհ, որ լատինացւոց է օրէն»[87]։

Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքում ավելի մանրամասն է խոսում արքունիքի կամ պալատի պաշտոնյաների մասին. «Վասն աստիճանաւորաց թագաւորական պաղատին» հոդվածում մեկ առ մեկ նշում է աստիճանավորների ու նրանց կատարած պաշտոնների ու պարտականությունների մասին։ Առավել

81 Նույն տեղում։ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 193—194։

82 Սիսուան, էջ 476։

83 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 216։

84 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 60—74։ Դարդել, էջ 59։

85 Տարեգիրք, էջ 208։

86 Տարեգիրք, էջ 99։

87 «Ներսիսի Լամբրոնացւոյ թուղթ առ Քրիստոսազոր իշխողն մեր Լևոն ի Եուստ Նէրսէսէ, որ ի Տարսոն սրբոյ եկեղեցւոյ պաշտոնեայ», Վենետիկ, 1865, էջ 239—240։ Այսուհետև, Թուղթ առ Լևոն։

ուշագրավ է, որ նույն հոդվածում Սմբատը ասում է, որ հայերը վերոհիշյալ պալատական պաշտոններն ու սովորությունները վերցրել են հույն թագավորներից։ Այդ հոդվածում նշված են պալատական ինը աստիճանավորների և հինգ դասերի մասին[88]։ Գործակալությունների և նրանց վարած պաշտոնների ու պարտականությունների բովանդակության մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում արքունական փաստաթղթերը։

Վահրամ Ռաբունին իր շափածո տարեգրության մեջ նշում է մի շարք գործակալությունների մասին, որոնք ավելացված են 13-րդ դարի երկրորդ կեսին Հեթումյան Լևոն Գ թագավորի ժամանակ։

Առավել խոշոր գործակալությունների թիվը հասնում էր տասի, իսկ ընդհանրապես արքունիքում ծառայող աստիճանավորների և այլ մանր պաշտոնյաների թիվը հասնում էր մոտավորապես 25-ի։

Ներքևում բերում ենք մեծ և փոքր գործակալությունների և պաշտոնների ցուցակը՝ ցույց տալով նրանց անվանման բյուզանդական, արաբական, ֆրանկական և հայկական ծագումը։

Կիլիկյան հայկական թագավորությունում գործակալությունների մեծ մասը իրենց բովանդակությամբ և էությամբ նման են եղել Արշակունյաց և Բագրատունյաց ժամանակաշրջանում գործող գործակալություններին։ Սակայն ձևով որոշ տարբերություն է նկատվում վերջինների և առաջինների միջև։ Այստեղ՝ Կիլիկիայում նոր պայմաններում արևմտաեվրոպական և բյուզանդական ու արաբական ֆեոդալիզմի ներդործության տակ մտցվել են մի շարք նոր պաշտոններ ու գործակալություններ, որոնք սակայն միայն հորջորջմամբ են տարբերվում հայկականից, իսկ բովանդակությամբ գրեթե նման են նրանց։

88 Դատաստանագիրք, էջ 68—70։

Գործակալությունների և արքունական պաշտոնների անվանումը

Տիտղոսները, անունները Կիլիկ. հայկական թագավ.	Բուլգարական ծագումը	Արաբական ծագումը	Ֆրանկական ծագումը	Պաշտոնի դերը և հայկական ծագումը
Թագավոր	—	—	—	թագավոր
Թագադիր	—	—	—	թագադիր
Գունդստաբլ	—	—	connetable	սպարապետ, բանակի գլխավոր հրամանատար
Մարեշալ	—	—	maréchal	ինանդապետ, բանակը ապրակ. նյութերով ապահովող
Սենեսկալ	—	—	sénéchal	սեղանապետություն
Պրոքսիմոս	Πρόξιμος	—	—	արքունի գանձարանապետ, մաքսապետություն
Գայլ	—	—	baïl	խնամակալ
Ջանցլեր	—	—	chancelier	ատենադպիր, արքունի քարտուղար
Հեճուպ կամ Ջամբրլայն	—	հեճուպ	chambelan	սենեկապետ
Ամիր	—	էմիր	—	իշխան
Լեճ	—	—	lègat	պատվիրակ, պատգամավոր
Գողլեր	—	—	—	սեղանապետ
Ջավուշ կամ ավագ ջավուշ	—	ջավուշ	—	սուբհանդակ և սուբհանդակապետ
Մինապան կապիտան	—	մինեպան	chevitain	նավահանգստի վերակացու
Բարոն	—	—	Baron	իշխան
Ասպետ, ձիավոր	Ἀσπέτ	—	chevalier	ձիավոր, ասպետ
Դրաներեց	—	—	—	դռներեց
Դուք	Δούξ	—	Duc	դուքս
Կունդ	Κούντ	—	comte	կոմս
Սեպաստոս	Σεβαστός	—	—	իշխանական աստիճ.
Պան սեպաստ	Πανσεβαστός	—		արքունական աստիճ.
Կիր	Κύριος	—	sire	տէր
Մարգպան	—	—	—	սահմանապահ
Իշխանաց իշխան ավագ պարոն		—	—	իշխանաց իշխան

ա. Թագադիր գործակալություն

Թագավորության հիմնադրման ժամանակ արքունիքում վերականգնվեց թագադիր գործակալի պաշտոնը։ Բուն Հայաստանի ավանդույթների հիման վրա, Հեթումյան դինաստիայի իշխանու-

թյան գլուխ անցնելու ժամանակ Կոստանդին թագավորահայրը արքունիքում ստեղծում է թագադիր գործակալություն և այն հանձնում է Լամբրոնի Կոստանդին իշխանին։ «Կամեցաւ թիկունս օգնականութեան իւր առնել,— գրում է Կիրակոս Գանձակեցին,— զորդին Հեթմոյ՝ զԿոստանդին համանուն իւր, զորդին Հեթմոյ զաներն իւր. և տայ ի նա զԼամբրոնն՝ զսեփականն իւրեանց, և եդ զնա թագադիր որդւոյ իւրոյ»[89]։ Այս թագադիր իշխանի գովասանքը հյուսել է Հուսիկ գրիչը 1237 թ. Գրիգոր Նարեկացու Աղոթամատույցի հիշատակարանում, որը գրված է Լամբրոնի տիրոջ համար։ Այնտեղ ասված է՝ «Բարեպաշտ և աստուածասէր իշխանաց իշխող Կոստանդին Սեբաստաւս և թագադիր Հայոց տէր անմատչելի զդեկիս Լամբրաւնի»[90]։ Նույն իշխանի մասին Հովսեփ գրիչը նվիրում է հետևյալ չափածո տողերը.

Եւ որ բանիւ եղև պատճառ
Եւ զրզձալիս իւր էառ
Զիշխանացս մեր իշխան
Զթագադիրս արքունական
Զկոստանդին տէր Լամբրոնի
Բարեպաշտ Սեբաստոսի[91]։

Տաճարականների օրդենին 1233 թ. շնորհված մի արտոնագրում Կոստանդին Լամբրոնի տերը իրեն անվանում է «տէր Լամբրոնի և թագադիր Հայոց»[92]։

Այնուհետև աղբյուրներում հիշատակվում են նաև Օշին Գ-ը՝ Կոստանդին Լամբրոնացու որդին «թագադիր, Ասկուրասի և Մարնիշի տէր և մարիշալ»[93]։

Սմբատը իր Դատաստանագրքի «Վասն աստիճանաւորաց թագաւորական պաղատին» հոդվածում գրում է. «Ցառաջ եղենտիարքն են, որ են թագադիրք. և ունեան սբեմ ոսկի դիպակ վրդնատաշենք, և ի ձեռին շալկեն դաւաղան ոսկի. և տանին յառաջ զթագաւորական հաքնելիքն՝ զոր խնդրէ արքայն։ Երկրորդ դասք վեստիտորայն է, որ է թագադիր արքային, և սբեմն և դաւաղանն նոյնն է, ապա այլ հագուստք հագնին»[94]։

Թագավորի թագադրության հանդեսի ժամանակ թագադիր գործակալը թագավորի գլխին թագ էր դնում և կապում էր արքայական պատիվը։ Իրև պալատական հանդեսների արարողապետ, հետևում էր արքունիքում սահմանված կարգի պահպանմանը։ Նա հետևում էր, որպեսզի իշխանները ներկայանան թագավորին պատշաճ ձևով և զբաղեցնեն իրենց հատկացված տեղերը։ Թագադիր գործակալին մենք հանդիպում ենք նաև թագավորության վերջին շրջանում։ Սսի կաթողիկոսարանում գտնված թագավորության օծման փաստաթղթում, որը շատ հավանական է, որ օգտագործվել է Գվիդոն Լուսինյանի և Լևոն Զ Լուսինյանի թագադրության արարողություններում, թագադիր գործակալի մասին գրված է. «Եւ ընտրեալն ունեայ հալաւ ձիաւորի փիլոն-ջաղջեր և մահմեղ, և աստիճանաւորքն՝ գունդստապլն, թագաւորի նշանաւն և թագադիրն թագաւն»[95]։ Թագադրության արարողությունից հետո, երբ թագավորը և մյուս աստիճանավորները սեղան էին նստում, թագավորը «վստահանայ սենեսկալն գծաղիկն ի լիճ հորտ մի պատշաճաւոր նոյնպէս և թագադիրն զմիւս թագն...»[96]։

բ. Սպարապետություն

Սպարապետության գործակալությունը գլխավորում էր սպարապետը[97], որը աղբյուրներում հիշատակվում է նաև գունդստաբլ՝ արևմտաեվրոպական տերմինով[98]։

Այս գործակալությունը նույնպես կազմակերպված էր հայկական հին ավանդույթների հիման վրա և նույնիսկ գործակալությունը իր արևմտաեվրոպական անվանվամբ նման էր 5-րդ դարի Հայաստանում օգտագործված շահ-ախոռապետ տերմինի[99] (Comes stabuli) կազմությանը։

Ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում սպարապետը հանդիսանում էր պետական կամ արքունական բանակի

89 Գանձակեցի, էջ 287։
90 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 70։
91 Նույն տեղում, էջ 77։
92 Documents arm., T. I, Introduction.
93 Ջամչյան, հ. 3, էջ 279։

94 Դատաստանագիրք, էջ 68։
95 Սիսուան, էջ 475։
96 Նույն տեղում։
97 Տարեգիրք, էջ 235—238։
98 Սամուել Անեցի, էջ 158։ Տարեգիրք, էջ 200։
99 Եղիշէ, Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 74։

գլխավոր հրամանատարը պատերազմի ժամանակ։ Նա գլխավորում էր իշխանական զորքերը, որոնք համախմբված ձևով հանդես էին գալիս թշնամու դեմ։ Պետք է ընդգծել, որ միանգամայն սխալ է Ղ. Ալիշանի այն կարծիքը, որ Կիլիկիայում սպարապետը միայն գլխավորում էր հետևակ զորքը[100]։

Գլխավոր հրամանատարները Կիլիկիայում ունեին մեծ կշիռ և բարձր հեղինակություն։ Այդ գործակալությունը հաճախ հանձնվում էր արքունական տան անդամներին, որոնք միևնույն ժամանակ ավագ պարոններ և խոշոր հողատերեր էին և որ կարևորն է, մի շարք ամրոցների և բերդերի, հատկապես սահմանային բերդերի բերդատերեր։ Այսպես, Կիլիկիայի նշանավոր սպարապետներից Սմբատը, որը Հեթում Ա արքայի երեց եղբայրն էր, տեր էր «անմատչելի զղեկին Պապերոնին, Սմպատայ Կլային, Աստուսայ, Ֆարխնոցն, Պապատուին, Սիկոյ և Մուռանդնին»[101]... շարունակության մեջ Սմբատը իր մասին ասում է, որ նա վերոհիշյալ բերդերի վրա ծախսել է «բազում ոսկիս և արծաթս անդ վատնեաց ի պետս զինուորաց և զղեկին այն կարեաց»[102]։

Սպարապետի պաշտոնը նույնպես չի եղել որևէ մի իշխանական տոհմի ժառանգական պաշտոն, այլ այդ պաշտոնին նշանակվել են առավել ընդունակ խոշոր ֆեոդալներ, որոնք պայքարում էին կենտրոնական իշխանության ուժեղացման համար։ Բացի սպարապետության գործակալությունից, Սմբատ Սպարապետը հիշատակում է նաև զինվորական մի այլ հրամանատարի մասին հետևյալ վկայության մեջ. «Սպասալարն Լևոն, մականուն Ապլհասանանց»[103], որը ծառայում էր Սմբատ Սպարապետի հրամանատարության տակ։

Ղևոնդ Ալիշանը շփոթելով սպասալարի և սպարապետի պաշտոնները առաջինին վերագրում է գլխավոր հրամանատարի պաշտոնը։ Մինչդեռ իմաստից զուրկ կլիներ հենց վերոհիշյալ վկայության մեջ երկու գլխավոր հրամանատարների առկայությունը, քանի որ անհերքելի է Սմբատ Սպարապետի գլխավոր հրամանատար լինելու հանգամանքը։

Աղբյուրներում հիշատակված սպասալար տերմինը կազմված է արիական կամ իրանական ծագում ունեցող երկու բառից՝ առա-

100 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 423։
101 Տարեգիրք, էջ 239։
102 Նույն տեղում։
103 Նույն տեղում, էջ 234։

ջինը սասպ,— ձի, որը սասպ ձևով գոյություն չունի հայերենում, սակայն սասպ վիճակում մնացել է բազմաթիվ բարդ բառերում։ Երկրորդ մասը՝ սալար (Salar) նշանակում է բանակի զորավար։ Հետևաբար սխալ չի լինի ասել, որ Կիլիկյան պետական բանակում սպասալար էր անվանվում հեծելազորի զորավարը՝ հրամանատարը, իսկ սպարապետը կամ գունդստաբլը գլխավորում էր ամբողջ բանակը։

Որ սպարապետության գործակալությունը հանդիսացել է առաջնակարգ և ամենակարևոր գործակալություն, այդ երևում է նրանից, որ գործակալներին թվարկելիս աղբյուրները առաջին հերթին հիշատակում են սպարապետին և ապա մյուս գործակալներին։

Ուշագրավ է թագավորի օծության փաստաթղթի մեջ նշված կարգը, որտեղ ասված է. «...Եւ մտեալ ի ներքո նստի թագաւորն (այսինքն թագավորության ծիսակատարությունը կատարվելուց հետո, թագավորը մտնում էր պալատ և սկսվում էր տոնահանդես —Ս. Բ.) յաթոռ թագաւորութեան, և աստիճանաւորքն (գործակալները—Ս. Բ.) կանգին յաջակողմն և ի ձախակողմն և գունդստապլն նշանիւն հանդերձ՝ առաջի թագաւորին» և թագավորը նվիրում է գունդստաբլին «երիվար և ոսկի և արծաթ»[104]։

Սպարապետների ցուցակը, որոնք հիշատակվում են աղբյուրներում 12—14-րդ դարերում.

1. 1188 թ. պարոն Բաղդին[105]։
2. 1207 թ. պարոն Աբլղարիբ[106]։
3. 1210—15 թթ. Կոստանդին Ավագ պարոն[107]։
4. 1226—1275 թթ. Սմբատ գունդստաբլ[108]։
5. 1277—1307 թթ. պարոն Օշին, մարեշալ Օշինի քրոջ որդին, նախ սենեշալ, ապա գունդստաբլ[109]։
6. 1314 թ. պարոն Հեթում՝ Կոռիկոսի սենյոր[110]։
7. 1329 թ. պարոն Կոստանդին[111]։

104 Սիսուան, էջ 475։
105 Տարեգիրք, էջ 200։
106 «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», էջ 100—101։
107 Նույն տեղում, էջ 107։
108 Տարեգիրք, էջ 235—239։
109 Չամչյան, հ. 3, էջ 279։ Galanus, T. I, p. 100—101.
110 „Histoire de Chypre de Mas Latrie", T. III, p. 692.
111 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 193—194։

8. 1342 թ. պարոն Ջիվան[112]։

9. 1371 թ. ասպետ Լիպարիտ[113]։

Երկրի ռազմական ուժերի, բանակի սպասարկման համար արքունիքում գործում էր նաև «ինտենդանտության» գործակալությունը։ Վերջինիս խնդիրն էր ռազմասարք և պարեն մատակարարել բանակին։ Գլխավոր «ինտենդանտ»-ը անվանվում էր մարաջախտ կամ «մարաջախտ թագաւորութեան Հայոց»[114]։ Նա գունդստաբլի անմիջական տեղակալն էր։ Թագադրության փաստաթղթում ասված է. «և մտեալ ի ներքո նստի թագաւորն յաթոռ թագաւորութեան և աստիճանաւորքն կանգնին յաջակողմն և ի ձախակողմն և գունդստապլն նշանիւն հանդերձ՝ առաջի թագաւորին... և մարաջախտն առ դրանն՝ նշանիւ գունդստապլին»[115]։ Սեղան նստելիս աստիճանավորներն ունեցել են իրենց հատուկ տեղը՝ աթոռը կամ բազմոցը[116]։

Աղբյուրներում հիշատակված մարաջախտներն են.

1. 1207 թ. Վասիլ մարաջախտ[117] թագավորության հայոց։

2. 1214 թ. Վահրամ մարաջախտ[118]։

3. 1277 թ. Օշին Գ, Հեթումյան Կոստանդին Լամբրոնացու որդին, Ասկուրասի տեր[119]։

4. 1307—1314 թթ., պարոն Սմբատ մարաջախտ, Ասկուրասի տեր[120]։

5. 1374—1375 թթ., Սոհիե Դուլկարտ, մարաջախտ թագավորության հայոց[121]։

Եվրոպական երկրների թագավորական պալատների կապիտանի նման արքունիքում գոյություն ուներ արքունի կուրիայի «կապիտան» պաշտոնը, որը մարեշալի օգնականն էր։ Աղբյուրներում հիշատակվում են հետևյալ կապիտանները.

1. 1307 թ. Թորոս արքունի կապիտան։

---

112 Documents arméniens., T. I, Introduction.

113 «Հանդէս ամսօրեայ», 1933, էջ 129—138։

114 Սամուել Անեցի, էջ 209—210։

115 Միսուան, էջ 473։

116 Նույն տեղում։

117 *V. Langlois*, Essai, p. 55.

118 Սամուել Անեցի, էջ 210։

119 Չամչյան, հ. 3, էջ 279։

120 *Galanus*, T. I, p. 468.

121 Դարդել, էջ 115։

2. 1307—1320 թթ. Հեթում, հայկական արքունիքի կապիտան[122]։

(„Aytonus dominus Nigrini capitanus curiae regis Hermeniae").

գ. Խնամակալության կամ պայլության գործակալությունը

Ինչպես սույն գլխի առաջին բաժնում նշեցինք այս պաշտոնը, գոյություն ուներ դեռևս 12-րդ դարի առաջին կեսում, երբ Կիլիկիայում չէր կազմավորվել թագավորությունը։ Գործակալը կոչվում էր պայլ։ Այս տերմինը և հենց ինքը գործակալությունը ծագումով արևմտաեվրոպական էր և բնականաբար անվանումը՝ լատինական (Bajulus balius)։

Պայլության ինստիտուտը հանդես է եկել Եվրոպայում միջին դարերում։ Հայտնի է, որ Անգլիայի թագավոր և Նորմանդիայի դուքս Հենրիխ Բ-ն 1150 թ. առաջինն է, որ հիշատակում է պայլի մասին իր հրովարտակներից մեկում[123]։ Կիլիկիայում պայլը հանդիսանում էր թագավորի առաջին խորհրդականը և թագավորի բացակայության դեպքում փոխարինում էր նրան։ Թագավորական պայլը՝ baillis royaux թագավորին ներկայացնում էր Արևմտյան Եվրոպայի երկրներում և լատինական Արևելքում։

Լևոն Բ-ի կողմից 1214 թ. հյուրընկալներին Վաներ ամրոցը վաճառքի ձևով նվիրելու կապակցությամբ գրված փաստաթղթում ասված է, որ «այս գործառնությունը կատարում ենք մեր ժառանգորդների, հպատակ պարոնների և պայլի համաձայնությամբ (bayoloram assense)»[124]։

Էդուարդ Դյուլորիեն ենթադրում է, որ պայլությունը արքունիքում հատուկ մի ատյան էր, որ ենթարկվում էր արքունի կամ վերին ատյանին։ Այս ենթադրության որպես հիմք ընդունվել է 1271 թվակիր մի վկայություն, որտեղ խոսվում է թագավորական արքունի պայլության մասին[125]։

Արքունի պայլությունը (Bailis regis) հիշատակվում է նաև մի ակտում, որը կազմվել է Այասի նավահանգստի բաժանը[126]։ Արքունի պայլության որպես արքունի ատյանին կից գործող ատյանի մասին ուրիշ վկայություններ մեզ չեն հասել։

---

122 *Galanus*, T. I, p 282.

123 Documents arméniens, T. I, p. LXXXIX.

124 Documents arm., T. I, p. LXXXIX.

125 *V. Langlois*, Le trésor, p. 121.

126 „Histoire de Chypre de *Mas Latrie*", T. II, p. 78—79.

Պայլությունը հիմնականում հանդիսացել է խնամակալական գործակալություն, որը կատարել է իր պաշտոնը թագավորի կամ թագաժառանգի անչափահասության ժամանակ։ Որպես կանոն այդ պաշտոնին էին նշանակվում երկրի ֆեոդալական խոշորագույն տների գլխավորողները և հաճախ, ինչպես աղբյուրներն են վկայում, մյուս խոշոր գործակալությունները գլխավորող գործակալները, ինչպիսիք են՝ գունդստապլը, մարեշալը, սենեշալը և այլն։ Ի տարբերություն Արշակունյաց Հայաստանում կիրառվող այն սկզբունքին, որտեղ յուրաքանչյուր գործակալություն նախատեսված էր որպես մի նախարարական տոհմի ժառանգական առանձնաշնորհում, ինչպես սպարապետությունը՝ Մամիկոնյաններին, հազարապետությունը՝ Ամատունիներին, մախխազությունը՝ Խորխոռունիներին[127], այստեղ՝ Կիլիկյան Հայաստանում գործակալներ էին նշանակվում առավել կարող և գիտուն անձնավորություններ։

Խնամակալի պաշտոնին զուգահեռ, պայլը կատարել է նաև անչափահաս թագաժառանգի դաստիարակի դեր։ Այսպես, Լևոն Բ-ը, երբ իր գահը ժառանգում է Զաբել դստեր, վերջինիս որպես դաստիարակ, նշանակում է «մեծ իշխանն Սիրադան, որ էր տէր բազում բերդից և գաւառաց... և էր սա աշտիճանաւ սենեսկալ Հայոց, որում յանձն առնէր թագաւորն զդուստրն իւր, հանդերձ պայլիւն Յոհաննու հայրապետին և իշխանացն ամենեցուն»[128]։ Նույն իշխանին Լևոն թագավորը իր կյանքի վերջին տարիներին նշանակում է պայլ. այդ մասին ասված է. «ի ՈԿԷ թվին թագաւորին Լեւոնի վախճան մահուն հասանէ և նորա ժողովեալ առ ինքն զիշխանսն՝ դնէ Պայլ Հայոց իշխան մի որում անուն եր Սիրադան։ Զդուստրն իւր ի նա յանձնէ և ի կաթուղիկոսն տէր Յովհաննէս, և ինքն փոխի առ Քրիստոս»[129]։ Բացի թագավորից, պայլ էր նշանակում նաև իշխանական խորհուրդը կամ վերին ատյանը։ Երբ Զաբելին ամուսնացնում են Անտիոքի կույր բրինձ Բոհեմունդի որդու՝ Ֆիլիպի հետ, որպես խնամակալ, հայ իշխանները նշանակում են Կոստանդին Բարձրբերդցի իշխանին՝ «պայլ և ավագ պարոն թագավորության»[130]։

Պայլության գործակալության դերն ու նշանակությունը հատկապես մեծանում էր, երբ թագավորական գահը թափուր էր մնում

127 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 68—73։

128 Տարեգիրք, էջ 222։ Սիրադանի մասին տե՛ս նաև V. Langlois, Le trésor...., p. 106.

129 Սամուել Անեցի, էջ 148։

130 Նույն տեղում։

և երկրում ծավալվում էր ֆեոդալական երկպառակությունները։ Այս ժամանակ պայլը գլխավորում էր բանակը՝ հայոց հեծյալը և հնազանդեցնում էր կենտրոնախույս տրամադրություններ ունեցող իշխաններին[131]։

Պայլությունը, որպես գործակալություն, գործել է մինչև թագավորության անկումը։ 14-րդ դարում Լևոն Ե-ի անչափահասության ժամանակ պայլության գլուխն են կանգնում նույնիսկ երեք կամ չորս՝ «մեծագույն և փառավոր իշխանքն»[132]։

14-րդ դարի հիշատակարաններից մեկում տրվում է պայլության ֆունկցիաներն ու իրավասությունները։ Այսպես. «Արդ եղև վճար այսր մեկնութեան ի թագաւորութեան Լեւոնի որդւոյ Աւշնի (1320—1342) (—Ս. Բ.) նորընծայի դեռաբոյս մանկանն յոյժ երկեղածի և աստուածասիրի զօրոյ զթագաւորութիւն յաղագս տղայութեան իւրոյ խնամէն և հոգան երեք մեծագույն և փառաւոր իշխանքն երկու եղբարքն հարազատ պարոն Աւշին և պարոն Կոստանդին, որք աստիճանաւ աւագ պարոն և գունդստապլ կոչին և երրորդն պարոն Հեթում Նըղբրցի, որ խառնեալ և միացեալ է ընդ նոսա որպէս միտք ընդ հոգի և ընդ մարմին ուղղելով զբոլոր տունն արքունի ի բարին...»[133]։

Պետք է ընդգծել նաև այն հանգամանքը, որ պայլությունը եղել է ոչ մշտական գործակալություն։ Այն ստեղծվել, գործել և վերացվել է հենց որ վերացել են նրան ստեղծող պայմանները։

Սիրիայի խաչակիր պետությունների օրինակով պայլ էր նշանակվում նույնիսկ որևէ մի թագավոր՝ թագաժառանգ իշխանի նկատմամբ։ Այսպես, Ռուբեն Ռայմոնդ Անտիոքի իշխանը տաճարականներին շնորհած իր արտոնագրում Լևոն Բ-ին անվանում է «Մեծ հաւն ու պայլ» (Avanculus et baïlus meum)[134]։

Պայլը կամ թագավորի գլխավոր խորհրդատուն՝ թագավորի երիտասարդության շրջանում կոչվել է «թագավորահայր». այսպես էր կոչվում Հեթում Ա-ի հայրը՝ Կոստանդին Հեթումյանը[135]։ Կարելի է ենթադրել, որ այդ հորջորջումը և պաշտոնը ստեղծվել էր բյուզանդական արքունիքի ազդեցության նրեքս։ Վերջինում՝ դեռևս Թեոդոս մեծի ժամանակ արքայահոր տիտղոսը շնորհված

131 Տարեգիրք, էջ 223—226։

132 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 193—194։

133 Նույն տեղում։

134 V. Langlois, Essai, p. 25.

135 Գանձակեցի, էջ 287։

է եղել նշանավոր գիտնական Արսենին, նրան վստահելով իր երկու որդիների՝ Արկադիոսի և Հոնորիուսի դաստիարակությունը[136]։ «Արքայահայր» տիտղոսը առաջացել է Լևոն Իմաստասեր կայսրի ժամանակ, երբ նրա աներոջը տրվել էր այդ տիտղոսը։ Բուն Հայաստանում Արշակունիների ժամանակ, ինչպես ենթադրում է Խ. Սամուելյանը, գոյություն է ունեցել «հայրություն» տիտղոսը, որը կրել են մարզպետ գործակալները[137]։

դ. Ջանցլեր կամ արքունական քարտուղարություն

Արքունի քարտուղարության գլխավոր գործակալը կոչվել է Թագավորական ջանցլեր կամ կանցլեր[138]։ Այդ պաշտոնը կոչվել է նաև ատենադպիր։ Ինչպես հայտնի է ատենադպիր տիտղոսն ու պաշտոնը գոյություն ուներ նաև հին Հայաստանում։ Սակայն Կիլիկյան Թագավորությունում գործող ջանցլերի պաշտոնը, նույն բովանդակությունը չուներ, թեև որոշ կողմերով նման էր բուն Հայաստանի ատենադպրի՝ արքունի քարտուղարությանը։ Հետևաբար կարելի է հաստատ ասել, որ ջանցլեր տերմինը և նրա բովանդակությունը վերցվել էր ֆրանկ պետություններից։

Ջանցլերի կամ «Մեծաց ջանցլերի» պաշտոնի մշտական կրողը Սսի արքեպիսկոպոսն էր[139]։

Ինչպես կարելի է կռահել, Սսում էր գտնվում արքունի կանցելարիան, հետևաբար և նրա արխիվը։ Վերջինս այրվեց 1263 թ. մամլուկների հերթական արշավանքի ժամանակ և վերջնականապես ոչնչացվեց 1375 թ.՝ Թագավորության կործանման օրերին։

Այդպիսի կարևոր մի գործակալության, ինչպիսին էր պետական ջանցլերը, հանձնվում է լեզուներ իմացող և բազմակողմանի գիտելիքներ ունեցող բարձրաստիճան հոգևորականներին։ Դա Ռուբինյաններին ձեռնտու էր նաև այն պատճառով, որ այդ պաշտոնը չէր դառնում որևէ մի ֆեոդալական տան ժառանգական առանձնաշնորհումը։ Թեև հայտնի է, որ հոգևորականներն էլ

136 *Theophanus*, Venise, 1727, p. 53.

137 Խ. Սամուելյան, *Հին հայ իրավունքի պատմություն*, էջ 351։

138 *V. Langlois*, Le trésor, p. 107, 110, 143. *V. Langlois*, Numismatique d'Arménie au moyen âge, p. 17.

139 «Բազմավէպ», 1847 թ., էջ 92։

իրենց հերթին հանդիսանում էին ֆեոդալական խոշոր տների ներկայացուցիչները, սակայն, սկսած 13-րդ դարի վերջից հոգևորականության ներկայացուցիչների ստանձնած պաշտոնները՝ եկեղեցում և վանքում, քաղաքների առաջնորդարաններում՝ ընտրովի էին, հետևապես Սսի արքեպիսկոպոսն էլ ընտրովի էր և ոչ-ժառանգական։

Հաճախ խախտվում էր վերոհիշյալ կարգը և կանցլերի պաշտոնին նշանակվում էին ոչ թե Սսի արքեպիսկոպոսները, այլև հմուտ լեզուներ իմացող առավել կարող հոգևորականներ. վերջինների լավագույն ներկայացուցիչն է Վահրամ Ռաբունի վարդապետը, որը մոտավորապես 30 տարի վարել է ատենադպիրի պարտականությունները։

Պիտի ենթադրել, որ արքունի քարտուղարության արխիվ վարելը բավականին բարդ գործ էր։

Արքունի քարտուղարությունում օգտագործվող հիմնական լեզուն եղել է Կիլիկյան միջին հայերենը. դա երևում է նրանից, որ մեզ հասած օտար լեզուներով փաստաթղթերին զուգահեռ գտնվել են նաև նրանց մի մասի հայերեն բնագրերը։ Մյուս կողմից պետական քարտուղարությունում աշխատելիս են եղել բազմաթիվ արքունի թարգմաններ (dragomani curiae), որոնք թարգմանելիս են եղել հայկական բնագրերը ֆրանսերենի և լատիներենի։ Բացի այդ, գոյություն են ունեցել բազմաթիվ թագավորական կամ արքունական քարտուղարներ, որոնք եղել են գրասենյակի ծառայողներ (scriptoris regis)[140]։ Երկրի ներսում գործերը վարվում էր հայերեն լեզվով, իսկ օտար պետությունների հետ՝ ֆրանսերեն և լատիներեն[141]։

Մեծաց ջանցլերը կոչվում էր նաև լեգատ (legatis), որը նշանակում է կապ հաստատող, պատգամավոր, պատվիրակ, քանի որ վերջինս ոչ միայն գլխավորում էր արքունի քարտուղարության բոլոր գործերը, այլև հաճախ բանակցություններ էր վարում օտար պետությունների ներկայացուցիչների հետ[142]։

Մեզ հասած հայերեն վեց հրովարտակներում օգտագործված հայ գրերը փոքրատառ են և միայն խորագրերը՝ մեծատառ։ Լատիներեն և ֆրանսերեն փաստաթղթերի գրերը և լեզվական ոճը

140 *V. Langlois*, Essai, p. 11, 12.

141 Նույն տեղում։

142 *V. Langlois*, Le trésor..., p. 107—110. *V. Langlois*, Essai.., 8, 11, 56.

նման է 12—14-րդ դարերում սիրիական խաչակրաց ֆրանկ պետություններում օգտագործված գրերի ձևին և լեզվական ոճին։ Կարելի է բերել մի շարք օրինակներ, որտեղ բացահայտորեն նկատվում է այդ բանաձևերի նմանությունը Երուսաղեմի թագավորության՝ թագավորի կողմից օգտագործված բանաձևերին[143]։

Մեծաց ջանցլերի պաշտոնը զբաղեցնող անձը՝ Սսի արքեպիսկոպոսը միևնույն ժամանակ գլխավորել է Սսի արքեպիսկոպոսական ատյանը (Curiae Sisensis Episcopi)[144]։

Պահպանված հրովարտակներն ու փաստաթղթերը մեզ հնարավորություն են տալիս վերականգնելու այն ջանցլերների ցուցակը, որոնք պաշտոնավարել են 1201 թվից մինչև 14-րդ դարի կեսերը։

1. 1201 թ. Հովհաննես Սսի արքեպիսկոպոսը Դրազարկի Աբբա[145]։

2. Բարսեղ կամ Վասիլ[146]։

Ե. Ատենադպիրներ և արքունի քարտուղարության պաշտոնյաներ

1. 1207 թ. Բարսեղ ատենադպիր[147]։

2. 1210 թ. Բարթուղիմեոս[148] (regiae duanne secretorum protanotarus)։

3. 1214 թ. Բովան[149], արքունի քարտուղարության լատիներենի թարգման։

4. 1245 թ. Գրիգոր եպիսկոպոս[150]։

5. 1260—1289 թթ. Վահրամ Ռաբունի[151]։

6. 1271 թ. Ժոֆրե գրագիր, հայերենից լատիներենի թարգման[152]։

7. 1307 թ. Վիլիամ, արքունական թարգման[153]։

8. 1307 թ. Գրիգոր, ջանցլեր[154]։

9. 1333 թ. Հովհաննես[155] honorabilis viri et cancellarius.

10. 1344—1345 թ. Բարսեղ, նոտարական գրասենյակի պետ[156]։

Բացի թագավորական կամ արքունական քարտուղարության՝ Կիլիկիայի թագավորին ներկայացնող պաշտոնյայից, ջանցլերներ ունեին նաև օտար պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներից՝ հյուպատոսները, կամ Կիլիկիայում բնակություն հաստատած օտար բնակիչների պայլերը[157]։ Ջանցլերներ ունեին նաև հոգևոր օրդենները, որոնք ենթարկվում էին Կիլիկիայում գործող օրդենների հրամանատարին կամ բերդատերին։

զ. Սեղանապետություն

Սեղանապետության գործակալը կոչվում էր սինեշալ կամ սինեջալ, հիշատակվում է նաև սենեսկալ[158], սենեսկալ հայոց[159] և այլն։ Արքունիքում բավականին ազդեցություն էր վայելում արքայական պալատի կառավարիչ, արքունիքի եկամուտներն ու ծախսերը տնօրինող և հսկող սինեշալը։ Սա համապատասխանում է արևմտաեվրոպական երկրների թագավորական պալատներում՝ համապատասխան գործակալությունը ղեկավարող մեծ դոմեստիկ (grand domestique) տիտղոսին[160]։ Այս գործակալությունը հանձնվում էր առավել խոշոր ֆեոդալներից մեկին, որը կանգնած էր թագավորական տանը մոտիկ և այդ պատճառով էլ աղբյուրներում անվանվում է «հավատարիմ տան արքունի»[161]։

---

143 Լևոն 2-րդը ստորագրել է Leo Dei gratia rex Armenorum կամ Leo Dei romanieriem perie gratia rex Armenia, կամ թե „Et sigillavimus nostrae regiae magistatis aurie bulla և կնքեցաք արքունական վուլուս։

144 *V. Langlois*, Le trésor, p. 107.

145 *V. Langlois*, Essai, p. 56. Trium Arcumabbas regni Armeniae legatis et cancellarius.

146 *V. Langlois*, Essai, p. 56. „Fidellis cancellarius domini regis".

147 *V. Langlois*, Essai, p. 56.

148 Նույն տեղում։

149 Նույն տեղում։

150 Նույն տեղում, էջ 27, 56։

151 Ռաբունի, էջ 23։

152 Documents arm., T. I, p. LXXXIX.

153 „Histoire de Chypre de Mas-Latrie", T. III, p. 678, „drogamanus regiae".

154 Նույն տեղում, էջ 690։

155 *V. Langlois*, Essai, էջ 57.

156 *Rainaldi*, Annales, 1342, 1345.

157 *V. Langlois*, Essai, p. 11.

158 Դատաստանագիրք, էջ 70։

159 Տարեգիրք, 1956 թ., էջ 222։

160 *Guillaume de Tyr*, T. II, p. 5.

161 Սիսուան, էջ 470։

Սենեսկալը նույնպես ուներ իր հատուկ տեղը արքունիքում՝ մյուս գործակալների կամ աստիճանավորների շարքում. նա կրում էր հատուկ նշան։ Թագավորի օծման փաստաթղթում ասված է. «...եւ աստիճանաւորքն (որք են) գունդստապլն թագաւորի նշանաւն և թագադիրն թագաւն և սենեսչալն ծաղկիւն է՝ որ ֆլաւտրին (գավազան արքունի շուշանգլուխ)»[162]։ 1288 թվակիր ճաշոցի առաջին էջի նկարում նկարված են չորս պալատական աստիճանավորներ, որոնց թվում մայորդոմը կամ սենեշալը։ Վերջինիս հագուստը նման է ֆրանսիական մեծ դոմեստիկի կամ մայորդոմի զգեստին և նշանին[163]։

Աղբյուրներում հիշատակված սենեշալները հետևյալներն են։

1. 1210—1215 թթ., Սիր Ադան[164]։
2. 1277 թ., Օշին սենեշալ[165]։
3. 1307—1314 թթ., Ռայմոնդ[166]։
4. 1321—1331 թթ., Հեթում սենեշալ հայ արքունիքի[167]։
5. 1391 թ., Ֆրանսիսկոս Միր, հայ թագավորի մեծ սենեսկալ[168]։

Սենեսկալին է ենթարկվել մի այլ բարձրաստիճան պաշտոնյա՝ ջամբրլայը կամ մեծաց ջամբրլայը՝ արքունի հանդերձապետը կամ սենեկապետը։ Վերջինս ոչ միայն պահում էր թագավորական զգեստները, այլև կազմակերպում պալատական հանդեսներ։ Թագավորի օծման փաստաթղթում ասված է. «...և յորժամ կամենայն սեղան բերել, նա տա համայնք (հրաման—Ս. Բ.) Սենեսկալն Ջամբրլային, առնուլ ջուր և իւրով ձեռամբ լնուլ ի ձեռս թագաւորին»[169]։

Մեծաց ջամբրլայն հորջորջումը վերցված էր Սիրիայի խաչակիր պետությունների արքունիքի օրինակով, սակայն բովանդակությամբ նման էր հին Հայաստանում Արշակունյաց թագավորների պալատում թագավորին ծառայող սենեկապետին[170]։

162 Սիսուան, էջ 475։ (Ֆլաստրին—ֆրանսերեն՝ fleur de lis.)։

163 Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտ. «Տեղեկագիր», 1946 թ., № 4, էջ 56—67։

164 Տարեգիրք, էջ 222։

165 Չամչյան, հ. 3, էջ 279։

166 Galanus, T. I, p. 460.

167 E. Dulaurier, Recherches sur la chronique, p. 189.

168 Rymer, T. VIII, p. 706։

169 Սիսուան, էջ 475։

170 Մ. Խորենացի, Պատմութիւն, 1881, բաժին 3, էջ 20։

Ինչպես հայտնի է Բագրատունիների ժամանակ սենեկապետը կոչվում էր հեջուբ, արաբական (հաջեբ) բառից, որի մասին վկայում է Ներսես Լամբրոնացին իր Լևոն Բ-ին ուղղած նամակում[171]։

Աղբյուրներում հիշատակվում են երկու սենեկապետներ.

1. Հեթում Բ, Լամբրոնի տեր, Հայոց մեծաց ջամբլայ[172]։
2. Հեթում Նիկրինիումի սենյոր (1321—1341)[173]։

Սենեսկալին էին ենթարկվում նաև արքունիքում ծառայող մյուս աստիճանավորները մանր ազնվականության ներկայացուցիչներ՝ ասպետները։ Դրանցից հայտնի է արքունական պողլերը[174], թագավորի սեղանապետը կամ մատուվակը (գինեպետը)։

Է. Մաքսապետություն

Առավել կարևոր խոշոր գործակալություն էր հանդիսանում երկրի ֆինանսները ղեկավարող պոռոքսիմոս գործակալությունը[175]։

Պոռոքսիմոսը հունական բառ է։ 11—12-րդ դարերի սկզբնաղբյուրներում օգտագործվում է երկու անգամ, բայց տարբեր իմաստով։ Այսպես, Մատթեոս Ուռհայեցու մոտ պոռոքսիմոս անունով են հիշատակվում բանակի հրամանատարի տեղակալի կամ բյուզանդական կայսրի տեղակալները[176] Փոքր Ասիայի բյուզանդական նահանգներում։

Այս պաշտոնի մասին ակնարկվում է նաև 1007 թվակիր՝ Ադրիանապոլսում գրված երկաթագիր ավետարանի հիշատակարանում. «Եւ ես Յովհաննէս Պոռուսպաթար թագաւորիս և Պոռքսիմոս Դուկիս թոթարակնիս ճորտս, որ գրել եղու զսուրբ աւետարանս»[177]։

Այս գործակալությունը թեև շատ կողմերով նման է Արշակունիների ժամանակաշրջանի հազարապետությանը, սակայն վերջինիս ֆունկցիաների մի մասը, ինչպես մենք տեսանք, կատարում

171 Թուղթ առ Լևոն, էջ 239—240։

172 Documents arm., T. I, 582.

173 „Hist. de Chypre, de Mas Latrie", T. III, p. 682—683.

174 Ed. Dulaurier, Recherches, p. 154—157.

175 Le trésor, p. 154—157.

176 Ed. Dulaurier, Recherches, p. 190. Ն. Ադոնցի բացատրությամբ պոռքսիմոս նշանակում է տեղակալ adjoint. Տե՛ս Notes arméno-byzantines, Bruc. 1935, p. 161, 162.

177 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 200—201։

էր սենեշալը։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ Լևոն Բ-ի կողմից 1214 թ. հյուրընկալների օգտին կատարված հողային նվիրատվության հրովարտակում հիշատակվում է «Սմբատ սենեսկալ Պոռքսիմոս»[178] հորջորջմամբ։ Սա հետաքրքիր է նաև նրանով, որ սենեսկալի և պոռքսիմոսի պաշտոնները կատարում էր նույն անձնավորությունը—գործակալը։

1288 թ. ջենովացիներին շնորհված առևտրական շնորհագրում Օշին պոռքսիմոսին հանձնարարվում է հսկել ջենովացի առևտրականներից գանձվելիք մաքսերի և տուրքերի վրա[179]։ 1314—1321 թթ. Մոմպելյան վաճառականներին տրված առևտրական շնորհագրերում պայմանների կատարման հսկողությունը նույնպես հանձնվում է պոռքսիմոսին։ Վերջինս իր հերթին նույն բովանդակությամբ հրամանագիր և ցուցում է ուղարկում Այասի նավահանգստի մաքսատան պետին՝ ի կատար ածելու շնորհագրի պայմանները[180]։ Այս փաստը նորից ապացուցում է «իմ վասալի վասալը իմ վասալը չէ» սկզբունքի կիրառումը գործակալությունների նկատմամբ։

* * *

Բացի վերոհիշյալ մեծ գործակալություններից, նման միջնադարյան Եվրոպայի և Բյուզանդական կայսրության արքունիքների՝ Կիլիկյան հայկական թագավորությունում գոյություն են ունեցել փոքր պաշտոններ, որոնք հանձնված են եղել կրտսեր պարոններին՝ միջին հողատերերի և մանր հողատերերի ներկայացուցիչներ՝ ասպետներին։

Պալատական զանազան պաշտոնների մասին է խոսում Սմբատը իր Դատաստանագրքում «Վասն աստիճանաւորաց թագաւորական պաղատին» հոդվածում, որտեղ մեկ առ մեկ թվարկում է պալատական ինն աստիճանավորների կատարած պարտականությունները, նկարագրում է նրանց հագուստները, արքունիքի հետ կապը։ Ըստ վերոհիշյալ հոդվածի այդ պաշտոնները և դասերը, որոնք թվով հիմնականում 14-ն են, հետևյալներն են. եղենտիարք (թագակիրք), վեստիտորայն (թագակիր արքային), կանդիտորայն (տերունական խաչը թագավորի առաջից տանողներ), դրաւքսաւտորայն (թագավորի դաղաղը տանողներ), էքսուպիտորիաքն (թագավորի վահանակիրներ), ստրատորոսքն (թագավորի ձին թամբողներ), սքաւլարքն (թագավորական դրոշակակիր ասպետներ), տիկանեաւն (աղեղնավորներ) և պահնորդներ (պալատի շուրջը պարիսպներ պահողներ)[181]։

Ինչպես երևում է վերոհիշյալ ցուցակից, այդ աստիճանավորների հորջորջումները օտար են, ընդ որում Սմբատը հոդվածի վերջում այդ մասին ուղղակի մատնացույց անելով գրում է, որ «Արդ այսպէս գրեցաք մի ըստ միոջէ զկարգ և զսահման զեկեղեցւոյ զթագաւորացն Յունաց, որ գլխաւորք էին. զոր ուսան ի նոցանէ և թագաւորքն Հայոց և այնէին զնոյնս»[182]։ Թեև հոդվածի վերջում Սմբատը կոչ է անում վերականգնել պալատական վերոհիշյալ կարգը, սակայն ինչպես ցույց տվեցինք նախորդ բաժնում, վերոհիշյալ կարգը, եթե ոչ ամբողջությամբ, գեթ մասնակիորեն գործելիս է եղել Կիլիկյան արքունիքում։ Դրա ապացույցն է գործակալությունների այն թվարկումը, որ մենք կատարեցինք։ Իհարկե սրանով չէր սահմանափակվում արքունիքում ծառայողների թիվը։ Սմբատը նույն հոդվածի շարունակության մեջ ասում է. «Են և այլ շատ սպասաւորք աթոռոյն, որձեր և կրտեր, դասէ ի դուրս անհաշիւք, հինգ դասք։ Առաջին՝ պատգամաւորքն, որ զդուրսի գանգատն ասեն. են և կարդացաւղքն և նաւտարնին, են որք են լվացաւղք ի բաղանիքն, են և հացապաներ և սենէսկալեր և ֆառաշնին որ ջուր տանին-լուանալոյ. են և դրան երեցնի և պաշտաւղք անուշասացք և հանճարաւղք երգոց, և մոլոզոնք և միակէցք քարոզաւղք. են և աւրինադիրք՝ իմաստասէրք և հովիւք այլոցն ամենեցուն»[183]։

Արքունիքում և իշխանների դղյակներում կարևոր պաշտոն էր նաև ավագ շավուշը՝ սուրհանդակապետը, որը հիշատակվում է թագավորի օծման տոնահանդեսների ժամանակ սեղան նստող մյուս գործակալների շարքում[184]։ Իշխանների դղյակների «ավագ շավուշի» և «շավուշի», որպես սուրհանդակապետի և սուրհանդակի պարտականություններ կատարող պաշտոնների մասին, մանրամասն նշված է Անտիոքի ասիղների համապատասխան բաժիններում[185]։

---

178 *V. Langlois*, Essai, էջ 23։

179 *V. Langlois*, Le trésor, էջ 153—157։

180 *E. Dulaurier*, Recherches, էջ 190։

181 Դատաստանագիրք, էջ 68—70։

182 Նույն տեղում, էջ 70։

183 Նույն տեղում, էջ 69—70։

184 Սիսուան, էջ 475։

185 Assises d'Antioche, trad. d'Alishan, 1876.

Կիլիկիայի հայկական թագավորությունը, ինչպես ասվել է, 13—14-րդ դարերում ապրում էր միջազգային բարդ իրադրության պայմաններում, որի հետևանքով նա զինակցության մեջ էր մտել մի կողմից մոնղոլների, իսկ մյուս կողմից՝ ապարդյուն հույսեր էր կապում արևմտաեվրոպական պետությունների և վատիկանի պապի, խարդախ քաղաքականագետների խարուսիկ խոստումների հետ։ Այս պայմաններում Կիլիկյան արքունիքը հաճախ պատգամավորներ և դեսպաններ էր ուղարկում դեպի այդ երկրները։ Այս դեսպանները մեծամասամբ եղել են բարձր հոգևորականության ներկայացուցիչները, իսկ երբեմն աշխարհիկ՝ խոշոր և մանր ազնվականներ։

Հայ և օտար աղբյուրներում հիշատակվում են այն պատգամավորների և դեսպանների անունները, որոնք բանակցություններ են վարել Հռոմում, Անտիոքում, Կահիրեում, Նապոլիում, Ֆրանսիայի և Անգլիայի մայրաքաղաքներում ու քաղաքներում, Կիպրոսում և այլ վայրերում[186]։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ 14-րդ դարի կեսերին, երբ թուլացել էր Կիլիկիայի հայկական թագավորությունը, թուլացել էր նաև խոշոր հողատերերի և իշխանների ազդեցությունը։ Ահա այս շրջանում է, որ մեծանում է մանր ազնվականների՝ ասպետների և քաղաքային առևտրական դասի ներկայացուցիչների հեղինակությունն ու գործունեությունը Կիլիկիայի ռազմական և քաղաքական կյանքում։ Այդ մասին բազմաթիվ հիշատակություններ կան՝ Հովհան Դարդելի «Ժամանակագրութեան» մեջ[187]։

Կիլիկիայի հայկական թագավորության արքունիքում և ընդհանրապես պետական-քաղաքական կյանքում մեծ դեր էին կատարում Տիկնանց տիկինները՝ թագուհիները։ Տիկնանց տիկնոջ աստիճանը մինչև Լամբրոնի իշխանության վերացումը, մինչև 1202 թ. վերապահված է եղել Լամբրոնի տիրոջ Հեթումյան ավագ իշխանի կնոջը[188]։ Թագավորության շրջանում, թագավորից և ավագ իշխաններից հետո, հատկապես առաջինի բացակայության, ասենք մահվան դեպքում, մեծ դեր էր կատարում թագուհին։ Ուշագրավ է, որ թագավորի առկայության դեպքում թագուհու նախաձեռնությամբ կառուցվում էին շինություններ, ինչպես՝ հիվանդանոցներ, վարժարաններ և այլն։ Այսպես, հիշատակարան-

186 V. Langlois, Essai, p. 58.

187 Դարդել, էջ 41—42, 68—69։

188 Գանձակեցի, էջ 286։ Գ. Հովսեփյանց, Ցիշատակարանք ձեռագրաց, էջ 554։

ներից մեկում Զարել թագուհու շինարարական աշխատանքների մասին գրված է. «Կատարեցաւ յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս հրամանաւ մեծաւ փառաւք քրիստոսասէր թագուհւոյ Զապէլի ի թուականիս Հայոց ՈՂ»[189] (1252)։ Նույնիսկ թագուհին թագավորի հետ միասին ստորագրում է հողային նվիրատվությունը։ Ինչպես հայտնի է, 1236 թվականի Տևտոնյան օրդենի օգտին կատարված հողային նվիրատվությունը արված է Հեթում Ա թագավորի և նրա տիկնոջ՝ Զարել թագուհու անունով[190]։

Հետաքրքիր է նշել, որ տիկնանց տիկնոջ հարաբերությունը մյուս տիկինների և իշխանուհիների հետ եղել է այնպիսին, ինչպիսին էր ֆեոդալական հիերարխիայի գագաթում կանգնած թագավորի և նրա վասալ իշխանների միջև։ Այդ մասին ուղղակի մատնացույց է արված թագավորության օծման մեզ հայտնի փաստաթղթում։ Այնտեղ ասված է. «Դիտել պարտ է, զի թագուհին ընկեր է թագաւորին և մի մարմին և թագակից. վասն այնորիկ պարտ է աստիճանաւոր տիկնացն սպասաւորել նմա և առնող ի նմանէ շնորհս, որպէս իւրեանց արքն ի թագաւորէն, զի և նաև մի մարմին են ընդ աստիճանաւորացն Աստուծոյ օրինօք»[191]։

Սմբատի Դատաստանագրքում նշված է նաև թագավորի դուստրերի գահակալական իրավունքները։ Նշելուց հետո, որ դուստրերը պետք է միայն ամուսնանան իշխանական տան ներկայացուցիչների հետ, որպեսզի իրավունք ունենան թագավորի արու որդի չունենալու դեպքում ժառանգել գահը, գրված է, որ նրանք կարող են այդ անել միայն մի պայմանով, որ դստեր-թագուհու վախճանվելուց հետո նրա որդիները չեն կարող ժառանգել գահը[192]։

Թագուհիների և տիկնանց տիկինների նշանակությունը ավելի է մեծանում թագավորության անկման շրջանում։ Կոստանդին Դ թագավորի սպանությունից հետո, 1373 թ. մինչև Լևոն Զ-ի գահ բարձրանալը, երկիրը ղեկավարում էր թագուհին։ Այդ մասին Հովհան Դարդելը գրում է. «Տէր արքայ, թագուհին Հայոց՝ որ էր լեալ կին Կոստանդին արքայի առաջնոյ բռնաւորին, և որ հաճութեամբ հասարակաց կալեալ ունի այսօր ի ձեռին իշխանութիւնն թագաւորական...»[193]։

189 Գ. Հովսեփյանց, Ցիշատակարանք..., էջ 947—948։

190 V. Langlois, Le trésor, p. 142.

191 Սիսուան, էջ 475։

192 Դատաստանագիրք, էջ 7—8։

193 Դարդել, էջ 69։

Խիստ հետաքրքիր է նաև այն, որ իշխանական խորհրդի նիստերին, որտեղ լուծվելիս է եղել երկրի առաջ կանգնած կարևորագույն քաղաքական խնդիրները, մասնակցել են նաև պալատական տիկինները։ Այսպես «ետ յաւուր միում գումարել ի ժողով ի դահլիճն արքունական զեպիսկոպոսունս և զվարդապետ աշխարհին զաւագանին և զասպետս և զտիկնայսն և զժողովուրդն առհասարակ...»[194]։

4. ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Եթե Կիլիկիայի հայկական պետության կառավարող կենտրոնական օրգանների՝ գործակալությունների մասին բավականաչափ տեղեկություններ են հաղորդում հայ և օտար մատենագիրները, արքունական հրովարտակները և այլ աղբյուրները, ապա դրանք սակավ տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայի տեղական կառավարչական օրգանների և նրանց կառավարման ձևերի մասին։ Աղբյուրներում որոշակի տեղեկություններ չկան այն մասին, թե Կիլիկիան 12—14-րդ դարերում քանի շրջանների կամ գավառների էր բաժանված, կամ թե՝ քաղաքները ինչպիսի ստատուս ունեին։

Կիլիկյան հայկական պետության աշխարհագրությունն ու պատմությունը մանրամասն ուսումնասիրման ենթարկող նշանավոր հայագետ Ղևոնդ Ալիշանը իր «Սիսուան» աշխատությունում նշում է մոտավորապես 30 գավառ ու շրջան[195]։

Որ Կիլիկիայի հայկական պետության տերիտորիան վարչական տեսակետից բաժանվելիս է եղել գավառների, երկրների, պարոնությունների, աշխարհների որպես վարչական միավորումների, այդ մասին են վկայում Սմբատի Դատաստանագրքի մի շարք հոդվածները[196]։

Այսպես «բայց պարտ է դիտել՝ որ երկրին բնակիչք ի պարոնին պահն են...»[197]։ Կամ թե «եթէ իշխանի գաւառն՝ կամ յերկիր որ ընդ թագաւորի հնազանդութեամբն լինի՝ ոսկէհանք գտնի...»[198], կամ թե «Ապա ի դուրս կարես գրաւկնել զինքն զինչ ցեղ ուզես

194 Նույն տեղում, էջ 67։
195 Սիսուան, էջ 70—330։
196 Դատաստանագիրք, էջ 15, 16, 97, 116, 126, 127, 172։
197 Նույն տեղում, էջ 97։
198 Նույն տեղում, էջ 15։

բայց ամենևին լուծք եղանց չէ պատեհ գրաւկնել, զի գոյացութեան և ապրնաց է պատճառք. նոյնպէս ոչ ձի և ոչ սիլահ, զի կովոյ և ծառութեան ի պետք է ի պարոնութեանն ի կարիքն»[199]։

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ վկայություններում «գաւառ», «երկիր», և «պարոնութիւն» տերմինները օգտագործում են վարչական միավորի, իսկ պարոն և իշխան տիտղոսները՝ այդ վարչական միավորումները կառավարողների իմաստով։

Կառավարման առավել խոշոր միավոր է հանդիսացել «աշխարհ» և «կոմսություն» հասկացողությունները։ Աշխարհ է կոչվել այն իշխանի վարչական ու կառավարման տերիտորիան, որի մեջ մտել են գավառներ և բերդեր։ Այսպես՝ իշխան Սիրադանի երկիրը կոչվել է աշխարհ հենց այն պատճառով, «որ էր տէր (իմա Սիրադանը) բազում բերդից և գաւառաց ի Սելևկիոյ մինչև մերձ ի Կալօնօրօս, որ անուամբ Նորա կոչի մինչև ցայսօր՝ աշխարհ Սիրադնոյ»[200]։

Կիլիկյան հայկական թագավորության վարչական կազմում միակ կոմսությունն էր հանդիսանում Կոռիկոսի նահանգը, որի կառավարիչը կոչվում էր կոմս կամ գունդ[201]։ Հայտնի է, որ կոմս տիտղոսը բյուզանդական կայսրությունում տրվելիս է եղել այն անձնավորություններին, որոնք որևէ մի ծառայություն են կատարել արքունիքի նկատմամբ, կամ թե կառավարել են մի խոշոր նահանգ։ Այսպես, հայ Մամիկոնյան իշխանները ստացել են կոմս տիտղոսը Թեոդորոս Մեծ կայսրից[202]։ Կոմս և կոմսություն հորջորջումներն են ստացել խաչակիրներից Կոստանդին իշխանը և նրա իշխանության տակ գտնվող տիրույթը՝ բազմաթիվ բերդերից և գավառներից կազմվող իշխանությունը[203]։

Սկզբնաղբյուրներում բոլորից շատ գործածված են՝ պարոն և իշխան տերմինները, որպես իշխանների կառավարչական ֆունկցիաները արտացոլող տերմիններ։ Վերոհիշյալ վկայություններից հեշտ է եզրակացնել, որ «իշխան գաւառի», «երկրի պարոն» կամ թե «գաւառի պարոն» արտահայտությունները իրար համազոր են և նույն իմաստն ունեն։ Համաձայն չենք Գրիգոր Միքայելյանի այն մտքի հետ, որ պարոն տերմինը ոչ թե իշխանի համազորն է,

199 Նույն տեղում, էջ 116։
200 Տարեգիրք, էջ 222։
201 Documents arm., T. I, էջ 667։
202 Փ. Բուզանդ, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1889, էջ 97։
203 Դ. Հովսեփյանց, Յիշատակարանք, էջ 265—266։ Մարքիզ տիտղոսի մասին տե՛ս նաև Սամուել Անեցի, էջ 214։

այլև տեր իմաստն ունի, թեկուզ միայն այն պատճառով, որ իմաստից զուրկ կլիներ Սմբատի վկայությունը՝ 45 բերդատեր իշխանների մասին, որտեղ նրանց անվանում է «իշխանք, որ էին բերդատէրք այս են. պարոն Ադամ, տէր Բաղրասի» և այսպես շարունակաբար մեկ առ մեկ թվում է իշխանների անունները՝ անվան կողքը դնելով պարոն տերմինը, իսկ բերդի կողքը՝ տեր տերմինը։

Այսպես, ուրեմն այդ գավառները և պարոնությունները հանդիսացել են առանձին վարչական միավորներ, որոնք և ունեցել են իրենց գավառապետները՝ պարոնները կամ իշխանները։ Ինչպես նշեցինք, Լևոն Բ-ի թագադրությանը մասնակցած իշխանների թիվը հասնում էր 45-ի։

Ենթադրում ենք, որ թագավորությունը ունեցել է հենց 45 շրջան կամ գավառ։ Յուրաքանչյուր գավառի կամ պարոնության՝ գավառապետը—պարոնը ունեցել է իր իշխանանիստ կենտրոնը՝ բերդը։ Հետևաբար նա միևնույն ժամանակ հանդիսացել է Սմբատ Գունդստաբլի վկայությամբ «բերդատեր»[204], այսինքն՝ հողերի վրա սեփականության իրավունք ունեցող երկրկալ, ֆեոդալ[205]։

Վկայություն կա նաև այն մասին, որ թագավորը հաճախ շրջագայել է նահանգները և հանդիպումներ է ունեցել գավառապետների հետ։ Այսպես, 1272 թ. Լևոն Գ նորընծա թագավորը իր օծությունից անմիջապես հետո «գնայր ի Սաւրիա (Իսավրիա նահանգը—Ս. Բ.) առ ի տեսութիւն գաւառին և դարձեալ գայր ի տուն իւր»[206]։ Թագավորն անմիջական իշխանություն է ունեցել գավառների վրա և որպես միավորող անձի, հաճախ մասնակցել է գավառների ներքին կառավարման գործին, հարկերի ու տուրքերի կարգավորմանը։ Գավառապետները և իշխանները առանց թագավորի իրավունք չեն ունեցել «քաղաք և բերդ՝ և մեծ գետոց կանտարայ՝ և հոգետուն ի վերա մեծ ճամփնի և ի կապնի երկրին» շինել, կամ թե իշխանները իրավունք չեն ունեցել մահապատժի ենթարկելու իրենց հպատակներին, կամ թե գավառների հարկը[207] և զյուղատնտեսական մթերքների գները ավելացնել և այլն[208]։

Ի տարբերություն Երուսաղեմի թագավորության սենյորների՝ գավառապետների, Կիլիկիայի իշխանները կամ գավառապետները իրավունք չեն ունեցել կապ պահպանելու կամ թե դիվանագիտական բանակցություններ վարելու առանց թագավորի գիտակցության, կամ թե պատերազմ հայտարարելու, խաղաղություն կնքելու, փող կտրելու և այլն[209]։ Թեև նկատելի է, որ թագավորության թուլացման շրջանում առանձին իշխաններ հաճախ կապ են հաստատել Արևմտյան Եվրոպայի դիվանագիտական և քաղաքական շրջանների հետ, առանց թագավորի իմացության[210]։

Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը և Անտիոքի Ասիզները սահմանում են պարոնի կամ գավառապետի տնտեսական, քաղաքական, վարչական և դատական իրավունքները։

Տեղական կառավարման միավորներ էին հանդիսանում նաև քաղաքները։ Կիլիկիայի քաղաքները մտնում էին թագավորական դոմենի մեջ և անմիջականորեն ենթարկվել են արքունիքին՝ կառավարման կենտրոնական ապարատին։ Կիլիկիայի նշանավոր քաղաքներն էին Սիսը, Տարսոնը, Ադանան, Սամեստիան, Անազարբան և նավահանգիստները՝ Այասն ու Կոռիկոսը, որոնք աղբյուրներում հիշատակվում են որպես թագավորական քաղաքներ (Civitatis regis)[211]։

Թագավորական քաղաքները գլխավորել են թագավորի ներկայացուցիչները՝ շևիտեենները (chevitaines) կամ կապիտանները։ Առևտրական արտոնագրերից երևում է, որ կապիտանները հատկապես նավահանգիստներում ունեցել են վարչական և ոստիկանական իրավունքներ[212]։

Քաղաքներում թագավորի կողմից նշանակված պաշտոններ էին նաև ձեռներեց[213] (ձեռնավոր), մուխթասիբ[214] և դուկ[215] հարկահան պաշտոնյաները։ Նրանք հսկում էին քաղաքների շուկաներում չափի և կշռի կարգավորմանը, գանձում էին մաքսային տուրքերը՝ բաժը և կապալը կամուրջների և ճանապարհների վրա ու քաղաքների գլխավոր մուտքերում[216]։

Արքունիքի ներկայացուցիչներ էին նաև երեսփոխանները՝ քաղաքի կառավարիչները[217]։

---

204 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», 1856, էջ 100—102։

205 Դատաստանագիրք, էջ 11։

206 «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 471։

207 Դատաստանագիրք, էջ 9—10, 13։

208 Նույն տեղում, էջ 127—128։

209 Նույն տեղում, էջ 9։

210 *V. Langlois*, Essai, p. 37.

211 „Histoire de Chypre de Mas Latrie". T. II, p. 80.

212 Նույն տեղում։

213 Թուղթ առ Լևոն, էջ 210—211։

214 «Դատաստանագիրք», էջ 127։

215 Նույն տեղում։

216 Նույն տեղում։

217 Նույն տեղում։

Ուշ շրջանում որպես քաղաքային բնակչության ցածր խավերին՝ արհեստավորներին ու առևտրականներին ներկայացնող և վերջիններիս գործերը կառավարող հիշատակվում է «տանուտեր»-ը[218]։

Թագավորին ենթակա գավառապետներն ու պարոնները՝ իշխանները թագավորի նկատմամբ կատարում էին ոչ միայն զինվորական պարտականություններ, այլև հարկատու էին նրան։ Այս հարցը այն կարևոր հարցերից մեկն է, որը ուսումնասիրել են բուն Հայաստանի պատմությամբ զբաղվող մի շարք հայ գիտնականներ[219]։

Հավանաբար, Կիլիկիայի թագավորը որպես երկրի գլխավոր սյուզերենի, իսկ իշխանները՝ գավառապետներն ու պարոնները որպես թագավորի վասալներ, բացի զինվորական և գործակալական պարտավորություններից, ունեցել են նաև տնտեսական հարկային պարտականություններ։

1236 թ. տևտոնական օրդենին տրված հողային նվիրատվության փաստաթղթի մեջ ասված է, որ Հարոնիո քաղաքի և նրա շրջակայքի հողերից մուծվող պետական հարկը, որը նախկինում վճարում էր այդ շրջանների տիրակալը, այսուհետև այդ շրջանների նոր տերը՝ տևտոնյան օրդենը ազատվում է այդ հարկից։ Այս ցույց է տալիս, որ արտոնյալ պայմաններով տիրույթներ ստացած օրդենը ազատվում էր հարկերից[220], որոնցից սակայն զերծ չէին մյուս ֆեոդալները։

Իհարկե սրանով չեն սահմանափակվում գավառապետների ու պարոնների կառավարման ֆունկցիաները։ Նրանց գլխավոր պարտականություններից և իրավունքներից մեկն էր դատական ֆունկցիան իրենց երկրի բնակչության նկատմամբ, որի մասին մանրամասն կանդրադառնանք հաջորդ բաժիններից մեկում։

5. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Բուն Հայաստանի հոգևորական դասերի հողատիրության, նրանց վարչական ու տնտեսական կազմակերպության, հոգևոր

218 Դարդել, էջ 69։

219 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 84—89։ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, 1957, Երևան, հ. 1, էջ 173։

220 V. Langlois, Le trésor, էջ 142—144։

դասերի երկրի կառավարման մեջ ունեցած մասնակցության և այլ հարցեր բավականին ուսումնասիրության են ենթարկվել Ն. Ադոնցի[221], Հ. Մանանդյանի[222], Աշոտ Հովհաննիսյանի[223] և այլ պատմաբանների ու հայագետների կողմից։

Ֆեոդալական Հայաստանում, ինչպես մատնացույց է արել Նիկողայոս Ադոնցը, հայ եկեղեցին գտնվելով նախարարական Հայաստանի միջավայրում, մեծ չափով ենթարկվել էր նախարարական կարգերի ազդեցությանը։

Կիլիկիայի հայկական պետության հոգևոր հիերարխիան նույնպես նման էր աշխարհիկ հիերարխիային։ Այդ մասին ուղղակի մատնացույց է անում Սմբատը իր Դատաստանագրքում։ Համեմատելով աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական հիերարխիան, Սմբատ Սպարապետը օրենքով հիմնավորում է նրանց նմանությունը, ցույց է տալիս հոգևոր հիերարխիայի վասալական բնույթը, ընդգծելով նրա հիմքում ընկած հոգևոր վասալի ծառայությունը հոգևոր սենյորի նկատմամբ և վերջինիս պարտականությունները առաջինի նկատմամբ։

Ամփոփելով իր միտքը վերոհիշյալի մասին, ընդգծելով, որ եպիսկոպոսները իրավունք չունեն պակասեցնելու նրանցից վասալական կախման մեջ մտնող ցածր հոգևորականների իրավունքները, Սմբատը գրում է. «վասն զի ամէն եկեղեցական հայնց է հաստատած ի յիր ապրանքն ի սուրբ եկեղեցոյն ծառութենէն՝ զէդ հեծելվոր որ թրովն իր այնէ զթոշակն»[224]։

Ինչպես նկատելի է, Սմբատը վերոհիշյալ հոդվածում հոգևորականների վասալական կարգը համեմատում է ֆեոդալական աշխարհիկ հիերարխիայի ամենակարևոր մի օղակի՝ հեծելվորի հետ։

Գլխավորը, ինչպես մատնացույց է արել Ֆ. Էնգելսը (Գերմանիայի հոգևորական դասերի մասին), դա այն է, որ հոգևորականությունը ուժեղ կերպով շերտավորված, անգամ իրար հակադիր դասերի էր բաժանված։ «Հոգևորականությունը բաղկացած էր,— գրում է Էնգելսը,— երկու միմյանցից միանգամայն տարբեր դասակարգերից, հոգևորական ֆեոդալական հիերարխիա,— եպիս-

221 Н. Адонц, Армения в эпоху Юст., стр. 322—370.

222 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 126—142։

223 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 1։

224 Դատաստանագիրք, էջ 21։

կոպոսներ ու արքեպիսկոպոսներ, աբբաներ, պրիորներ և մյուս պրելատներ, կազմում էր արիստոկրատիկ դասակարգը։ Եկեղեցական այս բարձրաստիճան պաշտոնյաները կամ իրենք կայսերական իշխաններ էին, կամ թե որպես այլ իշխաններ՝ վերապատության ներքո գտնվող ֆեոդալներ, իշխում էին լայնատարած հողերի վրա, ենթարկելով իրենց իշխանությանը բազմաթիվ ճորտեր ու կախյալ բնակչություն։ Իրենց հպատակներին նրանք ոչ միայն ազնվականների և իշխանների նման անխնա շահագործում էին, այլև ավելի անամոթաբար էին վարվում»[225]։

Այնուհետև Էնգելսը ցույց է տալիս, որ հոգևորականության մյուս դասը կազմում էր ստորին շերտը, որի ֆեոդալական հիերարխիայի մաս չէր կազմում, և այդ հիերարխիայի հարստություններից չէր օգտվում, իր կյանքի պայմաններով ժողովրդական մասսաներին բավական մոտ կանգնած հոգևորականության պլեբեյական մասն էր[226]։ Նույնը մենք տեսնում ենք Կիլիկիայում։ Հոգևորական հիերարխիայի բուրգի ստորին աստիճանում կանգնած էին վարդապետները, քահանաներն ու երեցները, սարկավագներն ու դպիրները և եկեղեցու ու վանքի այլ աշխատողներ։ Նրանցից բարձր կանգնած էին եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, իսկ բուրգի գագաթում՝ կաթողիկոսը։ Նախավերջին դասի մեջ էին մտնում նահանգների կամ թեմերի առաջնորդներն ու մետրոպոլիտները[227]։ Ինչպես տեսնում ենք, սա եռաստիճան հիերարխիա է և նման է աշխարհիկ հիերարխիային։

Հոգևորական հիերարխիայից դուրս էր հոգևորական պլեբեյական դասը։ Սկզբնաղբյուրները խոսում են եկեղեցական պաշտոնների ինը դասերի մասին, որոնցից են սարկավագները, աբեղաները, վանքում աշխատող գործավորներն ու սպասավորները, որոնք վարում էին եկեղեցական ամենահասարակ պաշտոնները, ինչպես Սմբատ Սպարապետն է նշում «և կարեն աւետարան կարդալ ու քարոզ ասել, և զսկիհն բերել ի սենէկեն ի սեղանն, և քշոց քշել, ու խունկ ծխել»[228]։ Այնուհետև Սմբատը շարունակության մեջ նշում է, թե ովքեր կարող են սպասարկել տաճարին, կրել մոմեր, զավազան և պահակ կանգնել եկեղեցիների դռնեբում և այլն։ Մի հիշատակարանում պահպանված են տեղեկություններ եկեղեցական այն պաշտոնների մասին, որոնք հատկապես կապված են ֆիզիկական աշխատանքների հետ։ Գրիգոր Ակներցին 1273 թ. գրում է. «Տէր Աստուած ողորմեսցի ամենայն գործաւորաց և սպասաւորաց սրբոց ուխտին առաջնոյն և միջնոյն այլև վերջնոյն որ գալոցն են զկնի մեր»[229]։ Այդ «գործաւորաց» և «սպասաւորաց» թվին հիշատակում է մի ոմն «Դավիթ Բջնեցուն զտնտես, և մարնպան և զհացպան և զփոնբան և զամենայն աշխատողս»[230]։ Մի այլ հիշատակարանում, որը գրվել է 1314 թ. Թիւրքթի ուխտում, կարդում ենք. «Արդ աղաչեմ յիշել ի Տէր զառաջասացեալ հայր անապատիս զԳրիգոր վարդապետ, զՅովանէս փակակալ, զՄատթէոս, զՍարգիս, զՄեսրոպ,... նաև զգործաւորք՝ զՎասիլ մառնպան, զՅովանէս ածպան, զԹորոս հացկտուր, զԱնտոն աղանմաղ... զԿոստանդին հիւրատեսն»[231]։

Ինչպես նկատելի է, վերևում հիշատակված բոլոր սպասավորներն ու պաշտոնյաները ֆիզիկական աշխատանք կատարողներ են։ Բացի սրանցից, հոծ մասսա էին կազմում գյուղական ստորին հոգևորականները՝ երեցները։ Հասկանալի է, որ հոգևորական ֆեոդալական հիերարխիայի ամբողջ բուրգն իր ծանրությամբ կանգնած էր աշխատավոր ժողովրդի մեջքին։ «Ֆեոդալական այս կառուցվածքը, շահագործվող և արտադրող դասակարգի դեմ ուղղված ասոցիացիա էր»[232]։

Այսպիսով, կաթողիկոսը իրենից ցած կանգնող արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների հանդեպ ունեցել է նույն դիրքը, ինչ թագավորը իշխանների հանդեպ։

Ինչպես հայտնի է ամենայն հայոց կաթողիկոսությունը 11-րդ դարի կեսերին Հայաստանից տեղափոխվում է Փոքր Ասիայի բյուզանդական նահանգները։ Նախ հաստատվում է Շուղրում, ապա Ծովքում կամ Տլուքում 1116 թ.[233], 1149 թ. տեղափոխվում է Կիլիկիայի սահմաններից ոչ հեռու՝ Կիլիկիայի, Կապադովկիայի, Միջագետքի և Սիրիայի սահմանների ընդհատման վայրում՝ Հռոմկլա կամ Ռոմկլա անառիկ բերդը[234]։ 13-րդ դարի վերջին՝

---

225 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1938, էջ 34։

226 Նույն տեղում, էջ 34—35։

227 Դատաստանագիրք, էջ 65։

228 Նույն տեղում, էջ 66։

229 «Հանդէս ամսօրեայ», 1948, էջ 223։

230 Նույն տեղում։

231 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 108—109։

232 К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. IV, стр. 14.

233 Ուռհայեցի, էջ 424։

234 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 82։ Դանձակեցի, էջ 108—109։

1292 թվականին, երբ Հռոմկլան վերջնականապես գրավվում է եգիպտական մամլուկների կողմից, այն տեղափոխվում է Կիլիկիայի մայրաքաղաք Սիս[235]։

Կաթողիկոսական աթոռի Կիլիկիայի տերիտորիաներից դուրս գտնվելը 11—12-րդ դարերում՝ իշխանության շրջանում բացասաբար է ազդում հոգևոր ֆեոդալների տիրույթների ընդարձակման վրա։ Սրանով պիտի բացատրել նաև Կիլիկիայի իշխանների քաղաքական թույլ կապերն ու համագործակցությունը կաթողիկոսի ու հոգևորականության հետ։

Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում հայրապետության աթոռի տնտեսական և քաղաքական թուլությունը բացատրում էր նրանով, որ «քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գո ազգի մերում, որպէսզի անդանօր նստելով յԱթոռ հայրապետութեան...։ Այլ եմք իբրև զայծեամն յորսորդայ և ի շանց փախուցեալք ի քարանձաւս յոժս բնակելով յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալ ի գիւղից կամ յագարակաց, յորոց ունիմ և ոչ մի։ Նաև ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ զպէտս մեր լնուաք, և ոչ օգնութիւն ուստէք որպէս արժան էր ի թագաւորաց և յիշխանաց ի Քրիստոս հաւատացելոյ»[236]։

Թեև Կիլիկիայի հայկական պետությունը 12-րդ դարի 60-ական թվականներին թույլ էր, երբ Ներսես Շնորհալին գրում էր այս տողերը, սակայն, նույնիսկ այդ շրջանում իշխանները հովանավորել են Կիլիկիայի սահմաններում գտնվող վանքերին ու եկեղեցիներին՝ նրանց օգտին կատարելով հողային նվիրատվություններ։ Իշխանները, նման Արևմտյան Եվրոպայի երկրների իշխաններին, հանդես են եկել եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պատրոնատի հատուկ իրավունքով։ Այս շրջանից սկսած, իշխանները կառուցում են եկեղեցիներ ու վանքեր՝ վերջիններս պահպանելով իրենց միջոցներով։ Սա իշխաններին պարտավորեցնում էր հսկողություն սահմանել վանքերի և եկեղեցիների գործունեության վրա։

Թորոս Բ-ը կառուցում է տաճարներ Անազարբայում և այլ վայրերում, այդ առթիվ նվիրելով առատ պարգևներ եկեղեցուն և հոգևոր պաշտոնյաներին[237]։ Լամբրոնի Հեթումյանները հողային

235 «Արարատ», 1911, էջ 223—224։ «Հանդէս ամսօրեայ», 1956, էջ 35—36։

236 Թուղթ ընդհանրական, էջ 9։

237 Սամուել Անեցի, էջ 214—215։

առատ նվիրատվություններ և պարգևներ են շնորհում իրենց ենթակա եպիսկոպոսներին։ Ներսես Լամբրոնացու հայրը՝ Հեթումյան Օշինը կտակում է իր որդի Սմբատին (Ներսես Լամբրոնացու աշխարհական անունն է—Ս. Բ.) Սկևռայի եկեղեցին ու վանքը[238] և նրան դարձնում է այդ վայրի առաջնորդը, միևնույն ժամանակ կտակելով նրան 30 հազար դահեկան[239]։

Ներքոհիշյալ հիշատակարաններից աներկբայելի է, որ իշխանները ունեցել են պատրոնական իրավունք։ Այսպես, Մաշկևորի վանքում գրված հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Եւ ի վերակացութիւն իշխանութեան պատրոն Լեւոնի ի թուականի Հայոց ՌԼԶ»[240]։ Մի այլ հիշատակարանում, որը գրված է 1193 թ. Սկևռայի վանքում, կարդում ենք. «Զտէրս կամ զիշխողս զպատրոն Հեթում (Հեթումյան իշխաններից է) անմոռաց պահեցէք ի կարգ յիշատակաց, որ ի սուրբ պատարագ»[241]։

12-րդ դարի վերջին, երբ կազմավորվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, ուժեղացավ թագավորի և կաթողիկոսի տնտեսական, քաղաքական կապերն ու համագործակցությունը։ Թեև այս ժամանակաշրջանում մինչև 1292 թ. կաթողիկոսը դեռևս շարունակում էր նստել Հռոմկլայում, սակայն այս շրջանից կաթողիկոսն ու հոգևորական մյուս պաշտոնյաները սկսեցին թագավորից ստանալ տնտեսական ու քաղաքական օգնություն։ Ընդորում ուժեղացավ թագավորի ազդեցությունը հոգևորական դասերի վրա, որը պիտի բացատրել թագավորի տնտեսական և քաղաքական հզորությամբ։ Այս ժամանակից հենց ուժեղանում է Կիլիկիայի հոգևորական դասերի մասնակցությունը երկրի կառավարմանը։

Լևոն Բ-ի թագադրմանը մասնակցած 45 աշխարհիկ ֆեոդալներից բացի, ներկայացել էին նաև 15 խոշոր հոգևոր ֆեոդալներ կաթողիկոսի գլխավորությամբ[242]։

12-րդ դարի վերջին և ապա 13-րդ դարում Կիլիկյան հայկական պետության մեջ հաշվվում էին հինգ արքեպիսկոպոսություն և 15 եպիսկոպոսություն, որոնց կենտրոնները հանդիսանում էին քաղաքներն ու վանքերը։ Հ. Հ. Ոսկյանը իր «Կիլիկիայի վանքերը»

238 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 86։

239 Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայքիւր, էջ 284։

240 Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայ ձեռագրաց նոր Ջուղայի, էջ 33։

241 Դ. Հովսեփյանց, Յիշատակարանք, էջ 564—565։

242 «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», 1856, էջ 100—101։

աշխատության մեջ բազմաթիվ մատենագրական և հիշատակարանների վկայությունների վրա նշում է, որ Կիլիկիայում 11—14-րդ դարերում հիմնադրվել և գործել են հարյուրից ավելի մանր և խոշոր վանքեր, եկեղեցիներ ու անապատներ։ Նրանցից հատկապես նշանավորներն էին Դրազարկի, Արեգի, Արքակաղինի, Սկևռայի, Ակների, Մաշևորի և այլ վանքերն ու եկեղեցիները[243]։

Լևոն Բ-ը հովանավորում և տնտեսական օժանդակություն էր ցույց տալիս այդ վանքերին ու եկեղեցիներին։ Պատահական չէ, որ հիշատակարաններն ու մատենագրական աղբյուրները մեծ գովասանքով են խոսում Լևոն Բ-ի վանքաշինարարության և եկեղեցաշինարարության մասին։

Սկսած Լևոն Բ-ից, թագավորները վանքերին կից հիմնում են դպրատուներ ու վարժարաններ։ Այսպես, Լևոն Բ «կարգեաց տուն վարդապետաց վասն վարժելոյ զմանկունս սուրբ ուխտն Մեծքար կոչեցեալ և որ Լևոնը թաղեցաւ ի վանք Մեծքար կոչեցեալ զոր իւր իսկ էր շինեալ»[244]։ Այս տիպի վկայություններ կան նաև մյուս թագավորների կամ մեծ իշխանների մասին, որոնք վանքերին տրամադրել են տնտեսական միջոցներ և հանդես են եկել պատրոնատի իրավունքով[245]։ Հետևաբար, հասկանալի է դառնում, թե ինչու թագավորներն ու իշխանները միջամտում էին եկեղեցական գործերին։

Հայտնի է նաև Կիլիկիայի թագավորների պայքարը իրենց չենթարկվող կաթողիկոսների դեմ։ Օրինակ՝ Լևոն Բ-ի և Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատի պայքարը[246]։ Այդ պայքարից ընդհանրապես հաղթանակով էին դուրս գալիս Կիլիկիայի թագավորները։ Դրա համար էր պայքարում նաև կենտրոնաձիգ իշխանության ջատագով Սմբատ Սպարապետը, որը իր Դատաստանագրքում կարգավորում էր Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները, ընդ որում Սմբատը հետևողականորեն այն գիծն էր անցկացնում, որ հոգևոր իշխանությունը պարտավոր է ենթարկվել աշխարհիկ իշխանությանը և վերջինի կողմից սահմանված կարգ ու կանոնին։ Դատաստանագրքում ասված է. «Բայց ոչ է ամէն կարգերն մէկ ազգ. այլ թագաւորք և իշխանք իրենց վանաց տուն են հաստատել ու հայր և գլուխք գրել այլ եղբարցն»[247]։

Կիլիկիայի հայկական պետության ստեղծման ժամանակից խախտվում է հոգևոր պաշտոնների ժառանգականությունը, որի դեմ պայքարում էր Ներսես Լամբրոնացին, իր «Պատարագի մեկնութիւն»-ի մեջ։ Նկարագրելով հայ եկեղեցու ժամանակակից վիճակը երկրում և գաղթաշխարհում, նա տալիս է պատգամներ, առաջարկում է վերացնել հոգևորական պաշտոնների ժառանգականությունը և դրա տեղ առաջարկում է այդ պաշտոններին ընտրել առավել աշքի ընկնող հոգևորականներին[248]։

Ներսես Լամբրոնացու այդ պահանջները գործադրվում են 13-րդ դարի ընթացքում։ Այդ մասին Դատաստանագրքում ասված է. «Զի զեպիսկոպոսն պատեհ է, որ երկրին և գաւառին ու իր կարգակցերոյն և ուսուցչացն ու վարդապետացն տեսով և ընտրաւորութեամբ նստուցանեն յաթոռ»[249]։ Նույնը վերաբերում է կաթողիկոսի ընտրությանը։ Այդ մասին ասված է. «և չկարէ ընաւ ինք ի յիրմէ կաթողիկոս ձեռնադրել. քաւէլ ի նոցմէ ձեռնադրին բազմաց ընտրաւորութեամբ»[250]։ Թագավորներն ու իշխանները ոչ միայն իրավունք են ձեռք բերում առաջ քաշելու ու նշանակելու այս կամ այն վանահորն, այլև դրա հետ միասին հսկողություն պետք է սահմանեին հոգևորականների ընտրությունների վրա։

Ուժեղացավ աշխարհիկ ֆեոդալների, հատկապես իշխանաց իշխանի (իշխանության շրջանում) և թագավորի ազդեցությունը եկեղեցական ու հոգևորական գործերում, այն ժամանակ, երբ վանքերի և թեմերի առաջնորդներ, եպիսկոպոսներ ու արքեպիսկոպոսներ էին դառնում իշխանաց իշխանի կամ թագավորի որդիներն ու եղբայրները։ Այսպես, Ներսես Լամբրոնացին, որը Սկևռայի առաջնորդն էր, Հեթումյան Օշինի որդին էր։ Լևոն Բ-ի ժամանակ, երբ Լամբրոնը գրավվեց արքունիքի կողմից, նրա տիրակալ Հեթում իշխանը դարձավ Դրազարկի եպիսկոպոս ու առաջնորդ, Հեղի եպիսկոպոս անունով[251]։ Այնուհետև, 13-րդ դարում Սսի արքեպիսկոպոսական ու առաջնորդության պաշտոնը հաճախ հանձնվում էր թագավորական տան անդամներին։ Այսպես, ար-

243 Հ. Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, Վենետիկ, Ս. Ղազար, 1956։

244 Սամուել Անեցի, էջ 152։ «Հանդէս ամսօրեայ», 1956, էջ 193։

245 Սամուել Անեցի, էջ 151։ Չամչյան, հ. 3, էջ 16։ Սիսուան, էջ 75։

246 Սամուել Անեցի, էջ 145—146։ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, էջ 1514—1515։

247 Դատաստանագիրք, էջ 72։

248 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 230—240։

249 «Դատաստանագիրք, էջ 58։

250 Նույն տեղում։

251 Տարեգիրք, 1956, էջ 212։

քայեղբայր Բարսեղը հիշատակվում է արքայազուն եպիսկոպոս[252] անունով։ Գոներ վանքի առաջնորդ Ռաբուն Հովհաննես եպիսկոպոսը[253] (Հեթում Ա-ի կրտսեր եղբայրը)։ Նշանավոր կրոնավորներից էր նաև Հեթում Ա-ի եղբայր Օշինի որդին՝ Հեթում պատմիչը, որը նախքան հոգևորական դառնալը, մինչև 1305 թ. Կոռիկոսի կոմսն էր և հասել էր զինվորական բարձր պաշտոնի՝ սպարապետության աստիճանի[254]։

Ինչպես ամենուր, այնպես էլ Կիլիկյան հայկական պետության մեջ, որպես սոցիալական անջատ մի դաս, հոգևորականությունը նման ազնվականների ապահարկ էր։

Սմբատը բազմաթիվ հոդվածներով ոչ միայն ազատում էր հոգևորականներին հարկերից, այլև նույնիսկ սահմանում էր բաժին, թագավորի կամ իշխանի ռազմական արշավանքների ժամանակ ձեռք բերած ռազմական ավարից. «Եւ թագաւորն զիր շահուն տասնեակն պատեհ է որ եկեղեցոյն տայ»։ Նույնը անում են իշխանները «և նոքայ զիրենց տասնեակն տան յիրենց եկեղեցեացն»[255]։ Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքում ֆեոդալական հարկերից և տուրքերից ազատում է նաև հոգևորականների ցածր խավին՝ քահանաներին ու վարդապետներին։ Այդ բանը նա հիմնավորում էր վկայակոչելով հին Հայաստանի Արշակունյաց ժամանակաշրջանի օրենքները[256]։

Այսպիսով, Կիլիկիայի հայ հոգևորական դասերը ապահարկ էին, ստանում էին թագավորների և իշխանների քաղաքական և տնտեսական աջակցությունը, որի դիմաց որպես ֆեոդալական շահագործող դասակարգերի ներկայացուցիչներ, պարտավոր էին «զաշխարհ ի նոցին հնազանդութիւն՝ զնա (իմա թագավորին) յորդորել։ Ուսուցանել ծառայել մարմնաւոր տեառն (շահագործողներին) որպէս Աստուծոյ, և զամենայն հարկս և զիրաւունս առանց տրտնջման յարքունիս վճարել»[257]։

Կաթողիկոսը կանգնած էր թագավորին հավասար աստիճանի վրա։ Բացի այդ, նա հանդիսանում էր «թագաւորին օծող և

252 Սիսուան, էջ 233։
253 «Հասկ», 1950—1951, էջ 59—60։
254 Սիսուան, էջ 340։ Տե՛ս նաև «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 435—440։
255 Դատաստանագիրք, էջ 11—13։
256 Նույն տեղում, էջ 49—50։
257 Ռաբունի, էջ 53։

թագապահ» գործակալը[258]։ Նա որպես երկրի հոգևորականների ու հավատացյալների պետն ու աստծո տեղակալը, կարող էր նախագահել հանցագործ թագավորին դատող վերին կամ գերագույն ատյանի նիստերին[259]։

Կիլիկիայի ազդեցիկ հոգևորականներից էր Սսի արքեպիսկոպոսը, որը միևնույն ժամանակ Դրազարկի առաջնորդն էր, վարում էր արքունական ջանցլերի կամ ատենադպրի կարևոր գործակալությունը և Սսի արքեպիսկոպոսական ատյանի նախագահն էր[260]։

Արքունի դեսպաններ և պատգամավորներ էին նշանակվում հաճախ բարձրաստիճան հոգևորականներ։ Այսպես, 1197 թ. Կոստանդնուպոլիս գնացող հայկական դեսպանությունը գլխավորում էր Ներսես Լամբրոնացին[261]։

Պետք է նշել, որ հոգևորական դասի քաղաքական ազդեցությունը Կիլիկիայի պետական ու քաղաքական գործերում ուժեղացավ հատկապես 14-րդ դարում, երբ մամլուկները սպառնում էին Կիլիկիայի հայկական պետության գոյությանը։ Այս շրջանում Կիլիկիայի թագավորները իրենց հայացքներն ուղղում էին դեպի Արևմուտքի խաբեբա դիվանագիտությանը։ Այս պայմաններում դեպի Արևմուտք էին ուղարկվում բազմաթիվ պատգամավորություններ, որոնց գլխավորում էին բարձրաստիճան հոգևորականները։ Հայտնի է այդ պատգամավորությունների տխուր վախճանը, որոնք վերադառնում էին ձեռնունայն, իրենց հետ բերելով միայն պապերի կողմից Կիլիկիայի հայությանը կաթոլիկություն ընդունելու պահանջները։

Ունիտորների և հակաունիտորների միջև ծավալվող կրոնաքաղաքական պայքարի ամբողջ ժամանակաշրջանում ակտիվ դեր էին կատարում նաև Կիլիկիայի հայ հոգևորականները։ Սսի 1307 թ., Ադանայի 1316 և 1317 թթ. եկեղեցական ժողովներում մասնակցած հայ հոգևորական ֆեոդալների ցուցակը[262] ցույց է տալիս, որ այդ շրջանում խիստ մեծացել էր Կիլիկիայի բարձր հոգևորականության քաղաքական ազդեցությունը։ Հոգևորական դասերի քաղաքական ազդեցությունը առավել չափով ուժեղանում

258 V. Langlois, Essai, էջ 54—55։
259 Դատաստանագիրք, էջ 81—82։
260 V. Langlois, Essai, էջ 56։
261 Г. Микаелян, Ист. Кил. Арм. гос., стр. 153.
262 Կղեմես (Գալանոս), Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն... ընդ եկեղեցոյն Հռովմայ, մասն Ա, Հռոմ, 1650, էջ 458—500։

է թագավորության կործանման շրջանում, երբ հոգևորականները ակտիվորեն մասնակցում են արքունի խորհրդի նիստերին և աշխարհիկ ֆեոդալների շարքում որոշում Կիլիկիայի թագավորության առաջ ծառացած քաղաքական ու դավանաբանական հարցերը[263]։

13—14-րդ դարերում ուժեղացավ արևմտաեվրոպական պետությունների ու կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը Կիլիկիայում։ Այս կապակցությամբ Աշոտ Հովհաննիսյանը նշում է, որ սկսած 13-րդ դարից մինչև Կիլիկյան հայկական պետության վախճանը, «ֆրանկ և լատին կենցաղը, քաղաքացիական օրենսդրությունը, եկեղեցական ծեսերը, դավանաբանական բանաձևերը, դասային տերմինները և լեզուն իրենց դրոշմն էին դնում Կիլիկիայի հայ ֆեոդալների և եկեղեցիների ընդհանուր վարքագծի վրա»[264]։ Ներկա աշխատության մեջ մեր առաջ խնդիր չենք դրել լուսաբանելու այդ ազդեցություններն ու նորամուծությունները։ Կարծում ենք, որ դրանք այնքան էլ խոր արմատներ չեն գցել կիլիկյան հասարակության մեջ՝ հաճախ հանդիպել են Կիլիկիայի ժողովրդական մասսաների բուռն դիմադրությանը։ 1374 թ. երբ խիստ մեծացել էր Եգիպտոսի մամլուկների կողմից Կիլիկիայի հայ պետականության գոյությանն սպառնացող վտանգը, այն ժամանակ նույնիսկ Լևոն Զ-ի թագավորության ծիսակատարությունները Կիլիկիայի ժողովրդի պահանջով կատարվել են նաև ըստ «հայկական ձևոյ և օրինաց»[265]։

Որ Արևմտաեվրոպական կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը եղել է հիմնականում ձևական, այդ ցույց է տալիս նաև այն, որ նույնիսկ մի շարք հոգևորական պաշտոնների եվրոպական անուններով փոխարինումն ու անվանումը չեն արմատավորվել հայկական հոգևոր միջավայրում։ Արքունի հրովարտակներում և պապի հետ ունեցած թղթակցություններում հիշատակվում են electus, cantor, thesaurerius, sacrito և Սսի ու Տարսոնի արքեպիսկոպոսների archiprêtre լատինական արտահայտությունը[266]։ Նույն ազդեցության արգասիք պետք է համարել աբբայ, ռաբուն[267] և մետրոպոլիտ[268] կոչումները։

263 Դաղդել, էջ 42, 45, 107։

264 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, էջ 74։

265 Դաղդել, էջ 112։

266 V. Langlois, Essai, p. 67.

267 Դատաստանագիրք, էջ 83։

268 Նույն տեղում, էջ 65։

Այսպիսով, Կիլիկիայի հոգևոր ֆեոդալները նման աշխարհիկ ֆեոդալներին, օգտվում էին շահագործվողներից ստացված եկամուտներից, գտնվում էին արտոնյալ վիճակում։ Թեև ի տարբերություն բուն Հայաստանի հոգևորականներին, որոշ չափով ենթարկվում էին թագավորին, այնուամենայնիվ, մեծ էր նրանց քաղաքական ու տնտեսական դերը Կիլիկյան հայկական ֆեոդալական հասարակարգում։

6. ԲԱՆԱԿԸ

Կիլիկիայի հայկական պետությունը իր կազմավորման օրից, 11-րդ դարի վերջից մինչև նրա կործանումը մշտապես գտնվում էր միջազգային բարդ իրադրության մեջ, շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված պետություններով, որոնք սկսած 12-րդ դարից հաճախ ներխուժում էին նրա տերիտորիան և սպառնում նրա գոյությանը։ Հատկապես ճակատագրական էին Եգիպտոսի մամլուկների հաճախակի և պարբերական ներխուժումները, որոնք 13-րդ դ. երկրորդ կեսից շարունակվեցին մինչև 14-րդ դարի վերջին քառորդը և վերջնականապես կործանեցին Կիլիկիայի թագավորությունը։ Այդպիսի միջազգային դրության մեջ, Կիլիկիայի պետության մշտական ապահովության խիստ անհրաժեշտ գործոններից մեկը հանդիսանում էր կանոնավոր, մշտական և ուժեղ բանակի առկայությունը, նրա ռազմական տեխնիկայի և մարտունակության բարձրացումը, որի թվական կազմը մեծ չափով ավելանում էր պատերազմի ժամանակ։ Մշտական բանակ են պահել նաև Կիլիկիայի իշխաններն ու հատկապես սահմանամերձ շրջանների բերդատերերն ու սահմանապահ իշխանները։

Ինչպես հայտնի է, Բյուզանդիան 11-րդ դարում, հայ թագավորներին և ֆեոդալներին տեղափոխում էր Կապադովկիա, Սիրիա և Կիլիկիա իրենց ռազմական ուժերով հանդերձ, հանձնում էր նրանց վերոհիշյալ բյուզանդական նահանգների սահմանամերձ բերդերի և ամրոցների պաշտպանությունը, նվիրում էր ընդարձակ կալվածներ, դրանով դնելով նրանց վասալական կախման մեջ[269]։

269 «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքին», յԵրուսաղէմ, 1871, էջ, 198։ Այսուհետև, Միքայել Ասորի։ Հմմտ. Chronique de Michel le Syrien, Paris, 1905, p. 133. Տե՛ս նաև «Լուսաւոր», 1899, էջ 69։ Տե՛ս նաև՝ A. H. Sayce, Les Hititles. Histoire d'un Empire oublié, 1891, p. 250.

Հետագայում, երբ Կապադովկիան և Սիրիան նվաճեցին թուրք սելջուկները, այդ վայրերի հայ իշխանները, իրենց զորքերով հանդերձ, փոխադրվեցին Կիլիկիա, որտեղ նույնպես ստանձնեցին սահմանային բերդերի պաշտպանությունը[270]։ 11—12-րդ դարերում Կիլիկիայում Ռուբինյան իշխանության և ապա թագավորության ստեղծումից հետո, վերոհիշյալ հայ իշխանների զորքերը, անհրաժեշտության դեպքում, մտնում էին թագավորական բանակի մեջ և կազմում «հայոց հեծյալ»-ը, պահպանելով բուն Հայաստանի «հայոց հեծյալ»-ի ավանդույթներն ու սովորույթները։ Արևմտաեվրոպական ազդեցության ներքո ծառայողները կոչվում էին ձիավորներ և շատ կողմերով նման էին ասպետներին։

Ինչպես բուն Հայաստանում Արշակունիների[271] և Բագրատունիների[272] ժամանակ, այնպես էլ Կիլիկիայում մշտական բանակի կորիզը՝ «հայոց հեծյալ»-ը կազմված էր ազատներից, որոնք Կիլիկիայում կոչվում էին ձիավորներ։ Այս մասին ուղղակի մատնացույց է անում Սմբատը գրելով. «...եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանքն և իրենց տեսովն, նոյնպէս և զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն»[273]. ապա շարունակության մեջ գրում է «...և զայլ ցած հեծելվորքն այլ վերցածքն, որ ազատ կոչին»[274]։

Աղբյուրները վկայում են, որ թագավորը և իշխաններն ունեցել են սեփական զինված ուժեր։ Անշուշտ վերջիններս մտնում էին Կիլիկիայի արքունական-պետական բանակի մեջ, երբ անհրաժեշտ էր լինում ընդհանուր ուժերով հանդես գալ արտաքին թշնամու դեմ[275]։

Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Լևոն Բ-ի թագավորության ծիսակատարություններին ներկա եղող 45 ֆեոդալներից[276], ոմանք եկել էին իրենց գնդերով՝ «զօրապետաց և զօրաց և ազգաց և ազանց»[277]։ Նույն պատմիչի վկայությամբ, Լևոն Բ-ի թագմանը այդ իշխանները նորից ներկայանում են իրենց զորքերով։ «Ապա հիւանդացաւ և արքայն Լեւոն, որ և մեռաւ և կոչեալ առ ինքն կաթողիկոս Յովհաննէս և զամենայն զօրագլուխս զօրօք իւրեանց»[278]։

Լևոն Բ-ի մահից հետո՝ 1220 թ., երկրում սկսում են ֆեոդալական երկպառակություններ։ Սմբատը գրում է, որ իշխաններն իրենց զորքերով կռվում էին կենտրոնական իշխանության դեմ։ Այսպես, «իշխանք որք ի Կիլիկիա, Հայք և Յոյնքն, պր. Վահրամ և Այսպէս, որ ի Տարսոնէ, յարեան ի վերայ պայլոյն հայոց պրն. Կոստանդեայ և մոտեցին իրրև այս ԵՌ (5000) և պայլն սակաւ զօրօք կայր ի Սիս։ Եւ իրրև գնաց առ նա համբաւ նոցայն գալոյ ի Սսիս յարուցեալ պայլն Հայոց զայր առ նոսա ԳՃ (300) արամք»[279]։

Կիլիկիայի սահմանամերձ շրջանները հանձնված էին «կողմնապահներին» և «սահմանապահներին», որոնցից առավել խոշոր իշխանները, անշուշտ, պահում էին առավել մեծ քանակությամբ զորքեր, քան մյուս իշխանները[180]։ Հատուկ զորքեր ունեին նաև հոգևոր ասպետական օրդենները, որոնցից միայն հյուրընկալները կամ հիվանդախնամները, որպես թագավորի վասալներ, «տային ամէն տարի հեծել ի ծառայութիւն 400 մարդ...»[281]։

Արքունական և իշխանական ազատագունդ հեծյալ բանակից բացի, պատերազմի ժամանակ հավաքագրվում էր «աշխարհաժողով ռամիկ քաղաքաց և գեղջկաց»[282], կամ թե «ռամիկ հետեվակք»[283]։ Աշխարհաժողովներ կամ աշխարհազորներ անցկացնում էին հատկապես, երբ արտաքին վտանգը դառնում էր սպառնալից։ Նրա մեջ մտնող հետևակ զորքը կազմվում էր ռամիկներից, քաղաքային արհեստավոր դասից և գեղջուկ շինականներից։

Կիլիկյան Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները ոչ միայն ստիպում էին զենքի տակ պահել հսկայական ռազմական ուժեր, (որոնց թիվը պատերազմի ժամանակ տատանվում էր 80000—100000)[284], այլ կատարելագործել ռազմական տեխնիկան, կառուցել բերդեր ու ամրոցներ[285], պատրաստել և վարժեցնել ձիավորներ, «աղեղնավորներ, չարխողներ, սակրա-

270 Ուռհայեցի. էջ 151—213։
271 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 112—119։
272 Հովհաննես Դրասխանակերտցի. Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 356։ Ուռհայեցի, էջ 15։
273 Դատաստանագիրք, էջ 82։
274 Նույն տեղում։
275 Տարեգիրք, էջ 236—238, 244—245։
276 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», Մոսկվա, 1856, էջ 100—101։
277 Գանձակեցի, էջ 158։

278 Նույն տեղում, էջ 187։
279 Տարեգիրք, էջ 223—234։
280 V. Langlois, Le trésor, p. 126.
281 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 109։
282 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 68։
283 Տարեգիրք, էջ 234—245։
284 Նույն տեղում, էջ 231։ Doc. arm., T. I, p. 661.
285 Դատաստանագիրք, էջ 14։

վորներ»[286] և հատուկ անձնակազմ, որոնցից հայտնի են զինվորական բժիշկներ[287] և բեռնակիրներ[288] բանակին մատակարարող տրանսպորտի անձնակազմը։

Սակայն բանակի հիմնական կորիզը հանդիսանում էր հայոց հեծյալը, որը, ինչպես ասացինք, կազմված էր հեծելվորներից կամ ձիավորներից։ Ընդ որում այնքան կարևոր էր հեծյալ բանակին ձիերով մատակարարելու հարցը, որ Հեթում Ա-ը թարգմանել էր տվել արաբերեն լեզվից «Պայտարի-գրաստան բժշկարան» ձիաբուծության և ձիաբուժության գիրքը[289]։

Կիլիկիան հայտնի էր իր ազնվացեղ ձիերով։ Դեռևս 12-րդ դարում, Թորոս Բ-ը (1145—1169 թթ.) Մանուել կայսրին նվիրում է «ոչխարս, գոմէշս, պախրէս, կինճս, ձիս ազնիւս»[290]։ Լևոն Բ-ի կողմից վենետիկցիներին և ճենովացիներին շնորհված առևտրական շնորհագրերում ծանր մաքս էր պահանջվում հատկապես ձիերից, որոնք արտահանվում էին Կիլիկիայից՝ «չորս խաչանիշ բիւզանդ ձիուց և հինգ նոր դրամ ջորուց»[291]։

1285 թ. Կիլիկիայի և Եգիպտոսի մամլուկների միջև կնքված հաշտության պայմանագրով, Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին տալ տարեկան 25 ընտիր երիվար և 25 ընտիր ջորի[292]։

Վերոհիշյալ վկայությունները ցույց են տալիս, որ Կիլիկիայում հայերը զբաղվել են նաև ձիաբուծությամբ։ Թե ինչ մեծ նշանակություն են ունեցել ձիերը և ջորիները, այդ երևում է նրանից, որ նույնիսկ առևտրական մեծ արտոնություններ ստացող օտար վաճառականները վճարում էին բավականին ծանր մաքս, այն դեպքում, երբ նրանք աղատվում էին նույնը անել այլ ապրանքների համար։ Այդ իր հերթին ցույց է տալիս, որ Կիլիկիայի պետությունը չէր քաջալերում իր բանակի և պաշտպանության համար այնքան անհրաժեշտ ձիերի արտահանումը, քանի որ այդ շրջանում առավել չափով մեծացել էր հայոց հեծյալի կորիզը

286 Doc. arm., p. 661.
287 Տարեգիրք, էջ 243։
288 Նույն տեղում, էջ 239։
289 Միսուան, էջ 484։
290 Տարեգիրք, էջ 51։
291 V. Langlois, Le trésor, էջ 108։
292 Documents latins, T. II, էջ 170։

հանդիսացող ձիավորների տեսակարար կշիռն ու նշանակությունը։

Ինչպես վերևում տեսանք, ձիավոր և հեծելվոր տերմինները գործ էր ածվել Կիլիկիայի հայոց հեծյալում ծառայող ազատների նկատմամբ[293]։

Հայկազյան նոր բառարանում ձիավոր բառի նշանակությունը տրված է այսպես. «ձիավոր որ ունի զնախապատուութիուն ինչ զինվորական կարգի, որպիսին են ազատ և մեծազգի զինվորքն որքն աստիճանաւ ելանեն ի զանազան կարգս»։

Բացի ձիավոր կամ հեծելվոր տերմիններից, Կիլիկիայում ազատների դասին պատկանող ձիավորները կոչվել են նաև ձիավարժներ[294], իսկ օտար աղբյուրներում հիշատակվում են «chevalier», որը ասպետի համազոր ֆրանսիական տերմին էր[295]։

Խաչակիր ասպետների օրինակով սահմանվել էր ձիավորի աստիճան, որին հասնելու համար զինվորականը պետք է հրապարակայնորեն քննություն հանձներ ձիավարժությունից՝ նիզակի գործածությունից, նետաձգությունից և ասպետ դառնալու համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներից և ունակություններից և ապա հատուկ «ձիավորեցման» ծիսակատարություններից հետո ստանում էր ձիավորի, ձիավարժի կամ ասպետի կոչում։

Հայկազյան նոր բառարանում և Աճառյանի Արմատական բառարանում «ասպետ» բառին տրված է իտալերեն «կավալեր», իսկ հայերեն՝ «ձիավոր ազնվական», «հեծյալ իշխանավոր» նշանակությունը[296]։ Էդ. Դյուլորիեն ասպետ բառը դնում է asp, ձի իրանական փոխառությունից[297]։ Հ. Մանանդյանը բավարարվում է Նիկ. Ադոնցի այն բացատրությամբ, որ «ասպետը» Բագրատունիների տոհմային տիտղոսն է, նշանակում է «տոհմապետ» և համապատասխանում է իրանական visapati բառին։ Միաժամանակ ավելացնում է. «Ն. Ադոնցի այս ստուգաբանությունը կարոտ է ավելի հիմնավոր լուսաբանման, սակայն այս մեկնությունն ըստ իս հավանական է, որովհետև նոր այս բացատրությամբ միանգամայն հասկանալի է դառնում «ասպետի» գործածությունն իբրև

293 Դատաստանագիրք, էջ 82։
294 Միսուան, էջ 441։
295 Հ. Աճառյան, Հայ Արմատական բառարան, հ. 1, էջ 557—558։
296 Նույն տեղում։
297 Ed. Dulaurier, „Journal Asiatique", 1861, № 18, p. 291.

վորներ»[286] և հատուկ անձնակազմ, որոնցից հայտնի են զինվորական բժիշկներ[287] և բեռնակիրներ[288] բանակին մատակարարող տրանսպորտի անձնակազմը։

Սակայն բանակի հիմնական կորիզը հանդիսանում էր հայոց հեծյալը, որը, ինչպես ասացինք, կազմված էր հեծելվորներից կամ ձիավորներից։ Ընդ որում այնքան կարևոր էր հեծյալ բանակին ձիերով մատակարարելու հարցը, որ Հեթում Ա-ը թարգմանել էր տվել արաբերեն լեզվից «Պայտարի-գրաստան բժշկարան» ձիաբուծության և ձիաբուժության գիրքը[289]։

Կիլիկիան հայտնի էր իր աղնվացեղ ձիերով։ Դեռևս 12-րդ դարում, Թորոս Բ-ը (1145—1169 թթ.) Մանուել կայսրին նվիրում է «ոչխարս, գոմէշս, պախրէս, կինճս, ձիս աղնիւս»[290]։ Լևոն Բ-ի կողմից վենետիկցիներին և ճենովացիներին շնորհված առևտրական շնորհագրերում ծանր մաքս էր պահանջվում հատկապես ձիերից, որոնք արտահանվում էին Կիլիկիայից՝ «չորս խաչանիշ բիւզանդ ձիուց և հինգ նոր դրամ ջորուց»[291]։

1285 թ. Կիլիկիայի և Եգիպտոսի մամլուկների միջև կնքված հաշտության պայմանագրով, Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին տալ տարեկան 25 ընտիր երիվար և 25 ընտիր ջորի[292]։

Վերոհիշյալ վկայությունները ցույց են տալիս, որ Կիլիկիայում հայերը զբաղվել են նաև ձիաբուծությամբ։ Թե ինչ մեծ նշանակություն են ունեցել ձիերը և ջորիները, այդ երևում է նրանից, որ նույնիսկ առևտրական մեծ արտոնություններ ստացող օտար վաճառականները վճարում էին բավականին ծանր մաքս, այն դեպքում, երբ նրանք ազատվում էին նույնը անել այլ ապրանքների համար։ Այդ իր հերթին ցույց է տալիս, որ Կիլիկիայի պետությունը չէր քաջալերում իր բանակի և պաշտպանության համար այնքան անհրաժեշտ ձիերի արտահանումը, քանի որ այդ շրջանում առավել չափով մեծացել էր հայոց հեծյալի կորիզը

286 Doc. arm., p. 661.
287 Տարեգիրք, էջ 243։
288 Նույն տեղում, էջ 239։
289 Սիսուան, էջ 484։
290 Տարեգիրք, էջ 51։
291 *V. Langlois*, Le trésor, էջ 108։
292 Documents latins, T. II, էջ 170։

հանդիսացող ձիավորների տեսակարար կշիռն ու նշանակությունը։

Ինչպես վերևում տեսանք, ձիավոր և հեծելվոր տերմինները գործ էր ածվել Կիլիկիայի հայոց հեծյալում ծառայող ազատների նկատմամբ[293]։

Հայկազյան նոր բառարանում ձիավոր բառի նշանակությունը տրված է այսպես. «ձիավոր որ ունի զնախապատուութիւն ինչ զինվորական կարգի, որպիսին են ազատ և մեծազգի զինվորքն որքն աստիճանաւ ելանեն ի զանազան կարգս»։

Բացի ձիավոր կամ հեծելվոր տերմիններից, Կիլիկիայում ազատների դասին պատկանող ձիավորները կոչվել են նաև ձիավարժներ[294], իսկ օտար աղբյուրներում հիշատակվում են «chevalier», որը ասպետի համազոր ֆրանսիական տերմին էր[295]։

Խաչակիր ասպետների օրինակով սահմանվել էր ձիավորի աստիճան, որին հասնելու համար զինվորականը պետք է հրապարակայնորեն քննություն հանձներ ձիավարժությունից՝ նիզակի գործածությունից, նետաձգությունից և ասպետ դառնալու համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներից և ունակություններից և ապա հատուկ «ձիավորեցման» ծիսակատարություններից հետո ստանում էր ձիավորի, ձիավարժի կամ ասպետի կոչում։

Հայկազյան նոր բառարանում և Աճառյանի Արմատական բառարանում «ասպետ» բառին տրված է իտալերեն «կավալեր», իսկ հայերեն՝ «ձիավոր ազնվական», «հեծյալ իշխանավոր» նշանակությունը[296]։ Էդ. Դյուլորիեն ասպետ բառը դնում է asp, ձի իրանական փոխառությունից[297]։ Հ. Մանանդյանը բավարարվում է Նիկ. Ադոնցի այն բացատրությամբ, որ «ասպետը» Բագրատունիների տոհմային տիտղոսն է, նշանակում է «տոհմապետ» և համապատասխանում է իրանական visapati բառին։ Միաժամանակ ավելացնում է. «Ն. Ադոնցի այս ստուգաբանությունը կարոտ է ավելի հիմնավոր լուսաբանման, սակայն այս մեկնությունն ըստ իս հավանական է, որովհետև նոր այս բացատրությամբ միանգամայն հասկանալի է դառնում «ասպետի» գործածությունն իբրև

293 Դատաստանագիրք, էջ 82։
294 Սիսուան, էջ 441։
295 Հ. Աճառյան, Հայ Արմատական բառարան, հ. 1, էջ 557—558։
296 Նույն տեղում։
297 *Ed. Dulaurier*, „Journal Asiatique", 1861, № 18, p. 291.

տիտղոս Բագրատունիների միայն տոհմում»[298]։ Նույն տեղում Հ. Մանանդյանը ընդունելով Հյուբշմանի և Աճառյանի ստուգաբանությունը գրում է. «Անհասկանալի է նույնպես, թե ինչու ասպետը ունենալով ֆեոդալական chevalier կամ рыцарь բառի նշանակությունը, գործածական չի եղել Հայաստանում իբրև տերմին «ձիավոր ազնվական»-ների համար»[299]։

Որ ձիավոր և ձիավարժ տերմինները նույն ասպետի հոմանիշներն են, այդ մասին վկայում են նաև մատենագրական այլ աղբյուրները։ Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» 1956 թվականին հրատարակված տեքստում խաչակիր ասպետներին հավասար կերպով և ասպետի իմաստով, օգտագործվում է ձիավորներ[300] տերմինը։ «Ձիավարժը» ասպետի իմաստով օգտագործել է նաև Մատթեոս Ուռհայեցին[301]։

14-րդ դարի հեղինակ Հովհան Դարդելը, որ գրել է Կիլիկյան հայկական պետության վերջին շրջանի պատմությունը, ձիավոր և ասպետ տերմինները օգտագործել է որպես համազոր և հոմանիշ բառեր[302]։ Այսպես, իր «Ժամանակագրության» 43-րդ գլխի վերնագրում գրում է. «Յաղագս Կոստանդնի որ հրամայեաց երկու ձիաւորաց, որպէսզի խեղդեն վերոհիշյալ տիկինն և երկու որդիները և ինչպես անոնք հրաշքով ազատելու մասին»[303], իսկ կոնտեքստում «երկու ձիավորաց» բառերի տեղ օգտագործում է ասպետ բառը, գրելով. «եւ հրաման ասպետաց երկուց», ֆրանսերեն օրինակում (deux chevalier) ազատաց ջրահեղձայց առնեն զտիկինն զայն և զորդիս նորա երկոսին գաղտնաբար»[304]։ Այնուհետև «Ժամանակագրության» բազմաթիվ գլուխներում, «chevalier» տերմինը օգտագործում է հայ ձիավորների մասին խոսելիս, իսկ հայերեն թարգմանությունում «chevalier» իրավացիորեն թարգմանված է ասպետ բառով[305]։ Սմբատ Սպարապետի Տարեգրքում օգտագործված ձիաւորեցուցանել[306] տերմինի փոխարեն և նույն նշանակությամբ օգտագործում է «արարեալ զնա ասպետ»[307] արտահայտությունը։ Թեկուզ միայն ձիաւորեցուցանել տերմինի ասպետ արարեալ նշանակության օգտագործումը, մեզ իրավունք է տալիս ասելու, որ եթե ոչ Հայաստանում, գեթ Կիլիկիայում ձիավոր և ասպետ տերմինները ունեցել են նույն նշանակությունը, ընդ որում ձիավոր տերմինը օգտագործվել է ասպետի իմաստով։ Այսպիսով Կիլիկիայի ասպետները որպես ազատներին պատկանող դաս, կոչվել են ձիավոր կամ հեծելվոր տերմիններով, որոնք նման էին հին Հռոմի «ordo equester» կոչված ձիավոր դասին կամ միջնադարյան Եվրոպայի՝ գերմանական, ռուսական «рыцарь» և ֆրանսիական «chevalier» և վրացական «ռայինդի»[308] դասերին։

Ասպետությունը միջնադարյան Եվրոպայում հանդես է եկել երեք ասպեկտով.

ա) ֆեոդալական հողատիրության մի ձև, որպես ֆեոդալական մանր հողատիրություն, բ) անձնական արժանիք կամ հատկություն, գ) վարվելաձևերի մի համալիր սիստեմ[309]։

«Ասպետության ծագումն ու զարգացումը,— գրում է Հ. Ս. Ստաբլը,— մի հարց է, որը դեռևս խորապես լուսաբանված չէ։ Թեպետև Ժ. Հ. Ռաունդը մեծ ջանքեր է թափել այդ բացատրել Անգլիայի ֆեոդալական հասարակարգի առանձնահատկությամբ, սակայն նրա ստեղծումը միջնադարյան ֆեոդալական Եվրոպայի մասշտաբով մնում է մութ և չլուսաբանված»։ «Ասպետը ծագել է հեծելվոր, հեծյալ, ձիավոր բառերից»[310],— եզրակացնում է Ստաբլը։ Ֆրանսիացի հետազոտող Դյուկանժը, երեք դասերի է բաժանում միջնադարյան ֆեոդալական Ֆրանսիայի և Իսպանիայի հասարակությունը. Ա. բարոններ, Բ. ասպետներ, Գ. սեյիսներ կամ ձիավարժներ, գունդստաբլներ և մարշալներ։ Վերջիններս ռազմական առաջնորդներ և խոշոր հողատերեր էին, իսկ ասպետները միջին և մանր հողատերեր[311]։

---

298 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 63։

299 Նույն տեղում։

300 Տարեգիրք, էջ 148։

301 Ուռհայեցի, էջ 259, 337, 339։

302 Դարդել, 50—51, 54, 69, 107։ (Ճիշտ է վերաբերվել նաև Ա. Սուքիասյանը իր «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում», Երևան, 1967, երբ նա էջ 85-ում «ասպետ»-ի դիմաց որպես հոմանիշ նշել է ձիավոր բառը)։

303 Նույն տեղում, էջ 54։

304 Դարդել, էջ 54։

305 Նույն տեղում, էջ 50—51, 54, 69, 107, 115։

306 Տարեգիրք, էջ 231, 244։

307 Դարդել, էջ 115։

308 И. А. Джавахишвили, История грузинского права. Книга вторая, выпуск первый. Тбилиси, 1928, стр. 61, 62 (на груз. яз.).

309 Enc. Brit., 1946, T. 6, p. 778.

310 Enc. Brit., 779.

311 Նույն տեղում։

Ֆ. Էնգելսը ասպետներին դասում է ստորին ազնվականության շարքը և ընդգծում է ասպետական հեծելազորի նշանակությունը[312]։

Կիլիկիայում ձիավորները՝ ասպետները պատկանում էին ազնվականության ազատների դասին[313]։ Նրանց հիմնական մասը մանր և միջին հողատերերն էին։ Իրենց սոցիալ-տնտեսական վիճակով գրավում էին ֆեոդալական հիերարխիայի չորրորդ աստիճանը, թագավորից, մեծ իշխաններից և բարոններից հետո։ Ձիավորների սոցիալ-իրավական վիճակի մասին ուղղակի մատնացույց է արված Սմբատի Դատաստանագրքում։ Դրա հիմքում ընկած է Կիլիկիայի ֆեոդալական հասարակության իշխող դասակարգի սոցիալ-իրավական վիճակը արտահայտող «Իմ վասալը՝ իմ վասալը չէ» սկզբունքը։ Այսպես, Սմբատը գրում է. «Եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն և իրենց տեսովն նոյնպէս եւ զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն՝ նա իրենցովն զիրենք դատեն՝ իշխանաց իշխանքն, զթագաւորին ճորտերն՝ թագաւորին հրամանաւքն»[314]։

Ինչպես տեսնում ենք, ձիավորները ենթարկվում են իրենց սենյոր իշխանաց իշխանին կամ իշխաններին և դատվում են նրանց կողմից։ Իրենց հերթին ձիավորները՝ ցած հեծելվորները, որոնք նույնպես ազատ են կոչվում[315], դատում են իրենց ճորտերին, բայց նրանք իրավունք չունեին մահվան դատավճիռ կայացնելու իրենց ճորտերի նկատմամբ, որովհետև այդ իրավունքը պատկանում էր թագավորին և իշխանաց իշխանին։ «...Ապա զընտանել և ծեծել և տուգնել և հանել, վարել յիրենց տեղոյ ի բաց՝ կարեն այնել»[316]։ Այս դեպքում խոսքը վերաբերում է ճորտ գյուղացիներին, որոնք պատկանելիս են եղել ձիավորներին։ Սակայն օրենքը սահմանափակում է նրանց իրավունքները, ընդ որում նրանք իրենց ճորտերին «հայրենէ փթել չկարեն առանց պարոնին»[317]։

Վերոհիշյալից պարզ երևում է, որ ձիավորները հանդիսացել են առավել խոշոր իշխանների լիճ ճորտերը, այսինքն մանր ֆեոդալ հողատերերը, որոնք ունեցել են ճորտ գյուղացիներ։

312 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմները Գերմանիայում, Երևան, 1940, էջ 48, 82։

313 Դատաստանագիրք, էջ 48—82։

314 Նույն տեղում, էջ 82։

315 Նույն տեղում։

316 Նույն տեղում, էջ 82—83։

317 Նույն տեղում, էջ 83։

Ինչպես ասացինք, Կիլիկիայի հայկական պետության բանակի կորիզը՝ հայոց հեծյալը, հիմնականում ստեղծված էր և պահպանվում էր բուն Հայաստանի Արշակունյաց և Բագրատունյաց ժամանակաշրջանների «հայոց այրուձիի» տրադիցիաները։ Սակայն նոր միջավայրում, նոր պայմաններում և խաչակիր պետությունների ազդեցության տակ նա ենթարկվել է որոշ փոփոխությունների։

Խաչակիր արշավանքների առաջին շրջանում խաչակիր բանակներում, ի տարբերություն արևմտաեվրոպական բանակների, որտեղ զինվորականի-հեծյալի՝ իր սենյորի նկատմամբ ստանձնած վասալական զինվորական ծառայության հիմքում ընկած էր սենյորից ստացած ֆեոդը (Հայաստանում խոստակը)[318] և սենյորից ստացած թոշակը (վերջինս հիմնականում ծանրացած էր ճորտ գյուղացիության վրա)։ Նույնիսկ ավելի ուշ շրջանում Երուսաղեմի թագավորության անկումից հետո 13-րդ դ. սկզբում՝ առաջանում է հողազուրկ ազնվականների մի դաս, որը հետևանք էր մի կողմից՝ նվաճված հողերը մուսուլմանների կողմից վերագրավելուն և մյուս կողմից՝ ավատների մանրացման։ Վերջին երևույթի դեմ պայքարում էին Անտիոքի ասիզների[319] և Երուսաղեմի ասիզների[320] օրենսդիրները։ Սակայն վերջիններս ցանկացած արդյունքի չհասան և այդ պրոցեսը շարունակվեց։ 12-րդ դարի վերջին Կիլիկիայում և խաչակրաց պետություններում էլ առաջանում է մանր ազնվականության՝ ձիավորների հողազուրկ այդ դասը, որի մասին ուղղակի վկայում է ֆրանսիական ժամանակագրությունից՝ «Էռնուլի և Բերնարդ գանձապետի անունը կրող ժամանակագրությունը». այնտեղ ասված է. «ասպետները, որոնք ժառանգությունից զրկված էին, կամ որոնց երկրները Սարակինոսք գրաված էին և տիկինները, որոնց ամուսինները վախճանված էին և օրիորդները գնացին հոն Կիպրոս և Կիլի թագավորը տվավ անոնց առատ երկրներ և չկարմէկն, որ հոն երթար և որուն նա առատ երկրներ չտար»[321]։

Կիլիկիայում ևս արտաքին թշնամիների դեմ մղված երկարատև պատերազմներից հետո, շատ բնական էր, որ առաջանար ազնվականների մի դաս, որի հիմնական զբաղմունքը լիներ ֆեոդալի մոտ զինվորական ծառայություն կատարելը, հույս ունենալով վարձատրվել ռազմական ավարով կամ գերիների փրկագնից

318 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 116։

319 Assises d'Antioche, p. 21, 22.

320 Assises de Jérusalem, p. 35—36.

321 «Բազմավէպ», Վենետիկ, 1913, էջ 288—299։

ստացած եկամուտներով։ Սմբատ Սպարապետը արձանագրելով այդ փաստը գրում է. «Բայց և զյիշուելոյն և զշահելոյն բաժնելն պատեհ է՝ որ գրենք... եվ ինչ շահ կենայ՝ ըղորդն այն է՝ որ զաՇէնն յիրուր քշտեն, ու կէսն թագվորին՝ և կէսն այլ իշխանացն՝ ըստ իրենց մարդաթրին չափոյն ի յիրենց վերայ բաժնեն։ Ապա... բրդեղէնն ու բամբկեղէնն և պղինձն ու երկաթն՝ զաւրացն է»[322].

Փրկագնից ստացված եկամուտների՝ զինվորականների միջև բաժանելու մասին է խոսում հետևյալ վկայությունը. «Յարձակեալ, ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն Յունաց՝ զբաղումս եսպան և զհոլով Սեաստիոսս գերի տարեալ ի դղեակն. վաճառեաց ընդ ոսկւոյ կայսերն էմանուելի և զանձն բաշխեաց իւրոյ հետևակաց զօրուն»[323]։

Ինչպես Երուսաղեմի թագավորությունում, այնպես էլ Կիլիկիայի հայկական թագավորության մեջ զինվորական ծառայությունը հիմնականում կատարվել է սենյորից ստացած ֆեոդի և ռոճիկի դիմաց։ Ռոճիկ ստացող ձիավորները Երուսաղեմի թագավորությունում կոչվում էին Soudoyer-ներ, այսինքն բառացի՝ ռոճիկ ստացողներ, որոնք ռոճիկ էին ստանում փողով և բնամթերքով՝ գյուղացիներից գանձված բահրայով։ Պահպանվել են վկայություններ Soudoyer-ների ստացած ռոճիկի և բահրայի չափի մասին։ Այսպես, Ջոն Մարդատ հեծելվորը, որը վասալական կախման մեջ էր գտնվում Արսուֆի սենյորությունից, ստանում էր ռոճիկ փողով 200 բյուզանդ, և բահրա՝ որոշ քանակությամբ ցորեն, յուղ և այլ մթերքներ, որի դիմաց նա պարտավորվում էր սենյորին ներկայանալ 4 ձիով[324]։

Սմբատ Սպարապետը իր «Դատաստանագրքի» և Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականի» մեջ վկայություններ են բերում Կիլիկիայի հեծելվորների և զինվորականների ռոճիկ կամ թոշակ ստանալու մասին։ Այսպես, Սմբատը համեմատելով հոգեվոր ֆեոդալների ստացած եկամուտը ձիավորների ստացած թոշակի հետ գրում է. «վասն զի ամէն եկեղեցական հայնց է հաստատած ի յիր ապրանքն ի սուրբ եկեղեցոյն ծառութենէն՝ զէդ հեծելվոր որ թրովն իր այնէ զթոշակն»[325]։ Ներսես Շնորհալին «Թուղթ

322 Դատաստանագիրք, էջ 11—12։

323 Սամուել Անեցի, էջ 217։

324 E. Rey, Les colonies franques de Syrie au XIII-ème siècle, Paris, 1883, p. 24.

325 Դատաստանագիրք, էջ 21։

ընդհանրականում» «Առ իշխանս որ ընդ աշխարհի» բաժնում դիմելով իշխաններին գրում է. «Նաև զինվորաց ձերոց և որք ծառայեն ձեզ, զսահմանեալ հոգան մի պակասեցուցանէք, զի զրկանք մեծ է այն անիրաւութիւն քանզի որպէս նոքա պարտական են վասն պարգևացն որ ի ձէնջ. զարիւնս իւրեանց հեղուլ վասն ձեր նոյնպէս և դուք պարտիք զխոստացեալ թոշակսն նոցին հատուցանել անթերի»[326]։

Դիմելով զինվորներին, գրում է. «Եւ մի առաւել քան զհրամայելն ձեր առնիցէք. ըստ սրբոյ Մկրտչին խրատու, այլ թոշակօքն ձեր բավականաջիք։ Նոյնպէս և զորս քան զսահմանեալ հոգան ձեր անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք. կամ ի տէրանց ձերոց ընչից գողանայք. ունիք տալ զվճարն առանց՝ պակասութեան յաւուրն դատաստանի»[327]։

Հոգ բառը, ըստ Հայկազյան բառարանի, նշանակում է ռոճիկ, թոշակ։ Հոգ տերմինը հետնադարյան հայերենի մեջ, ավելի սովորական և ժողովրդին ավելի հասկանալի բառ էր, քան թոշակը, այնպես որ Մխիթար Գոշի Դատաստանագրքում թոշակ բառի դեմ իբրև բացատրություն, լուսանցքի վրա գրված է հոգ[328]։ Մատթեոս Ուռհայեցին մի անգամ օգտագործել է հոգակեր տերմինը[329]։ Սմբատը իր Դատաստանագրքում հոգքվոր բառը օգտագործում է վարձով աշխատող անձի համար[330]։

Լատիներեն erogatia բառը ծագում է eroge ծախսել, դրամ բաժանել բայից, փոխ է առնվել հունարեն roya ձևից, որ նշանակում է «ժողովրդին բաշխած դրամ» կամ «զինվորականներին վճարված թոշակ՝ տարեթոշակ»։ Ինչպես նկատելի է «Թուղթ ընդհանրականում» Ներսես Շնորհալին հոգ և թոշակ բառերը օգտագործել է փոխարինելով մեկը մյուսին, իմաստավորելով նրանց մեջ զինվորներին և հեծելվորներին զինվորական ծառայության դիմաց տրվող թոշակը։

Գ. Միքայելյանը հիմնվելով «Թուղթ ընդհանրականի» «Նոյնպէս և զորս քան զսահմանեալ հոգաս, ձեր անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք» վկայության վրա, հանգել է այն ճիշտ եզրակացության, որ հոգը ռուսական ֆեոդա-

326 Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 100։

327 Նույն տեղում, էջ 106։

328 Վ. Բաստամյան, «Մխիթար Գոշի Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, էջ 82։

329 Ուռհայեցի, էջ 21։

330 Դատաստանագիրք, էջ 17։

լիզմի «кормление» տերմինին է համապատասխան, և որ այդ գյուղական բնակչության կողմից բանակի զինվորներին վճարված պարտադիր հարկերից մեկն էր հանդիսանում[331]։

Հեծելվորները Կիլիկյան հայկական պետությունում իրավունք ունեին օգտվելու վանքի եկամուտներից այն դեպքում, երբ նրանք գտնվում էին ռազմերթի մեջ։ Սմբատը այդ մասին գրում է. «Սահման է յաւրինացն՝ որ թէ թագաւոր և թէ իշխան ու թէ հեծելւոր, որ ի ճանապահ կենայ, ու վանք պատահի, նա ի հաւն իջնու, չիջնու ի գեղ. և վանքն տայ զպէտքն»[332]։

Հոոգի կամ հեծելվորի ստացած թոշակի չափի մասին վկայություն ունի պատմիչ Աբուլֆեդան։ Նա գրում է, որ հայոց մոտ սովորություն էր ձիավորին տալ ռոճիկ տարեկան 12 ոսկի, իսկ հետևակին՝ 3 ոսկի և որ այդպես էր անում Գող Վասիլ իշխանի այրի տիկինը իր ամուսնու մահից հետո[333]։

Ֆեոդալական Եվրոպայում 13—14-րդ դարերում, երբ թագավորները սկսեցին երկարատև պատերազմներ մղել (անգլո-ֆրանսիական հարյուրամյա պատերազմը 14—15-րդ դդ. և ուրիշներ) ստիպված էին պահել մշտական բանակ. ընդ որում արդեն չէր բավարարվում վասալի զինվորական ծառայության նախկին պայմանները, երբ վերջինս սենյորից ստացած պարգևական ֆեոդի դիմաց որոշ ժամանակ մնում էր զինվորական ծառայության մեջ։ Մշտական բանակ պահելու համար մանր հողատերերից սկսեցին գանձել ռազմական հարկ, Արևմտյան Եվրոպայում այն կոչվում էր Scutage կամ escuage, որը զինվորական պարտույթ էր[334]։ Հայտնի է, որ Կիլիկյան հայկական պետությունը սկսած 13-րդ դարի երկրորդ կեսից մինչև իր անկումը, 1375 թ., ստիպված էր պահել մշտական բանակ՝ դիմակալելու համար արտաքին թշնամիների կրկնվող հարձակումները։ Բացի այդ, որպես մոնղոլների դաշնակից, պարտավորված մասնակցում էր մոնղոլների՝ Սիրիայի և Միջագետքի դեմ պարբերաբար կրկնվող ռազմական արշավանքներին։ Ինչպես աղբյուրներն են հաղորդում, Կիլիկիան այդ արշավանքներին մասնակցում էր մշտական բանակով, որի թիվը, ըստ աղբյուրների հասնում էր 62 հազարի,

331 *Г. Микаелян*, Ист., стр. 253.

332 *Դատաստանագիրք, էջ 51։*

333 *Միսուան, էջ 484։*

334 Enc. Brit., t. 6, p. 779.

որից 12 հազար հեծելվորներ-ձիավորներ էին, իսկ 50 հազարը՝ հետևակ[335]։ Այդպիսի մշտական բանակ պահելու համար, Կիլիկիայի թագավորը և ֆեոդալ իշխանները մանր հողատերերից սկսեցին նույնպես գանձել Servitium ռազմական հարկը[336], և որը նման էր Արևմտյան Եվրոպայի վերոհիշյալ զինվորական պարտույթին։ Թեև այս հարկի մասին անմիջական վկայություններ չկան հայ մատենագրական աղբյուրներում, սակայն մեր կարծիքով Սմբատի Դատաստանագրքի 126-րդ հոդվածը «նոյնպէս ոչ ձի, ոչ սիլահ», չի կարող գրավ դնել, «զի կուոյ և ծառութեան ի պետք է ի պարոնութեանն իր կարիքն[337]» հատվածը, շատ հավանական է, որ վերաբերում է զինվորական հարկին՝ վերևում հիշատակված Servitium-ին։

Այսպիսով, Կիլիկիայի հայկական թագավորության գլխավոր ռազմական հենարանը հանդիսանում էին բազմաքանակ հողատեր ազատները՝ ձիավոր-հեծելվորները, որոնք կազմում էին Կիլիկիայի բանակի կորիզը՝ հայոց հեծյալը։ Նրանք զինվորական ծառայության դիմաց, բացի ֆեոդ-կալվածքից, սենյորից ստանում էին հոոգ-ռոճիկ և արշավանքի ժամանակ ձեռք բերված ռազմական ավարի կամ ռազմագերիներից ստացված փրկագնի մի մասը։ Նրանք խաղաղ պայմաններում ապրում էին ֆեոդ-կալվածքներում, պարապում էին երկրագործությամբ՝ շահագործելով կախյալ և ճորտ գյուղացիներին։

Բացի վերոհիշյալ ռազմական ծառայությունից, որպես սենյորի վասալներ, ձիավոր-ասպետները, նման արևմտաեվրոպական ասպետներին, կատարում էին նաև այլ վասալական պարտականություններ և պաշտոններ։ Հետաքրքիր է նաև ասպետների օծման կարգը։ Այսպես, մատենագրական մի շարք վկայություններ են հաղորդում թագավորի կամ բերդատեր իշխանների որդիների և նրանց ազատներին, ձիավորի կամ ասպետի կոչում շնորհելու ծիսակատարության մասին։ «Ձիավորեցուցանելու» կամ ասպետ ձեռնադրելու ծիսակատարությունները, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Կիլիկիայում, զուգադիպում և կատարվում էին որևէ մի նշանավոր դեպքի ժամանակ կամ դրա առթիվ. այդպիսի դեպքեր էին՝ հաղթանակած ճակատամարտին հաջորդող տոնախմբությունները, ջրօրհնեքը կամ թագավորի օծումը,

335 Documents latins, T. II, p. 170, 171. *Տե՛ս նույնպես, Միսուան, էջ 554։ Tournebize*, Histoire politique et religieuse d'Arménie, p. 210—212.

336 *V. Langlois*, Le trésor, p. 107. Essai, p. 49.

337 *Դատաստանագիրք, էջ 116։*

կամ թե թագաժառանգի ծննդյան կամ մկրտության հանդեսները։ Թե ինչ արտաքին տեսք և բովանդակություն է ունեցել ձիավորացուցանելու ծիսակատարությունը, այդ մասին աղբյուրներում պահպանվել են շատ քիչ տեղեկություններ։ Չկան վկայություններ միջնադարյան Եվրոպայի ասպետ ձեռնադրելու այն պարզ ձևի մասին, որ կոչվում էր «թրատոփություն» կամ «սրատոփություն»[338]։ Սակայն վկայություններից երևում է, որ Կիլիկիայում ձիավորեցուցանելու ծիսակատարությունները ընդունել են բարդ ձևեր, նման Եվրոպայի, որտեղ, ըստ Սելդոնի, կատարվում էին պալատական և եկեղեցական հանդեսներ։ Պալատականը այն էր, որ տոնահանդեսներ էին կատարվում ասպետի ձեռնադրման ժամանակ, իսկ եկեղեցականի ժամանակ տեղի էր ունենում զոհաբերություն և հոգևոր պատարագ։ Օրինակ, 1284 թ. Լևոն Գ-ն աստվածահայտնության տոնին ձիավորեցուցանում է իր երկու որդիներին, Թորոսին և Հեթումին, նրանց թվում «և այլ մանկունք իշխանաց և արք յարքունական և սպասաւորաց յորում հանդիսի ներկա գոլով Յովհաննէս Երզնկացի խոսեցաւ երկար ճառ «Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ» խորագրով[339]։

Վերևում հիշատակված «մանկունքի» տարիքը չէր անցնում 11-ից 18 տարեկան հասակը, թեև «Անտիոքի ասիզներում» ասված է, որ ձիավորեցուցանելու հասակը 15 տարին է, սակայն պարոնը կարող էր խախտել այդ, եթե ինքը ցանկանար. այնտեղ ասված է. «Եւ ըղորդ հասակն տասն ու հինկ տարին է. և ձիաւորութիւնն, զի առանց ձիաւորութեանն չկա հասակ և պարոնն կարէ կանուխցնել զհասակն չորս հինկ տարի, ընդ ներքո է, քանզի ուզնայ»[340]։

Կիլիկիայում ձիավորեցուցանելու տարիքը հաճախ էր խախտվում, այսպես, 1259 թ. ձիավորության աստիճանը ստացող Հեթում Ա-ի որդու՝ Թորոսի տարիքը 20-ից անց էր[341]։ Իսկ 1284 թ. ձիավորության աստիճան ստացող Լևոն Գ-ի որդու՝ Թորոսի տարիքը 14 էր, Հեթումինը՝ 18[342]։

Թեև աղբյուրները քիչ են խոսում ձիավորեցուցանելու ծիսա-

338 Enc. Brit. T. 6, էջ 785։
339 Սիսուան, էջ 483—484։
340 Assises d'Antioche, 1876, էջ 18։
341 Սիսուան, էջ 480—482։
342 Նույն տեղում, էջ 484։

կատարությունների բովանդակության մասին, սակայն գովասանքով են խոսում ձիավորների հմուտ ձիավարժության մասին։ Այսպես, Վիլլենբրանդ Օլդենբուրգցին 1212 թ. Սսում տեղի ունեցած Զբօրհնեքի ծիսակատարության նկարագրության մեջ գրում է. «իսկ թագաւորն և զօրականք ի դաշտ անդր դիմէին, և պալատակապ երիվարօքն արդշաւակի վազս առեալ՝ նիզակաճօճ նիզակաբեկ խաղ առնէին զինուորականս և զբովանդակ զօրն զայն մեծաւ ցնծութեամբ խրոխտացան...»[343]։

Աղբյուրները գովասանքով են խոսում Լևոն Բ-ի ձիավարժության մասին. «...և էր սա (Լևոն Բ) այր իմաստուն և հանճարեղ ձիավարժ հմուտ և ի զինուորութիւնս քաջասիրտ...»[344]։

Ռուբեն Ռայմոնդ թագաժառանգի մասին Սմբատը գրում է. «...պատանի գեղեցկատեսիլ հասակաւ երկայն... ձիավարժ գովէլի, իշխանական ձևով պատկառելի»[345]։

Ձիավարժությամբ զբաղվել են նույնիսկ հոգևորական դասերը։ Այդ մասին խոսում է Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականում» և «մոլորություն» է անվանում այն[346]։

Որ գոյություն է ունեցել գործող «հրահանգ ձիավարժութեան», այդ մասին է խոսում հետևյալ վկայությունը։ Հեթում Ա-ի որդին գերի է ընկնում մամլուկների ձեռքը։ Նրանց սուլթանը կազմակերպում է տոնահանդես, որին մասնակցում է նաև գերի Լևոնը։ «Այլ և ի ձիրնթացս ասպարիսի ելեալ,— գրում է Սամուել Անեցու շարունակողը,— ընդ Սուլթանին, առավելագույն գտաւ քան զամենայն զինուորսն ի հրահանգս ձիավարժութեան... ազատեաց զնա ի բանտէ և ի կապանաց»[347]։

14-րդ դարի մի մատյանում խոսվում է ասպետների զենքի, զրահի, դրոշի և նշանակի մասին։ Մատյանը կրում է «Զրահի սանձուց, որ և Սլեհնոց և հագուցուց պատերազմականաց և մարտից յազգս իւրեանց» վերնագիրը։ Մատյանը սկսվում է այսպես. «Կնիք և օրհնութիւն Աստուծոյ ամենակարողին հօր և որդւոյ և հոգւոյն Սրբոյն եղիցի ի վերայ յայսմ զրահիցս և հագուցոյս և ի վերայ ագանողին զսա, ի յորս առ հայելով՝ արդարութեամբ զգեցցի նախախնամելով քո և ուղղելով Տէր Աստուած մեր որ-

343 Սիսուան, էջ 476բ։
344 Տարեգիրք, էջ 194։
345 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», 1856, Փարիզ, էջ 109։
346 Թուղթ ընդհանրական, էջ 52։
347 Սամուէլ Անեցի, էջ 222։

պէսզի զբարձողն սորա պահեսցես անվնաս և աներկիւղ քաջամարտիկ և արիաբար զինակրել և անսայթաք մնալ ամրափակ աջով քո որ կենդանի ես և թագաւորես Աստուած յաւիտեանս, յաւիտենից»[348];

Հայ ձիավորների հագուստի և նշանի մասին Ղևոնդ Ալիշանը գրում է. «Նշան Ձիաւորացս էր խաչ կարմիր՝ զպատկեր սրբոյն Վլասոյ ի միջին ունելով զգեստ՝ ասուեայ սպիտակ»[349];

Գերմանացի հեղինակ Շոնեբեկը կարծում է, որ հայ ձիավորը կրում էր կապույտ զգեստ, ոսկեղեն խաչով և հայկական այրուձիու նշանով։

Հայ ձիավորները անպայման ունեցել են իրենց հատուկ զգեստը և նշանը, որ, հավանական է, նման էր խաչակիր ասպետների տարազին։ Ինչպես վերևում ասացինք, եթե աղբյուրները քիչ վկայություններ են թողել ձիավորների վերոհիշյալ հարցերի մասին, ապա բավականին վկայություններ կան ձիավորների ձեռնադրության մասին։ Առաջին հայ ասպետը՝ Սիսի քաղաքապետը, հիշատակվում է 12-րդ դարի սկզբին, սակայն ձիավորեցուցանելու առաջին վկայությունը հանդիպում է 12-րդ դարի երկրորդ կեսին։ Այսպես, Լամբրոնի իշխան Օշինը (1140—1170 թթ.) «եւ մկրտել զՀեթում զի դեռ ոչ էր մկրտեալ և արար ձիաւոր և պսակեաց ընդ դուստրն իւր ի մի օր, և ուրախացան յոյժ»[350];

Այս վկայությունը կարևոր է նրանով, որ հերքում է ֆրանսիացի պատմաբան հայագետ Ժակ դը Մորգանի և հայագետ Ղևոնդ Ալիշանի այն ենթադրությունը, որ մինչև 1193 թ. Լևոն Բ-ի կողմից Անտիոքի իշխանության թոթափումը հայ իշխանները իրավունք չեն ունեցել ձիավորեցուցանել ավատատու իշխան ասպետներին[351];

Վերոհիշյալ պատմաբանները գրում են, որ Լևոն Բ-ը բազմաթիվ ազատներին շնորհեց ասպետի կոչում[352], բայց մեզ չհաջողվեց գտնել որևէ վկայություն այդ մասին։ Իհարկե, ձիավորեցուցանելու բազմաթիվ վկայություններ կան Լևոն Բ-ի հաջորդների վերաբերյալ։ Այսպես, 1256 թ. Հեթում Ա թագավորը Իկոնիայի սուլթանի դեմ տարած հաղթանակից հետո «բազում աւարաւ դարձաւ յաշխարհն իւր և ուրախացաւ ոչ սակաւ աւուրս։ Ի սոյն ամի Զե (1256 թ.) կամեցաւ թագաւորն Հեթում ձիավորեցուցանել զԱնդրանիկ որդին իւր Լևոն (15 նոյեմբեր 1256 թ.) և եկն ի մայրաքաղաքն Մսիս և առաքեաց յԱնտիոք և կոչեաց... իշխանս որեւի վանօրէից զամենայն դասս եկեղեցականացն ժողովեաց յառաջիկայ ուրախութեան գործին և ձիաւորեցոյց զնա ի թուականին Զե (1256) յամսեայն նոյեմբերի ԺԵ օրն, և ուրախացաւ թագաւորն ուրախութեամբ մեծ հանդերձ հարքն իւրով և ամենայն զարմիւքն և ժողովովն որ եկեալ էին»[353];

Հեթում Ա-ը 1264 թ., թոռ ունենալու կապակցությամբ, շաբաթերին պարգևում է ձիավորի աստիճան։ «Ի սոյն ամի ՉԺԳ (1264) որեւ բազումք ի վատթարագունից և յանգերագոյն ազգաց նաեւ ի ներքինեաց եւս փառաց և պատուոյ ձիաւորութեան արժանացան»[354];

Նույնը կատարվում է Լևոն Գ թագավորի մկրտության առթիվ. «Եւ յաղագս այսմ ուրախութեան պատճառի զերկոսս որդիսն սպարապետին հայոց Սմբատայ՝ զՀեթում և զՎասիլ մականուն թաթար ձիաւորեցուցին և այլ բազումս ընդ նոսա...[355]»։

Հեթում Ա-ի հաջորդ Լևոն Գ-ը իր երկու որդիներին՝ Թորոսին և Հեթումին ձիավորեցուցանելու հետ միաժամանակ ձիավորեցուցանում է «և այլ մանկունք իշխանաց և արք յարբունական»[356];

Թեև հետագա շրջանի համար մենք չունենք ձիավորեցուցանելու մասին այլ վկայություններ, սակայն այդ սովորությունը մնացել է մինչև թագավորության վախճանը։ Այդ երևում է նրանից, որ 1374 թ. Լևոն Զ թագավորի օծության առթիվ վերջինս ձիավորեցուցանում է իր համհարզներից մեկին։ «Եւ ի նմին իսկ յաւուր՝ պատուեաց զինակիր Սոհիէ Դուլկարտ, որ էր եկեալ կուսէ լերանց, արարեալ ասպետ իւրով իսկ ձեռամբ, և կարգեաց զնա Մարաջախտ թագաւորութեանն հայոց»[357];

Մի շարք վկայություններ հաղորդում են այն մասին, որ ոչ միայն հայ ազնվականները, այլև ֆրանկ-ֆեոդալները ստացել են ձիավորության աստիճան Հեթում Ա-ից, թեև նրանք չէին հանդիսանում վերջինի վասալները[358];

348 Սիսուան, էջ 486։
349 Նույն տեղում։
350 Տարեգիրք, էջ 171։
351 Սիսուան, էջ 466։ Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմութիւն, էջ 359»
352 Տարեգիրք, էջ 231։

353 Նույն տեղում, էջ 244։
354 Նույն տեղում։
355 Սիսուան, էջ 405։
356 Նույն տեղում։
357 Դաւդել, էջ 115։
358 Սիսուան, էջ 485։

Վերոհիշյալ վկայություններից երևում է, որ ձիավորի կամ ասպետի կոչումը ստանում են ոչ միայն ազատները, այլև մեծ իշխանները՝ հայրենատեր բերդատերերը, և որ Կիլիկիայում գոյություն է ունեցել ասպետության երկու աստիճան։ Առաջին բարձր աստիճանին արժանանում էին խոշոր հողատեր իշխանաց իշխանները, սպարապետներն ու մարշալները։ Երկրորդ աստիճանը ստանում էին այն ձիավոր-լիճ ճորտերը, որոնք «ի հայս ազատ» էին կոչվում։ Վերջիններս, բացի զինվորական ծառայությունից, կատարում էին փոքր գործակալական պաշտոններ։ Նրանք հաճախ դառնում էին օտար երկրներում թագավորին ներկայացնող դիվանագետ պատգամավորներ, կամ դեսպաններ։ Այսպես, «իսկ ասպետացն այնոցիկ երկոցունց մեկնեալ ի պապէն շրջան առ արքայն Գաղղիոյ և առ այլոյ յիշխանացն Արևմտից՝ խնդրել ի նոցանէ ձերն օգնականութեան»[359]։ Կամ թե նույն 1343 թ. «և եղև իբր լուան նուիրականին զխնդրուածս թագաւորին և զիշխանացն հայոց, ետոյն ողջոյն հրաժեշտի և դարձ արարին առ պապն և մի ոմն ասպետ ընդ նոսա, պատգամաւորն հայոց սեպուհն, Կոստանդին Կարսիլլի...»[360], կամ թե, 1373 թ., «և իսկ և իսկ միաձայն խորհուրդով պատգամավորս արձակեսցին ասպետ մի՝ որ կոչէր սեպուհ Լևոն համուսացի ընդ նմա արս երկուս ի քաղաքէն Սսոյ և տանուտէր զոմն ի Պրեսդրէ առ երիտասարդ արքայն Պետրոս...»[361]։

Որ ասպետները Կիլիկիայի հայկական թագավորության վերջին շրջանում մասնակցում էին երկրի առաջ կանգնած քաղաքական հարցերի լուծմանը, վկայում է նույն պատմիչը, նշելով ասպետներին որպես առանձին դաս, նա գրում է։— «Եւ յաւուր միում գումարել ի ժողով ի դահլիճն արքունական զեպիսկոպոսունս և զվարդապետս աշխարհին զաւագանին և զասպետս և զտիկնայս ժողովուրդն առհասարակ»[362]։

Ինչպես հայտնի է, 13-րդ դարի վերջից երկրի ներսում սրվեցին ունիտորների և հակաունիտորների հակամարտությունները, ընդ որում արքունիքում ուժեղացավ պայքարը իշխանության գրավման համար։ Թագավորները հաջորդում էին մեկը մյուսին

359 Դարդել. էջ 41—42։
360 Նույն տեղում, էջ 46—47։
361 Նույն տեղում, էջ 69։
362 Դարդել. էջ 107։

հաճախ զոհ դառնալով հակառակորդների դավադրությանը։ Այդ շրջանում ուժեղանում էր հայ ասպետների քաղաքական դերն ու նշանակությունը։ Ասպետները, որպես գահի հավակնորդների ռազմական հենարան, մասնակցում են պալատական հեղաշրջումներին։ Այսպես, «ԶԽԵ (1296) Հեթում Բ թագավորն ետ զթագաւորութիւն իւր ցեղբօրն իւրոյ պարոն Թորոսին. ի նոյն ամի դաւ եղեւ իշխանացն հայոց, որք էին գլխաւորք պարոն Օշին սինջալն, որդի պարոն Սմբատայ Գունդստապլին և պարոն Օշինն Բակուրեանց, որ էր սպասալար դարպասին և այլ բազում իշխանք և ձիաւոր»[363]։

Ավելի ուշ, 1344 թ. ունիտորների թեկնածու թագավոր Գվիդոն Լուսինյանի սպանությունից հետո, երբ Կոստանդին Դ ընտրվում է թագավոր, նա որոշում է սպանել Գվիդոնի կնոջը և որդիներին։ Այդ բանը նա հանձնարարում է երկու ասպետներին «ետ հրաման (իմա Կոստանդին Դ) ասպետաց երկուց ազատաց ջրահեղձոյց առնել զտիկինն զայն և զորդիս նորա երկուսին գաղտնաբար»[364]։

Ասպետները, որպես թագավորի և առավել խոշոր ֆեոդալների վասալ, որպես օտարվող հողի հետ առնչություն ունեցող մանր հողատերեր և սենյորի գործակալներ, ստորագրում էին հողային նվիրատվությունների և այլ շնորհագրերի տակ իբրև վկա[365]։ Այդ վավերագրերի մեջ առավել ուշագրավ է այն շնորհագիրը, որ 1271 թ. Սարվանդիքարի տեր Ջոֆրեն տալիս է Տևտոնյան օրդենին՝ Սարվանդիքարում մաքսատուն-բաժտուն ունենալու կապակցությամբ։ Այնտեղ հանդես են գալիս վերևում մեր կողմից նշված առաջին աստիճանի ասպետներ։ «Գրեցաւ ի մեծի թուականութեան հայոց ՉԻ (1271) վկայութեամբ մեծ ազգի իշխանին մեր աղբաւրն պարոն Սմբատայ և մեծահարգի ձիաւորացն սէր Կոստանդին և սէր Ըռնաղցին և սէր Գոյներին»[366]։

Միջնադարյան Անգլիայի օրինակով, որտեղ խաղաղության ժամանակ արքունիքում, իսկ պատերազմի ժամանակ ռազմի դաշտում սուրհանդակի պաշտոն էին կատարում հերալդները, Կիլիկիայում, արքունիքում նրանք կոչվել են **պատգամավորներ**[367], որը անգլերեն «հերալդ» բառի թարգմանությունն է։ Նրանք սեն-

363 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, 1951 հ. 1, էջ 87։
364 Դարդել, էջ 54։
365 V. Langlois, Le trésor, p. 122.
366 «Բազմավէպ», 1873, էջ 119։
367 Դատաստանագիրք, էջ 70։

յորաների կամ բարոնությունների դղյակում կոչվել են «ավագ շավուշ» և «շավուշ»[368]։ Պատգամավոր-շավուշները կատարում էին պետական կարևոր հաղորդումներ, կարգավորում էին պալատական հանդեսներ[369] և բարոնություններում հրավիրում էին վերին ատյանի նիստեր[370]։

Մենք չկարողացանք որևէ վկայություն գտնել եվրոպական ասպետության մի շարք աստիճանների առկայության մասին Կիլիկիայում, ինչպես օրինակ, դրոշակակիր ասպետները և նրանց մանկլավիկները։ Սակայն մեզ թվում է, որ Վիլլեբրանդ Օլդենբուրգցու 1212 թ. Սսում տեղի ունեցած ջրօրհնեքի նկարագրության մեջ հիշատակված «և դասք ազնվաց երկրի և բազմութիւն զօրականաց վայելչապէս զգեստաւորեալք զորոց՝ արբանեակք նոցին գցելով ի ձեռս զնշանս և զդրոշս և ածելով զերիվարս նոցին պալատականս...»[371]։ Վկայությունը վերաբերում է դրոշակակիր ասպետներին և նրանց մանկլավիկներին։

Այժմ աշխատենք պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք գոյություն ունեցել են հայկական ասպետական օրդեններ։ Լատինական և հայկական աղբյուրներին քաջատեղյակ Ղ. Ալիշանը ասում է, որ իրեն չի հաջողվել գտնել վկայություն հայկական ասպետական կարգի մասին։ Սակայն նա ավելացնում է, որ հեղինակներից «ոմանք ԺԷ և ԺԸ դարուց՝ ոչ գիտենք յորոց աղբերաց առեալ ասեն և կարգ հայ ասպետաց հաստատեալ ի ժամանակի հաստատութեան Տաճարականացն, այլ զի սոցայս հաստատութիւն եղեալ ի յամի 1118 թիվ, Յերուսաղեմ, առ մերովս առաջին պարոն Թորոսին (1129), ոչ կարծեմ զայդ ստոյգ, բայց հավանագոյն զոր այլք ասեն՝ ի թագաւորաց մերոց հաստատեալ և ինձ սիրելի էր ասել ի Լևոն Ա (իմա Լևոն Բ) թագաւորէ։ Երկու դասք ասել լինել ասպետացն Հայոց. մի եկեղեցականաց կամ քահանայից, և միւս աշխարհայնոց, երկոցուն ևս նպատակ զոլով՝ բանիւ և զինու պաշտպանել զուղափառ հաւատս և կրօնաւորիլ կանոնօք Ս. Բարսղի, պաշտպան ունելով զՍ, Վլաս եպիսկոպոս. վասնորոյ և Ասպետք Ս. Վլասայ, կոչէին, որ և այս ոչ թվի ինձ հավանական մանավանդ զի յիշին և այլք զկարգ Ս. Վլասայ Ասորիս, այլ ոչ ասեն Հայոց սեփական»[372]։

Մեզ թվում է, որ Ղ. Ալիշանի վերոհիշյալ ենթադրությունը ճիշտ է, քանի որ 12—13-րդ դարերում ոչ մի հայ և օտար հեղինակ չեն հիշատակում հայ ասպետական կարգի մասին։ Օրինակ, ֆրանսիացի ժամանակագիրներ Էռնուլը և Բեռնարդը, որոնք մանրամասն խոսում են Թորոս Ա իշխանի Երուսաղեմ ուղևորության, հայ ասպետների Կիպրոս տեղափոխվելու և այլ կարևոր անցքերի մասին, չէին կարող զանց առնել հայ ասպետական կարգի հիմնադրման նման կարևոր մի իրադարձություն, այլև չենք խոսում Սմբատ Սպարապետի մասին, որը քաջատեղյակ էր Կիլիկիայի պատմությանը և, անշուշտ, մոտիկից մասնակից Կիլիկիայի բոլոր իրադարձություններին։ Մեզ թվում է, որ Կիլիկիայում անհրաժեշտություն չէր զգացվել ասպետական կարգերի հիմնադրմանը, քանի որ ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Կիլիկիայում կազմակերպվել էին թագավորական կամ պետական բանակներ, վերջիններում ստեղծվել էին բանակի միավորումներ՝ գունդստաբլների, մարաջախտների և այլ զինվորական աստիճանավորների հրամանատարության տակ։

Հայտնի է, որ խաչակրաց արշավանքների շրջանում 11—13-րդ դարերում ստեղծվել էին երեք հոգևոր ասպետական օրդեններ՝ խաչակրաց արշավանքները ոգեշնչող, կաթոլիկ եկեղեցին գլխավորող պապականության հովանավորության և անմիջական ղեկավարության տակ։ Դա հնարավոր դարձավ այն պատճառով, որ փաստորեն նա իր ձեռքն էր վերցրել արևմտաեվրոպական պետությունների քաղաքական ղեկը։ Ուստի հոգևոր ասպետական օրդենների հիմնադրումը հետապնդում էր մի հիմնական նպատակ՝ ուղեկցել և օգնել խաչակիր բանակներին՝ ազատագրելու Տիրոջ սուրբ գերեզմանը և այնուհետև մասնակցել «ազատագրված վայրերի» պաշտպանության և մյուս կողմից ուժեղացնել Մերձավոր Արևելքում ստեղծված ֆրանկ պետությունների ներքին և արտաքին դրությունը՝ նվաճելով նոր տերիտորիաներ՝ ընդլայնելով կաթոլիկ եկեղեցու և նրա ետևում կանգնած անդրծովյան գաղութատերերի իշխանությունը։ Հայտնի է, որ Կիլիկիայում ոչ մի ժամանակ հայոց եկեղեցին Կիլիկյան հայկական պետության վրա չի ունեցել գերիշխող դիրք, այն, ինչ որ բնորոշ էր արևմտաեվրոպական թագավորությունների համար, որտեղ կաթոլիկ եկե-

368 Assises d'Antioche, p. 9—10.
369 Սիսուան, էջ 475։
370 Դատաստանագիրք, էջ 70։
371 Սիսուան, էջ 476։
372 Նույն տեղում, էջ 487։

ղեցին պետություն էր պետության մեջ։ Հետևաբար այդպիսի ասպետական օրդենների կազմակերպման անհրաժեշտություն չէր զգացվում նաև այն պատճառով, որ Կիլիկիայի հայ ձիավոր-ասպետները չէին հետապնդում ուրիշի երկրները զավթելու և կողոպտելու նպատակ, ինչպիսին էին հոգևոր ասպետական օրդենների նպատակները, այլ հայ ձիավորի նպատակն էր պաշտպանել Կիլիկյան հողում վերականգնված հայ պետականությունը և նրա սահմանները, ապահովել և պաշտպանել սելջուկյան և մոնղոլական արշավանքներից ու բարբարոսություններից փրկված հայ զանգվածների կյանքն ու ունեցվածքը։ Հովհաննես Թլկուրանցու կողմից հյուսված «Հայ քաջազուն ասպետ, ավագ մարաջախտ և սպարապետ Լիպարիտի մասին» արձակ դյուցազներգությունը, ցույց է տալիս Կիլիկիայի հայ ասպետի հետապնդած վեհ նպատակները[373]։ Նույն ոգով է ավանդված և տոգորված նաև «Ասպետը և իր ընկերները»[374] ավանդությունը, ինչպես և 13-րդ դարի անանուն հիշատակագրի՝ Սմբատ Սպարապետի մահը արձանագրող հիշատակարանը[375]։

7. ԻՐԱՎՈՒՆՔ. ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Իրավունքը և դատարանները 11—12-րդ դդ.

Ինչպես հայտնի է, այս շրջանում Կիլիկիայի Ռուբինյան հայ իշխանները պայքարում էին մի կողմից օտար տիրապետության դեմ՝ լիակատար անկախություն ձեռք բերելու և մյուս կողմից շարունակում էին պայքարը հայ մյուս ֆեոդալական տների դեմ, միասնական պետություն ստեղծելու համար։ Հետևաբար Կիլիկիան լինելով մասնատված ֆեոդալական մանր իշխանությունների երկիր, հիմնականում կառավարվում էր տեղական՝ գավառական դատարաններով և վարչական այլ օրգաններով։ Տեղական դատական օրգաններ էին հանդիսանում իշխանների դղյակներում կամ իշխանաց իշխանների վարչական կենտրոններում գործող վերին ատյանները։ Բացի այդ, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, տեղական դատական օրգանների դերն էին

373 «Հանդէս ամսօրեայ», 1933, էջ 129—138։
374 «Կոչնակ», 1931, էջ 234—235։
375 «Բազմավէպ», 1876, էջ 318։

կատարում նաև եպիսկոպոսական թեմերի՝ առաջնորդարաններին կից գործող հոգևոր ատյանները։ Հայտնի է, որ Ներսես Շնորհալին իր նշանավոր «Թուղթ ընդհանրականում» դիմում է թեմերի և վանքերի առաջնորդներին արդարադատ լինելու իրենց հպատակների և ցածր հոգևորականության նկատմամբ[376]։ Արդարադատ լինելու քարոզներով հանդես են եկել նաև 12-րդ դարի հեղինակներ Սարգիս Շնորհալին[377], Գրիգոր Մարաշեցին[378] և այլ հեղինակներ։

Այդ ժամանակաշրջանում հատկապես հոգևորական-թեմական ատյանների համար որպես գործող օրենքներ, մնում էին եկեղեցական կանոնական որոշումները։ Վերջիններս իրավական նորմաների նշանակություն են ստանում այն ժամանակ, երբ բացակայում են պետական մասշտաբի դատաստանագրքերը։ Կանոնական որոշումները իրականում կարգավորում էին հասարակական հարաբերությունները քաղաքացիական և քրեական իրավունքների մակարդակով[379]։ Սակայն, մեզ հայտնի է նաև մի հանգամանք, որ եկեղեցական կանոնները բավարար չեն եղել կարգավորելու նոր միջավայրի՝ նոր հասարակական հարաբերությունները։ Դրանով է բացատրում Ներսես Լամբրոնացին՝ քաղաքացիական և զինվորական օրենքների թարգմանության անհրաժեշտությունը[380]։

Թեև հունա-բյուզանդական իրավունքի փոխառումը տեղի էր ունեցել բուն Հայաստանում, սակայն առավել ևս նպատակահարմար էր այն օգտագործել Կիլիկիայում և Մերձավոր Արևելքի մյուս գաղութներում, քանի որ այդ շրջանները նախկինում եղել էին բյուզանդական նահանգներ և նրանց նոր տերերը՝ հայերը չունեին իրենց սեփական օրենքները[381]։ Այս պայմաններում էր, որ 12-րդ դարի վերջին Ներսես Լամբրոնացին թարգմանում է հին հունա-բյուզանդական իրավաբանական մի շարք երկեր[382]։ Հայտնի է, որ Ներսես Լամբրոնացին այդ կատարում է Մերձավոր Արևելքում ապրող հայ բնակչության պահանջով։ Վերջիններս բողոքում էին, որ իրենց բնակություն հաստատած վայրերում հիմնա-

376 Թուղթ ընդհանրական, էջ 52—62։
377 Մատենադարանի ձեռագիր, № 1318, էջ 19—40։
378 Մատենադարանի ձեռագիր, № 1718, էջ 100—110։
379 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 51։
380 «Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացւոյ», հրատարակեց Կ. Բասմաճյան, 1901, Փարիզ։
381 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 71—72։
382 «Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացւոյ», էջ 3—5։

կանում գործում են մահմեդական օրենսգրքեր, որոնք և չէին համապատասխանում հայ բնակչության կրոնական դավանաբանական-քաղաքացիական պայմաններին ու սովորույթներին։

11-րդ դարի վերջից, խաչակիր արշավանքներից սկսած հայերը հաղորդակից են լինում արևմտաեվրոպական ֆեոդալական կարգերին։ 12-րդ դարի ընթացքում Կիլիկիայի հայկական իշխանությունները առևտրական և ռազմական հարաբերությունների մեջ են մտնում Սիրիայում ստեղծված Երուսաղեմի թագավորության և նրա ենթակա Տրիպոլիի, Եդեսիայի և Անտիոքի իշխանությունների հետ։

12-րդ դարի երկրորդ կեսից հայ և լատին ֆեոդալները ծառայության մեջ էին մտնում Ռուբինյան իշխանաց իշխանների մոտ։ Այդ մասին է վկայում Սմբատ Սպարապետի նշած այն ֆեոդալները, որոնք ներկա են լինում Լևոն Բ-ի թագադրությանը[383]։ Բացի այդ, Սմբատ Սպարապետը ուղղակի մատնացույց անելով օտար իշխանների մասին, գրում է. «Եւ ետ Պեմունտ բրնծին մահուանն բազում զինուորք եկին ի ծառայութիւն թագաւորին Լևոնի... որոց անուանքն են այսոքիկ. Ուլիվեր Ջամբոլայն, Ռօճել Տմունթն» և այլն[384]։ Սկսած 12-րդ դարի կեսերից հոգևոր ասպետական օրդենները կախման մեջ են մտնում Ռուբինյան իշխանաց իշխաններից[385]։ Այս բոլորը, պայմաններ էին ստեղծում, որպեսզի խաչակիր ֆրանկ պետություններում գործող իրավական նորմաները մուտք գործեն Կիլիկյան Հայաստանի ատյաններում՝ կարգավորելու համար սենյորների և վասալների փոխհարաբերությունները։ Ղևոնդ Ալիշանի կարծիքով այս շրջանում օտար իշխանները և հոգևորական օրդենները ծառայության մեջ էին մտել հայ Ռուբինյան իշխանաց իշխանների մոտ և սկսած Լևոն Բ-ից «լճուութեան օրինօք կապեալ էին ընդ նմա» Երուսաղեմի և Անտիոքի ասիզների սովորություններով և օրենքներով[386]։ Ներսես Լամբրոնացին «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ»[387] աշխատության մեջ համեմատում է հոգևորական օրդենների և օտար

383 «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», էջ 100—102։ Տարեգիրք, էջ 208—210։

384 Տարեգիրք, էջ 211։

385 Ժ. Դ. Մորգան, Հայ ժողովրդի պատմութիւն, էջ 234։

386 Սիսուան, էջ 459—460։

387 Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ, Doc. arm., T. I, էջ 575—576։

իշխանների գավառներում գործող եկեղեցիների վիճակը, հայ իշխանների գավառներում հիմնադրված եկեղեցիների վիճակի հետ և այնուհետև «Պատարագի մեկնութեան»[388] մեջ մշակում է խիստ օրենքներ հոգևորական թեմական ատյանների համար և ապա եկեղեցիների և եկեղեցական պաշտոնների չարաշահումների դեմ։

Այսպիսով, 12-րդ դարի վերջին սկսել էին գործել նաև խաչակիր ֆրանկ իշխանություններում գործող ֆեոդալական օրենսդրությունները, որոնցից հատկապես Անտիոքի ասիզները անհրաժեշտ էին՝ սենյորի և վասալի փոխհարաբերությունները, ֆեոդալական հողատիրության հարցերը կարգավորելու համար, քանի որ եկեղեցական կանոնական որոշումները և հունա-բյուզանդական իրավունքի նորմերը՝ Ներսես Լամբրոնացու թարգմանությամբ մուտք գործած քաղաքացիական ու զինվորական օրենքները չէին կարող բավարարել Կիլիկիայի զարգացած ֆեոդալական հասարակության սոցիալ-տնտեսական ու դասակարգային հարաբերություններին։

Իրավունքը և դատարանները թագավորության շրջանում

Անհամեմատ հարուստ են այս շրջանին պատկանող իրավագիտական աղբյուրներն ու հուշարձանները։ 12-րդ դարի վերջին կազմավորվում է Կիլիկիայի հայկական թագավորությունը, հիմք է դրվում թագավորական պետական կարգին, որով հիմնվում են և ձևավորվում՝ երկիրը կառավարող քաղաքական, վարչական օրգանները, որոնք իրենց հերթին հետևանք են նախորդ շրջանի սոցիալ-իրավական հարաբերությունների զարգացման։

Այդ շրջանում գործող իրավունքի հուշարձաններ են հանդիսանում «Անտիոքի ասիզները» (չնայած, որ դրանք Սմբատի կողմից թարգմանվել էին 1250-ական թվականներին), 1243 թ. Սսի եկեղեցական ժողովի կանոնական որոշումները և այնուհետև ամենագլխավորը՝ Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը։

Ինչպես նկատեցինք, նախորդ շրջանում, ֆեոդալական հարաբերությունների զարգացման պայմաններում, անհրաժեշտություն էր զգացվում ֆեոդալական հարաբերությունները՝ սոցիալ-տնտեսական կարգերը արտացոլող ու կարգավորող մի օրենսգրքի ստեղծմանը։ Լևոն Բ թագավորը, երբ երկրում սկսեց անցկացնել

388 «Հանդէս ամսօրեայ», 1954, № 1, էջ 239—240։

տնտեսական, քաղաքական և վարչական բարեփոխումներ, իր տեսադաշտից հեռու չէր կարող պահել դատաստանների կարգավորման հարցը։ Սակայն մենք ուղղակի վկայություններ չունենք այս շրջանում գործող իրավական նորմերի մասին, թեև մի ոմն «Կիլիկիայի ժամանակագիր», որի մասին նշում է Ղևոնդ Ալիշանը, գրել է, որ «Սա (Լևոն Բ) ետ Դատաստանագիրք հաստատել ձեռամբ և որ գրէ Լևոն թագաւոր յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի[389]»։ Թեև ուրիշ վկայություններ մեզ չեն հասել այդ մասին, սակայն, Կիլիկիայում գործել է մեզ մինչև այժմ անհայտ մի օրենսգիրք, որի մասին է վկայում նաև Սմբատ Սպարապետը իր Անտիոքի ասիզների թարգմանության Թ գլխի Բ մասում. «Վասն գիտի գրաստու կորուսելոյ» հոդվածում։ «Առնու տէրն զինքն երկրին Անսիզովն և Անտաքոյս»[390]։ Թագավորի օծման փաստաթուղթը խոսում է «սովորական իրաւանց» մասին, այսպես, «Եւ կաթողիկոսն տայ երդնուլ ընտրելոյն (թագավորին) ի վերա սովորական իրավանցն»[391]։ Թե ինչ սովորական իրավունքների մասին է խոսքը, այդ հայտնի չէ մեզ։ Սակայն հայտնի է, որ 1226 թ., երբ իշխանության գլուխ է անցնում Հեթում Ա-ը, նրա հայրը և նրա եղբայրները առաջնակարգ դիրք են սկսում գրավել արքունիքում։ Այն ժամանակ, երբ Կոստանդին թագավորահայրը կարգավորում էր իր տիրույթները, նրա ավագ որդին՝ Սմբատ Սպարապետը վեճի մեջ է մտնում հոր հետ Կոռիկոսի տիրույթի ժառանգության հարցում։ Հովհաննես Իբելենը՝ Կիպրոսի օրենսգիրը, Երուսաղեմի ասիզների 149-րդ գլխում պատմում է վերոհիշյալ վեճի մասին և վճռում է հօգուտ Կոստանդինին, ընդ որում տիրույթի տերը կարող է այն ժառանգել ցանկացած ժառանգորդին, ինչպես արվում է Սիրիայի խաչակիր ֆրանկ պետություններում, քանի որ տիրույթը ձեռք է բերված նվաճման միջոցով։

Երուսաղեմի ասիզների վերոհիշյալ իրավական նորման ընկած է Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի այն հոդվածի հիմքում, որտեղ ասված է. «Եւ թէպէտ ու նոմոսով է՝ զանդրանիկրն կացուցանել յաթոռ ինքնակալութեանն, բայց վասն աւգտութեան աշխարհաց իրաւունք է՝ որ աղէկ տեսնու հայրն՝ իր ամէն գաւառաւքն և գաւառապետացն տեսովն և սուրբ եկեղեցովն» և

389 Սիսուան, էջ 548։

390 Assises d'Antioche, Venise, 1876, p. 3.

391 Սիսուան, էջ 475։

ապա «Ու կարաւղ է թագաւորն յիր առողջութեան և ի մահուն կտակ դրել, ու սահմանել և տալ զլեռն և զդաշտն և զիր ամէն երկիրն զինչ ցեղ որ իր կամքն լինի, որ չկարէ իր որդի և ոչ այլ մարդ դիմադարձ կանգնել»[392]։ Ընդ որում, ինչպես նկատելի է, Սմբատը փոխում է ժառանգության հարցում մինչև այդ գոյություն ունեցող հայկական իրավունքի հին նորմաները, շատ հավանական է ազդվելով Երուսաղեմի ասիզներից։

Մեզ հասել է նաև մի ուրիշ վկայություն, որը նույնպես ցույց է տալիս, որ ֆեոդալական հողատիրոջ՝ այրի կնոջ կամ իշխանուհու եկամուտները կարգավորվում էր ըստ ֆրանկ օրենսդրության։ Դա վերաբերում է Հեթում Ա թագավորի դուստր Ֆենիայի կալվածներից ստացած եկամուտներին, որը վերջինիս շնորհված էր մեծ արտոնություններով[393]։ Սա նման է Անտիոքի ասիզների 2 գլխում, «Յաղագս խնամութեան լիճ ճորտուն ընդ այրի կնիկ կամ ընդ կոյս աղջկին» հոդվածում նախատեսված օրենքներին[394]։ Այսպես է հարցը դրված նաև Երուսաղեմի ասիզներում[395]։

Որ Անտիոքի ասիզները օգտագործվում էր Կիլիկիայի հայկական թագավորությունում որպես ֆեոդալական հողատիրության, սենյորի և վասալի իրավական հարաբերությունները կարգավորող օրենսգիրք, այդ երևում է Սմբատ Սպարապետի կողմից նրա թարգմանության առթիվ գրած առաջաբանից։ Այնտեղ ասված է. «Եւ ես (Սմբատ — Ս. Բ.) աշխատեցայ, և փոխեցի ի հայ լեզուս... և արդ վասն զի սովորութեամբ այն անդիսովն կուգնայր ազգս մեր և դարպասս Հայոց, և սղալումն ինչ կուգայր մեզ վասն տգիտութեան և վտանգութիւնք ոգոյ...»[396]։ Երկրորդ կարևոր ապացույցը, ինչպես նշել է Ղ. Ալիշանը, այն է, որ արևմտյան լեզուներում «Assises» ասիզներ բառը հոգնակի են օգտագործում, իսկ Սմբատի կողմից ասիզ և անսիզ բառերի եզակի թվով օգտագործումը ցույց է տալիս, որ բառը վաղուց է մուտք գործել Կիլիկյան հայերենում, որը իր հերթին ցույց է տալիս ասիզների օգտագործումը որպես իրավագիտական երկ[397]։

1331 թ. ոմն Սարգիս գրչի հիշատակարանում ասված է, որ

392 Դատաստանագիրք, էջ 7—8։

393 V. Langlois, Essai, p. 51.

394 Assises d'Antioche, 1876, p. 19, 20.

395 Assises de Ierusalem, Paris, 1841 et 1843.

396 Assises d'Antioche, 1876, Introduction.

397 «Բազմավէպ», 1876, էջ 322։

Անտիոքի ասիզների այս օրինակը ինքը արտագրել է հայոց թագավոր Օշինի պատվերով, ավելացնելով, որ «որք աւգտիք ի սմանէ կամ աւրինակէք՝ յիշեցէք ի բարին Քրիստոս զամենաբարի թագաւորն հայոց զԼևոն» (Լևոն Ե — Ս. Բ.)[398]։

Վերևում ասվածից պարզ երևում է, որ Անտիոքի ասիզները օգտագործվել են Կիլիկիայի հայկական պետության դատարաններում որպես ֆեոդալական հարաբերությունները կարգավորող օրենսգիրք։ Անտիոքի ասիզները, եկեղեցական կանոնները և իրավական այլ նորմեր որպես աղբյուր օգտագործվել են Սմբատի կողմից՝ Դատաստանագիրքը կազմելիս։

Ասիզներում և Սմբատի Դատաստանագրքում արտացոլված են ֆեոդալական հիերարխիայի դասային ու դասակարգային փոխհարաբերությունները։ Այստեղ նշված են այն բոլոր արտոնությունները, որոնցից օգտվել են իշխող դասակարգերը, ընդգծված է նաև Կիլիկիայի ֆեոդալական հասարակության հիերարխիայի բնույթը։ Ֆեոդալական հիերարխիայի իշխող դասերի շահագործման ամբողջ ծանրությունը ընկնում էր ճորտ և կախյալ գյուղացիության ուսերին, որի հիմքում ընկած էր հողի նկատմամբ ֆեոդալի ունեցած լրիվ սեփականության և ոչ լրիվ սեփականության իրավունքը անմիջական նյութական բարիքներ արտադրողների՝ գյուղացիության նկատմամբ։

Աղբյուրները մեզ հաղորդում են զանազան ատյանների մասին, որոնք մաս էին կազմում Կիլիկիայի պետական ու տեղական ապարատի և հանդիսանում էին կառավարման հիմնական օղակներից մեկը։ Այդ ատյանները հետևյալներն են.

1. Արքունի դատարանը՝ վերին կամ մեծ դարպասը։
2. Սսի արքեպիսկոպոսական ատյանը. ստորին կամ փոքր ատյաններ, բուրջեսներ և այլ ատյաններ։
3. Իշխանական վերին ատյանը։
4. Եկեղեցական՝ թեմական ատյաններ։

1. Արքունի դատարան՝ վերին կամ մեծ դարպաս

Այս մասին առաջին վկայությունը գտնում ենք Ներսես Լամբրոնացու՝ Լևոն Բ թագավորին ուղղված նամակում, որտեղ գրում է. «Եթէ իրաւացուցանէ որք արքունի ատեանդ՝ առանց

398 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 192—193։

քննելոյ և դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ զնոյն որպէս Քրիստոսի աթոռակցութիւն»[399]։

Այնուհետև արքունի ատյանի մասին բազմաթիվ անգամ հիշատակվում է այն առևտրական շնորհագրերում, որոնք սկսած 1201 թ. մինչև թագավորության վախճանը տրվում էին օտար վաճառականներին Կիլիկիայի թագավորների կողմից։ Վերոհիշյալ փաստաթղթերի մեծ մասում այդ ատյանը կոչվում է regalis curia[400], կամ «արքունի դիւան»[401]։ Սա նույն Curia regis արքունի ատյանն է, որը թագավորության առաջին շրջանում հանդես էր գալիս միևնույն ժամանակ որպես «թագավորական խորհուրդ»։ Հետագայում 13-րդ դարի ընթացքում, երբ ուժեղացավ թագավորական իշխանությունը, այդ ապարատի ֆունկցիաները սահմանափակվեցին, ատյանը դադարեց թագավորական խորհուրդ լինելուց և կատարում էր միայն «գերագույն ատյանի» դեր։ Այդ երևում է նրանից, որ Լևոն Բ-ի մահից հետո շնորհագրերում այլևս չի հիշատակվում, թե տվյալ շնորհագիրը թագավորը շնորհում է արքունի ատյանի համաձայնությամբ[402]։ Սմբատը իր Դատաստանագրքում որոշ չափով սահմանափակում է թագավորի իրավունքները վասալ իշխանների՝ վասալներին դատելու գործում։ Միևնույն ժամանակ պահպանելով նրա իրավունքները անմիջականորեն իր վասալ իշխաններին դատելու գործում։ Այնտեղ ասված է. «Եւ իշխան՝ զոր ինք թագաւորն լինին իշխանացուցել, նա ինք կարէ ձգել. երբ ու կամի՝ յիշխանութենէն, և խրատել ու այնել զինչ իր պիտի։ Բայց զայլ ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան դրել, նա չկարէ առանց այլ իշխանաց՝ որ իր ընկերք լինին՝ ոչ զնա աքսորել և ոչ ձգել»[403]։ Այս վերջին մասը Երուսաղեմի թագավորությունում գործող իրավական նորմերի ազդեցության արտահայտությունն էր Կիլիկիայի պետական և քաղաքական կարգերի վրա։

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի վերոհիշյալ հոդվածից երևում է, որ վերին կամ մեծ դարպասի նախագահն էր թագավորը, իսկ նրա բացակայության դեպքում կամ թե իշխանաց իշխանի ճորտերի վերաբերյալ հարցերը քննելիս նախագահում էր իշխանաց իշխանը։ Այնտեղ այդ մասին ասված է. «Եւ

399 Թուղթ առ Լևոն, էջ 214։
400 V. Langlois, Le trésor, pp. 106, 110, 145.
401 Նույն տեղում, էջ 154—157։
402 V. Langlois, Essai, էջ 9։
403 Դատաստանագիրք, էջ 81։

զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն և իրենց տեսումն. նոյնպէս և դաղատքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն՝ նա իրենցումն զիրենք դատեն իշխանաց իշխանքն, զթագաւորին ճորտերն՝ (վասալները) թագաւորին հրամանաւքն», ապա նույն տեղում, «և այն որ իշխանաց իշխան լինի՝ նա դատեն զինք իշխանաց իշխանաւքն»[404]։

Հետաքրքիր է, որ ի տարբերություն Երուսաղեմի թագավորության, որտեղ իշխանները իրավունք են ունեցել դատել թագավորին[405], այստեղ՝ Կիլիկյան Հայաստանում թագավորին կարող է դատել այն ատյանը, որին մասնակցում էին մի ուրիշ թագավոր, իշխանները, ամբողջ ժողովուրդը և հայրապետը՝ վերջինիս նախագահությամբ[406]։

Այնուհետև, Սմբատի Դատաստանագրքում նշված են արքունի ատյանի՝ վերին կամ մեծ դարպասի ֆունկցիաները։ Նրա իրավասությանը ենթակա էին. թագաժառանգի հաստատումը, արքունական տիրույթների ժառանգության հարցի կարգավորումը, առանց թագավորի թույլտվության բերդ կամ քաղաք շինելու դեպքում իշխաններին դատելը, թագավորի, իշխանաց իշխանի և իշխանների միջև պատերազմի ընթացքում ձեռք բերած ավարի բաժանման շուրջը ծագած վեճերի լուծումը, պետության դավաճաններին պատժելը, թագավորի՝ քրիստոնյա և իսլամ հպատակների միջև եղած քրեական գործերի քննումը, առանց թագավորի գիտության հպատակներից գանձվող հարկերը ավելացնողներին պատասխանատվության ենթարկելը, հողի ընդերքի հարստություններից օգտվելու համար սահմանված կարգը խախտողներին պատժելը, թագավորի եկամուտներին հսկող արքունի գործակալներին թույլ տրված անօրինականությունների համար պատժելը[407]։

Բացի այդ, նրան էր վերապահված դատելու՝ թագավորի հպատակի և օտարականի միջև առաջացած վեճերը, եթե այդ վեճը չէր հարթվում Սսի արքեպիսկոպոսական ատյանում։ Այսպես, եթե վեճը մի վենետիկցու կամ ջենովացու, սիցիլիացու կամ որևէ մի օտար պետության հպատակի և Կիլիկիայի թագավորության՝ ազգությամբ հայ հպատակի միջև էր, այն բոլոր դեպքերում քննում էր վերին կամ մեծ դարպասը, իսկ որոշ դեպքերում Սսի արքեպիսկոպոսական ատյանը, ասենք այն դեպքում, երբ օտար հպատակը մշտական բնակություն էր հաստատել Կիլիկիայում[408]։

404 Նույն տեղում, էջ 82։

405 Assises de Jerusalem, T. I, p. 151.

406 Դատաստանագիրք, էջ 81—82։

407 Նույն տեղում, էջ 7—13, 68—69, 82։

408 *V. Langlois*, Le trésor (1201, 1244, 1271, 1307, 1321 շնորհագրեր)։

Արքունական ատյանն էր քննում նաև քրեական բոլոր հանցագործությունները, որոնք առնչվում էին օտարահպատակի հետ։ Պատասխանատվությունից խուսափող օտարահպատակի հանցագործության համար պատասխանատու էր Կիլիկիայում ապրող օտարահպատակի համայնքը[409]։

Սիցիլիացիներին տրված 1331 թ. շնորհագրում այդ մասին ասված է. «Եվ թէ Սիծիլուն պակասութիւն անէ ի մեր երկիրս ժողովրդեանն և կամ թախտուն (գահին, այսինքն թագավորական իշխանության դեմ) թէ բուրճէս (քաղաքացի) լնի մեր և կամ բնակիչ երկրի, որ երթա զեն կրածնի ի դարպասն ու կանկտի, և յայտնէ զիւր զենն՝ զոր իրեն արած լինին. նաև դարպասն կոչէ ի Սիծիլեացն զով գտնու ի մեր երկիրս որ կենայ...»[410]։ Եթե պատրժված սիցիլիացին մի տարում չհատուցի վնասը «ինչ Սծայեցիք (սիցիլիացիք — Ս. Բ.) կան յերկիրս բռնուին, որ վճարեն զենն զոր արելնին Սծիլանքն մեր բնակչացն, զոր կեցնվի ի դարպաս[411]»։

Վերին ատյանը կամ մեծ դարպասը նստում էր Սիս մայրաքաղաքում։ Սակայն օտարի և հայի միջև ծագած վեճերը քննվում էր Այասում, որտեղ և իր նիստերն էր գումարում արքունի ատյանի մասնաճյուղը՝ թագավորական պայլի նախագահությամբ[412]։

2. Սսի արքեպիսկոպոսական ատյանը, ստորին կամ փոքր ատյաններ, բուրջեսներ և այլ ատյաններ

Իր նշանակությամբ երկրորդ կարգի ատյան էր Սսի արքեպիսկոպոսական ատյանը, որը աղբյուրներում կոչվում է Curia Sisensis episcopi[413]։ Այստեղ հիմնականում քննվում էր հոգևորականներին վերաբերող հարցերը և այլադավան անձանց միջև ծագած վեճերն ու հանցագործությունները։ Սսի արքեպիսկոպոսական ատյանը նախագահում էր Սսի արքեպիսկոպոսը. սակայն 13-րդ դարի կեսերից, երբ Կիլիկիայում զարգացավ արտաքին և ներքին առևտուրը և մեծացավ Կիլիկիայի դերը Մերձավոր Արևելքում կատարվող միջազգային առևտրի ասպարեզում, Սսի արքե-

409 Doc. arm., T. I, p. CVII.

410 «Բազմավէպ», 1847, էջ 92։

411 Doc. arm., T. I, p. 260.

412 „Hist. de Chypre de Mas Latrie", T. II, p. 78.

413 *V. Langlois*. Essai, p. 48.

պիսկոպոսական ատյանին կից կամ նրան փոխարինելու եկավ Լևոն Գ-ի ժամանակ (1275—1289) թագավորական պայլի ատյանը Curiae ducalis et bailie, որը գլխավորում էր Գունդստաբլ Դուկը Conestabulis ducha[414]։ Այսպես՝ Այասի կապիտանը։ Վերջիններում քննվում էին օտար վաճառականի և հայի միջև ծագած վեճերը։ Այդ ատյանի դատավորները կոչվում էին արքունի պայլեր (baillis royaux)։ Նրա մասնաճյուղերը հաստատված էին քաղաքներում և կոչվում էին բուրջեսներ. վերջիններս քննում էին տեղական բնակիչների՝ հատկապես առևտրականների միջև ծագած վեճերը և քրեական հանցագործությունները։ Նրանք նման էին ֆրանկ պետություններում գործող «բուրջես»-ներին, որոնք գլխավորում էին թագավորի նշանակած օրենսդիրները՝ թագավորի պայլը կամ դերկոմսը[415]։

Մեր կարծիքով բուրջեսներում կամ պայլի ատյանում որպես օրենսգրքեր կամ ասիզներ օգտագործում էին «Անտիոքի ասիզների» երկրորդ բաժինը, որը ընդգրկում է ընտանեկան, ժառանգական, ֆինանսական և հատկապես՝ ներքին և արտաքին առևտրի հետ կապված հարցեր[416]։ Անշուշտ 13-րդ դարի երկրորդ կեսին Անտիոքի ասիզներին զուգահեռ օգտագործվում էր նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի համապատասխան բաժինը[417]։

Ստորին կամ բուրջես դատարանների ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր Կիլիկիայի քաղաքների, քաղաքային կյանքի, ներքին և արտաքին առևտրի, արհեստների և ընդհանրապես, տնտեսական զարգացմամբ։ Այս ատյանները նման էին նաև Երուսաղեմի թագավորության մեջ գործող «Cour de la fonde» (ինչքային-գույքային դատարաններին) և նավահանգիստներում գործող Cour de la chalne-ին, դատարաններին, որոնք գլխավորում էին պայլը կամ նավահանգստի կապիտանը[418]։ Սրանք հիմնականում նոր զարգացող քաղաքային առևտրական բուրգերության դատարաններն էին, որոնք, թեև տվյալ քաղաքի կամ շրջանի սենյորին կամ թագավորին էին ենթարկվում, բայց

414 „Hist. de Chypre de Mas Latrie", T. II, p. 78, T. III, p. 677.
415 *V. Langlois*, Essai, p. 48.
416 Assises d'Antioche, II բաժին։
417 Դատաստանագիրք, էջ 119—128, 135—173։
418 Enc. Britanica, 1946, T. 6, p. 780.

վերջին հաշվով անկախ էին սենյորական վերին ատյանից։ Այստեղ հետաքրքիր է մի հանգամանք. Սմբատի Դատաստանագիրքը իր մեջ ընդգրկում էր և՛ արքունի ատյանի, և՛ սենյորական վերին ատյանի, և՛ բուրջեսների (ստորին կամ փոքր), և՛ եկեղեցական թեմական ատյանների՝ օրենքները, իսկ Երուսաղեմի ասիզները վերաբերում էին միայն պարոնների կամ թագավորական վերին ատյանի գործունեությանը։ Հետևաբար, Երուսաղեմի թագավորության և մյուս երեք խաչակիր իշխանություններում գործող այլ տիպի ատյանների համար կազմված էին առանձին օրենսգրքեր[419]։

Մյուս հիմնական տարբերությունը այդ երկու իրավական հուշարձանների միջև այն է, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում կոնկրետ օրենքներ են մշակված յուրաքանչյուր դեպքի համար, մինչդեռ Երուսաղեմի ասիզների հոդվածները օրենքներ չեն, այլ դատավորների կողմից արձանագրված դեպքեր և դեպքերի առթիվ կիրառված օրենքների մշակումներ են, և որոնք պատճառաբանված են իրավական փաստարկներով կամ դեպքերի վկայակոչումներով, ընդ որում այստեղ չեն բացատրվում օրենքները։ Հետևապես այդ օրենքները ընդհանրացումներ չեն, այլ միայն փորձի հիման վրա նշված իրավական նորմեր։ Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ Երուսաղեմի ասիզների մեզ հասած օրինակները վերախմբագրման և փոփոխության են ենթարկվել Երուսաղեմի թագավորության կործանումից հետո։ Այդ փոփոխությունները կատարվել են երկու անգամ՝ առաջինը 1368 թվականին և երկրորդը՝ 1531 թ.։ Ընդ որում Երուսաղեմի ասիզների ուսումնասիրությունը բերում է մեզ այն համոզման, որ նրանում իրենց արտահայտությունն են գտել ֆրանսիական ֆեոդալական կարգերը։ Այստեղ նկարագրվում է Երուսաղեմի թագավորության ներքին քաղաքական ու վարչական սիստեմը, որտեղ բոլոր ֆեոդալների կամ անձնավորությունների իրավունքներն ու պարտականությունները կապված են ֆոնդի հետ, ընդ որում թագավորը հանդես է գալիս որպես ֆեոդալների գլխավոր սյուզերենը՝ առաջինը հավասարների մեջ։ Մինչդեռ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում արտացոլված են Կիլիկիայի ֆեոդալական-հասարակության՝ քաղաքական, վարչական ու տնտեսական կյանքի համարյա բոլոր կողմերը, որտեղ Սմբատի հիմնական նպատակն է ամրապնդել ֆեոդալների փոխհարաբերությունները և ուժեղացնել թագավորի հեղինակությունը, դրանով

419 Նույն տեղում, էջ 777—782։

նպատակ ունենալով ուժեղացնել կենտրոնական իշխանությունը։ Անշուշտ Սմբատը այդ անում էր ելնելով Կիլիկիայի ներքին և միջազգային կյանքում տեղի ունեցած փոփոխությունների անհրաժեշտությունից, երբ 13-րդ դարի երկրորդ կեսից՝ մի կողմից ուժեղանում էր Եգիպտոսի մամլուկների վտանգը, և մյուս կողմից՝ ֆեոդալական երկպառակությունները սպառնում էին մասնատել երկրի դիմադրողական ուժերը արտաքին թշնամու նկատմամբ և դրանով հարցականի տակ դնում թագավորության գոյությունը։

Այսպիսով, Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը ամբողջական մի երկ է, որտեղ իր արտահայտությունն է գտել Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների բոլոր կողմերը։

3. Սենյորական, պարոնական կամ գավառական դատարաններ (դարպաս)

Ինչպես նշեցինք, Կիլիկիան բաժանվում էր շրջանների՝ գավառների կամ պարոնությունների։ Յուրաքանչյուր շրջան ուներ իր կառավարիչը՝ գավառապետը կամ պարոնը։ Վերջինս տվյալ շրջանի հողատեր ֆեոդալն էր և լինելով այդպիսին, հանդիսանում էր թագավորի վասալը և վերջինիս նկատմամբ կատարում էր վարչական, տնտեսական և ռազմական պարտականություններ, կառավարելով իրեն հանձնված շրջանի գործերը, այդ թվում և դատական գործը[420], որոնք հատկապես վերաբերում էին սենյորի և վասալի միջև կամ թե շրջանի բնակչության տարբեր դասակարգերի և խավերի միջև ծագած վեճերին[421]։

Սմբատի Դատաստանագիրքը բազմաթիվ հոդվածներով սահմանում է պարոնի կամ գավառապետի հանդեպ նրա կառավարած շրջանում՝ նրա ծառայության մեջ գտնվող վասալների, կամ թե բնակչության տարբեր խավերի՝ ճորտերի (պառիկոսների) և ռամիկների կատարած պարտականությունները։ Բացի այդ սահմանում է վերջինների կողմից մուծվելիք հարկերի չափը և թերացման դեպքում պատիժներ է նախատեսում, որոնք իրագործվում են սենյորի ատյանի կողմից[422]։

---

420 *V. Langlois*. Essai, էջ 48։

421 Դատաստանագիրք, էջ 81—83։

422 Նույն տեղում, էջ 13—16, 94, 128, 148։

Բնական է, որ Սմբատը լինելով զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի գաղափարախոս, լայն արտոնություններ էր սահմանում ֆեոդալ իշխանների համար, իսկ մյուս կողմից խիստ ու դաժան էր շահագործվող շինականների ու ստրուկների նկատմամբ[423]։ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքին զուգահեռ և գեռևս նրանից առաջ պարոնությունների վերին դարպասում օգտագործվում էր նաև Սմբատ Սպարապետի թարգմանած Անտիոքի ասիզները։ Վերջինս կարգավորում է սենյորի և վասալի իրավական հարաբերությունները, որի տնտեսական հիմքը կազմում էր ֆեոդը և պարգևը։ Կարգավորում էր նաև սենյորի և վասալի միջև ծագած ունեցվածքային, քրեական, սահմանային, ժառանգական և այլ հարցեր[424]։

Անտիոքի ասիզները հնարավորություն են ընձեռում պարզելու, թե ինչպիսի պաշտոններ են եղել սենյորական դարպասում։ Այսպես, ըստ այդ օրենսգրքի, դարպասի ատենապետները անվանվել են «դիվանքաշի» (դատավոր—Ս. Բ.), երդված մարդիկ, այսինքն երդվյալներ կամ ատենակալներ, վերջիններս կոչվել են «դիվնձիք»։ Դատարանի գլխավոր պաշտոնատար անձնավորությունը, հավանաբար դատախազը կոչվել է «տուկ», նրա քարտուղարը՝ «նոտար տուկին», իսկ դատարանի սուրհանդակը՝ շավուշ, որը միևնույն ժամանակ հանդիսացել է պարոնի կամ շրջանի պայլի սուրհանդակը[425]։ Դատարաններում կողմերի իրավունքները պաշտպանելու համար հանդես էին գալիս իրավաբաններ։ Սսում արտագրված մի ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Մեծ իշխան Հեթում զաւականց Սնդեկնոս (հունարեն Սիւնդիկոս—նշանակում է իրավաբան, փաստաբան—Ս. Բ.) նոյնոյ իշխանին»[426]։

Բացի սենյորական դարպասներից, շինականներին դատելու իրավունք են ունեցել նաև ֆեոդալական հիերարխիայի՝ իշխող և շահագործող դասերի ամենացածր աստիճանում կանգնած ազատները՝ ձիավորները։ Սմբատի Դատաստանագրքում այդ մասին ասված է. «Եւ այլք հայն ցեղ ամէն մէկ գիրն դատեն, յիրենց դարպասն զիրենց ճորտերն, ըստ իւրաքանչիւր կերպի. և զայլ ցած հեծելվորքն՝ այլ վերցածքն որ ազատ կոչին»[427]։ Սակայն Սմբա-

---

423 Նույն տեղում։

424 Assises d'Antioche, Ա. մաս և Բ. մաս։

425 Նույն տեղում, էջ 38—39։

426 «Հանդէս ամսօրեայ», 1898, էջ 247, 1954, էջ 78։

427 Դատաստանագիրք, էջ 82։

տը սահմանափակելով ծիավորների իրավունքները իրենց ենթակա ճորտերին մահապատժի ենթարկելու կապակցությամբ, գրում է. «բայց զխրատելոյն կամ զմեռցնելոյն առանց թագաւորին կամ իշխանին չէ արժան այնել», ըստ Սմբատի այդ իրավունքը պատկանում է թագավորին կամ շրջանի իշխանին։ Սմբատը ազատներին իրավունք է տալիս՝ իրենց ենթակա ճորտերին «զընտանել և ծեծել և տուգնել և հանել վարել յիրենց տեղոյ ի բաց՝ կարեն այնել։ Եւ այլ ցածր շինականք՝ հեծելվորք՝ ամէն մէկ զիրն կարեն դատել, նոյնպէս ու զխրատելն և զվարել որպէս գրել ենք. ապա հայրենէ փթել չկարեն առանց պարոնին»[428]։

Այսպիսով, գավառներում կամ շրջաններում պարոնի դղյակներում հաստատված շրջանային դարպասները հիմնականում կարգավորում էին ֆեոդալի և նրա վասալների և մյուս կողմից ֆեոդալական հիերարխիայի բարձր աստիճանում գտնվող շահագործող դասակարգի և նրա ստորին աստիճանում՝ պատվանդանում կանգնած շահագործվող մասսաների փոխհարաբերությունները։

4. Հոգևոր, եկեղեցական, թեմական ատյաններ

Ինչպես նշեցինք, Կիլիկիայի իշխանության շրջանում շարունակում էին գործել եկեղեցական, թեմական, այսինքն՝ հոգևոր ֆեոդալներին ենթարկվող ատյանները։ Նման աշխարհիկ ֆեոդալներին, հոգևոր ֆեոդալները հենվելով իրենց ֆեոդալական հողատիրության և եկեղեցական-հոգևոր իրավունքների վրա՝ դատ էին տեսնում և օրենքներ սահմանում իրենց տիրույթների ներսում՝ բնակչության տարբեր խավերի՝ գյուղացիների, ռամիկների, եկեղեցու դեմ ընդվզող աղանդավորների և հերձվածողների նկատմամբ։

Սսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնական որոշումներում նշված է, որ հոգևոր ֆեոդալներին՝ եպիսկոպոսներին և առաջնորդներին օգնության պետք է հասնեն թագավոր Հեթումը և մյուս իշխանները՝ պատժելու համար, հատկապես նրանց, ովքեր անարգում են հավատը և հերձվածողների խմբին են պատկանում[429]։

Սսի եկեղեցական ժողովի կանոնական որոշումները (որոնք

428 Նույն տեղում, էջ 82—83։

429 Գանձակեցի, էջ 304—305։

թեև մշակվել էին ամբողջ Հայաստանի և Կիլիկիայի հայկական թագավորության եկեղեցական թեմական ատյանների համար—Ս. Թ.) գործադրվեցին հատկապես Կիլիկիայում, որտեղ ուժեղ էր թագավորական իշխանությունը։

Սմբատի Դատաստանագրքի առաջաբանում նշված է, որ Սմբատի Դատաստանագիրքը գրվել է նաև «Վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ»։ Հետևաբար Սմբատի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները օգտագործելիս են եղել եկեղեցական, թեմական, եպիսկոպոսական և առաջնորդական ատյաններում[430]։

Սսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոններում և Սմբատի Դատաստանագրքի հոդվածներում կան օրենքներ և կանոններ, որոնք բացի եկեղեցական և վանական ու կրոնական հարցերին վերաբերող պրոբլեմներից, կարգավորում են նաև քաղաքացիական իրավունքի զանազան հարցեր, որոնք ունեն քաղաքացիական և սոցիալական մեծ նշանակություն Կիլիկյան հայկական պետության, ինչպես տնտեսական կյանքի, այնպես էլ սոցիալ-դասակարգային հարաբերությունների պարզաբանման համար։ Վերոհիշյալ փաստաթղթերում գրանցված կանոններն ու օրենքները դուրս են գալիս ֆեոդալական եկեղեցու շահերը շոշափելու շրջանակներից և ստանում են քաղաքացիական պարտավորությունների ուժ, տույժի, տուգանքի և հարկադիր աշխատանքների ենթարկելով ոչ միայն հանցապարտ հոգևորականներին, այլև աշխարհականներին, հատկապես գյուղացիներին։

Ինչպես միջնադարյան Եվրոպայում ու բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, հոգևորական դասերը ծավալել էին օրենսդրական և դատական գործունեություն։ Հոգևորական-ֆեոդալական դասերի գաղափարախոսությունը ընկած էր կանոնագրքի ու դատաստանագրքի հիմքում։ Նկատի ունենալով այս, Էնգելսը գրում է. «Քաղաքականությունն ու իրավագիտությունը, ինչպես և մնացած բոլոր գիտությունները, հոգևորականների ձեռքում աստվածաբանության հատուկ ճյուղեր դարձան և նրանց հիմքում դրվեցին նույն սկզբունքները, որոնք տիրում էին աստվածաբանության մեջ։ Եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ Աստվածաշնչի խոսքերը ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն կազմվել էր իրավաբանների առանձին դասը, իրավագիտությունը

430 Դատաստանագիրք, էջ 20—21, 23—25, 28—29, 38—39, 76, 83 և այլն։

դեռ երկար ժամանակ մնում էր աստվածաբանության խնամակալության տակ»[431]։

Թեև Կիլիկիայի հայկական պետության մեջ գործող Դատաստանագրքի հեղինակը՝ Սմբատ Սպարապետը աշխարհական էր, սակայն Դատաստանագրքի աղբյուրները հիմնականում հանդիսացել են կրոնական ու եկեղեցական երկեր։

Ինչպես աշխարհիկ դատարաններին, այնպես և եկեղեցական տյաններին վերաբերող օրենքներում, Սմբատը լայն արտոնություններով է ապահովում հոգևոր ֆեոդալներին և մյուս կողմից պատիժներ է սահմանում հոգևոր ֆեոդալներին ենթակա շահագործվող դասակարգերի նկատմամբ[432]։

Հետաքրքիր է նշել մի հանգամանք, որ Սմբատի Դատաստանագրքի ՃՂ (190) հոդվածում, որը վերնագրված է «Վասն դատաստանաց և կանոնաց», որոշ սահման է անցկացնում և տարբերություն է դնում աշխարհիկ դատարանների՝ օրենքների խիստ պատժող դերի և եկեղեցական տյանների՝ կանոնների ավելի շատ խրատող, ապաշխարության միջոցով պատիժներ սահմանող օրենքների միջև[433]։ Մեր կարծիքով Սմբատը հանգել էր այդ եզրակացության այն պատճառով, որ նա այդ Դատաստանագիրքը գրում էր Կիլիկիայի հայկական թագավորության կենտրոնացված իշխանության պայմաններում, որտեղ այդ իշխանությունը իր կենտրոնացած ապարատով, հիմնականում իր ձեռքում էր պահում շահագործվող դասակարգերին զսպելու և պատժելու ֆունկցիան։ Շատ բնական է, որ այս պայմաններում եկեղեցական տյաններին մնում էր ավելի շատ խրատողի և հաշտեցնողի դերում հանդես գալ[434]։ Նույնիսկ օրինազանց՝ հանցագործ եպիսկոպոսներին ու առաջնորդներին նախատեսվում էր դատել պարոնի տյանում[435], ոչ թե, ինչպես բնական կլիներ դատել՝ Սսի արքեպիսկոպոսական կամ եկեղեցական տյաններում։

Եկեղեցական տյաններում հիմնականում քննվում էին բնակչության կենցաղին վերաբերվող գործերը[436], հոգևորականության ժառանգության, հոգևոր ֆեոդալների օգտին գանձվող տա-

431 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 45—46։

432 Դատաստանագիրք, էջ 20—21, 23—25, 28, 33—39։

433 Նույն տեղում, էջ 161—163։

434 Ռաբունի, էջ 55։

435 Դատաստանագիրք, էջ 22—23։

436 Նույն տեղում, էջ 20, 21, 25, 28, 29, 33—39։

սանորդի և այլ հարկերը մուծելու կարգը խախտողների գործերը[437], ցածր հոգևորականների կատարած հանցագործությունները[438], ակամա հանցագործությունները՝ սպանություններ և այլ հարցեր։

Հոգևոր հիերարխիայի բարձր աստիճանում կանգնած հայրապետը կամ կաթողիկոսը ուներ բավականին մեծ լիազորություն, ըստ որում նա գլխավորում էր հանցագործ թագավորին դատող գերագույն տյանի նիստերը, որը ըստ Սմբատի Դատաստանագրքի, թագավորը Աստուծոյ և հայրապետին օրինադրակից է։

* * *

Բացի վերոհիշյալ դատարաններից ու տյաններից, առանձին պայմանագրերով թույլատրվում էր օտար առևտրականներին ու արհեստավորներին՝ ունենալ իրենց դատարանները։ Կիլիկիայի արքունի հրովարտակներից իմանում ենք, որ ջենովացիներն ու վենետիկցիները, որոնք բնակություն էին հաստատել Սսում, Տարսոնում, Մամեստիայում և Այասում, ունեին իրենց հյուպատոս կոնսուլները, միևնույն ժամանակ թագավորի հատուկ արտոնագրերով թույլ էր տրված ունենալ իրենց դատարանները, որոնք կոչվում էին կուրիաներ (curiae) բայլական կամ կոնսուլական դատարաններ[439]։ Վերջիններս քննում էին տվյալ գաղութի բնակիչների միջև ծագած վեճերը և նրանց կողմից կատարված հանցագործությունները։ Դատարան ունենալու իրավունքի դիմաց նրանք պարտավոր էին հավատարիմ մնալ թագավորի հանդեպ, պաշտպանելով վերջինիս շահերը իրենց ամբողջ կարողությամբ[440]։

Դատարաններ ունենալու իրավունք ստացան նաև Կիլիկիայում հաստատված Կիլիկյան թագավորի վասալներ՝ հյուրընկալների օրդենը իրենց ենթակա ամբողջ տերիտորիայում դատ անելու omnejus per terram իրավունքով[441]։

Դատարան ունենալու իրավունք էր շնորհված նաև Ջենովայի և Վենետիկի վաճառականներին, իսկ մյուս երկրների քա-

437 Գանձակեցի, էջ 292—293։

438 Դատաստանագիրք, էջ 31, 39, 83։

439 V. Langlois, Essai, p. 48, 49. Le trésor, p. 106—111.

440 Նույն տեղում, էջ 48։

441 Նույն տեղում։

ղաքացի վաճառականներն ու հպատակները իրենց հարցերը քննելու համար պետք է դիմեին արքունի ատյանին[442]։

Արքունի հրովարտակներն ու արտոնագրերը մեզ հաղորդում են հետաքրքիր տեղեկություններ Կիլիկիայում գործող միջազգային իրավունքի նորմերի մասին։ Այդ օրենքներից են օտար քաղաքացիների ունեցվածքի ժառանգության հարցը կարգավորելու օրենքը, որը Ֆրանսիայում և առհասարակ միջնադարյան Եվրոպայում հայտնի է droit d'aubaine օտարականի ժառանգություն անվամբ և երկրորդ՝ նավաբեկության օրենքը droit de bris։ Առաջինը վերաբերում է այն սովորության, որը գործում էր միջնադարյան Եվրոպայի և Ասիայի բոլոր երկրներում. ըստ այդ օրենքի՝ օտարահպատակը, որը մեռնում էր որևէ մի այլ երկրի տերիտորիայում, մեռնող օտարահպատակի ունեցվածքը ժառանգում էր կամ յուրացնում տվյալ երկրի տիրակալը։ Այդ օրենքը առաջին անգամ վերացվում է Կիլիկիայում՝ Ջենովայի և Վենետիկի հպատակների նկատմամբ, ընդ որում Կիլիկիայի թագավորը առևտրական շնորհագրերում պաշտոնապես հրաժարվում է օգտվել այդ բարբարոս օրենքից[443]։ Սակայն, այդ օրենքը մնում էր ուժի մեջ մյուս օտարահպատակների նկատմամբ։ Հետագայում 1285 թվականին այդ առանձնաշնորհումը ստացան նաև Եգիպտոսի սուլթանության հպատակները[444]։

Երկրորդ օրենքը վերաբերում է նավաբեկության օրենքին։ Նավաբեկության ենթարկված նավերի ապրանքները, որոնց ծովի ալիքները նետում էին մերձավոր ծովափը, այսինքն՝ օտար պետության տերիտորիան, բռնագրավվում էին տվյալ ծովափի վրա տիրակալություն կատարող թագավորի կողմից։ Երուսաղեմի ասիզները խափանել էին այդ օրենքը[445]։ Կիլիկիայի Լևոն Բ թագավորը նույնպես հրաժարվում է այդ իրավունքից, հատկապես Ջենովայի և վենետիկյան նավերի նկատմամբ։ Մյուս երկրների նավաբեկվողները չէին օգտվում այդ օրենքից[446]։

Կիլիկիայի հայկական պետության օրենքներով, օտարահպատակի կատարած հանցանքի համար պատասխանատու էր ամբողջ համայնքը, որին պատկանում էր հանցագործ օտարականը։ Հատկապես այդ օրենքը խիստ կիրառվում էր այն համայնքի նկատմամբ, որի անդամը զբաղվում էր մաքսանենգությամբ[447]։

Կիլիկիայում գործում էին նաև միջազգային իրավունքի այլ նորմեր, հայտնի է այն օրենքը, որով թագավորը թույլ էր տալիս օտարներին զբաղվելու ստրկավաճառությամբ երկրի ներսում և երկրից դուրս[448]։

Վիլեբրանդ Օլդենբուրգցին հաղորդում է նաև մի այլ օրենքի մասին, որի համաձայն օտարները իրավունք չեն ունեցել ազատ շրջագայելու Կիլիկիայում կամ դուրս գնալու այնտեղից առանց թագավորի թույլտվության[449]։ Վերոհիշյալ օրենքի մասին վկայում են Ջենովայի և վենետիկյան վաճառականներին շնորհված առևտրական արտոնագրերը, ընդ որում թագավորն է հատուկ արտոնություններով թույլ տալիս նրանց ժամանելու և շրջագայելու երկրում[450]։

Կիլիկիայում գործելիս են եղել միջազգային իրավունքին վերաբերող այլ օրենքներ, որոնք մեզ չեն հասել հենց այն պարզ պատճառով, որ Կիլիկյան արքունիքի արխիվը մի քանի անգամ այրվել ու ոչնչացվել է ներխուժող թշնամու կողմից։

Այսպիսով, Կիլիկիայի հայկական պետության մեջ գործող դատարաններն ու իրավական նորմերը, միջազգային իրավունքի օրենքները ցույց են տալիս, որ Կիլիկիան այդ ժամանակաշրջանում եղել է ֆեոդալական կազմակերպված մի պետություն, իր պետական բարդ ապարատով։

---

442 Doc. arm., T. I, p. 759—760.
443 *V. Langlois*, Le trésor, p. 106. Essai, p. 52.
444 *V. Langlois*, Essai, p. 52.
445 Assises de Jerusalem, T. II, p. 47.
446 *V. Langlois*, Essai, p. 52.

447 Նույն տեղում։
448 Նույն տեղում։
449 *V. Langlois*, Essai, p. 51—52.
450 *V. Langlois*, Le trésor, p. 106—112.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 11—14-ՐԴ ԴԴ.

1. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 11—12-ՐԴ ԴԴ.

Կիլիկյան հայկական պետության ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրությունն ընդհանրապես, և ֆեոդալական հողատիրության ու ագրարային հարաբերությունների ուսումնասիրությունը մասնավորապես ներկայացնում են մի շարք դժվարություններ։ Այդ դժվարությունները երկու կարգի են. առաջինը այն է, որ մեզ հասած պատմական, իրավական և մատենագրական այլ աղբյուրները շատ սուղ և ժլատ տեղեկություններ են հաղորդում երկրի տնտեսական դրության, ներքին կյանքի, հողատիրության և ժողովրդական մասսաների սոցիալ-տնտեսական վիճակի մասին։ Սակայն այդ բացը մենք աշխատել ենք լրացնել թագավորական հրովարտակների, հողային նվիրատվություններն արձանագրող փաստաթղթերի ու վավերագրերի, առևտրական պայմանագրերի ու արտոնագրերի տվյալներով, որոնք իրենց հերթին օգնել են մեզ բացահայտելու օրգենական խոշոր հողատիրության, խաչակիր ֆրանկ պետությունների և արևմտաեվրոպական ֆեոդալական հողատիրության ազդեցության հարցերը։ Պետք է ավելացնել մի հանգամանք ևս, դա այն է, որ այդ հարցերի լուսաբանմանը մեծապես օգնել են նաև Սմբատ Սպարապետի թարգմանությամբ մեզ հասած Անտիոքի ասիզների հայերեն օրինակը, որը Երուսաղեմի ասիզների հետ միասին հանդիսացել են Կիլիկյան Հայաստանի ֆեոդալական և արքունական վերին ատյաններում օգտագործվող իրավաբանական հուշարձաններ։

Կիլիկիայի ֆեոդալական հողատիրության ուսումնասիրության դժվարություններից երկրորդը այն է, որ Կիլիկիայի հայկական պետությունը ստեղծվել և կազմակերպվել է բուն Հայաստանի տերիտորիայից դուրս՝ բյուզանդական նահանգ Կիլիկիայի տերիտորիայի վրա, որով բնականաբար իր վրա կրել է բյուզանդական ֆեոդալական հարաբերությունների ազդեցությունը, սակայն հիմքում և էության մեջ պահպանել է հայկական ֆեոդալիզմի տարգիցիաները, որովհետև Կիլիկիայի հայկական պետության բնակչության բոլոր խավերը հիմնականում կազմված էին հայկական տարրից։

Կիլիկյան հայկական պետության մեջ սոցիալ-տնտեսական հարաբերությունները շատ ավելի բարդ ձևեր ընդունեցին, քան բուն Հայաստանում, որովհետև Կիլիկիայում բնակչություն էին հաստատել տարբեր երկրներից եկած բազմաքանակ բնակիչներ։ Նրանք իրենց հետ բերել էին նախկին բնակավայրերում գոյություն ունեցող սոցիալ-իրավական ու տնտեսական ավանդույթներն ու սովորույթները։ Այսպես, հայերից, հույներից, ասորիներից և հրեաներից բացի, խաչակրաց արշավանքների շրջանում եկան և բնակություն հաստատեցին նաև ֆրանսիացիներ, իտալացիներ, գերմանացիներ և այլն։ Իհարկե այդ ժողովուրդները իրարից մեկուսացված չէին, այլ գտնվում էին սերտ շփման մեջ։ Այսպիսով, նման բարդ պայմաններում էին ձևավորվում Կիլիկյան հայկական պետությունում տիրապետող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, որոնք իրենց վրա էին կրում հիմնականում հայկական, և որոշ չափով արևմտաեվրոպական և բյուզանդական ֆեոդալական հարաբերությունների կնիքը։

Այստեղ հարկավոր է ընդգծել խիստ կարևոր մի հանգամանք, դա այն է, որ Կիլիկյան հայկական պետության ֆեոդալական հողատիրության ստեղծումն ու զարգացումը ընթացել է բոլորովին այլ ուղիներով, որոնց մեջ գլխավորը հանդիսանում էր բուն Հայաստանից եկող հայ ֆեոդալների կողմից՝ Կիլիկիան նվաճելու և բռնությամբ տիրելու ուղին։ Որ հայերը Կիլիկիայի վրա տիրում էին նվաճողի իրավունքով, այդ երևում է նրանից, որ դա իր կնիքն է դրել ֆեոդալական հողատիրության ստեղծման և հետագա զարգացման բուն ընթացքի վրա։ Այստեղ, իհարկե, խոսքը չի վերաբերում Կիլիկիայի ֆեոդալական հարաբերությունների ստեղծմանը ընդհանրապես, քանի որ Կիլիկիան լինելով բյուզանդական նահանգ, այստեղ տիրապետող կարգերը բյուզանդական ֆեոդալական հարաբերություններն էին։ Այդ պատճառով էլ խոս-

քը այստեղ վերաբերում է հայ ֆեոդալական տների ու ֆեոդալական հողատիրության ու հողային սեփականության առաջացման պրոցեսին։ Այստեղ պետք է ընդգծել մի կարևոր հանգամանք ևս, դա այն է, որ հայկական տարրը չէր ստեղծում արտադրական նոր եղանակ և չէր հիմնում արտադրական նոր հարաբերություններ, այլ ազդելով նախկինում գոյություն ունեցող ֆեոդալական արտադրական եղանակի և արտադրական հարաբերությունների վրա (որի վրա ազդում էին նաև ֆրանկական ֆեոդալիզմի սովորույթները), իր դրոշմը պահպանեց Կիլիկիայի հայկական պետության տնտեսական և քաղաքական կառուցվածքի վրա մինչև նրա վախճանը։

Մարքսիզմի դրույթները ուղղություն են տալիս ֆեոդալիզմի ծագման ու զարգացման պրոբլեմի պարզաբանմանը։ Այսպես, անդրադառնալով այդ հարցին, Մարքսն ու Էնգելսը գրում են. «ֆեոդալիզմը ամենևին էլ չի փոխադրված պատրաստի ձևով Գերմանիայից (խոսքը վերաբերում է Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական կարգերի ստեղծմանը և գերմանացիների կողմից հռոմեական կայսրությունը նվաճելու հետևանքով ստեղծված ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացմանը — Ս. Բ.)։ Նրա ծագումը պետք է որոնել բուն նվաճման ժամանակ բարբարոսական զորքի ռազմական կազմակերպության մեջ, որը նվաճումից հետո միայն, շնորհիվ նվաճված երկրներում գտնված արտադրողական ուժերի ազդեցությանը, զարգացել և դարձել է իսկական ֆեոդալիզմ»[1]։

Կիլիկիայի հայկական պետության ֆեոդալական հողատիրության ստեղծման ու զարգացման պրոցեսի վրա ազդող երկրորդ ուղին հանդիսացել է բյուզանդական կայսրության կողմից 11-րդ դարում՝ հայերի բռնի տեղափոխումը, հայ ֆեոդալներին և իշխաններին նոր բնակավայրերում՝ Կիլիկիայում, Կապադովկիայում և Փոքր Ասիայում հարավային և այլ նահանգների սահմանամերձ շրջաններում կամ պաշտպանության համար ստրատեգիական նշանակություն ունեցող ամրոցների և բերդերի՝ հողային խոշոր տիրույթներով հանձնումը և այդ ֆեոդալներին բյուզանդական կայսրից՝ սյուզերենից, վասալական կախման մեջ դնելը, այն ժամանակ, երբ վերոհիշյալ նահանգներում՝ 10—11-րդ դարերում սկսել էր լայն չափեր ընդունել ֆեոդալական խոշոր հողատիրությունը։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. II, стр. 64.

Դեռևս 962 թ., երբ Հովհաննես Չմշկիկը Արևելյան բանակի հրամանատարն էր և նվաճում էր Հայաստանի սահմանամերձ արաբական երկրները, այդ վայրերից բազմաթիվ հայեր տեղափոխում է Սեբաստիա և Եփրատի արևմտյան կողմը գտնվող բյուզանդական սահմանամերձ ամրոցները, Մամբիճ, Տլուք և այլն[2]։

Այդ նույն դարի անցքերի մասին խոսելով, Միքայել Ասորին գրել է. «Այդ դարում, հույները արաբներից գրավեցին Կապադովկիայի, Հայաստանի (իմա՝ Փոքր Հայքի) և Սիրիայի քաղաքները, նրանք Մեծ Հայաստանից այդ վայրերն էին տեղափոխում ժողովրդական բազմություններ։ Վերջիններս հաստատվում էին այդ վայրերում, աճում և նույնիսկ ստանում հողային տիրույթներ[3]։

Հետագայում, 11-րդ դարում, Հայաստանի համար ստեղծված քաղաքական անբարենպաստ վիճակը բնակչության մի մասին ստիպեց թողնել իր հայրենիքը և հեռանալ հարևան երկրներ։ Այդ գաղթը տեղի էր ունենում մի կողմից, հիմնականում բյուզանդական կայսրության բռնի գաղթեցման միջոցով և մյուս կողմից՝ հայերը գաղթում էին ազատ մնալու համար սելջուկ թուրքական ավերածություններից։ Այդ գաղթը հատկապես ուժեղացավ, երբ Բյուզանդիան 11-րդ դարի շեմքին գրավեց Տայքը, իսկ հետագայում Վասպուրականի, Անիի և Կարսի թագավորությունների տերիտորիաները և այդ վայրերի բնակչության մի մասին տեղափոխեց Փոքր Ասիայի կենտրոնական, հարավային, արևմտյան նահանգները և Կիլիկիա։ Հայտնի է, որ Հայաստանի այդ շրջանների թագավորներն ու իշխանները տեղափոխվում էին նոր վայրերը՝ իրենց տոհմերով, բազմաքանակ ազատներով, ֆեոդալ վասալներով, ճորտ գյուղացիներով և քաղաքների արհեստավորներով հանդերձ, որոնց թիվը միայն Վասպուրականից կազմում էր մի քանի հարյուր հազար[4]։

Թովմա Արծրունին վկայում է, որ բյուզանդացիք գաղթեցնելով հայերին այդ նահանգները, նրանց տալիս էին հողային տի-

[2] Les Hittites. Histoire d'un Empire oublié, par *A. H Sayce*, 1891, Paris, p. 250.

[3] Ժամանակագրություն Միխայելի, Երուսաղեմ, 1871, էջ 198։

[4] Տե՛ս Թովմայի Արծրունւոյ «Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1887, էջ 307։ Ս. Անեցի, Վաղ., 1893, էջ 104։ Ուռհայեցի, էջ 40, 57—59, 217—218։ Տարեգիրք, էջ 26—27, 49, 63։

ղությունները, ոստաններ, գյուղեր, ագարակներ և վանքեր, որոնց դիմաց հայ ֆեոդալները դառնում էին բյուզանդական կայսրի վասալներ, զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներ ու գավառների կառավարիչներ[5]։

Ինչպես նշեցինք վերևում, սկսած 10-րդ դարի երկրորդ կեսից մինչև 11-րդ դարի վերջը վերոհիշյալ նահանգներում լայն չափեր էր ընդունում խոշոր հողատիրության զարգացումը, որը կատարվում էր մանր հողատերերի՝ ստրատիոդների հողակտորների և գյուղացիների համայնական հողերի հափշտակման ու բռնագրավման, ինչպես նաև գնման հաշվին։ Հողազրկվողների մեջ մեծ թիվ էին կազմում հայ գյուղացիներն ու մանր հողատերերը՝ զինվորական ծառայություն կատարող հայ զինվորները՝ ստրատիոդները[6]։

Բյուզանդական կայսրերն իրենց հարավային նահանգների սահմանների պահպանությունը հանձնում էին ակրիդներին կամ սահմանապահ իշխաններին, որոնք ժառանգական տերեր էին դառնում իրենց հանձնված շրջանների հողերին, որոնց վրա ապրող մանր հողատեր վասալները՝ ստրատիոդները, պարտավորյալ զինվորներ էին[7]։ Վերջիններս հողը օգտագործում էին զինվորական ծառայության դիմաց։ Այդ ակրիդների և հողատերերի մեծ մասը հայ իշխաններ էին, որոնք զինվորական ծառայության մեջ էին մտնում բյուզանդական կայսրի մոտ և հանդիսանում էին վերջինիս վասալը[8]։

Այդ նահանգներն էին՝ Ջահանը կամ Լիկանդիան, Լագոնիան, Միջագետքը և Կապադովկիան, որոնց վրա իշխում էին մեծ մասամբ հայ իշխաններ։ Վերջիններս, որպես խոշոր հողատերեր, գրավում և իրենց կալվածքներին էին միացնում մանր հողատերերի կալվածքները, ճորտացման ենթարկում այդ հողերի վրա նստող գյուղացիներին։ Նրանց հաջողվում էր սեփականացնել ամբողջ գավառներ։ Սկսած 10-րդ դարի վերջին քառորդից բյուզանդական կայսրերը հարկադրված էին պայքարել արագ չափերով զարգացող խոշոր հողատիրության ընդարձակման դեմ, որոնք

5 Թովմա Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 307։ Ուռհայեցի, էջ 217—218։

6 «Լուսաւոր», 1899, էջ 69։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

քայքայում էին բյուզանդական կայսրության էկոնոմիկան, զբաղվում նրան ռազմական ուժերի կորիզը հանդիսացող մանր հողատեր ստրատիոդներից, թուլացնելով կայսրության սահմանների պաշտպանությունը։ Այդ պրոցեսը կանգնեցնելու նպատակով, բյուզանդական կայսրերը հրատարակել են մի շարք նովելներ, որով արգելում էին հողի ազատ վաճառքը և նույնիսկ պարտադրում վաճառված հողերը ետ վերադարձնել նախկին տերերին[9]։ Թեև այդ օրենքները նպատակ ունեին կասեցնել մանր հողատերերի՝ ստրատիոդների քայքայումը, սակայն այդ միայն ժամանակավորապես հաջողվեց։

Նույն նպատակն էին հետապնդում Բարսեղ Բ կայսեր կողմից 996 թ. հրատարակված նովելները։ Նախատեսվում էր բռնագրավել վերջին քառասուն տարիների ընթացքում խոշոր հողատերերի կողմից ձեռք բերված մանր կալվածքները, արգելել նենգ ու խարդախ միջոցների կիրառումը, որոնք խոշոր հողատերերը գործադրում էին մանր կալվածքների և գյուղացիական հողերի բռնագրավման ժամանակ, ընդ որում այդ հողերը նախ դարձնում էին եկեղեցական կամ վանքապատկան և ապա իրավատեր դառնալով բռնագրավում էին։ Նովելները վերացնում էին նաև խոշոր հողատերերի՝ ժառանգական և տոհմատիրական սեփականության իրավունքը[10]։

Խոշոր հողատիրությունը այնպիսի մեծ չափերի էր հասել, որ 10-րդ դարի վերջին, երբ Բարսեղ Բ կայսրի բանակը Կապադովկիայի վրայով վերադառնում էր Վրաստան[11], նրա ամբողջ բանակը կերակրվեց Մագիստրոս Եվստաֆիա Մալեյնոսի կալվածքում։ Քիչ անց, Մալեյնոսը կանչվեց Կոստանդնուպոլիս և ձերբակալվեց։ Կայսրը անշուշտ վախենում էր նրա հզորությունից և ապստամբելու հնարավորությունից։

Սակայն կայսրերի հրատարակած նովելները չկարողացան կանգնեցնել խոշոր հողատիրության ընդարձակումը և հետագա զարգացումը, որի հետևանքով 11-րդ դարում Փոքր Ասիայի նահանգներից՝ Կապադովկիայում և Կիլիկիայում գյուղացիական

9 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հատ. 1-ին, էջ 373։

10 «Сборник документов социально-экономической истории Византии». М., 1951, стр. 163.

11 *Schlumberger G.*, L'épopeé byzantine à la fin du X e siècle, Paris, 1905, Volume III, p. 198. Տե՛ս նաև Corpus scriptorum historiae byzantinae, G. Gedrenus, 1859, p. 448.

մանր հողատիրությունը թուլացավ։ Դրա թուլացման պատճառներից մեկն էր նաև պատերազմական ծախսերի ավելացման պատճառով գյուղացիությունից գանձված պետական ծանր հարկերը։ Հատկապես նրանց դրությունը էլ ավելի վատթարացավ, երբ բնամթերքներով ռենտան փոխարինվեց դրամական ռենտայով։ Տնտեսական ծանր դրությունը, որը հետևանք էր մանր գյուղացիների և ստրատիոտների հողերի հափշտակման և խոշոր հողատերերի կողմից առաջինների հողազրկմանը, ստիպում էր նրանց ապստամբել կամ փախչել։ Հատկապես ծանր էր հայ գյուղացիության դրությունը[12]։

Այսպես էր բյուզանդական կայսրության վերոհիշյալ նահանգներում տիրող տնտեսական և հողատիրության դրությունը, երբ 11-րդ դարի երկրորդ քառորդից հայերը սկսեցին գաղթել դեպի այդ նահանգները։

Ինչպես ասվել է, սկսած 11-րդ դարի երկրորդ քառորդից հայ իշխանները իրենց ազատանիով, զորքերով և ենթակա գյուղացիներով հանդերձ գաղթում էին Կիլիկիա, ստանձնում Կիլիկիայի որևէ մի գավառի կամ քաղաքի՝ տնտեսական, վարչական և ռազմական իշխանությունը, ստանալով բյուզանդական կայսրից հողային ընդարձակ տիրույթներ, դղյակներ, ամրոցներ, բերդեր՝ իրենց շրջակա հողերով, դառնալով բյուզանդական կայսրի վասալներ։

Այդ վասալներից առավել նշանավորներն էին Աբլղարիբ Արծրունի իշխանը և Լամբրոնի Օշինյան-Հեթումյանները։ Վերջիններս մնալով բյուզանդական կայսրի վասալներ մինչև 13-րդ դարի սկիզբը, պայքարում էին Հայկական Ռուբինյան իշխանության՝ անկախ և կենտրոնական իշխանություն ստեղծելու ձգտումների դեմ, այն դեպքում նույնիսկ, երբ վերջիններս համառ պայքար էին մղում օտար տիրապետության լուծը թոթափելու համար։

Աղբյուրների վկայությունից պարզվում է, որ Աբլղարիբ Արծրունին գաղթել է Վասպուրականի Սենեքերիմ թագավորի հետ։ 1042 թ. գնացել է Կոստանդնուպոլիս և բյուզանդական կայսր Մոնոմախից ստացել է Տարսոնի, Մամեստիայի և Ադանա քաղաքների, Պապեռոն և Լամբրոն ամրոցների տնտեսական, վարչական և ռազմական կառավարումը[13]։

Հետաքրքիր է, որ Սկեվռա վանքում Հովհաննես գրչի կողմից գրված «Լամբրոնի իշխանների ծագումը» վերնագիրը կրող հիշատակարաններից մեկում Աբլղարիբը համարվում է Բագրատունիների վերջին թագավորների նախարարներից մեկը։ Ընդ որում նա ոչ թե Մոնոմախի վասալն է դառնում, այլ Միքայել կայսրի (1034—1041 թթ.)։ Թեև նույն հիշատակարանում նշվում է, որ «սա Աբլղարիբ եկեալ բնակեցաւ ի սմա (Տարսոն քաղաք—Ս. Բ.) դղյակներով հանդերձ և շինեց իւր ժառանգութիւն»[14]։ Աբլղարիբի մահվանից հետո այլևս չի հիշատակվում նրա տոհմը, նրա տիրույթները անցնում են Լամբրոնի Օշինյան-Հեթումյանների, Նաթանելյանների և մի քանի այլ իշխանների։ Նրանցից առավել նշանավոր դարձան Լամբրոնի Օշինյանները։

Աղբյուրները հակասական են նաև Օշին իշխանի տիրույթների առաջացման մասին։ Ըստ Սամուել Անեցու ժամանակագրության, 1073 թ. «ի բռնութենէն Տաճկաց (սելջուկներից — Ս. Բ.) եւ Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ՝ ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ... ազատագունդ իշխանօքն և ամենայն գահիւն... և եկեալ յաշխարհն կիլիկեցւոց և աջողմամբ Քրիստոսի էառ ի Տաճկաց և զականաւոր բերդն Լամբրոն, որ է մերձ առ ստորոտով լերինն Տօրոսի ի գահ մայրաքաղաքին Տարսոնի»[15]։ Ըստ Աննա Կոմնենոսի, Օշին իշխանը ծագումով Արշակունի էր և կայսրի նկատմամբ մատուցած ծառայության դիմաց ստացել էր Կիլիկիայի կառավարման իրավունքը[16]։

Բոլորովին այլ ձևով է պատմում «Լամբրոնի իշխանների ծագման մասին» վերնագիրը կրող հիշատակարանը. այնտեղ գրված է, որ Աբլղարիբ Արծրունին Լամբրոն ամրոցը «Զպարգևէր միում ի հաւատարիմ իշխանաց իւրոց, որ կոչէր Աւշին. զաւանս զաւառաւք իւրովք»[17] և որ նրա հետնորդները պատվվում են «ի

12 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հատ. 1-ին, Գահիրէ, 1937, էջ 376։

13 Սամուել Անեցի, էջ 224։ Սիսուան, էջ 72։ Մ. Օրմանյան, Ազգապատում, 1912, Կ. Պոլիս, հատ. 1, էջ 1228։

14 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, 1951, հատ. 1, էջ 551—552։

15 Սամուել Անեցի, էջ 117։

16 Anna Comnena, XII, p. 276.

17 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա., էջ 553։

թագաւորէն Յունաց Պաւուփիւրաժնէն սեաստաւսական իշխանութեամբ»[18]։

Ավելի ուշ 1237 թ. գրված մի հիշատակարանում Օշինյանների մասին կարդում ենք հետևյալը. «Որք (իմա Օշինյան-Հեթումյան) յաշխարհէն արևելից եկեալ ընդ այլ ազատաց, ընդ բռամբաձին զանառիկ բերդս Լամբրան. և ժառանգեցուցին հարք որդւոյ»[19]։

Ինչպես տեսնում ենք այստեղ չի հիշատակված Օշինյան-Հեթումյանների վասալական կախումը բյուզանդական կայսրից, սակայն Ներսես Լամբրոնացին, որը սերում էր Օշինյան-Հեթումյաններից, քաջատեղյակ տոհմի ազգագրության և քաղաքական դրությանը, գրում է. «Քանզի էին (Լամբրոնեանք-Հեթումյանք) պատուով ի Յունաց արքայէն Սեբաստոսութեամբ և էին ընդ ծառայութեամբ և հնազանդութեամբ նոցա»[20]։

Օշին իշխանի հաջորդները ամբողջ 12-րդ դարի ընթացքում շարունակում են մնալ բյուզանդական կայսրի վասալներ։ Այդ վասալության հիմքում ընկած էր հողային հարաբերությունները, որը հատուկ երևույթ էր ֆեոդալական շրջանի հողատիրության ձևերի մեջ։

1190 թ. հիշատակարանում կարդում ենք. «որդի հաւրէ առեալ զիշխանութիւն և տիրէն Լամբրոն բերդն», կամ թե «Յետ վախճանի Օշին նահապետի՝ շինողի Լամբրոնի տիրեաց որդի իւր Հեթում հայրենի աթոռոյն և յետ վախճանին Հեթմոյ պայազատեաց զհայրենի աթոռոյն հարազատ որդին նորա Օշին և պատուեցաւ յարքայէն Մանուէլէ Սեբաստոս անուամբ...»[21]։

Աղբյուրները միաբերան վկայում են, որ Օշինյան-Հեթումյանները իրենց կալվածների վրա տիրում էին ժառանգաբար։ 1237 թ. հիշատակարանում գրված է. «Եւ ժառանգեցուցին հարք որդւոյ, և էհաս մինչև ի սա»[22]։ Սակայն, բոլոր վերոհիշյալ վկայություններում ընդհանուր է բյուզանդական կայսրության հողատիրության և վասալական կախվածության հատուկ մի երևույթ.

18 Նույն տեղում, էջ 554։

19 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 69։

20 «Ընդհանրական թուղթք, Ս. Ներսէսի Շնորհալւոյ», Երուսաղեմ, 1871, էջ 86։ «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 50։

21 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, 1951, հատ. 1, էջ 554։

22 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 69։

որը գործադրվում էր Օշինյան-Հեթումյանների նկատմամբ, նախ հորից որդուն անցնելու ժամանակ որդին ստիպված էր գնալ Կոստանդնուպոլիս, կամ թե կայսերական հատուկ հրովարտակով պետք է հաստատվեր նրա ֆեոդալական-հողատիրական իրավունքը։ Այնուհետև նա ստանում էր սեբաստոսի կամ բանսեբաստոսի՝ բյուզանդական վարչական հատուկ աստիճանը[23], և դրա-տոսի՝ բյուզանդական վարչական հատուկ աստիճանը[23], և դրանով նա դառնում էր հոր տիրույթների ժառանգական սեփականատեր. այսպես, 1168 թ. Հեթում Բ Օշինյան իշխանը «գնաց առ արքայն Յունաց Մանուէլ և փարթամ դրօք էառ զհայրենի պատիւ սեբաստոսութեան»[24]։

Վերոհիշյալից պարզ է, որ Օշինյան-Հեթումյանները թեև տիրում էին ժառանգաբար, սակայն նրանց հողատիրության իրավունքը միևնույն ժամանակ պայմանական էր, այնքանով, որքանով որ նրանք բյուզանդական կայսրից վասալական կախման մեջ էին և վերջինիս նկատմամբ կատարում էին վարչական ու զինվորական ծառայություններ։ Այդ դրությունը մնաց մինչև 12-րդ դարի վերջին քառորդը, երբ դեռևս շարունակում էր բյուզանդական տիրապետությունը Կիլիկյան նահանգի որոշ մասերի վրա։ Սակայն 12-րդ դարի վերջին քառորդում, Հեթումյանների վասալական կախումը Բյուզանդիայից ստացավ ձևական բնույթ, որով և նրանց հողատիրությունը դարձավ «հայրենի ժառանգության» իրավունքի հողատիրություն՝ հողերը օտարելու իրավունքով։ Այսպես, 1173 թ. նրանք իրենց տիրույթներից հողային նվիրատվություններ են կատարել վանքերին՝ ավաններով, ագարակներով և գյուղերով հանդերձ[25]։ Օշինյան-Հեթումյանները հանդես են գալիս որպես վանքերի և անապատների «պարոններ»[26]։

Օշինյան-Հեթումյանները արդեն 12-րդ դարի վերջին քառորդում իրենց կալվածների վրա տիրում էին dominum directum իրավունքով և դրանով միայն կարելի է բացատրել այն երևույթը, որ նրանք 12-րդ դարի երկրորդ կեսից մշտապես թշնամական հարաբերությունների մեջ էին գտնվում Ռուբինյանների հետ, որոնք պայքարելով օտար տիրապետությունների դեմ, միաժամանակ իրենց էին ենթարկում կենտրոնախույս ֆեոդալներին, այդ թվում

23 Սիսուան, էջ 80—82։ Տարեգիրք, էջ 163, «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 3—79։ «Ընդհանրական թուղթք», Երուսաղեմ, 1871, էջ 86։

24 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 544։

25 Նույն տեղում, էջ 551։ «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 3—79։

26 Սիսուան, էջ 82։

նրանց մրցակից Օշինյան-Հեթումյաններին։ Վերջիններս, ցանկանալով պահպանել իրենց ինքնուրույնությունը և հայրենական կալվածատիրական իրավունքները, շարունակում էին թեկուզ ձևականորեն մնալ Բյուզանդիայի վասալ, ձևականորեն, քանի որ արդեն վերջինս կորցրել էր իր տիրապետությունը Կիլիկյան նահանգի վրա՝ 1173 թ.։

Վ. Լանգլուան վերոհիշյալ երկու իշխանական տոհմերի պայքարը վերագրում է «ընտանեկան նախանձին և անձնական փառասիրության»[27]։ Մինչդեռ Ներսես Լամբրոնացին ուղղակի մատնացույց անելով այդ երկու իշխանությունների միջև ծավալվող պայքարի տնտեսական և քաղաքական պատճառները, գրում է, որ Թորոս Բ-ը կռվում էր Օշին Բ-ի դեմ, այն բանի համար, որ վերջինս «տիրէր լեռնային կողմանց Փռիւկացւոյ և բազում գաւառաց, որ ի գահ Կիլիկիոյ ունելով զանառիկ դղեակն ի Թիկունս Տաւրոս լերինն վերադիտակ մայրաքաղաքին Տարսոնի հաւատարմապէս մնացեալ ի հնազանդութիւն արքային Հռոմայ»։ Այդ պատճառով, ասում է Լամբրոնացին, «—ամբարտաւան իշխան Թեոդորոս (Թորոս Բ—Ս. Բ.) ի խռովութիւն շարժէր ընդ բարեպաշտ իշխանին Օշնին»[28]։

Ռուբինյանների պայքարը Օշինյան-Հեթումյանների դեմ վերջացավ առաջինների հաղթանակով, Լևոն Բ թագավորի ժամանակ՝ 1202 թ.։ «Արքայն Լեւոն մինչ կենդանի էր,— գրում է Կիրակոս Գանձակեցին,— էր բերդ մի ի նորա աշխարհին յոյժ անառիկ, որում անուն էր Լամբրօն։ Եւ իշխանն, որ տիրէր բերդին, ապըստամբեաց ի նմանէ, որում անուն էր Հեթում։ Եւ նա բազում անգամ ջանացեալ ոչ կարէր նուաճել զապստամբն։ Ապա յետոյ խորամանկութեամբ... ըմբռնեալ զնա և զորդիս նորա շարշարեալ, եառն ի նա զամրոցն... Եւ գրեաց նզովս «Ո՛չ ևս տալ զնա այլ ումեք իշխանին, բայց միայն արքունի լիցի...[29]»։

Բացի Օշինյան-Հեթումյաններից, 11-րդ դարի երկրորդ կեսին գաղթած հայ իշխաններն էին՝ Նաթանելյանները, որոնք տեր էին Լամբրոնի սահմանակից շրջաններին, իսկ Ատոմյանները կառավարում էին ծովեզերյա շրջանները։ Նրանք հետագայում 12-րդ դարի վերջին մտնում են Կիլիկյան հայկական թագավորության կազմի մեջ[30]։

12-րդ դարի երրորդ քառորդում բյուզանդական կայսրության թուլացման շրջանում, հայ իշխանները պարգևական տիրույթների վրա սկսում են տիրել «հայրենի ժառանգության» իրավունքով, որով այդ կալվածները հիշատակվում են «հայրենիք» և «հայրենի ժառանգություն» տերմիններով։ Վերջիններս օգտագործվել են ֆեոդի իմաստով և հետևաբար նրանց հողատիրությունը ստացել էր ֆեոդալական, հայրենական ժառանգական հողատիրության ձև։ Սակայն այս շրջանում ևս շարունակվում էր նրանց, թեկուզ ձևական, վասալական կախումը բյուզանդական կայսրից և վայելում էին նրա հովանավորությունը։ 12-րդ դարի վերջին քառորդում, բյուզանդական տիրապետության վերացման և անկման շրջանում, թեև այդ կալվածները շարունակվում են կոչվել «հայրենիք» և «հայրենի ժառանգություն» տերմիններով, սակայն այդ տերմինները այժմ արդեն ստանում են իրենց իսկական իմաստը։ Ընդ որում նրանք դառնում են ալոդական-հայրենական, ժառանգական, կալվածներ dominum directum-ի լիակատար սեփականատիրական իրավունքով, քանի որ, ինչպես տեսանք վերևում, նրանց տերերն ու ժառանգորդները կարողանում էին դրանք օտարել, ժառանգել և նվիրել ում որ ցանկանային։ Ստացողը նույնպես դառնում էր ստացած հողի լիակատար սեփականատերը, քանի որ օտարման և ժառանգելու դեպքում ժառանգորդից և ժառանգողից չէր պահանջվում բյուզանդական կայսրի նույնիսկ ձևական վավերացումն ու հաստատումը։

Այսպիսով, հայերի Կիլիկիա տեղափոխվելու ժամանակ, Կիլիկիայում արդեն տիրապետում էին ֆեոդալական հարաբերությունները։ Այստեղ խոշոր չափեր էր ընդունել ֆեոդալական հողատիրությունը։ Այս պայմաններում էլ զարգացավ նաև հայկական խոշոր ֆեոդալական հողատիրությունը, որը իր վրա կրեց բյուզանդական հողատիրության որոշ առանձնահատկությունների կնիքը։

11—13-րդ դարերի հայ և օտար մատենագիրների բազմաթիվ վկայությունները ցույց են տալիս, որ Կիլիկյան հայ իշխանները հողատերեր էին դառնում՝ հողերը զենքի ուժով բյուզան-

---

27 V. Langlois, Essai hist. et critique, p. 49.

28 «Ընդհանրական թուղթք», Երուսաղեմ, 1871, էջ 85—86։ Վերոհիշյալ իշխանական երկպառակության մասին տե՛ս նաև Տարեգիրք, էջ 93։ Հմմտ. Սիսուան, էջ 81։

29 Գանձակեցի, էջ 286։ Տե՛ս նաև Տարեգիրք, էջ 210։

30 Սիսուան, էջ 313։

գական, սելջուկյան և ֆրանկների տիրապետությունից նվաճելու և մյուս կողմից՝ կենտրոնախույս ֆեոդալների հողերը գրավելու և վերջապես մանր գյուղացիության և գյուղական համայնքների հողերի բռնագրավման հաշվին։

Ռուբինյան առաջին հայ իշխաններ Ռուբենը և նրա որդի Կոստանդինը (1095—1100 թթ.) նվաճում են Տավրոսյան լեռներում գտնվող մի քանի բերդեր և հիմնում են Կիլիկիայի առաջին հայկական անկախ իշխանությունը։ Այսպես. «Յայսմ ամի (ՇԽԸ) (1100) մեռաւ մեծ իշխանն հայոց Կոստանդինն որդի՝ Ռուբենայ, և մնաց իւր երկու որդի՝ Թորոս և Լևոն։ Սորա տիրեալ էր բազում բաղաքաց և գաւառաց և ըմբռնեալ ունէր (ընդգծումը մերն է—Ս. Բ.) զմեծ մասն Տօրոս լերինն զոր առեալ բաջութեամբ իւրով ի զօրացն Պարսից (իմա սելջուկներ—Ս. Բ.) սա էր ի զօրացն Գագկայ Բագրատունւոյ՝ որդւոյ Աշոտոյ...»[31]։ Կամ թե Գագիկ Թագավորի հույն իշխանների կողմից սպանվելուց հետո «իշխանքն Հայոց և ամենայն զօրք նոցա լքան և յամենայն տեղից ցրուեցեան, յորոց իշխան մի արեանառու Գագկայ՝ Ռուբէն անուն՝ որ կալեալ ունէր զԿոսիտառայ բերդն», գաղթում է Կիլիկիա և հաստատվում Կոլիմոզոլ գյուղում. «յորում լերինն էին բնակեալ բազումք յազգէն Հայոց՝ զորս զամենեսեան զնոսա առ ինքն կալեալ մեծն Ռուբէն և նօքօք զօրացեալ էառ զլեռնային կողմանսն՝ զՀոռոմմանն անտի ի բաց մերժեալ և զնոցա տեղիսն առեալ», իսկ Կոստանդինի մասին գրում է. «Կոստանդին որ և տիրեաց հռչակաւոր բերդին՝ որ Վահկայ կոչի, յորում տուն եդ ինքեան անդ և զտէրութիւն իւր հաստատեաց և նովաւ բազում տեղիս էառ»[32], կամ թե «իշխան ոմն մեծազգի յիշխանացն Գագկայ Կոստանդին անուն, որդի Ռուբինի, որ զկնի մահուանն Գագկայ Թագաւորին եկեալ էր ի լեառն Տաւրոս և արիաբար քաջութեամբ տիրեալ էր բազում բերդից և գաւառաց»[33] (ընդգծումը մերն է—Ս. Բ.)։

Խիստ հետաքրքիր և կարևոր վկայություն է հետևյալ հիշատակարանը. «Կոստանդին այր քաջ և արդարագործ, որ առ ի բազմաց սիրեցեալ եղև բնակչաց աշխարհին Կիլիկիոյ, որոյ ձեռնտուութեամբ եղեալ ի ծովակողմն Տորոսի, տիրեաց նահանգին այնորիկ, նախ առեալ զդղեակն զՎահկայ, և ապա անտի յառաջ յոլովից տիրեալ տեղեաց, դաշտաց և ամրոցաց, զյոգունս ի Յունաց հարեալ, այլ և Փռանգ զօրուն որ յԱնտիոք նիզակակից եղեալ ընդդեմ իսմայէլեան (սելջուկյան—Ս. Բ.) զօրուն և քաջութիւնս զարմանալիս անտանօր կատարեալ, հիացոյց զարիականայ զունդն, յորոց և կոմսութեան անուն ասացեալ մարգիզ զնա վերակոչէին»[34]։

Վերոհիշյալ վկայությունը պարզում է մի շարք հանգամանքներ։ Այսպես, Կոստանդին իշխանը զենքի ուժով գրավում և տիրում է Կիլիկիային, որին նպաստում էր գրավվող շրջանների հայ բնակչությունը։ Նրանք գործուն կերպով օժանդակում էին Կոստանդինին՝ բյուզանդական տիրապետության դեմ նրա մղած պայքարում։ Նրա հաջողություններին առավել չափով նպաստել է խաչակրաց առաջին արշավանքը։ Խաչակիրները իրենց վրա հրավիրելով սելջուկների և Սիրիայի արաբ էմիրների ուշադրությունը, դրանով թույլ չտվեցին վերջիններին միջամտելու Կիլիկիայի հայերի անկախության համար մղվող պայքարին։

Կոստանդինի հաջորդներ Թորոս առաջինի (1100—1129) և Լևոն առաջինի (1129—1143) ժամանակ շարունակվում է Ռուբինյան իշխանության տերիտորիայի ընդարձակումը ի հաշիվ նոր նվաճումների։ Ուսում Իբն Մանկիզ արաբական պատմիչի վկայությամբ Թորոս Ա. գրավում է Մամեստիա, Ադանա և Անարզաբա քաղաքները[35]։ Թեև Լևոն Ա-ի ժամանակ Կիլիկիան վերագրավվում է բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսի զորքերի կողմից[36], սակայն Կիլիկիայի տերիտորիան ամբողջությամբ վերագրավվում և էլ ավելի ընդարձակվում է իշխաններ Թորոս Բ-ի (1145—1169), Մլեհի (1170—1175), Ռուբեն Բ-ի (1175—1187) և Լևոն Բ-ի (1187—1198) ժամանակ։

Բերենք մի շարք վկայություններ։

«ՇՁԱ (1143 թ.) մեռաւ Լևոն և կրտսեր որդի նորա Ռուբէն ի Կ. Պոլիս մնաց Թորոս անդ, զոր յետ Բ. ամաց եկն և էառ զԱմու-

---

31 Ուռհայեցի, էջ 269—270։

32 Սամուել Անեցի, էջ 116—117։

33 Տարեգիրք, էջ 101—102։

34 Գ. Հովսեփեանց. Յիշատակարանք ձեռագրաց, էջ 265—266։ Ռուբինյան առաջին իշխանների տիրույթների և նվաճումների մասին տե՛ս նաև «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», 1856, էջ 74, 77։ Վահրամ Ռաբունի, Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1959, էջ 108։ Ռաբունի, էջ 53—54։ Ժամանակագրութիւն Մխիթարի, էջ 411։ Guillaume de Tur, IV, ch. XVI, XVII.

35 Revue de l'orient latin., T. II, p. 521. Հմմտ. Ուռհայեցի, էջ 305—306, Սամուել Անեցի, էջ 128։

36 Սամուել Անեցի, էջ 130։

տայն և զԱռիւծ բերդ և զԱահկայն և նովաւ զբոլոր աշխարհն Կիլիկիոյ, զՄսիս և զԱտանայ և զՏարսոն և եհաս մինչև ի գահն Սորիոյ և մինչև ի ծովն մեծ՝ ծագէ ի ծագ տիրեալ... և զիշխանութիւն Յունաց էառ և զնոցին զօրուն՝ իսպառ վանեաց»[37]։

Թորոս Բ-ի հաջորդներ Մլեհի և Ռուբեն Բ-ի տերիտորիալ նվաճումները ավելի են ընդարձակում Ռուբինյան իշխանության պետական սահմանները, ընդ որում այդ իշխանությանն են միացվում Դաշտային Կիլիկիան[38], Սիրիայի սահմանամերձ ամրոցներն ու բերդերը և Իկոնյան սուլթանության սահմանակից Կոկիսոնն ու Բերդուս բերդերը[39]։

Այսպիսով, 12-րդ դարի վերջում ամբողջ Կիլիկիան անցնում է Ռուբինյան իշխանների և նրանցից վասալական ծառայության մեջ մտնող հայ և օտար ֆեոդալների տիրապետության ներքո։ Կիլիկիայի հողերի վրա տիրելու իրավունքը նրանք ձեռք են բերում նվաճելու միջոցով։ Այդ կալվածների վրա նրանք տիրում էին հայրենի ժառանգական իրավունքով։ Վահրամ Ռաբունին 1271 թվականին Լևոն Գ արքայի օծության հանդեսում արտասանած քարոզում մեկ առ մեկ թվարկում է Ռուբինյան իշխանների նվաճումները սկսած Ռուբեն Ա-ից մինչև Լևոն Գ-ը (1080—1271) և ցույց է տալիս, որ Լևոն Գ-ը (1271—1289) «Սեռական հայրենեօք իրաւացի ի նախնեաց ունել զթագաւորութիւն»[40]։

Ասվեց, որ հայ իշխանները իրենց տիրույթները մեծացնում են նաև մանր հողատերերի՝ գյուղացիների հողերի բռնագրավման հաշվին։ Թեև մենք անմիջապես վկայություններ չունենք այդ մասին, սակայն 12-րդ դարի հեղինակներ Սարգիս Շնորհալու և Վարդան Այգեկցու առակներից և քարոզներից երևում է, որ ֆեոդալները չէին բավարարվում հողային նվաճումներով, այլև բռնագրավում էին գյուղացիական հողերը և վերջիններին կախման մեջ էին դնում։ Այսպես, Սարգիս Շնորհալին գրում է. «Թող խաղաղություն լինի աշխարհում և իշխանները ուրիշի արյունը

37 Սամուէլ Անեցի, էջ 129։ Հմմտ. Տարեգիրք, 1956, էջ 164—165։ Թորոսի նվաճումների մասին տե՛ս նաև Միքայել Ասորի, էջ 422։ Սամուէլ Անեցի, էջ 218։ Վահրամ Ռաբունի, Պատմութիւն Ռուբինեանց, էջ 202։ Դանձակեցի, էջ 108, 1961, Երևան։

38 Տարեգիրք, էջ 175, հմմտ. Historiens orientaux du Kamel-el-Tawaryk, 1856, T. I, p. 588.

39 Տարեգիրք, էջ 174։

40 Ռաբունի, էջ 56։

թափեն, տներ չքանդեն և չբռնագրավեն բնակչության ունեցվածքը»[41]։ Գյուղացիական հողերի բռնագրավման մասին է խոսում նաև Վարդան Այգեկցու հետևյալ վկայությունը. «Քանզի,— գրում է նա,— ջանամք և հնարիմք ազգ-ազգի կերպարանաւք և արուեստիւք գիտնականք և տգետք, առաջնորդք և ժողովուրդք, ժողովեմք ինչ և փարթամանամք։ Եւ զոչեմք ասելով՝ թէ իմ սեփական հայրենիք է գաւառս, քաղաքս, գեաւղս, ագարակս, անդաստանս, դրախտս, այգիս, տունս և ապա ջանամք և յափշտակեմք յաղքատացն և յարեմք տուն ի տունս մեր և անդաստան յանդաստանս մեր»[42]։

Կալվածների ընդարձակման մյուս միջոցը հանդիսանում էր կենտրոնախույս ապստամբ ֆեոդալների տիրույթների բռնագրավումը։ Այս մասին մանրամասն կխոսենք հաջորդ ենթագլխում։

Այսպիսով, 11—12-րդ դարերում, Ռուբինյան իշխանության ժամանակաշրջանում հիմք է դրվում ֆեոդալական խոշոր հողատիրության այն ձևին (հայրենական—օտարելի, ժառանգական, լիակատար, անպայման սեփականություն—Ս. Բ.), որը նման է արևմուտքի ալոդական հողատիրությանը։ Հայրենական, ժառանգական, օտարելի հողատիրությունը աճում էր նաև հողերի գնման ճանապարհով, գնված հողերը կոչվում էին «քսակագին», «գանձագին» և դրանք գնողի համար դառնում էին «հայրենիք»—լիակատար սեփականություն։

Այս շրջանում առաջանում և զարգանում են ֆեոդալական և պարգևական հողատիրության ձևերը։

Հողատիրության վերոհիշյալ բոլոր կատեգորիաները զարգանում էին, քանի ընդարձակվում էին Ռուբինյան իշխանների գրաված տերիտորիաները։ Տերիտորիալ նվաճումները առաջին հերթին կատարվում էին ֆեոդալների հողային պահանջները բավարարելու համար։ Հայտնի է, որ հայ թագավորները և մեծ իշխանները բուն Հայաստանից գաղթում էին իրենց հետ բերելով վասալ ազնվական զորավարներին և ազատներին[43]։ Նոր բնակավայրերում նրանց կալվածներով ապահովելը եղել է բյուզանդական կայսրության և հետագայում Ռուբինյան իշխանության առաջնա-

41 Հայկական ՍՍՀ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր, № 1318, էջ 37բ։ Այսուհետև՝ Մատենադարան։

42 Մատենադարան, № 8356, էջ 52ա—52բ։

43 Ուռհայեցի, էջ 217, 305, 323։ Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, 1963, Երևան, էջ 62։ Սամուէլ Անեցի, էջ 58։

հերթ խնդիրը։ Այդ կալվածներից և հողային տիրույթներից բաժին էր հանվում նաև քրիստոնեական ֆեոդալական եկեղեցուն և վանքերին[44]։

11-րդ դարում Միջագետքում, Կապադովկիայում և Սիրիայում կազմավորված հայկական փոքր իշխանությունները երկար չկարողացան պահել իրենց գոյությունը։ Այդ իշխանությունների տիրույթները 12-րդ դարի առաջին քառորդում բռնագրավվեցին խաչակիր իշխանների կողմից։ Հողազուրկ իշխանները ապաստան էին գտնում Ռուբինյան իշխանների մոտ՝ վերջիններս նրանց ապահովում էին հողային տիրույթներով՝ վասալական հիմունքներով։ Այսպես պատահեց Պիրի (Հյուսիսային Սիրիայում—Ս. Բ.) Աբլղարիբ իշխանի հետ, որի տիրույթները խաչակիրների կողմից 1110 թ. գրավվելուց հետո նա գալիս է Թորոս Ա-ի մոտ և ստանում ֆեոդ-կալվածներ նվաճված տերիտորիայից։ Խաչակիր իշխան Բաղդին Բուրժսկու կողմից բռնագրավվեցին նաև գող Վասիլի հաջորդ Բագրատի, Կոստանդին իշխանի Կարկառի և այլոց տիրույթները, որոնց մասին մանրամասն գրում է Մատթեոս Ուռհայեցին, վերջում ավելացնելով. «Զբազում անիրաւութիւնս նոցա կամէի գրել, բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք»[45]։ Խաչակիր իշխանների կողմից կատարված անիրավությունների մասին Սմբատը գրում է. «...Եւ այսպէս անիրաւութեամբ եւ թիւր դատաստանաւ վարէին և յափշտակէին զինչս անմեղաց Հայոց, Յունաց և Ասորւոց»[46]։

Հողային տիրույթներ և գավառներ էին հանձնվում նաև բուն Հայաստանից գաղթած հայ իշխաններին, որոնք վասալական ծառայության մեջ էին մտնում Ռուբինյան իշխանների մոտ։ Այսպես. «Ի թուին ՈԼԷ (1188) եկին որդիքն Զորտուանելի ի Սասնոյ որդիք քուեր տէր Գրիգոր կաթողիկոսի հայոց առ պարոն Լեւոն (Լևոն Բ) իշխանաց իշխան (1187—1198) արք բարեսեռք։ Որ աւագին երեսք զդուստր եղբօրն իւրոյ Ռուբինի՝ զանուանելն Ալիծ և ետ նմա զՄսիս որոյ անուն էր Հեթում, և Շահնշահին երեսք զՍելեկիա»[47]։

Հողային առատ պարգևներ էր տալիս Ռուբեն Բ իշխանը (1175—1187)։ Սմբատը գովասանքով է խոսում նրա առատաձեռնության մասին։ «...Եւ սկսաւ տալ պարգեւս ամենեցուն առատապէս և զժողովեալ գանձս Մլեհին սկսաւ սփռել պէտս և յանպէտս. և արատս պարգև սեղանով զամենեցուն սիրտս և զոգի յինքն յանգոյց. և ուր դիմէր նօքօք՝ քաջապէս մղէր զհոյլս թշնամեացն, որով էառ զՄսիս, զԱդանա և զՏարսոն»[48]։

Առատ պարգևներ էր բաշխում նաև Թորոս Ա. «Շինեաց սա (Թորոս Ա—Ս. Բ.) և զսուրբ ուխտն Դրազարկ և զՄաշկաւորն և զայլս բազումս զոր վերըստին նորոգեաց և պարգևօք փարթամացոյց»[49]։ Մի ուրիշ տեղ կարդում ենք. «Սա վանքեր շինեաց և առատատուր պարգևօք ճոխացոյց»[50]։

Կիլիկիայի Ռուբինյան իշխանության իշխանաց իշխանները նվաճված հողի վրա տիրում էին «հայրենի տիրութեամբ» կամ «հայրենօք» իրավունքով, որոնք օտարում կամ նվիրում էին վանքերին, եկեղեցիներին և հայ ֆեոդալ իշխաններին, տիրույթներ, որոնց վրա վերջիններս տիրում էին ժամանակավորապես, պայմանականորեն՝ սենյորին մատուցած զինվորական և վարչական ծառայության դիմաց, հետևաբար 12-րդ դարում հիմք է դրվում նաև «պարգևականք» (beneficial) հողատիրության ձևին, որը տարբերվում էր ֆեոդալական (ժառանգական, տոհմային) հողատիրությունից։ Սակայն և պարգևական հողատիրությունը և ֆեոդալական հողատիրությունը պայմանական էին, քանի որ երկու դեպքում էլ կալվածները ետ էին գրավվում սենյորի կողմից, եթե վասալը թերանում էր սենյորի նկատմամբ ստանձնած վասալական պարտականությունների մեջ, որոնք այդ շրջանում գլխավորապես զինվորական էին։ Այսպես վարվեց Թորոս Բ տաճարականների հոգևոր օրդենի Կաստիմ ամրոցի նկատմամբ (1150 թ.), այն ժամանակ, երբ վերջինս հրաժարվեց օգնել Թորոս Բ-ին Անտիոքի դեմ նրա մղած պայքարում։ Կաստիմ ամրոցը վերադարձվեց տաճարականներին այն բանից հետո, երբ տաճարականները երդվեցին օգնել հայերին, եթե վերջիններս պետք ունենային դրան[51]։ Այդ ամրոցը նորից վերագրավվում է Մլեհի կողմից և վերադարձվում է միայն Լևոն Բ-ի ժամանակ[52]։

---

44 Ուռհայեցի, էջ 338։ Տարեգիրք, էջ 133։

45 Ուռհայեցի, էջ 339։

46 Տարեգիրք, էջ 131։

47 Նույն տեղում, էջ 201։

48 Տարեգիրք, էջ 192։

49 Սամուել Անեցի, էջ 121,

50 «Արարատ», 1870, էջ 356։ Վահրամ Դաբաղի, էջ 324։

51 *Morgan J. de*, Histoire du peuple Armenien, 1919, p. 234. *Michel le Syrien*, p. 520.

52 *V. Langlois*, Essai, p. 72.

Այնուհանդերձ 12-րդ դարում հողատիրության գլխավոր ձևը եղել է նվաճման և գնման միջոցով ձեռք բերված «հայրենիք» և «հայրենի ժառանգութիւն» կոչված հողերն ու կալվածները, որոնց վրա տիրողները կոչվում էին «հայրենատեր-բերդատեր»։ Վերջիններիս թիվը 1198 թ. թագավորության ստեղծման տարում կազմում էր 45։ Սմբատ Սպարապետը Լևոն Բ-ի թագավորության ծիսակատարություններին ներկայացող 45 ֆեոդալ իշխաններին անվանում է «իշխանք, որք էին բերդատէրք»[53]։ Այս իշխանների տիրույթները առաջացել էին Կիլիկիան՝ հայերի կողմից նվաճման շրջանում (11—12-րդ դդ.)։ Ասվեց, որ «քսակագին», «գանձագին» կալվածները նույնպես դառնում էին հայրենիք։ Իշխանները փողով գնում էին քաղաքներ և բերդեր՝ իրենց շրջակա հողերով։ Այսպես, Տարսոն քաղաքը, 1170—80-ական թվականներին ձեռքից ձեռք էր անցնում Անտիոքի ֆրանկ իշխանների և Ռուբինյան իշխան Ռուբեն Բ-ի միջև։ Վերջապես Տարսոնը մնում է Անտիոքի իշխանի ձեռքին։ 1183 թ. «վաճառեաց (Անտիոքի իշխանը—Ս. Բ.) զայն (Տարսոնը) Ռուբենի ծանր գնով, զի ոչ յուսայր ընդ երկար պահել զայնպիսի մեծ քաղաք, ի միջի կալուածոց հզոր իշխեցողին լեռանց»[54]։

Գնման միջոցով առաջացած հայրենիքի մասին փաստեր կան նաև հոգևոր ֆեոդալական հողատիրության վերաբերյալ։ Այսպես, «ի թվին ՇՂԹ (1140 թ.)։ Զայսու ժամանակաւ սուրբ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս կայր ի փոքրագոյն դղեակն ծովք, ի սահմանս Տլքոյ զոր ասացեալ էր, Սուրբ Հայրապետն գնեաց ի Բրնձէն Անտիոքայ և ԺԵ գեղ շուրջ ի ԿՌ (60000 դահեկան) և եկեալ անդ բնակէր հանդերձ եղբարքն տէր Ներսիսիւ և աշակերտօքն և ամենայն կահիւ Սրբոյ աթոռոյն... և ամենայն ազգայնօքն իւրեանց»[55]։

Սմբատ Սպարապետը հաղորդում է նաև Հռոմկլայի դղյակը Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի կողմից փողով գնելու մասին։ Այն բանից հետո, երբ Ջոսլինի կինը համաձայնվում է Հռոմկլան հանձնել հայրապետական աթոռին, Գրիգոր Պահլավունին «առեալ զամենայն ինչս իւրեանց և զազգ, գնացին ի Հռոմկլայն և ամրացան յահէ անօրինացն, և զկնի ժամանակաց ետուն Ճոսլինին ԺԵՌ

53 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 100։ Հմմտ. նույնը, Տարեգիրք, էջ 298։

54 Միսուան, էջ 267։ Guillaume de Tyr, XXi, p. 24.

55 Տարեգիրք, էջ 161։

(15000) դահեկան ի գինն Հռոմկլային։ Իսկ կոմս Ճոսլինն ետ տէր Գրիգորիսի և տէր Ներսիսի զգիր ձեռին իւրոյ՝ զի Հռոմկլայն յաւիտեան մնասցէ աթոռ հայրապետացն Հայոց. և նոքա եղին զնոյն գիր յարկեղ սրբոյ աթոռոյն, ի յիշատակ ապագայիցն, զի մի ոք եկեալ յազգայնոցն ի խնդիր լինիցի այնմ դղեկին. այլ բարձեալ է զամենայն յիշատակ մարմնեղէն, նոյն ձեռնագրաւն, և հաստատեալ է զհոգևոր յիշատակն այնմ տեղոյ, որոյ ողորմեսցի Տէր»[56] «կայ գիրն մինչև ցայսօր»[57]։

Վերոհիշյալ երկու վկայությունները ուշագրավ են ոչ միայն այն բանի համար, որ ցույց են տալիս քսակագին՝ հայրենիքի առկայությունը, այլև՝ լույս են սփռում նվաճված կալվածների վրա նվաճողի սեփականատիրական իրավունքի մասին և ցույց են տալիս, որ այդ նվաճված հողերի վրա նրանք տիրել են լիակատար սեփականատիրության իրավունքով, նման եվրոպական ալոդական հողատիրության, քանի որ իշխողները իրավունք են ունեցել օտարելու այն, նվիրելու կամ թե վաճառելու միջոցով։ Այդ երևում է նրանից, որ ստացողին կամ գնողին տալիս են գիր-փաստաթուղթ այն մասին, որ վաճառված հողերը, դղյակները և գյուղերը դառնում են գնողի լիակատար սեփականություն։ Նվաճման միջոցով սեփականատեր դառնալու երևույթը թեև նոր չէր հայկական ֆեոդալական հողատիրության մեջ, սակայն այդ երևույթը նոր պայմաններում, արևմտաեվրոպական կամ ֆրանկ պետությունների հողատիրության օրենքների ներգործությամբ ստանում է նոր բովանդակություն։ Օրինակ, նվաճված հողերը նվաճողը կարող էր նվիրել կամ օտարել ում որ ցանկանար, անկախ ստացողի կամ ժառանգորդի անդրանիկ կամ կրտսեր լինելուց[58]։ Այսպիսով, նախկին բյուզանդական կայսրության նահանգ Կիլիկիայում, որտեղ 10—11-րդ դարերում մեծ չափեր էր ընդունել ֆեոդալական խոշոր հողատիրությունը ի հաշիվ մանր հողատիրության, որի բազայի վրա 12-րդ դարում շարունակել էր զարգանալ ալոդական, ֆեոդալական և պարգևական հողատիրության ձևերը. վերջիններս իրենց վրա կրելով արևմտաեվրոպական ֆեոդալական հողատիրության կատեգորիաների և հողատիրության օրենքների որոշ ազդեցությունը, վերջին հաշվով պահպանում էին

56 Տարեգիրք, էջ 168—169։

57 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 82։

58 Assises de Jerusalem, T. I, ch. 149.

հայկական՝ իշխանության-ֆեոդալական, «հայրենիք» և «պարգևականք» հողատիրության ձևերի բովանդակությունը։ Հետագայում 13-րդ դարում էլ ավելի է ուժեղանում ֆրանկ հողատիրության օրենքների ազդեցությունը, վերանում են պարգևական և ֆեոդալական (օտարելի ժառանգական) հողատիրության տարբերությունները և հիմնականում միաձուլվելով դառնում են պայմանական-պարգևական հողատիրություն։

2. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 13—14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ։ ՀՈՂԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԸ

1198 թ. Տարսոն քաղաքում Լևոն Բ հանդիսավոր կերպով թագադրվեց Կիլիկիայի հայոց թագավոր։ Դրանով վերականգնվեց հայերի պետականությունը։ Թագավորության ստեղծումը հնարավոր դարձավ նախորդ շրջանի Կիլիկիայի հայկական իշխանության՝ քաղաքական և տնտեսական կյանքի վերելքով, տերիտորիայի ընդարձակմամբ և երկրում ֆեոդալական հարաբերությունների խորացմամբ։ Թագավորության շրջանում էլ, հատկապես 13-րդ դարում, ֆեոդալական խոշոր հողատիրության հետագա զարգացման և ընդարձակման ուղիները նույնն էին ինչ իշխանության ժամանակ։ Ընդ որում այս շրջանի համար բնորոշը հանդիսանում էր երկրորդը՝ կենտրոնախույս ուժերի հողերի բռնագրավումը, քանի որ արդեն 12-րդ դարում ավարտված էր Կիլիկիայի բուն տերիտորիայի գրավումը։ 13-րդ դարում սահմանային տերիտորիաների գրավումը կրում էր ժամանակավոր բնույթ, քանի որ Եգիպտոսի մամլուկների և Թուրք կարամանցիների չդադարող ասպատակությունների պատճառով, այդ շրջանները ձեռքից ձեռք էին անցնում։ Այնուհետև 14-րդ դարի երկրորդ քառորդից մինչև թագավորության կործանումը (1375 թ.) Կիլիկիայի հայկական պետությունը կորցնում է իր բուն տերիտորիան։

Ինչպես իշխանական, այնպես էլ թագավորության շրջանում հողի սեփականատիրական իրավունքը հիմնված էր նվաճման իրավունքի վրա։ «Երուսաղեմի ասիզները» գրի առնող խաչակիր իրավագետ Ժան դ'Իբելենը հաղորդում է մի հետաքրքիր դեպք, որ առավել ևս իրավունք է տալիս և օգնում հիմնավորելու վերոհիշյալ ենթադրությունը։ Խոսքը վերաբերում է Կոստանդին թագավորահոր և իր ավագ որդու՝ Սմբատ Սպարապետի միջև Կոռիկոսի

տիրույթի շուրջը ծագած վեճին։ Ժան դ'Իբելենը պատմում է, որ Կոստանդին Պայլը (Հեթում Ա թագավորի հայրը, որը հայտնի է թագավորահայր տիտղոսով — Ս. Բ.) ցանկանում է Կոռիկոսի տիրույթը ժառանգել իր որդիներից մեկին՝ Օշինին։ Նրա ավագ որդին՝ Սմբատ Սպարապետը (գունդստաբլը—Ս. Բ.) ընդդիմանում և առաջ է քաշում իր ավագության իրավունքը։ Կոստանդին թագավորահայրը դիմում է Կիպրոսի խաչակիր իրավագետ-օրենսգետներին, որպեսզի վերջիններս պարզություն մտցնեն և հարցը լուծեն ըստ «Երուսաղեմի ասիզների», քանի որ այդ ժամանակ դեռևս Կիլիկիան չուներ իր սեփական օրենսգիրք՝ դատաստանագիրք։ Անշուշտ, սա միակ պատճառը չէր, որ Կոստանդինը դիմում էր Կիպրոսի իրավագետներին, ոչ էլ պատահականություն, այլև, մենք գտնում ենք, որ դա անհրաժեշտություն էր, որովհետև մեծ նմանություն կար խաչակիր ֆրանկ պետություններում տիրող ֆեոդալական հողատիրության առաջացման և զարգացման ուղիների մեջ, այն է՝ երկու երկրներում էլ հողատիրության առաջացման հիմնական միջոցը հողերի նվաճումն էր։ Ընդ որում այդ միջոցով «ձեռք բերված տիրույթների հողատեր ֆեոդալը իրավունք ուներ ժառանգելու այդ տիրույթները, ում որ ինքը կցանկանար»[59], քանի որ տվյալ դեպքում Կոռիկոսը ձեռք էր բերված նվաճման միջոցով, ապա Կոստանդինը կարող էր այդ ժառանգել ում որ կցանկանար, առանց նկատի ունենալու ժառանգորդի ավագությունը։ Սրանով, իհարկե, չէր ժխտվում հողատիրության հայրենական-ալլոդական լիակատար-անպայման սեփականատիրական իրավունքը։ Սակայն «Երուսաղեմի ասիզներում» ասված է նաև, որ այլ միջոցներով ձեռք բերված ավատներից, գլխավոր ավատը անցնում է անդրանիկ որդուն, որով հայրը իրավունք չուներ այն ժառանգելու ընտանիքի մյուս անդամներին, որը, ինչպես տեսանք, արգելված չէր նվաճված ավատների նկատմամբ[60]։

Հողային ժառանգության այս օրենքը, որը վերաբերում է միայն նվաճված հողերին, նման չէ հայկական ֆեոդալական հողատիրության ավագության օրենքին հատկապես Արշակունյաց շրջանում[61]։

---

59 Assises de Jérusalem, ch. 149.

60 Տե՛ս նույն տեղում, էջ 149, 2-րդ մաս։

61 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1881, էջ 118։

Հետագայում Սմբատ Սպարապետը, որոշ չափով պահպանելով հայկական ֆեոդալիզմի հին տրադիցիաները, չի կառչում դրանցից, այլ առաջարկում է թագավորությունը կամ գահը հանձնել արքայորդիներից լավագույնին։ Այդ մասին «Դատաստանագրքի» Ա հոդվածում ասված է. «Եւ թէպէտ ու նոմոսով է՝ զանդրանիկն կացուցանել յաթոռ ինքնակալութեանն, բայց վասն աւգտութեան աշխարհաց իրաւունք է՝ որ աղեկ տեսնու հայրն՝ իր ամէն գաւառաւքն և գաւառապետացն տեսովն և սուրբ եկեղեցովն, որ՝ յոր հաճին յորդոց թագաւորին և գիտնան, որ բարի բարուք լինի և աստուածասէր ու երկիղով և ըռատակն, նա զայն կացուցանեն յաթոռ ինքնակալութեան հարն, որ հովվէ, զեղբարքն եւ զերկիրն»[62]։ Սա նման էր Ֆրանսիայում իրագործվող այն օրենքին, որտեղ թագավորական գահը ժառանգում էր թագավորի որդիներից նա, ով ավելի արժանի էր նրան[63]։

Մի կողմից՝ ֆրանկ խաչակիր պետություններում տիրող ֆեոդալական հողատիրության ազդեցությունը և մյուս կողմից՝ պետական կառուցվածքում Լևոն Բ-ի կողմից մտցված որոշ վարչական բարեփոխումները, որոնք ձևականորեն նմանվում էին ֆրանկ պետություններում տիրող պետական կարգերին, հիմք են ծառայել հայ և օտար պատմաբաններին, Կիլիկիայի ֆեոդալիզմը և ֆեոդալական կարգերը որակավորելու որպես զուտ արևմտաեվրոպական ֆեոդալիզմի կրկնօրինակը։ Ելնելով վերոհիշյալից, նրանք Լևոն Բ-ի բարեփոխումները գնահատել են սխալ դիրքերից։ Այդ պատմաբանների հիմնական թերությունը այն է, որ նրանք այդ երևույթները չեն դիտել իրենց ստեղծման և զարգացման մեջ, ուշադրություն չեն դարձրել ոչ միայն Կիլիկիայի հայկական թագավորության նախորդող իշխանական շրջանի, այլև բուն Հայաստանում տիրող ֆեոդալական հարաբերություններին ընդհանրապես, և ֆեոդալական հողատիրության ձևերին՝ մասնավորապես։ Կիլիկյան հայկական պետության ֆեոդալական հարաբերությունների սոցիալական էությունը ուսումնասիրող Էդուարդ Դյուլորիեն իր աշխատության[64] «Հայկական ֆեոդալիզմի մասին» բաժնում որոշ էքսկուրսիա կատարելով բուն Հայաստանի Արշակունյաց և

62 Դատաստանագիրք, էջ 7։ Աշոտ Գալստյան, Սմբատ Սպարապետ, էջ 141—142։

63 *V. Langlois*, Essai, p. 51.

64 Documents arm., T. I, Introduction.

Բագրատունյաց շրջանների նախարարական սիստեմի և ֆեոդալական հողատիրության շուրջ, այն բացատրում է Հայաստանի լեռնային ռելիեֆով և աշխարհագրական միջավայրով, որպեսզի դրանով ցույց տա ֆրանսիական և հայկական ֆեոդալական հողատիրության ձևերի տարբերությունները։ Չընդունելով հայկական ֆեոդալական հողատիրության մեջ ալլոդական (հայրենական) ֆեոդական, պարգևական և այլ ձևերի առկայությունը, Դյուլորիեն տեսնում էր միայն հողատիրության ալլոդական ձևը։ Նրա կարծիքով Հայաստանի հողատեր նախարարը (հայրենատեր հողատերը) ոչ մի պարտավորություն չուներ թագավորի նկատմամբ, իսկ լավագույն դեպքում նա որևէ մի պաշտոն էր ստանձնում արքունիքում։ Նրա կարծիքով նախարարների և թագավորի հարաբերությունների բնորոշ հատկանիշը անձնականն էր, քանի որ նախարարների տիրույթները ազատ հողեր էին, մի տեսակ ֆրանկ-ալլոդներ մշտական և տոհմական, ժառանգական, լիակատար սեփականության իրավունքով[65]։

Հիմնվելով վերոհիշյալ սխալ ենթադրությունների վրա, նա Կիլիկիայի ֆեոդալական հարաբերություններն ընդհանրապես և ֆեոդալական հողատիրությունը մասնավորապես, ամբողջությամբ վերագրում է արևմտաեվրոպական ֆեոդալիզմի ազդեցությանը։ Ընդ որում ձևական երևույթների և արևմտաեվրոպական տերմինների տակ նա հաճախ դնում է բացարձակ արևմտաեվրոպական բովանդակություն։

Համարյա նույն սխալներն ունեն նաև Վ. Լանգլուայի աշխատությունները[66]։ Վերջինս, թեև ընդունում է հայկական, բյուզանդական և արևմտաեվրոպական ֆեոդալիզմի սինթեզը, սակայն հիմնական հարցում, ֆեոդալական հողատիրության հիմքում, նա տեսնում է միայն վասալի անձնական կախվածությունը սենյորից, անտեսելով այդ կախվածության հողային բնույթը[67]։

Վերոհիշյալ պատմաբանները, նրանց թվում և Ժ. Դը Մորգանը անտեսելով ֆեոդալական հողատիրության և ֆեոդալական հարաբերությունների զարգացումը 11—12-րդ դարերում, նրանց առկայությունը և արևմտաեվրոպական ֆեոդալիզմի ներմուծումը վերագրում են Լևոն Բ-ի անձնական նախաձեռնությանը և Սիրիայի ֆրանկ պետությունների ֆեոդալական հարաբերություն-

65 Documents arm., T. I. Intr. p. LVIII.

66 *V. Langlois*, Essai, hist. et crit., p. 45—47.

67 Նույն տեղում։

ների անմիջական ներգործությանը[68]։ «Անվիճելիորեն,— ասում է Դյուլորիեն,— այս իշխանն էր (իմա Լևոն Բ. — Ս. Բ.) քաղաքական և սոցիալական ռեֆորմների հեղինակը»։ «Իրերի այս նոր կարգը,— շարունակում է նա,— ընդունվեց Կիլիկիայի սենյորների կողմից առանց դիմադրության, որովհետև անհավատների (մոհամեդական հարևանների... Ս. Բ.) սպառնալիքի աճման առկայության պայմաններում, դրանք լավագույն արդյունավետ միջոցառումներ էին, որոնց կարելի էր ողջունել»[69]։

«Ֆեոդալական ռեժիմը այն իմաստով, ինչ իմաստով հասկացվում էր Եվրոպայում,—գրում է Վիկտոր Լանգլուան,—մինչև Լևոն Բ-ի հանդես գալը, գոյություն չուներ Կիլիկիայում»[70]։ Ակնարկելով Կիլիկիայի բյուզանդական շրջանում տիրող ֆեոդալական կարգը, նա ավելացնում է. «Հայերը Կիլիկիայի այդ շրջանում հանդիսանում էին բյուզանդական նահանգների և գավառների կառավարիչներ, ընդ որում, նրանք գտնվում էին բյուզանդական կայսրից անձնական կախվածության մեջ»[71]։ Կարիք չկա շեշտելու, որ վերոհիշյալ բոլոր պատմաբանները կտրում էին Կիլիկիայի քաղաքական-հասարակական կարգը նրա արտադրական հարաբերություններից։

Մենք չենք ժխտում Լևոն Բ-ի գործունեության կազմակերպչական և նրա բարեփոխումների կարգավորիչ նշանակությունը։ Նրա բարեփոխումները հետևանք էին նախորդ շրջանի ֆեոդալական հարաբերությունների տրամաբանական զարգացման, որը թեև հայկական, բյուզանդական և արևմտաեվրոպական ֆեոդալական հարաբերությունների սինթեզ էր, սակայն հիմնականում տիրապետում էին հայկական՝ բուն Հայաստանի ֆեոդալիզմի ավանդույթները, ընդ որում մյուս օտար ազդեցությունները ավելի շատ ձևական բնույթ էին կրում, քան էական։

Մարքսիզմի հիմնադիրները սովորեցնում են, որ ֆեոդալական հասարակարգում հողը հանդիսացել է արտադրության հիմնական միջոցը և իրրև լրիվ սեփականություն, պատկանել է ֆեոդալներին։ Ֆեոդալական հասարակարգում սեփականության գերխավոր ձևը հողային սեփականությունն էր[72], ընդ որում մասնավոր սեփականությունը հիմք էր հանդիսանում հողատիրության հիերարխիկ սիստեմին և նրա պայմանականությանը, որով հողատեր սյուզերենի համար կատարվող վասալական ծառայությունը հնարավորություն էր ընձեռում ոչ միայն շահագործելու, նյութական բարիքներ արտադրողներին՝ հողի իսկական տերերին, այլև ֆեոդալական դասակարգի միջև բաժանելու հողը։ «Հիերարխիան,—գրում է Մարքսը,— հանդիսանում է ֆեոդալիզմի իդեական ձևը՝ ֆեոդալիզմի, միջնադարյան արտադրական հարաբերությունների և շփման քաղաքական ձևը»[73]։

Հողի բաժանման, ֆեոդալական հողատիրության հիերարխիկ սիստեմի կարգավորման նպատակ էր հետապնդում Լևոն Բ-ի ձեռնարկած բարեփոխումները։

Աղբյուրները մեծ գովասանքով են խոսում Լևոն Բ-ի կարգավորիչ գործունեության մասին։ Քանի որ ինքը՝ թագավորը հանդիսանում էր առաջինը հավասար ֆեոդալների մեջ, հետևաբար նրա ռեֆորմները հետապնդում էին ֆեոդալական դասակարգերի շահերի ապահովումը։ Նրա առաջին միջոցառումը եղավ արդեն իրականում գործող, իր թագադրության ներկայացրած 45 հայ և օտար բերդատեր իշխանների հողատիրական իրավունքների հաստատումը։ Բացի 45 ֆեոդալներից, նա առաջ էր քաշում աշքի ընկնող իշխաններին, պարգևելով նրանց հողային նոր տիրույթներ, զինվորական և վարչական ծառայության դիմաց։

Սմբատ Սպարապետը ամփոփելով Լևոն Բ-ի այդ գործունեությունը, գրում է. «...Եւ ուր իմանայր թէ՝ գոյ այր իմաստուն և գիտուն, և աջող ի գործ կամ ի զզինուորութիւն, կամ ի խօսս և ի պատասխանս լղէր և կոչէր խոստմամբ. և հանգուցանէր պարգևօք (ընդգծումը մերն է—Ս. Բ.), յորոյ մի ես եմ Սմբատ Սպարապետ թարգմանող տառիս և պատմութեանս»[74], ապա շարունակում է. «...և այսպիսի խոհեմ իշխանօք և քաջ զօրօք և առատ պարգևօք և ընդարձակ սեղանով յօժար կազմէր ի կռիւ»[75]։ (Ընդգծումը մերն է—Ս. Բ.)։

Ինչպես տեսնում ենք Լևոն Բ «պարգևներ» էր տալիս, այսինքն պարգևական հողեր և կալվածներ է հանձնում, որպեսզի «յօժար կազմէր ի կռիւ», այսինքն զինվորական ծառայության դի-

---

68 *J. de Morgan*, Hist. du peuple arm., p. 248—249.

69 Doc. arm., T. I, LV—LVI.

70 *V. Langlois*, Essai, p. 43.

71 Նույն տեղում։

72 *К. Маркс* и *Ф. Энгельс*, т. IV, М., 1938, стр. 15.

73 Նույն տեղում։

74 Տարեգիրք, էջ 99։ Հմմտ. «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 103։

75 Տարեգիրք, էջ 253։

մաց։ Ըստ որում նվիրատվությունները նոր վասալների օգտին Լևոն Բ կատարում էր ոչ թե ֆեոդի ձևով, այլ բենեֆիցիալ՝ պարգևական ձևով. դա նշանակում էր հող ստացողը պետք է դրա դիմաց կատարեր որևէ զինվորական կամ վարչական պարտականություն։ Ստացած հողը նա չէր կարող ժառանգել կամ օտարել։ Որպես ապացույց, կարելի է բերել բազմաթիվ փաստեր։ Այս տեսակետից հատկանշական է օրգենական հողատիրությունը, որի մասին մենք մանրամասն կանգ կառնենք հաջորդ ենթաբաժիններից մեկում։ Այսպիսով, Լևոն Բ-ի և նրա հաջորդների ժամանակաշրջանում (13—14-րդ դարերում) պարգևական-բենեֆիցիալ հողատիրությունը դարձել էր Կիլիկիայի ֆեոդալական հողատիրության հիմնական ձևերից մեկը։

Դրան զուգահեռ շարունակվում էր 11—12-րդ դարերում նվաճումով ձեռք բերված հայրենական ժառանգական հողատիրությունը, որը այս շրջանում իր զարգացման պրոցեսում ընդունեց այլ տեսք։

Հատկապես խոշորանում և ընդարձակվում էր եկեղեցական-վանքապատկան հողատիրությունը։ Վանքերի և եկեղեցիների ինչքային աղքատության մասին էր բողոքում Ներսես Շնորհալին իր Թուղթ ընդհանրականում, կապելով այն թագավորության չգոյության հետ։ Հոգևորականները աղքատ են, ասում էր Ներսես Շնորհալին, որովհետև «քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գոյ...։ Այլ եմք իբրև զայծիամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի քարանձաւս յայս բնակելով, յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք ի գիւղից կամ յաղարակաց, յորոց ունիմք և ոչ մի»[76]։

Թագավորության ստեղծումից հետո, Լևոն Բ չմոռացավ նաև քրիստոնեական եկեղեցու ֆեոդալ հոգևոր տերերին, ապահովելով նրանց գյուղերով, ագարակներով և կալվածներով, լիակատար սեփականատիրական իրավունքով։ Այդ երևում է Միքայել Ասորու հետևյալ վկայությունից. «Պսակաւորն Հայոց Լևոն բարեվոք կարգաւորէր զաշխարհն իւր՝ լայն իմաստութեամբ և կարող ձեռօք ընդդիմանայր արտաքին թշնամեացն և խաղաղացաւ ի կեանս իւր. շինեալ բազում վանօրայս, և յառաջադոյն շինեալսն ընդարձակելով, առատապէս տալով զպէտս նոցա, այլև արձանագրով սեփականէր նոցա գիւղս և ագարակս, այգիս և անդաստանս, և գրեթէ ետ նոցա զպարարտութիւն երկրին իւրոյ, տալով նոցա և նուիրելով Աստուծոյ արձանագրութեամբ և կտակօք անյուծիւք»[77]։

76 Թուղթ ընդհանրական, էջ 8—9։

ա. Արքունական հողատիրություն

Աղբյուրների վկայությամբ Կիլիկիայի հայկական պետության ամբողջ տերիտորիան համարվում էր թագավորին պատկանող «հայրենի երկիր»[78], իսկ թագավորությունը «տանտիրութիւն Կիլիկիոյ», «սեփական թագաւորութիւն ի հօր յորդիքն», կամ թագավորը տիրում էր «հայրենօք» կամ «հայրենի իրավունքով»[79]։

Թագավորը Կիլիկիայի տերիտորիան անվանում է «իմ ամբողջ տերիտորիան» (per totam terram meam)[80]. մի այլ տեղ՝ «իմ բոլոր բարոնների հողերում» (In omni terra baronum meorum)[81]։

Վերոհիշյալ բոլոր վկայությունները հիմք են ծառայել 19-րդ դարի արևելագետներ Էդուարդ Դյուլորիեյին, Վ. Լանգլուային և Ղ. Ալիշանին եզրակացնելու, որ Կիլիկիայի թագավորները եղել են երկրի հողերի գերագույն սեփականատերը և տիրել են այդ հողերի վրա հողի գերագույն սեփականատիրական իրավունքով։ Այս տեսակետը, ինչպես հայտնի է, զարգացրել և պաշտպանել է Խ. Սամուելյանը իր «Հին հայ իրավունքի պատմություն»[82] արժեքավոր աշխատության մեջ։

Հետաքրքիր է, սակայն, որ բուն Հայաստանի համար հողի գերագույն սեփականատիրական իրավունքը ընդունող Խ. Սամուելյանը, որոշ վերապահումով է նշում այդ սկզբունքի առկայությունը, որոշ վերապահումով է նշում այդ սկզբունքի առկայությունը Կիլիկիայում. «Հողային իրավունքի նույն սկզբունքն ենք տեսնում, գրում է Խ. Սամուելյանը,— Սմբատ գունդստաբլի Դատաստանագրքում, որ գործում էր Կիլիկյան հայ թագավորության մեջ։ Սակայն այստեղ նկատվում է այն փոքրիկ տարբերությունը, որ ֆեոդալ իշխանների հողային իրավունքը որոշ չափով լայնացված է և, ընդհակառակը, սեղմված է թագավորի գերագույն իրավասությունը վասալական իշխանների տիրության ներքո գտնվող

77 Միքայել Ասորի, էջ 504։

78 Ռաբունի, էջ 54։

79 Նույն տեղում։ Դարդել, էջ 108։

80 V. Langlois, Le trésor, p. 109—111.

81 Նույն տեղում, էջ 112—113, 126, 135։

82 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, գլ. 2-րդ, էջ 157—180։

հողերի նկատմամբ»։ Խ. Սամուելյանը առանց խորանալու իր եզրակացությունների մեջ, ավելացնում է. «Այդ երևույթը պետք է բացատրել Կիլիկյան հայ պետության տեղական առանձնահատկություններով և մանավանդ նրա պետական կազմի բնույթով։ Կիլիկիայի հայ ֆեոդալական կառույցը զգալի չափով ազդված էր խաչակրաց արշավանքների և Արևմտյան Եվրոպայի հետ ունեցած առևտրական հարաբերությունների շնորհիվ, արևմտաեվրոպական ֆեոդալիզմի սկզբունքներից»[83]։

Հիմնական փաստը, որի վրա հենվելով ֆրանսիացի պատմաբանները հիմնավորել են հողի գերագույն սեփականատիրական իրավունքի առկայությունը Կիլիկիայում, դա այն է, որ 1215 թ. Լևոն Բ-ի կողմից ջենովացիներին տրված առևտրական շնորհագրերում թագավորը թույլ է տալիս նրանց շրջագայելու ամբողջ երկրում արտոնված իրավունքներով, բացի չորս սահմանապահ խոշոր սենյորների տերիտորիաներում։ Նույն շնորհագրում նշված է, որ ջենովացիները նույնպիսի իրավունքներ կստանան նաև այդ տերիտորիաների նկատմամբ, եթե վերջիններից որևէ մեկը միացվի թագավորական տերիտորիային[84]։ Եվ քանի որ, եզրակացնում են վերոհիշյալ պատմաբանները, հետագայում այդ չորս սենյորները չեն հիշատակվում, հետևաբար այդ իշխանությունները միացված պետք է լիներին թագավորական դոմենին։ Ընդ որում, նրանց կարծիքով, թագավորն ուներ անսահմանափակ իշխանություն Կիլիկիայի ամբողջ տերիտորիայի վրա՝ հողի գերագույն սեփականատիրական իրավունքով[85]։

Նախքան բուն հարցի քննարկումը նախօրոք ասենք, որ թագավորի անսահմանափակ իշխանության իրավունքը ոչ թե հիմնված էր Կիլիկիայի հողերի նկատմամբ նրա ունեցած գերագույն սեփականատիրական իրավունքի վրա, այլև թագավորը կանգնած լինելով հողատիրության բոլոր կատեգորիաների գլուխը, որպես միավորող անձի, առաջինն էր Կիլիկիայի տերիտորիան նվաճող բոլոր ֆեոդալների մեջ և իրագործում էր նվաճման միջոցով հողի վրա տիրելու իրավունքը։

Պետք է ընդգծել մի ընդհանուր հանգամանք ևս։ Եթե Կիլիկիայում ի տարբերություն Երուսաղեմի թագավորության միապետի իշխանությունը ավելի ուժեղ էր, հատկապես 13-րդ դարի երկրորդ կեսին, 14-րդ դարի առաջին քառորդում, սակայն 14-րդ դարի երկրորդ կեսին թագավորը իշխում էր թագավորական խորհրդի միջոցով (regis)[86] և նրա համաձայնությամբ (Assense Curiae)[87]։ Թագավորը ավելի շատ նման էր Երուսաղեմի թագավորին, որը առաջինն էր հավասարների մեջ, այսինքն իշխում էր judicium parum — իրավունքով[88]։ Սակայն անգամ 13-րդ դարում թագավորի իրավունքը որպես բարձրագույն իշխողի ոչ միայն հողի և ջրի, այլև մարդկանց անձի վրա, կոնկրետ բովանդակություն չի ունեցել, այլ եղել է ընդհանուր իրավական հասկացողություն և չի տարածվել բոլոր տեսակի կալվածների վրա։

Ընդունելի չէ հողի գերագույն սեփականատիրական բացարձակ իրավունքի վերաբերյալ վերոհիշյալ գիտնականների եզրակացությունը, հիմնականում հետևյալ պատճառներով։

Այդ պատճառներից գլխավորը այն է, որ բացի արքունական՝ լիակատար, անպայման ժառանգական հողատիրությունից, գոյություն ուներ նաև նույն տիպի իշխանական և վանքապատկան՝ հողային սեփականություն, որը նման էր բուն Հայաստանի «հայրենիք» հողատիրությանը կամ արևմտաեվրոպական՝ ալոդին։

Մեր վերոհիշյալ եզրակացության հիմք է ծառայում այն, որ առավել խոշոր ֆեոդալները՝ հայրենատեր-բերդատերերը, հողային նվիրատվություններ են կատարել և օտարել կալվածներ առանց թագավորի հաստատման։ Այսպես, 1233 թ. Կոստանդին Բարձրբերդցին՝ Լամբրոնի սենյորը, Կուվեյրա ամրոցը նվիրում է հյուրընկալների օրդենին[89], առանց թագավորի համաձայնության։ 1271 թ. Սարվանտիքարի սենյոր Կոստանդինը՝ Ճոֆրեի որդին, առանձին հրովարտակով առանց թագավորի հաստատման, Տևտոնյան օրդենին շնորհում է իրավունք իր կալվածքի սահմաններում ունենալու բաժտուն, և այդ արտոնագրում իրեն անվանում է Սարվանտիքարի սենյոր։ Այդ շնորհագրի տակ ստորագրում են մեծ իշխաններից մեկը և կալվածքի հետ առնչություն ունեցող մի քանի բարձրաստիճան ձիավորներ[90]։

---

83 Նույն տեղում, էջ 140։

84 *V. Langlois*, Le trésor, p 126—127 և Intr.

85 *V. Langlois*, Essai, p. 46—60.

86 *V. Langlois*, Le trésor, p. 106—107։ Դարդել, էջ 53—54, 107։

87 Նույն տեղում։

88 Այս հարցի մասին մանրամասն տես սույն աշխատության 2-րդ գլխի 2-րդ ենթաբաժինը։

89 «Բազմավեպ», 1873, էջ 108—112։

90 *Ed. Dulaurier*, Doc. arm., Intr., p. LXXIV.

Որ Կիլիկիայի ֆեոդալները տիրել են իրենց տիրույթների վրա հայրենական և տերունական իրավունքով, այդ ցույց է տալիս նաև Սմբատի կողմից Լևոնի թագադրության ներկայացած 45 ֆեոդալներին տրված հորջորջումը՝ «Իշխանք, որք էին բերդատէրք այս են՝ պարոն Ադամ, տէր Բագրասի, պարոն Օստէր, տէր Ճրկերի, պարոն Արեգ, տէր Համուսայի...» և այլն[91]։

Ինչպես նկատելի է, Սմբատը օգտագործում է իշխան, պարոն, բերդատեր տերմինները, ընդ որում բոլոր իշխանները հորջորջվում են պարոն և տեր տերմիններով։ Նույնը մենք տեսնում ենք Սսի 1307 թ. և Ադանայի 1316 թ. եկեղեցական ժողովներին մասնակցած խոշոր ֆեոդալների հորջորջումներում, որտեղ նրանք անվանվում են նույնպես պարոն և տեր տերմիններով։ Այսպես, «Պարոն Օշին՝ Կապանի տէր, պարոն Օշին՝ Գունդստաբլ՝ Գանջիի տէր, պարոն Սմբատ, մարիշալ՝ Ասկուրասի տէր, պարոն Օշին՝ Կոպիտառի տէր...» և այլն[92]։

Տեր և իշխան տիտղոսները միևնույն ֆեոդալի համար օգտագործված են նաև այլ առիթներով։ Այսպես, «...դներ (խոսքը Լևոն Բ-ի մասին է—Ս. Բ.) և դաստիարակ տղային իւրոյ զմեծ իշխանն Սիրադան, որ էր տէր բաղում բերդից և գաւառաց»[93]։

Հետևաբար, տեր և իշխան են անվանվում այն հայրենատեր՝ բերդատեր ֆեոդալները, որոնք մասնակցել են Կիլիկիայի նվաճմանը, իսկ ավելի ուշ սերելով Կիլիկիան նվաճող իշխանական տոհմերից, տիրել են իրենց կալվածների վրա հայրենական ժառանգական իրավունքով։ Ընդ որում, տեր և իշխան տերմինները լինելով համազոր, դրանք ամենևին էլ նույնը չեն և արտահայտում են տարբեր բովանդակություն։ Տերը արտահայտում է տվյալ անձի հողային սեփականատիրական իրավունքը, իսկ իշխանը, նրա՝ տվյալ հողի վրա ունեցած քաղաքական իշխանությունը, որը ավելի ցայտուն է երևում 14-րդ դարում։

Հետաքրքիր է, որ Սմբատ Սպարապետը իր Տարեգրքի վերոհիշյալ վկայության շարունակությունում, Լևոն Բ թագավորի վասալական-զինվորական ծառայության մեջ մտնող և հողային պարգևներ ստացող իշխաններին չի անվանում «տեր», այլ բավարարվում է նրանց հորջորջելով «իշխան» և «սիր» տիտղոսնե-

91 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 100—102։

92 Galanus, T. I, p. 460, Զամչյան, 3, էջ 310։

93 Տարեգիրք, էջ 222։

րով։ Այսպես, նա գրում է. «...Եւ յետ Պեմունտ բրնձի (իշխան—Ս. Բ.) մահուան բաղում զինուորք եկին ի ծառայութիւն թագաւորին Լևոնի. և իշխանք ընդ նոսա որոց անուանքն են այսոքիկ. Սիր Ուլիվեր Ջամբլայն. Սիր Ռօճել Տմունթն...» և այլն[94]։

Վերջիններիս նկատմամբ Սմբատ Սպարապետը չի օգտագործում տեր տիտղոսը, որովհետև նրանք ստացած պարգևների՝ հողերի վրա տիրել են «dominum utile» — հողօգտագործման իրավունքով, սենյորի նկատմամբ մատուցած զինվորական ծառայության դիմաց։ Այդ հողերի վրա «dominum directum» լիակատար սեփականության իրավունքը, այս դեպքում վերապահվում էր հողը պարգևող անձին՝ թագավորին։

Այսպես, ուրեմն, Կիլիկիայում գոյություն են ունեցել «հայրենատեր-բերդատերեր» և «ոչ հայրենատեր-բերդատերեր»։ Սրանց մասին Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքում գրում է. «Ոսկէհանքն թագաւորին է, և արծաթհանքն ի կէս է ընդ երկրին պարոնն և ընդ թագաւորն. և երկաթն ու պղինձն ու կլայեկն՝ յորում երկիր գտնվի այնոր է»[95]։

Ոչ-հայրենատեր-բերդատերերի իրավունքի մասին, 3-րդ հոդվածում ասված է. «Եթէ իշխանի գաւառն՝ կամ յերկիր որ ընդ թագաւորի հնազանդութեամբն լինի՝ ոսկէհանք գտվի, նա թագաւորին է. և թէ արծաթահանք նա թագաւորն է։ Ապա անճարակ բաժին հասնի երկրին տիրոջն, զինչ ցեղ որ կարենան հաշտել՝ որ երկուքն լինին շահած»[96]։

Ակնհայտ է, որ առաջին հոդվածում խոսքը վերաբերում է հայրենատեր-բերդատերերին, ընդ որում նրանց բաժինը հողի ընդերքի հարստությունից ավելի մեծ է, քան երրորդ հոդվածում ակնարկված ոչ-հայրենատեր-բերդատերերի բաժինը։ Եթե այդ այդպես չլիներ, Սմբատը կարիք չէր ունենա երկրորդ անգամ հիշատակել և սահմանել հանքերից ստացված եկամուտների չափը։

Ինչ վերաբերում է հայրենատեր-բերդատերերի կալվածքները թագավորի կողմից բռնագրավելուն, այդ նախատեսվում էր միայն այն դեպքում, երբ հայրենատեր-բերդատերը կատարում էր պետական ծանր հանցանք։ Հանցանք թույլ տվողի հողերի բռնագրավումը իրագործվում էր իշխանաց իշխանի և մյուս իշխանների

94 Տարեգիրք, էջ 211։

95 Դատաստանագիրք, էջ 13։

96 Նույն տեղում, էջ 15—16։

մասնակցած՝ դիվանի կամ բարձր ատյանի համաձայնությամբ և վճռով[97]։ Այսպես վարվեցին 1202 թ. Լամբրոնի Օշինյան-Հեթումյան տիրույթների նկատմամբ, երբ նրանց տերը ապստամբել էր Լևոն Բ-ի դեմ և անցել էր Կիլիկիայի թշնամիների կողմը, որի հետևանքով նրա՝ Լամբրոնի տիրույթը միացվեց «յարքունիս»[98]։

Նույն վճռին արժանացան Կոստանդին Բարձրբերդցի իշխանի տիրույթները, երբ վերջինս ապստամբելով Հեթում Ա թագավորի դեմ, փախել էր Իկոնիայի սուլթանի մոտ[99]։

«Անտիոքի ասիզներ»-ում ընդգծված է պարոններին պատկանող երկու տիպի հողային տիրույթ։ Երկուսն էլ կոչվում են «Հայրենատան»։ Առաջին տեսակը դա այն ունեցվածքն է, որ լիճ ճորտը ստանում է սենյորի նկատմամբ մատուցած ծառայության դիմաց, իսկ երկրորդը «անծառութիւն հայրենատան կենա, թէ հայրենեաց լինի և թէ գնորդի (այսինքն քսակագին— Ս. Բ.) նա կարէ տալ առ այն էլ զինչ իր պիտի»[100]։

Երկրորդը՝ լիակատար, անպայման, օտարելի ժառանգական սեփականություն է և նման է ալլոդին (franc-alleux)։

Հովհան Դարդելը, Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն Զ-ի խոստովանահայրը, պատմում է մի հետաքրքիր դեպքի մասին, որը պատահել էր հարևան Կիպրոսի թագավորությունում։ Ինչպես հայտնի է, այստեղ գործում էին Երուսաղեմի և Անտիոքի ասիզները, ընդ որում Կիպրոսի թագավորը իրավունք չի ունեցել վարվել հայրենատեր-բերդատեր իշխանների կալվածների հետ ինչպես ինքն էր ցանկանում։ Պետրոս Ա թագավորը Կիլիկիայի թագավոր Գվիդոն Լուսինյանի (1343—1344) հոր սվատի մի մասը առանց ավատի խնամակալ իշխանի համաձայնության նվիրում է տիկին Զաբել Լուսինյանին։ Խնամակալը և ժառանգորդները բողոքում են Պետրոս Ա-ի հաջորդ Պետրոս Բ-ին ասելով. «Աւատն չէր սեփական ինչ թագաւորին, վասն որոյ և չէր նմա մարթ տալ ումեք զպատկանեալն այլում. և եթէ տուեալ իսկ իցէ՝ առ ոչ ինչ զօրէ պարգևն»։ Այնուհետև շարունակում է. «...Եւ յաւել ասէ թէ կազմ եւ պատրաստէ ինքն ցուցանել՝ թէ որպէս չէր պատկան արքայի շնորհել ումեք զայն աւատ։ Եւ ժողովոյն հասու եղեալ

97 Դատաստանագիրք, էջ 81—82։

98 Գանձակեցի, էջ 286։

99 Նույն տեղում, էջ 272։

100 Assises d'Antioche, 1876, p. 20—21.

իրացս ստուգութեան վճռեաց զի չունէր արքայն Պետրոս իրաւունս պարգևելոյ ումեք զայն և թէ՝ աւատն այն պարտ էր դառնալ ի բնիկ ժառանգորդսն։ Եւ այսպէս կորոյս տիկինն զաւատն, յայնմօրէ և առ յապա»[101]։

Կիպրոսի օրինակը շատ կարևոր է բացահայտելու համար Կիլիկիայի հողատիրության մեջ իշխող օրենքները, քանի որ 13—14-րդ դարերում Կիլիկիայի ֆեոդալական հարաբերությունների վրա ներգործում էր խաչակիր պետությունների ֆեոդալական օրենսդրությունը։ Մեզ հայտնի է նաև Կոռիկոսի տիրույթի օրինակը։ Սակայն դա դեռևս չի նշանակում, որ Կիլիկիայում հիմնականում տիրապետում էր արևմտաեվրոպական ֆեոդալիզմը։ Թեկուզ վերցնենք հողի գերագույն սեփականատիրության հարցը։ Խ. Սամուելյանի վերոհիշյալ ենթադրությունը Կիլիկիայի նկատմամբ՝ բխում է նրա նախորդ սխալ ենթադրությունից, որ իբր թե բուն Հայաստանում Արշակունյաց, Բագրատունյաց և Զաքարյանների շրջանում տիրապետում էր հողի պետական կամ թագավորի, որպես սյուզերենի, հողի սեփականատիրական իրավունքը[102]։ Այս տեսակետի սխալ լինելը ապացուցել են պատմաբաններ՝ Ս. Ա. Պողոսյանը[103], Հ. Ութմաղյանը, Վ. Բարխուդարյանը և ուրիշներ[104]։ Նույնը պետք է ասել ֆրանսիացի գիտնականներ Վ. Լանգլուայի և Էդ. Դյուլորիեի ենթադրությունների մասին։ Վերջիններս ընդունում են հողի գերագույն սեփականատիրության գոյությունը Կիլիկիայում։

Վերը ասվածից կարելի է եզրակացնել, որ Կիլիկիայում բացի թագավորական, հայրենական, ալլոդական, ժառանգական հողատիրությունից գոյություն է ունեցել նաև նույն տիպի իշխանական, հայրենատեր-բերդատերերի հողատիրությունը։ Ուստի այս պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել թագավորի, ամբողջ Կիլիկիայի տերիտորիայի՝ հողի նկատմամբ գերագույն սեփականատիրական իրավունքի առկայության մասին։ Թագավորը կանգնած լինելով հողային բոլոր կատեգորիաների գլուխ, որպես միավորող անձ, նրա իշխանությունը չէր հիմնվում հողային գե-

101 Դարդել, էջ 63—64։

102 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, էջ 157—180։

103 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., էջ 77—87։

104 Հ. Մ. Ութմաղյան, Սյունիքը 9—10-րդ դդ., էջ 135—142։

բագույն սեփականատիրական իրավունքի վրա, այլ կրում էր միայն իրավական բնույթ։

* * *

Կիլիկիայում թագավորին պատկանող և արքունիքի տրամադրության տակ գտնվող հողերն ու կալվածները, գավառներն ու քաղաքները, բերդերն ու ամրոցները կոչվել են արքունի[105], տերունի կամ թագավորական (regis)[106] կալվածներ։ Թագավորական կալվածատիրությունները, ինչպես մենք տեսանք նախորդ բաժնում, ստեղծվում էին դեռևս Ռուբինյան իշխանության ժամանակաշրջանում՝ բյուզանդական նախկին նահանգի հողերը գրավելու հաշվին։ Սկսած Լևոն Բ-ից, արքունի տիրությունները ընդարձակվում էին գահի նկատմամբ ապստամբ և կենտրոնախույս իշխանների հողերի հաշվին։

Մատենագրական և վավերագրական աղբյուրները հարուստ տեղեկություններ են պահպանել ապստամբ իշխանների տիրությունները «յարքունիս» գրավելու մասին։ 1196 թ. Ասկուրաս բերդը իր շրջակա հողերով հանդերձ գրավվում և միացվում է թագավորական կալվածներին և ապա հանձնվում գահին առավել հավատարիմ Նաթանելյաններին[107]։ Այդ բերդը հիշատակվում է որպես Հեթումյանների տիրություն[108]։ Հայտնի է նաև Բյուզանդիայի վասալ Լամբրոնի Հեթումյանների վախճանը, երբ 1202 թ. Լամբրոնը միացվում է «յարքունիս»[109]։ Լևոն Բ-ն այսպես վարվեց նաև Մեծ Քարի տեր Գեորգ իշխանի տիրությունների նկատմամբ 1208 թ.[110]։ Արքունի տիրություններին միացվեցին նաև՝ Հեռի Սևաստիոսի Կամարտիաս բերդ-կալվածքը՝ 1207 թ.[111] և Աւգ Տէր-Տիրերանի ճկեր կալվածք-ամրոցը՝ 1214 թ.[112]։

Ղ. Ալիշանը «Սիսուանում» բերում է Կիլիկիայի բազմաթիվ

105 Գանձակեցի, էջ 286։

106 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 109։

107 Սիսուան, էջ 128։

108 Կղէմես Գալանոս, Մատեանութիւն Հայոց եկեղեցւոյն ընդ եկեղեցոյն Հռովմայ, մասն 1-ին, Հռոմ, 1690, էջ 460։ Այսուհետև Կղէմես։

109 Գանձակեցի, էջ 286, «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 103։

110 Ա. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի, էջ 314—316։

111 Սիսուան, էջ 276։

112 Նույն տեղում, էջ 438։

բերդերի և նրանց տարբեր ժամանակաշրջաններում տարբեր հայրենատեր-բերդատերերի տիրություններ լինելու ցուցակները[113]։ Եթե ուշի-ուշով համեմատենք Սմբատ Սպարապետի՝ Լևոն Բ-ի թագավորության ներկայացրած 45 ֆեոդալ հայրենատեր-բերդատերերի ցուցակը[114] 14-րդ դարի սկզբում՝ 1307 թ. Սսի և 1316 թ. Ադանայի եկեղեցական ժողովներում մասնակցած ֆեոդալների ցուցակների հետ[115], մենք կտեսնենք, որ շատ բերդերի և ամրոց-կալվածների տերերը փոխվել են։ Սա ինքնին ցույց է տալիս, որ 13-րդ դարում ֆեոդալական երկպառակությունների և կենտրոնախույս իշխանների ապստամբության հետևանքով, վերջիններիս տիրությունները վերագրավվել և միացվել են արքունի տիրություններին և այնուհետև՝ հանձնվել գահին առավել հնազանդ իշխաններին։ Հետաքրքիր է նշել, որ այդ կալվածների մեծ մասը առանձին փոքր իշխաններից գրավվելուց հետո միավորվում և կենտրոնացվում են դիրքով մեծ իշխանների ձեռքում։ Վերջինների մեջ մեծ թիվ էին կազմում արքունի տան գահաժառանգները։

1264 թ. Սմբատի տիրությունները աճում են։ Այսպես, 1264 թ. Հեթում Ա, երբ իր զորքով օգնության էր հասել Հուլավու խանին, այդ զորքերի մեջ իր մասնակցությունն էր ունեցել Սմբատ Սպարապետը իր իշխանական զորքով։ Այդ մասին Սմբատը գրում է. «Իսկ թագաւորն Հայոց Հեթում հանդերձ հարազատօք իւրովք Սմբատիւ, որ և տէր զոլով անմատչելի դղեկին Պապեռոնին, Սրմբատայ Կլային, Ատուսայ, Ֆարխնուցն, Պապատուին, Սիկոյ և Մուռանդնին, և Օշնի՝ որ և նա տէր զոլով գերագոյն դղեկին Կուռիկոսոյ, Միտիզոնին, Մանիօնին, Կանչոյն և այլ փոքրագոյն ամրոցաց»[116]։ (Օշինը, 13-րդ դարի 30-ական թվականներին տիրում էր միայն Կոռիկոսին)[117]։

Հատկապես արտոնյալ պայմաններով հողային տիրություններ էին ստանում արքունի տան դուստրերը՝ որպես «օժիտ-տուայր»։ Խաչակիր պետությունների և արևմտաեվրոպական ֆեոդալական սովորությունների՝ Երուսաղեմի և Անտիոքի ասիզների օրենքների համաձայն, դստեր օժիտը, որը սովորաբար կազմված էր լինում՝ արքունի կալվածներից կամ կալվածներից ստացած եկամուտնե-

113 Նույն տեղում։

114 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 100—102։

115 Կղէմես, մասն 1-ին, էջ 458—503։ Չամչյան, հ. 3, էջ 310։

116 Տարեգիրք, էջ 244—245։

117 Assises de Jérusalèm, ch. 149.

րից՝ հողային ռենտաներից, ազատվում էր հարկերից և սենյորի նկատմամբ՝ վասալական պարտականություններից։ Այսպես, Հեթում Ա-ի դուստր Ֆենիայի տուայր-օժիտը—կալվածքը ազատված էր բոլոր տեսակի հարկերից և նույնիսկ արքունի բանակին ձիավորներ տրամադրելու պարտականություններից[118], որը այնքան անհրաժեշտ էր անընդհատ պատերազմների մեջ գտնվող Կիլիկիայի հայկական պետության համար։

Կիլիկիայում, ինչպես և Երուսաղեմի թագավորությունում, արքունի տան կալվածներն ու տիրույթները կամ արքունի դոմենը պատկանում էին ամբողջ արքունի տան անդամներին, սակայն, հիշատակվում էին իշխող թագավորի անունով։ Հողային նվիրատվությունների տակ ստորագրում էին, բացի թագավորից, արքունի տան անդամները՝ թագավորի մեծ եղբայր իշխանը և մեծ իշխանները[119]։

Հողային նվիրատվություններ կատարվում էր բացի թագավորից նաև թագավորական տան անդամների, ասենք՝ թագուհու անունով։ Հատկանշական է 1236 թ. Տեռոնյան օրդենի օգտին կատարված հողային նվիրատվությունը, որը վերնագրված է այսպես. «Հրովարտակ Հեթմոյ Ա-ի և Զապել Տիկնոջ, որով պարգևեն զՀարուն եղբարց տանն Ալամանաց»[120]։

Հետաքրքիր է, որ Լևոն Բ-ի ժամանակ կատարված հողային նվիրատվությունները հաստատվում և վերահաստատվում էին Լևոն Բ-ի կենդանության ժամանակ՝ թագաժառանգ Ռուբեն Ռայմոնդի, իսկ հետագայում՝ Հեթում Ա-ի (1226—1270 թթ.) կողմից[121]։

Արքունի տան տիրույթների մեջ էին մտնում բազմաթիվ բերդեր իրենց շրջակա գավառներով և գյուղերով, ջրարբի ու անջրդի հողերով, դաշտերով, մարգագետիններով և անտառներով։ Հողային տոնացիաներում հիշատակվում են բազմաթիվ արքունի բերդեր, որոնք հանձնվում էին վասալներին որպես պարգև (bénéficium)։ Այդպիսի բերդերից էին Նորբերդը և Կամարտեզիան[122]

118 V. Langlois, Essai, hist., p. 51.

119 S. Paoli, Codice diplomatica. էջ 47, V. Langlois, Le trésor, p. 114—115, 123—125, 140։

120 Սիսուան, էջ 202։ V. Langlois, Le trésor, p. 141—142.

121 V. Langlois, Le trésor, տե՛ս հողային նվիրատվությունները։

122 V. Langlois, Le trésor, p. 113—114.

Սելևկիայում, Լարանդան[123] և Ադամադոնան, Մլունը[124], Վանները, Ճկերը և Կանամելը[125], Կաստիմը[126] և Հարոնիան[127] և բազմաթիվ այլ բերդեր և ամրոցներ[128], որոնք պատկանում էին թագավորական տան անդամներին։ Վերջիններս արքունիքում ստանձնում էին իշխանաց իշխանի, մեծ իշխանի, սպարապետի, մարեշալի, Սսի արքեպիսկոպոսական տայանի նախագահի, ջանցլերի և գործակալական այլ բարձր պաշտոններ[129]։

Բացի բերդերից և գավառներից, ինչպես ասվել է, արքունի տանն էին պատկանում նաև Կիլիկիայի մեծ քաղաքներն ու նավահանգիստները՝ Սիս մայրաքաղաքը[130], քաղաքներ Տարսոնը[131], Մամեստիան[132], Ադանան[133] և Անազարբան[134], նավահանգիստներ՝ Այասը, Կորիկոսը[135] և ուրիշներ[136]։ Վերոհիշյալ քաղաքներն ու նավահանգիստները ուղղակիորեն հիշատակվում են որպես թագավորական (regis) քաղաքներ։ Որ այդ քաղաքներն արքունական էին, այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Լևոն Բ-ի

123 Նույն տեղում, էջ 115—116։

124 Նույն տեղում, էջ 118—119։

125 Նույն տեղում, էջ 123—125։

126 Սիսուան, էջ 438—439։

127 V. Langlois, Le trésor, p. 141—142.

128 Տարեգիրք, էջ 244—245։ Կղեմես, էջ 455—458, 474, 503։ Չամչյան, հ. 3, էջ 310։

129 Տե՛ս սույն աշխատության 2-րդ գլխի «Գործակալություններ» ենթաբաժինը։

130 Սիսուան, էջ 204։ Կարգս եկեղեցւոյ, էջ 578։ Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք, էջ 131։

131 V. Langlois, Le trésor, p. 106, 120.

132 Սիսուան, էջ 250։ Տարեգիրք, էջ 201։ Մամեստիան 1188 թ. Լևոն Բ իշխանի կողմից տրված էր Հեթում Մամիկոնյան իշխանին, իսկ հետագայում միացվել էր յարքունիս։

133 Սիսուան, էջ 255—258։ Վիլլեբրանդ Օլդենբուրգցին Ադանան կոչում է „civitatis regis", իսկ ժամանակագիրներից մեկը, 1316 թ. անվանում է այն «հոյակապ թագավորական քաղաքն Ադանայ». Կղեմես (Գալանոս), Միաբանութիւն... մասն 1-ին, էջ 360։

134 Սիսուան, էջ 239։ Լևոն Բ-ն 1187 թ. կառուցում է Անազարբայի միջնաբերդը, թողել է արձանագրություն միջնաբերդի պատերի վրա, որտեղ Անազարբան կոչում է «մայրաքաղաքն Անավարզայ»։ Լևոնը հողային տոնացիաներում այն անվանում է „Civitatis meum segnum".

135 Марко Поло, Путешествие, стр. 278.

136 V. Langlois, Le trésor, p. 122—123.

թագաղրության ներկայացած ֆեոդալների ցուցակում[137] և 1307 թվի Սսի և 1316 թ. Ադանայի եկեղեցական ժողովների ցուցակներում[138] չեն հիշատակվում որպես իշխանական տիրույթներ։

Սմբատի Դատաստանագրքում նոր քաղաքների շինարարությունը վերապահվում է թագավորին։ Այնտեղ կարդում ենք. «Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ դեկան շինել՝ եւ քաղաք և բերդ՝ և մեծ գետոց կանդարայ՝ և հոգէտուն ի վերայ մեծ ճամփնի և կայենի երկրին[139]»։ Իսկ իշխանները կարող էին այդ անել միայն թագավորի թույլտվությամբ[140]։

Արքունի դոմենի մեջ էին մտնում նաև վանքերն ու եկեղեցիները։ Դրանց առաջնորդությունը հաճախ հանձնվում էր արքունի տան անդամներին։ Այսպես, Դրազարկի առաջնորդ և Սսի արքեպիսկոպոսն էր Հեթում թագավորի երեց արքաեղբայր Բարսեղը[141], Կոներ անապատի առաջնորդն էր արքաեղբայր Հովհաննեսը[142]։ Վերջինս առաջնորդ է եղել նաև Ակներ վանքում[143]։

Կիլիկիայի թագավորի հողատեփականատիրական իրավունքը տարածվում էր ոչ միայն «արքունի հողերի» թագավորական բերդերի և քաղաքների, այլև երկրի ընդերքի, թանկագին և ազնիվ մետաղների հանքերի ու ձկնորսարանների վրա, որոնց եկամուտների մեծ մասը ծախսվում էր ռազմական բերդաշինարարության, քաղաքների պարսպապատման, արքունական բանակի, նավատորմի և վարչական ապարատի պահպանության վրա։ Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքում սահմանում է այդ հանքերից ստացված եկամուտների թագավորական բաժինը։ Եթե հանքը, հայրենատեր-բերդատերի տիրույթում էր գտնվում՝ «Ոսկէհանքն թագվորին է, և արծաթհանքն ի կէս է ընդ երկրին պարոնն և ընդ թագվորն»[144], իսկ հանքը, եթե թագավորի վասալի տիրույթում էր գտնվում, «ոսկէհանք գտվի, նա թագվորին է. և եթե արծաթահանք, նա թագուհոյն է»[145]։

137 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 100—102։

138 Կղէմես, մասն 1-ին, էջ 455—458, 474, 504։

139 Դատաստանագիրք, էջ 9։

140 Նույն տեղում։

141 Տարեգիրք, էջ 298։ Միսուան, էջ 233։

142 Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 107—108։ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 486։

143 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 469։

144 Դատաստանագիրք, էջ 13։

145 Նույն տեղում, էջ 15—16։

Ոսկու և արծաթի առևտրի և արտահանման վրա դրված սահմանափակումները 1201, 1215, 1245 և 1288 թվականներին՝ ջենովացիներին, վենետիկցիներին և սիցիլիացիներին շնորհված առևտրական արտոնագրերում[146] ցույց է տալիս, որ ոչ միայն հանքերի, այլև արտահանման վրա վերահսկում էր արքունիքը՝ պետությունը։

Որ ձկնորսարանները պատկանելիս են եղել թագավորին, այդ հիշատակվում է 1214 թ. հյուրընկալների օրդենին տրված մի հողային տոնացիայում։ Վերջինում, Լևոն Բ նվիրում է Մոլեվոնի և Վաներ բերդերի ամբողջ տերիտորիան՝ բացի երկու ձկնորսարաններից[147]։ Թագավորին էին պատկանում նաև արքունի նավահանգիստներ՝ Այասում, Կոռիկոսում և Ալեքսանդրյան ծոցում գտնվող ձկնորսարանները[148]։

Սմբատի Դատաստանագրքի ՃՂԸ (198) հոդվածը ցույց է տալիս, որ արքունի կալվածներում մեծ չափով զբաղվում էին անասնապահությամբ, հատկապես՝ ձիաբուծությամբ։ Սմբատը այս կապակցությամբ գրում է. «Բայց և յաղագս երմկերոյ դրել պարտ է և գոմշընոյ և խաշանց։ Եւ գիտել պարտ է, որ այս գ. իրքս որ ի պարոնաց և ի թագաւորաց ի խնամքն և ի պահն կենայ առաւել քան զշէն գեղերն. զի շէնն այնոց անշինութեամբ պահվի և գոյանայ լիութեամբ այս երկու իրաւքս, որ չտան թոյլ որ ոք յիւրաքանչիւր ամանոյ վերայ իշխէ գեղ շինել կամ նեղցնել ի վերայ ամայիէցն. վասն զի ոչ ձիոյ երմակ և ոչ այլ ինչ չկարէն գոյանալ բնաւ. ու երբ ձիանն ու խաշինքն չինին՝ նա ոչ սինաւանին կարեն գոյանալ բնաւ, և ոչ արձակ մնալ, և ոչ պահվիլ, և ոչ երկիր առանց խաշանց ի գործ երթալ»[149]։

Բ. Իշխանական խոշոր հողատիրություն

1. Աշխարհիկ խոշոր հողատիրության բնույթը։ Լիակատար, անպայման, օտարելի, ժառանգական հողատիրություն։ Ֆեոդալական, օտարելի ժառանգական, պայմանական

146 V. Langlois, Le trésor, p. 106—108, 109, 143—146.

147 V. Langlois, Le trésor, p. 122—123.

148 Միսուան, էջ 255։

149 Դատաստանագիրք, էջ 170։

հողատիրություն։ Պարգևական, պայմանական հողատիրություն։

Ֆեոդալական խոշոր հողատիրությունը, որը դեռևս գոյություն ուներ բյուզանդական տիրապետության ժամանակ, հիմնականում մնաց և էլ ավելի աճեց ու զարգացավ Թագավորության շրջանում (1198—1375)։

Թագավորության առաջին տասնամյակներին, կողմնապահ իշխաններից առավել խոշորներն էին սահմանապահ չորս իշխանները, որոնց տիրույթները գտնվելիս են եղել Կիլիկիայի սահմանամերձ շրջաններում։ Այդ իշխանները հիշատակվում են միայն մեկ անգամ 1215 թ. Լևոն Բ-ի կողմից ջենովացի վաճառականներին շնորհված առևտրական արտոնագրում[150]։ Դրանք էին՝ պարոն Ադամ դը Գաստոնը, նրա տիրույթները գտնվում էին Կիլիկիայի և Սիրիայի սահմանամերձ շրջաններում։ Կենտրոնն էր Կաստիմ կամ Գաստոն ամրոցը։ Երկրորդը՝ պարոն Լևոն, Կապանի սահմանամերձ ամրոցի տերը՝ Կապադովկիա-Թավրիզ առևտրական ուղու վրա։ Երրորդը՝ պարոն Վահրամ, Կոռիկոսի տերը։ Եվ չորրորդը՝ Օտտո դը Տաբարիան կամ Տիբերիատը հավանական է, Պորտելլո՝ Սիրիայի սահմանամերձ լեռնային շրջանի տերը[151]։ Այս չորս իշխանների տիրույթներում տեղադրված էին մաքսատներ։ Կիլիկիայի Թագավորության սկզբնավորման շրջանում նրանք հողերի վրա տիրում էին «dominum directum» իրավունքով։ Հետևապես Լևոն Բ իրավունք չուներ ջենովացի վաճառականներին թույլատրել այդ տիրույթներում արտոնյալ իրավունքներով առևտուր կատարել[153]։

Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, Էդուարդ Դյուլորիեն այդ չորս մեծ իշխանների իրավունքները հավասարեցնում է արշակունյաց շրջանի չորս բդեշխներին։

Այս չորս իշխանները, որպես խոշոր հողատերեր, ունեին իրենց կալվածները և վասալ իշխանները, ձիավորներն ու կախյալ գյուղացիները, սակայն նրանք լինելով սահմանապահ, «աշխարհատեարք» մեծ իշխաններ, մտնում էին Թագավորի ծառայության

150 *V. Langlois*, Le trésor, p. 126.

151 Նույն տեղում։

152 Նույն տեղում։

153 Documents arm., T. I, Introduction.

մեջ, և ի տարբերություն բդեշխների, կատարում էին վասալական-գործակալական պարտականություններ։ Նրանք մասնակցում էին ոչ միայն սահմանների պաշտպանությանը, այլև Թագավորի արշավանքներին։ Նրանցից Ադամ դը Գաստոնը սենեշալ էր և այսուհետև պայլ (իմա խնամակալ—Ա. Բ.) պարոն Վահրամը կատարում էր մարեշալի պարտականություններ[154]։ Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ այդ իշխանները չեն հիշատակվում հետագայում Լևոնի հաջորդների կողմից՝ նույն առևտրականներին շնորհված արտոնագրերում։ Ըստ երևույթին նրանց տիրույթները որպես պաշտպանական և ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ամրոցներ՝ միացվում են արքունիք և հանձնվում որպես պարգևներ ասպետական օրդեններին, կամ թե, որպես «հայրենի» սեփականություն՝ հանձնվում արքունի տան մեծ իշխաններին[155]։ Մինչդեռ Արշակունյաց շրջանի չորս բդեշխները մնացին մինչև այդ Թագավորության վախճանը[156]։

Բացի այս չորս մեծ իշխաններից, Կիլիկիայի առավել խոշոր հայրենատեր-բերդատերեր-հողատերեր էին «աշխարհատեարք»-ները, որոնք «տեր էին բազում բերդից և գավառաց»։ Վերջինները միասին վերցրած կոչվում էին աշխարհ, ինչպես «Աշխարհ Սիրադանոյ», որի տերը Սիրադանը «էր աշտիճանաւ Սենեսկալ Հայոց»[157]։ Առավել խոշոր հողատերեր էին նաև կոմսերը կամ կունթերը։ Վերջիններիս տիրույթները կոչվում էին կոմսություն. այսպես էր կոչվում Կոռիկոսի նահանգը, 14-րդ դարում Կոռիկոսի կունթն էր Լևոն Ե-ի խնամակալ Օշինը[158]։

Վերոհիշյալ մեծ իշխանների տիրույթները և հեղինակությունը այնքան էին մեծացել և աճել, որ 14-րդ դարում եգիպտական մամլուկների սպառնալիքների աճման շրջանում նորից է սահմանափակվում Թագավորի ինքնակալական իրավունքները։ Վերջինս ստիպված է լինում վերականգնել իշխանական խորհուրդը[159]։ Դրանով պիտի բացատրել այն երևույթը, որ վատիկանի պապը բացի երկրի սյուզերեն Թագավորից, քաղաքական և կրոնական հարցերի լուծման գործում հաղորդակցության մեջ էր մտնում և

154 Նույն տեղում, p. LCXIII։

155 *V. Langlois*, Essai, p. 64—65.

156 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, էջ 127։

157 Տարեգիրք, էջ 222։

158 Doc. arm., T. I, p. 667.

159 Դարդել, էջ 79—81։

նամակներ փոխանակում Կոռիկոսի կոմս Օշինի և մյուս խոշոր հողատեր պարոնների՝ մեծ իշխանների հետ[160]։

13—14-րդ դարերում քաղաքների և քաղաքային կյանքի զարգացման զուգընթաց զարգանում է ներքին և արտաքին առևտուրը։ 14-րդ դարում հանդես է գալիս և ձևավորվում խոշոր առևտրականների մի դաս։ Վերջիններս իրենց ձեռքում էին կենտրոնացնում բացի ոսկուց և առևտրական կապիտալից՝ նաև հողային մեծ տիրույթներ։ Անհերքելի է, որ այդ տիրույթները ձեռք էին բերվում գնումների միջոցով։ Նրանց տերերը մյուս հայրենատեր-բերդատերերի նման կոչվում էին պարոններ, թեև նրանք չունեին ոչ ամրոցներ, ոչ բերդեր և ոչ էլ զինվորական ու քաղաքական իշխանություն։ Սակայն նրանց հարստությունն ու դիրքը այն աստիճանի էր մեծացել, որ նրանց միջից մի ոմն Կոստանդին՝ որդի պարոն Հեթումի, դառնում է Կոստանդին Ե թագավոր։ Հովհան Դարդելի վկայությամբ՝ «ոչ թե ընտրեսցին զնա առ ազնուականութեան, այլ առ փարթամութեան զի էր ծագումն նորա ի ճորտից անտի Կիպրոսի»[161]։ Պարոն Հեթումը, նրա որդի թագավոր Կոստանդինը և մյուս խոշոր առևտրականները՝ պարոնները նման էին նույն դարաշրջանում բուն Հայաստանում հանդես եկած և կազմավորված քաղաքային պատրիցատին, Աշ. Հովհաննիսյանի դիպուկ արտահայտությամբ՝ «Անդրկովկասի և Իրանի ժամանակի կրեսոսներ..., անթագ ու անպսակ իշխաններ՝ Հոնենցին, Ումեկին, Սահմադինին և Սահիր դիվանին»[162]։

Խոշոր հողատերեր՝ իշխանաց իշխաններից և մեծ իշխաններից հետո ֆեոդալական հիերարխիայի երրորդ աստիճանում էին կանգնած թագավորի և մեծ իշխանների վասալներ՝ հայրենատեր ու ոչ հայրենատեր-բերդատերերը՝ պարոնները, որոնց ենթակա տիրույթները և գավառները կոչվում էին պարոնություն[163]։

Ինչպես վերևում նշեցինք, Սմբատ Սպարապետը իր Տարեգրքի մեջ բերած 45 ֆեոդալ-բերդատերերին հորջորջում է իշխան, պարոն, տեր և բերդատեր տերմիններով[164]։ Մենք վերևում ցույց տվեցինք նաև, որ իշխան և պարոն տիտղոսները արտահայտում են ֆեոդալի քաղաքական իշխանությունը տվյալ կալվածքների վրա։ Այնուհետև մենք ցույց տվեցինք, որ տերը արտահայտում էր նույն իշխանի հողային սեփականատիրական իրավունքը։ Այստեղ պիտի ավելացնել, որ աղբյուրներում տէր են անվանվում նաև 13—14-րդ դարերում հիշատակված իշխանաց իշխանները և մեծ իշխանները։ Հատկապես պետք է ընդգծել, որ տէր-ը օգտագործվում էր հավասարապես թագավորական տան անդամների հողատիրության իրավունքը բնորոշելու համար։ Տէր-ը որպես լիակատար սեփականատիրական՝ հայրենական իրավունք արտահայտող տերմին, օգտագործվել է նաև վերևում հիշատակված շորս սենյորների նկատմամբ, որոնց լիակատար, սեփականատիրական իրավունքը անհերքելի է։ Սմբատի ձեռքով գրված մի հիշատակարանում տէր-ի կողքին գրված էր նաև հայրենական տերմինը։ Այսպես, 1244 թ. հիշատակարանում Սմբատ Սպարապետը իրեն անվանում է «տէր դղեկի հայրենական»[165]։ Տէր և հայրենական բառերը որպես հողային սեփականություն ցույց տվող համազոր տերմիններ օգտագործված են նաև Վահրամ Ռաբունու պատմության մեջ[166]։

Տէր-ը, հողի լիակատար սեփականատիրության իրավունքի իմաստով օգտագործվել է նաև եկեղեցական-ֆեոդալական հողատիրության վերոհիշյալ ձևի համար։ Տէր տերմինից հետո և նրա հետ միասին օգտագործվել են Հայրենի ժառանգութիւն իւր[167], սեփական աւան և սեփական ժառանգութիւն[168] հասկացությունները, որպես լիակատար սեփականատիրական իրավունք ցույց տվող արտահայտություններ։

13—14-րդ դարերում մեծ և փոքր հայրենատեր և ոչ-հայրենատեր-բերդատերերի թիվը հասնում է 70—80-ի։ Սրանք իրենց հերթին բաժանվում էին երեք կատեգորիայի՝ ըստ հողատիրության ձևերի։

1. Մեծ իշխաններ, հողի լիակատար սեփականատիրական

---

160 *V. Langlois*, Essai, p. 34, Lettre d'Innocent XXIII a Léon et à Ochin Comte de Gorigos, տե՛ս նաև էջ 36, 37 մյուս նամակների համար։

161 Դարդել, էջ 59։

162 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, էջ 217։ Վերոհիշյալ առևտրական դասի մասին մենք ավելի հանգամանորեն կանգ կառնենք հաջորդ բաժիններից մեկում։

163 Դատաստանագիրք, էջ 13, 15, 52, 81, 82։

164 Տարեգիրք, էջ 208—210։

165 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 951—956։

166 Doc. arm., T. I, տե՛ս Վահրամ Ռաբունեայ Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859։

167 Սիսուան, էջ 141։

168 «Հասկ», 1952, էջ 81։

իրավունքով իրենց ենթակա ոչ-հայրենատեր-բերդատեր վասալ իշխաններով։

2. Իշխաններ, հայրենատեր-բերդատերեր՝ թագավորի վասալներ։ Սակայն թագավորը նրանց նկատմամբ չուներ հողի գերագույն սեփականատիրական իրավունք։

3. Թագավորին և մեծ իշխաններին ենթարկվող ոչ-հայրենատեր-բերդատերեր և հոգևոր ասպետական օրդեններ։

Առաջին և երկրորդ խմբին պատկանող հայրենատեր-բերդատերերի տիրույթները՝ լիակատար սեփականատիրական իրավունքի վրա հիմնված, ալոդական հողատիրության կամ «հայրենի ժառանգություն» հողատիրության ձև էր, միայն մի տարբերությամբ, որ երկրորդ խմբի մեջ մտնող հայրենատեր-բերդատերերի իրավունքը 13-րդ դարում վերաճում է ֆեոդալիզմին հատուկ ֆեոդական-ժառանգական-պայմանական հողատիրության ձևին, որը նման չէր պրեբենական-պայմանական—ոչ-ժառանգական հողատիրությանը։

Այսպիսով, Հայրենիք, Հայրենի ժառանգություն, իշխանական ժառանգություն, տեր, բերդատեր, ժառանգական հայրենատան հասկացությունները, սկսած 12-րդ դարի վերջից, արտահայտել են հողատիրության երկու ձև։

1. Լիակատար-անպայման-ժառանգական-օտարելի սեփականատիրական իրավունք։ Այսպես, օրինակ, Կոստանդին Բարձրբերդցի մեծ իշխանը, 1233 թ. զինվորական վասալական պարտականությունների դիմաց հյուրընկալների օրդենին նվիրում է Կուվեյրա Կազել ամրոցը, առանց թագավորի հաստատմանը[169]։ Այս կատեգորիային պատկանող մեծ իշխանները կամ հայրենատեր-բերդատերերը պայքարում էին թագավորական իշխանության դեմ և աշխատում էին ձեռք բերել անսահմանափակ իրավունք՝ իրենց տնտեսական և քաղաքական գործունեության մեջ։ Սրանով պիտի բացատրել 13—14-րդ դարերում տեղի ունեցած ֆեոդալական երկպառակությունները և դրանց ուղեկցող կենտրոնախույս ուժերի պայքարը թագավորական իշխանության դեմ[170], որոնք պայմանավորեցին Կիլիկյան Հայկական պետության կործանումը։ Ընդ որում, դրանց զսպելու մեջ հաճախ ապարդյուն փորձեր

[169] Doc. arm., T. I, p. LXXIV.

[170] Գանձակեցի, էջ 286։ Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, 1856, էջ 103, 113։ Սամուել Անեցի, էջ 428—429։ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. 1, էջ 87։

էին կատարում կենտրոնաձիգ իշխանները, դրանց թվում Սմբատ Սպարապետի պես հայտնի մեծ իշխանը։ Վերջինիս կողմից ներդրված ջանքերի առավել ապացույց է այդ նպատակի համար ստեղծված հայտնի իրավական հուշարձանը՝ Դատաստանագիրքը։

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում և «Անտիոքի ասիզներում» այս կատեգորիային պատկանող բերդերն ու կալվածները և նրանց տիրակալ իշխանների և բերդատերերի իրավունքները, ժառանգության հետ կապված հարցերը սենյորի և վասալի փոխհարաբերությունները ամփոփված են մի շարք հոդվածների մեջ։ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում ասված է. «և թէ ժառանգաւոր իշխան յիր երկիրն ծախվորի, և բերդ կամ ամրոց շինէ կամ այլ ինչ, նա վասն այնոր կու շինէ որ իր ու իր յետ մնացածն մնացական մնայ. մի լիցի թագաւորին յայն ձեռնարկել այլ իշխանքն զիրենցն ունեան մնացական և թագաւորին ուժ տան»[171]։ Այստեղ խոսքը վերաբերում է լիակատար սեփականատիրական իրավունքով՝ ժառանգական, օտարելի հայրենի ժառանգությանը։ Հաջորդ հոդվածում Սմբատը խոսում է երկրորդ տեսակի հայրենիքի մասին, որը թեև ժառանգական է, բայց նրա տիրակալը թագավորի վասալն է և որ վերջինը իրավունք ունի այն բռնագրավելու և միացնելու իր դոմենին այն դեպքում, եթե վասալը թերանա իր վասալական պարտականությունների մեջ։ Հետաքրքիր է, որ վերջինների ժառանգորդները, եթե նրանք ծնվել են նախքան իրենց հոր թերացումը, նրանք կարող են պահել իրենց հայրենի ժառանգությունը[172]։

Նույն ձևով պետք է հասկանալ «ընդ իւրաքանչիւր պարոնայքն առհասարակ՝ և ընդ իւրեանց ճորտերե (իմա վասալները— Ս. Բ.)» արտահայտությունը[173]։

Հայրենի ժառանգության տեր վասալի տիրույթը նույնպես միացվում էր արքունի դոմենին, եթե առաջինը չունենար ժառանգորդ։ Այսպես պատահեց Բարսեղ իշխանի տիրույթի հետ, երբ նա մահացավ անժառանգ[174]։

Անտիոքի ասիզներում ուղղակի մատնացույց է արված երկու տիպի՝ Հայրենիքի մասին, հայրենի ժառանգական՝ սեփականատիրության իրավունք և հայրենի ժառանգական՝ պայմանական

[171] Դատաստանագիրք, էջ 14։

[172] Նույն տեղում, էջ 15։

[173] Դատաստանագիրք, էջ 15։

[174] V. Langlois, Le trésor, p. 116.

հողօգտագործման իրավունք։ Երկրորդ կատեգորիայի մասին ասված է. «...եւ լիճն (վասալը— Ս. Բ.) ունենա ծառութենով ապրանք (ապրանք և հայրենիք տերմինները ասիզներում ունեն նույն նշանակությունը— Ս. Բ.), նա յետ իր մահուն աւագ որդին ծառանգէ պապենի ապրանքն մէն», հատկապես այն դեպքում, եթե ապրանքը կամ հայրենիքը «բերդ է կամ պարոնութիւն», «ապա թէ բերդ լինի կամ պարոնութիւն, նա զայն աւագն ունա, ամէն ապրնօքն և հասոյթօքն»[175]։

Ինչպես Անտիոքի ասիզները, այնպես էլ Սմբատի Դատաստանագիրքը սկզբունքորեն պայքարում էին կալվածների մանրատման դեմ։ Այդ պատճառով ֆեոդալի գլխավոր տիրույթի հիմնական ժառանգորդը սահմանված էր ավագ որդին։ Մնացած ապրանքները, որոնք չէին մտնում անշարժ ունեցվածքի մեջ, բաժանվում էին դուստրերի վրա՝ ժառանգության օրենքի համաձայն[176]։ Մյուս կողմից օրենսգիրները հոգ էին տանում ժառանգորդների, հատկապես կանանց մասին, որպեսզի վերջիններս ապահովված լինեին տնտեսապես։

Անտիոքի ասիզներում ընդգծված է նաև առաջին կատեգորիայի՝ հողի լիակատար անպայման սեփականության Հայրենաստանի մասին։ Այսպես, «թէ անծառութեան հայրենատան կենայ, թէ հայրենեաց լինի և թէ գնորդի, նա կարէ տալ ու այն էլ զինչ իր պիտի»[177]։

Այսպիսով, 13-րդ դարում խոշոր հողատիրության մեջ գոյություն ուներ երկու տիպի հայրենիք. առաջինը՝ հայրենի, ժառանգական, լիակատար սեփականատիրական իրավունքով, որի տիրակալը լինի մեծ իշխան, թե իշխան, կարող էր այն օտարել, ժառանգել՝ առանց թագավորի հաստատման։ Վերջիններիս տիրույթները կարող էին բռնագրավվել թագավորի կողմից, եթե հայրենատեր ֆեոդալը կատարեր պետական ծանր հանցագործություն։ Հայրենատեր-բերդատերը միևնույն ժամանակ պարտավոր էր երկրի սյուզերենի՝ թագավորի նկատմամբ կատարել մի շարք զինվորական և գործակալական պարտականություններ, որովհետև թագավորը՝ երկիրը իրավական տեսակետից միավորող անձ էր։

Երկրորդ՝ հայրենի ժառանգական-իշխանական-ֆեոդալական,

---

175 Assise d'Antioche, p. 19—21.

176 Նույն տեղում, էջ 21։

177 Նույն տեղում։

որի վրա տիրող հայրենատեր-բերդատերը թագավորից կամ մեծ իշխան հայրենատեր-բերդատերից ստանում էր կալվածքներ՝ հողօգտագործման իրավունքով, կատարելով սենյորի նկատմամբ զինվորական պարտականություններ։ Այս տիպի հողատիրությունը թեև ժառանգական էր, բայց միևնույն ժամանակ պայմանական էր, քանի որ ֆեոդները միացվում էին սենյորի տիրույթներին, երբ վասալը թերանում էր իր ծառայության մեջ։ Սա նման է արևմտաեվրոպական ֆեոդին կամ fief terre-ին։ Հայրենիք կամ ֆեոդ են կոչվել նույնիսկ ալլոդական այն կալվածները, որոնք հանդիսացել են սենյորի կամ բերդատերի լիակատար, անպայման սեփականություն և ինչպես ակադեմիկոս Մանանդյանն է ընդգծում, նրանց ֆեոդ անունը, լինելով պարզապես խաբուսիկ ու անիրական (խոսքը ալլոդականի մասին է— Ս. Բ.) չուներ, բնականաբար, պայմանական սովորական իմաստը։ Մյուս կողմից՝ թե ալլոդական և թե ֆեոդական սեփականատիրության հիմքում ընկած է ֆեոդալական-վասալական ծառայությունը, և որը դուրս չի գալիս ֆեոդալական հասարակության յուրահատուկ սեփականատիրության սահմաններից[178]։

գ. Պարգևական հողատիրություն

Կիլիկիայի հայկական պետության ստեղծման շրջանը զուգադիպեց Մերձավոր Արևելքում տեղի ունեցած խաչակրաց արշավանքներին։ Խաչակրաց առաջին արշավանքը, ետ մղելով սելջուկներին Փոքր Ասիայի և Սիրիայի ծովամերձ շրջաններից, հնարավորություն տվեց Լեռնային Կիլիկիայում իշխող Ռուբինյաններին՝ նվաճելու բյուզանդացիների և սելջուկների տիրապետության տակ գտնված Դաշտային Կիլիկիան։ Սակայն Կիլիկյան հայկական պետությանը խաչակիրների հասցրած տևական վնասն ավելի մեծ եղավ, քան նրանց տված ժամանակավոր օգուտը[179]։ Խաչակիր ֆեոդալները հանդես էին գալիս Մերձավոր Արևելքի քրիստոնյաներին, այդ թվում հայերին և հույներին ճնշողների ու կեղեքողների դերում[180]։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ նրանք

---

178 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 316—317։

179 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ, գիրք 1, էջ 58—59։

180 Խաչակրաց չորրորդ արշավանքը, որ առանձնապես ցայտուն կերպով դրսևորեց խաչակիրների իսկական նպատակը, երբ 1204 թ. նրանք գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաք Կ. Պոլիսը և կողոպտեցին ու ավերեցին այն։

ոչնչացրին և իրենց տիրույթներին միացրին Միջագետքի և Սիրիայի հայկական իշխանությունները[181]։ Խաչակրաց առաջին արշավանքին հաջորդած տարիներին 12-րդ դարի առաջին քառորդում և հետագա շրջանում, հաճախակի էին դառնում բախումները խաչակիրների ու կիլիկեցիների միջև։

Հիմք ընդունելով խաչակրաց առաջին արշավանքի ժամանակաշրջանում (1097—1100 թթ.) խաչակիրների և Կիլիկիայի հայ իշխանների համագործակցության մասին հայ և օտար ժամանակակիցների հաղորդած վկայությունները[182], որոշ հեղինակներ հայտնում են հետևյալ կարծիքները։ Այսպես, 19-րդ դարի ֆրանսիացի արևելագետ-հայագետ Վիկտոր Լանգլուան գրում է, որ Կիլիկիայում երևալու առաջին իսկ օրից, ֆրանկները (իմա խաչակիրները—Ս. Բ.) հայերի կողմից դիմավորվեցին խանդավառությամբ և նրանց կողմից ստացան մեծ օգնություն։ Միայն խաչակիրներին օգնելու շնորհիվ Լևոն Բ-ն թագավորական թագ ու տիտղոս ստացավ Արևմուտքից և ստեղծվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, որը ստիպեց Լևոն Բ-ին ենթարկվելու արևմտյան ազդեցությանը։ Դրանով պետք է բացատրել նաև Լևոն Բ-ի կողմից մտցված արևմտաեվրոպական նորամուծությունները երկրի տնտեսական, քաղաքական և վարչական սիստեմում[183]։

Էդ. Դյուլորիեն կրկնելով Վ. Լանգլուային, ընդունում է, սակայն, որ խաչակիր առաջնորդների ոմանց նվաճողական նկրտումներն ու փառասիրությունը հանգեցրին այն սխալ քաղաքականությանը, որի հետևանքով նվաճված ժողովուրդների շարքն էին դասվում նաև հույները ու հայերը։ Թեև նա վկայակոչում է ժամանակակիցների միայն խաչակիր «ենիշերիների»[184] օգտին թողած նպաստավոր վկայությունները, սակայն փաստերի ճնշման տակ Դյուլորիեն գրում է. «Հայկական Կիլիկիայի թագավորության կործանման պատճառներից մեկը հանդիսանում է հայ ժողովրդական մասսաների բուռն դիմադրությունը կաթոլիկ-ֆրանկների մտցրած նորամուծություններին[185] և ապա դրա շուրջ ստեղծված

181 Ուռհայեցի, էջ 338—340։

182 Ուռհայեցի, էջ 225, 338—340։ Տարեգիրք, էջ 103—105։ *Guillaume de Tyr*. T. IV, XV—XVIII. Historiens occidentaux, Paris, 1840.

183 *V. Langlois*, Essai, hist., p. 42.

184 *Կ. Մարքս* և *Ֆ. Էնգելս*, т. V, стр. 127.

185 *Dulaurier*, Recueil des hist. des croisades Doc. arm., T. I, p. III—IV

հայ իշխող դասակարգերի և ժողովրդական մասսաների միջև եղած ներքին վեճերը, թուլացրին թագավորությունը և այն կանգնեցրին կործանման փաստի առաջ»[186]։

Ժակ դը-Մորգանը դերագնահատելով խաչակիրների դերը Կիլիկիայի հայկական թագավորության ստեղծման գործում և շափազանցնելով արևմտաեվրոպական ֆեոդալիզմի ազդեցությունը, առանց հիմնավորելու Կիլիկիայի թագավորների կողմից խաչակիր օրդեններին բերդեր և ամրոցներ նվիրելու և վստահելու փաստը բացատրում է նրանով, որ իբր թե այս միջոցը գործադրվում էր տեղացի պարոնների (իմա հայ իշխանների— Ս. Բ.) ապըստամբական ամեն մի փորձ խեղդելու համար[187]։

Միտումնավոր է նաև Ռենե Գրուսեի այն պնդումը, թե հայերը հանձինս խաչակիրների տեսնում էին իրենց ազատարարներին՝ ոչ միայն մուսուլմանների դեմ, այլև նույնիսկ հայ ֆեոդալների դեմ, դրա համար նա վկայակոչում է Եդեսիայի հայ բնակչության ապստամբությունը իրենց տիրոջ՝ Թորոս իշխանի դեմ, 1108 թ. և նրանց օգնությունը խաչակիր իշխան Բոլդուինին[188]։

Ինչպես հայտնի է 11—12-րդ դարերում ստեղծվել էին երեք ասպետական հոգևոր օրդեններ, որոնց նպատակն էր մի կողմից՝ ուղեկցել և օգնել խաչակիր բանակներին ազատագրելու «Տիրոջ սուրբ գերեզմանը» և այնուհետև մասնակցելու «Ազատագրված վայրերի» պաշտպանությանը, և մյուս կողմից ուժեղացնելու Մերձավոր Արևելքում ստեղծվող ֆրանկ պետությունների ներքին և արտաքին դրությունը։ Օրդենների հոգևոր ասպետական անունը լինելով խարուսիկ, զավթողական նպատակներ քողարկող ձևական հորջորջում, իսկ քրիստոնեության պաշտպանությունն էլ՝ զուտ արտաքին մի պատրվակ, ըստ էության դրանք հետապնդում էին աշխարհիկ զավթողական շահեր։ Այդ անվան տակ նրանց կատարած խժդժություններն ու կողոպուտը նույնիսկ կշարժեր Մերձավոր Արևելքը ասպատակող և ավերող թուրքական ու թաթար-մոնղոլական հորդաների նախանձը։ Շեշտելով խաչակիրների կողմից Մերձավոր Արևելքի ժողովուրդներին, այդ թվում քրիստոնյաներին և հայերին պատճառած վնասը ու ժողովրդական

186 Նույն տեղում, էջ VII։

187 *Morgan J.* Hist. du peuple arm., p. 259—260.

188 *Grousset R.* Histoire des croisades et de royaume franc de Jérusalème, Paris, 1936, T. I, p. 54—60.

մասսաների շահագործումն ու կեղեքումը, այդ արշավանքներին ականատես Ուռհայեցին գրում է. «Զի հանարազ վասն գանձի առնելոյ անիրաւաբար շարշարանօք յաւէր և յապականութիւն դարձուցին զերկիր. և յամենայն ժամ պարապեալ կային և այլ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին, զչարութիւն զհիլա և զամենայն ճանապարհս շարեաց սիրէին. բարեաց և ամենայն երախտեաց մոռացողք»[189]։ Մի ուրիշ տեղ նշավակելով Քրիստոսի գերեզմանը ազատագրող ասպետների թալանչիական արարքները, նա գրում է. «Առին զօրքն Փռանկաց անթիւ գանձս ոսկւոյ և արծաթոյ և անհամար ծառայս տանէին ի յաշխարհն Փռանկայ»[190]։

Ասպետական երեք օրդենները հետևյալներն էին՝ 1. Սուրբ Հովհաննիսյան (Հիվանդախնամ կամ հյուրընկալների— Ս. Բ.) օրդենը, կազմակերպված 1070 թ. Երուսաղեմում։ 2. Տաճարականների օրդենը (ստեղծված 1118 թ.) և 3. գերմանական ծագում ունեցող Տևտոնական օրդենը (ստեղծված 1188 թ.), որոնցից վերջին երկուսը հենց սկզբից հետապնդում էին նվաճողական նպատակներ[191]։

Վերոհիշյալ երեք օրդենները գտնվում էին ֆրանկ և գերմանական ֆեոդալների ռազմական միավորումներ ստեղծող պապականության հովանավորության ներքո։ Օրդենների շարքերը համալրում և թարմացնում էին հասարակական զանազան խմբերի ներկայացուցիչներ։ Այսպես, դրանց անդամակցում էին բախտախնդիրներ, գողեր, ոճրագործներ և հասարակական այլ տականքներ[192]։ Հետագայում նրանց մեջ սկսեցին ծառայել հենց նույն օրդենների կողմից սեփականազրկված հողազուրկ գյուղացիներ[193]։ Վերջիններս ստանում էին որոշ արտոնություններ։ Սակայն այդ բոլորով հանդերձ օրդենները եղել են զուտ ֆեոդալական, զինվորական կարգապահության ենթակա, երկրներ նվաճելու վարժեցված կազմակերպություններ[194]։

Օրդենների գլխավոր խնդիրներն էին՝ նվաճված տերիտորիաների թե քրիստոնյա և թե մուսուլման ժողովուրդների հնազանդեցումը, սոցիալական ամեն մի ընդվզման և ապստամբության ճնշումը[195], մյուս կողմից դրանք խնդիր ունեին օգնություն ցույց տալ խաչակիրներին՝ պաշտպանելու և ընդարձակելու համար Սիրիայի խաչակիր պետությունների սահմանները, կողոպտելու Մերձավոր Արևելքի ժողովուրդներին և ապահովելու պապականության լատինականացման քաղաքականության կենսագործումը[196]։

Ռազմական շարժառիթներով միայն պիտի բացատրել օրդենների խիստ կենտրոնացված կառուցվածքը։ Յուրաքանչյուր օրդենի գլուխ կանգնած էր մեծ մագիստրոսը կամ մեծ մաստերը։ Սրան էին ենթարկվում նահանգային մագիստրոսներն ու պրիորները և մյուս գործակալները՝ մարեշալները, կոմանդորները և գունդստաբլները, որոնցից և կազմված էր օրդենի խորհուրդը մեծ մագիստրոսի նախագահությամբ[197]. վերջինս նստում էր Երուսաղեմում, իսկ հետագայում՝ Կիպրոսում[198]։ Սկզբնական շրջանում նրանց հեղինակությունը բացարձակ չէր, սակայն հետագայում նրանք չէին ենթարկվում Երուսաղեմի թագավորին, այլ՝ միայն Հռոմի պապին[199]։

Օրդենների սանձարձակ և ինքնիշխան գործունեությունը կարելի է բացատրել նրանց տնտեսական հզորությամբ։ Նրանք ֆինանսավորում և վարկավորում էին թագավորներին, այդ թվում Կիլիկիայի հայ թագավորներին[200]։ Նրանց տնտեսական հզորության գլխավոր աղբյուրներն էին նվաճման և գնման միջոցով ձեռք բերված ընդարձակ կալվածներն ու հողային տիրույթները։ Գաղափար կազմելու համար նրանց հարստության մասին կարելի է բերել տաճարականների հարստության չափը։ Նրանց էր պատկանում 1000 գյուղ մարգագետիններով, այգիներով, ձկնորսարաններով, շուկաներով և խանութներով հանդերձ[201]։ Բացի այդ, նրանք իշխում էին բազմաթիվ ամրոցների և բերդերի վրա և

189 Ուռհայեցի, էջ 339։

190 Նույն տեղում, էջ 312։

191 Encyclopedia Britanica, 1946, T. XII, p. 434—440.

192 Նույն տեղում, էջ 435։

193 *G. Dodu*, Hist. des institutions dans le royaume Latin de Jérusalème, Paris, 1814, p. 30.

194 Նույն տեղում, էջ 30—31։ Տե՛ս նաև *Заборов, М. А.* Крестовые походы, М., 1956, стр. 135.

195 *Заборов М. А.* Крест. походы, стр. 136.

196 Աշոտ Հովհաննիսյան, Գրվագներ, գիրք Ա, էջ 60։

197 *G. Dodu*, Hist. des Inst., p. 36.

198 *Заборов М. А.* Крест. пох. стр. 127. *V. Langlois*, Essai, p. 77.

199 *Заборов М. А.* Крест. походы, стр. 126.

200 *V. Langlois*, Le trésor, pp. 122—124.

201 *Заборов М. А.*, стр. 128, 130.

Երուսաղեմի, Տրիպոլիի, Անտիոքի, Կիպրոսի ու Կիլիկիայի[202] քաղաքներում ունեին իրենց տներն ու զորանոցները։ Նրանք հաճախ վեճեր և միջադեպեր էին ունենում տեղական աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների և նույնիսկ թագավորների հետ։ Այդ պայքարում օրդեններին հովանավորում և պաշտպանում էր Հռոմի պապը։ Վերջինս ճանաչված էր օրդենների կողմից որպես գերագույն իշխանություն[203]։

Միջադեպերի և վեճերի ժամանակ Կիլիկիայի հայ թագավորները միշտ չէ, որ ենթարկվում էին Հռոմի պապի կարգադրություններին և հաճախ իրենք էին պատժում անհնազանդ վասալ օրդեններին, զրկելով նրանց վասալական ծառայության դիմաց ստացած կալվածներից։ Այսպես, 1199 թ. Կիլիկիայի թագավոր Լևոն Բ կռվում է Տրիպոլիի իշխանի դեմ Անտիոքի ժառանգության համար։ Կիլիկիայի թագավորի վասալ Տաճարական օրդենը անցնում է Տրիպոլիի իշխանի կողմը, որի հետևանքով Լևոն Բ գրավում է նրան ենթակա Գաստոն ամրոցը[204] և չի վերադարձնում նույնիսկ այն դեպքում, երբ Ինոկենդիոս Գ պապը կարգադրում է այդ[205]։ Անհնազանդ Լևոն Բ-ին Հռոմի պապը ենթարկում է բանադրանքի[206]։ 13-րդ դարի 20-ական թվականների սկզբներին նույն բախտին են արժանանում նաև հյուրընկալների՝ Կիլիկիայի Սելևկե նահանգում ունեցած՝ Նորբերդ և Կամարդեզիում տիրույթները, որոնք նրանց շնորհված էին 1210 թ. Լևոն Բ-ի կողմից[207]։ Այսօրինակ շնորհումը Լևոն Բ կատարել էր այն ռազմական օգնության համար, որ օրդենը, հակառակ Պապի կամքին, տվել էր Լևոնին ընդդեմ Տրիպոլիի իշխանի։ Վերջին հանգամանքը ցույց է տալիս, որ օրդենները շահադիտական նպատակներով նույնիսկ հակառակում էին Պապի կարգադրություններին և չէին օգնում իրենց արյունակից ֆրանկ իշխաններին։ Սակայն նրանք հավատարիմ իրենց ուխտադրուժ քաղաքականությանը, խառնվում են (1220—1222 թթ.) Կիլիկիայում Լևոն Բ-ի մահվանից հետո գահի

---

202 V. Langlois, Essai, p. 76—78։ Տարեգիրք, էջ 221։

203 Заборов М. А., стр. 131.

204 Ուռհայեցի, էջ 355։

205 V. Langlois, Essai, p 72. Doc. latins, T. II, p. 536—537. Lettre d'Innocent III, Ed. Baluzi ch. 64, 65, 66.

206 V. Langlois, Essai, p. 72.

207 V. Langlois, Le trésor, p. 113.

շուրջը ծագած ներքին ֆեոդալական երկպառակություններին, անցնում են Անտիոքի իշխան Ֆիլիպի կողմը, ապաստան են տալիս Լևոն Բ-ի դուստր Զաբելին (որ ամուսնացել էր Անտիոքի իշխանի հետ, վերջինս հեռացվել էր գահից դավաճանության հետևանքով), որի պատճառով հյուրընկալների օրդենի տիրույթները այդ ժամանակ միացվում են «յարքունիս»[208]։

Կիլիկիայի հայկական թագավորության և հոգևոր ասպետական օրդենների փոխհարաբերությունների մասին տեղեկություններ են պահպանված հայ և օտար աղբյուրներում ու Կիլիկիայի արքունիքին վերաբերող փաստաթղթերում։

Այսպես, 12-րդ դարի հեղինակներ Ներսես Լամբրոնացին և Միքայել Ասորին որոշ տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայում հաստատված օրդենների մասին։ Ներսես Լամբրոնացին գրում է, որ Կիլիկիայում գոյություն ունեն ֆրանկ հոգևորական եղբայրություններ, որոնք կառավարվում են տարբեր օրենքներով, հագնում են զինվորական համազգեստ, ենթարկվում են զինվորական կարգապահության և նրանց նպատակն է պայքարել անհավատների դեմ[209]։

Հյուրընկալների տիրույթները Կիլիկիայում հիշատակվում են 1149 թ.։ Այդ տիրույթները նրանց շնորհել էր Անտիոքի իշխան Ռայմոնդը 1163 թ.։ Նրանց տիրույթներին ավելացավ նաև Մաբատա ամրոցը, Մսիսի կամ Մամեստիայի շրջանում[210]։ Նրանց տիրույթները ավելի են ընդարձակվում Լևոն Բ-ի ժամանակ։ Ինչպես վերևում տեսանք, նրանք ստացել էին Նորբերդ և Կամարտեղիա ամրոցները Սելևկիայում. դրանց դիմաց հյուրընկալները մտնում են վասալական ծառայության մեջ, Լևոն Բ-ին տրամադրելով տարեկան 400 ձիավոր[211]։ 1214 թ. Լևոն Բ-ը 10.000 սարկինոսյան Բյուզանդի դիմաց, հյուրընկալներին նվիրում է (փաստորեն վաճառում է—Ս. Բ.) ճկեր ամրոցը, Գանամելլա նավահանգիստը՝ Ալեքսանդրիայի և Մսիսի միջև, և մի շարք այլ ամրոցներ[212]։ Վերջապես, պետք է հիշատակել Կուվեյրա ամրոցը, որը նվիրել էր Լամբրոնի իշխան Կոստանդինը 1234 թ.[213]։

---

208 «Մբատայ Սպարապետի Պատմութիւն», 1856, էջ 109—111։

209 «Ներսիսի Լամբրոնացւոյ Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ», ի Վենետիկ, 1865, էջ 108։

210 V. Langlois, Essai, hist., p. 71. Guillaume de Tyr, Liv. 18.

211 «Մբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 109։

212 V. Langlois, Essai, p. 72.

213 Նույն տեղում։

Կիլիկիայում հյուրընկալները ենթարկվում էին Սելևկիայի բերդատերին[214], իսկ հետագայում պրեցեպտորին կամ կոմանդորին, որի նստավայրը փոխվեց[215]։

Վ. Լանգլուան հիմնվելով Աբուլֆարաջի վկայության վրա, անտեսելով Սմբատ Սպարապետի վկայությունը, խոսք չասելով հյուրընկալների անհավատարմության մասին իրենց սենյոր՝ Կիլիկիայի թագավորության նկատմամբ, գրում է, որ Սելևկիան ոսկով հետ գնվեց Հեթում Ա-ի կողմից։ Մինչդեռ դեպքերին ականատես Սմբատ Սպարապետը գրում է, թե հյուրընկալները մերժում են ավագ պարոն և պայլ Կոստանդինի պահանջը՝ նրանց մոտ ապաստանած Զաբել թագուհուն իրեն հանձնելու մասին։ Սմբատի ասելով հյուրընկալների կոմանդորը այդ առթիվ պատասխանել է. «Թէ զբերդս Լևոն թագաւոր ետ մեզ, մեք չկարեմք ասել ընդ իւր դուստրն թէ ել ի բերդէս, ապա մեք կու ելնենք. դուք առէք զբերդն ու զինքն, և այս ցեղ առին զՍելևկիա և զթագուհին»[216]։

Հյուրընկալներն այլևս նոր տիրույթներ չեն ստանում Կիլիկիայում։ Հետագայում, 1317 թ. Օշին թագավորը դենքով գրավում է նրանց տիրույթները, որովհետև նրանք հրաժարվում են զինվորական օգնություն ցույց տալ Կիլիկիային։ Այս առթիվ Հովհան 22-րդ Պապը իր նամակներից մեկում՝ ուղղված հյուրընկալներին, հորդորում է հաշտվել Օշին թագավորի հետ և խրատում նրանց «պատկառ կալ պայմանացն, որովք շնորհեալ էին նոցա տեղինքն»[217]։

1320 թ. Օշինը հյուրընկալներին առաջարկում է հողային նոր տիրույթներ, եթե նրանք զինվորական օգնություն ցույց տան Կիլիկիային[218]։ Սակայն նրանք հրաժարվում են այդ օգնությունից։ Հյուրընկալներին վերջին անգամ հանդիպում ենք 1375 թ., երբ Գրիգորիոս 6-րդ Պապը ապարդյուն դիմում է նրանց, խնդրելով օգնության հասնել արդեն կործանված Կիլիկյան թագավորությանը[219]։

---

214 *V. Langlois*, Le trèsor, p. 113.

215 *Տարեգիրք*, էջ 226։

216 *Տարեգիրք*, էջ 226։ *Սմբատայ Սպարապետի Պատմութիւն*, էջ 121։

217 *Միսուան*, էջ 300—301։

218 *V. Langlois*, Essai, p. 33.

219 *Նույն տեղում*, էջ 37։

Տաճարականների տիրույթները Կիլիկյան աղբյուրներում հիշատակվում են 12-րդ դարի կեսերից։ Միքայել Ասորին պատմում է, որ դեռևս Թորոս Բ-ի ժամանակ (1145—1169 թթ.) վեճ է առաջանում Թորոս Բ-ի և տաճարականների միջև Գաստիմ ամրոցի շուրջը։ Գաստիմը Թորոս Բ-ի կողմից շնորհված էր տաճարականներին այն պայմանով, որ վերջիններս պետք է օգնեին հայերին։ Շատ ժամանակ չանցած, բյուզանդացիները գրավում են ամրոցը տաճարականներից. սակայն Թորոսը սրանցից վերագրավում է այն։ Տաճարականները ետ են պահանջում ամրոցը, Թորոս Բ-ը հրաժարվում է պատճառաբանելով, որ նրանք չեն կատարել վասալի իրենց պարտականությունը։ Տեղի է ունենում կռիվ։ Թորոսը հաղթում է։ Բայց հետագայում նա վերադարձնում է Անտիոքի սահմանամերձ ամրոցները, իսկ նրանք երդվում են բոլոր դեպքերում օգնել հայերին, եթե վերջիններս դրա կարիքը ունենան[220]։ Այդ ամրոցները վերագրավվում և միացվում են Մլեհ (1169—1175 թթ.) իշխանաց իշխանի դոմենին[221]։ Ռուբեն Գ-ի ժամանակ (1175—1187 թթ.) տաճարականները նորից ստանում են ամրոցը[222], որը սակայն կրկին գրավվում է «յարքունիս», Լևոն Բ-ի ժամանակ, 1202 թ., երբ տաճարականները ուխտադրուժ օգնում էին Կիլիկիայի թշնամի՝ Տրիպոլիի կոմսին, Անտիոքի իշխանության ժառանգության հարցում[223]։ Տաճարականները հիշատակվում են ավելի ուշ՝ 1265 թ., երբ Եգիպտոսի մամլուկները ավերում էին Կիլիկիան, քանդում և այրում նաև՝ տաճարականների տիրույթները[224]։ Ավելի ուշ, Լևոն Գ-ի ժամանակ (1271—1289) տաճարականների կոմանդորը, որպես Լևոն Գ-ի դեսպան Կահիրեում բանակցություններ է վարում հաշտության պայմանագրի համար[225]։ 14-րդ դարի սկզբում տաճարականների տիրույթները գրավվում են Լևոն Դ-ի (1299—1307) և Օշինի (1307—1321) կողմից[226]։

---

220 *Michel le Syrien*, Chronique, p. 313. *Ժ. դը Մորգան*, *Հայ ժողովրդի պատմություն*, էջ 234։

221 *Ժամանակագրութիւն Միխաէլի*, էջ 454։

222 Annales ecclesiastici, Lucques, 1747—1758, T. V, p. 148.

223 *Ուռհայեցի*, էջ 355։

224 *Makrizi*, Histoire des sultans Mamelouks d'Egypte par Quatremère, p. 1837, ch. 22, p. 501.

225 *Նույն տեղում*։

226 *V. Langlois*, Essai, p. 73.

Տևտոնական օրդենի տիրույթները հիշատակվում են 13-րդ դարի սկզբին Կիլիկիա այցելած և 1212 թ. Սսում ջրօրհնեքին ներկա գտնված Ավստրիայի դքսի դեսպան Վիլլեբրանդ Օլդենբուրգցու[227] աշխատություններում։ Ըստ Վիլլեբրանդի, Լևոն Բ-ն Տևտոնական օրդենին նվիրել էր Քյումպետֆորդ բերդը Մսիսի շրջակայքում[228]։ 1212 թ. նրանք ստանում են Ամուդ կամ Ադամադոնա բերդը[229]։ Վերջապես Հարոնիա քաղաքը իր շրջակայքով 1236 թ. Հեթում Ա-ը պարգևում է նրանց՝ զինվորական ծառայության դիմաց[230]։ Բացի հողային տիրույթներից, օրդենը ստանում է նաև առևտրական շնորհագիր. «առանց մաքսի և անարգել շրջագայելու Կիլիկիայի ամբողջ տերիտորիայում, քաղաքներում, կալվածներում, բնակավայրերում, կամուրջներում, դաշտերում և լեռներում»[231]։ 1271 թ. Տևտոնական օրդենը արտոնություն է ձեռք բերում Սարվանտիկարի տեր Ջոֆրեի որդի Կոստանդինից, Սարվանտիկարի մոտ բաժտուն հիմնելու համար[232]։ Սակայն Տևտոնական օրդենը, հավատարիմ իր տրադիցիոն նվաճողական մտադրություններին, երբեք էլ չկատարեց իր վասալական պարտականությունները հանդեպ իր տենյորի՝ Կիլիկիայի թագավորության։ Շուտով նրա տիրույթները ևս միացվեցին արքունիքին։ Ինչպես հայտնի է, Տևտոնական օրդենը ձախողության մատնվելով Մերձավոր Արևելքում, իր ագրեսիվ գործողության կենտրոնը տեղափոխեց Արևելյան Եվրոպա, այն բանից հետո, երբ Ինոկենտիոս երրորդ պապի նոր հոգևոր միաբանությունն ստեղծելու ջանքերը ձախողվեցին, 1230 թ. նա դիմեց Երուսաղեմի թագավորությանն աջակցող և Մերձավոր Արևելքը զավթող՝ Տևտոնական օրդենին։ Վերջինիս հետևեցին «գերմանական կողոպտիչների և գաղութականների նոր հոսանքներ»[233]։ Այդ մասին Մարքսը գրում է. «Պրուսների երկրում ասպետները մոլեգնում են. իսկ պրուսները քաջաբար դիմադրում են, բայց ավելի ու ավելի են ուժասպառ լինում»[234]։ Ընդ որում, բազմամյա պայքարը վերջանում է պրուսների պարտությամբ, որով Մերձավոր Արևելքում անհաջողության մատնված Տևտոնական օրդենը պրուսների երկրում կազմեց Տևտոնական մի մեծ իշխանություն, որը սակայն կրում էր ժամանակավոր բնույթ։ Ինչպես հայտնի է, երբ օրդենը ձգտում էր ընդարձակել իր տիրույթները ի հաշիվ ռուսական հողերի զավթման, 1242 թ. Չուդ լճի վրա տեղի ունեցած հռչակավոր Սառցամարտում ջախջախվում է Նովգորոդի ռուս իշխան Ալեքսանդր Նևսկու զորքերի կողմից, և «սրիկաները... վերջնականապես ետ շպրտվեցին ռուսական սահմանից»[235]։

13-րդ դարի վերջին և 14-րդ դարի սկզբին օրդենների տիրույթները այլևս չեն հիշատակվում Կիլիկիայի քաղաքական և տնտեսական կյանքին վերաբերող տարեգրության մեջ։ Նրանց տիրույթները գրավվում են Կիլիկիայի թագավորների կողմից՝ որպես պատիժ իրենց անհավատարմության և Կիլիկիայի անվտանգության նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար։ Մերձավոր Արևելքի աշխատավոր ժողովրդի շահագործումը և կողոպուտը, օրդենների հակամարտությունները աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հետ, վերջին հաշվով պատճառ դարձան խաչակրաց պետությունների, ինչպես նաև «Կիլիկիայի հայկական պետության տկարացմանը և ի վերջո՝ նրա էթնիկական դիմադրկմանն ու քաղաքական կազմալուծմանը[236]»։

Ինչպես նշեցինք վերևում, օրդենները մտնելով վասալական կախման մեջ Կիլիկիայի թագավորից, վերջինից ստանում են հողային տիրույթներ։ Այդ մասին է վկայում նրանց օգտին կատարված հողային նվիրատվությունները, առևտրական շնորհագրերը և այլ կարգի փաստաթղթերն ու նամակները, որոնք հրապարակված են ֆրանսիացի հայագետ Վ. Լանգլուայի կողմից[237]։

Կիլիկիայի ֆեոդալական հողատիրության, հատկապես օրդենական հողատիրության հարցերին վերաբերող փաստաթղթերի թիվը 18-ն է։ Դրանց վերնագրերից անգամ երևում է միջնադարյան ֆեոդալական պայմանական հողատիրությանը առանձնահատուկ հետևյալ մոմենտը. յուրաքանչյուր հողային նվիրատվու-

227 Սիսուան, էջ 476։

228 Նույն տեղում, էջ 476—477։

229 V. Langlois, Le trésor, p. 118.

230 Նույն տեղում, էջ 141—143։

231 V. Langlois, Le trésor, p. 142.

232 «Բազմավէպ», 1873, էջ 108—112։

233 Архив Маркса и Энгельса, т. V, стр. 343.

234 Նույն տեղում, էջ 342։

235 Նույն տեղում, էջ 344։

236 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ, գիրք Ա, էջ 60։

237 V. Langlois, Le trésor des chartes d'Arménie, Venise, 1863.

թյուն վավերացվում և հաստատվում է բուն նվիրողի ժառանգորդի կամ հաջորդի՝ ասենք Լևոն Բ-ի ժառանգորդ Ռուբեն Ռայմոնդի, իսկ հետագայում՝ Հեթում Ա-ի կողմից[238]։ Բացի դրանից, հողային նվիրատվությունը հիմնականում կատարվում է վասալի՝ զինվորական ծառայության և օգնության դիմաց, ընդ որում փաստաթղթերում նշված է, որ վասալի անմիջական պարտականությունն է պաշտպանել սենյորի պետության սահմանները։ Այսպես, 1210 թ. ապրիլին և օգոստոսին Լևոն Բ Սելևկիայի Նոր-Բերդ և Կամարգեղիա սահմանամերձ ամրոցները իրենց շրջակա տերիտորիաներով նվիրում է հյուրընկալներին «որպես պարգև» «benefecium», այն բանի համար, որ վերջիններս պաշտպանել են Կիլիկիան Իկոնիայի սուլթանությունից և համատեղ կռվել են վերջինի բանակների դեմ[239]։

1212 թ. ապրիլին Լևոն Բ Ամուտ բերդը պարգևում է Տևտոնական օրդենին այն բանի համար, որ վերջինս պարտավորվում է զինվորական օգնություն ցույց տալ թագավորին։ Այստեղ ընդգծված է նվիրատվության պարգևական՝ «beneficial» բնույթը[240]։

1236 թ. Հեթում Ա նույն օրդենին պարգևում է Հարոնիա քաղաքը, շրջակա տիրույթներով, այն պայմանով «որպես և խոստանան մեզ պահպանել և պաշտպանել զթագաւորութիւն մեր, յամենայն կողմանց, իբրև եղբարք հարազատք և բարեկրօնք անբաժանելիք»[241]։

Հողային նվիրատվություններից մեկում թագավորը կոչ է անում նրանց՝ օգնել Կիլիկիային՝ Իկոնիայի սուլթանության դեմ նրա մղած պայքարում[242]։ Նույնիսկ հողերի վաճառքի կամ նախագրավական դնելու դեպքում, գնող օրդենը պարտավորվում էր զինվորական ծառայություն և օգնություն ցույց տալ սենյորին՝ Կիլիկիայի թագավորին[243]։

Օրդենականները ծառայություն էին կատարում նաև Կիլիկիայի արքունիքում։ Վիլլեբրանդ Օլդենբուրգցին, նկարագրելով

238 *V. Langlois*, Essai, pp. 21—37.
239 *V. Langlois*, Le trésor, pp. 114—116.
240 Նույն տեղում, էջ 118։
241 Սիսուան, էջ 205—207։ *V. Langlois*, Le trésor, pp. 141—142.
242 *V. Langlois*, Le trésor, pp. 115—116.
243 *V. Langlois*, Le trésor, pp. 122—123, 125.

1212 թ. ջրօրհնեքի ծիսակատարությունը, գրում է, որ օրդենների զինվորականները ուղեկցում էին Լևոն Բ-ին նրա աջ և ձախ կողմից, մյուս գործակալների հետ հավասար[244]։

Հողային նվիրատվություններում, ընդգծված է պարգև ստացողի մշտնջենական, ժառանգական հողային սեփականատիրական իրավունքը[245]։ Այսպես, 1236 թ. փաստաթղթում ասված է. «և այդ զքաղաքդ (Հարոնիա) նախասացեալ և զերկիրդ նախանշանակեալ զոր մի ըստ միոջէ յիշեցաք և սահմանօքն որոշեցաք, տուաք հրեշտակերամ եղբայրութեան հիւանդանոցային Ալամանաց, մշտնջենաւոր և յարամեայ ժառանգութիւն, որոնց են յայժմուս և որ յետոյ գալոցն են»[246]։

Սակայն այդ իրավունքը պայմանական էր։ Այդ կալվածները նրանք տիրում էին «dominum utile»-ի, այսինքն հողօգտագործման իրավունքով։ Ինչպես տեսանք, այդ տիրույթները վերադարձվում էին սենյորի կողմից հենց որ վասալը չէր կատարում հողային նվիրատվության մեջ հիշատակված վասալական պարտականությունները[247]։ Պետք է ընդգծել նաև հետևյալ հանգամանքը. ժառանգական իրավունքը անձնական չէր և ոչ էլ տոհմային, քանի որ օրդենները լինելով ֆեոդալական զինվորական կազմակերպություններ, նրանց գլխավորող մագիստրոսի կամ կոմանդորի պաշտոնները ընտրովի էին և երկրորդ այն, որ իրենց օրդենի անդամները կուսակրոններ էին, հետևաբար խոսք անդամ չէր կարող լինել տոհմային ժառանգական իրավունքի մասին։ Ժառանգական իրավունքը վերաբերում էր ամբողջ ասպետական օրդենին։

Հողային նվիրատվությունները հաճախ ստացել են դրամական մեծ գումարներ փոխառնելու, դրանց դիմաց կալվածները նախագրավական դնելու[248], կամ էլ կալվածքները որոշ գումարով վասալներին վաճառելու սովորական առևտրի տեսք[249]։ Հետաքրքիրն այստեղ այն է, որ երկու դեպքում էլ այդ գործարքները

244 Սիսուան, էջ 476։
245 V. *Langlois*, Le trésor, p. 120.
246 Սիսուան, էջ 296—297։
147 Տարեգիրք, էջ 226։ *V. Langlois*, Essai hist., pp. 33—37.
248 *V. Langlois*, Le trésor, p. 133. *V. Langlois*, Essai, p. 72.
249 *V. Langlois*, Le trésor, pp. 122, 123—124. *V. Langlois*, Essai., p. 72.

կատարվել են հողային նվիրատվության սովորական եղանակով, որպեսզի դրանք չստանան առևտրի կերպարանք և դրանով իբր թե «հաճելի թվան» աստծուն։ Այդ նույն ձևը սովորական երևույթ էր միջնադարյան Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Իտալիայում և Երուսաղեմի ֆրանկ պետության մեջ։ Մինչդեռ այդ երկրների սուզերեն սենյորները հաճախ ընկնում էին ֆինանսական ծանր դրության մեջ, որի պատճառը երկարատև պատերազմներն էին։ Պատերազմների հետևանքով թագավորները ստիպված էին լինում վաճառել հողային տիրույթներ։ Ստացած միջոցները հայոց թագավորները օգտագործում էին պատերազմական ծախսերը հոգալու, կամ ստացված գումարների մի մասը տրվում էին որպես տուայր-օժիտ՝ իշխանուհիներին։

Վերոհիշյալ հողային նվիրատվությունների՝ վավերագրերի ուսումնասիրումը մեծ նշանակություն ունի Կիլիկիայի ֆեոդալական հողատիրության մի շարք հարցերի լուսաբանման համար։ Այդ վավերագրերից երևում է, որ ֆեոդալական հողատիրության բոլոր ձևերի համար հողին տիրելու գլխավոր բաժնեկալվածքը հանդիսացել է բերդ-ամրոցը, կամ քաղաք-ամրոցը՝ դրանց ենթակա բնակավայրերով, շեներով, գյուղերով ու ագարակներով, արտերով ու այգիներով, անդաստաններով ու լեռներով հանդերձ։

Այդ պատճառով, ֆեոդալ-հողատերը կոչվում էր բերդատեր կամ հայրենատեր-բերդատեր, իսկ լատինական արտահայտությամբ՝ castellanus (բերդատեր)[250]։

1236 թ. Տևտոնական օրդենի օգտին կատարված հողային նվիրատվության մեջ ասված է, որ Հարոնիա քաղաք-ամրոցը պարգևում է օրդենին, ինչ վիճակում, որ նա եղել է նրա նախորդ տիրակալ Ջոֆրեի ժամանակ։ Դոնացիայում կարդում ենք. «Ջորս յիշեցուք մի ըստ միոջէ վաներովն, գիւղովք, ագարակօք, հողով ու ջրով, աղօրեւք, գետօք, լերամբք, բլրովք և պտղաբեր հարթ վայրօք և ամենայն պտղովք, կալվածովք և ստացվածովք... Արդ մի ոք յիշեսցէ յամենայն երկրիս հայոց և մերոյ հպատակեաց, ոչ մեծ և ոչ փոքր հեղեղ կամ ոյք առնել Սրբոյ Տանս և հոգևոր եղբայրութեանս, կամ զսահմանս նոցին և զկալուածն նուազեցուցանել»[251]։

1214 թ. հյուրընկալներին տված նվիրատվության մեջ կարդում ենք. «պարգևում եմ... Վաներ ամրոցը մշակված և անմշակ հողերով... անտառներով և արոտներով, և այլ ինչքով»[252]։ Այսպիսով նվիրատվություններում բերդերն ու ամրոցները հիշատակվում են որպես հողին տիրելու միավոր[253]։ Նույնպիսի բովանդակություն են ունեցել հայ բերդատեր իշխանների տիրույթները։ Օրինակ, Լամբրոնի իշխան Կոստանդինի տիրույթները «յարքունիս» գրավման առթիվ պատմիչը գրում է. «արքայն—(Հեթում Ա) զամենայն գիւղս և զանդաստանս Լամբրօնի արար ի ներքո հրամանաց իւրոց»[254]։ Նույն ձևով են հիշատակվում խոշոր ֆեոդալ սենեսկալ Սիրագանի տիրույթները[255]։

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի համապատասխան հոդվածներում արձանագրված է, որ յուրաքանչյուր պարոնության կենտրոնը հանդիսացել է որևէ բերդ կամ ամրոց, և որ բերդատեր պարոնը տիրել է բերդի շուրջը գտնվող գյուղերի և հողերի վրա[256]։ Անշուշտ այդ կարելի է բացատրել նրանով, որ Կիլիկիան անընդհատ գտնվելով ռազմական ընդհարումների մեջ, նրա՝ ֆեոդալների վասալական պարտականության գլխավոր պայմանը դարձել էր զինվորական ծառայությունը թագավորի համար, հետևաբար, Կիլիկիայի 72 բերդերի[257] պաշտպանությունը, շինարարությունն ու պահպանումը ֆեոդալ իշխանների գլխավոր զբաղմունքն էր, մի երևույթ, որը հատուկ էր նաև միջնադարյան Եվրոպային։

Ինչպես տեսնում ենք, օրդենների վասալական կախվածությունը Կիլիկիայի հայկական թագավորությունից՝ կրել է հողային բնույթ։ Սակայն օրդենական պարգևական հողատիրությունը հանդիսանալով բոլորովին նոր երևույթ հայկական ֆեոդալական հողատիրության մեջ, ինչպես և պետք էր սպասել ավելի շատ նմանվել և ենթարկվել է խաչակիր պետություններում կամ արևմտաևրոպական երկրներում տիրող ֆեոդալական հողատիրության օրենքներին։ Այդ մասին ուղղակի մատնացույց է արված

---

250 *V. Langlois*, Le trésor, p. 123.

251 *Սիսուան*, էջ 207։

252 *V. Langlois*, Le trésor, pp. 122—123.

253 *V. Langlois*, Le trésor, pp. 114—116, 118—120, 122—124, 141—143 և այլն։

254 Գանձակեցի, էջ 287։

255 Տարեգիրք, էջ 222։

256 Դատաստանագիրք, էջ 9, 14, 15։

257 Միխայել Ասորի, էջ 501—502։

հողային նվիրատվություններում։ Այսպես, 1212 թ. ապրիլին Տևտոնական օրդենի օգտին կատարված հողային նվիրատվության մեջ նշված է, որ տվյալ հողային դոնացիան կատարվում է համաձայն ֆրանկ օրենքների[258]։

Այժմ տեսնենք, թե օրդենական հողատիրությունը ֆեոդալական հողատիրության որ ձևին էր համապատասխանում։

Հողային դոնացիաներում ուղղակի մատնացույց է արված, որ տվյալ բերդը իր շրջակա հողային պատկանելությամբ թագավորը պարգևում է օրդենին։ Այստեղ օգտագործված է հայերեն պարգևականի հոմանիշ՝ Միջնադարյան Եվրոպայի պարգևական հողատիրությանը հատուկ՝ «beneficium» տերմինը[259]։

Ղ. Ալիշանը 1236 թ. հողային նվիրատվության մեջ օգտագործված լատինական beneficium տերմինը իրավացիորեն թարգմանել է պարգևական[260], իսկ Dono et concedo տերմինը՝ պարգևել։ Միջնադարյան Եվրոպայի ֆեոդալական հողատիրության հատուկ beneficium տերմինը պարգևականի հետ նույնացրել են նաև Հ. Մանանդյանը[261] և Նիկողայոս Ադոնցը։ Վերջինս գրում է. «Նրանք, (պարգևականը) թագավորի կողմից պարգևած, ընծայված հողեր էին»։ Ուրեմն, եզրակացնում է Ն. Ադոնցը, հայկական տերմինը միանգամայն նույնանիշ է միջնադարյան ֆեոդալական «beneficium»-ին[262]։

«Պարգև» և «պարգևել» տերմինները օգտագործել են նաև Կիլիկիային վերաբերվող հայկական մատենագրական աղբյուրները, բնութագրելու համար հողային նվիրատվություններն և հողային տիրույթները։ Այսպես, Ռուբեն Գ-ը «սկսաւ՝ տալ պարգեւս ամենեցուն առատապէս,... զամենեցուն սիրտ և զոգի լինքն յանգոյց. և ուր դիմէր նոքօք քաջապէս մղէր զհոյլս թշնամեացն, որով էառ զՄսիս, զԱտանայ և զՏարսոն[263]»։

Լևոն Բ-ի նվիրատվությունների մասին կարդում ենք. «և ուր իմանայր՝ թէ գոյ այր իմաստուն և գիտուն և աջող է գործ կամ ի զինուորութիւն, կամ ի խօսս և ի պատասխանիս, յղէր և կոչէր

258 V. Langlois, Le trésor, pp. 120—123, 141.
259 Նույն տեղում, էջ 114 —116, 142։
260 Միսուան, էջ 207։
261 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 27։
262 Н. Адонц, Армения в эпоху Юст., СПб, 1908, стр. 457.
263 Տարեգիրք, էջ 132։

խոստմամբ և հանգուցանէր պարգևօք, յորոց մի ես եմ Սմբատ Սպարապետ թարգմանող տառիս և պատմութեանս»[264]։ Որ այս պարգևները տրվում էին զինվորական ծառայության դիմաց, այդ երևում է նաև հաջորդ վկայությունից. «և այսպիսի խոհեմ իշխանօք և քաջ զորօք և առատ պարգևօք և ընդարձակ սեղանօք զամէնն յօժար կազմէր ի կռիւ»[265]։

Օրդենական պարգևական հողատիրությունը սովորաբար տրվում էր պայմանականորեն, բայց միևնույն ժամանակ այն մշտական էր, որը, սակայն, երբեք չդարձավ այդպիսին, քանի որ հաճախ էր խախտվում սենյորի և վասալի միջև կնքված պայմանագիրը։ Կիլիկիայում պարգևական կամ beneficium հողատիրության ձևը նույնպիսի զարգացում ապրեց, ինչ որ նրա նույնատիպը Արևմտյան Եվրոպայում։ Այստեղ այն տրվում էր վասալին ցկյանս օգտագործման համար, հետագայում վերածվում էր «feodum»-ի ժառանգական իրավունքով, թեև պայմանական էր։ Հետևաբար 13—14-րդ դդ. Կիլիկիայում ջնջվում է «պարգևական» և (feod) «հայրենիք» հողատիրության ձևերի միջև եղած տարբերությունը։ Ընդ որում, 12-րդ դարի երկրորդ կեսին Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, որոշ դեպքերում տարբերություն չի դրվում պարգևականի և հայրենիքի միջև, ֆեոդ-հայրենիքը ևս միացվում էր արքունի կալվածներին, եթե ֆեոդալը մեռնում էր անժառանգ[266]։ «Հայրենիքը» գրավվում էր «յարքունիս» նաև այն ժամանակ, երբ հայրենատեր-բերդատերը չէր կատարում վասալի պարտականությունները, ինչպես այդ պատահել էր Լամբրոնի իշխան Կոստանդինի տիրույթների հետ[267]։ Սմբատի Դատաստանագրքում այդ մասին ասված է. «Թէ իշխան կամ այլ ոք՝ որ ի թագաւորի ծառութիւն և ի հնազանդութիւն լինի. եւ իրք պատճառ այնէ թագաւորին. հայնց որ մեռնի իրաւնաւք, նա եղբարքն եւ որդիքն՝ որ յառաջագոյն լեալ լինին նա վասն հաւրն մեղացն չլինին զրկածք ի հայրենեցն ի ժառանգութենէ»[268]։

Վերը ասածից երևում է, որ այս շրջանում հայրենիքը նախկին իմաստը չի պարունակում, այլ ֆեոդ է, որը պայմանական է և ժառանգական, այնքանով, որքանով որ ֆեոդատերը գտնվում է

264 Նույն տեղում, էջ 247։
265 Նույն տեղում, էջ 253։
266 Միսուան, էջ 207։
267 V. Langlois, Le trésor, p. 116. Դանդակեցի, էջ 286—287։
268 Դատաստանագիրք, էջ 15։

թագավորի ծառայության մեջ։ Այստեղ ծառայութիւն կամ ծառութիւն տերմինները հոմանիշ են եվրոպական ֆեոդալիզմի servitium-ին։ Սա ցույց է տալիս, որ բենեֆիցիալ-պարգևական հողերը դառնում էին ժառանգական «հայրենիք-ֆեոդ» տիրույթ։ Այդպես էր լինում հատկապես այն ժամանակ, երբ ֆեոդատերերը այդ հողերի վրա կատարում էին շինարարական աշխատանքներ։ Նույն Դատաստանագրքում կարդում ենք. «Եւ թէ ժառանգաւոր իշխան յիր երկիրն ծախվորի, և բերդ կամ ամրոց շինէ կամ այլ ինչ, նա վասն այնոր կու շինէ որ իր ու իր յետմնացացն մնացական մնայ. մի՛ լիցի թագաւորին յայն ձեռնարկել, այլ իշխանքն զիրենցն ունեան մնացական եւ թագաւորին ուժ տան»[269]։

Այսպիսով, պարգևական հողերը դառնում էին հայրենիք և դրանով վերանում էր նրանց միջև եղած տարբերությունը։ Ընդ որում, երկուսի հիմքումն էլ ընկած էր վասալի պարտականությունները սենյորի նկատմամբ։

Օրդենական-պարգևական հողատիրությունը, ի տարբերություն ֆեոդալական հողատիրության մյուս ձևերի, ուներ մի շարք հատկանիշներ։ Ինչպես երևում է հողային դոնացիաներից, օրդենները ստանալով պարգև-ֆեոդները, դրա հետ մեկտեղ ստանում էին նաև որոշ արտոնություններ։ Այսպես, Կիլիկիայի թագավորը օրդեններին ազատում էր հարկերից, որոնք տալիս էին մյուս ֆեոդալները, երբ տիրում էին այդ նույն տիրույթների վրա։ Տևտոնական օրդենը, օրինակ, ազատվեց հարկերից, երբ Հեթում Ա-ից ստացավ Հարոնիա քաղաքը որպես տիրույթ[270]։

Ֆեոդալի կողմից սենյորին տրված հարկի մեծ մասը կոչվել է բաժ[271], իսկ հողային նվիրատվություններում բոլոր տեսակի հարկերը և տուրքերը՝ servitium[272]։ Վասալ ֆեոդալը, բացի զինվորական և գործակալական ծառայությունից, սենյորին վճարում էր նաև որոշ դրամական հարկ։

Օրդենները չէին ազատվում եկեղեցու օգտին գանձվող տասանորդից[273], քանի որ նրանք միևնույն ժամանակ եկեղեցու հոգևոր վասալներն էին։ Այդ մասին է վկայում հյուրընկալների և

269 Դատաստանագիրք, էջ 14։

270 V. Langlois, Essai hist., p. 51.

271 Դարդել, էջ 39։

272 V. Langlois, Le trésor, p. 143.

273 Documents latins, T. II. p. 249.

Մսիսի լատին արքեպիսկոպոսի միջև ստորագրված 1246 թ. կոնվենցիան[274]։

Հողային տիրույթները իրարից սահմանազատված են հատուկ նշաններով, որպիսիք հանդիսացել են սահմանային քարերը կամ խոշոր ծառերը։ 1212 թ. Տևտոնական օրդենին տրված հողային նվիրատվության մեջ նշված է, որ Ամուտի տիրույթը Կամարդեզիայի տիրույթից սահմանազծված է սպինոզայի ծառով, իսկ մյուս տիրույթից՝ մի խոշոր ծառով և ածխով[275]։

1271 թ. Սարվանդիկարի տեր Կոստանդինի կողմից Տևտոնական օրդենին մաքսատուն ունենալու վերաբերյալ տրված շնորհագրում, որպես սահմանագիծ-նշան, մատնացույց է արված տանձենու ծառը[276]։ Քարը և ածուխը, որպես հողային տիրույթները սահմանազատող նշան, բերված են «Անտիոքի ասիզներում». դրանց մեջ ասված է, որ որպես հողային սահման դնեն «գործելի» և քար[277]։

Յուրաքանչյուր ֆեոդալ-հողատեր հողի կամ ֆեոդի իրեն պատկանելու մասին ունեցել է հատուկ փաստաթուղթ, որը անպայման կնքվել և հաստատվել է պարոնության սիգելով, ատյանով և վկաներով[278]։ Այդպիսի փաստաթղթերի և արձանագրությունների մասին խոսում են Սմբատ Սպարապետը[279], Կիրակոս Գանձակեցին[280], Միքայել Ասորին։ Վերջինիս ժամանակագրության շարունակողը գրում է, թե Լևոն Բ պարգևներ էր տալիս վանքերին «արձանագրով սեփականէր նոցա գիւղս և ագարակս, այգիս և անդաստանս»[281]։ Նույնը մենք տեսնում ենք օրդենների օգտին կատարված հողային նվիրատվություններում։ Բերենք մի քանի օրինակներ. «Յայսմ սակս տուաք զմեր պարգևական հրամանքս և վասն առաւել հաստատութեան թագաւորական ձեռնագրովս ստորագրեցաք և ոսկի կնքով մերով կնքեցաք»[282]։ Մի ուրիշ տեղ «և կնքեցաք արքունական ոսկի վուլուս»[283]։ Կամ լատիներեն ֆոր-

274 V. Langlois, Essai, p. 71.

275 V. Langlois, Le trésor, p. 119.

276 «Բազմավէպ», 1873, էջ 108—112։

277 Assises d'Antioche, p. 39.

278 Նույն տեղում։

279 Տարեգիրք, էջ 82։

280 Գանձակեցի, էջ 108—109։

281 Միքայել Ասորի, էջ 504։

282 Սիսուան, էջ 208։

283 V. Langlois, Essai hist., p. 13.

մուլը, որը նման է Երուսաղեմի թագավորության պատկանող վավերագրերին։

Լատիներեն գրված և մեզ հասած հողային նվիրատվությունների և առևտրի շնորհագրերը վերջանում են հետևյալ ձևակերպմամբ. „Et sigillavimus nostrae magistatis aurea bulla", որը վերևում մեջ բերված ձևակերպման հայերեն թարգմանությունն է[284]։

Հայտնի է, որ ֆեոդալական հողատիրության ժամանակ հաճախ որևէ հող կամ կալվածք ստացվում կամ նվիրվում է հողօգտագործման համար վասալական հիմունքներով. այդ կապակցությամբ շնորհագրի կամ վավերագրի տակ ստորագրում էին հողի հետ առնչություն ունեցող անձնավորությունները։ Այդ դերում հանդես էին գալիս սենյորի և վասալի վկաները, որոնք ստորագրում էին հողային նվիրատվությունների տակ և հանդիսանում էին արքունիքի բարձրաստիճան գործակալներ՝ արքեպիսկոպոսներ, օրդեններ մագիստրոսներ կամ կոմանդորներ և ասպետներ[285]։

դ. Վանքապատկան հողատիրություն

Բուն Հայաստանի հոգևորական դասի սոցիալ-տնտեսական դրությանը վերաբերող հարցերը ուսումնասիրել են՝ Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Ա. Գ. Հովհաննիսյանը, Ս. Տ. Երեմյանը, Ս. Ե. Հակոբյանը, Ս. Պ. Պողոսյանը, Հ. Ութմազյանը, Վ. Բ. Բարխուդարյանը և այլ պատմաբաններ[286]։

Վերոհիշյալ հեղինակները ապացուցում են, որ հայկական ֆեոդալական իրականության մեջ ծագած և զարգացած հայ եկեղեցին իր կառուցվածքով, հողային ընդարձակ կալվածներով, իրավական-քաղաքական վարչական իշխանությամբ և դատական գործունեությամբ տիպիկ ֆեոդալական կազմակերպություն էր և ֆեոդալական հիերարխիայում գրավում էր առաջնակարգ տեղ-

284 Նույն տեղում, էջ 9։

285 V. Langlois, Le trésor, p. 106—116, 122, 141, 143, V. Langlois, Essai, p. 13.

286 Н. Адонц, Арм. в эпоху Юст. էջ 321—370։ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 126—172։ Աշոտ Հովհաննիսյան, Գրվածներ, հ. 1, էջ 262—330։ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, էջ 191—209։ Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, էջ 46—110։ Հ. Ութմազյան, Սյունիքը 9—10-րդ դարերում, էջ 175—186։

բից մեկը, ընդ որում ֆեոդալական եկեղեցին, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում «գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում»։ «Ֆեոդալական եկեղեցին,—ինչպես նշում է Ֆ. Էնգելսը,—ֆեոդալական հասարակարգը շրջապատեց աստվածային շնորհքի սրբազան փայլով։ Նա իր սեփական նվիրապետությունը հաստատեց ֆեոդալական օրինակի համաձայն և վերջ ի վերջո նա ամենախոշոր ֆեոդալական սեփականատերն էր»[287]։

Բուն Հայաստանում 11-րդ դարի առաջին կեսին, հայկական թագավորությունների և քաղաքական ինքնուրույնության վերացման շրջանում, հայ ֆեոդալական եկեղեցին և նրա պետը՝ կաթողիկոսը, երկրում հանդիսանում էր ամենախոշոր ֆեոդալ-հողատերը, Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը (1022—1058) «ունէր կազմութիւն հայրենեաց՝ հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահավէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւոր և գաւառապետս ի վերայ եօթն հարիւր թիմի հանապազ,... և չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց»[288]։

Սակայն 11-րդ դարի երկրորդ կեսին, Հայաստանում ստեղծված քաղաքական անապահով դրությունը ստիպում էր հայ հոգևոր ֆեոդալներին, դաղթող հայ աշխարհիկ ֆեոդալների և ժողովրդի հետ միասին, դաղթել բյուզանդական կայսրության Փոքր Ասիայի արևմտյան շրջանները՝ Կիլիկիա, Կապադովկիա և այլ նահանգներ, և ի վերջո ապաստան գտնել Ամանոսյան և Տավրոսյան լեռներում նախկինում գոյություն ունեցող հայ վանքերում։ Այս վայրերում ապաստանած Խաչիկ Բ. Անեցի կաթողիկոսի և հայրապետական աթոռի մասին, Մատթեոս Ուռհայեցին գրում է. «...և այսպիսի օրինակաւ սուգ ունէր Տէր Խաչիկ ի սրտի իւրում, և յիշեալ զաւերումն հայրապետական աթոռոյն տանն Հայոց, նաև զխափանել աթոռոյ թագաւորութեանն յազգէն Բագրատունեաց և գալ ծառայել չարամիտ ազգաց Յունաց»[289]։

287 Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, Երևան, 1933, էջ 18։

288 Ուռհայեցի, էջ 153—154։

289 Նույն տեղում, էջ 153։

Կիլիկիայում հայ հոգևորական ֆեոդալական վանքապատական հողային կալվածների մասին եղած վկայությունները ցույց են տալիս, որ հայ հոգևորականները այստեղ էին հաստատված դեռևս 7-րդ դարից[290]։ Նրանց թիվը աճում է 10-րդ դարում և հատկապես 11-րդ դարի կեսերին, երբ սելջուկների արշավանքների հետևանքով, բազմաթիվ հոգևորականներ ապաստան են գտնում Կիլիկիայի Սեավ լեռներում։ Արիստակես Լաստիվերտցին պատմելով Ռոմանոս կայսրի (1028—1034) Սիրիայի Հալեպ քաղաքը ավերելուց հետո Կիլիկիայի վրայով վերադարձի մասին, գրում է. «Եկեալ (իմա Ռոմանոս կայսր) հանդիպի լերինն որ կոչի Սեաւ. և տեսանէ անդ բազմութիւն վանորէից և զմենաստանս մենակեցաց», որոնք զբաղվում էին գյուղատնտեսությամբ, ցանում էին ցորեն և գարի, մշակում էին խաղողի այգիներ, պատրաստում էին քաղցրահամ կերակուրներ և գինիներ. «զոր մատուցանեն որթք այգեաց»։ Ռոմանոսը, երբ տեսնում է նրանց հարստությունը, հրամայում է վանքերի հոգևոր տերերին մտնել իր ծառայության մեջ, ասելով. «Զէ՞ ինչ պիտոյ աղօթք նոցա, այլ գերեցէք յամենայն վանորէիցն աղեղնաւորս ի ծառայութիւն իմում թագաւորութեանս»[291]։

Սեավ լեռների հայ վանքերի և նրանց պատկանող գյուղերի մասին հիշատակում է նաև Մատթեոս Ուռհայեցին գրելով, որ 1066 թ. սելջուկների Ավշին զորավարը ասպատակում և այրում է Սեավ լեռների անթիվ վանքերն ու նրանց գյուղերը[292]։ Սակայն 11-րդ դարի վերջին խաչակրաց առաջին արշավանքների ժամանակաշրջանում այդ վայրերում այնքան են բազմանում վանքերը, որ նրանց կալվածներից ստացված «կերակրօք օգնում էին նոցա»[293] (խաչակիրների— Ս. Բ.)։ Սեավ լեռների վանքերի հարստության մասին են խոսում ժամանակակից պատմիչներ Գիլյոմ դը Տիրը[294] և Սանուտոն[295]։ Նույն վանքերի մասին 1101 թ. ուղևորությունից վերադարձող Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը

290 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. 1, էջ 468—478։

291 «Պատմութիւն Արիստակեայ Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 42—43։

292 Ուռհայեցի, էջ 152։

293 Նույն տեղում, էջ 259։

294 *Guillaume de Tyr*, T. IV, pp. XVI—XVII.

295 *Sanutus M.* Liber secretorum fidelium. crucis. Hannoviae, 1611, T. III, VII.

գրում է. «...հասանք ի սուրբ լեառն, զոր Սեաւն կոչեն ի մեր սեփհական պարգևական եկեղեցիքն, յուխտն Սուրբ, զորս ըստ ասորի բարբառոյ Պաղլահոյ կոչեն, որ թարգմանի դրախտ Աստուծոյ»[296]։

Կիլիկիայի եկեղեցիների և վանքերի կալվածքներն ու տիրույթները էլ ավելի աճեցին 12-րդ դարում՝ Կիլիկիայի Ռուբինյան իշխանության հզորացման և հատկապես մեծ չափեր ընդունեցին 13—14-րդ դարերում՝ թագավորության շրջանում։ Հայ հոգևոր ֆեոդալների տիրույթները ընդարձակվում էին մի կողմից՝ հայ իշխանների, թագավորների կողմից կատարված նվիրատվությունների և հոգևորականների կողմից կալվածքներ գնելու միջոցով, և մյուս կողմից՝ գյուղացիական համայնքներին պատկանող հողերի բռնագրավումով։

Հայտնի է, որ միջնադարյան քրիստոնեական եկեղեցին հանդիսանում էր կղերա-ֆեոդալական գաղափարախոսության հիմնական դրոշակակիրը, ամբողջովին ծառայում էր աշխարհիկ իշխանությանը՝ հնազանդության մեջ պահելու աշխատավոր ժողովրդին, իր հերթին ինքն էլ դաժան շահագործման էր ենթարկում նրան։ Այս դրության վառ ապացույցներ են հանդիսանում մեզ հայտնի Ներսես Շնորհալու, Վարդան Այգեկցու, Վահրամ Ռաբունու և մի շարք այլ հոգևորականների կոնդակներն ու թղթերը, քարոզներն ու ճառերը[297]։

Աշխարհիկ ֆեոդալները, իշխաններն ու թագավորները հանձինս եկեղեցու տեսնում էին իրենց դասակարգային հոգևոր հենարանին, որի դիմաց, որպես հատուցում, նրանց ցույց էին տալիս տնտեսական և քաղաքական օժանդակություն։

Այսպես, սկսած 12-րդ դարի սկզբից, Կիլիկիայի իշխանության հզորացման շրջանից, Կիլիկիայի հայ իշխանները հոգ են տանում եկեղեցիների և վանքերի հարստության աճմանը և նոր եկեղեցիների կառուցմանը։ «Գող Վասիլը, —գրում է Սմբատը,— եղև տէր բազում բերդից և գաւառաց... և եղև այր պայծառացուցիչ եկեղեցեաց, զարդարիչ վանորէից, պարգևացն քահանայից...»[298]։ Թորոս Ա-ի (1100—1129) եկեղեցական շինարարության մասին Սամուել Անեցին գրում է. «Յորժամ տիրեաց Անարզարու շինեաց զմեծ տաճարն և անդ եդ զպատկեր Տիրամօրն։ Շինեաց

296 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, էջ 285։

297 Տե՛ս սույն աշխատության ներածականը և Բ. գլխի «Հոգևորականների դերը երկրի կառավարման գործում» ենթաբաժինը։

298 Տարեգիրք, էջ 122։

սա և զսուրբ ուխտն Դրազարկ և զՄաշկաւորն և զայլս բազումս զորս վերստին նորոգեաց և պարգևօք փարթամացոյց»[299]։

Նույն իշխանի մասին Վահրամ Ռաբունու չափածո պատմության մեջ ասված է.

Զեկեղեցի բազում շինեալ
Եւ վանորայս յոյժ հռչակեալ
Յորոց Դրազարկն մակագրեալ
Եւ Մաշկեւորն անուն ձայնեալ
Եւ այլ բազումք որ հաստատեալ
Եւ պարգևոք փարթամացեալ[300]։

Անարզաբայի «Զորավարաց եկեղեցու» պատի արձանագրություններում գրված է. «Ի կամս ամենասուրբ երրորդութեան ես Թեոթոս (իմա Թորոս—Ս. Բ.) ...Սեբաստոս որդի Կոստ... որդւոյ Ռուբենի շինեցի զեկեղեցիս»[301]։

Եկեղեցիներ են շինում և դրանց առատ պարգևներ և հողային կալվածներ են նվիրում նաև Թորոս Ա-ի հաջորդները։ Թորոս Բ-ի մասին (1145—1169) ասված է «...զի էր այր բարեպաշտ և ողորմած, մեծախորհուրդ և առատամիտ»[302]։

Եկեղեցական շինարարությամբ են զբաղվել նաև Տարսոնի Աբուլղարիբ Արծրունի իշխանը և Լամբրոնի Օշինյան-Հեթումյան իշխանները[303]։

Բացի իշխանների կողմից տրված նվիրատվություններից, հայ հոգևոր ֆեոդալները կալվածներ են ձեռք բերում գնելու միջոցով։ Այսպես, Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը (1113—1166) «Դղյակն Ծովք... ստացեալ էր տուրբ հայրապետն գնոց և Բրնձէն Անտիոքայ և ԺԵ գեղ շուրջ ի ԿՌ (60.000) դահեկան և եկեալ անդ բնակէր հանդերձ եղբարբն»[304]։ Սմբատ Սպարապետը կաթողիկոսարանի Ծովքից Հռոմկլա տեղափոխվելը, ի տարբերություն Կիրակոս Գանձակեցու, արձանագրել է այլ կերպ. գրելով՝ «զկնի ժամանակաց ետուն Շոսլնին ԺԵՌ (15000) դահեկան ի գին Հռոմկլային»[305]։

12-րդ դարում վանքապատկան խոշոր հողատիրության զարգացումը, որը տեղի էր ունենում Կիլիկիայում Ռուբինյան իշխանների քաղաքական հզորացման պայմաններում, հետևանք էր երկրում ֆեոդալական արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների՝ արհեստագործության, ներքին և արտաքին առևտրի, ապրանքադրամական հարաբերությունների զարգացման, որը իր հերթին փոփոխություն էր մտցնում և վատացնում գյուղի և քաղաքի աշխատավոր մասսաների սոցիալ-իրավական վիճակը, ուժեղացնելով գյուղացիության ճորտացումը և հողին ամրացումը։ Ընդ որում վերջինների հողերի բռնագրավման հաշվին աճում և զարգանում էին հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական հողատիրությունները։

12-րդ դարից սկսած ինչպես արտաքին ուժերի նվաճողական նպատակով ասպատակությունները, այնպես և երկրի ներսում աճող ֆեոդալական կենտրոնախույս ուժերի աշխուժացումը իշխող հայ ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչներին ստիպում էին ապահովել իրենց սեփականատիրական իրավունքը հատկապես անշարժ գույքի նկատմամբ։ Ապահովության միակ ճանապարհը նրանք տեսնում էին հայ եկեղեցու մեջ, որն օժտված էր արտոնություններով ու ապահարկ էր[306]։ Այս ճանապարհը հենց հանդիսացավ Կիլիկիայում հայ եկեղեցական խոշոր հողատիրության զարգացման հիմնական աղբյուրը։

Ներսես Շնորհալին թեև բողոքում է թագավորական իշխանության չգոյության պատճառով հայ հոգևորականների աղքատ վիճակի մասին, սակայն չկարողանալով թաքցնել ճշմարտությունը գրում է. «Յորոց բազումք են ի ժամանակիս կրօնաւորաց՝ որ յաշխարհի առանց ժառանգութեան էին և հարկատուք իշխանաց, և աղքատք ի գոյից, և կարօտք հարկաւորացն, և յորժամ զձև կրօնաւորութեան ընկալան՝ տեարք եղեն ի վանորեայս բազում ժա-

---

299 Սամուէլ Անեցի, էջ 121։ Հմմտ. նաև «Արարատ», 1870, էջ 355։ Սամուէլ Անեցի, «եւ առատատուր պարգևոք կարգաւորեալ ճոխացոյց, միանգամայն հիւրանոցս բազումս»։

300 Documents arm. T. I, p. 418.

301 Սիսուան, էջ 239։

302 Սամուէլ Անեցի, էջ 218։

303 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 554։

304 Տարեգիրք, էջ 161։ Տե՛ս նաև, Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, 1873 թ., Վենետիկ, էջ 96, 151, 189, 310։ Բարկեն ծ. վ. Գյուլսերյան, Ծովք, Ծովք Տլուք, Հռոմկլայ, Վիեննա, 1904, էջ 3—10։

305 Տարեգիրք, էջ 168—169։

306 Л. О. Бабаян, Социально-экономическая и политическая история Армении в XIII—XIV вв. Ереван, 1962 (Автореферат докторской диссерт.).

ռանգութեան, և փարթամացան ստացուածովք, և ոչ միայն հարկաւոր պիտոյիցն եղեն անկարօտ, այլև աւելարդօքն լցան և յաշխարհի հոգովք և երկօք տաժանեալք, և աստ անհոգութեամբ և հեշտութեամբ ստուարացեալք»[307]։

Նույն դարաշրջանի խոշոր հոգևոր ֆեոդալ Ներսես Լամբրոնացին Լևոն Բ-ին հղած հայտնի ինքնապաշտպանողական նամակում, համեմատելով իր վարմունքը մյուս հոգևորականների հետ, վերջինների մասին գրում է, որ նրանց նման «ոչ ձիօք և ոչ ջորեօք յօրացաք և ոչ զքահանայութիւն երկրորդ մարմնոյ աշխատութիւն ստացաք», և որ կարևորն է «ոչ ի քաղաքս ձեր ձեռներէց եղաք և ոչ զգործակալս ձեր հարստահարեցաք»[308]։

12-րդ դարի վերջին քառորդում այնքան է մեծանում և աճում հայ հոգևոր ֆեոդալների հարստությունն ու հողային տիրույթները, որ Սմբատ Սպարապետը Գրիգոր Տղա կաթողիկոսին (1173—1193) համեմատում է արքաների հետ գրելով, թե «զկեանս իւր արքայակերպ վարէր մեծամեծ տիրիւք և առատ պարգևօք»[309]։

Այսպիսին էր կաթողիկոսության և հայ հոգևորականության վիճակը, երբ 1198 թ. ստեղծվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, որով և իրագործվեց Ներսես Շնորհալի կաթողիկոսի իղձը։ Հանձինս թագավորության, հոգևորականությունը գտավ իր լավագույն հովանավորողին և պաշտպանին։

Լևոն Բ թագավորը առաջինն էր, որ չմոռացավ հոգևորականությանը։ Պատահական չէ, որ այնքան գովասանքով են խոսում Լևոն Բ թագավորի մասին մի շարք հայ և օտար հեղինակներ։

Միքայել Ասորու պատմության շարունակողը, ուղղակի մատնացույց անելով Լևոն Բ-ի եկեղեցաշինարարության և եկեղեցիներին ու վանքերին հողային տիրույթներով ապահովելու մասին, գրում է. «Իսկ պսակաւորն Հայոց Լևոն բարւոք կարգաւորէր զաշխարհն իւր... շինելով բազում վանօրայս, և զյառաջագոյն շինեալսն ընդարձակելով, առատապէս տալով զպէտս նոցա այլև արձանագրով տեփհականէր նոցա գիւղս և ագարակս, այգիս և անդաստանս և գրեթե ետ նոցա զպարարտութիւն երկրին իւրոյ. և առատացոյց զոռճիկս նոցա պատրաստագոյնս ի ծովէ և ի ցամաքէ, ոչ միայն զհամազգի վանորեայսն այսպէս փարթամացոյց, այլև զայլալեզու քրիստոնէից զԱստուծոյ և զֆրանկաց այլ և զՅունաց և զՎրաց»[310]։ Ապա շարունակության մեջ գրում է, որ այդ բոլոր հողային կալվածները Լևոն Բ նվիրում է եկեղեցիներին և վանքերին. «Աստուծո արձանագրութեամբ և կտակօք անլուծիւք»[311]։

Եկեղեցիների և վանքերի օգտին Լևոն Բ-ի հողային նվիրատվությունների մասին գրել են նաև Սմբատ Սպարապետը[312], Սամվելը[313], Անեցու պատմության շարունակողը[314], Վահրամ Ռաբունին[315] և ուրիշներ։

Հեթում Ա-ի հոր Կոստանդինի մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ զամենայն վանորայս երկրին անհոգ առնէր յամենայն կողմանց, զի ինքն տայր զամենայն պիտոյս նոցա»[315]։ Այդ մասին Սմբատը գրում է, որ «յառաջ չիշխէր եպիսկոպոսն վանացն. ապա թէմին մէն իշխէր. և զվաներն աշխարհական պարոնացն. ապա թէմին մէն իշխէր. և զվաներն աշխարհական պարոնայք հոգային»[316]։

Հռոմկլայի կաթողիկոսությանը հողային առատ նվերներ են պարգևում նաև Հռոմկլա այցելած և կաթողիկոսի կողմից հյուրընկալված Դամասկոսի և Մեծ Հայքի սուլթանները, նրանք Կոստանդին Ա կաթողիկոս Բարձրբերդցուն որպես նվեր տալիս են գյուղեր և դաստակերտներ[317]։

Հողային առատ պարգևներ է ստանում Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսը 1292 թ., երբ հայրապետական աթոռը Հռոմկլայից տեղափոխվում է Սիս[318] (Հռոմկլան գրավում են Եգիպտոսի մամլուքները)։

Վերոհիշյալից պարզ է, որ եկեղեցիների և վանքերի հողային հարստության հիմնական աղբյուրը հանդիսանում էր նրանց օգտին կատարվող հողային պարգևները և գնման միջոցով ձեռք բերված կալվածները։ Անշուշտ, հիմնական աղբյուրներից էր նաև գյուղացիական ծխերի հողերի հաշվին կատարվող բռնագրավումները կամ այդ հողերից նվիրատվությունների և կտակի միջոցով ստացվածը։

---

307 Թուղթ ընդհանրական, էջ 29։

308 «Գրիգորի կաթողիկոսի, Տղայ կոչեցելոյ նամականի», 1865, ի Վենետիկ, էջ 210—211։

309 Տարեգիրք, էջ 191։

310 Միքայել Ասորի, էջ 504։

311 Նույն տեղում,

312 Տարեգիրք, էջ 208։

313 Սամուել Անեցի, էջ 144, 152։

314 Ռաբունի, էջ 1—55։

315 Գանձակեցի, էջ 190։

316 Դատաստանագիրք, էջ 50։

317 Գանձակեցի, էջ 191։

318 «Հանդէս ամսօրեայ», 1956, էջ 35—36։

Սմբատի Դատաստանագիրքը պարտավորեցնում է աշխարհիկ և հոգևոր հողատերերին իրենց ունեցվածքից բաժին հանեն վանքին և եկեղեցուն, իսկ մահացող՝ երեցի կամ քահանայի տունն ու հայրենատանը (հողը) պատկանում է եկեղեցուն կամ վանքին։ Այսպես, Լ6 հոդվածում կարդում ենք. «Մարդ որ մեռնի՝ նա ի մահուն ժամանակն ի հոգւոյն բաժնէն պատեհ է՝ որ առաջ զիր եկեղեցոյն հոգայ»[319]; իսկ անժառանգ հոգևորականի «տունն ու հայրենատանը եկեղեցոյն է», իսկ եթե ունի օրինական ժառանգ «նա կարէ իրաւնաւք ունել զկէս տունն և զկէս հայրենացն, և կէս այլն մնայ յեկեղեցոյն հրամանաւքն»[320]։

Վանքերի և եկեղեցիների օգտին նվիրատվություններ էին կատարում նաև հոգևորական սքեմ հագած աշխարհականները։ Այսպես, Ս. Թորոս վանքին միաբանած մի ոմն Մխիթար՝ վանքին նվիրում է «յարդար ընչից իւրոյ եղինս երկու»[321]։ Որ այդ երևույթը չի եղել պատահական, այդ է վկայում Սմբատի Դատաստանագրքի հետևյալ հատվածը. «Եւ թէ ոք դայ եղբայրութիւն և փաւշմանի, նա կարէ այլվայ առնուլ զիր իրքն ու ելնել. բայց զինչ եկեղեցոյն լինի տվել՝ նա այն այլ չէ պատեհ որ դառնայ»[322]։ Մեռնող միաբանը չէր կարող իր ունեցվածքը ժառանգել աշխարհայիններին. նրա ունեցվածքը մնում էր վանքին[323]։

Եկեղեցու հարստությունը աճում էր նաև ռազմական արշավանքներից ստացված ավարից։ Սմբատը այդ մասին գրում է. «Եւ թագւորն զիր շահուն տասնեակն պատեհ է որ եկեղեցոյն տայ»[324]։ Իսկ իշխանները ավարից ստացած «տասնեակն տան յիրենց եկեղեցացն»[325]։

Այսպիսով, Կիլիկիայի հայ և օտար եկեղեցիներն ու վանքերը և նրանց հոգևոր ֆեոդալ տիրակալները 13—14-րդ դարերում դառնում են խոշոր հողատերեր։

1198 թ. Լևոն Բ-ի թագադրության մասնակցած աշխարհիկ խոշոր ֆեոդալների հետ Սմբատը հիշատակում է նաև հոգևոր խոշոր ֆեոդալներին՝ իրենց պատկանող տիրույթներով հանդերձ։ Այսպես, կաթողիկոսից հետո հոգևոր խոշոր ֆեոդալներ էին Սսի արքեպիսկոպոսը՝ Դրազարկի առաջնորդ Հովհաննեսը, որը տեր էր բազմաթիվ գյուղերի և ագարակների։ Այնուհետև ըստ կալվածների խոշորության, հիշատակվում են. Մամեստիայի արքեպիսկոպոսը՝ առաջնորդ և տեր՝ Արքակաղնու, Անազարբայի արքեպիսկոպոսը՝ առաջնորդ Սկեվռայի վանքի, Տարսոնի արքեպիսկոպոսը՝ տէր Մլեհի, Կապանի եպիսկոպոսը՝ տէր Արեկուինի, Մեծ քարի եպիսկոպոս՝ տեր համանուն վանքի։ Անշուշտ, Սմբատը չի հիշատակել այն եպիսկոպոսներին, որոնք ներկա չեն եղել թագադրության ծիսակատարություններին։ Նրանց մասին հիշատակություններ կան թագավորական հրովարտակներում։ Դրանցից առավել նշանավորներն են՝ Սելևկիայի, Փիլիպեի, Պերտուսի, Ենգեկուտի, Մարաշի, Բարձրբերդի, Տարսոնի, Կոպիտարի, Ադանայի և Մոլեվոնի եպիսկոպոսները[326]։ Այդ թվին պետք է ավելացնել նաև օտար վանքերի և եկեղեցիների արքեպիսկոպոսներին ու եպիսկոպոսներին, որոնք նույնպես տիրույթներ են ունեցել Կիլիկիայում և ինչպես վերևում տեսանք, հողային նվիրատվություններ են ստացել Կիլիկիայի հայ թագավոր Լևոն Բ-ից և նրա հաջորդներից։ Հայերից հետո, վանքեր և եկեղեցիներ են ունեցել հույները, ասորիները, լատինները—ֆրանկները, վրացիները և այլն[327]։

Կիլիկիայի 12—14-րդ դդ. վանքերի պատմությունը ուսումնասիրող Հ. Հ. Ոսկյանը իր «Կիլիկիայի վանքերը» աշխատության մեջ բերում է հայ և օտար 150 վանքերի և եկեղեցիների մասին հիշատակություններ[328]։

Թեև 14-րդ դարի սկզբին Սսի և Ադանայի եկեղեցական ժողովներին ներկայացող հոգևոր ֆեոդալները կրել են առաջնորդ և տեր տիտղոսները, սակայն այս տերմինները նույն բովանդակությունը չեն ունեցել, ինչ որ ունեցել են 12-րդ դարում։ «Տեր» տերմինը այդ ժամանակ ցույց էր տալիս արքեպիսկոպոսի կամ եպիսկոպոսի հողային սեփականատիրական իրավունքը։ «Առաջ-

319 Դատաստանագիրք, էջ 46։
320 Նույն տեղում, էջ 49։
321 *Macler*, Rapport sur une mission scientifique, Paris, 1910, p. 39.
322 Դատաստանագիրք, էջ 72։
323 Նույն տեղում։
324 Նույն տեղում, էջ 11։
325 Նույն տեղում, էջ 12։

326 *V. Langlois*, Essai, p. 66—70.
327 Միխայել Ասորի, էջ 504։ *Abulfaradj*, Chronicon Syriacum. p. 541. Documents arm., T. I, p. 576.
328 Հ. Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, Վենետիկ, Ս. Ղազար, 1956։

նորդը» ցույց էր տալիս հոգևոր ֆեոդալի վարչական իրավունքը[329]։

Կիլիկիայի վանքերի, եկեղեցիների ու նրանց տեր հոգևոր ֆեոդալների կալվածները նույնպես, ինչպես աշխարհիկ հայրենատեր ֆեոդալներինը կոչվել են Հայրենիք, Հայրենատան, Հայրենի ժառանգություն և Սեփական ժառանգություն տերմիններով, որոնք տարբեր ժամանակներում ունեցել են տարբեր իմաստ և բովանդակություն։ Այսպես, 11—12-րդ դարերում այս տերմինների տակ հասկացվել է տեր տիտղոսը կրող անձնավորության՝ հոգևոր ֆեոդալի անձնական, ժառանգական Հայրենի սեփականությունը։ Իսկ 13—14-րդ դարերում, երբ վերջ էր տրվել հոգևոր պաշտոնների ժառանգականությանը, վերջ տրվեց նաև հողերի և կալվածների վրա հոգևորականների անձնական-ժառանգական իրավունքը։ Թեև այս ժամանակաշրջանում էլ մնում էին տեր, հայրենիք, հայրենի ժառանգություն տերմինները, սակայն վերջին երկուսը վերագրված էին վանքին կամ եկեղեցուն, իսկ տերը վերագրված էր նրա ժամանակավոր կրողին, որովհետև հոգևորական պաշտոնները դարձել էին ընտրովի և ոչ ժառանգական[330]։

12-րդ դարում անձնական-ժառանգական սեփականության մասին Ներսես Շնորհալին գրում է. «Յորոց բազումք են ի ժամանակի կրոնաւորաց, որ յաշխարհի առանց ժառանգութեան էին, և յորժամ զձև կրօնաւորութեան ընկալան, տիարք (ընդգծումը մերն է— Ս. Բ.) եղեն ի վանորայս բազում ժառանգութեան և փարթամացան ստացուածովք»[331]։ Գրիգոր Տղայ կաթողիկոսի տիրույթները Ներսես Լամբրոնացին անվանում է «իւր սեպհական աւանն»[332]։ Ներսես Լամբրոնացին, որը հետագայում պայքարում էր հոգևորականության անձնական ժառանգական սեփականատիրական և վարչական իրավունքների դեմ, իր հորից՝ Օշինից ստացել էր որպես ժառանգ, Սկևռայի եկեղեցին և վանքը, իր հողային պատկանելությամբ հանդերձ և 30 հազար դահեկան դրամ[333]։

Ներսես Շնորհալին իր չափածո գրվածքներից մեկում գրում է.

329 Կդեմես, մասն 1-ին, էջ 458—475, 503։

330 Տե՛ս նաև Հ. Ութմազյան. Սյունիքը 9—10-րդ դդ., Երևան, 1958, էջ 152—154։

331 Թուղթ ընդհանրական, էջ 31։

332 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 4—10։

333 «Պատարագի մեկնութիւն Ներսիսի Լամբրոնացւոյ», «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 39—40։

«Մեք ի դղեկէն, որ Ծով կոչի
Որ սեպհական մեր էր տեղի»[334]։

Սակայն 13-րդ դարում, երբ վերանում է հոգևոր ֆեոդալների պաշտոնների ժառանգականությունը[335], վերանում է նաև նրանց ժառանգական իրավունքը վանքապատկան և եկեղեցական հողերի նկատմամբ։ Այդ կալվածները հիշատակվում են որպես վանքի սեփականություն։ Այսպես, Գոներ վանքի Տիրոջ գյուղը, որը նվիրել էր Լևոն Բ-ը, հիշատակարաններից մեկում անվանում է. «Սեփական ժառանգութիւն սուրբ Անապատին Կոներուն»[336]։

Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքում բազմաթիվ հոդվածներով սահմանում է եկեղեցական և վանքապատկան հողատիրության իրավունքները և որոշակի կերպով նշում է, որ վանքի կամ եկեղեցու ունեցվածքը չի պատկանում եպիսկոպոսին և վերջինս չի կարող ժառանգել այդ, որովհետև նրա պաշտոնը ընտրովի է. «Զի ամենեին սուրբ եկեղեցին ի յեպիսկոպոսի հայրենտրութիւն գրած և ոչ կարէ եպիսկոպոսն իւր եպիսկոպոսութեան ժառանգ դնել՝ քանց զայն, որ ընտրութեամբն Աստուծոյ և հայրապետին և ամենայն ժողովրդեանն արժանի այնեն»[337]։ Այս կալվածները նույնպես կոչվել են հայրենիք։ Սակայն, եկեղեցական-վանքապատկան «հայրենիքի» և աշխարհիկ ֆեոդալների «հայրենիքի» միջև կար էական մի տարբերություն, ընդ որում, եթե վերջինս բաժանելի էր, օտարելի և ժառանգական, ապա առաջինը անբաժանելի էր, որովհետև անձնական ժառանգական չէր և հետևաբար ոչ-օտարելի։ Վանքի միաբանությունը այդ կալվածները տիրում էր dominum directum լիակատար սեփականատիրական իրավունքով, ընտրովի եպիսկոպոսի տնօրինությամբ, որը չուներ դրանց ժառանգելու և օտարելու իրավունք, բացի այն ստացվածքից, որը անձնական էր և որը կարող էր ժառանգել ում կամենար[338]։ Իսկ եկեղեցականի տունը և ունեցվածքը կարող էր գնել միայն եկեղեցին կամ եպիսկոպոսը[339]։

Հոգևոր հողատիրության վերաբերյալ վերոհիշյալ օրենքները բարենպաստ պայմաններ ստեղծեցին եկեղեցական և վանքապատկան հողատիրության հետագա խոշորացման։ Սա էլ հանդի-

334 «Հանդէս ամսօրեայ», 1948, էջ 105—117։

335 Դատաստանագիրք, էջ 20, 24, 58։

336 «Հասկ», 1950—1951, էջ 59—60։

337 Դատաստանագիրք, էջ 24։

338 Նույն տեղում, էջ 20, 75։

339 Նույն տեղում, էջ 75։

սանում էր նրա առավելություններից մեկը աշխարհիկ՝ հայրենական ժառանգական հողատիրության նկատմամբ, որը ենթակա էր մանրացման և մասնատման։ Ընդհակառակը, գնալով էլ ավելի էր ընդարձակվում վանքապատկան հողատիրությունը, որը երևում է 14-րդ դարի սկզբին կայացած Սսի և Ադանայի ժողովներին մասնակցած վանքերի և եկեղեցիների հոգևորական ֆեոդալների ընդարձակ տիրույթներից։

Այսպիսով, Կիլիկիայի եկեղեցիներն ու վանքերը, որոնք ձեռք էին բերել ընդարձակ հողամասեր, անդաստաններ, այգիներ, գյուղեր և ավաններ, եղել են Կիլիկիայի խոշորագույն հողատիրական կազմակերպություններ, նրանք այդ հողերի վրա տիրել են dominum directum լիակատար սեփականատիրական իրավունքով։

Վանքերը և եկեղեցիները իրենց սպասարկող հոգևոր պաշտոնյաներին նույն վասալական հիմունքներով տվել են հող կամ հողերի վրա նստող գյուղացիների ծխերից ստացված եկամուտներ։ Հոգևորական հիերարխիայի գլուխ էր կանգնած կաթողիկոսը, որը նման թագավորի, վանքապատկան հողերի վրա չի ունեցել գերագույն սեփականատիրական իրավունք։ Վանքապատկան և եկեղեցական հողերն ու ծխերը պատկանել են վանքին ու պայմանական ձևով դրվել են կաթողիկոսի անձնական վասալական կախման մեջ։ Վանահայր արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները կանգնած էին հիերարխիայի երկրորդ աստիճանում։ Վերջիններից վասալական կախման մեջ էին գտնվում քահանաները և երեցները։ Այս մասին Սմբատը գրում է. «Եպիսկոպոսունքն հայրապետին են, և իրիցնին ծխերովն եպիսկոպոսին, բայց եպիսկոպոսն իր ծուխ չկարէ ունալ»[340]։ Թեև հայտնի է, որ եպիսկոպոսը, որպես առաջնորդ, նույնպես ստանում էր այսպես կոչված «եպիսկոպոսական հասք և տուրք»։

Սմբատի Դատաստանագրքի ԺԴ (14) հոդվածում նշված է, որ կաթողիկոսի դեմ ապստամբող վասալ եպիսկոպոսի նկատմամբ կաթողիկոսը պետք է վերաբերվի այնպես, ինչպես սենյորը կվերաբերվեր իրենից ֆեոդ կամ պաշտոն ստացած իր լիճ ճորտի՝ վասալին, երբ վերջինս չներկայանար սենյորի վերին ատյանին, առաջին և երկրորդ անգամ կանչվելուց հետո[341]։

340 Դատաստանագիրք, էջ 52։

341 Նույն տեղում, էջ 23 հմմտ. Assises d'Antioche, pp. 10—13.

Կիլիկիայի արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները վանքապատկան հողերի վրա ունեցել են իրենց աշխարհիկ լիճ ճորտերը նման Երուսաղեմի թագավորության հոգևոր ֆեոդալներին։ Իննոկենտիոս 3-րդ պապը 1209 թ. Լևոն Բ-ին հասցեագրած նամակներից մեկում հրամայում է վերջինիս՝ վերադարձնել Տարսոնի ֆրանկ պատրիարքից խլված Հինից բերդը, որի շուրջը գտնվող կալվածներում ապրում էին հայ և ասորի աշխարհիկ լիճ ճորտեր, որոնք վասալական կախման մեջ էին Տարսոնի ֆրանկ պատրիարքից[342]։

Վանքերի և եկեղեցիների թեմերի առաջնորդ եպիսկոպոսները, թագավորից ստացել են ռոճիկ՝ դառնալով թագավորի լիճ ճորտեր՝ վերջինին տրամադրելով զինված ուժեր։ Հոգևորականների ստացած ռոճիկը եղել է արքունի կալվածից ստացված որևէ եկամուտ, ասենք քաղաքներից և գավառներից արքայական հարկերի մի մասը կամ թե արքունի կալվածների գյուղացիներից ստացած ռենտաները՝ հարկերն ու տուրքերը[343]։

Միքայել Ասորուն շարունակողը նշում է, որ բացի հողային նվիրատվություններից, Լևոն Բ «առատացոյց զռոճիկս» հոգևորականների[344]։ 1216 թ. Լևոն Բ Անտիոքը գրավելուց հետո, պաշտոնազրկում է Տարսոնի ֆրանկ եպիսկոպոսին և նշանակում է նոր եպիսկոպոս՝ նրան տալով Տարսոնի և Մամեստիայի շուրջ գտնվող կալվածները՝ որպես ռոճիկ[345]։

Ներսես Լամբրոնացին Լևոն Բ-ին գրած իր հայտնի նամակում ասում է, որ ինքը ոչ պատիվ և ոչ էլ ռոճիկ է ստանում թագավորից, ինչպես այդ տրվում է հույն եկեղեցականներին[346]։ Լևոն Բ-ի կողմից հոգևորականներին տրված ռոճիկի մասին է վկայում նաև Սամուել Անեցու շարունակողը[347]։

Կալվածներից ստացված եկամուտը որպես ռոճիկ ստացել են նաև աշխարհիկ ֆեոդալները. այսպես, Լևոն Բ Պապերոն բերդը Հեթումյաններից գրավելուց հետո, այն տալիս է Օշին Հեթումյանի փեսային որպես ռոճիկ՝ զինվորական ծառայության դիմաց[348]։

342 Սիսուան, էջ 499։

343 «Բազմավէպ», էջ 311—313։

344 Միքայել Ասորի, էջ 504։

345 Սիսուան, էջ 497։

346 «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ, Նամականի», Վենետիկ, 1865, էջ 238։

347 Սամուել Անեցի, էջ 218։

348 «Բազմավէպ, 1876, էջ 312։

Այսպիսով, Կիլիկիայում 12—14-րդ դարերում աշխարհիկ խոշոր հողատիրության կողքին զարգանում էր նաև վանքապատկան խոշոր հողատիրությունը, որը իր որոշ առանձնահատկություններով հանդերձ նման էր աշխարհիկ հայրենական-ժառանգական և պարգևական հողատիրության ձևերին։ Վերջինս իր ընդարձակման և զարգացման տեմպերով մրցում էր աշխարհիկ ֆեոդալական հողատիրության հետ։ Սրա շնորհիվ մեծանում էր հոգևորականության դերն ու նշանակությունը Կիլիկիայի ներքին ու արտաքին քաղաքական հարցերի լուծման մեջ։ Ընչաքաղց բարձր հոգևորականության արևմտաեվրոպական և լատինական կողմնորոշումը կրոնադավանաբանական հարցերի շուրջ ծագած վեճերում, նրանց և ցածր հոգևորականության միջև եղած հակամարտությունները և մյուս կողմից լատինականացմանը դիմադրող ժողովրդական մասսաների և բարձր հոգևորականության հակասությունները, կարելի է համարել այն պատճառներից մեկը, որը Կիլիկյան հայկական պետությանը հասցրին կործանման եզրին։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ, ՆՐԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 12—14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ

Կիլիկիայի ֆեոդալիզմի ուսումնասիրությունը ընդհանրապես և շահագործվող դասակարգերի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի ուսումնասիրությունը մասնավորապես ներկայացնում են մի շարք դժվարություններ։ Աղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում ֆեոդալական հիերարխիայի սանդուղքի պատվանդանում գտնվող շահագործվող դասակարգերի սոցիալ-տնտեսական դրության, շահագործման ձևերի և նրանց կողմից աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դեմ մղած դասակարգային պայքարի վերաբերյալ։ Հետևաբար կաշխատենք այդ բացը որոշ չափով լրացնել Դատաստանագրքից, կանոնագրից, քարոզչական և գեղարվեստական գրականությունից քաղված անուղղակի տեղեկություններով։ Ընդ որում ստիպված կլինենք կանգ առնել սոցիալական, տնտեսական և իրավական բազմաթիվ տերմինների լեզվական և պատմա-համեմատական իմաստավորման վրա։

Մ. Չամչյանը, Ղևոնդ Ալիշանը, Մ. Օրմանյանը, Ա. Գարագաշյանը, Ժակ դը Մորգանը թեև կանգ են առել Կիլիկիայի ֆեոդալական հասարակության դասակարգերը բնորոշող տերմինների ոչ միայն լեզվական, այլև սոցիալական իմաստի ու նշանակության վրա, սակայն նրանք զարգացրել են հակապատմական այն տեսակետը, որի համաձայն հայ իշխանը հայ գյուղացուն ոչ թե շահագործել, այլ խնամել, պահպանել ու պաշտպանել է արտաքին թշնամիներից։ Նրանց կարծիքով իշխանները և գյուղացիները իրար վերաբերվել են որպես հայրեր և որդիներ։ Գիտնականների մի այլ խումբ՝ Վիկտոր Լանգլուան, Էդվարդ Դյուլորիեն և ուրիշները ընդունելով հանդերձ շահագործվող դասակարգերի առկայու-

թյունը Կիլիկիայում, բավարարվել են միայն առանձին ակնարկներով։ Վիկտոր Լանգլուան ընդամենը գրել է մի քանի տող, այն էլ խիստ անորոշ և թեական։ Այսպես, «Ազնվականությունից հետո գալիս էր ժողովուրդը, որը կազմված էր տնտեսապես ցնծոր պայմաններում ապրող հայերից։ Վերջիններս կոլոններ էին և հողի վրա տիրում էին սեփականատիրական իրավունքով։ Պետությանը վճարում էին որոշ հարկեր։ Կոլոններից հետո գալիս էին ստրուկները, որոնք օտարներ էին՝ հույներ, սիրիացիներ, մուսուլմաններ և նույնիսկ ֆրանկներ»։

Հիմք ընդունելով Վիլլեբրանտ Օլդենբուրգցու վկայությունը այն մասին, որ հայերը իշխում էին Կիլիկիայում բնակվող մյուս ազգերի փոքրամասնությունների վրա՝ Վիկտոր Լանգլուան ավելացնում է. «Հայերը ոչ միայն մեծաքանակ էին և կազմում էին բնակչության մեծամասնությունը, այլ որպես նվաճողներ՝ վայելում էին արտոնյալ իրավունքներ և ազատություններ, քան օտարազգի ճորտերը՝ ստրուկները։ Մի խոսքով, նրանք լինելով թագավորի, ֆեոդալի և հոգևոր առաջնորդի հպատակներ, ամբացված չէին հողին, ինչպիսին էին ոչ հայ հպատակները։ Սակայն հայերը գտնվում էին, եթե կարելի է նմանեցնել, արևմտաեվրոպական կոլոնների վիճակում»[1]։

Համարյա նույն տեսակետին է նաև Էդվարդ Դյուլորիեն[2]։

Կիլիկյան հայկական պետության աշխատավոր մասսաների սոցիալ-տնտեսական դրության մասին ոչ հանգամանորեն կանգ է առել նաև հայ ժողովրդի պատմությունը անխոնջ հետազոտող Լեոն։ Նա «Անցյալի հարցերից» իր ոչ մեծածավալ հոդվածում ընդգծում է Կիլիկիայի գյուղացիության «ճորտական վիճակը», որը սակայն նրա կարծիքով այդ վիճակում են եղել միայն տեղացի կամ ոչ հայ տարրերը։ Լեոն այդ բացատրում է հայերի նվաճման իրավունքով[3]։

Վերոհիշյալ հարցերի լուսաբանման վրա անուղղակիորեն կանգ են առել սովետական գիտնականներ Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Խ. Սամուելյանը, Ս. Տ. Երեմյանը, Ս. Պողոսյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ։ Սրանք Կիլիկիայի աշխատավոր մասսաների սոցիալ-տնտեսական և իրավական վիճակին վերաբերվող

---

[1] *V. Langlois*, Essai, p. 46.

[2] Documents arm., T. I, p. XCIII.

[3] Լեո, *Անցյալի հարցերից*, «Մուրճ», 1905, № 10, էջ 91—99, Խոջայական կապիտալ, էջ 52—53։

հարցերի վրա այնքան են անդրադարձել, որքանով այդ վիճակի որոշ առանձնահատկությունները առնչվել են բուն Հայաստանի աշխատավոր մասսաների դրության լուսաբանմանը։

Այդ հարցերի լուսաբանման և ուսումնասիրման վրա մեծ չափով անդրադարձել է Գրիգոր Միքայելյանը[4]։

Սակայն, նախքան բուն նյութին անցնելը, մենք կաշխատենք ցույց տալ վերոհիշյալ բուրժուական պատմաբանների և բանասերների առաջ քաշած թեզիսների հակապատմական ու հակագիտական լինելը։

Առաջին փաստը այն անժխտելի իրականությունն է, որ ինչպես ասվել է, 11-րդ դարում Հայաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով, շատ հայեր գաղթեցին Կիլիկիա և Բյուզանդական կայսրության հարավարևմտյան նահանգները։ Գաղթող հայ թագավորների և նրանց վասալ հայ իշխանների հետ միասին գաղթել էին նաև աշխատավոր գյուղացիներն ու քաղաքային արհեստավորները։

Այսպես, դեռևս 11-րդ դարի առաջին կեսին, երբ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը իր երկիրը հանձնեց բյուզանդական կայսրությանը և փոխադրվեց Սեբաստիա, նրա հետ միասին Սեբաստիայի և Կիլիկիայի լեռնային շրջանները փոխադրվեցին ավելի քան 70 հազար հոգի։ Հ. Չամչյանը այդ թիվը հասցնում է 400 հազարի[5]։ Թովմա Արծրունու շարունակողը վկայում է, որ Սենեքերիմի հետ տեղափոխվեցին 14 հազար տղամարդ՝ բացի կանանց և երեխաներից[6]։ Եթե նկատի ունենանք, որ այդ դարերում ընտանիքները բազմանդամ էին, ապա գաղթողների թիվը կհասնի ավելի քան 100 հազարի։

Մատթեոս Ուռհայեցին մի քիչ ավելի ուշ գաղթող Դավիթ Արծրունու մասին գրում է. «Եւ ետ նմա թագաւորն բազում պարգևս և դարձոյց զնա առ հայրն իւր (իմա Սենեքերիմ թագավոր —Ս. Բ.) և ետ նմա զՍեբաստիա բազում գաւառօք, և ելեալ Սենեքերիմ ամենայն ընտանեօք իւրովք և ռամկօք եկն ի Սեբաստիա»[7]։

Ինչպես հայտնի է, հայերի մասսայական գաղթը դեպի այդ

---

[4] *Г. Микаелян*, История, стр. 272—282.

[5] Չամչյան, հ. 2, էջ 903։

[6] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 307։ Սամուէլ Անեցի, էջ 104։ «Մատեան Սպարապետի Պատմութիւն», էջ 45։

[7] Ուռհայեցի, էջ 49։

շրջանները շարունակվեցին հետագայում՝ Անիի և Կարսի Բագրատունիների թագավորությունների կործանումից հետո[8]։

Հայերի մասսայական հոսանքը դեպի Կիլիկիայի լեռնային և հատկապես դաշտային ծովափնյա շրջանները, առավել չափով ուժեղացավ սելջուկ Թուրքերի արշավանքների ժամանակ։ Ինչպես նախորդի ժամանակ, այնպես էլ այս շրջանում գաղթում էին ոչ միայն ազնվականները, այլև՝ աշխատավոր բնակչությունը[9]։

Այնքան շատացել էր Կիլիկիա գաղթած հայ զանգվածների թիվը, որ դեռևս 11-րդ դարի վերջին, Կիլիկիա ոտք դրած խաչակիրները Կիլիկիան կոչում էին «հայկական երկրներ» (Hermonorum Terre)[10]։

Ներսես Լամբրոնացին այդ շրջանի՝ Կիլիկիայի և հարևան երկրներում ապրող բնակչության մասին գրում է. «Այն ժամանակ, երբ ֆրանկները եկան (11-րդ դարի վերջին— Ս. Բ.) ամբողջ Միջագետքը, Սիրիան, Ասորիքը, Կիլիկիան, Պամֆիլիան, Կապադովկիան, Գամրաց երկիրը բնակեցված էր հայերով։ Վերջիններս ենթարկվում էին իրենց պետերին»[11] (ընդգծումը մերն է— Ս. Բ.)։

1212 թ. Կիլիկիա այցելած Վիլլեբրանտ Օլդենբուրգցին վկայում է, որ հայերը կազմում էին Կիլիկիայի բնակչության մեծամասնությունը։

13-րդ դարում մոնղոլների արշավանքների հետևանքով Կիլիկիա գաղթած հայ զանգվածների դասակարգային խայտաբղետության մասին է խոսում Կիրակոս Գանձակեցու հետևյալ վկայությունը, «Լցաւ և երկիրն (իմա Կիլիկիա) ամենայն բազմութեամբ մարդկան անարուեստից և արուեստաւորաց, որք ժողովեցան յամենայն կողմանց փախուցեալք յաւերմանէ թաթարին, որ եկեալ յարևելից հիւսիսոյ տապալեցին զաշխարհս ամենայն»[12]։

Վերոհիշյալից պարզ է, որ Կիլիկիա և նրա սահմանամերձ շրջանները գաղթած հայ թագավորներն ու իշխանները եկել էին ոչ միայն իրենց ազատաններով, այլև ենթակա կախյալ գյուղացիներով, որոնց մի մասի ճորտացումը և հողին ամրացումը բուն Հայաստանում սկսել էր դեռևս 9-րդ դարում[13]։

---

8 Նույն տեղում, էջ 135—136։

9 Ուռհայեցի, էջ 217—218։

10 Revue Occidentale, T. III, p. 230, T. IV, էջ. 4—32.

11 Documents, arm., T. I, p. 576.

12 Գանձակեցի, էջ 190։

13 Տե՛ս Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1956, էջ 110—245։

Սոցիալ-տնտեսական և դասակարգային հարաբերությունների զարգացման մակարդակը բյուզանդական կայսրության Կիլիկիայի նահանգում, համարյա բուն Հայաստանի աստիճանի վրա էր գտնվում, երբ հայերը սկսեցին մասսայաբար գաղթել այդ վայրերը։ Սակայն պետք է ընդգծել, որ Կիլիկիան լինելով բյուզանդական կայսրության սահմանամերձ շրջաններից մեկը, այստեղ տիրապետող ֆեոդալիզմը ավելի շատ ռազմական բնույթի էր։ Հայտնի է, որ բյուզանդական բանակների կորիզը հիմնականում եղել են մանր հողատերերը՝ ստրատիոտները։ Վերջիններիս դրությունը սկսել էր վատանալ 10-րդ դարի վերջերից։ Գյուղացիության՝ մանր հողատերերի վիճակը և նրանց հողին վերջնական ամրացումը դարձել էր օրակարգի հարց։ Գյուղացիության քայքայմանը մեծ չափով զարկ էին տալիս պետական ծանր հարկերը, որոնք հետևանք էին բյուզանդական կայսրության մղած երկարատև պատերազմների։ Գյուղացիների դրությունը ավելի վատթարացավ, երբ հողային ռենտայի բնամթերքներով վճարումը փոխվեց դրամականի[14]։ Այս պրոցեսը շարունակվեց Ռուբինյան իշխանության հզորացման շրջանում (11—12-րդ դարերում)։ Հայտնի է, որ Ռուբինյան իշխանաց իշխանի և նրա վասալ իշխանների կալվածները ընդարձակվում էին ոչ միայն նվաճմամբ, այլև ի հաշիվ մանր հողատերերի՝ գյուղացիության[15]։ Դրա արտացոլումն ենք գտնում այդ շրջանի հեղինակներ Սարգիս Շնորհալու, Ներսես Շնորհալու, Վարդան Այգեկցու երկերում։ Այսպիսով, սկսած 12-րդ դարի կեսերից, Կիլիկիայում և նրա սահմանամերձ շրջաններում խորանում էին դասակարգային հակամարտ հարաբերությունները։ Եթե այդպիսին չլիներ դրությունը, Ներսես Շնորհալի կաթողիկոսը ստիպված չէր լինի իր նշանավոր Թուղթ ընդհանրականում դիմել հայ բնակչության տարբեր դասերին առանձին-առանձին։ Այսպես, նա գրում է. «Որք իւրաքանչիւր յեղերս աշխարհաց ըստ մեզաց մերոց ցրուեալք ի քաղաքս և ի գեղակս, ի գիւղս և յագարակս, որոց այդոցիկ ամենեցունց Քահանայապետացն և Քահանայից, վանականաց և քաղաքայնոց, իշխանաց և իշխեցելոց, զինուորաց դասուց՝ ձիավարժից և հետևակաց, գաւառապետաց և գործակալաց, տանուտէրաց և երկրագործաց, վաճառականաց և արուեստագիտաց և որոց միանգամ ի զանազանս

---

14 Schlumberger, L'Epopée, pp. 312—313.

15 Documents arm., p. 577.

ճանապարհս ընթանան կենցաղոյս»[16]...։ Եվ որ կարևորն է, եթե հայ բնակչության մաս կազմող վերոհիշյալ բոլոր դասերն ու դասակարգերը ապրեին և իրար նկատմամբ վերաբերվեին որպես հայր և որդի, անշուշտ Ներսես Շնորհալին կարիք չէր զգա խրատելու շահագործող դասերին, որպեսզի վերջիններս չնեղեն զբրկվածներին և տնանկներին, տառապյալներին ու հնազանդյալներին «Ծանր և դժվարակիր հարկադրությամբ», որպեսզի վերջիններս «կարող լինեին» «վաստակօք իւրեանց զաղքատանաց կեանս զտանց և զորդւոյ իւրեանց լցուցանել և արքունական հարկսն հատուցանել» և կամ թե չէր հորդորի նրանց ասելով. «Մի որպէս զանբան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ՝ որ ընդ իշխանութեամբ ձերով լինին ի գործ խիստ և աններելի»[17]։

2. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 12—14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ինչպես ամեն մի ֆեոդալական երկրում, այնպես էլ Կիլիկյան հայկական պետության հիմնական արտադրող ուժերը և շահագործվողները եղել են գյուղացիներն ու արհեստավորները, քաղաքային ստորին խավերը, որոնք կազմել են բնակչության մեծամասնությունը՝ հարկատու և իրավազուրկ խավերը։

Կիլիկյան հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունները շատ ավելի բարդ ձևեր ընդունեցին, քան բուն Հայաստանում, թեկուզ այն պատճառով, որ նրանք իրենց վրա կրում էին հայկական, արևմտաեվրոպական և բյուզանդական ֆեոդալական հասարակությունների ավանդույթների ուժեղ կնիքը։ Սակայն, այստեղ ևս հասարակությունը բաժանվում էր հիմնականում երկու դասակարգերի՝ ազատների և անազատների։ Ազատները՝ թագավորի գլխավորությամբ կազմում էին աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դասակարգը։ Վերջինս իր ձեռքում էր պահում ֆեոդալական սեփականության և արտադրության հիմնական միջոցը՝ հողը, որը նա օգտագործում էր աշխատավոր գյուղացիությանը շահագործելու համար։

Ֆեոդալական հիերարխիայի շահագործող դասակարգը իրեն

16 Թուղթ ընդհանրական, էջ 1։

17 Նույն տեղում, էջ 92—94։

հերթին բաժանված էր զանազան դասերի՝ աշխարհիկ և հոգևոր, խոշոր, միջին և մանր ֆեոդալ հողատերերի։ «Ֆեոդալական այս կառուցվածքը—շահագործվող և արտադրող դասակարգի դեմ ուղղված ասոցիացիա էր»[18]։

Ֆեոդալական հասարակարգի անազատները նույնպես բաժանված էին տարբեր շերտերի՝ գյուղացիության և քաղաքային բնակչության։ Սմբատ Սպարապետը Կիլիկյան հայկական պետության 13-րդ դարի հասարակության տարբեր խավերի մասին իր Դատաստանագրքի 171-րդ հոդվածում գրում է. «Կու հրամայէ աւրէնքս, որ մարդկային ազգս շատ ազգեր են, և են, որ ազատք են և հեծելվորք, և են որ չեն՝ և յայլ ազգ գործերն, որ գործ այնեն»։

Ինչպես Հայաստանում և ֆեոդալական մյուս երկրներում, այնպես էլ Կիլիկիայում ևս գյուղացիությունը միատարր չէր, այլ բաժանված էր տարբեր շերտերի։ Շերտավորման հիմքում ընկած էր ֆեոդալից գյուղացիների ունեցած տնտեսական և արտատնտեսական կախվածության աստիճանը։

Գյուղացիության և մյուս անազատների շերտերը և խավերը բնորոշող տերմինների՝ լեզվական և սոցիալական իմաստի ու նշանակության մեկնաբանումն ու պարզաբանումը խիստ կարևոր է ոչ միայն մեր ներկա աշխատության առաջ դրված խնդիրների լուսաբանման համար, այլև առհասարակ հայագիտության համար, քանի որ այդ տերմինների մեծ մասը օգտագործվել են նաև բուն Հայաստանում։ Անշուշտ, նոր պայմաններում դրանց վրա ավելացել են նոր տերմիններ և հներից շատերը ստացել են նոր բովանդակություն։

«Անազատների»՝ տարբեր խավերը բնորոշող տերմիններն են. շինական, ցած շինական, գեղջուկ, ճորտ, պառիկոս, դարբսեցիք, մշակ, վարձվոր, վարձկան, ծառա, աղախին, ստրուկ, ռամիկ և այլն։

Անշուշտ, մենք վերոհիշյալ տերմինների մեկնաբանմանը զուգընթաց կտանք նաև դրանց տակ հասկացվող աշխատավոր մասսաների սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը։

Շինականը, ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Կիլիկիայի ֆեոդալական հասարակության վերաբերյալ սկզբնաղբյուրներում, գեղջուկ բառի հետ միասին, գյուղացիության բնորոշող հիմնական տերմինն է հանդիսանում։

18 К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. IV, стр. 14

Հայ շինականության պատմությունը հետազոտող և շինական բառի լեզվաբանական մեկնաբանությամբ զբաղվող պատմաբաններն ու լեզվաբանները, շինականի տերմինին տվել են տարբեր, երբեմն իրար հակասող մեկնաբանություններ։ Կիլիկիայի գյուղացիությունը բնորոշող շինական տերմինը չի արժանացել ոչ մի հետազոտողի ուշադրության (եթե չհաշվենք Գ. Միքայելյանի մի քանի անորոշ ակնարկումները)[19]։ Հայկազյան նոր բառգիրքը կազմողները շինական տերմինը ստուգաբանել են. «գեղական—գեղացի»[20], Ստ. Մալխասյանը և Հ. Աճառյանը՝ «շեներում ապրող, գյուղացի»[21], Ս. Բահաթրյանը՝ «օտար ցեղերից պատերազմի միջոցով ձեռք բերված և ճորտացված գյուղացիներ»[22]։ Գեղջուկ բառը որպես «գյուղում ապրող մարդ, գյուղացի»[23]։

Ն. Ադոնցի կարծիքով շինականությունը կազմում էր ստորին բնակիչների մի խավ, որոնք չէին մտնում ազատների, հայտնիների կամ հոգևոր դասի մեջ[24]։

Հ. Մանանդյանը քննարկելով հայ մատենագրության նյութերը, եկել է այն եզրակացության, որ գեղջուկ և շինական են կոչվել միայն գյուղացիները, իսկ ռամիկ կոչվել են առհասարակ անազատները, այսինքն՝ գյուղացիները և քաղաքային բնակչությունը, բացի աղնվականներից և հոգևորականներից[25]։

Համարյա նույն տեսակետին է կանգնած Խ. Սամուելյանը։ «Շինական բառը,— գրում է նա,— իբրև ճորտ գյուղացի նշանակող տերմին ստուգաբանվում է ոչ թե շեն բառից, այսինքն չի նշանակում շենի բնակիչ, ինչպես շատերն են կարծում, այլ շինել բառից, որը նշանակում է կառուցել, մշակել»[26]։ «Երբ մեր մատենագրության մեջ,— շարունակում է նա,— խոսքը վերաբերում է կախում ունեցող գյուղացիներին, այն է՝ ճորտերին, անշեղորեն գործածվում է շինական տերմինը»[27]։ Խ. Սամուելյանը թեև վերոհիշյալ աշխատության մեջ կանգ է առնում Կիլիկիայի սոցիալ-տնտեսական դրությանը վերաբերող հարցերին, սակայն այստեղ ոչ մի բառ չի ասում Կիլիկիայի շինականության վերաբերյալ։

Կիլիկիայի ֆեոդալական հասարակության վերաբերյալ մատենագրական և իրավաբանական սկզբնաղբյուրները վկայում են որ շինական տերմինը չի նշանակել միայն ճորտ գյուղացի, և որ այդ բնորոշել է նաև գյուղացուն ընդհանրապես, և ոչ կախյալ գյուղացիությանը մասնավորապես, և որ կախյալ գյուղացիության կամ շինականության տարբեր խավերը արտահայտել են **ճորտ, պառիկոս, արքունի գյուղացի, դարբասային ճորտ, տաճորտ, պառիկոս, արքունի գյուղացի, դարբասային ճորտ, տառապյալ, ճնազանդ, կարոտյալք և ճարկատուք** տերմինները։

Շինականների տարբեր շերտերի գոյության մասին է խոսում Սմբատի Դատաստանագրքի 76-րդ հոդվածում նշված **ցած շինական**[28] տերմինը։ Շինականը որպես գյուղացի ընդհանուր իմաստով օգտագործված է նաև Դատաստանագրքի 3-րդ հոդվածում. «Ապա վայրի պտուղն ի ծառոցանցն երկրին՝ շինականացն է, որ քաղեն իրենց»[29]։

Ամբողջ գյուղացիությանը, որպես գյուղում ապրող մարդկանց բնորոշող տերմին, օգտագործվել է նաև գեղջուկ բառը։ Մեզ հաջողվեց գտնել միայն մի վկայություն Կիլիկիայի վերաբերյալ, որտեղ գեղջուկ բառը օգտագործվել է վերոհիշյալ իմաստով։ Հատկապես հետաքրքիր է այդ վկայությունը այն տեսակետից, որ նա օգտագործվում է ռամիկ տերմինի հետ, որով բացահայտում է մյուս կողմից ռամիկի բովանդակությունը և սահմանազատում է դրան գեղջուկից։ Այսպես, Սամուել Անեցու շարունակողը 1216 թ. թուրք-սելջուկյան սուլթան Կայկաուզի կողմից սպառնացող վտանգը դիմակալելու համար, Լևոն Բ-ի կողմից առաջինի դեմ ուղարկված բանակի մասին գրում է. «Իսկ աստուածասէր թագաւորս մեր ժողովեալ զամենայն քրիստոնեայս որք ընդ իշխանութեամբ նորին էին՝ այլև զռամիկս քաղաքաց և գեղջկաց»[30]։

Գեղջուկները՝ շինականները հիմնականում կազմում էին Կիլիկիայի, ինչպես նաև հայկական բանակի հետևակը։ Սրանք կազմակերպվում և կոչվում էին «աշխարհազոր», այն ժամանակ, երբ արտաքին վտանգը դառնում էր սպառնալից և վտանգավոր[31]։

---

19 *Г. Микаелян*. Исторія, стр. 378.

20 «*Առձեռն բառարան Հայկազեան լեզուի*», *էջ 635*։

21 Ստ. Մալխասյան, *Բացատրական բառարան*, *հ. 3*, *էջ 516*։ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, *հ. 5*, *էջ 337—343*։

22 Ս. Բահաթրյան, *Անձնական և հողային իրավունքը հին Հայաստանում*, *էջ 427*։

23 Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, *հ. 2*, *էջ 215—217*։

24 *Н. Адонц*, Арм. в эпоху Юст., стр. 479.

25 Հ. Մանանդյան, *Ֆեոդալիզմը հին Հայաստանում*, *էջ 148—212*։

26 Խ. Սամուելյան, *Հին հայ իրավունքի պատմություն*, *էջ 255*։

27 *Նույն տեղում*, *էջ 254*։

28 *Դատաստանագիրք*, *էջ 83*։

29 *Նույն տեղում*, *էջ 16*։

30 «*Հանդէս ամսօրեայ*», *էջ 68*։

31 *Այս մասին մանրամասն տե՛ս 3-րդ գլխի «Բանակ» ենթագլուխը*։

Այդպես չէ դրությունը ժողովուրդ բառի հետ։ Ինչպես ճիշտ է նկատել Խ. Սամուելյանը, ժողովուրդը սովորաբար օգտագործվել է եկեղեցական, կղերական միջավայրում[32]։ Սակայն պիտի նշել, որ Սամուելյանը սխալվում է, երբ ժողովուրդ տերմինին վերագրում է միայն գյուղում ապրող մարդկանց նշանակություն։ Այդ նա անում է հիմք ընդունելով միայն վիմական արձանագրությունների այն վկայությունները, որտեղ հողային կամ կալվածային նվիրատվություններում հիշատակվում են «գյուղեր իրենց ժողովրդով»[33]։

Ժողովուրդ տերմինը արտահայտել է ոչ միայն գյուղի բնակիչներին, այլ նաև՝ քաղաքի բնակչությանը և հաճախ օգտագործվել է քաղաքի և գյուղի անազատների դասակարգը բնորոշելու համար։

Ներսես Լամբրոնացին բնութագրելով Սիս քաղաքի բնակիչներին, գրում է. «Իսկ Սիս, որ իշխանանիստ է քաղաք մեր այժմ լցեալ իշխանօք և ժողովրդօք առանց այցելութեան և այցելուի ոչ եկեղեցիք և ոչ է նոյն ժողովրդեանն ընթացք, և ոչ բնաւ գիտեն թէ հարկաւոր է մեզ ունել զայս»[34]։ Նույն տեղում նա ժողովուրդ տերմինը օգտագործում է որպես քաղաքի և գյուղի բնակիչները բնորոշող տերմին[35]։ Նույն իմաստով է օգտագործում Ներսես Շնորհալին ժողովուրդ տերմինը իր Թուղթ ընդհանրականում[36]։

Վերոհիշյալ վկայությունից պարզ է, որ Ներսես Լամբրոնացին ժողովուրդ ասելով նկատի ունի անազատ դասակարգի ներկայացուցիչներին, քանի որ նա ժողովրդօք բառը սահմանազատում է իշխանօք բառից։

«Ժողովուրդ»-ը, որպես կղերական-եկեղեցական միջավայրում օգտագործված և անազատների տարբեր խավերը ցույց տվող տերմին, օգտագործել է նաև Սմբատը իր Դատաստանագրքում։ Այսպես, ԻԴ հոդվածում ժողովուրդը հանդես է գալիս որպես քաղաքային բնակչություն, իսկ այլ հոդվածներում՝ գյուղական քա-

32 Խ. Սամուելյան. Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, էջ 256։

33 Նույն տեղում։

34 Doc. arm., T. I, p. 578: Ն. Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ։

35 Նույն տեղում, էջ 577։

36 Թուղթ ընդհանրական, էջ 1—2։

37 Դատաստանագիրք, էջ 29։

հանայի գյուղացիական ծխերը բնորոշող տերմին[38]։ Վերջին իմաստով է օգտագործված 1243 թ. Սսի եկեղեցական ժողովի կանոններում[39]։

Ժողովուրդ տերմինը, որպես քաղաքային բնակչության բնորոշող տերմին (այն էլ այն բնակիչներին, որոնք մասնակցում են արքունիքում կայացած իշխանական խորհրդի ժողովներին), օգտագործում է Հովհան Դարդելը։ Այսպես, 1364 թ. Լևոն Զ. Լուսինյանի թագավոր ընտրելու կապակցությամբ և վերջինիս առաջարկները քննարկելու համար գումարված ժողովներին մասնակցող տարբեր խավերի մասին գրում է. «Եւ յաւուր միում գումարել ի ժողով ի դահլիճն արքունական զեպիսկոպոսունս և զվարդապետս աշխարհին, զաւագանին և զասպետս և զտիկնայս և ժողովուրդն առհասարակ»[40]։ Կամ թե՝ «Իբրև լուան եպիսկոպոսունք, ազատանին և ժողովուրդն հայոց զբանս իշխանին Լևոնի[41]», կամ թե՝ «...թագուհին Հայոց որ էր լեալ կին Կոստանդին արքայի առաջնոյն բռնաւորին, և որ հաճութեամբ հասարակաց կալեալ ունի այսօր ի ձեռին զիշխանութիւնս թագաւորական կաթողիկոսն մեր և տեարք մեր պարոնայք և ասպետք և ժողովուրդն համօրէն խոնարհեալ երկրպագել առաջի տէրութեանդ քո»[42]։

Այսպիսով, շինական, գեղջուկ և երբեմն էլ ժողովուրդ տերմինները նշանակել են անազատների դասակարգը՝ ամբողջ գյուղացիությունը։ Սակայն 11—12-րդ դարերում իշխանական-ֆեոդալական, վանական-եկեղեցական խոշոր հողատիրության, ֆեոդալական հարաբերությունների զարգացման և խորացման հետևանքով շինականության տարրալուծումը և քայքայումը շարունակվեց ու խորացավ։ Գյուղացիական տնտեսությունների քայքայմանը նպաստում էր նաև 12-րդ դարում անկախության համար մղված երկարատև պատերազմները և քաղաքային կյանքի աշխուժացումը։ Այս մասին ուղղակի մատնացույց են անում 12-րդ դարի երկրորդ կեսի հեղինակները, Սարգիս Շնորհալին և մյուսները։ Կիլիկիայի հայ աշխատավոր ժողովրդի ունեցվածքը թալանում էին ոչ միայն Կիլիկիան ասպատակող սելջուկները—թուրքերը, այլև՝ խաչակիր իշխանները։ Այս տեսակետից խիստ հետաքրքիր

38 Նույն տեղում, էջ 34, 35, 52։

39 Դանձակեցի, էջ 304—308։

40 Դարդել, էջ 107։

41 Նույն տեղում, էջ 108—109։

42 Նույն տեղում, էջ 69։

է Քեսունի խաչակիր իշխան Բաղդինին վերագրված «Բաղդինի ողբը»։ Այստեղ ասված է, որ երբ նրա Մարաշի տիրույթները գրավվում են սելջուկների կողմից, զղջալով հայ գյուղացիներին հասցրած վնասի համար, ողբացող Բաղդինը ասում է. «Ով իշխանք և իշխանակից ընկերք իմ և եղբարք, զօրք ամենայն հեծելովք և հետևակօք, որոց և բազում պակասութիւն առ ձեզ արարի և ռամիկ ժողովուրդք ամենայն որ հակառակ կայ ընդ հնազանդութեամբ անկեալ էիք կարկամեալ մեղօք անարժան ձեռաց իմոց...,— ապա ապաշխարելով իր մեղքերի համար ասում է,— ...վասն չանիրաւելոյ զոք, վասն անիրաւութեան և ի զրկանաց ի յափշտակութենէ չմեծանալոյ. կամ ի շինուածս մեծամեծս լինելոյ. և կամ պարիսպ քաղաքի կանգնելոյ, յօտար յարտասուաց յորբոց յայրեաց և ի հարկատու շինական մարդկան լալագին յառաչանաց»[43]։ Նույն իշխանի անիրավությունների մասին Սմբատ Սպարապետը գրում է. «...և այսպէս անիրաւութեամբ և թիւր դատաստանաւ վարէին և յափշտակէին, զինչս անմեղաց, Հայոց, Յունաց և Ասորւոց»[44]։

Անշուշտ հայ իշխանները նույնպես փարթամանում էին հայ գյուղացիությանը զրկելու հաշվին։ Սմբատը Մլեհ իշխանաց իշխանի (1169—1175) մասին գրում է. «...և լցաւ ոսկւով և արծաթով և յղփացաւ փարթամութեամբ ի զրկանաց անմեղաց»[45]։

Սարգիս Շնորհալին ուղղակի մատնացույց անելով 12-րդ դարի ավերիչ պատերազմների և նրանցից տուժող հայ բնակչության՝ գյուղացիական հողերի և ինչքի մասին՝ գրում է. թող պատերազմները և կողոպուտը կանգնեցվեն, որ աշխարհում տիրի խաղաղություն, որպեսզի ժողովուրդները չկռվեն մեկը մյուսի դեմ, որպեսզի իշխանները չայրեն և չկողոպտեն քաղաքներն ու գյուղերը և չհափշտակեն ժողովրդի ունեցվածքը և չթափեն անմեղների արյունը և որպեսզի տանկներից-հնազանդներից և աղքատներից գանձված հարկերը՝ չավելացնեն[46]։

Նույն դարի ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին իր նշանավոր Թուղթ ընդհանրականում կոչ է անում հոգևոր և աշխարհիկ ֆեոդալ իշխաններին չափավոր լինել հարկապահանջության և շահագործման մեջ։ Այսպես, խրատելով նրանց գրում է.

43 Doc. arm., T. I, pp. 208—210.

44 Տարեգիրք, էջ 129։

45 Նույն տեղում, էջ 131։

46 Մատենադարան, ձեռագիր № 1318, էջ 37բ։

«...և այդ առաջին զայս պատուիրան աւանդեմք ձեզ, մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ, (ընդգծումը՝ Ս. Բ.) ծանր և դժուարակիր հարկադրութեամբ՝ զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք և ըստ չափոյ զօրութեան զիւրաքանչիւր ոք զմտաւ ածէք. մի զոք զրկէք ի մարդկանէ և մի նեղէք զախքատս և զտանկս», որպեսզի նրանք կարողանան պահել իրենց որդիներին և «արքունական հարկս հատուցանեն»[47]։

Նույն դարի վերջին քառորդի հեղինակ, Կիլիկիայի նշանավոր եպիսկոպոս, քաղաքական և կրոնական գործիչ Ներսես Լամբրոնացին Լևոն Բ-ին գրած իր նշանավոր թղթում գրում է, որ ինքը նման չէ Լևոն Բ-ի այն իշխաններին և գործակալներին, որոնք հարստացել և հղփացել են[48], անշուշտ ի հաշիվ աշխատավոր ժողովրդի։

Բնութագրելով այդ շրջանի աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ընչաքաղցությունը և անիրավությունը Սարգիս Շնորհալին գրում է. «Իշխանք մեր և քահանայք, սիրողք անիրաւութեան և ոչ իրաւանց կաշառառուք և ագահք, արծաթասէր... գողակիցք գողոյ... աշխարհաւէրք և նենգաւորք, ստերդմունք՝ և արիւնահեղք, գերիչք և կողոպտիչք»[49]։

Ինչպես նախորդ գլխում ցույց տվեցինք, ֆեոդալական աշխարհիկ և վանական-եկեղեցական խոշոր հողատիրությունը ուժեղ կերպով զարգացավ Թագավորության առաջին շրջանում, որը տեղի էր ունենում մի կողմից նվաճված հողերի հաշվին և մյուս կողմից՝ գյուղացիական դեռևս ազատ մնացած համայնական հողատիրության բռնագրավման հաշվին։ Թերևս այս է նկատի ունեցել Վարդան Այգեկցին, իր քարոզներից մեկում գրելով. «Քանզի ջանամք և հնարիմք ազգ-ազգի կերպարանաւք և արուեստուք գիտնականք և տգէտք, առաջնորդք և ժողովուրդք, ժողովեմք ինչս, փարթամանամք։ Եւ գոչեմք ասելով՝ թէ իմ սեփական հայրենիք է (ընդգծումը մերն է—Ս. Բ.) գաւառս, քաղաքս, գաւղս, ագարակս, անդաստանս, գրախտ, այգիս, տունս մեր և ապա ջանամք և հափշտակեմք յաղքատացն և յարեմք տուն ի տունս մեր և անդաստանս յանդաստանս մեր»[50]։

Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը, մատենագրական

47 Թուղթ ընդհանրական, էջ 92—93։

48 «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի», էջ 210—211։

49 «Սարգիս մեկնող կաթողիկեաց թղթոց», Կ. Պոլիս, 1744, էջ 397։

50 Մատենադարան, ձեռագիր № 8356, էջ 52ա—52բ։

և վավերագրական այլ սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ Կիլիկիայում գյուղացիությունը բաժանվում էր հետևյալ կատեգորիաների.

ա) Մանր հողատեր-սեփականատեր ազատ գյուղացիներ. գյուղական համայնքի ոչ կախյալ գյուղացիներ։

բ) Կախյալ գյուղացիներ, որոնք հայտնի են հարկատուք, տառապեալք, կարոտեալք և հնազանդք տերմիններով։ Արքունի կամ դարպասային գյուղացիներ. արքունի մշակներ.

գ) Հողին ամրացված ճորտ գյուղացիներ՝ պարիկոսներ. ճորտեր։

Ինչպես վերևում ցույց տվեցինք, վերոհիշյալ կատեգորիաների գյուղացիները՝ մատենագրական և իրավաբանական աղբյուրներում հիշատակված են՝ շինական, ցած շինական, հարկատու շինական, գեղջուկ և ժողովուրդ ընդհանուր տերմիններով, որոնք բնորոշում են գյուղում, ագարակում, շենում ապրող մարդկանց։

ա) Գյուղական համայնքի ոչ կախյալ գյուղացիներ, մանր հողատերեր։

Կիլիկիայի վերաբերյալ հայ մատենագրության մեջ քիչ տեղեկություններ են պահպանված գյուղական համայնքի մասին։ Եղածներն էլ ավելի շատ կանոնական են։ Այսպես, Սմբատի Դատաստանագրքում, համայնքի անդամների միջև հողաբաժանության մասին կա մի հետաքրքիր տեղեկություն։ Այնտեղ, որտեղ խոսվում է նոր գյուղի հիմնադրման կամ ավերվածի վերաշինման, այսինքն նոր համայնքի կազմակերպման մասին, ասված է. «Եթէ ոք նոր գեղ շինէ՝ նա չէ պատեհ մենակ զհողերն սինաւռով բաժնել, ինչուր գայ ամէն մարդ ու լցվի, ու նեղցնեն ի վերայ. և ապա յայլոց առնուլ ու այլոց տալ կամ բաժնել։ Բայց թէ աւերակք լինի ու շինվի՝ նա զիր հին ճանչած սինաւռն ուննայ. և կամ դնեն՝ հայնց, որ այլք չզրկվին, ինչվի լցվի. ու երբ լցվի՝ նա ապա զբղորդ սինաւռ դնեն, և տան առջև զեկեղեցոյ բաժինն, և ապա զայնոց, որ գլուխք լինան այն տեղոյն շինութեան և ապա այլոցն ըղորդ»[51]։

Այս վկայությունը թեև վերաբերում է նոր հաստատվող գյուղին, սակայն դա ապացույց է ընդհանրապես գյուղական համայնքի գոյության և այդ համայնքում տեղի ունեցող հողաբաժանության մասին։ Անշուշտ, այդպիսի հողաբաժանում կարող էր

51 Դատաստանագիրք, էջ 151։

տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ գյուղի հողերի տերը կհամարվեր գյուղական համայնքը և ոչ թե գյուղական առանձին ընտանիքը։ Դատաստանագրքի «Վասն սնաւոկցերոյ» հոդվածում Սմբատը պաշտպանում է յուրաքանչյուր ընտանիքին նախօրոք բաժին ընկած հողաբաժնի սահմանները և դրանց խախտողների նկատմամբ սահմանում է պատիժ և պատասխանատվություն՝ ատյանի կամ դարպասի առաջ[52]։

Սմբատի Դատաստանագրքի այն հոդվածները[53], որոնք պաշտպանում են տան, այգու, պարտեզի և այլ անշարժ գույքերի ժառանգաբար սերնդե սերունդ անցնելու մասին, ցույց են տալիս, որ վերաբաժանման չեն ենթարկվել այնպիսի հայրենական կալվածները, որոնք եղել են այգիներ և պարտեզներ, որոնց մշակելը և բերքատու դարձնելը մեծ աշխատանքի և շատ ժամանակի հետ էր կապված։ Այդ պատճառով օրենսդիրը հոգ է տանում, որ գյուղերի, դաշտերի սահմանները որոշակի լինեն։ «Վասն այգեաց և այգեդործաց» վերնագիրը կրող հոդվածում ասված է. «Նա թէ և սովորութիւնք իւրաքանչիւր երկրի այլ և այլ են, բայց մեք զոր կարցաք ճշմարտել յաւրինացն՝ նա այս է. և թող այս հաստատուն մնայ՝ որ չզրկեն զիրար, ապա իրաւնաւք ամէն մէկ զիր բաժինն ուննայ սիրոյ և ի հանդիստ»[54]։

Գյուղական համայնքի ներքին կյանքի մասին ունենք քիչ տեղեկություններ։ Համայնքներն ունեցել են գլուխք, այսինքն ավագներ։ Վերջիններս, ըստ երևույթին, կարգավորել են գյուղական համայնքի անդամների՝ ծխերի միջև կատարված հողաբաժանությունը, ջրի օգտագործումը[55], հարկերի և տուրքերի գանձման ու կարգավորման հարցերը։ Ըստ երևույթին այդ ծառայությունների դիմաց վարձատրվել են և դրա համար ստացել են ավելի մեծ հողաբաժին, քան սովորական անդամները՝ ծխերը։

Գյուղական համայնքի յուրաքանչյուր անդամի թերացման համար պատասխանատու էր ամբողջ համայնքը. այսպես, եթե որևէ մեկը սպանվեր դաշտում, սարում, որևէ գյուղի կամ շենի մոտ, եթե սպանվածի տերը պահանջեր սպանվածի համար որպես տուգանք՝ արյան գինը վճարում էր ամբողջ գյուղը կամ շենը, որի մոտ կատարվել էր սպանությունը։ Անշուշտ սա ապացույց է,

52 Նույն տեղում, էջ 149։
53 Նույն տեղում, էջ 108—115, 152, 170, 192։
54 Նույն տեղում, էջ 172։
55 Նույն տեղում, էջ 152։

որ գյուղի ծխերը կամ յուրաքանչյուր գյուղացիական ընտանիք ենթարկվում էր գյուղական համայնքի կանոններին։ Թեև այդ հոդվածում չի նշված գյուղական համայնքի անմիջական իմաստ ունեցող որևէ մի տերմին, բայց մեր կարծիքով, ներքոհիշյալ վկայության մեջ «շեն»-ը գրված է գյուղական համայնքի փոխարեն և օգտագործված այդ իմաստով. այսպես, «ապա թէ տէր գայ՝ (այսինքն սպանվածի տերը գա—Ս. Բ.) նա զարիան գինն այն շէնն վճարէ՝ որ ի մատ լինի»[56]։

Գյուղական համայնքի անդամի ժառանգական սեփականության, նրան պատկանող գույքերի վաճառման և ժառանգելու իրավունքի մասին են խոսում՝ Սմբատի Դատաստանագրքի ՃԼէ (137), ՃԽ (140), ՃԽԳ (143), ՃԽԴ (144) և ՃԽԵ (145) հոդվածները[57]։

Այս և վերոհիշյալ հոդվածներից երևում է, որ գյուղական համայնքի անդամ-գյուղացիները բաժանված էին հիմնականում երկու խավի՝ գեղջ-ավագների և անդամների։ Վերջիններս կայուն չէին, մշտապես ենթարկվում էին քայքայման, ընդ որում իրենց տնտեսական կարողության տեսակետից սրանք էլ բաժանվում էին երկու խավի։ Երրորդ խավի առաջացումը մշտական երևույթ էր երկրորդ խավի հողազրկման և ունեզրկման անընդհատ պրոցեսի հետևանքով։ Սմբատ Սպարապետը հողազրկության պրոցեսը բացատրում է հողազրկվողի, այսինքն հողը կամ կալվածքը վաճառողի՝ աղքատությամբ։ Ինչպես ցույց է տրված վերոհիշյալ հոդվածներում, գյուղական համայնքի անդամի կալվածքն ու ունեցվածքը նույնպես կոչվում էր «հայրենիք»[58]։

Այսպես, ՃԽԳ (143) հոդվածում ասված է. «Բայց թէ վասն աղքատութեան մարդ ընդ մարդ հաշիւ այնէ պոմնով. և տայ՝ թէ կալ զիսայ հայրենիքս, ու տուր ինձ զիսայ չաք դեկանս...[59]», կամ թէ ՃԼէ (137) հոդվածում գրված է. «Եւ որ հող կամ գետին վաճառէ, թէ վասն տառպելութեան, որ ծախէ զիր գետինն, և գայ իր դրացին և ընկերն ու գնէ՝ նա ի պոմանն է իր համբերելն»[60]։

Վերոհիշյալ վկայությունները առաջին հերթին խոսում են ոչ միայն գյուղական համայնքի անդամի մասին, այլև ազատ սեփականատեր՝ մանր հողատեր գյուղացու գոյության մասին, երկրորդ՝ վերոհիշյալ վկայությունը ցույց է տալիս, որ գյուղական համայնքի անդամները կամ ազատ գյուղացի սեփականատերը՝ աղքատության պատճառով կամ ինչպես վերևում ասված է «տառապյալության» պատճառով վաճառում էր իր ունեցվածքը՝ հողը կամ «գետինը» մանր հողատիրոջ։

Այսպիսով, գյուղական համայնքում իրենց տնտեսական կարողությամբ և աղքատության պատճառով հողի վաճառքի միջոցով (որը յուրահատուկ ունեզրկում է նշանակում), առաջանում էր մի շերտ, որը բնորոշված է տառապյալներ տերմինով։ Վերջիններս զրկվելով արտադրության բոլոր միջոցներից, զրկվում էին վար ու ցանք անելու կարողությունից։ Նրանք չեն ունեցել սեփական տնտեսություն, որի պատճառով էլ դեգերել են գյուղից գյուղ, վանքից վանք, վաճառել են իրենց աշխատուժը և պահել իրենց գոյությունը։ Տառապյալ տերմինը վերոհիշյալ իմաստով է օգտագործված Դատաստանագրքի տարբեր հոդվածներում։ Հիմնականում՝ ինչպես բառը ինքը ցույց է տալիս, նշանակում է աղքատ, նվազ, ընդ որում այդ տերմինը հաճախ հակադրվել է հարուստ բառին։ Այսպես, աստուծո հայհոյողները անկախ նրանց տնտեսական կարողությունից կրում են նույն պատիժը. «ու ի տեղն քարկոծեն զինք (հայհոյողին—Ս. Բ.) և այս է դատաստան նոցայ թէ հարուստ լինայ և թէ տառպեալ»[61]։ Նույն իմաստով է օգտագործված 34-րդ[62], 71 և ՃԼէ (137) հոդվածներում՝ տառապյալ տերմինը, ընդ որում ՃԼէ (137) հոդվածում տառապյալը հողազուրկ գյուղացի է[63], ՃԿէ (167) հոդվածում տառապյալը օգտագործված է վարձու աշխատավորի՝ վարձկանի իմաստով, որտեղ Սմբատը պաշտպանում է վերջինիս իրավունքները և սահմանում է, որ գործատերը, որը վարձել է տառապյալին, պետք է ժամանակին վճարի նրա վարձը[64]։ ՃՁԳ (183) հոդվածում տառապյալը հանդիսանում է գյուղում աշխատող վարձու աշխատավոր[65]։

Այսպիսով, տառապյալ տերմինը այս շրջանում նշանակում էր հողազրկման պատճառով նվազ տնտեսություն ունեցող գյու-

56 Դատաստանագիրք, էջ 139։
57 Նույն տեղում, էջ 122, 124—125, 129—131։
58 Նույն տեղում, էջ 128—129։
59 Դատաստանագիրք, էջ 129։
60 Նույն տեղում, էջ 122։

61 Նույն տեղում, էջ 74։
62 Դատաստանագիրք, էջ 43։
63 Նույն տեղում, էջ 122։
64 Նույն տեղում, էջ 145։
65 Նույն տեղում, էջ 158։

զացի, կամ թե արտադրության միջոցներից զուրկ գյուղատնտեսության մեջ աշխատող վարձու աշխատավոր, որոնք «որ ոչ արտ և ոչ այլ իր բնաւ չունին և էութեամբ կու ապրին»[66]։

Աղբյուրներից երևում է, որ 11-րդ դարում գյուղատնտեսության մեջ սկսվում է օգտագործվել վարձու աշխատանքը։ Վարձով աշխատող գյուղացիները կոչվել են մշակ[67], իսկ քաղաքում և գյուղում վարձով աշխատողները անվանվել են նաև՝ վարձկան[68], վարձվոր[69], գործավոր[70] և հոգվոր[71]։

Մշակ տերմինը նույնպես քննության առարկա է դարձել հայ աշխատավորության պատմությունն ուսումնասիրող պատմաբանների և բանասերների կողմից[72]։

Մշակ էին կոչվում Կիլիկիայի ֆեոդալական հասարակության անազատների դասակարգին պատկանող հողազուրկ գյուղացիները, որոնք կորցնելով իրենց հողակտորները և արտադրության մյուս միջոցները, վարձակալվում էին հողատեր ֆեոդալների կամ սեփականատեր գյուղացու՝ մանր հողատերերի կողմից, աշխատում էին վերջինների տիրույթներում և հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ։ Նրանք բնակվում էին գյուղերում և ագարակներում։ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» մշակը բացատրված է հողագործ, երկրագործ, այգու աշխատավոր[73]։ Որ մշակը միայն երկրագործ չէ, այլ վարձով աշխատող կամ վարձկան երկրագործ, այդ երևում է Սմբատի Դատաստանագրքի հետևյալ հոդվածներից։ Դ (4) հոդվածում ուղղակի մատնանշված է մշակի վարձու աշխատող լինելու մասին։ Ֆեոդալի ժառանգական կալվածքում աշխատող երկրագործի՝ վարձկանի մասին ասում է. «...Ապա թէ մշակ կենայ կամ այլ ցեղ վարձվոր կամ հոռվոր (ընդգծումը մերն է—Ս. Բ.) նա չտան իր՝

66 Նույն տեղում, էջ 169։

67 Նույն տեղում, էջ 17, 18, 173։

68 Նույն տեղում, էջ 148։

69 Նույն տեղում, էջ 17։

70 Նույն տեղում, էջ 148։

71 Նույն տեղում, էջ 17, 152։

72 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 158։ Խ. Սամուելյան, Հայ հին իրավունքի պատմություն, էջ 289։

73 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 44։ Еремян С. Опыт периодизации истории Армении эпохи феодализма, «Вопросы истории», 1951, № 7.

քանց իրք մի բաժին մասնաւորեն»[74]։ Կամ թե է (7) հոդվածում կարդում ենք. «Եթէ ոք մշակ վարձէ՝ ու առանց խնամոց հանցչաք շատ հալածեցնէ ի բան, կամ իրք տայ վերցնել՝...»[75]։ Այնուհետև «Վասն այգեաց և այգեգործաց» հոդվածում ուղղակի մատնացույց է արված մշակի և՛ վարձվոր և՛ երկրագործ լինելու մասին։ Նրա վարձը, ինչպես ասված է հոդվածում, կախված է տարվա բերրիությունից ու սղությունից[76]։ Այս նույն իմաստով է օգտագործված մշակ տերմինը Վարդան Այգեկցու մի շարք առակներում[77]։

Այսպիսով, մշակը վարձկան երկրագործ կամ հողագործ է՝ ընդհանրապես։

Մեր կարծիքով, Ղևոնդ Ալիշանը, «Սիսուան» աշխատության մեջ 1236 թ. Հեթում Ա-ի կողմից Տեատոնյան օրդենի կատարած հողային նվիրատվության փաստաթղթում հիշատակված regis rustici[78] տերմինը սխալմամբ թարգմանել է «արքունի մշակներ»[79]։ Իհարկե rustici-ն ոչ թե մշակներ, այլ գյուղացիներ են ընդհանրապես։ Այս տերմինը հայտնի է արևմտաեվրոպական ֆեոդալական հարաբերությունների մեջ որպես կախյալ գյուղացիներին բնորոշող տերմին։ Ղևոնդ Ալիշանը ուշադրություն չի դարձրել այն բանի վրա, որ նույն հրովարտակում այդ նույն արքունական գյուղացիները պետությանը կամ արքունիքին վճարում են հնգակ կամ հնգյակ՝ բերքի մեկ հինգերորդը կազմող հարկը։ Անշուշտ սա հետևանք է այն բանի, որ Ղևոնդ Ալիշանը ընդհանրապես գյուղացիության մեջ չէր տեսնում ոչ մի շերտավորում և նրա համար բոլորն էլ մշակներ էին գյուղում ապրող և երկրագործությամբ զբաղվող մարդիկ։ Տառապյալները և մշակները հանդիսանում էին գյուղական համայնքի անդամների հողազուրկ խավը։ Սրանք գտնվում էին միջանկյալ օղակում, որոնք հետագայում ապրանքադրամական հարաբերությունների զարգացման ազդեցությամբ կամ լրացնում էին քաղաքի լյումպեն պրոլետարիատի շարքերը, կամ թե մնալով գյուղում՝ ամրացվում էին հողին և դառնում ճորտեր։

Արքունի գյուղացիները կազմել են Կիլիկիայի գյուղացիության առանձին խավ։ Այդ երևում է վերը վկայակոչված հողային

74 Դատաստանագիրք, էջ 17։

75 Նույն տեղում, էջ 18—19։

76 Նույն տեղում, էջ 173։

77 «Сборник притч Вардана» (Марр Я.), ч. II, стр. 77.

78 V. Langlois, Le trésor, p. 142—143.

79 Սիսուան, էջ 205—206։

հրովարտակից, որը լույս է սփռում արքունի գյուղացիների սոցիալ-տնտեսական դրության վրա։ Այդ փաստերից երևում է, որ արքունի գյուղացիները փոքր-ինչ ազատ էին, քան մյուս կատեգորիայի կախյալ գյուղացիներն ու ճորտ պառիկոսները։ Ընդ որում, նրանք ամրացված չէին հողին, այլ արքունիքին վճարում էին բերքի մեկ հինգերորդ մասը՝ հնգյակը։ Այնտեղ ասված է, որ Հեթում Ա թագավորը հողային կալված ստացող Տևտոնյան օրդենին թույլ է տալիս, եթե նրանց «հաճոյ թուիցէ», արձակել արքունի գյուղացիներին կամ թե արքունի վասալ՝ լիճ ճորտերին, եթե վերջիններս ուզենան հեռանալ իրենց գյուղացիներով։ Նրանք կարող են այդ անել միայն մի պայմանով, որ գյուղացիները վճարեն հասի, այսինքն հնգյակի կեսը, իսկ մյուս կեսը վճարեն իրենց տիրոջը՝ արքունիքին կամ արքունի լիճ ճորտերին՝ վասալներին[80]։

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ վկայությունից, արքունի գյուղացիները թեև վճարում էին «հնգյակ» (Engague) հարկը, սակայն նրանք ամրացված չլինելով հողին, կարող էին ազատորեն տեղափոխվել մի կալվածքից մյուսը, իսկ եթե ցանկանային մնալ նույն կալվածում, նրանց պետք է վճարեին նույն հնգյակ հարկը իրենց նոր տիրոջ՝ այս դեպքում օրդենին։ Անշուշտ, ինչպես մենք ցույց կտանք ներքևում, հնգյակը նման էր հարկատու՝ կախյալ գյուղացիների կողմից իրենց տերերին վճարվող հարկին։ Վերջինիս չափը սահմանված է Սմբատի Դատաստանագրքում[81]։ Հետևաբար արքունի գյուղացիները հանդիսանում էին Կիլիկիայի գյուղացիության երկրորդ խավը։

Կիլիկիայի գյուղացիության մյուս կատեգորիային էին պատկանում կախյալ գյուղացիները։ Վերջիններս հայտնի են «հարկատուք», «հնազանդք» և այլ տերմիններով։

Թեև հնազանդ տերմինը հիմնականում բնորոշել է կախյալ գյուղացիներին, սակայն այն ունեցել է նաև թագավորի հպատակները բնորոշող իմաստ, և որպես այդպիսին այն իր մեջ ընդգրկել է Կիլիկիայի հայկական պետության բոլոր քաղաքացիներին՝ անկախ նրանց դասակարգային և ազգային պատկանելիությունից։ Այս վերջին իմաստով է օգտագործված, օրինակ՝ 1288 թ. Լևոն Գ թագավորի կողմից ջենովացի առևտրականներին տրված առևտրական շնորհագրի հոդվածներից մեկի հետևյալ հատվածը.

[80] V. Langlois, Le trésor, p. 143.

[81] Դատաստանագիրք, էջ 13։

«...եւ արդ այսմ հետէ և առ յապայ չունի ոք իշխանութիւն ի մեր թագաւորութեանս ամենայն հնազանդացն ոչ ի մեծացն և ոչ ի փոքունցն՝ (ընդգծումը մերն է—Ս. Բ.) մեր թագաւորական բարձր հրամանացս հակառակ կալ, կամ աստուածապահ գումնին ճընուվիզացն՝ ուժ կամ նեղութիւն առնել կամ այլ ավելի հարկ կամ իրաւունքս պահընջել»[82]։

Հնազանդություն տերմինը, որպես թագավորական իշխանության ենթակա և հպատակ նշանակող տերմին, օգտագործվել է նաև Սմբատի Դատաստանագրքի Բ (2) և Գ (3) հոդվածներում[83]։ Այնտեղ այն օգտագործվել է ծառություն կամ ծառայություն՝ վասալական կախում ցույց տվող տերմինի հետ կողք-կողքի։

Ինչպես վերևում ասվեց, հարկատուք և հնազանդք տերմինները հիմնականում ներկայացրել են կախյալ գյուղացիներին և ներքնապես կապված են իրար հետ, ընդ որում աղբյուրներում հանդիպում են հաճախ միասին, որպես համազոր կամ իրար լրացնող տերմիններ։ Օրինակ՝ Ներսես Շնորհալու Թուղթ ընդհանրականում «Առ իշխանս որ ընդ աշխարհի» բաժնում «հնազանդեալք»-ը վերաբերվում է ֆեոդալի կախյալ գյուղացիներին և հանդես է գալիս հարկադրություն բառի հետ։ Այսպես, «եւ արդ՝ առաջին զայս պատուիրանս աւանդեմք ձեզ. մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հարկադրութեամբ (ընդգծումը մերն է—Ս. Բ.) զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք և ըստ զչափոյ զօրութեան զիւրաքանչիւր ոք զմտաւ ածէք. զի և ձեր տէր գոյ յերկինս»[84]։ Այնուհետև «առ զինուորաց դասս» բաժնում դիմելով զինվորներին գրում է. «...եւ եթէ կարգեցիք ի տէրանց ձերոց ի գործ վերակացութեան, կամ առաքեցիք ի տնօրինութիւն ինչ բանի արդարութեամբ և իրաւամբք առ հնազանդեալսն վարեցարուք»[85]։

Որ հնազանդյալները՝ կախյալ գյուղացիները, միայն հարկատու էին իրենց իշխաններին և դեռևս չէին ամրացվել հողին, և որ ունեին իրենց հայրենիք հողակտորը, և անձնապես ազատ էին, գտնվում էին այնպիսի վիճակում, որին Կ. Մարքսը անվանում է «սոսկական տուրքապարտություն»[86], այդ ցույց է տալիս Սմբատի

[82] V. Langlois, Le trésor, p. 158.

[83] Դատաստանագիրք, էջ 13։

[84] Թուղթ ընդհանրական, էջ 92։

[85] Նույն տեղում, էջ 105—106։

[86] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, էջ 328։

Դատաստանագրքի առաջին հոդվածի վերջին հատվածը, որտեղ ասված է. «Նոյնպէս և իշխանքն պարտին զիւրեանցն հարկատուվացն և հնազանդացն պահել՝ որ ամեն մէկն զիւր շինածն և զկորթբացած հայրենիքն (ընդգծումը մեն է—Ս. Բ.) ունայ, և շինին ի վերայ յիրաց պատճառայոյզ ի պիղծն»[87]։

Ինչպես տեսնում ենք, հնազանդյալները և հարկատուները ունեն իրենց հայրենիքը։ Սակայն ֆեոդալական մասնավոր հողատիրության պայմաններում, որտեղ արտադրական հարաբերությունների հիմքը հանդիսանում է ֆեոդալի լրիվ սեփականությունը արտադրության հիմնական միջոցներից մեկի՝ հողի նկատմամբ, գյուղացին թեև անձնապես ազատ էր և ամրացված չէր հողին, սակայն նա պարտավոր էր հարկեր տալ և իշխանին և թագավորին, որպես երկրի քաղաքական իշխանության ներկայացուցիչների։ Պետությանը տրվող հարկի չափը որոշվում էր թագավորի կողմից, և այն հավաքում էին գավառների իշխանները։ Այդ մասին Սմբատի Դատաստանագրքում ասված է. «Զգաւառաց հարկն սահմանովն որ սահմանած է՝ առնուն պարոնայքն. և չիշխէ ոք՝ յայն որ առանց թագվորին դիր յաւելցնէ»[88]։

Հարկատու և հնազանդյալ՝ կախյալ գյուղացիության այս խավը մշտապես ենթակա էր ճորտացման ֆեոդալական խոշոր տնտեսությունների ու հողատիրության հետագա զարգացման և ֆեոդալական հարաբերությունների խորացման հետևանքով։ Այս պայմաններում ֆեոդալները՝ հողատերերը սկսեցին զբաղվել գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ և արտահանմամբ։ Նրանց չէր բավարարում այլևս կախյալ գյուղացիության հարկատվությունը։ Վերջիններիս անձնական կախման ենթարկվածությունը և ֆեոդալի հողերի վրա նրանց պարտադիր աշխատեցումն ու հողին ամրացումը դառնում էր օրակարգի հարց։

Որ դեռևս 12-րդ դարում, կախյալ գյուղացիների մի մասը սկսել էր ճորտացվել և կոռային աշխատանք կատարել ֆեոդալի համար, այդ երևում է Ներսես Շնորհալու Թուղթ ընդհանրականի հետևյալ հատվածից. «Մի որպէս զանբան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան,— խրատում է Ներսես Շնորհալին,— ծառայեցուցանէք զմարդիկ՝ որ ընդ իշխանութեամբ ձերով լինին ի գործ խիստ և աններելի, որպէս փարաւօն զորդիսն Իսրայելի, և զայն՝ առանց կերակուր տալոյ նոցին... որպէսզի կարող լինիցին վաստակօք իւրեանց զաղքատանաց կեանս զտանց և զորդուց իւրեանց լցուցանել և զարքունական հարկսն հատուցանել»[89]։

Այստեղ ուղղակի ակնարկված է, որ անմիջական արտադրողը ունի իր սեփական տնտեսությունը, իր աշխատամիջոցները, և որը վճարում է արքունական հարկը, որպես թագավորի հնազանդյալ։ Սակայն ֆեոդալ իշխանները չեն բավարարվում և կախյալ գյուղացուն որպես «անբան կենդանու» սկսում են աշխատեցնել իրենց տնտեսություններում։

Նույն դարի հեղինակ Սարգիս Շնորհալին բողոքում է, որ իշխանները և հարուստները ուժի միջոցով ստիպում են իրենց հնազանդյալներին հացահատիկ հավաքել տոթում և փոշու մեջ, զլանալով ուտելիք և խմելիք տալ վերջիններին։ Շինականները, ասում է նա, աշխատում են այդ պայմաններում առավոտվանից մինչև ուշ երեկո[90]։

Հայտնի է, որ Ռուբինյան իշխանները, իսկ հետագայում թագավորները իրենց ենթակա վասալ իշխաններին բերդեր և ամրոցներ էին նվիրում՝ գյուղերով և ագարակներով հանդերձ։

Լևոն Բ-ի կողմից վանքերին և եկեղեցիներին կատարած հողային նվիրատվություններում ասված է. «Արձանագրով սեփականէր նոցա գիւղս և ագարակս (ընդգծումը մերն է—Ս. Բ.), այգիս և անդաստանս»[91]։

Լևոն Բ-ը Լամբրոնի Հեթում իշխանին 1202 թ. աղատում է բանտից և նրան նվիրում է «գեղօրայս բազումս»[92]։

Ռուբինյան իշխանների կողմից Գոների Ս. Անապատին նվիրված Տիրոջ գյուղը հիշատակվում է որպես «սեփական ժառանգութիւն Սուրբ Անապատին Գոներոյն»[93]։ Սմբատը իր Դատաստանագրքում խոսում է վանքապատկան գյուղերի և ագարակների մասին[94]։

Լևոն Բ-ի և Հեթում Ա-ի կողմից հոգևոր ասպետական օրդենների օգտին կատարված բոլոր հողային նվիրատվություններում՝ բերդերը, ամրոցներն ու քաղաքները նվիրվում են գյուղերով և

87 Դատաստանագիրք, էջ 14։
88 Նույն տեղում, էջ 13։
89 Թուղթ ընդհանրական, էջ 92—93։
90 Մատենադարան, ձեռագիր № 1318, էջ 115։
91 Ժամանակագրութիւն Միխայելի, էջ 504։
92 Տարեգիրք, էջ 212։
93 «Հասկ», 1950—1951, էջ 60։
94 Դատաստանագիրք, էջ 44, 51։

ագարակներով հանդերձ[95]։ Բերենք մի օրինակ, որը համարյա նույն ձևով կրկնվում է բոլոր հողային տոնացիաներում։ Այսպես, 1236 թ. Հեթում Ա-ի կողմից Տևտոնական օրդենի օգտին կատարված Հարոնիա քաղաքի նվիրատվություններում ասված է. «Պարգևում ենք... Հարոնիա գեղեցիկ քաղաքը շրջակա սահմաններով, դրան պատկանող վանքերով, գյուղերով, ագարակներով, հողով ու ջրով, ջրաղացներով, գետերով, լեռներով, բլուրներով և պտղաբեր այգիներով, պարտեզներով, կալվածներով և այլ ունեցվածքով[96]։

Դժվար չէ վերոհիշյալից հետևցնել, որ օտարվող կալվածների արտադրության միջոցներից երկուսը՝ (որոնք գտնվում էին թագավորական դոմենի սահմաններում) հողն ու ջուրը պատկանում էին թագավորին կամ աշխարհիկ ու հոգևոր հայրենատեր, բերդատեր ֆեոդալներին։

Որ օտարվող գյուղերը բնակեցված էին գյուղական աշխատավորներով, դա աներկբայելի է։ Մեզ մնում է պարզել, ագարակների բնակեցված լինելու և նրանց բնակչության՝ աշխատավորության սոցիալ-տնտեսական վիճակը և աշխատավորության որ շերտին պատկանելը։

Հայկական միջնադարյան մատենագրության մեջ ագարակ տերմինը գործածվել է երկու իմաստով, մի դեպքում որպես բնակավայր, իսկ մյուս դեպքում որպես մշակված հողային տարածություն[97]։ Մեր ձեռքի տակ եղած Կիլիկյան հայկական մատենագրության, հողային նվիրատվություններում և իրավական հուշարձաններում ագարակ տերմինը օգտագործվել է միայն բնակավայր իմաստով։ Սմբատի Դատաստանագրքում կարդում ենք. «...քահանայքն ի քաղաքն կենան և իրիցունքն ի գեղ և յագարակ, և սոքա ևս պատուով են զանազանած...»[98]։

Այստեղ, անշուշտ ոչ մի կասկած չի կարող առաջանալ, որ ագարակը գործածված է բնակավայր իմաստով, որովհետև երեցը, այսինքն գյուղական քահանան օծվում և նշանակվում էր ոչ

[95] V. Langlois, Le trésor, p. 143, աշխատության մեջ նշված բոլոր հողային տոնացիաները։

[96] V. Langlois, Le trésor, pp. 142— 143.

[97] Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—12-րդ դարերում, էջ 314։ Տե՛ս նաև, Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, էջ 230—232։

[98] Դատաստանագիրք, էջ 66։

թե հողամասի կամ կալվածի համար, այլ բնակչության՝ բնակավայրի բնակիչներին հովվելու համար։

Ագարակ տերմինի բնակավայրի իմաստով գործածության դեպքեր ունի նաև Ներսես Շնորհալին իր Թուղթ ընդհանրականում։ Այսպես, խոսելով հայ գաղթականների աշխարհով մեկ ցրված լինելու մասին, Ներսես Շնորհալին գրում է. «...Եւ որք յիւրաքանչիւր յեղերս աշխարհաց ըստ մեղաց մերոց ցրուեալք և քաղաքս և ի դղեակս, ի գիւղս և յագարակս...»[99]։

Ագարակ տերմինը բնակավայրի իմաստով գործածվել է նաև հետևյալ հիշատակարանում. (1233 թ.) «Զեռամբ Յակոբայ կրոնաւորի ի խնդրոյ սրբասէր քահանային Կարապետի յաշխարհիս Կիլիկեցւոց՝ Տարսոնի, առ ստորոտով լերինն Տորոսի, յանմատոյց դղեակս Լամբրոն, ի փոքրիկ ագարակիս որ Յովանի կոչի. Աւտարք և պանդուխտ եմք երկրի, ի թագաւորութեան հայոց Հեթմոյ»[100]։ Այստեղ ագարակը որպես բնակավայր նույնիսկ ունի անուն և կոչվում է Յովանի։

1237 թ. Իկոնիայի սուլթանի զորքերը «յափշտակեցին զառ և զաւար գեղից և ագարակից, որ և աւարին ոչ գոյ համար»[101]։ Նույնի մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «...մտեալ (իմա՝ Իկոնիո սուլթանը) յաշխարհն՝ աւերեաց զբաղում աւանս և զագարակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ...»[102]։

Բնակավայրի իմաստով է օգտագործված նաև Սսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնագրի հետևյալ հատվածը. «...Եւ յամենայն տեղի՝ ի մեծ և ի փոքր՝ յիշոցաւագ դնեն ի դարպաս, ի քաղաք, ի գիւղս, ի բերդս, և յագարակս»[103]։

Վերոհիշյալ վկայություններում ագարակ տերմինը բնակավայրի՝ (բնակչությամբ հանդերձ) իմաստով օգտագործումը անկասկած է։ Մնում է պարզել, որ այդ գյուղերում և ագարակներում հողն ու ջուրը օգտագործող և արտադրությամբ զբաղվող գյուղացիությունը ինչ էր լինում, երբ հողը կամ բնակավայրը օտարվում էր։

Այս հարցին անմիջապես պատասխանում են հողային տոնացիաները։ Այսպես, 1236 թ. Տևտոնյան օրդենի օգտին կատարված

[99] Թուղթ ընդհանրական, էջ 1։

[100] Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, էջ 902։

[101] «Հանդէս ամսօրեայ» 1954, էջ 71։

[102] Գանձակեցի, էջ 288։

[103] Նույն տեղում, էջ 307։

նվիրատվություններում ասված է, որ այդ ագարակներում և գյուղերում ապրող թագավորի լիճ ճորտերին՝ վասալներին պատկանող գյուղացիները, այսուհետև հնգյակը՝ հողային ռենտան, պետք է վճարեն հողի նոր տիրոջը՝ օրդենին[104]։

Մենք ընդհուպ մոտենում ենք այն հարցին, որ սկսած 12-րդ դարի սկզբից գյուղացիների մի մասը ոչ միայն տնտեսապես, այլև՝ անձնապես կախված էր ֆեոդալներից։

Նախքան այս հարցին պատասխանելը, մեզ հարկավոր է պարզել այն տերմինները, որոնք բնորոշում էին Կիլիկիայի գյուղացիության ճորտական վիճակը կամ հողին ամրացված լինելը։ Այդպիսիք են՝ ճորտ, պառիկոս և դարպասային ճորտ։

Ճորտ տերմինը օգտագործվել է երկու իմաստով. առաջինը ընդհանրապես նշանակել է վասալ, ծառա, ստորադաս անձնավորություն, մեկին ենթակա[105]։ Երկրորդը՝ մասնավորապես հողին ամրացված գյուղացի։ Առաջին իմաստի գործածության մասին արդեն ասվել է։

Այսպես, Մ. Ուռհայեցին, երբ խոսում է խաչակիրների կողմից Ուռհա քաղաքին տիրելու դեպքի մասին, գրում է. «...Եւ տայր (Բաղդին կոմս Ուռհայի—Ս. Բ.) զՈւռհայի միւս Պաղտոյնն որ ասի Տպորկ. որ էր յառաջագոյն ճորտ (ընդգծումը մերն է—Ս. Բ.) Պեմնդին»[106]։ Էդ. Դյուլորիեն ճորտը թարգմանել է ֆրանսերեն page[107], որը նշանակում է ծառա, աշակերտ, երիտասարդ տղա, մանկավիկ։ Իհարկե ճորտը վերոհիշյալ վկայության մեջ ունի ֆեոդալի՝ վասալի նշանակություն։ (Բաղդինը խաչակիր իշխաններից էր և վասալական կախման մեջ էր գտնվում խաչակիր իշխանաց իշխան Պեմունդից— Ս. Բ.)։

Նույն իմաստով է օգտագործել Մ. Ուռհայեցու Ժամանակագրության շարունակողը՝ Թորոս Բ իշխանին բնութագրելիս։ Վերջինս առաջարկել էր բյուզանդական զորավար Անդրանիկ Կոմնենոսին հաշտություն կնքել այն պայմանով, որ ինքը դառնա կայսրի ճորտ[108], այսինքն՝ վասալ։ Նույն իմաստով ճորտ տերմինը օգտագործել է նաև Սմբատը իր Դատաստանագրքի հետևյալ հատվածում. «Եւ իշխանք դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն և

[104] V. Langlois, Le trésor, p. 144.
[105] Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ. 4, էջ 696։
[106] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, տե՛ս Documents arm., T. I, p. 52.
[107] «Հայկազյան բառարան», հ. 2, էջ 4։
[108] Ուռհայեցի, էջ 400։

իրենց տեսովն. նոյնպէս և զաղատքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն նա իրենցովն զիրենք դատեն իշխանաց իշխանքն. զթագաւորին ճորտերն՝ թագաւորին հրամանաւքն»[109]։

Անտիոքի ասիզների հայերեն թարգմանության մեջ (իսկ մեզ հասել է միայն հայերեն օրինակը, Սմբատ Սպարապետի թարգմանությամբ)[110] ճորտը մշտապես հանդես է գալիս լիճ բառի հետ, **լիճ ճորտ և լիճ ճորտեր** տերմինների մեջ[111] (լիճ, lige նշանակում է հպատակ, ենթակա, կապված, հաստատվող—Ս. Բ.)[112], որտեղ բառացիորեն նշանակել է ֆեոդալական-վասալական կախում ցույց տվող իմաստ, այսինքն ֆեոդալի վասալ, որը ստացել է կալված սենյորից և նրա հետ կապված է ստացված հողի դիմաց սենյորի նկատմամբ կատարած պարտականություններով և վճարած հասով։

Լիճ—լճություն և ճորտ տերմինների վասալական կախվածություն և վասալական կապ ցույց տվող իմաստը ուղղակիորեն մատնացույց է արված Անտիոքի ասիզների հետևյալ հոդվածում, որը ոչ մի կասկած չի թողնում լիճի և ճորտի վերոհիշյալ նշանակության մասին։ «Ծառաջ պարտ և արժան է գիտել եթէ ինչ կապկցություն կայ ընդ պարոնն և ընդ լիճ ճորտն. և արժան է գիտել որ մեծ հաւատարմութիւն կա և կապակցութիւն, հայնց որ այլ մեծ չկարէ լինել։ Վասնզի կապվել է ճորտն լճութեամբ ընդ իր պարոնն՝ ընդդէմ ամէն ազգ մարդոյ, որ մեռնել կարէ և ապրել յաւիտեան»[113]։

Հետաքրքիր է, որ Անտիոքի ասիզների թարգմանող Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքում բացի մի դեպքից, որտեղ օգտագործում է լիճ-ճորտեր տերմինը վերոհիշյալ իմաստով, մնացած դեպքերում ճորտը և լիճ ճորտը[114] օգտագործում է կախյալ գյուղացու իմաստով։

Ճորտը որպես գյուղացու՝ ֆեոդալից անձնական կախվածությունը ցույց տվող տերմին, օգտագործվել է Սմբատի Դատաստանագրքի Բ (2), ՃԼ (130), ՃԽԷ (147) և ՃՁ (180) հոդվածներում։ ՃԼ (130) հոդվածում կարդում ենք. «Եւ թէ լինի որ տեղոյն կամ տանն կամ իրացն տէրն ասէ ընդ մարդ, թէ՝ ձգէ վրակ կոտրէ

[109] Դատաստանագիրք, էջ 82։
[110] Աշոտ Դալստյան, Սմբատ Սպարապետ, էջ 100։
[111] Assises d'Antioche, 1876, էջ 8—31։
[112] Հ. Ավգերյան, Բառգիրք, էջ 424։
[113] Assises d'Antioche, էջ 8—9։
[114] Դատաստանագիրք, էջ 11, 15, 82։

կամ ապա զինա բանն՝ զինչ ու լինի, և ճորտն այն է՝ նա չպարտի ճորտն իրք, պարոնին է մեղանքն՝ որ զվզենն վճարէ»[115]։ Այս և վերոհիշյալ հոդվածներում հիշատակված ճորտ տերմինը, Սմբատի Դատաստանագրքի ռուսերեն թարգմանող Աշոտ Գալստյանը շատ ճշտորեն թարգմանել է крепостной ռուսերեն տերմինով[116]։

Ճորտ տերմինի հետ և նրան զուգահեռ ճորտ գյուղացու իմաստով Սմբատը Դատաստանագրքում օգտագործել է նաև պառիկոս տերմինը, որը ճորտ տերմինի համազոր բյուզանդական անվանում է։

«Եւ ի հաւտ դարպսուն պիտի արիանալ, զի զվզենն իր բաժին ունի. ու շինականք շուտ կու հաշտին ընդ իրար, մէկզմէկի ուտեն ու անսունքն գերնան, ու վզենն պարոնին կու լինի, եւ հաւքցաւղնոյն տեսովն պատեհ է, որ լինի. նոյնպէս եւ թէ սպանութիւն անասնոցն տայ այնել՝ նա հաւքցաւղին տեսովն պատեհ է, որ լինի, նոյնպէս եւ քշտելն ու կոտրելն կամ վճարն վնասու, որ պարոնն զիր հնգակն առնու ի վճարէն։ Զի թէ պառիկոս առանց դարպսու իշխէ հաշտիլ ընդ վնասարարն՝ նա գող է, ու տուգանք պարտի՝ որպէս զվճարն էառ տուալ՝ ի դարպասն»[117]։ Այսպիսով, մենք պարզեցինք այն տերմինները, որոնք աներկբայելիորեն ցույց են տալիս ճորտության առկայությունը Կիլիկիայում։

Վերևում նշեցինք, որ հողային նվիրատվություններում թագավորը հողի հետ միասին օտարում էր նաև ագարակներ և գյուղեր իրենց բնակիչներով՝ գյուղացիներով հանդերձ։ 1236 թ. Տևտոնական օրդենի նվիրատվությունում, ինչպես տեսանք, գյուղացիները անձնապես ենթարկվում էին թագավորի վասալին և որ վերջիններս իրավունք ունեին տեղափոխել իրենց կախյալ գյուղացիներին, որտեղ որ իրենք կցանկանան հաստատվել։

Կախյալ և ճորտ գյուղացիները բացի արդյունավճար ռենտայից, վճարում էին նաև աշխատավճար ռենտա, այսինքն՝ շաբաթվա որոշ օրերին աշխատում էին ֆեոդալի տիրույթում։

Հողային ռենտայի երկու ձևերի աշխատավճար և արդյունավճար ռենտայի առկայության մասին է խոսում Սմբատը իր Դատաստանագրքի առաջին հոդվածում։ Հոդվածի բովանդակությունը ցույց է տալիս, որ ֆեոդալ պարոնը գանձում էր գյուղացու արտադրած հավելյալ արդյունքի մի մասը, իսկ մյուս մասը մնում էր անմիջական արտադրողի տրամադրության տակ, որպեսզի վերջինս կարողանար վերականգնել իր իսկ ծախսած բանվորական ուժը և ապահովել իր անհատական տնտեսության վերարտադրության հնարավորությունները[118]։

Որ կախյալ գյուղացիները ունեցել են իրենց տնտեսությունը, հողակտորը[119] և անասուններն[120] ու աշխատանքային գործիքները[121], փոխադրական պրիմիտիվ միջոցները[122] և այգիներ[123], այդ մասին են վկայում Սմբատի Դատաստանագրքի բազմաթիվ հոդվածները։ Վերարտադրական վերոհիշյալ տարրերի պահպանման համար հոգ տանելով, Սմբատը գրում է. «Նոյնպէս և իշխանքն պարտին զիւրեանցն հարկատվացն և հնազանդացն պահել որ ամէն մէկն զիր շինածն և զկորթբացած հայրենիքն ունայ, և շինին ի վերայ յիրաց պատճառայոյզ ի պիղծն»[124]։ Այդ բոլորը համար»[125]։ Սակայն ֆեոդալը աշխատել է ինչքան հնարավոր է շատ վերցնել գյուղացու արտադրածից, որը կարող էր անել միայն գյուղացուն ենթարկելով ոչ միայն տնտեսական, այլև արտատնտեսական հարկադրանքի, քանի որ «հողի անվանական սեփականատիրոջ համար կատարվող հավելյալ աշխատանքը նրանից կարող է քամվել միմիայն արտատնտեսական հարկադրանքով, ինչ ձև էլ որ սա ընդունելիս լինի»[126]։ «Եթե կալվածատերը անմիջական իշխանություն չունենար գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական տնտեսություն է վարում[127]։ Ընդ որում, արտատնտեսական հարկադրանքի տնտեսական հիմքը

---

115 Դատաստանագիրք, էջ 118—119։

116 Նույն տեղում, էջ 15, 118—119, 133, 154։

117 Նույն տեղում, էջ 168։

118 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 85—86։

119 Դատաստանագիրք, էջ 13։

120 Նույն տեղում, էջ 135—137։

121 Նույն տեղում, էջ 13, 148։

122 Նույն տեղում, էջ 13։

123 Նույն տեղում, էջ 13, 125։

124 Նույն տեղում, էջ 14։

125 Վ. Ի. Լենին, Երկեր, Երևան, 1950, հ. 15, էջ 87։

126 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, էջ 329։

127 Վ. Ի. Լենին, Երկեր, Երևան, 1947, հ. 3, էջ 224։

հենդիսանում էր ֆեոդալ հողատերերի հողի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը, որը իմաստավորվում էր ոչ միայն բացարձակ հարկադրանքով, այլև ֆեոդալական դարավոր սովորություններով ու տրադիցիաներով, ֆեոդալիզմի տնտեսական հնարավորությամբ, որը նույնպես խարսխված էր հողի մասնավոր սեփականության վրա։ Այսպիսով կախյալ գյուղացին, ըստ Սմբատի Դատաստանագրքի, հարկեր էր տալիս գավառի պարոնին, որի չափերի մասին Դատաստանագրքում ասված է. «Եւ է ըղորդ հարկուն սահմանն այս, որ՝ զինչ Աստուած տայ հարկատուին, ի հնկէն մէկն է։ Ջրաղացք և այսպիսի շինուածք ազատ է։ Եւ ածուք ու այսպիսիք ի տասնէն զմէկն տանն։ Եւ ի շարաթն աւր մի պարոնին բանի. և այլ աւելի ոչ բնաւ (աշխատանքային ռենտա—Ս. Բ.)։ Եզն այլ ծառութիւն զպարտի, զի զիւր հնկակն տվել է։ Կովն լիտր մի եղ տայ պարոնին. և այլ խոտէք չտայ։ Ոչխարն՝ եփ գառն կամ ուլ բերէ տարեկան ի տասնէն մէկն առնու պարոնն։ Եւ ջորին և ձին և էշն չտայ. զի յամէն տաւներտն (տոներին—Ս. Բ.) որ են ի տարին՝ ԺԲ տարպայ՝ գան ծառայեն պարոնին։ Եւ ի բերգն երկու ճամպահ հաց տանեն և երկու աղ»[128] (եղին կոռ, սայլին կոռ—Ս. Բ.)։

Անշուշտ, սրանով չէր սահմանափակվում ֆեոդալի արտատնտեսական հարկադրական ուժը։ Ֆեոդալը կախյալ գյուղացուն դնելով անձնական կախման մեջ, ամրացնում էր հողին և զրկում էր վերջինիս ազատ տեղափոխվելու իրավունքից։ Սմբատի Դատաստանագրքի ՃԹԽ (149) հոդվածը ցույց է տալիս, որ ճորտ՝ պառիկոսը ամրացված է եղել հողին և առանց ֆեոդալի թույլտվության, իրավունք չի ունեցել տեղափոխվել մի այլ կալված՝ այլ ֆեոդալի մոտ։ Այնտեղ գրված է. «Կու հրամայէ աւրէնքս, որ թէ՝ պառիկոս փախչի յիր պարոնէն՝ նա քանի այն պառիկոսն ապրի, նա կարէ առնուլ զինք պարոնն. ապա թէ մեռնի ի դուրս՝ նա զորդիքն չկարէ ի կահրա տանիլ. քաւէլ ի կամաւքն երթայ»[129]։ Վերոհիշյալից պարզ է, որ գյուղացիության ճորտացումը արդեն փաստ է եղել Սմբատի ժամանակաշրջանում՝ 13-րդ դարում։

Ճիշտ է, Սմբատը չի ասում, որ գյուղացին իրավունք չունի հեռանալու ֆեոդալի հողից, սակայն ինքնին հասկանալի է, որ եթե փախած գյուղացու տերը կարող էր և իրավունք ուներ նրան

128 Դատաստանագիրք, էջ 13։
129 Նույն տեղում, էջ 134։

ստիպել վերադառնալու իր մոտ, ուստի և գյուղացին ամրացված է եղել հողին։ Սա գյուղացիների բացի տնտեսական, նաև անձնական կախվածությունն է ֆեոդալից, գյուղացու անձնական ազատության և տեղաշարժման ազատության վերացումն է։

Այսպիսով, 13-րդ դարում գյուղացիության մի մասի ճորտացումը կատարված իրողություն է Կիլիկիայում, հատկապես, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ֆեոդալ-թագավորը կամ իշխանը, այսինքն հողատերը և գյուղացու տերը իրավունք է ունեցել ճորտին նվիրելու՝ օտարելու ուրիշին՝ հողի հետ միասին, որը ֆեոդալից գյուղացու անձնապես կախյալ և իրավազուրկ լինելու հատկանիշներից մեկն է։

Որ ճորտ գյուղացու կախվածությունը կրել է և անձնական բնույթ, այսինքն արտատնտեսական, այդ երևում է Սմբատի Դատաստանագրքի ՀԶ (76) հոդվածից, որտեղ ասված է. «Եւ այլ ցած շինականք՝ հեծելվորք ամէն մէկ զիրն կարեն դատել, նոյնպէս ու զխրատելն և զվարել որպէս գրել ենք»[130]... «ապա զընտանել և ծեծել և տուգնել և հանել վարել յիրենց տեղոյ ի բաց՝ կարեն այնել»[131]։

Ինչպես տեսնում ենք ֆեոդալները կամ ազատները՝ հեծելվորները ճորտ գյուղացու նկատմամբ ձեռք են բերում մեծ իրավունքներ և վերջիններիս կատարելապես դնում են անձնական կախվածության մեջ, զրկում են նրանց տեղափոխվելու իրավունքից, ամրացնում են հողին, սակայն կախյալ գյուղացիները չեն դառնում առաջինների լրիվ սեփականությունը, քանի որ նրանք չեն կարող նրան սպանել կամ մեռցնել[123] և սակայն նրանց կարող են զրկել հայրենիքից՝ հողից, պարոնի թույլտվությամբ։ Այս վերջին հանգամանքը ընդհանուր պայման և երևույթ է Կիլիկիայի հայկական ֆեոդալական պետության ողջ ֆեոդալական վասալական սիստեմում։ Պարոնը ոչ միայն իրավունք չի ունեցել գյուղացուն՝ հնազանդյալին ու ճորտին սպանելու, այլև իրավունք չի ունեցել նյութական վնաս հասցնելու նրան։ Տիրոջ կողմից գյուղացուն ծեծելու կամ որևէ այլ առիթով ասենք՝ տիրոջ անզգուշության պատճառով, կամ թե, տիրոջ համար կատարած աշխատանքի ժամանակ գյուղացուն հասած դժբախտության կամ մարմնա-

130 Դատաստանագիրք, էջ 83։
131 Նույն տեղում, էջ 82—83։
132 Նույն տեղում, էջ 11, 82։

կան վնասվածքի համար պատասխանատու էր նրա տերը՝ ֆեոդալ հողատերը[133]։

Ոչ միայն ճորտերի և կախյալ գյուղացիների, այլև իրավազուրկ ստրուկների կամ ծառաների տիրոջ կողմից կատարված սպանության դեպքում, Դատաստանագիրքը արգելում էր նրանց սպանությունը, իսկ սպանության՝ կատարված իրականության համար վերջիններիս պարոնը պարտավոր էր հատուցել ստրուկների մահվան համար[134]։

Այսպիսով, 13-րդ դարում ֆեոդալական խոշոր հողատիրության հետագա զարգացումը, ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետևանքով՝ ֆեոդալների անձնական տնտեսությամբ զբաղվելու ցանկությունն ու հողատիրության պարտադիր օրենքները այդ նպատակը իրագործելու համար, պատերազմական ծախսերի ավելացումը, ուժեղացնում էին գյուղացիության շահագործումը և գյուղացիների հավելյալ արդյունքի կորզումը։ Այս բոլորը պայմանավորեցին գյուղացիների մի մասի հողի ամրացման ու ճորտացման պրոցեսի խորացմանը։

3. ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ. ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների հիմքում ընկած էր զարգացած ֆեոդալական հարաբերություններ։ Սակայն, այստեղ ևս, ինչպես և բուն Հայաստանում, շարունակվում էր գոյություն ունենալ պրիմիտիվ, տնային և նահապետական ստրկությունը։ Ճիշտ է, որ ի տարբերություն բուն Հայաստանի, Կիլիկիայի ստրուկների սոցիալ-իրավական զարգացումը մի փոքր այլ ընթացք է ունեցել[135] և նրանց վիճակը համեմատաբար ավելի ծանր ու չարքաշ է եղել[136]։ Սակայն, գլխավորը այն է, որ ինչպես բուն Հայաստանում 9—13-րդ դդ., այնպես էլ Կիլիկիայում ստրկությունը չէր հանդիսանում առանձին մի ինստիտուտ, մի կացութաձև, ինչպես կարծում էր Խ. Սամուելյանը[137] և չէր էլ կարող լինել այդպիսին, քանի որ Կիլիկիա-

133 Նույն տեղում, էջ 18, 149, 151։

134 Նույն տեղում, էջ 133—134։

135 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, էջ 333։

136 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 307։

137 Նույն տեղում։

յում ևս, անմիջական նյութական բարիքներ արտադրողները եղել են ոչ թե ստրուկները, այլ գյուղացիներն ու արհեստավորները։

Ինչպես բուն Հայաստանում և արևելյան մյուս երկրներում, այնպես էլ Կիլիկիայում ստրկության առաջացման աղբյուրները եղել են նույնը։ Գլխավորը եղել է պատերազմը և գերեվարությունը։ Թեև Կիլիկյան հայկական պետության մղած պատերազմները, 12—14-րդ դարերում, հիմնականում նպատակ ունեին պաշտպանել երկրի անկախությունն ու ինքնուրույնությունը, սակայն, այդ պատերազմները հաճախ երկուստեք վերածվում էին գերեվարության, կողոպուտի և ավարի միջոցով հնարաստություն ձեռք բերելու աղբյուրի։ Պատերազմի միջոցով գերիներ ձեռք բերելու բազմաթիվ վկայություններ կան հայ և օտար մատենագիրների մոտ։ Սմբատ Սպարապետը պատմում է, որ 1107 թ. երբ Իկոնիայի սուլթանը հարձակվում է Գող Վասիլի տիրույթների վրա, բազմաթիվ գերիներով և ավարով է վերադառնում։ Գող Վասիլը մեծ զորքով հետապնդում և հարձակվում է կողոպտիչների վրա. «...և յաղթեալ կոտորեցին զնոսա,— շարունակում է Սմբատը,— և կալան զսուլտանն նոցա, և բազում ամիրայս և վարեցին առաջին փրեանց ի գերութիւն»[138]։ Նույն հեղինակը պատմելով Հեթում Ա-ի Առակլեա՝ Կիլիկիայի արևմտյան սահմանակից շրջանները 1259 թ. կատարած արշավանքների մասին, գրում է. «...և անդ շահեցան բազում արջառ և ոչխարս, ձիս և ջորիս, ծառայս և ոսկի և բազում աւարաւ դարձաւ յաշխարհն իւր...»[139]։ Նույն նպատակն է հետապնդել Եգիպտոսի մամլուկների սուլթան Պնդոքտարի 1266 թ. արշավանքը Կիլիկիա։ Վարդան Բարձրբերդցին պատմում է, որ Սիս մայրաքաղաքը գրավելուց և այրելուց հետո «գնաց (իմա Պնդոքտար) աւերմամբ մինչև յԱդանայ և ապա լսէ համբաւ երկիւղի և դառնայ աւարաւ և գերութեամբ քառասուն հազարաւ բացի կոտորելոյն»[140]։

Պատերազմի և արշավանքների միջոցով գերիներ՝ ստրուկներ, ձեռք բերելու եղանակը այնքան սովորական, բնական և անհրաժեշտ է համարվել, որ դա օրինականացվել է իրավաբանական նորմերով։ Սմբատի Դատաստանագրքի համաձայն, գերիները թալանված և հափշտակված ավարի հետ բաժին էին ընկնում ոչ

138 Տարեգիրք, էջ 129։

139 Նույն տեղում, էջ 231։

140 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862 թ., էջ 163։

միայն թագավորներին, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին, այլև զորքին[141]։

Պատերազմի և ավարառության միջոցով ձեռք բերված գերիստրուկները վաճառվելիս են եղել գերեվաճառական շուկաներում, ընդ որում գերեվաճառությունը և նրանից ստացած եկամուտը դառնում էր գլխավոր շահերից մեկը հաղթող կողմի համար։ Այդ կատարվում էր մի կողմից՝ գերիների փրկագնման և մյուս կողմից՝ նրանց օտարության մեջ վաճառելու միջոցով։ 1149 թ. Իկոնիայի սուլթան Ղլիճ Ասլանի որդի Թուրքմանի ասպատակությունները Անտիոքի և Կիլիկիայի իշխանության տերիտորիայում հետապնդել է զուտ այդպիսի նպատակ։ Այսպես, հիշատակարաններից մեկում կարդում ենք. «...և անպատրաստ գտաւ զերկիրն և անաւգնական՝ առ և եբեր ի Մարաշ անասուն բազում, մարդ ՌԾ (1500) և զաղայքն, զորս ի վեց քարտէզ ծախէին և ապա Բ դահեկան և զայլն տարան»[142]։

Գերիների վաճառման և ստացված եկամուտները զորքի մեջ բաժանելու անմիջական վկայություն ունի Աբուլֆարաջը։ Մլեհ իշխանաց իշխանը (1169—1175) 1169 թ. գժտվելով իր եղբոր՝ Թորոս Բ իշխանաց իշխանի հետ, գնում է Հալեպի էմիր Նուր-էդ-դինի մոտ։ Վերջինս նրա տրամադրության տակ է դնում արաբական մի զորագունդ։ Անցած այս գնդի գլուխը, Մլեհը արշավում է Կիլիկիա և տասը հազար հոգի՝ մանչ, աղջիկ, չափահաս մարդիկ, կանայք, քահանաներ, վանականներ և եպիսկոպոսներ գերում և տանում է Հալեպ, որտեղ նրանց ծախում է վաճառականներին և գոյացած փողը բաշխում է Թուրք (իմա արաբ) զինվորներին[143]։

Գերիները և ստրուկները առևտրի առարկա էին նաև Կիլիկիայում և նույնիսկ արտահանվում էին որպես ապրանք։ Գերեվաճառության գլխավոր շուկան Այաս նավահանգիստն էր, որտեղ այդ նպատակով գալիս էին օտար վաճառականներ։ Առևտրական ակտերում հիշատակություններ կան գերիների առևտրի մասին։ Օրինակ, ջենովացի մի եկեղեցական վաճառել էր մի արաբ ստրկուհի Ֆաթմա անունով 400 հայ դրամի։ Նույնպես մի այլ ոք, վաճառել էր մի մկրտված ստրուկ, Կիրարտին անունով 200 հայ դրամով[144]։

141 Դատաստանագիրք, էջ 10—12։

142 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Բ հատոր, էջ 1013—1014։

143 Ժակ դը-Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, էջ 237։

144 «Կիլիկիա», Փորձ աշխարհագրության, Պետերբուրգ, 1894, էջ 215։

Այնչափ զարգացել էր ստրկավաճառությունը և ստրուկների արտահանումը Կիլիկիայից, որ նույնիսկ Կիլիկիայի թագավորները օտար վաճառականներին տված առևտրական շնորհագրերում նշում են ստրուկների վաճառքի և նրանց արտահանման պայմանները։ Իհարկե, օտար վաճառականները ձգտել են, որքան հնարավոր է, մեծ շահույթներ ստանալ ստրկավաճառությունից։ Հենց այդ պատճառով էլ 1288 թ. ջենովացիներին շնորհված արտոնագրում Լևոն Դ թագավորը նրանց ազատում է ներմուծվող և արտահանվող ստրուկների համար գանձվելիք հարկերից և մաքսերից, սակայն, մի վերապահությամբ։ Նրանց չէր թույլատրվում, քրիստոնյա ստրուկներին վերավաճառել մուսուլման ֆեոդալներին կամ վաճառականներին։ Արտոնագրում ասված է. «...և ծառայքն, որ կու ելնեն ու ի յերկրէն հանէն, նայ իրաւունք կուտան, նայ շտան իրաւունք, ապա թէ քրիստոնէ ծառայք գնեն. նայ երդնուն որ տաճկի չը ծախեն ու ոչ հանց մարդս, որ կամենան տաճկի ծախել»[145]։

Ստրկավաճառությունը այնքան սովորական երևույթ էր Կիլիկիայում, որ Սմբատի Դատաստանագիրքը պատիժ է սահմանում այն հոգևորականների նկատմամբ, որոնք կեղծ փաստաթղթեր են մատակարարում ստրկավաճառությամբ զբաղվողներին[146]։

Ստրկության երկրորդ, ոչ պակաս կարևոր աղբյուր էր ստրուկից ծնված երեխաների ստրկացումը։ Եթե ստրուկը ամուսնանար ստրկատիրոջ մոտ և նրա մոտ ունենար երեխաներ, վերջիններս դառնում էին տիրոջ ստրուկները։ Այս երևույթը օրինականացված է Սմբատի Դատաստանագրքում, որտեղ ասված է. «...և թէ կարգել լինայ զինք (այսինքն ստրուկին—Ս. Բ.) գնաւղն, ու որդիք էլ ունայ նա այն գնաւղին է»[147]։ Ընդ որում փրկավճարով կարող էր ստրկությունից ազատվել միայն ինքը՝ ստրուկը, իսկ տիրոջ մոտ ծնված երեխաները դառնում էին տիրոջ սեփականություն, իսկ եթե փրկագնվող ծառան հետ պահանջեր իր կնոջը և երեխաներին, ապա տերը կարող էր նրան ստրկացնել «մշտնջենաւոր ինչվի մահն» և այդ կատարվում էր «եկեղեցւոյ» վկայությամբ[148]։ Ցմահ ստրկությունը հատկապես վերաբերում էր ոչ քրիստոնյա ստրուկներին, իսկ քրիստոնյա ստրուկների նկատմամբ այդպես

145 Documents latins, T. II, p. 749.

146 Դատաստանագիրք, էջ 78։

147 Նույն տեղում, էջ 132։

148 Նույն տեղում։

էին վարվում մահմեդական տերերը։ Ինչպես նկատելի է, այս կարգը ավելի շատ կրոնական գունավորում ուներ և չէր բխում երկրի սոցիալ-տնտեսական հարաբերություններից և հանդիսանում էր մասնակի երևույթ[149]։

Ստրկության երրորդ կարևոր աղբյուր էր հանդիսանում՝ տընտեսական ծանր կարիքից և աղքատության պատճառով ծնողների կողմից վաճառված երեխաների՝ դուստրերի ստրկացումը։ Սմբատի Դատաստանագրքում նշված են այդ տիպի ծառաների կամ աղախինների իրավական վիճակը։ Հոդվածի վերնագրում ասված է. «Վասն որ զիւր դուստրն ծախէ վասն աղքատութեան»[150]։ Այս երևույթը խիստ տարածված էր Կիլիկիայում, որը հետևանք էր այն հանգամանքների և պայմանների, որի մեջ գտնվում էին աշխատավոր մասսաները, երբ երկարատև պատերազմները և աղնվականության կողմից նրանց շահագործման ուժեղացումը, առաջիններին հասցնում էր ծայր աստիճան աղքատության և չկարողանալով վճարել հարկերն ու տուրքերը, հաճախ ստիպված էին լինում վաճառելու իրենց երեխաներին։ Որպես ծառայ կամ ստրուկ վաճառում էին այն տղամարդկանց, կանանց և երեխաներին, որոնք կատարում էին պետական հանցագործություն[151], կամ թե գողություն՝ պետական գանձարանից[152]։ Սակայն, այս վերջին երևույթը, ավելի շատ պատժի չափ էր, քան ստրկության աղբյուր։

Գերեվարությունից և ստրկավաճառությունից մեծ մասամբ տուժում էին աշխատավոր մասսաները։ Թեև ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչները նույնպես ենթարկվում էին գերեվարության, սակայն վերջիններս փրկագնվում էին, իրենց ազատման համար վճարելով մեծ քանակությամբ ոսկի և հանձնում էին քաղաքներ[153]։

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում նշված են ստրկությունից կամ ծառայությունից ազատվելու պայմանները։ Առաջին պայմանը այն էր, որ նրանք պետք է վճարեին փրկագին միայն այն բանից հետո, երբ յոթ տարի ծառայեին տիրոջ մոտ[154]։

149 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, էջ 337։

150 Դատաստանագիրք, էջ 133։

151 Նույն տեղում, էջ 10։

152 Նույն տեղում։

153 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ, էջ 1013։ Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, էջ 237։ «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», 1856, էջ 93, 108։

154 Դատաստանագիրք, էջ 132։

Հասկանալի է, որ աշխատավոր ժողովուրդը ավելի քիչ հնարավորություն ուներ փրկագնվելու և այդ իսկ պատճառով գերի ընկածները հաճախ ստրկացվում և վաճառվում էին։

Թե ինչ կատեգորիայի ստրուկներ են եղել Կիլիկիայում, այդ մասին աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն հաղորդում։ Ստրուկները գերազանցապես ծառայում և սպասարկում էին տերերին, աշխատում էին տնային տնտեսության մեջ և արտադրական նշանակություն համարյա չունեին։ Այդ մասին են վկայում Սմբատի Դատաստանագրքի մի շարք հոդվածները[155]։ Հետևապես, նրանք ոչ մի ընդհանրություն չունեին պառիկոսների՝ ճորտերի հետ. Խ. Սամուելյանը վերջիններին որակավորում է ճորտացած ստրուկների շարքում[156], քանի որ, ինչպես ցույց տվեցինք նախորդ բաժնում, պառիկոսները կամ ճորտերը ամրացված էին հողին, ունեին իենց արտադրական միջոցները՝ հող, անասուններ, բնակարան և երկրագործական գործիքներ[157], որոնց ֆեոդալը, թեև նրանց ենթարկում էր արտատնտեսական հարկադրանքի[158], սակայն նրանք վայելում էին ավելի մեծ արտոնություններ, քան ծառաներն ու ստրուկները։

Սակայն ստրուկները՝ ծառաներն[159] ու աղախինները[160] նույնպես պատկանում էին անազատների դասակարգին։ Նրանց կապումը իրենց տերերից կոչվել է ծառայություն կամ ծառություն[161]։ Ծառաներ էին կոչվում արական սեռին պատկանող ստրուկները, իգական սեռինը՝ աղախիններ[162]։ Վերջիններս հիմնականում տնային ծառաներ էին։ Ծառաներ և աղախիններ ունեին և՛ թագավորները, և՛ իշխանները, և՛ հեծելվորները[163] և նույնիսկ գյուղական համայնքի ազատ գյուղացիները[164]։

Սմբատը իր Դատաստանագրքում մի շարք հոդվածներ է նվիրել ծառաների և տերերի փոխհարաբերությունների և ծառաների սոցիալ-տնտեսական ու իրավական վիճակի կարգավորման հար-

155 Դատաստանագիրք, էջ 107, 109, 132, 134, 154։

156 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 301։

157 Դատաստանագիրք, էջ 13—15։

158 Նույն տեղում։

159 Նույն տեղում, էջ 132—134։

160 Տարեգիրք, 1956, էջ 212։

161 Դատաստանագիրք, էջ 106, 132։

162 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը..., էջ 326—327։

163 Դատաստանագիրք, էջ 9—11։

164 Նույն տեղում, էջ 132—133։

ցերին։ Այդ հողվածներից երևում է, որ հատկապես մուսուլման ծառաները բոլորովին իրավազուրկ անձնավորություններ են եղել, այնքան ժամանակ, քանի դեռ չեն փրկագնվել։ Բայց այդ ծառայության ժամկետը քրիստոնյա ստրուկի համար ցմահ չի եղել, այլ յոթ տարի ծառայելուց հետո վերջինս կարող էր փրկագնվել պայմանով, որ նա վճարեր իր նոր տիրոջը՝ վերջինիս կողմից իր համար վճարած գինը[165]։ Եթե ոչ քրիստոնյա էր, նա մնում էր ծառայության մեջ ցմահ։ Կարող էր փրկագնվել, եթե ընդուներ քրիստոնեություն[166]։ Տերը կարող էր նրան ծախել, նվիրել, ծեծել[167], ամուսնանալ նրա հետ[168], կամ ամուսնացնել ուրիշի հետ[169]։ Թեև ծառան տիրոջ թույլտվությամբ կարող էր ընտանիք կազմել, բայց ստրկությունից ազատվելիս, վերջինս՝ զրկվում էր ստրկության ժամանակաշրջանում ծնված երեխաներից և կնոջից, որոնք նույնպես դառնում էին ծառաներ իրենց ծառա հոր փրկագնվելուց հետո[170]։

Պետք է ընդգծել մի հանգամանք, որ ծառաների կամ ստրուկների վերաբերյալ Սմբատի Դատաստանագրքի հոդվածները ավելի դաժան էին, քան Մխիթար Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները։ Օրինակ, Մխիթար Գոշի Դատաստանագրքում նշված է, որ ծառայությունից ազատվող հայրը կարող էր փրկագնով ազատել իր կնոջը և երեխաներին[171], իսկ ինչ վերաբերում է ստրուկին, նա կարող էր ազատվել առանց փրկագին վճարելու, եթե յոթ տարի ծառայել էր տիրոջը, նկատի առնելով, որ նա արդեն վճարած կլիներ իր գինը[172]։

Այս բոլորով հանդերձ, Կիլիկիայի ստրուկների վիճակը ավելի բարվոք է եղել, քան անտիկ շրջանի դասական ստրկական երկրների՝ Հռոմի և հին Հունաստանի ստրուկներինը։ Ինչպես հայտնի է, անտիկ շրջանում տերը կարող էր ստրուկին սպանել, ծախել և ոչ մի պայմանով ստրուկին չէր ազատում ստրկությունից, անկախ նրա ազգային և կրոնական պատկանելությունից։ Տիրոջ վերա-

165 Նույն տեղում, էջ 132։

166 Նույն տեղում, էջ 132—133։

167 Նույն տեղում, էջ 133։

168 Նույն տեղում, էջ 107։

169 Նույն տեղում, էջ 132։

170 Նույն տեղում։

171 Մ. Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1896, մասն 2-րդ, էջ 335։

172 Նույն տեղում։

բերմունքը ստրուկի նկատմամբ, նրան սպանելու մասին Դատաստանագրքում ասված է. «Եթե ոք զիր ծառայն քշէ ու սպաննէ՝ նա զարեան գինն ի դարպասն վճարէ. զի սպաննելն ու խրատելն պարոնացն է»[173]։ Մարմնական վնասվածք հասցնելու դեպքում տերը «...ազատէ զծառայն, զի զիր գինն էառ[174]»։ Ստրուկները զրկված են եղել սեփական տնտեսություն և արտադրական միջոցներ ունենալու, ուրիշի կամ տիրոջ ունեցվածքը ժառանգելու[175], երեց կամ հոգևորական դառնալու իրավունքից[176]։ Սակայն, այստեղ ևս, օրենքը թույլ էր տալիս ժառանգեցնել նրան, եթե այդ թույլ տրվի պարոնի կամ հոգևորական տերերի կողմից[177]։ Ստրուկը հոգևորական կարող էր դառնալ, եթե տերը իր կամքով ազատեր նրան ստրկությունից[178]։

Մի փոքր ավելի ծանր է եղել ոչ քրիստոնյա ծառայի կամ ստրուկի իրավական վիճակը։ Նա ցմահ մնում էր ստրկության մեջ։ Մարմնական վնասվածքի դեպքում տերը չէր ազատում նրան, քանի նա չէր տվել իր փրկագինը[179]։ Սակայն այս հանգամանքը իրավունք չի տալիս ենթադրելու, որ Կիլիկիայում աշխատավոր՝ շահագործվող և ճնշվող, մասսաները հիմնականում եղել են ոչ-քրիստոնյաները և որ իբր թե իշխանները և հայ գյուղացիները ապրել են ինչպես հայր և որդի։ Ճիշտ է, ոչ-քրիստոնյա հպատակների դրությունը ընդհանրապես և ոչ-քրիստոնյա շահագործվող դասակարգերի դրությունը մասնավորապես ավելի ծանր է եղել, քան քրիստոնյաների դրությունը, վերջիններիս թվում՝ հայերի դրությունը։ Սակայն այդ տարբերությունը չի բխել երկրում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունների էությունից, այլ ունեցել է կրոնական գունավորում, քանի որ հարևան մուսուլմանական երկրներում նույն դրության մեջ են եղել քրիստոնյա հպատակները և շահագործվող դասակարգերը[180], այդ թվում և հայերը։ Վերցնենք, օրինակ, ոչ-քրիստոնյաների դրությունը Երուսաղեմի խաչակրաց պետությունում[181]։

173 Դատաստանագիրք, էջ 133—134։

174 Նույն տեղում, էջ 134։

175 Նույն տեղում, էջ 25, 109, 132։

176 Նույն տեղում, էջ 25, 132։

177 Նույն տեղում, էջ 109։

178 Նույն տեղում, էջ 25։

179 Նույն տեղում, էջ 134։

180 Заборов М. Крестовые походы, стр. 109, 112.

181 Enc. Brit., 1946. T. 6, p. 779.

Օրենքը խիստ էր ոչ միայն ոչ-քրիստոնյա ստրուկի նկատմամբ, այլև առհասարակ ոչ-քրիստոնյա հպատակների՝ դասակարգերի ու դասերի նկատմամբ։ Այսպես, «Եւ թէ այլ ազգի քրիստոնէ սպաննէ՝ մեռնի. և թէ յոչ կամայ սպաննէ՝ երկու ձեռն կտրվի և զարեան գինն վճարէ, և ընդհանուր գին արեան քրիստոնէին. ԳՃ դեկան պերպեռատ է, և այլ ինչ որ մարդն լինի»[182], իսկ ոչ-քրիստոնյայի՝ մուսուլմանի արյան գինը քրիստոնյայի արյան գնի $^1/_3$-ն է[183]։ Քրիստոնյան, եթե մուսուլման սպանի, օրենքը մահապատիժ չի նախատեսում սպանողի համար, այլ պարտադրում նրան վճարել սպանողի արյան գինը[184]։ Նույն տիպի անհավասարություն էր նախատեսում Դատաստանագրքի ԻԸ (28), ՃԼէ (135), ՃԿԵ (165) և այլ հոդվածները։ Անշուշտ նույն տիպի անհավասար օրենքներ գոյություն ունեին հարևան մուսուլման երկրներում, քրիստոնյա և մուսուլման հպատակների համար[185]։

Ամփոփելով մեր ասածները, Կիլիկյան հայկական պետության անազատների դասակարգին պատկանող ստրուկների մասին, պետք է ասել, որ ստրուկները գտնվում էին սոցիալ-իրավական և տնտեսական ծանր վիճակում, նրանք չէին հանդիսանում արտադրող հիմնական դասակարգ և որպես շահագործվող՝ ճընշված մասսա, չէին բնորոշում Կիլիկիայի սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Նրանց մասնակցությունը արտադրությանը չէր անցնում պրիմիտիվ, տնային կամ նահապետական ստրկական արտադրաեղանակի սահմանները, չէին մասնակցում քաղաքական կյանքին, հետևաբար, նրանց վիճակը կրում էր փոխանցիկ, ապագայում չքացող, նույնիսկ միջազգային գերեվաճառության ապրանք հանդիսացող, հեղհեղուկ, ոչ-կայուն շահագործվող մի դաս։

4. ՔԱՂԱՔՆԵՐ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐ, ՌԱՄԻԿՆԵՐ

Կիլիկիայի քաղաքների ծագման հարցը չի մտնում ներկա աշխատության սահմանների մեջ, քանի որ այդ քաղաքների մեծ մասը առաջացել են մեր թվականությունից առաջ՝ դեռևս հելլենիզմի շրջանում։ Հայտնի է նաև, որ քաղաքային կյանքը Արևելքում, հատկապես Միջերկրական ծովի արևելյան ափերին, ուներ վաղեմի անցյալ։ Սակայն պետք է նշել, որ Կիլիկիայի քաղաքները սկսեցին բուռն թափով զարգանալ Կիլիկիայի հայկական պետության շրջանում։ Քաղաքների զարգացմանը անշուշտ նպաստավոր եղավ 12-րդ դարի վերջին հայկական կենտրոնացված պետության՝ թագավորության ստեղծումը։ Սակայն գլխավորը այն էր, որ երկրում սկսեց բուռն թափով զարգանալ արտադրական հարաբերությունները ու արտադրողական ուժերը։ Այդ բազայի վրա ծաղկեց երկրի տնտեսությունը, որն իր հերթին նպաստեց արհեստագործության, ներքին, արտաքին և տարանցիկ առևտրի զարգացմանը, ապրանքադրամական հարաբերությունների առաջացմանն ու զարգացմանը՝ քաղաքում և գյուղում։ Այս բոլորը իրենց հերթին աղդեցին Կիլիկիայի ֆեոդալական հասարակության դասակարգային կառուցվածքի, քաղաքային կյանքի և քաղաքների հետագա զարգացման վրա։

Կիլիկիայի քաղաքային կյանքին և քաղաքների աճին ու զարգացմանը առավել թափով նպաստեց բուն Հայաստանի ծաղկած և զարգացած քաղաքների՝ Անիի, Կարսի, Վանի, Կարինի, Արծնի և մյուս քաղաքների արհեստավորների մասսայական գաղթը դեպի Կիլիկիայի քաղաքները, 11—12-րդ դարերում։ Այս վերջին գործոնը հանդիսանում էր քաղաքային կյանքի զարգացման առանձնահատկություններից մեկը, որը այստեղ ևս զգացնել էր տալիս հայկական ֆեոդալիզմի ուժեղ աղդեցությունը, չժխտելով հանդերձ բյուզանդական քաղաքային կյանքի աղդեցությունը, որպես միջավայրի աղդեցություն։

Հին ժամանակներից Կիլիկիայում հայտնի քաղաքներ էին՝ Տարսոնը, Ադանան, Մամեստիան, Անազարբան, Սելևկիան և Սիսը, իսկ նավահանգիստներից՝ Այասն ու Կոռիկոսը։

Կիլիկիայի քաղաքներում ու նավահանգիստներում էր կենտրոնացված Կիլիկիայի մեկ միլիոն բնակչության կեսից ավելին[186]։ Կիլիկյան քաղաքների բազմամարդ լինելու մասին վկայություններ ունեն՝ Ներսես Լամբրոնացին, Կիրակոս Գանձակեցին, Վիլլեբրանտ Օլդենբուրգցին, Արուլֆարաջը և այլ հեղինակներ։

Կիլիկիայի քաղաքների և քաղաքային կյանքի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև արքունի հրովար-

182 Դատաստանագիրք, էջ 10։

183 Նույն տեղում։

184 Նույն տեղում։

185 Enc. Brit., T. 6, p. 779։

186 Г. Микаелян, История, стр. 17—19.

տակներն ու հողային նվիրատվությունները, առևտրական շնորհագրերն ու նոտարական ակտերը։

Վերը հիշատակված աղբյուրները ցույց են տալիս, որ Կիլիկիայի քաղաքներն ու նավահանգիստները հիմնականում մտել են արքունի տան դոմենի մեջ և անմիջականորեն ենթարկվել են արքունիքին։ Այդ քաղաքները, անշուշտ, իշխանական շրջանում (1080—1198) մտնում էին իշխանաց իշխանի դոմենի մեջ։

Ներսես Լամբրոնացին Լևոն Բ թագավորին ուղղված հայտնի նամակում Տարսոն քաղաքը կոչում է «քաղաքս ձեր»[187]։ 1212 թ. Կիլիկիա այցելած Վիլլեբրանտ Օլդենբուրգցին Ադանան, Տարսոնը, Մամեստիան և մյուս քաղաքները անվանում է «թագավորական քաղաքներ» (Civitatis Regis)[188], Անազարբայի միջնաբերդի արձանագրության մեջ Անազարբան հիշատակվում է որպես «մայրաքաղաքն Անավարզա»[189]։ Այս նավահանգիստը առևտրական շնորհագրերում ու նոտարական ակտերում հիշատակվում է «Հայոց թագավորի նավահանգիստ»[190] (Portae regis Armeniae)։

Որ այդ քաղաքները արքունական էին, այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Լևոն Բ-ի թագավորության հանդեսներին ներկայացող ֆեոդալների ցուցակում[191], և 1307 թ. Սսի և 1316 թ. Ադանայի եկեղեցական ժողովներում ներկայացող ֆեոդալների ցուցակներում[192], վերոհիշյալ քաղաքները չեն հիշատակվում որպես իշխանական տիրույթներ։ Ուշադրավ է նաև այն փաստը, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում նոր քաղաքների շինարարությունը վերապահված է թագավորներին։ Այնտեղ ասված է. «Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ դեկան շինել՝ և քաղաք և բերդ...[193]»։

Թագավորական քաղաքները գլխավորել են թագավորի ներկայացուցիչները՝ կապիտանները կամ «chevitain»-ները։ Վերջիններս հատկապես նավահանգստային քաղաքներում ունեցել են քաղաքական, վարչական և ոստիկանական ֆունկցիաներ[194]։

187 Թուղթ առ Լևոն, էջ 210—211։
188 Սիսուան, էջ 255—258։
189 Նույն տեղում, էջ 239։
190 V. Langlois, Le trésor, p. 152.
191 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», էջ 100—101։
192 Կղէմես, էջ 474—504։
193 Դատաստանագիրք, էջ 12։
194 „Histoire de Chypre de Mas Latrie", T. II, pp. 687—690.

Քաղաքներում թագավորի կողմից նշանակված հարկահավաքի ֆունկցիաներ էին կատարում ձեռներեցները[195], մուխթասիբները[196] և դուկը[197]։ Վերջիններս հսկում էին քաղաքների շուկաներում չափի և կշռի կարգավորմանը, գանձում էին հարկերն ու մաքսերը՝ կապալն ու բաժը, կամուրջների անցնելու համար ու քաղաքների գլխավոր մուտքերում։ Թագավորական քաղաքներում, թագավորի վարչական ներկայացուցիչներ էին նաև թագավորի կողմից նշանակված երեսփոխանները[198], որոնք նույն դերն էին կատարում, ինչ՝ պարոններն ու գավառապետները։ Քաղաքներում արհեստավորները թաղամասերի բնակչությունը կառավարելու համար նշանակվում էին տանուտերեր[199], վերջիններիս հեղինակությունը հատկապես բարձրանում է 14-րդ դարում, երբ մեծանում է առևտրականների դերն ու նշանակությունը Կիլիկիայի քաղաքային ու հասարակական կյանքում։

Սիս քաղաքը (որը Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաքը դարձավ 12-րդ դարի 70-ական թվականներին և մնաց այդպիսին մինչև թագավորության անկումը՝ 1375 թվականը) հայտնի էր դեռևս 5-րդ դարից։ Սակայն նա բարգավաճեց միայն հայկական թագավորության շրջանում (12—14-րդ դարերում) և դարձավ երկրի քաղաքական, վարչական, արհեստագործության, առևտրի և կուլտուրայի զարգացման խոշոր կենտրոններից մեկը։ Սիսը 1292—1441 թթ. եղել է նաև ամենայն հայոց կաթողիկոսի[200], իսկ 1441—1921 թթ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի նստավայրը[201]։

Սսի քաղաք և ապա մայրաքաղաք դառնալու գործում մեծ դեր է խաղացել նրա բերդի աշխարհագրական՝ բնական դիրքն ու անառիկ լինելը, որի հետևանքով, նույնիսկ, կարիք չէր զգացվել պարսպի կառուցման։

Անհամեմատ արագ էր բարգավաճել Սիսը։ 12-րդ դարի վերջին քառորդի հեղինակ Ներսես Լամբրոնացին Սիսը կոչում է «իշ-

195 Թուղթ առ Լևոն, էջ 211։
196 Դատաստանագիրք, էջ 126։
197 Նույն տեղում, էջ 127։
198 Նույն տեղում։
199 Դարդել, էջ 69։
200 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ.։
201 Գ. Հովսեփյանց, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1954։

խանանիստ լցեալ իշխանօք և ժողովրդօք[202]», սակայն, նա գանգատվում է նրա անշքության համար։ Երկու տասնամյակ հետո Կիլիկիա այցելած Վիլլեբրանտ Օլդենբուրգցին, սքանչանալով Սսի գեղեցիկ շենքերով և զբոսարաններով, գրում է. «Այս է գլխավոր քաղաք տեառն արքային (Լևոն Բ թագավորի— Ս. Բ.) ասպնջական անթիւ և մեծատուն բնակչաց, ոչ ունելով պարիսպ շուրջանակի։ Գիտելի լիցի և այս և այս զի տէր արքայ առ ետի քաղաքիս պատրաստեաց պարտէզս փափկութեան, զորոյ զվայելչութեանն նկարագրել խոստովանիմ անբաւական լինել...»[203]։

Սիսը 14-րդ դարի վերջին դարձել էր միջնադարյան մեծ քաղաքներից մեկը։ Կիլիկիայի ժամանակագրի վկայությամբ. «Սիս քաղաքն ի ժամանակի թագաւորացն ՂԴՌ (94000) խանայ էր խարաճ տուող, բացի ազատացն...»[204]։ Նույն ժամանակագիրը 1404 թ. հաղորդում է. «Մեծ ժողով եղև Կիլիկեցոյն ի դուռն Կարապետ կաթողիկոսին, որ վասն գալստեան Ռամազանին և այլ պատերազմաց ձանձրացեալ ի նեղութենէ, և տեսեալ զաւերումն իւրեանց երկրին և զօրանալն անհաւատից, անցաւ յայնկոյս ծովուն, տունս ԼՌ (30.000)... և յետ երթալոյն իշխանացն և մեծատանցն ի Սիս մնացեալ աղքատք և չքաւորք որ ոչ ունէին զկարողութիւն փախչելոյ՝ ետուն զՍիս, յունիսի վեց»[205]։

Սսում էր գտնվում արքունի դարպասը, արքունի գանձարանը[206], Սսի միջնարերդի նշանավոր բանտը, դրամատունը, փողոցանոց տարապխանան[207], իշխանաց տունը[208], գրադարանը կամ մատենադարանը[209], Սսի վարժարան-համալսարան դպրատունը[210]։ Սսում էր կենտրոնացված օտար դիվանագիտական կորպուսը՝ Վենետիկի, Ջենովայի, Ֆրանսիական և իտալական մյուս քաղաքների պայլերն ու կոնսուլները, պապի լեգատներն ու հոգևորական ասպետական օրդենների կոմանդորները, հույն, ասորի, լատին և

[202] Doc. arm., T. I, p. 559.
[203] Սիսուան, էջ 204։
[204] Նույն տեղում, էջ 538բ։
[205] Նույն տեղում, էջ 542։
[206] Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 162—163։
[207] Սիսուան, էջ 579։
[208] Նույն տեղում։
[209] Նույն տեղում, էջ 224։
[210] Նույն տեղում, էջ 225։

մյուս համայնքների հոգևոր առաջնորդների ներկայացուցիչները[211]։

Սսի բնակչությունը բաղկացած էր ազնվականությունից, իշխաններից, մեծատուններից[212], առևտրականներից և արհեստավորներից[213], օրավարձով սև աշխատանք կատարող ամբոխից, բազմաթիվ ռամիկներից, «խառնիճաղանճ» մարդկանցից, ստվարաթիվ պաշտոնյաներից և արքունի բանակում մշտական ծառայություն կատարող հեծելվորից՝ քաղաքի կայազորից։ Հասկանալի է, որ վերջինս պահվում էր ճնշելու համար մայրաքաղաքի աշխատավորների ըմբոստությունները։ Այդպիսի մի ապստամբություն տեղի էր ունեցել 1316 թ., որը դաժան կերպով ճնշվել է Սսի կայազորի կողմից[214]։

Կիլիկիայի ամենախոշոր վաճառաշահ ու հարուստ քաղաքն էր Տարսոնը, որ գտնվում էր Կյուդնոսի գետաբերանում՝ Միջերկրական ծովի ափին։ Կյուդնոսը միջին դարերում նավարկելի էր, ընդ որում նավերը բարձրանում էին մինչև քաղաքը, որը էլ ավելի էր բարձրացնում քաղաքի առևտրական և ռազմական նշանկությունը[215]։ Տարսոնը 11—12-րդ դարերում, բյուզանդական տիրապետության շրջանում, եղել է իշխանանիստ քաղաք։ Քաղաքը վերջնականապես անցավ Կիլիկիայի Ռուբինյան իշխանության ներքո, երբ Ռուբեն Գ իշխանը «մեծ և երևելի» քաղաքը փողով գնեց Անտիոքի իշխանից[216]։ 1190 թ. Հովհաննես գրիչը Տարսոնը անվանում է «գեղեցկագույն և հոյակապ քաղաքն»[217]։ Տարսոնը Կիլիկիայի երկրորդ մայրաքաղաքն էր։ Այստեղ էին կատարվում թագադրության ծիսակատարությունները[218]։ Ի տարբերություն մյուս քաղաքների, Տարսոնը ունեցել է բազմազգ բնակչություն։ Բացի հայերից, բնակություն էին հաստատել մեծ քանակությամբ հույներ, ասորիներ, հրեաներ և իտալացիներ[219]։ Այստեղ էր հաստատված Վատիկանի պապի ներկայացուցիչ լատին եպիսկոպոսը[220]։

[211] V. Langlois, Essai, p. 73, 82, 83.
[212] Սիսուան, էջ 225։
[213] Նույն տեղում, էջ 224։
[214] Սամուէլ Անեցի, էջ 156։
[215] Իբն Խալլիքան, Վաֆայաթ ալ-Այան, III, Կահիրե, 1935, էջ 465։
[216] Սիսուան, էջ 262։
[217] Նույն տեղում, էջ 269։
[218] Նույն տեղում, էջ 270։
[219] Նույն տեղում։
[220] Նույն տեղում, էջ 274։

Տարսոնի աշխարհագրական դիրքը նրան դարձրել էր Կիլիկիայի ամենավաճառաշահ քաղաքը՝ Այասից հետո։ Նրա նշանակությունը հատկապես մեծացավ, երբ Այասը 1337 թ. գրավվեց եգիպտացիների կողմից։ Եվրոպացի առևտրականների մեծ մասը կազմում էին ջենովացիք, որոնք սկսած Լևոն Բ-ի ժամանակից, բնակություն էին հաստատել այնտեղ։ 1201—1215 թ. նրանք Լևոն Բ-ից ստացան իբրև պարգև Տարսոնի մի ամբողջ փողոցը՝ եկեղեցի, փուռ, բաղնիքներ և զբոսարաններ կառուցելու համար[221]։

Բնակչության ճնշող մեծամասնությունը արհեստավորներ և առևտրականներ էին։ Վերջիններս զբաղվում էին ոչ միայն ներքին, այլև՝ արտաքին ու տարանցիկ առևտրով[222]։ Սակայն, այստեղ ևս խիստ զարգացել էր նյութական անհավասարությունը։ Այնքան մեծ է եղել աղքատ բնակչության թիվը, որ Ներսես Լամբրոնացին, Տարսոնի եպիսկոպոս-առաջնորդը, ստիպված էր «ի շորեքշաբթի և յուրբաթի երկերիւր և երեք հարիւր աղքատաց հաց և բակլայ բաշխել»[223]։

Կիլիկիայի բազմամարդ, բարգավաճ, տնտեսական և քաղաքական նշանակություն ունեցող քաղաքներից էին Ադանան[224] և Սամեստիան[225]։

Արդյունագործության և առևտրի զարգացման ու ծավալման տեսակետից ավելի մեծ դեր է խաղացել Այաս նավահանգիստը։ Այստեղ բնակություն էին հաստատել ոչ միայն տեղական արհեստավորներն ու առևտականները, այլև արևելքից և արևմուտքից եկած բազմաթիվ մարդիկ, որոնք զբաղվում էին Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի միջև կատարվող տարանցիկ առևտրով[226]։ Այասը խոշոր նշանակություն է ստանում Սիրիայի խաչակիր ֆրանկ պետությունների անկման շրջանում (13-րդ դարի երկրորդ կեսին) և որպես այդպիսին առաջին անգամ հիշատակվում է 1261 թ. և նրանից հետո[227]։ Այս փաստը բացարձակ կերպով ժխտում է Էդուարդ Դյուլորիեի այն ենթադրությունը, թե Այասի

221 *V. Langlois*, p. 106—116.

222 *Սիսուան*, էջ 275։

223 «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», 1865, Վենետիկ, էջ 242։

224 *Սիսուան*, էջ 258։

225 *Նույն տեղում*, էջ 252։

226 Geographie d'Aboulffeda. Paris, 1848, T. II, p. 27.

227 Ղ. Ալիշան, *Հայ-Վինետ*, 1896 թ., Վենետիկ, էջ 51։

ծաղկումն ու բարգավաճումը հետևանք է խաչակրաց արշավանքների[228]։ 1271 թ. Այասի վրայով Չինաստան գնացող նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն Այասի և Կիլիկիայի մյուս քաղաքների առևտրի և ապրանքաշրջանառության մասին գրում է. «Ճիշտ է, որ գոյություն ունի երկու Հայաստան, մեծ և փոքր։ Շատ քաղաքներ և գյուղակներ կան Փոքր Հայաստանում (իմա Կիլիկիայում) և ամեն բանի մեջ առատություն է տիրում։ Ծովեզերքում մի քաղաք կա, որ Լայաս է կոչվում, որ մեծ առևտրի տեղ է։ Իմացեք, որ բոլոր համեմները, ասուեղենները, ոսկեղեն իրերը և ուրիշ ապրանքներ բերում են այստեղ ներսերից, իսկ Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկրների վաճառականները գալիս են, ծախում են իրենց բերած ապրանքները և գնում, տանում են ինչ որ իրենց պետք է, ով որ ուզենա երկրի ներսերը գնալ՝ վաճառական, թե ուրիշ ուղևոր, պետք է այս քաղաքից անցնի»[229]։

Այաս քաղաքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Ֆլորենցիայի առևտրական ընկերության գործակալ Պալտուչի Պեկոլոտտին իր «Հրահանգ վաճառականության» գրքում։ Նա Այասում եղել է 1336 թ.։ Նկարագրելով Այաս նավահանգիստը, գրում է, որ Այասը Մերձավոր Արևելքի՝ առևտրի ու վաճառականության խոշորագույն կենտրոններից մեկն է։ Նրա ասելով արևմուտքից Այաս էր ներմուծվում հետևյալ ապրանքները. հանդերձանք, մետաքսեղեն, ցփսի, բամբակեղեն, ոսկեճամուկ դիպակ, շաքար, խունկ, օճառ, ձեթ, գինի, չուխա, պղինձ, կլայեկ, ոսկի, արծաթ, լեղակ, սնդիկ, համեմներ, ատաղձ, նավեր, զենքեր և այլն։ Իսկ Այասից դեպի արևմուտք արտահանվում էին համեմներ, որդան կարմիր, փայտ, զենջեֆիլ կոճապղպեղ, ասր, պղպեղ, այծի ստեվ, ասվեղեն, երկաթ, ձի, էշ, ջորի, արջառ, մուշտակ, գոմեշի և պախարայի մորթի, գոմեշի եղջյուր, շամիշ, գինի, քաղցրեղեն, հավեր, հավկիթ, մետաքս, աղ և այլն[230]։ Թե ինչքան մեծ է եղել Այասում կատարվող առևտրի ծավալը, այդ երևում է, օրինակ, վենետիկցի վաճառականների կատարած առևտրի ծավալից։ Այասում նստող վենետիկյան պայլը, որը իր հպատակների առևտրական գործողություններից ստանում էր կես տոկոս մաքսահուլթի իրավունք, մեկ ու կես տարվա նրա ստացած եկամուտը կազմել է 7200 ֆրանկ, հետևաբար, միայն վենետիկցիների կող-

228 Doc. arm., T. I, Introduction.

229 *Марко Поло*, Путешествие, стр. 18.

230 *Pegolotti*, La pratica, 59—60.

մից կատարված առևտրի շրջանառության գումարը հասնում էր մեկ ու կես միլիոն ֆրանկի[231]։ Իհարկե, Այասի բաժնից 2—4 տոկոս մաքս վերցնող Սսի արքունական գանձարանը, տարեկան ստանում էր միլիոնավոր ֆրանկների հասնող գումար։ Սկսած 1323 թ. մինչև 1337 թ. (մինչև Այասի վերջնական գրավումը Եգիպտոսի կողմից) Եգիպտոսը տարեկան ստանում էր Այասի բաժնից մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ հարկ, որը կազմում էր Այասի բաժան եկամուտի մի մասը[232], ասում ենք մի մասը, որովհետև դեռևս այդ տարիներին, եկամուտի խոշոր մասը գնում էր Կիլիկիայի արքունի գանձարանը։

Այասին վերաբերող վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ Կիլիկիայի քաղաքները 13—14-րդ դարերում եղել են ոչ միայն արհեստագործության կենտրոններ, այլև ակտիվ կերպով մասնակցել են արտաքին և տարանցիկ առևտրին։ Սա իր հերթին նպաստել է երկրի ներսում արտադրվող գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքի ապրանքայնացման պրոցեսի ուժեղացմանը։ Կիլիկիայի քաղաքների նշանակության մեծացումը 13—14-րդ դարերում, անշուշտ, առաջին հերթին արդյունք էր գյուղատնտեսության վերելքի և արհեստագործության զարգացման, որը իր հերթին կապված էր ոչ միայն ներքին առևտրի, այլև՝ արտաքին և տարանցիկ առևտրի զարգացման հետ։ Իրենց հերթին քաղաքները խթանում էին շուկայական հարաբերությունների ծավալմանն ու խորացմանը, մի երևույթ, որ աստիճանաբար իր շրջապտույտի մեջ էր ներգրավում նաև ֆեոդալական տարրերին և գյուղացիներին։

Կիլիկյան Հայաստանի տնտեսական կյանքի կարևոր բնագավառներից էին արհեստագործությունն ու մետաղների արդյունահանումը։ 12—14-րդ դարերում զարգացել էր երկաթի հանքաքարի մշակությունը։ Կիլիկիայի լեռները հարուստ էին օգտակար հանածոներով, հատկապես երկաթի հանքերով։ 1285 թ. Եգիպտոսի հետ կնքված հաշտության պայմանագրով, Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին տալ տարեկան 10 հազար փութ երկաթ[233]։

Գուգլակում, Սսում և մի շարք այլ վայրերում արդյունահան-

231 Սիսուան, էջ 363—371։

232 V. Langlois, Le trésor, p. 232.

233 Նույն տեղ։

վում էին ոսկի, արծաթ և պղինձ[234]։ Տավրոսյան լեռներում արդյունահանվում էր կապար, որը արտահանվում էր Եվրոպայի շուկաները[235]։ Արդյունահանվում էր նաև՝ աղ, կլայեկ, ապակու հող և այլ օգտակար հանածոներ[236]։

Դաշտային Կիլիկիայում մշակվում էին թելատու բույսեր, որոնք ուղարկվում էին եվրոպական տարբեր երկրներ[237]։

Լեռնային Կիլիկիայում մեծ չափերով զարգացած էր անասնապահությունը։ Ամենից շատ պահում էին մանր եղջերավոր անասուններ՝ ոչխար և այծ։ Ոչխարներից գերադասվել է զարամանյան ցեղը, որը հայտնի է իր նուրբ բրդով, իսկ այծերի մեջ նրբագեղմ այծեր, որի մազից պատրաստում էին հռչակավոր ցփսի կոչվող գործվածքը[238]։

Կիլիկիայի բնական հարստությունները, օգտակար հանածոներն ու գյուղատնտեսական արտադրանքը խթանում էր արհեստագործության զարգացմանը, որը իր հերթին զարկ էր տալիս քաղաքների և քաղաքային կյանքի, ներքին և արտաքին առևտրի զարգացմանը։

Մարքսիզմի կլասիկները ընդգծել են աշխատանքի բաժանման դերը քաղաքների առաջացման և զարգացման գործում։ Անշուշտ Կիլիկիայի քաղաքների մեծ մասը առաջացել էին դեռևս հելլենիզմի և նրան հաջորդող բյուզանդա-արաբական շրջաններում, ուստի այստեղ խոսքը վերաբերում է ֆեոդալական քաղաքների զարգացմանը։ Աննենկոմին գրած նամակում քննադատելով Պրուդոնին, Կ. Մարքսը գրում է. «Պարոն Պրուդոնը այնքան հեռու է աշխատանքի բաժանման հարցը հասկանալուց, որ անգամ չի հիշատակում քաղաքի գյուղից անջատվելու մասին, որը Գերմանիայում, օրինակ, տեղի է ունեցել 9—12-րդ դարերում»[239]։

13—14-րդ դարերում արհեստագործությունը հիմնականում անջատվել էր գյուղատնտեսությունից և մեծ մասամբ կենտրոնացվել էր քաղաքներում։ Արհեստը դարձել էր արհեստավորի ապրուստի հիմնական միջոցը։

234 Սիսուան, էջ 9։

235 V. Langlois, Le trésor, p. 224.

236 Սիսուան, էջ 9։

237 Նույն տեղում։

238 Նույն տեղում, էջ 10։

239 К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, т. I, 1947, стр. 25.

Քաղաքներում արհեստագործությամբ և առևտրով զբաղվում էին ոչ միայն հայերը, այլև հույները, ասորիները, հրեաները, Ֆրանսիայի, Իտալիայի հպատակ քաղաքացիները, որոնք բնակվում էին Կիլիկիայի քաղաքներում[240]։

Ինչպես Կիլիկիայի ամբողջ ազգաբնակչության, այնպես էլ արհեստավորների գերազանց մասը կազմում էին հայերը, որոնք հանդիսանում էին Կիլիկիայի լավագույն արհեստավորները։ Նրանք զբաղվում էին մանածագործությամբ, մետաղամշակությամբ, ատաղձագործությամբ, դարբնագործությամբ, կապերտագործությամբ, կավագործությամբ, արծաթագործությամբ և այլ արհեստներով։ 13-րդ դարում արդեն արհեստագործության մեջ զբաղվում էին մասնագիտացված արհեստներով, ինչպիսիք էին կապերտագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը և այլն[241]։ Առանձնապես աչքի էր ընկնում հայկական ցփսի կոչվող գործվածքը և կապերտները։ Հայերեն կապերտ բառը նույնիսկ մուտք է գործել եվրոպական մի քանի լեզուների բառային ֆոնդում[242]։

Կիլիկիայի քաղաքային բնակչության, այդ թվում և արհեստավորների աճմանն ընդհանրապես՝ քաղաքների և քաղաքային կյանքի ու արհեստագործության զարգացմանը մասնավորապես նպաստում էին մի շարք գործոններ։ Առաջինը, ինչպես նշեցինք վերևում, դա աշխատանքի բաժանում էր։ Երբ մի կողմից արհեստը անջատվում էր գյուղատնտեսությունից, իսկ հետագայում արհեստները իրենց հերթին բաժանվում էին մասնագիտացված արհեստների։

Երկրորդ գլխավոր գործոնը, որը դեռևս սկսած 11-րդ դարից շարունակվում էր, դա արհեստավորների մասսայական գաղթն էր բուն Հայաստանի մեծ քաղաքներից։ Այդ երևույթը հատկապես ուժեղացավ 13-րդ դարում մոնղոլական արշավանքների շրջանում այն ժամանակ, երբ մոնղոլների աշխարհավեր արշավանքները ավերում էին Հայաստանի գյուղերն ու քաղաքները, այդ ժամանակաշրջանում բնականաբար քաղաքային բնակչության և աշխատավոր մասսաների համար առավել ապահով վայր էին հանդիսանում Կիլիկյան հայկական պետության բարգավաճ քաղաքնե-

240 *V. Langlois*, Essai, pp. 73—74։

241 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 27։

242 *Г. Микаелян*, История, стр. 179—180.

ները, որոնք զերծ մնացին մոնղոլական վերահաս վտանգից։ Այդ մասին ուղղակի մատնացույց է անում Կիրակոս Գանձակեցին. «Լցաւ և երկիրն (իմա Կիլիկիան) բազմութեամբ մարդկան անարուեստից և արուեստաւորաց, որք ժողովեցան յամենայն կողմանց փախուցեալք յաւերմանէ թաթարին, որք եկեալ էր յարևելից հիւսիսոյ տապալեցին զամենայն տիեզերս»[243]։

Այս վկայության մեջ օգտագործված արուեստավոր և անարուեստ բառերը, պետք է հասկանալ արհեստավոր և ոչ արհեստավորը, որը ինչպես մատնացույց է արել Հ. Մանանդյանը «հին հայերենում արհեստ և արվեստ բառերը իրարից չէին տարբերում, թե արհեստով և թե արվեստով պարապողներին անվանում էին արուեստաւոր»[244]։

Որ արուեստ և արուեստավոր բառերը Կիլիկիային վերաբերվող մատենագրության մեջ նշանակում էին արհեստ, արհեստավոր և արվեստավոր, դա երևում է Սմբատի Դատաստանագրքի հետևյալ հոդվածից. «Զամէն ազգ արուեստավոր պատուեցէք. բայց զդարբինն և զհիւսն և զքարգործն աւելի։ Եւ առաւել զգրագրերն և զբժշկերն՝ զի մարդս կու ստածեն»[245]։

Այդ բառերը նույն իմաստով են օգտագործված նաև ՃԿԹ (169) հոդվածում[246]։ Երրորդ գլխավոր գործոնը դա գյուղացիների՝ ճորտերի փախուստն էր դեպի քաղաքները, որը հատկապես ուժեղացավ 13-րդ դարում, երբ ուժեղանում է գյուղացիների ճորտացումն ու հողին ամրացումը։ «Ամբողջ միջնադարի ընթացքում,— գրում են Մարքսն ու Էնգելսը,— շարունակում էր ճորտերի փախուստը քաղաք»[247]։

Սմբատի Դատաստանագրքում նշված է, որ ճորտի փախուստի դեպքում ֆեոդալը չէր կարող վերադարձնել փախուստի վայրում ծնվող ճորտի որդիներին։ Վերջիններս ազատվում էին ճորտությունից[248]։ Հարց է ծագում՝ որտե՞ղ էին փախչում ճորտերը։ Իհարկե նրանց ձեռնտու էր փախչել քաղաքները, որտեղ ճորտությունից զերծ կմնային նոր վայրում ծնված որդիները։ Անշուշտ

243 Գանձակեցի, էջ 190։

244 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 227։

245 Դատաստանագիրք, էջ 14։

246 Դատաստանագիրք, էջ 146։ Արուեստաւորը, արհեստավոր իմաստով է օգտագործել նաև Գանձակեցին, էջ 190։

247 *К. Маркс* и *Ф. Энгельс*, Соч., т. IV, стр. 41.

248 Դատաստանագիրք, էջ 132։

հնարավոր էր, որ նրանք փախչեին մի ուրիշ ֆեոդալի կալվածքը, սակայն այստեղ կարող էր նրանց սպառնալ նորից ճորտացվելու վախը։ Թեև այս դեպքում էլ ըստ երևույթին նրանք ազատվում էին ճորտությունից, քանի որ հին տերը չէր կարող փախչող ճորտին ետ վերադարձնել, եթե նոր վայրում նոր ֆեոդալը նրան ենթարկեր ճորտացման։ Այս դեպքում այլևս իմաստ չէր ունենա Սմբատի Դատաստանագրքի մեջ հայտնի հոդվածը՝ փախչող ճորտին ետ վերադարձնելու մասին։ Ուստի շատ հավանական է, որ նրանք փախչեին քաղաքները, որտեղ քաղաքացիները վայելում էին արտոնություններ։ Անշուշտ, նրանց մի մասը դառնում էին արհեստավորներ, իսկ մեծ մասը՝ սեպագործ և վարձու աշխատանքով ապրող աշխատավոր քաղաքացիներ։

Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում քաղաքային բնակչությունը, հատկապես արհեստավորներն ու առևտրականները ավելի արտոնյալ վիճակ են ունեցել և ավելի բարձր են դասվել, քան գյուղացիները, որովհետև նրանք անձնապես ազատ են եղել և ունեցել են իրենց արտադրողական միջոցները[249]։ Մենք նույնը նկատում ենք Կիլիկիայում, որտեղ արհեստավորները ավելի բարձր պատվի են արժանացել, քան գյուղացիները։ Սմբատի Դատաստանագրքում այդ մասին գրված է. «Զամեն ազգ արուեստաւոր պատուեցէք, բայց զդարբինն և զհիւսն ու զքարգործն աւելի»[250]։ Թեև այստեղ Սմբատը չի նշում, ինչպես այդ անում են Մովսես Խորենացին և Մխիթար Գոշը, թե քաղաքացիները ո՞ր խավից ավելի պետք է պատվվեն[251], կամ թե ով պետք է պատվի նրանց[252]։ Սակայն, հասկանալի է, որ այստեղ խոսքը վերաբերում է քաղաքացիներից՝ իրավական և տնտեսական տեսակետից ցածր աստիճանում կանգնած գյուղացիական խավերին։ Այդ կարելի է եզրակացնել նաև այն բանից, որ հոդվածի շարունակությունում Սմբատը նույն պատվին է արժանացնում բժիշկներին, ծառայողներին, վարդապետներին և դատավորներին[253]։

Աղբյուրները վկայում են նաև, որ քաղաքում ապրող քաղաքացիները կարող էին ազատ կերպով զբաղվել առևտրով[254], շարժվել տեղից տեղ, մասնակցել եկեղեցական ու կրոնական հարցերի լուծմանը[255]։ Նույնիսկ Սսի և մեծ քաղաքների աշքի ընկնող քաղաքացիները, առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները, մասնակցել են պետության առաջ ծառացած քաղաքական հարցերի լուծմանը։ Աղբյուրները վկայակոչում են քաղաքի «փոքր մարդկանց» կատարած դերի մասին՝ որպես թագավորի՝ կենտրոնական իշխանության հենարանի, մասնակցել են կենտրոնախույս ֆեոդալների՝ ապստամբությունների ճնշմանը։ Այդպիսի մի դեպքի մասին նշում է Ղ. Ալիշանը, երբ 1329 թ. Լևոն Ե-ն (1321—1341) սպանում է մի շարք իշխանների, որոնց մասին բամբասել են քաղաքի «փոքր մարդիկ», ասելով, թե նրանք «յետ մահուան Օշին թագաւորին շատ բերդեր ապրանք առին, որ չէր իւրացեալ սահմանով ապրանք, և այլ շատ բան ասացին փոքր մարդիկն վասն նոցա, ինչվի սպանել տվին, որ ճշմարիտն Աստուած գիտէ»[256]։

Ղ. Ալիշանը «փոքր մարդկանց» համեմատում է ֆրանկ քաղաքի բուրճեսների՝ ընտրյալների հետ։ Վերջիններս նստում էին ատորին կամ փոքր ատեանում քննում և սահմանում էին քաղաքին վերաբերող գործերը[257]։

Հատկապես աճել էր քաղաքային բնակչության դերը Կիլիկիայի թագավորության վերջին շրջանում։ Քաղաքացիներից առավել նշանավորները «հարկևոր տանուտերերը»[258] (վերջիններս դասվում էին եպիսկոպոսներից և իշխաններից հետո հաջորդող դասում) մասնակցում էին Արքունի դիվանի կամ իշխանական խորհրդի նիստերին և նույնիսկ որպես Կիլիկիայի պետության ներկայացնող դիվանագետ պատգամավորներ մասնակցում էին օտար պետությունների հետ վարվող քաղաքական, դիվանագիտական բանակցություններին, օրինակ՝ Կիպրոսի թագավորության հետ՝ 1373 թվին. «Եւ իսկ և իսկ միաձայն խորհրդով,— գրում է Հովհան Դարդելը,— պատգամաւորս արձակեսցին, ասպետ մի որ կոչէր սեպուհ Լևոն Համուսացի և ընդ նմա այս եր-

249 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները 9—13-րդ դարերում, էջ 312—313։

250 Դատաստանագիրք, էջ 14։

251 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, էջ 318։

252 Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 117—118։

253 Դատաստանագիրք, էջ 14։

254 Նույն տեղում, էջ 126—128։

255 Նույն տեղում, էջ 29։

256 Սիսուան, էջ 260—261, 481։

257 Նույն տեղում, էջ 480—481։

258 Դատաստանագիրք, էջ 29։

կուսս ի քաղամեն Սսս և տանուտէր զոմն ի Պրեստրէ (ընդգծումը մերն է— Ս. Բ.) առ երիտասարդ արքայն Պետրոս...»[259]։

Արհեստավորների դերի բարձրացման, նրանց արտոնությունների և պատվի արժանանալու մասին է խոսում նաև այն փաստը, որ Կիլիկիայի Թորոս Գունդստաբլի և Այասի վենետիկյան կոնսուլի միջև կնքված ակտերի և պայմանագրերի տակ ստորագրել են Այասի արհեստավոր քաղաքացիները, որոնք պայմանագրերում հանդես են գալիս ըստ իրենց զբաղմունքի կամ արհեստների[260]։

Բնական է, որ քաղաք փախչող գյուղացիներից բոլորին չէր հաջողվում դառնալ արհեստավոր։ Նրանց մեծ մասը մտնում էին ամեն տեսակի սև աշխատանք կատարող «խառնիճաղանճ մարդկանց»[261], «սևագործ ամբոխի»[262], կամ միջնադարյան քաղաքների «պլեբեյների»[263] շարքերը։

13-րդ դարում Կիլիկիայի արհեստագործության համար բնորոշ է դառնում վարձու աշխատանքի կիրառումը։ Սա հետևանք էր այն բանի, որ արհեստագործության արտադրության լայնացմանը զուգընթաց, արհեստավորը աստիճանաբար վարժվում էր մի որևէ տեսակի արտադրանքի՝ և հաճախ արտադրանքի առանձին մասի պատրաստման գործին, իսկ դա պահանջում էր էլ ավելի շատ աշխատող ձեռքեր։ Այդ պատճառով արհեստագործության և մասամբ էլ գյուղատնտեսության առանձին ճյուղերում, օրինակ՝ այգեգործության մեջ, սկսեց գործադրվել վարձու աշխատանքը։ Մյուս կողմից դա հետևանք էր այն բանի, որ գյուղերից հեռանալով, քաղաքներում հաստատվում էին ոչ միայն արհեստավորները (այդ թվում բուն Հայաստանից գաղթող արհեստ չունեցողները) այլև՝ ամեն տեսակի սև աշխատանք կատարելու պատրաստ բավականաչափ մի ստվար խավ։ Քաղաքները չվող սևագործների բազմությունը օրվա իր ապրուստը վաստակում էր գերազանցապես օրավարձով կատարվող զանազան պատահական աշխատանքների շնորհիվ։ «Օրավարձով աշխատողների կարիքը քաղաքներում,— գրում են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը,— ստեղծեց սեվագործների ամբոխը»[264]։

Սմբատի Դատաստանագրքում հիշատակված են մի քանի տեսակ վարձով աշխատողներ։ Այսպես, «ապա թէ մշակ կենայ կամ այլ ցեղ վարձվոր կամ հոռքվոր, նա չտան իր՝ քանց իրք մի բաժին մասնաւորեն»[265]։ Մշակից հետո, երկրորդ կատեգորիային է պատկանում վարձվոր՝ վարձով աշխատողը, որը վերևի հոդվածում հիշատակվում է «այլ ցեղ վարձվոր կամ հոռքվոր», այսինքն վարձով կամ հոռքով (աշխատավարձով — ռոճիկով) աշխատող։ Այստեղ ընդգծված է այն հանգամանքը, որ վարձվորը կամ հոռքվորը գյուղատնտեսության մեջ վարձով աշխատող մշակներ չեն։ Սմբատի Դատաստանագրքում հանդես են գալիս երկու խմբի վարձով աշխատողներ՝ վարձկաններ և վարձվողներ։ Առաջինը դա այն վարձկանն է, որ զուրկ է արտադրական գործիքներից։ Այսպես. «Եւ վարձկան, որ յունէ տիրոջն ի բանն սարված կոտրէ, չտայ վճար. ապա թէ իր կամաւք վնասէ՝ նա վճարէ։ Եւ թէ զտիրոջն յիւր բանն կոտրէ՝ նա չտայ վճար։ Բայց թէ առանց տիրոջն հրամանաց առնու և վնասէ նա վճարէ»[266]։ Ինչպես նկատելի է, վարձկանը աշխատում է տիրոջ գործիքներով։ Նույն հոդվածում խոսվում է նաև այն վարձկանի մասին, որը աշխատում է և տիրոջ գործը կատարում է իր սեփական գործիքներով։ Այսպես, «բայց այն վարձվորն, որ իր սարվծովն գայ՝ վարձ առնու և բանի՝ նա չտայ վճար ունէ տէրն»[267]։

Վարձով աշխատողների երրորդ տիպին էր պատկանում այն արհեստավորը, որը որևէ աշխատանք կատարում էր պատահական պատվիրատուի պատվերով և հում նյութով։ Այսպես, ՃԿԹ (169) հոդվածում կարդում ենք. «Արուեստաւոր, որ զումեք վարձ առնու, որ իր իրք շինէ կամ կապլով բան այնէ, ու չայնէ զբանն հանց զէդ, որ պոմանն լինայ, ու չհանեցնէ զինք, կամ դարձնէ զվարձն և զնիւթն զոր առել լինայ ի լման և նա զիր վարձն ըստ արժանոյն դատաւորին տեսովն առնու»[268]։ Սա թերևս ցույց չի տալիս, որ արհեստավորը արդեն սկսում է կախման մեջ ընկնել առևտրական կապիտալից։ Սակայն, դժբախտաբար, մեր ձեռքի տակ չկան հա-

259 Դարդել, էջ 69։

260 „Hist. de Chypre de Mas Latrie", T. II, p. 677.

261 Սիսուան, էջ 225։

262 К. Маркс, Соч., т. IV, стр. 42.

263 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմները Գերմանիայում, Երևան, 1940, էջ 39։

264 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 42.

265 Դատաստանագիրք, էջ 17։

266 Նույն տեղում, էջ 148։

267 Նույն տեղում։

268 Նույն տեղում, էջ 146։

մապատասխան նյութեր այդ հարցին որոշակի պատասխանելու համար։

Սկզբնաղբյուրներում քաղաքային բնակչության ցածր խավերը հիշատակվում են ռամիկ, ամբոխ, խառնիճաղանճ բազմություն տերմիններով։

Հ. Մանանդյանը իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ քննության առնելով հայ մատենագրության հարուստ նյութերը, գալիս է այն եզրակացության, որ գեղջուկ և շինական կոչվել են գյուղացիները, իսկ ռամիկ՝ առհասարակ անազատները, այսինքն գյուղացիներն ու քաղաքային բնակչությունը, բացի ազնվականներից և հոգևորականներից[269]։ Ռամիկը ստուգաբանված է նաև հասարակ, բարի մարդ[270], հասարակ ժողովուրդ, գյուղի կամ քաղաքի հասարակ մարդ, մարդկանց խումբ[271], հասարակ դասակարգի պատկանող մարդ և ժողովրդի բազմություն[272]։

Բացի վերևում նշված ընդհանուր հասկացողություններից, ռամիկը Կիլիկիային վերաբերող մատենագրության մեջ ունեցել է նաև կոնկրետ իմաստ և հիմնականում բնորոշել է քաղաքային բնակչության ստորին խավերը՝ պլեբեյները, որոնց շարքերը համալրում էին գյուղից քաղաք փախչող ճորտերով, հող ու այգի չունեցող օրավարձու աշխատող մարդկանցով, քաղաքում աշխատող վարձվորներով և հոռվորներով։ Ինչպես Ֆ. Էնգելսն է բնորոշում, պլեբեյների մեջ էին մտնում «քայքայված քաղաքացիները և քաղաքային բնակիչների այն մասսան, որ քաղաքացիության իրավունքներ չուներ, այն է՝ ենթավարպետներ, օրամշակներ և օրավարձով աշխատողներ»[273]։

Այսպես, 1173 թ. մի ոմն Ատոմ աբեղա, որը գրել է Ներսես Շնորհալու կենսագրությունը, «Պատմութիւն սուրբ հարանց» ժողովածուում, «Թուղթ ընդհանրականի» բովանդակության և նպատակի մասին գրում է. «Զեպիսկոպոսունս, զերիցունս, զվանականս, զիշխանս, զզինուորս, զքաղաքականս, զռամիկս և զամենեսեան ըստ իւրաքանչիւր կարգի խրատէր կանոնական սահմանադրութեամբ»[274]։ Ինչպես նկատելի է, ռամիկը հիշատակված է քաղաքական տերմինից հետո և ունեցել է հասարակ ժողովրդի, գյուղի և քաղաքի բնակչությանը՝ հասարակ մարդկանց բնորոշող իմաստ։ Նույն իմաստով է օգտագործված նաև Սմբատի տարեգրքի հետևյալ հատվածում. «Զի էր արքայն Լևոն այր իմաստուն և հանճարեղ, զուարթ տեսլեամբ, և առատ սրտիւ առհասարակ ի հեռաւորս և ի մերձաւորս ի մեծամեծս և ի փոքունս, ի վաներս և յեկեղեցիս, յիշխանս և յռամիկս»[275] (ընդգծումը մերն է—Ս. Բ.)։ Հետաքրքիր է, որ 1856 թ. Փարիզում հրատարակված «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն» երկում, ռամիկի փոխարեն գրված է «առ աղքատ և առ տկարս»[276]։ Ինչպես ասացինք, ռամիկը օգտագործված է նաև որպես քաղաքային բնակչության ցածր խավերը բնորոշող տերմին։ Ներքոհիշյալ վկայության մեջ ռամիկը սահմանազատվում է նրան հաջորդող գեղջուկ տերմինից։ Սամուել Անեցու պատմության շարունակողը 1216 թ. Լևոն Բ-ի կողմից կազմակերպված բանակի մասին գրում է. «Աստուածասէր թագաւորն մեր, ժողովեալ յամենայն քրիստոնեայս, որք ընդ իշխանութեամբ նորին էին, այլև զռամիկս քաղաքաց և գեղջկաց, իսկ և զկրաւնաւորս և զքահանայս գալ ի մի վայր աղաչել զԱստուած...»[277]։

Հետաքրքիր է, որ ռամիկ տերմինը մերթ հանդիպում է որպես ինքնուրույն բառ, ինչպես տեսանք նախորդ վկայության մեջ, իսկ մերթ՝ բազմություն, խառնիճաղանճ մարդիկ, ամբոխ, ժողովուրդ և գեղջուկ տերմինների հետ հավասար կամ նրանց հետ կողք կողքի։ Այսպես, 1296 թ. Սսում տեղի ունեցած Սմբատ թագավորի թագադրության մասնակցողների մասին մի ժամանակագիր գրում է. «ժողովեցան թագաւորաորդիքն և թագաւորազունքն և իշխանքն և միանգամայն աշխարհաժողով բազմութիւն ռամկաց և խառնիճաղանճ մարդկան ի հոյակապ մայրաքաղաքն Սիս ի տոնի մեծ Աստուածահայտնութեան»[278]։

Շատ հավանական է, որ վերոհիշյալ վկայության մեջ «բազմութիւն ռամկաց և խառնիճաղանճ մարդկան» արտահայտությունները իրար համազոր են և որ նրանց մեջ մտնում էին քաղաքի արհեստավորները, մանր առևտրականները, քաղաքային ցածր խավերը՝ սևագործներն ու օրավարձով աշխատողները։

---

269 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 148—212։

270 «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», էջ 709։

271 Հ. Աճառյան, Արմատական բառարան, էջ 1259—1261։

272 Ստ. Մալխասյան, Բացատրական բառարան, հ. 4, էջ 157։

273 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 39։

274 Գ. Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, էջ 423։

275 Տարեգիրք, էջ 247։

276 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», 1856, էջ 99։ Տարեգիրք, էջ 247։

277 «Հանդէս ամսօրեայ», 1954, էջ 68։

278 Միսուան, էջ 225։

Ինչպես հին և միջնադարյան Հայաստանում[279], այնպես էլ Կիլիկիայում ռամիկները վարել են զինվորական ծառայություն որպես հետևակային զորք, հատկապես այն ժամանակ, երբ Թշնամու վտանգը սպառնացել է Կիլիկիայի հայկական պետության բուն իսկ գոյությանը և այդ առթիվ կազմակերպվել են համաժողովրդական աշխարհաժողովներ և զորաժողովներ, այն դեպքում, երբ ամբողջ ժողովրդի մոբիլիզացումը անհրաժեշտություն էր դառնում դիմակալելու վերահաս վտանգը։ Այսպես, 1264 թ. Մարիի ճակատամարտի նախորդող տարիներին, Հեթում Թագավորը «զորաժողով արար զզօրս իւր և բազում ռամիկ հետևակօք արշաւեաց ի գաւառն Հալպայ»[280]։ Նույն տարում Հեթում Ա-ն արշավում է նաև Անթապի վրա, «ռամիկ հետևակօք»[281] կամ թե մի ուրիշ տեղ նշվում է «ռամկօք աշխարհաժողով արարեալ և գնացեալ եհաս մինչև ի տեղի ինչ որ կոչի դուռն Անդիոքոյ»[282]։

14-րդ դարի սկզբին Կիլիկիայի պետական բանակում կռվող ռամիկ հետևակի կազմի և որակի մասին կա հետաքրքիր մի վկայություն, որտեղ անմիջապես մատնացույց է արված հետևակի արհեստավորական կազմը։ Հեթում Բ-ի բանակում, որը օգնում էր մոնղոլներին սիրիական վերջին (1299) արշավանքի ժամանակ, Սմբատի Ժամանակագրության շարունակողը գրում է. «...դարձեալ Թագաւորն յաշխարհ իւր և պատրաստէր զինքն փարթամ և ընտիր զօրօք և հեծողաց ձիաւորաց մեղեխաւոր ԴՌ (4000) հետևակաց Ռ (1000) շարխողաց ԴՌ (4000) և այլոց արուեստաւորաց բազում վասն բերդիցն առնելոյ»[283]։

Այսպիսով, ռամիկ տերմինը Կիլիկյան հայ մատենագրության մեջ օգտագործվել է որպես քաղաքային և գյուղական բնակչության անազատների դասին պատկանող ցածր խավերը բնորոշող տերմին։ Այդ բառը բնորոշել է նաև քաղաքային բնակչության ցածր խավերը՝ օրավարձով աշխատող, սեպագործ ամբոխ և վարձով աշխատող արհեստավորներ։

Անշուշտ, վերոհիշյալ խավերով չէր սահմանափակվում Կիլիկիայի քաղաքների բնակչության դասային կազմը։ 14-րդ դարում, արտաքին և տարանցիկ առևտրի աշխուժացման և ընդլայնման շրջանում, Կիլիկիայում սաղմնավորվում էր առևտրական կապիտալի նախակարապետների մի դաս՝ մեծատուններ, մեծահարուստներ[284]՝ հողատեր և փողատեր պարոն տիտղոսը կրող մի դաս։

Խոշոր առևտրականները, մեծատուններն ու մեծահարուստ պարոնները նման էին նույն դարաշրջանում բուն Հայաստանում հանդես եկած և կազմավորված քաղաքային պատրիցատի անթագ ու անպսակ իշխաններ՝ Հոնենցին, Ռամեկին, Սահմադինին, Սահիբ Դիվանին և մյուսներին, որոնք հանդիսանում էին առևտրական կապիտալիստների նախակարապետները։ Առևտրականների այս դասը անշուշտ իր հետագա զարգացման ընթացքում վերափոխելու էր Կիլիկիայի ֆեոդալական կարգերի հետագա ընթացքը, և որը սակայն Կիլիկիայի հորիզոնից չքացավ, երբ 1375 թ. քաղաքական ասպարեզից անհետացավ նրան ծնունդ տվող Կիլիկյան հայկական պետությունն ու ֆեոդալական հասարակությունը։

* * *

Շնորհիվ Կիլիկիայի բնական հարստությունների, աշխարհագրական դիրքի, բնակչության խտության և նախորդ շրջանում արտադրողական ուժերի զարգացմանը՝ գյուղատնտեսությունն ու արհեստագործությունը վերելք ապրեցին, երկրում սկսեց զարգանալ ներքին, արտաքին ու տարանցիկ առևտուրը։ Դեպի Կիլիկիայի նավահանգիստներն էին գալիս բազմաթիվ առևտրական քարավաններ, Ասիայի մայր ցամաքի խորքերից, իսկ Արևմուտքից՝ առևտրական նավեր։ Ինչպես նավահանգիստներում, այնպես էլ լեռնանցքներում հաստատված և տեղադրված էին մաքսատներ ու բաժներ։ Վերոհիշյալ բոլոր մաքսային և տուրքային գործառնությունները կարգավորելու համար ստեղծված էր երկրի ֆինանսները ղեկավարող մի գործակալություն՝ պրոքսիմոս գործակալի գլխավորությամբ։ Այս գործակալության ստեղծումը նոր տնտեսական պայմանների ու նոր միջավայրի արգասիքն էր։ Վերջինիս ենթարկվում էին նաև մաքսատների պաշտոնյաները՝ հարկահավաքներն ու ներքին շուկաների վերակացուները։

Մաքսերից ստացվող եկամուտը, հիմնականում գլխավոր աղբյուրներից մեկն էր, որով պահվում էին պետությունը և բանակը։ Թե ինչ մեծ հարստություն էր կուտակվում արքունական գանձարանում, այդ մասին է վկայում այն փաստը, որ Եգիպտոսի մամ-

279 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, էջ 272։

280 Տարեգիրք, էջ 243։

281 Նույն տեղում։

282 Նույն տեղում, էջ 245։

283 Doc. arm., T. I, p. 661.

284 Սիսուան, էջ 542—543։

լուկ սուլթան Պնդուխտարը 1266 թ. կատարած արշավանքի ժամանակ, երբ գրավում է Սիս մայրաքաղաքը, բռնագրավվում է արքունի գանձարանում պահ տրված մեծաքանակ ոսկին։ Այդ մասին պատմիչը գրում է. «...և գտանէ (իմա սուլթան Պնդուխտարը) զտանն գետնափոր գանձոյն, և առնու յոյժ բազում զոր ի միում ամանի լինել ասէին վեց հարիւր հազար կարմիր» (ընդգծումը մերն է—Ս. Բ)[285]։

Կիլիկիայի թագավորական կամ արքունի գանձարանի և եկամուտների չափի մասին վկայում է նաև այն փաստը, որ Կիլիկիան, սկսած 13-րդ դարի վերջից, (հատկապես Այաս նավահանգստի Եգիպտոսի կողմից վերջնական գրավումից հետո 1337 թ. —Ս. Բ.), Եգիպտոսին վճարում էր տարեկան չորս միլիոն ռուբլի հարկ։

Կիլիկիայում ներքին և արտաքին առևտրի զարգացմանը նպաստում էին մի շարք հանգամանքներ։ Նախ Կիլիկյան հայկական թագավորության տնտեսական կյանքի ընդհանուր վերելքը, և ապա քաղաքական այն վիճակը, որ ստեղծվեց Մերձավոր Արևելքում և հատկապես Միջերկրական ծովի հարավ-արևելյան ափերին ընկած երկրներում։

Ինչպես հայտնի է Միջերկրական ծովի արևելյան ափերին 12-րդ դարի սկզբին ստեղծված խաչակիր իշխանությունները 13-րդ դարի II կեսին նվաճվեցին Եգիպտոսի մամլուկների կողմից։ Վերջին հանգամանքը նպաստավոր պայմաններ ստեղծեց Կիլիկիայի հայկական պետության արտաքին և տարանցիկ առևտրի զարգացման համար։ Հատկապես 1258 թ. մոնղոլների կողմից Բաղդադի գրավումից հետո Ասիայի և Եվրոպայի միջև կատարվող առևտրական ուղիները անցնում էին Կիլիկիայի տերիտորիայով։

Կիլիկիայում ներքին և արտաքին առևտրի զարգացմանը նպաստեց նաև Կիլիկիայի թագավորների ձեռնարկումները։ Սկսած Լևոն Բ-ից Կիլիկիայի թագավորները օտար առևտրականներին ու առևտրական ընկերություններին շնորհում էին առևտրական արտոնություններ։ Այս մասին են վկայում այն առևտրական արտոնագրերն ու շնորհագրերը, որոնք տրվել են Կիլիկիայի հայ թագավորների կողմից՝ Ջենովայի, Վենետիկի, Մոմպելիեի, Սիցիլիայի, Ֆլորենցիայի, Մարսելի և այլ երկրների ու քաղաքների վաճառականներին՝ 1201, 1215, 1245, 1261, 1288, 1314, 1321, 1335 և այլ թվականներին։ Բացի առևտրական շնորհագրերից, վերոհիշյալ քաղաքների վաճառականները իրավունք էին ձեռք բերել Կիլիկիայի քաղաքներում ունենալու իրենց թաղամասերը, դատարանները, եկեղեցին և նույնիսկ զբաղվելու արհեստագործությամբ։ Այդ հանգամանքը մեծապես նպաստել է Կիլիկիայի առևտրական կապերի զարգացմանը Արևմուտքի և Արևելքի հետ։

Կիլիկիայի ներքին և արտաքին առևտրի, դրամների, չափի և կշռի մասին խիստ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Ֆլորենցիայի առևտրական ընկերության՝ Կիպրոսի և Մերձավոր Արևելքի ներկայացուցիչ Ֆրանցիսկո Պեկոլոտին[286], վենետիկյան հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն[287], 14-րդ դարի վենետիկյան մատենագիր Մ. Սանուտոն[288]։ Այս հեղինակները իրենց աշխատություններում ընդգծել են Կիլիկիայի նշանակությունը Ասիայի և Եվրոպայի միջև կատարված միջազգային տրանզիտ առևտրի ասպարեզում, հատկապես Այաս նավահանգստի նշանակությունը և Այաս-Թավրիզ առևտրական ուղու դերն ու կարևորությունը։

Կիլիկյան պետությունը մեծ հոգս էր տանում Այաս և Կոռիկոս այցելող օտար առևտրական նավերի ու կարավանների անձնակազմի և ապրանքների ապահովության համար։

Բացի Այասից ու Կոռիկոսից կարևոր նավահանգիստներ էին հանդիսանում՝ Կիպրիումը[289], Զաֆրան[290], այժմյան Մերսին[291], Մալոն (հին Մալուսը), Կանամելլան[292], Ալեքսանդրետը[293] և Բոնելին[294]։

Վերոհիշյալ նավահանգիստներում հիմնվել էին մաքսային վարչության տներ, որոնք աղբյուրներում կոչվում էին բաժտուն կամ բայժատուն[295]։ Posidum կամ possidunum.

Կիլիկիայի թագավորին և պրոքսիմոսին այդ նավահանգիստ-

285 Վարդանայ Բարձրբերդցւոյ՝ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 162։

286 *Pegolotti*, La pratica della mercatura.

287 *Марко Поло*, Путешествие, пер. Минаева.

288 *Sanutus M.* Liber secretorum fidellium cruris. Hannoviae, 1611.

289 Նույն տեղում, LIV, II, partie, IV ch. 26, p. 99.

290 Նույն տեղում։

291 Նույն տեղում։

292 Նույն տեղում։

293 *V. Langlois*, Le trésor, p. 107.

294 *V. Langlois*, Essai, p. 78.

295 *V. Langlois*, Le trésor, p. 154.

ներում ներկայացնում էր մի պաշտոնյա, որը կոչվում էր բաժտան կապիտան[296]։ Նա էր կապ հաստատում, պայմանագրեր կընքում, ակտեր կազմում օտար երկրների առևտրականների հետ և պրոքսիմոսի կողմից բանակցություններ վարում օտար առևտրականների ներկայացուցիչների՝ բայլերի և հյուպատոսների հետ։ Այս պաշտոնյան ուղղակի ենթարկվում էր պրոքսիմոսին, որը հաճախ աղբյուրներում հիշատակվում է որպես մինապան[297], վերջինիս վրա էր դրված նաև նավահանգիստների ընդհանուր հսկողությունը։ Օտար աղբյուրներում մինապանը հիշատակված է միրապան[298] miraban։ Մեր կարծիքով այս բառը կազմված է ոչ թե միրե, այլ արաբական մինե, որ նշանակում է նավահանգիստ և հայկական պան, սեփականատեր կամ պահակ բառից։

Բաժտան գլխավորը ունեցել է մի օգնական, որը աղբյուրներում կոչվում է «արքայական բաժտան գրագիր»[299] (regiae duanae secretorum protonatarius)։

Մինապանին էին ենթարկվում նաև նավահանգստի հսկիչները և առաքողները, որոնք աղբյուրներում կոչվում են Scribae[300], այսինքն գրագիրներ։

Առևտրական շնորհագրերում և հրովարտակներում օտար վաճառականներին և օրդեններին շնորհված արտոնագրերի կատարումը և հսկումը հանձնարարվում էր պրոքսիմոսին[301]։ Այստեղից էլ հեշտ է հետևցնել, որ պրոքսիմոսն էլ գլխավորում էր ոչ միայն ներքին և արտաքին առևտրի ընդհանուր գործունեությունների կարգավորումը, այլև դրանց մեջ ընդգրկող հայ և օտար առևտրականներից գանձվող մաքսերի, հարկերի և տուրքերի գանձումն ու կարգավորումը։

Հայկական մատենագրական աղբյուրները համարյա ոչ մի տեղեկություն չեն հաղորդում ոչ միայն պրոքսիմոսի և նրան ենթարկվող պաշտոնյաների մասին, այլև՝ մաքսերի, հարկերի և տուրքերի մասին։ Ինչպես հայտնի է, օտար վաճառականները շնորհագրեր էին ստանում ազատվելու այն հարկերից ու մաքսերից, որոնք առհասարակ գանձվում էին օտար առևտրականներից պետական գանձարանի օգտին, հետևաբար այդ կարգի մաքսերի և տուրքերի մասին հիշատակություններ կան միայն վերոհիշյալ փաստաթղթերում։ Մեզ հաջողվեց վերականգնել մի շարք հարկերի և տուրքերի տեսակները, որոնք, ինչպես նկատեցինք, չեն նշվում հայկական աղբյուրներում, հետևաբար մեզ չհաջողվեց գտնել այդ տերմիններին համապատասխանող հայերեն տերմինները։

Նախքան այդ հարկերի և մաքսերի տեսակների մասին խոսելը, պետք է ընդգծել այն հանգամանքը, որ օտար առևտրականներից գանձվող հարկի հիմքում ընկած է փոխադրվող կամ վաճառվող ապրանքներից որոշ տոկոսների գանձումը, այսինքն տոկոսային հարկը։ Օտար առևտրականները ընդհանրապես վճարում էին 4 տոկոս մաքսային տուրք։ Սակայն, սկսած Լևոն Բ-ի 1201 թ. ջենովացիներին և վենետիկցիներին շնորհված արտոնագրերից, նրանք վճարում էին տուրքերը արտոնյալ պայմաններով՝ մեկ տոկոսի չափով[302]։ Հետագայում Ֆլորենցիայի Բարտի առևտրական ընկերությունը բոլորովին ազատվում է հարկերից[303]։ Իսկ Կատալոնի, Բիզեի վաճառականները վճարում էին երկու տոկոս[304]։

Բացի տոկոսային հաստատուն մաքսային տուրքից, գոյություն է ունեցել նաև մասնակի՝ հարաբերական հարկեր, որոնք գանձվում էին որոշ ապրանքներից, ինչպիսիք էին՝ գինի, յուղ, անասուններ, երկաթ, ատաղձ, պղինձ, բամբակ, կտորեղեն և այլն։ Այս հարկերի մասին նշված են 1288 թ. ջենովացիների ստացած շնորհագրում[305] և 1333 թ. վենետիկցիներին շնորհված արտոնագրում[306]։ Սա ցույց է տալիս, որ մաքսից ազատվելու շնորհագիրը կամ որոշ արտոնություններ ստանալը դեռևս չէր նշանակում ազատվել բոլոր տեսակի հարկերից և տուրքերից։

Այս հարկերի և տուրքերի մասին ներքևում բերում ենք որոշ տվյալներ, որոնք մեզ հաջողվել է գտնել շնորհագրերում։

ա) Ոսկուց, արծաթից և թանկագին քարերից գանձված հարկ[307]։

բ) Ցենզարիա «Censaria», միջնորդության հարկ[308]։

---

296 Նույն տեղում Pegouran capitanus possidone de Ayacio.

297 Documents arm., T. I, Int. XCI.

298 Նույն տեղում։

299 Նույն տեղում։

300 *V. Langlois*, Le trésor, p. 155.

301 *Dulaurier*, Recherches, p. 190.

302 *V. Langlois*, Essai, p. 77—80. Le trésor, pp. 126, 154—157.

303 *Pegolotti*, La pratica de la mercatura, p. 43.

304 Նույն տեղում, էջ 44։

305 *V. Langlois*, Le trésor, pp. 154—162.

306 Նույն տեղում, էջ 192—193։

357 *V. Langlois*, Le trésor, pp. 154—157.

308 Նույն տեղում, էջ 155։

Այս տուրքը նախատեսվում էր վճարել այն ապրանքներից, որոնք վաճառվում էին Կիլիկիայի շուկաներում, տոնավաճառներում, կրպակներում և խանութներում։ Այս հարկը գանձվում էր (censarium) ցենզարիումի անվան տակ։ 1288 թ. ջենովացիներին շնորհված արտոնագրում censarius տերմինը հայերեն տերմինով նշված է սումար և սումարշեմ, որը censar և censarius տերմինների հայերեն աղավաղումն է։ Ըստ Էդուարդ Դյուլորիեի սումարը կամ սումարշեքը «censaria» լատիներեն բառի աղավաղումն է, սանսարիան գործ էր ածվում միջանադարյան Եվրոպայում, հարկ էր ավատատուի կողմից վճարված պետական գանձարանին[309]։ Մեր կարծիքով սումար և սումարշեկ հայերեն բառերը ոչ թե եվրոպական censaria բառի աղավաղումն է, այլև սումար արաբերեն միջնորդ բառի կամ սումարշեք արաբերեն կամ թուրքերեն բառի հայերեն աղավաղումն է։ Որ սումարը կամ «Censaria»-ն տուրք էր ապրանքներից, այդ երևում է Լևոն Ե-ի կողմից Վենետիկի դուժ Բարդուղիմեոս Գրանդենդիոյին 1241 թ. հաստատված նամակից[310]։ Այդ երևում է նաև 1288 թ. արտոնագրի հայերեն տեքստից, որտեղ ասված է. «Յառաջ որ մեր քաղաքնոյն՝ որ ի մեր ձեռք կան. նայ բաժերն ու իրաւներն լինի որպէս Այասում է, զայդ էլ ի յայն տեղեսնոյն որ ի սիկեղն գրած կամ և զինչ իսկի իրք ծախեն, ի շուկայն սամսրով ու տունն թէ ծախեն, նայ քանց զամրշէկն այլ իրք չտան, և գինի թէ պլոտթէով (lotte tonneau — տակառ) ծախեն ու թե բարչով (փառչ) նոյնպէս և ձէթ թէ պլոտթէով ու թէ ճառայով (արաբերեն ֆրանսերեն jarre — կարաս), որ անգիշեռ (անկշիռ) ծախվի, նա իրաւունք չտան քան սումարշեքն ի պրթէն նորդրամ մէկ»[311]։

գ) Պասսագիում «Passagium» անցքի հարկ և տուրք գանձվում էր կիրճերի, լեռնանցքների, կամուրջների կամ լաստից «Passagium barcaram» գետերի վրայով կատարվող փոխադրական միջոցից[312]։ 1288 թ. ջենովացիների օգտին շնորհված արտոնագրում այդ հարկը սահմանված է կես դրախմի յուրաքանչյուր անասնարեռի համար[313]։

դ) Արբորագիուս «Arboragius» կամ Անքորագիում «Anco-

[309] Documents arm., T. I, p. 748.
[310] Նույն տեղում։
[311] Documents arm., T. I, p. 749.
[312] *V. Langlois*, Le trésor, p. 126.
[313] Documents arm., T. I, p. 750.

ragium»[314]։ Արմատը «ancre» բառն է, որ նշանակում է խարիսխ։ Հետևաբար այս հարկը գանձվելիս է եղել նավահանգիստներում խարսխվող նավերից որպես խարսխակայանի, նավահանգստային հարկ։ Չափը երկու դիրհեմ (dirhems) էր յուրաքանչյուր նավի կայմի համար, որը հատկապես գանձվել է գետաբերաններում գտնվող նավահանգիստներում[315]։

ե) Տաբուլագիում «Tabulagium» կամ Տաբլագիում «Tablagium» գանձվում էր շուկայում վաճառքի սեղան ունենալու համար[316]։ 1214 թ. հյուրընկալներին վաճառված տերիտորիայի վաճառքի գործարքում՝ այս հարկի գանձումը թողնվում էր հյուրընկալներին[317]։

զ) Տրանզիտուս «Transitus»[318]։ Գանձվում էր ֆեոդալի կողմից իր տերիտորիայի վրայով փոխադրվող ապրանքների կամ թե թագավորի կողմից՝ ամբողջ Կիլիկիայի տերիտորիայի վրայով տրանզիտ փոխադրվող ապրանքների համար։ Ինչպես լատիներեն տերմինը ցույց է տալիս «transitas»-ը նշանակում է տարանցիկ, տրանզիտ։ Վենետիկցիները և ջենովացիները ազատվել էին այս հարկից, որը արտոնագրերում նշված է հատուկ տերմինով՝ «leber tpansitus»[319] (ապահարկ, ազատ հարկից—Ս. Բ.)[320]։

է) Էքզաքցիո «Exactio»[321] գանձվում էր օտար պանդոկապետներից և գինեվաճառներից, որը կազմում էր մեկ թագուին։ Վճարվում էր շաբաթը մեկ անգամ։ Պետք է նշել, որ «exactio»-ն պատահական հարկ էր, որը գանձվում էր ֆեոդալի կամ թագավորի պաշտոնյայի կողմից[322]։

ը) Ցերկա «Tzerca»...[323] գանձվում էր թագավորական ոստիկանության կողմից՝ գողացված ապրանքը հայտնաբերելու և տիրոջը վերադարձնելու համար։ Սա վերաբերում էր օտար քաղաքացիներին։ Այս տուրքի չափը կազմում էր գողացված ապրանքի

[314] Նույն տեղում։
[315] *V. Langlois*, Le trésor, p. 154, Essai, p. 50.
[316] *V. Langlois*, Le trésor, p. 108, Essai, p. 50.
[317] Documents arm., T. I, p. XCIX.
[318] *V. Langlois*, Essai, p. 50.
[319] *V. Langlois*, Le trésor, p. 108.
[320] Նույն տեղում, էջ 50։
[321] *V. Langlois*, Le trésor, p. 50. *V. Langlois*, Essai, p. 40.
[322] Նույն տեղում։
[323] Նույն տեղում, էջ 50։

մեկ երրորդ մասը, որը մուծվում էր արքունի գանձարան՝ գողացված ապրանքի տիրոջ կողմից։

Թ) Դրիկտուրա մարիս է տերրե «Drictura maris et terrae»[324] մաքսային տուրք էր։ Գանձվում էր ծովի կամ ցամաքի վրա փոխադրվող ապրանքներից։

Հրովարտակներում և արտոնագրերում հիշատակված են մի շարք տուրքեր և հարկեր, որոնք անմիջապես չեն վերաբերում որևէ մի որոշակի ապրանքի կամ առևտրական գործարքի համար վճարված մաքսի։ Դրանք այն հարկերն ու տուրքերն են, որոնք գանձվում էին նավահանգիստներ և քաղաքներ այցելող վաճառականների անձնական իրերի՝ արկղներից և ճամպրուկներից[325], մուշտակագործներից, պղնձի առևտրով զբաղվողներից, օտար կտավեղենի վաճառականներից կամ պարտքի դիմաց բանտարկվողներից, որոնք բանտից դուրս էին գալիս երաշխավորությամբ[326]։

Ինչպես ասացինք վերևում, հայկական աղբյուրները համարյա ոչինչ չեն հաղորդում վերոհիշյալ հարկերի և տուրքերի մասին։ Սմբատի Դատաստանագրքի ՃԽԳ (143) հոդվածում, որը վերնագրված է «Վասն սահմանելոյ զկարգ ի բազրնոյն» հիշատակվում են կապալ և բաժ տերմինները, որոնք գանձվում էին շուկայում վաճառվող ապրանքներից. «Եւ ուր վաճառ լինի՝ նա զկապալն առնուլ պատեհ է, և զբաժն. բայց ուր ծախ չլինի՝ նա չէ իրաւունք բաժ առնուլ»[327]։ Շատ հավանական է, որ սա համապատասխանում է վերևում հիշատակված tabulagium հարկին, որը գանձվում էր շուկայում տեղադրված վաճառասեղանից։

«Transitus» հարկի նման է այն տուրքը, որ Սմբատը նախատեսում է այն ապրանքի համար, որը փոխադրվում է ֆեոդալի կալվածքով, ընդ որում այդ փոխադրման ապահովությունը ու առևտրականների կյանքի պահպանությունը և հսկողությունը կատարում էր սենյորը։ Այդ հարկը նույնպես մուծվում էր արքունի գանձարան համաձայն արքունական օրենքների։ Այսպես, «...քաւել թէ ահուտ ճանապահ լինի, որ վասն պահելոյն իւրեանց իրաւունք առնուն ի վաճառականերոյն ի ճանապահն, թէ ոչ նա կապլինն թագաւորաց տրվաւքն պատեհ է որ երթայ»[328]։

Հայկական աղբյուրներում հարկերը և տուրքերը հիշատակված են հետևյալ տերմիններով, որոնք տուրքերի, մաքսերի ու հարկերի ընդհանուր իմաստ ունեն։ Դրանք են. բաժ և իրաւ, կապալ, իրաւունք, հարկ, սակ և հաս։ Սակը և հասը իմաստավորում են արքունի գանձարան մտնող բոլոր հարկերն ու տուրքերը։ Այս երևում է հետևյալ վկայությունից։ Լևոն Զ-ը, երբ անցնում է իշխանության գլուխ, բողոքում է և տրտնջում արքունական գանձարանի աղքատությունից, ասելով. «ոչ զանխուլ ինչ է ձէնջ զի ամենայն սակք և հասկք մտից արքունական քակեալ կան ի ձեռս թշնամեաց և ոչ գոյ և ոչ մի հասոյթ, յորմէ լիցի լցուցանել զծախս երկրին և պաշտպանել նման, առ որ պետք են բաղում արծաթոյ...»[329]։

Բաժի, որպես հարկի և տուրքի տեսակի, և նրա հետագա էվոլյուցիայի մասին մանրամասն կանգ են առել մի շարք հետազոտողներ[330]։ Համաձայն ենք նրանց այն մտքի հետ, որ բաժը որպես մաքս հանդես է եկել պատմական այն ժամանակաշրջանում, երբ զարգացան ֆեոդալական քաղաքները՝ ապրանքային արտադրությունը՝ դրամական շրջանառությունը, խորացավ և ընդարձակվեց աշխատանքի հասարակական բաժանումը։ Այս պայմաններում է, որ բաժը ստանում է մաքսի իմաստ։ Բաժը վերոհիշյալ իմաստով է օգտագործված 1288 թ. Լևոն Գ-ի կողմից ջենովացիներին շնորհված առևտրական արտոնագրում[331]։ Բաժի մի քանի տեսակների մասին է ակնարկում նաև Սմբատն իր Դատաստանագրքում[332]։

---

324 Նույն տեղում։ *V. Langlois*, Le trésor, p. 107.

325 Նույն տեղում, էջ 127։

326 *V. Langlois*, Essai, p. 79.

327 Դատաստանագիրք, էջ 127։

328 Նույն տեղում։

329 Դարձել, էջ 108։

330 *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана.

Հ. Մանանդյան, Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, 1, Երևան, 1927, 2, 1928։

Նույնի Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930։

Նույնի Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան, 1926։

Թ. Ավդալբեգյան, Հաս, սակ, բաժ, ՀԽՍՀ, գիտության և արվեստի ինստիտուտի № 1, Երևան, 1926։

С. Еремян, Очерки истории СССР, ч. I и II.

Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը։ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, և ուրիշներ։

331 *V. Langlois*, Le tresor., p. 153.

332 Դատաստանագիրք, էջ 126—128։

5. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՁԵՎԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին վճարված հարկերն ու տուրքերը

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների կողմից Կիլիկիայի աշխատավորության շահագործումը տեղի էր ունենում բազմազան ձևերով և միջոցներով։

Ինչպես բոլոր ֆեոդալական հասարակություններում, այնպես էլ Կիլիկիայի ֆեոդալական հասարակության մեջ աշխատավոր գյուղացու շահագործումը, ֆեոդալական դասակարգի կողմից, տեղի էր ունենում ֆեոդալական հասարակության արտադրական եղանակին բնորոշ հողային ռենտայի երեք ձևերով՝ աշխատավճար, արդյունավճար և դրամական[333]։ Բացի հողային ռենտայի երեք ձևերից, Կիլիկիայի աշխատավորները, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների օգտին կատարում էին զանազան պարտավորություններ և նվիրատվություններ, վճարում էին տուրքեր և տուգանքներ, որոնք փաստորեն կրում էին սիստեմատիկ և մշտական բնույթ։ Աշխատավճար և արդյունավճար ռենտաները օրինականացված են Սմբատի Դատաստանագրքի այն հոդվածում, որտեղ խոսվում է հարկատու շինականների և հնազանդյալների կողմից թագավորի և հողատեր պարոնների օգտին վճարվող հարկերի և տուրքերի մասին։ Աշխատավճար ռենտայի, կոռի վերաբերյալ ասված է. «եւ ի շաբաթն աւր մի պարոնին բանի և այլ աւելի ոչ բնաւ»։ Այսպիսով, 13-րդ դարում կախյալ գյուղացին պարտավոր էր շաբաթական[334] մի օր աշխատել ֆեոդալի համար։ Բացի այդ, գյուղացին պարտավոր էր իր փոխադրական միջոցներով՝ սայլով, ձիով, ջորիով և էշով տարվա 12 տոների առթիվ ծառայել ֆեոդալին և յուրաքանչյուր տարի երկու անգամ աղ և հաց տանել իշխանի բերդ-կալվածքը։ Դատաստանագրքի սույն հոդվածի շարունակության մեջ ասված է. «...եւ ջորին, և ձին, և էշն չտայ. (այսինքն արդյունքով ռենտա չի պահանջվում փոխադրական միջոցներից, ինչպես այդ պահանջվում էր կովից, ոչխարից և այլն... Ս. Բ.) զի յամէն տաներտն (տոներին—Ս. Բ.) որ են ի տարին՝ ԺԲ տարպայ՝ գան ծառայեն պարոնին։ Եւ ի բերդն երկու ճամպահ հաց տանեն և երկու աղ»[335]։

333 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1949, էջ 330—345։

334 Դատաստանագիրք, էջ 13։

335 Նույն տեղում։

Սակայն սրանով չէր սահմանափակվում աշխատանքային ռենտայի չափը, Սմբատը նույն հոդվածի շարունակության մեջ ասում է, որ շինականը շաբաթը մի օրից ոչ ավել պետք է աշխատի պարոնի համար։ Սա ցույց է տալիս, որ ֆեոդալները հաճախ խախտում էին այդ նորման։ Այդ երևում է նույն հոդվածի հետևյալ երկու հատվածներում «Զգաւառաց հարկն սահմանովն որ սահմանած է՝ առնուն պարոնայքն. և չիշխէ ոք՝ յայն որ առանց թագվորին դիր յաւելցնէ» (նշանակում է պարոնները հաճախ խախտել են սահմանված կարգը) Սմբատը թագավորին պարտավորեցնում է հսկել օրենքի ճիշտ պահպանման վրա գրելով «և թագվորն պարտի որ պահէ զաղքատն, թե ոչ Աստուծոյ պարտական մնայ»[336]։ Հարկերը սահմանելուց հետո, հոդվածի շարունակության մեջ երկրորդ անգամ հիշեցնելով շարաշահումների մասին զգուշացնում է պարոն ֆեոդալներին սահմանելով «Եվ ընդ այս ըղորդ անցնել այլ չէքուչէք չէ պատեհ առնուլ աւելի ի հարկատվացն»[337]։

Բացի աշխատանքային ռենտայի վերոհիշյալ ձևերից, գոյություն ուներ հասարակական մասշտաբի հարկադիր և ձրի աշխատանք, որը անմիջական նյութական բարիքներ արտադրողները, գյուղի և քաղաքի աշխատավորները, իրենց սեփական աշխատանքով, աշխատամիջոցներով և քաշող ուժով, սպասարկում էին քաղաքների, բերդերի, ամրոց-պալատների, կամուրջների, ճանապարհների շինարարությանը։ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի վերոհիշյալ հոդվածի շարունակության մեջ կարդում ենք. «Ի քաղաքի և ի բերդի շէնք՝ պատեհ է որ ամէն երկիրն ուգնեն ամէն իրաւք, զի ամէնին է, և տեղոյն բնակիչքն ավելի»[338]։

Մեր կարծիքով սա նման է Բագրատունյաց շրջանի Անգարիոն կոչված հարկին կամ Արշակունյաց շրջանի բեգարին[339]։ Ինչպես երևում է վերոհիշյալ վկայությունից, այդ աշխատանքները կատարում էին ոչ միայն գյուղացիները, այլև քաղաքի աշխատավոր բնակչությունը։ Աշխատանքային այս պարտույթի մասին անմիջական վկայություն կա նաև Կիլիկիայի թագավորների կողմից ջենովացի և վենետիկցի վաճառականներին և նրանց ներկայացուցիչ բայլերին տրված առևտրական շնորհագրերում, որտեղ

336 Նույն տեղում։

337 Նույն տեղում։

338 Նույն տեղում, էջ 14։

339 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, էջ 326—327։

այս հարկը անվանվում է Contrarietas[340] և actio[341] լատինական տերմիններով, ընդ որում նշված է, որ թագավորը ազատում է վենետիկյան և ջենովյան քաղաքացիներին՝ այն առևտրականներին և արհեստավորներին, որոնք մշտական բնակություն էին հաստատել Կիլիկիայի բազմաթիվ քաղաքներում՝ Տարսոնում, Այասում, Սսում, Մամեստիայում և այլն։ Contrarietas-ը հասարակական մասշտաբի հարկադիր և ձրի աշխատանքային հարկ-պարտավորություն էր, որին ենթակա էր Կիլիկիայի քաղաքի և գյուղի աշխատավորությունը[342]։ Կոռային աշխատանքի մի տեսակը նման էր եվրոպական corvée-ին, որը նույնն էր, ինչ նկարագրված է Սմբատի Դատաստանագրքի վերոհիշյալ հոդվածում, իսկ actio-ն նույնպես հասարակական մասշտաբի հարկադիր աշխատանք էր և հատկապես վերաբերում էր քաշող ուժի միջոցով կատարվող բեռների տեղափոխմանը[343], որը մեր կարծիքով կատարվում էր հատկապես արտակարգ դրության ժամանակ, ասենք պատերազմի ռազմաճակատում բանակին սննդամթերք և անհրաժեշտ բեռներ տեղափոխելու համար։ Այդպիսի մի դեպքի մասին վկայություն կա Սմբատի Տարեգրքում (1956 թ. ընդարձակ հրատարակություն)։ 1259 թվականին կարամանլիների Խորաման սուլթանի դեմ Կիլիկիայի կռվող բանակում, բացի զինվորական անձնակազմից հիշատակվում են բեռնակիրներ, որը կասկած չի թողնում, որ նրանք հավաքագրված էին աշխատավոր մասսաներից և որոնք աներկբայելիորեն այդ բեռները տեղափոխում էին իրենց քաշող ուժերով, որը Կիլիկիայի լեռնային պայմաններում պետք է կազմված լիներ վարձկաններից։ Այդ վկայության մեջ կարդում ենք. «Յարեաւ արքան և եկն ի Տարսոն (Հեթում Ա) և ժողովեաց զզօրս իւր և գնաց ի Սելեւկիա և անդ հաւաքեցան հեծեալն և հետևակն և բեռնակիրն (ընդգծումը մերն է— Ս. Բ.) զի Ռ (1000) քոռ ցորենոյ տանէին ի դղեակն ածել... և հրամայեաց թագաւորն թափել զցորեանն ի բերդն...[344]»։

Աշխատանքային ռենտայի՝ կոռի գործադրման ղուգընթաց, հողատեր ֆեոդալը հարկատու շինականներից և հնազանդյալներից հողային ռենտան գանձել է նաև մթերքներով։ Անդրադառնալով այս հարցին Կ. Մարքսը գրում է. «Աշխատանքային ռենտայի փոխարկումն արդյունքներով՝ տնտեսագիտական տեսակետից քննելով, ոչինչ չի փոխում հողային ռենտայի էության մեջ»[345]։ Սակայն արդյունքներով ռենտան հանդիսանալով զարգացած ֆեոդալիզմի շրջանի իշխող և ամենազարգացած ձևը, չի բացասում իր կողքին աշխատանքային ռենտայի առկայությունը, ըստ որում, աշխատանքային ռենտային միշտ էլ ավելի շատ կամ թե ավելի քիչ չափով, ուղեկցվում են նախորդ ձևի մնացուկները, այսինքն՝ այն ռենտայի մնացուկները, որը պետք է ուղղակի՝ աշխատանքային, այսինքն կոռային աշխատանքով վճարել և, այս դեպքում հավասարապես միևնույն է, թե հողատերը մասնավոր անձ է արդյոք, թե պետությունն է։ Այստեղ «հայտնի կոռերը շարունակվում են հարատևել արդյունքներով ռենտայի կողքին»[346]։

Այսպես, 13—14-րդ դարերում զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում տիրապետող է եղել արդյունավճար ռենտան։ Այն վճարվել է հողատեր ֆեոդալներին և պետությանը որպես արքունական կամ պետական հարկ։ Այդ հարկերը վճարող գյուղացիները՝ հարկատու շինականներն ու հնազանդյալները գավառապետ պարոններին հարկ են վճարել ջրարբի և անջրդի հողերից, այգիներից, դաշտերից, անասուններից և այլն։ Արդյունքներով վճարվող ռենտայի չափի և քանակի, գանձող պաշտոնյայի ով լինելու մասին անմիջական վկայություն կա Սմբատի Դատաստանագրքի առաջին հոդվածում «Զգաւառաց հարկն սահմանով որ սահմանած է՝ առնուն պարոնայքն. Եւ է ըղորդ հարկուն սահմանն այս, որ՝ զինչ Աստուած տայ հարկատուին, ի հնկէն մէկն է»[347]։

Հնդակի կամ հնգեկի մասին ուշագրավ տեղեկություն կա նաև 1236 թ. Հեթում Ա. Թագավորի կողմից Տևտոնյան օրդենին տրված հողային նվիրատվությունում, որտեղ հնգակը կոչվում է «Հայոց հնգակ Հարոնիոյ»[348], այսինքն այն քաղաքի անունով, որը նվիրվում է օրդենին։ Այստեղ հետաքրքիր է այն, որ բուն Հայաստանի օրինակով արդյունքներով ռենտան գանձվել է բերքի մեկ հինգերորդի չափով, որը ինչպես հայտնի է Մխիթար Գոշի Դատաստանագրքում, նույնպես անվանվում է «հնգեք»[349]։

340 *V. Langlois*, Le trésor, pp. 106—111.

341 Նույն տեղում։

342 *V. Langlois*, Essai, p. 49.

343 Նույն տեղում, էջ 50։ *V. Langlois*, Le trésor, pp. 106—111.

344 Տարեգիրք, էջ 239։

345 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, էջ 332։

346 Նույն տեղում, էջ 332—333։

347 Դատաստանագիրք, էջ 13։

348 Սիսուան, էջ 229։ Հմմտ. V. Langlois, Le trésor, p. 142.

349 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», էջ 314։

Մխիթար Գոշի և Սմբատի Դատաստանագրքերում բոլոր տեսակի հողերը մեկ հինգերորդի չափով էին հարկադրվում։ Մխիթար Գոշի Դատաստանագրքում որոշակիորեն ասված է, որ գյուղացին կալվածատիրոջը վճարում է իր ստացած բերքից՝ ջրարբի հողից $^1/_5$ մասը, իսկ անջրդի հողից՝ $^1/_{10}$-ը[350]։ Նույնը, թեև ոչ այդքան որոշակի, նշված է նաև Սմբատի Դատաստանագրքում «Եւ ածուք ու այսպիսիք ի տասնէն զմէկն տանն»[351] $^1/_5$-ը և $^1/_{10}$-ը որպես հարկատվության և տուրքատվության չափ, այնքան սովորական էր դարձել, որ պետական և գավառական տուգանքները հաճախ գանձվել են տվյալ վնասվածքի, կորուստի $^1/_5$-ի (հնգակի) չափով[352]։

Բացի հողից գանձված հարկից, գյուղացիները հարկ էին վճարում անասունների, արոտավայրերի համար։ «Եզն այլ ծառութիւն չպարտի, զի զիր հնգակն տվել է։ Կովն լիտր մի եղ տայ պարոնին. և այլ խոտչէք չտայ։ Ոչխարն՝ եփ գառն կամ ուլ բերէ տարեկան՝ տասնէն մէկն առնու պարոնն»[353]։

Սակայն սրանով չէր սահմանափակվում նյութական բարիքներ արտադրողների՝ գյուղացիների վճարած հարկերն ու ֆեոդալական պարտավորությունները։ Այսպես, ֆեոդալի կամ իշխանի հողում գտնված «եւ աղն, և բորակն՝ նաթն և կուպրն՝ ձութն և ապակին, խունկն և մազտաքին՝ դեղնախունկն և այլ այսպիսի իրք որ քաղելով լինի գղթոր և մահլապ և այլն՝ նա իշխանացն է, որ ի քաղաւղացն տասնակ (ընդգծումը մերն է— Ս. Բ.) առնուն և ի կապալ հանեն»[354]։

Աշխատավորները հարկեր էին վճարում նաև որսորդությունից և ձկնորսությունից ստացած եկամուտի՝ որսի և ձկան $^1/_{10}$-ի չափով։ «Եւ թէ որ յայլոց երկիր երթայ՝ որս այնէ, նա ի տասնէն մեկ տեղոյն տիրոջն տայ. Եւ թե ձուկն որսա նոյնն է՝ ի տասնէն զմէկն տայ՝ զէդ զցամքոյն որսն»[355]։

Բացի վերոհիշյալ հարկերից, որոնք ինչպես տեսանք, նշված են Սմբատի Դատաստանագրքում, գոյություն են ունեցել այլ հարկեր, որոնք մեզ հասել են լատինական տերմիններով, որոնց համապատասխան հայերեն տերմինները մեզ չհաջողվեց գտնել։ Սենյորների կամ հողատեր պարոնների օգտին գանձվող լատինական տերմիններով նշված հարկերից են։

1. Կոնտրարիետաս «Contrarietas» աշխատավճար ռենտան է, որի մասին խոսեցինք իր տեղում։

2. Սերվիցիում «Servitium»-ը ֆեոդալական պարտավորություն էր, որը վճարում էր սենյորին ենթակա բնակչությունը։ Այն որոշ դեպքերում հանդես է եկել որպես ռազմական հարկ[356]։ Սմբատի Դատաստանագրքի ՃԻԶ (126) հոդվածը արգելում էր գյուղի բնակչությանը գրավ դնել՝ «ոչ ձի և ոչ սիլահ, զի կովոյ և ծառութեան ի պէտք է ի պարոնութեանն ի կարիքն»[357]։

3. Ռազմական հարկ էր նաև շնորհագրերում նշված «Occasio» հարկը, որը յուրաքանչյուրը տալիս է իր սենյորին պատերազմի ժամանակ կամ այլ արտակարգ դեպքերում։

4. Դացիո datio, Տրիբուտում tributum այլ հարկեր, որոնք վճարում էին խաղողի այգիներից, պարտեզներից և մշակվող հողերից, իսկ վեկտիգալ vectigal այն հարկն էր, որը վճարում էին մուսուլման հպատակները թագավորին և իշխաններին[358]։

Բացի վերոհիշյալ բոլոր տեսակի հարկերից, աշխատավորները վճարել են նաև բազմաթիվ տուգանքներ, որոնց մի մասը՝ պարոնի դարպասին, իսկ մի մասը՝ գանձարանին։ Հասկանալի է, որ այդ տուգանքների մեծ մասը ընկած էր գյուղացիների ուսերին, քանի որ նույն Դատաստանագրքի բազմաթիվ հոդվածներում սահմանված տուգանքի մեծ մասը նախատեսված էր և վճարվում էր աշխատավոր մասսաների կողմից[359]։

Սմբատի Դատաստանագրքից և մատենագրական այլ վկայություններից երևում է, որ իշխան-պարոնները հաճախ խախտում էին օրենքով սահմանված վերոհիշյալ հարկերի չափերը։ Այդ բանը հենց երևում է նրանից, որ Սմբատը նախազգուշացնելով հարկապահանջներին, ասում է, որ «...չիշխէ որ՝ յայն որ առանց թագաւորին զիր յաւելցնէ»[360]։ Եվ ինչպես վերևում նշեցինք, թվարկելուց հետո աշխատավճար և արդյունքներով ռենտաների քանակը, անմիջապես սահմանում է հետևյալը. «Եւ ընդ

350 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», էջ 315—316։
351 Դատաստանագիրք, էջ 13։
352 Նույն տեղում, էջ 167։
353 Նույն տեղում, էջ 13։
354 Նույն տեղում, էջ 16։
355 Նույն տեղում, էջ 16—17։

356 V. Langlois, Le trésor. p. 106—111.
357 Դատաստանագիրք, էջ 116։
358 Նույն տեղում, էջ 50։
359 Նույն տեղում, էջ 52—53, 118—119, 139—140, 158, 167—170։
360 Նույն տեղում, էջ 18։

այս ըղորդ անցնել՝ այլ չէքուչէք (հարկեր) չէ պատեհ առնուլ ավելի ի հարկատվացն»[361]։

Ներսես Շնորհալին իր Թուղթ ընդհանրական «Առ իշխանս որ ըստ աշխարհի» ենթադրելով աղքատների, տնանկների և հնազանդյալների ողբերգական գոյավիճակը, դիմում և խրատում է իշխաններին՝ ֆեոդալ հողատերերին. «Մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալ Ձեր ծանր և դժուարակիր հարկադրութեամբ, զոր ոչ կարեն բառնալ,... մի զոք զրկէք ի մարդկանէ և մի նեղէք զաղքատս և զտնանկս... այլ «օրինօր դատեցէք», հարկը պահանջեցէք «ըստ չափոյ զորութեան զիւրաքանչիւր ոք»[362]։

Աշխատավոր մասսաները, բացի պարոններին վճարած ֆեոդալական ռենտայից հարկեր էին վճարում նաև արքունիքին։ Լևոն Գ-ի թագադրության առթիվ արատասանած քարող-ճառում դիմելով հոգևորականներին Վահրամ Ռաբունին՝ որպես նրանց պարտականություն, նշում է. «Ուսուցանել (ժողովրդին) ծառայել մարմնաւոր տեառն որպէս Աստուծոյ և զամենայն հարկս և զիրաւունս առանց տրտնջման յարքունիս վճարել»[363]։

Ինչպես ասացինք առաջին գլխում, Կիլիկյան հայկական պետությունը տարեկան որոշ գումար հարկ է տվել մոնղոլական իշխանությանը։ Այս հարկատվությունը թեև ունեցել է ժամանակավոր բնույթ, սակայն, այնուամենայնիվ այդ հարկի ծանրությունը ընկնում էր աշխատավոր ժողովրդի ուսերին։

Որ Կիլիկիան տարեկան որոշ հարկ է տվել Իրանի մոնղոլական իշխանությանը, այդ երևում է Համդալլա Ղազվինու հետևյալ վկայությունից. «Փոքր Հայաստանը իրականում չի հանդիսանում Իրանի (իմա հուլավյանների — Ս. Բ.) մի մասը...։ Այս երկիրը տարեկան 30 հազար դինար է վճարում Իրանի գանձարանին»։

Այդ մասին է վկայում նաև պապականության նվիրակ Ռուբրուքը։ Վերջինս լինելով Սսում, Հեթում Ա-ի Մոնղոլիայում կատարած բանակցությունների ժամանակ հաղորդում է, որ նա Սսում հանդիպում է Կոստանդին թագավորահոր հետ։ Վերջինս Ռուբրուքին ասում է, որ ինքը լավ լուրեր է ստացել իր որդուց (իմա Հեթում Ա-ից) և որ նա բարեհաջող վերադառնում է Կիլիկիա։ Այնուհետև Կոստանդինը ասում է, որ Մանգու խանը թեթևացրել է երկրից (Կիլիկիայից) գանձվող հարկերի քանակը[364]։

Մինչև այժմ մենք խոսում էինք աշխարհիկ ֆեոդալների կողմից գյուղացիներից վերցրած հարկերի և տուրքերի մասին։ Այդ հարկերը հպատակ գյուղացիները նույն ձևով վճարում էին և հոգևոր ֆեոդալական կալվածատիրությանը, եկեղեցիներին ու վանքերին, սակայն, բացի այդ հարկերից և տուրքերից նյութական բարիքներ արտադրողները հարկեր ու տուրքեր էին վճարում նաև եկեղեցիներին ու վանքերին, որոնք հիմնականում սահմանված են Սսի եկեղեցական ժողովի կանոններում և Սմբատի Դատաստանագրքում։ Ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում հոգևոր ֆեոդալները շարունակում էին ժողովրդից վերցնել՝ պտուղ, տասանորդ[365], որոնք հանդես էին գալիս եկեղեցյոյ հաս[366], հաս քահանայի[367], եպիսկոպոսական հաս[368] տերմիններով։

Կիլիկիայի պայմաններում հետաքրքիր է և խիստ ուշագրավ, որ Սմբատը հոգևորականների եկամուտները համեմատում է և նմանեցնում «հեծելվորների» թոշակին, որը ցույց է տալիս անմիջականորեն և ուղղակիորեն հոգևորականների եկամուտների և հոգևորական հիերարխիայի՝ ֆեոդալական կառուցվածքն ու բնույթը։ «Վասն հարկու որ առաջնորդքն առնուն ի ժողովրդոցն» հոդվածում Սմբատը գրում է. «Սահման է առաքելական աւրինաւքս, որ եպիսկոպոսն յԱստուծոյ տեղն խնամք տանի ժողովրդեանն և զայնչաք սահմանաց հարկն առնու ի սուրբ եկեղեցոյն և ի յայլ եկեղեցականացն ի պէտքն, և վասն շլատութեան չյաւելցնէ զառն և ոչ զեկեղեցականաց իրաւունս տայ պակսեցնել, վասն զի ամէն եկեղեցական հայեցք է հաստատած ի յիր ապրանքն ի սուրբ եկեղեցոյն ծառուրեանէ՝ զեղ հեծելվոր որ թրովն իր այնէ զթոշակն»[369] (ընդգծումը մերն է—Ս. Բ.)։

Ֆեոդալական հիերարխիայի նույն բնույթն ու կառուցվածքն է ընկած Սսի եկեղեցական ժողովի հետևյալ կանոնի հիմքում. «Եպիսկոպոսունք ծառայեսցեն զհայրապետական աթոռն կար-

---

361 Նույն տեղում։

362 Թուղթ ընդհանրական, էջ 92։

363 Ռաբունի, էջ 55։

364 Г. Микаелян, История, стр. 316.

365 Գանձակեցի, էջ 308։

366 Դատաստանագիրք, էջ 29։

367 Գանձակեցի, էջ 308։

368 Նույն տեղում։

369 Դատաստանագիրք, էջ 21։

գեալ հասին և ընծայիւք արժանաւորօք ըստ կանոնաց. զի սուրբ Լուսաւորիչն գրեալ է, որ քահանայքն զժողովուրդն տասնորդեսցեն, և եպիսկոպոսք զքահանայսն, և հայրապետն զեպիսկոպոսունս»[370]։ Հոգևորականության կողմից ժողովրդից գանձած հարկերի և տուրքերի այդ սիստեմի հիերարխիկ բնույթի մասին խոսում են նաև Դատաստանագրքի ԺԱ (11), ԼԱ (31), ԼԹ (39) հոդվածները[371]։

Քանի որ քահանայի և երեցի ստացած հասը հանդիսանում է վերոհիշյալ հարկատվության հիմքը, բերում ենք քահանայի հասի չափի մասին՝ Սմբատի Դատաստանագրքի (70) հոդվածը «Եւ որպէս գրել ենք երեցնոյ բաժինն՝ ի մատղէն զինչ եւ լինի՝ աջ էրին ու երբուծնէ և խախցոցն, ու ի ցորենէն եւ ի գինոյն տասնակ, և ի մաղէ եւ ի բրդէ. և ի Սահակայն կայր մորթին գրած ու ի հաւ չկայ՝ և ես չգրեցի. ամ թող տրաւղն և առնաւղն ընտրեն»[372]։

Բացի օրենքով սահմանված տասնորդից և հասից, հոգևորականները, վանքերն ու եկեղեցիները ժողովրդից ստանում էին այսպես կոչված նվերներ ու ընծաներ։ Սրանք միջնադարում արդեն հարկերի և տուրքերի բնույթ էին ստացել և հավաքական իմաստով արտահայտվում էին հաս և իրավունք տերմիններով։

Այսպիսի բնույթ են կրում կնքադրամը[373], թաղման համար գանձված դրամը[374] և մատաղացուի մի մասը[375]։ Ուխտագնացության և տոների առթիվ ժողովուրդը պարտադիր կերպով վանքերին, եկեղեցիներին և երեցներին պետք է տար նվերներ[376], որոնք հաճախ կրում էին պարտադիր բնույթ, քանի որ Սմբատի Դատաստանագրքում վերոհիշյալ նվերները, օրինականացված են և նույնիսկ սահմանված են նրանց չափն ու քանակը։ Օրինակ քրիստոնեական տոների առթիվ, որոնք մեկ առ մեկ նշված են Դատաստանագրքի Լե (35) հոդվածում, սահմանվում են նվիրատվության հետևյալ նորմաները. «Եւ պատեհ է որ որ յիր ամէն ազգ մտերոյ՝ ի մրգերոյն քթոց մի, և մի սերմունցն դստակ մի եղի, և

370 Դանձակեցի, էջ 308։
371 Դատաստանագիրք, էջ 34, 42։
372 Նույն տեղում, էջ 76։
373 Նույն տեղում, էջ 46—47։ Դանձակեցի, էջ 308։
374 Դատաստանագիրք, էջ 46—47։
375 Նույն տեղում, էջ 43—44։
376 Նույն տեղում, էջ 39—44։

յայլոցն նոյնպէս, ի կալէ և ի մրգատուրէ, և ըստ քչուցն փոքր ի շատէ՝ իր եկեղեցոյն տայ, զաղէկն և ոչ զվատն ենման Կայէնի՝ որ ընտրէր ու զվատն անէր։ Եւ թե որ երիցու առանձին ժամուց տայ կամ մատղէնի, նա կէս դրամուն ու մատղենոյն վանացն է։ Եւ զինչ բարիկինդնացն շաբթուն գայ, նա երիցուն է ամենն գառնենի մորթին»[377]։

Որ այդ նվերները կրում էին սիստեմատիկ պարտադիր հարկի բնույթ, այդ մասին խոստովանում են հայ հոգևորականության նշանավոր գործիչներ Ներսես Շնորհալին և Ներսես Լամբրոնացին։ Նրանք զգուշացնում են հոգևորականներին, որ նվերները «հարկիւ» չպահանջեն[378]։

Հոգևորականներին վճարվող հարկերը, տուրքերն ու նվերները, ինչպես աշխարհիկ ֆեոդալների կողմից՝ գանձված հարկերն ու տուրքերը, անտանելի էին դարձնում աշխատավորների դրությունը։ Վերջիններս պայքարում էին ֆեոդալական դասակարգի՝ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների շահագործման դեմ։ Այդ պայքարը և նրանց սոցիալական բողոքը իրենց արտացոլումն են գտել Կիլիկիայի հայկական պետության շրջանի վերաբերյալ հայ մատենագրության, գեղարվեստական գրականության, առակների և քարոզների մեջ։ Գեղարվեստական գրականության մեջ արտահայտված դասակարգային պայքարի և սոցիալական բողոքի հարցերի շուրջը ընդարձակ ուսումնասիրություններ ունեն խոշոր հայագետներ՝ Մ. Աբեղյանը[379], Հ. Օրբելին[380], Ա. Հովհաննիսյանը[381], Լ. Խաչիկյանը[382], Գ. Միքայելյանը[383] և ուրիշներ։ Հետևապես, մենք կանգ չենք առնի հարցի այդ կողմի վրա։

Կիլիկյան հայկական պետության ֆեոդալական հասարակությունում թեև չեն բռնկվել ու առաջացել խոշոր գյուղացիական ապստամբություններ, ինչպիսիք են՝ պավլիկյան կամ թոնդրակյան

377 Նույն տեղում, էջ 45։
378 Թուղթ ընդհանրական, էջ 223—229։ Ն. Լամբրոնացի, Պատարագի մեկնութիւն, «Հանդէս ամսօրեայ», 1954, № 1, էջ 239—240։
379 Մ. Աբեղյան, Հայոց միջնադարյան առակները և սոց. հարաբերությունները նրանց մեջ, Երևան, 1935։
380 Орбели И. А. Памятники эпохи Руставели, Л., 1938.
381 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, էջ 294—302։
382 Լ. Խաչիկյան, Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12—14-րդ դդ., Երևան, 1947։
383 Г. Микаелян, Ист. Кил. Арм. госуд., Ереван, 1952.

շարժումները Հայաստանում, սակայն դա չի նշանակում, որ չեն եղել աշխատավորական որևէ հուզում կամ ելույթ շահագործող դասակարգի դեմ։

Գյուղացիական խոշոր ապստամբությունների բացակայությունը պետք է բացատրել նրանով, որ Կիլիկյան հայկական պետության 300-ամյա գոյության ընթացքում անընդհատ գտնվելով միջազգային բարդ իրադրության մեջ, միշտ առաջին պլանի վրա է եղել պայքարը արտաքին վտանգի դեմ։ Այս հանգամանքը որոշ չափով զսպանակել է դասակարգային ներքին պայքարի պոռթկումները։ Մյուս կողմից գյուղացիական կամ աշխատավորական խոշոր հուզումները, եթե նույնիսկ խմորվել են, խեղդվել ու ճընշվել են սաղմնային վիճակում, Կիլիկիայի հայկական պետության ուժեղ կենտրոնացած պետական ապարատի և ռազմական ուժերի առկայությամբ։

Աշխատավորության խոշոր ապստամբությունների բռնկմանը խանգարել են նաև մի կողմից 11—13-րդ դարերում Մերձավոր Արևելքը սասանող խաչակրաց արշավանքները և դրանց հետևանքով բորբոքվող միջկրոնական մոլուցքը և մյուս կողմից՝ այդ վեճերը ոգեշնչող պապականության ազդեցությունն ու միջամտությունը Կիլիկիայի ներքին և արտաքին հարաբերություններին։

Այդ դարերում աննախընթաց զարգացում են ապրել քաղաքները, քաղաքային կյանքն ու արդյունագործությունը։ Մեծ չափերի էր հասել խոշոր հողատիրությունը, խորացել էր գյուղացիների ճորտացումն ու հողին ամրացումը։ Արհեստագործության ու ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման համապատասխան առաջ էր ընթանում երկրի ներքին և արտաքին առևտուրը։ Կիլիկիայի աշխատավոր բնակչությանը շահագործողների թվում հանդես են գալիս պարոնայք՝ առևտրական կապիտալիզմի մոնոպոլիկները։ Աշխատավորների աղքատացման և ունեզրկման պրոցեսը արագացրել, խորացրել են նաև արտաքին թշնամիների՝ եգիպտական մամլուկների և թուրք-քոչվորական ցեղերի ավերիչ ու կողոպտիչ արշավանքներն ու ներխուժումները։

Դասակարգային պայքարի ակտիվ դրսևորումների բացակայությունը, հատկապես Կիլիկիայում 13—14-րդ դարերում, ֆեոդալական հասարակության վերելքի շրջանում պետք է բացատրել վերը նշված գործոններով։

Սակայն, այնուհանդերձ, այստեղ ևս իրենց արտահայտությունն են գտել ֆեոդալական հասարակության դասակարգային

պայքարի ձևերից մի քանիսը, ինչպիսիք են՝ անհատական ընդդիմադրությունը, ճորտերի փախուստը, աղանդավորությունն ու հերետիկոսությունը։

Նախքան դասակարգային պայքարի արտահայտության վերոհիշյալ ձևերին անցնելը, այստեղ հարկավոր է ընդգծել քրիստոնեական եկեղեցու, որպես ֆեոդալիզմի գաղափարախոսության ջատագովի, դասակարգային հաշտության քարոզչի դերի մասին։

Հայ եկեղեցու կարկառուն ներկայացուցիչներից Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Վարդան Այգեկցին, Վահրամ Ռաբունին և ուրիշները, որոնք հատկապես գործում էին Կիլիկյան հայկական պետության սահմաններում, իրենց քարոզներում ու թղթերում սերմանել են դասակարգային հաշտություն քրիստոնեական եղբայրության սկզբունքներով։ Նրանք, ելնելով իրենց իսկ դասակարգային շահերից, ձգտել են մի կողմից մեղմացնել շահագործվող դասակարգերի ողբերգական վիճակը, խրատել են աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին որոշ չափով սահմանափակել աշխատավորների շահագործումն ու կողոպուտը, սպառնալով դեհենի և երկնային դատարանի ահով, աշխատավորների աղքատությունը բացատրելով իրենց իսկ կատարած մեղքերով, քարոզել են նրանց հնազանդ լինել իրենց տերերին։ Այս բոլորը արել են մի նպատակի համար՝ հավերժացնել քրիստոնեական եկեղեցու և նրա հոգևոր ֆեոդալների ասպնջականությունը։ Մյուս կողմից նրանք ձգտել են քրիստոնեական եկեղեցուն հովանավորող աշխարհիկ ֆեոդալների քաղաքական ու տնտեսական տիրապետության ֆեոդալական շահագործման արդարացման։ Ճնշվածների նկատմամբ ճնշողների գործած զազրելիությունները քրիստոնեական եկեղեցին հռչակում էր՝ «հատուցում նախածին մեղսագործության կամ այլ մեղքերի դիմաց կամ փորձություն՝ որը հղում է ամենակարող տերը մարդկանց քավության համար»։ Այդ իսկ պատճառով է, որ եկեղեցին «խրախուսում է անկազմակերպ ամբոխի երկչոտությունը, ինքնաարհամարհանքը, ինքնանվաստացումը, հպատակությունը, հնազանդությունը...»[384]։

Հայտնի են նաև վերոհիշյալ հոգևորական հեղինակների պայքարը վաշխառու հոգևորականների և առևտրականների չարաշահումների դեմ[385]։ Հետագայում այդ երևույթների դեմ պայքարում

384 *К. Маркс* и *Ф. Энгельс*, т. V, стр. 173.

385 Վերոհիշյալ հեղինակների քարոզները և թղթերը տե՛ս Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, 1865, և թղթերի շարունակությունը։ Ն. Լամբրոնացի,

էր նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը[386]։ Թեև կարելի է ասել, որ Սմբատի Դատաստանագրքի ստեղծման բուն նպատակներից մեկն էլ եղել է Կիլիկիայի սոցիալական և քաղաքական ներքին հակադրությունների ու հակամարտությունների մեղմացումը և առաջին հերթին ֆեոդալական տիրող հարաբերությունների դեմ պայքարող աշխատավորության դիմադրությունը հաղթահարելու և ֆեոդալական միապետությունը ամրապնդելու, «երկրի ուժերը» արտաքին թշնամու դեմ համակենտրոնացվելու կարիքը[387]։ Նույն նպատակն է հետապնդել Վահրամ Ռաբունու 1271 թ. Լևոն Գ թագավորի թագադրության արտասանած ճառքարոզը[388]։

Ինչպես նշեցինք վերևում, դասակարգային պայքարի պասիվ ձևերից էր անհատական ընդդիմադրությունը։ Այդ արտահայտվել է ճորտերի կամ կախյալ գյուղացիների անհատական փախուստի, ֆեոդալի սեփականությունը՝ շինությունները, խոտի դեղերը, արտադրական միջոցները, այլ իրերը այրելու կամ ոչնչացնելու և քրիստոնեական եկեղեցու դավանանքը մերժելու միջոցով։ Վերջիններս, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում եկեղեցու կողմից որակավորվել են որպես աղանդավորներ կամ հերետիկոսներ և հալածվել են աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների և վերջինների ձեռքին գործիք հանդիսացող Կիլիկյան պետական ապարատի կողմից։

Պայքարի պասսիվ արտահայտություններից գլխավորը եղել է ծառաների և ճորտերի անհատական փախուստը։ Մեզ թվում է, որ վերոհիշյալ երևույթը մասսայական բնույթ է կրել, և եթե այդպիսին չլիներ, ապա Ներսես Շնորհալին կարիք չէր ունենա իր Թուղթ ընդհանրականում հիշատակելու այդ մասին։ Խրատելով տերերին, նա ասում էր, որ նրանք իրենց ծառաներին և հնազանդյալներին չբռնանան ծայրահեղ միջոցներով և դրանով չստիպեն նրանց փախչելու։ Ներսես Շնորհալին գրում է. «...եւ մի ինչ բռնութեամբ առաւել քան զչափն գնայք առ նոսա, զի մի յերկիւղէ

Ատենաբանութիւնք և թուղթ և ճառք, Վենետիկ, 1838, Սարգիս Շնորհալի, Մեկնող կաթողիկեաց թղթոց, Կ. Պոլիս, 1744։

386 Դատաստանագիրք, էջ 33—34, 58—60։

387 Աշոտ Հովհաննիսյան, Երկեր հ. 1, էջ 381։

388 Վահրամ Ռաբունի վարդապետի, Բանն ի յայտնութեան..., 1875 թ., Երուսաղեմ։ Տե՛ս սույն աշխատության ներածական բաժնում, Վահրամ Ռաբունու մասը։

կողոպտելոյ և բանտ և պատուհաս կրելոյ ի ձէնջ անիրաւաբար՝ գաղտնի փախչին»[389]։ Կամ թե մի ուրիշ տեղ խրատում է ցածր հոգևորականներին, որ նրանք լսեն իրենց առաջնորդներին և չփախչեն վերջիններից ինչպես ծառաները՝ իրենց տերերից[390]։

Այնքան շատացել էր աղքատների և տնանկների թիվը, որ նրանց ողբերգական վիճակը մեղմացնելու նպատակով, Ներսես Շնորհալին և Կիլիկիայի՝ Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին, կազմակերպել էին «հասարակական բաշխման» միջոցառումներ։ Ատոմ աբեղայի ձեռագրերի հիշատակարաններից մեկում, նվիրված Ներսես Շնորհալու կենսագրությանը, կարդում ենք. «Գնալ իմանալ (այսինքն Ներսես Շնորհալին—Ս. Բ.) և քննել, թե ոյ ոք իցէ տնանկ և հասեալ ի յետին աղքատութեան և ամաչէ գալ ի հասարակաց բաշխումն ողորմութեան և ծանուցանել նմա, զորս իբրև իմանայր՝ տայր զնոսա ծրարս ոսկոյ առատապէս»[391]։

Անհատական ընդդիմադրության ձևերից՝ անհատական փախուստի մասսայական բնույթի մասին վկայում է նաև Սմբատի Դատաստանագրքի «Վասն որ պառիկոսն փախչի յիր պարոնէն»[392] հոդվածը։ Կան հոդվածներ, որոնք խիստ պատիժներ են նախատեսում այն շինականների՝ պառիկոսների և հնազանդյալների նկատմամբ, որոնք կամայական և գիտակցաբար նյութական վնաս են պատճառում իրենց տերերին[393]։

Իհարկե, ընդդիմադրության վերոհիշյալ ձևերը չէին կարող որևէ փոփոխություն մտցնել տիրող հասարակարգում։ Պայքարի այդ ձևերի դեմ ֆեոդալական իրավունքն ու պետական մեքենան մշակել էր միջոցառումներ։ Այդ գործում գլխավոր դերը բնականաբար պատկանում էր անկարգության մեջ կարգ պահպանող թագավորական իշխանությանը, որը իր ռազմական ուժերով, բանտերով և դատարաններով պայքարում էր ժողովրդական բոլոր տեսակի ելույթների դեմ՝ ընդդիմադիրներին սպառնալով մահապատիժ և բանտարկություն[394]։ Բնական էր, որ այս գործում նրան օգնության էին հասնում հայ ֆեոդալական եկեղեցին և նահանգների ու գավառների՝ պարոնությունների, նահանգապետներն ու գավառապետները՝ թագավորի պարոններն ու իշխանները։

389 Թուղթ ընդհանրական, էջ 101։

390 Նույն տեղում, էջ 39։

391 Սիսուան, էջ 274։

392 Դատաստանագիրք, էջ 132։

393 Նույն տեղում, էջ 118—119, 159։

394 Նույն տեղում, էջ 10—12, 25, 81—83։

Սիցիլիացիներին շնորհված առևտրական շնորհագրերից մեկում նախատեսված էին խիստ պատիժներ նրանց նկատմամբ, որոնք կապստամբեին կամ որևէ հանցագործություն կկատարեին «թախտի դեմ»։ «Եթե հայեր են կամ տեղացիներ,— ասված է շնորհագրում,—գործը քննում է քաղաքի կամ բուրճեսի ատյանը, իսկ եթե հանցագործը սիցիլիացի է՝ թագավորական ատյանը»[395]։

Սմբատը ուղղակի մատնացույց անելով թագավորի և պարոնների դեմ կատարած հանցանքի կամ ապստամբության մասին գրում է. «Եթե ոք վասն թագաւորի անպատեհ կամ անարժան խաւսք ասէ՝ և կամ վասն իշխանի՝ կամ մոռէ (ապստամբ—Ս. Բ.), նա պատեհ է՝ յառաջ ի յեկեղեցին դատըստանել (ինչպես տեսնում եք եկեղեցին օգնում է աշխարհիկ իշխանությանը հաշվեհարդարի ենթարկելու ընդդիմադիրներին —Ս. Բ.) նա թէ չդայ լացնէ զիր արատն... և թէ աշխարհական լինի՝ նա հանուիրեն զինքն և բանադրած վարեն. ու թէ բանն մեծ լինի՝ նա սաղայ տան ի վերայ իրացն»[396], այսինքն՝ գույքի և ունեցվածքի բռնագրավում։

Այսպիսով, թագավորի և ֆեոդալ իշխանների դեմ ամեն մի ընդդիմադրություն և ոտնձգություն դիտվում էր որպես ապստամբություն և ծանր հանցանք և նույնիսկ արժանանում էր մահապատժի[397]։

Բացի թագավորական կենտրոնական իշխանությունից Դատաստանագիրքը իրավունք էր տալիս յուրաքանչյուր գավառապետ-պարոնին՝ պատժել իր պարոնության սահմաններում ապրող ըմբոստ բնակիչներին[398], իսկ որ հատուկ էր ֆեոդալիզմին, ամեն մի ֆեոդալ կարող էր պատժել իր ճորտին, ծեծել և զնդանել, բայց չէր կարող միայն մահապատժի ենթարկել[399]։

Պարոնների բերդերը և ամրոցները հանդիսացել են ոչ միայն երկիրը արտաքին թշնամիներից պաշտպանելու միջոց, այլ, ինչպես անգլիացի պատմաբան Ռ. Ս. Սմեյլն է գրում. «Երուսաղեմի թագավորությունում սենյորական բերդերն ու ամրոցները

[395] Doc. arm., T. I, p. 760.
[396] Դատաստանագիրք, էջ 25։
[397] Նույն տեղում, էջ 11, 82։
[398] Նույն տեղում, էջ 118, 135, 139, 159։
[399] Նույն տեղում, էջ 82—83։

հանդիսանում էին յուրահատուկ ոստիկանական պոստեր պահպանելու համար «հասարակական կարգը»[400]։

«Անտիոքի Ասիզների» ԺԵ գլխի բովանդակությունը հաստատում է վերոհիշյալ միտքը, որտեղ ասված է. «...եւ որտի որ խալապայ և շմոր լինի...» և որը հասնի պարոնի կամ գավառապետի գործակալներին, վերջիններս անմիջապես դղյակից կամ ամրոցից ուղարկում են «բաժին մի լիճ ձիաւորաց, որ երթան ի տեղն ուր խալապայն կենայ»[401] «տեղույն վրա հարթեն գործը», այսինքն՝ ճնշեն։ Ինչպես տեսնում ենք, պարոնի ձիավորները կատարում են ոստիկանական ֆունկցիա։

Սակայն այս ֆունկցիան հիմնականում կատարում էր արքունիքը՝ թագավորի գլխավորությամբ։ Վերջինիս ենթակա բերդերում և բանտերում, հատկապես Սսի բերդում գտնվող զնդանբանտում (դոնժոնում), բանտարկվելիս են եղել թագավորի կամ իշխանների անհատական ընդդիմադիրները և նրանց իշխանության դեմ ապստամբողները։ Կիլիկիայի պատմիչը պատմում է մի հետաքրքիր դեպքի մասին, որը տեղի է ունեցել 1271 թվին Լևոն Գ-ի թագադրության առթիվ։ Այդ տարում Լևոն Գ-ն ներում է շընորհում Սսի բերդի բանտում բանտարկված կալանավորներին։ Այսպես նա գրում է. «որ և բազմունս մեծաթիւ շնորհեցաւ... և բազումք ի կապանաց բանտից ազատեցան»[402]։ Սակայն դրա դեմ ընդդիմանում են բերդատեր պարոնները և ընդվզում են թագավորի դեմ, որից և կարելի է կռահել, որ բանտերից ազատվածները եղել են խոշոր ֆեոդալների հակառակորդները, այն է՝ կամ գյուղացիներ, կամ քաղաքային դասի ներկայացուցիչներ[403]։

Պայքարի պասսիվ ձևերից են եղել նաև աղանդավորությունը և հերետիկոսությունը։ Աղբյուրները կցկտուր և անորոշ տեղեկություններ են հաղորդում այդ մասին։ Հայտնի են Ներսես Շնորհալու ակնարկումները և թղթերը աղանդավորության և հերետիկոսության մասին[404]։ Սմբատը իր Դատաստանագրքում մի քանի հոդվածներ է նվիրել նրանց մասին[405]։ Հոդվածներից մեկում նա

[400] *R. C. Smail*, Crusaders' castles of the 12 th. century. Cambridge Historical Journal.
[401] Assises d'Antioche, p. 38—39.
[402] Սիսուան, էջ 270։
[403] Ս. Պողոսյան, Հայ ժող. պատմություն, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում 9—13-րդ դդ., պրակ. 4, էջ 261։
[404] Թուղթ ընդհանրական, էջ 26։ Նամականի, Վենետիկ, 1838, էջ 333, 366։
[405] Դատաստանագիրք, էջ 19, 22, 39—40, 52—53, 59, 60, 74։

խոսում է հերետիկոսների երկրորդ անգամ մկրտվելու և մկրտելու պայմանների շուրջը[406]։ Մի ուրիշում՝ վարդապետների վրա պատասխանատվություն է դնում, որպեսզի նրանք հավատացյալներին ուսուցանեն հեռու մնալ «ի չարագործութենէ և հերձուածողացն»[407]։

Դատաստանագիրքը նախատեսում է խիստ պատիժներ աստծո և Քրիստոսի դեմ հայհոյողների նկատմամբ։ «Վասն որ զԱստուած հայհոյէ կամ անարգէ» վերնագիրը կրող հոդվածում ասված է. «Եթէ ոք զԱստուած հայհոյէ կամ անարգէ... նա իրաւունք է, որ ի դուրս տանին ի դուր տեղ և այնոք որ լսեցին, զձեռվին ի վերայ գլխոյն դնեն ու ի տեղն քարկոծեն զինք»[408]։ Հոդվածի երկրորդ բաժնից երևում է, որ այստեղ խոսքը վերաբերում է աղանդավորներին, քանի որ բարձրացնում է դավանաբանական հարցեր, գրելով. «Զի եթէ ոք զՔրիստոս անարգէ, նոյն է՝ և զեկեղեցի և զխաչն և զհաղորդն և զմկրտութիւն, և թէ անաւրէն լինայ, նա մեր է վրեժխնդրութեան. և թէ քրիստոնէ է, եկեղեցին քնէ, և զոր պարտն է՝ ի դարպասն տայ որ դատէ»[409]։

Նույնպիսի պատիժներ են սահմանում նաև 1243 թ. Սսի եկեղեցական ժողովի կանոնները[410]։

Ինչպես ասացինք վերևում, Կիլիկիայի հասարակական ներհակությունները իրենց ամենաուժեղ արտահայտությունն են գտել այն պայքարի մեջ, որը տարվում էր մի կողմից՝ այսպես կոչված ունիտորների, և մյուս կողմից հակաունիտորների միջև։

Ներկա աշխատության առաջ դրված խնդիրներից և սահմաններից դուրս կլիներ բացահայտել այդ պայքարի ներքին ծալքերը, քանի որ դա մղվում էր ոչ միայն տնտեսական, սոցիալ-իրավական հարցերի շուրջը, այլև՝ շոշափում էր նաև պետության արտաքին քաղաքականությունը և քաղաքական դիրքորոշումը։

Այդ ներքին կրոնադավանաբանական շղարշի տակ հանդես եկող երկպառակություններն ու ապստամբությունները հանդիսանում են գլխավոր պատճառներից մեկը, որոնք թուլացրին և կործանման եզրին հասցրին Կիլիկիայի հայկական պետությունը։ Թեև 1374—1375 թվերին՝ եգիպտական մամլուկների, թուրք կարամանցիների և հարևան մյուս թշնամաբար տրամադրված իշխանությունների շեշտակի հարվածների տակ կործանվեց Կիլիկյան հայ թագավորությունը Սսում, սակայն որոշ իշխանություններ կարողացան իրենց գոյությունը պահպանել մինչև 1425 թ.։

* * *

Ֆեոդալական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում իրենց հիմքում պահպանեցին և զարգացման ավելի բարձր աստիճանի հասցրեցին բուն Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի ավանդույթները։ Սակայն Կիլիկյան Հայաստանը շրջապատված լինելով բյուզանդական, սելջուկ-թուրքական, արաբական պետություններով և քաղաքական, տնտեսական ու մշակութային սերտ կապեր հաստատելով Լեվանտի (Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի և Կիպրոսի) խաչակիր թագավորությունների և իշխանությունների հետ, Կիլիկյան Հայաստանի ֆեոդալական հարաբերությունները կրել են արևմտաեվրոպական և բյուզանդական ֆեոդալիզմի ազդեցությունը, որով և պայմանավորվել են այդ հարաբերությունների որոշ առանձնահատկությունները։

Այս տեսակետից Կիլիկիայի հայկական պետությունում զարգացած ֆեոդալական հարաբերությունները ոչ միայն իրենց ուրույն տեղն ու նշանակությունն ունեն հայ պետականության պատմության ուսումնասիրման համար, այլև հանդիսանում են ուշագրավ մի պատմաշրջան Մերձավոր Արևելքի միջնադարյան պատմության մեջ։

Անշուշտ, Կիլիկյան հայկական պետության նշանակությունը մեծ է հայ ժողովրդի կյանքում։ Այն ժամանակ, երբ բուն Հայաստանը ծվատվում էր սելջուկ-թուրքերի և թաթար-մոնղոլների արշավանքներից, Կիլիկյան Հայաստանում հայ ժողովուրդը շարունակեց զարգացնել հայկական մշակույթը։ Կիլիկյան հայկական պետության 300-ամյա պատմությունը փառավոր էջերից մեկն է հայ ժողովրդի՝ իր գոյատևման համար մղվող պայքարի բազմադարյան պատմության մեջ։

---

406 Նույն տեղում, էջ 22։
407 Նույն տեղում, էջ 39։
408 Նույն տեղում, էջ 74։
409 Նույն տեղում։
410 Գանձակեցի, էջ 304—309։

ՑԱՆԿԵՐ

ՑԱՆԿ

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ա. Մարքսիզմի կլասիկները

Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 3, Երևան, 1949։

Ֆ. Էնգելս, *Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն*, Երևան, 1933։

Ֆ. Էնգելս, *Գյուղացիական պատերազմը Գերմանիայում*, Երևան, 1940։

Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 3, 15, 18, 19, 20, 31։

բ. Սկզբնաղբյուրներ

Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ։ Նամականի, 1865, ի Վենետիկ, Ս. Ղազար Ներսիսի Լամբրոնացւոյ, թուղթ առ Քրիստոսազոր իշխողն մեր ինքնակալութեամբ Լևոն ի նուաստ Ներսիսէ որ ի Տարսոն սրբոյ եկեղեցւոյ պաշտօնեայ, 1865, Վենետիկ։

Թովմայի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887։

Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանելի սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, Էջմիածին, 1865։

Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, Յերուսաղեմ, 1871։

ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1956։

ԻԲՆ Խալլիքան, Վեֆայաթ ալ Ասեան, Կահիրե, 1935։

Լալայան Ե., *Յուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Տփղիս, 1915։*

Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց, Երևան, 1961։*

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862։

Հովհաննու Դարդելի ժամանակագրութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891։

Հովհաննես Դրասխանակերտցի, *Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1912։*

Հովսեփյան Գ., *Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, հ. Ա.։*

Հայկական ՍՍՀ Մատենադարան, ձեռագիր № 1318, 8356։

Հեթում պատմիչ. Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842։

Մաղաքիա աբեղա *(Գիգոր Ակներցի), Պատմութիւն վասն ազգին նեստորաց, ԱՊԲ, 1870։*

Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913։*

Մատթեոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։

Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, Վ. Բաստամյանց, Վաղարշապատ, 1800։

Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. Ա., կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951 և հ. Բ., 1956։

Պատմութիւն Արիստակեայ Լաստիվերտցւոյ, Երևան, 1963։

Պատարագի մեկնութիւն Ներսիսի Լամբրոնացւոյ, Վենետիկ, 1837։

Պատմութիւն ազգին Ռուբինեանց թե որպէս տիրեցին Կիլիկիոյ, Սամուէլ Անեցւոյ շարունակող, «Արարատ», 1870։

Սարգիս մեկնող կաթողիկեաց թղթոց, Կ. Պոլիս, 1744։

Ստեփաննոսի Ասողկան, Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885։

Սամուէլ Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893։

Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, Մոսկվա, 1856։

Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, ի Վենետիկ, Ս. Ղազար, 1956։

Տարեգիրք արարեալ Սմբատ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կորիկոսոյ, Փարիզ, 1859։

Սմբատ Սպարապետ, *Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի, Երևան, 1958։*

Սարգիսյան Բ., *Մայր ցուցակ, հայերեն ձեռագրաց, Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հհ. Ա և Բ, 1914, 1924։*

Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1911։

Վահրամայ Ռաբունւոյ, Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859։

Վահրամ Ռաբունի, *Բան ի Յայտնութեան տեառն ու օծումն Լևոն Գ արքայի, Երուսաղէմ, 1875։*

Վարդանայ *Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861։*

Հ. Տաշյան, *Յուցակ հայերեն ձեռագրաց, Վենետիկ, 1896։*

Փավստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889։*

Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացւոյ, հրատարակ. Կ. Բասմաճյան, Փարիզ, 1907։

գ. Ուսումնասիրություններ

Ալիշան Ղ., *Սիսուան, Վենետիկ, 1885։*

Ալիշան Ղ., *Հայապատում, Վենետիկ, 1901։*

Ալիշան Ղ., *Հայ-Վենետ, Վենետիկ, 1896։*

Ալիշան Ղ., *Շնորհալի և պարագայք իւր, 1873, Վենետիկ։*

Ալպոյաճեան Ա., *Պատմութիւն Հայ Կիլիկիոյ, Գահիրե, 1937։*

Ալպոյաճեան Ա., *Պատմութիւն հայ գաղթականության, Կահիրե, հ. 2-րդ, 1955։*

Արեղյան Մ., *Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ, Երևան, 1935։*

Առաքելյան Բ., *Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1958։*

Բասմաճյան Կ., *Լևոն Լուսինյան, Փարիզ, 1908։*

Բարկեն Կյուլեսերյան, *Ծովք, Ծովք Տլուք, Հոմկլայ, Վիեննա, 1904։*

Բարայան Լ. Հ., *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դարերում։ Երևան, 1964։*

Գալստյան Ա., *Սմբատ Սպարապետ, Երևան, 1961։*

Ջարբհանալյան Գ., *Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897։*

Լեո, *Անցյալի հարցերից, «Մուրճ», 1905, № 10, էջ 91—99։*

Լեո, *Խոջայական կապիտալ, Երևան, 1934։*

Խաչիկյան Լ., Ազանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12—14-րդ դարերում, Երևան, 1947։
Կղեմես (Գալանոս), Միաբանությունն հայոց եկեղեցւոյն... ընդ եկեղեցւոյն Հռոմայ, մասն 1-ին և 2-րդ, Հռոմ, 1690։
«Կիլիկիա», Փորձ աշխարհագրության արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, 1894։
Հովսեփյանց Գ., Կաթողիկոսությունն Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1954։
Հովհաննիսյան Աշոտ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1957, գ. Ա.։
Հակոբյան Ս., Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957։
Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 1—4, Երևան, 1944—1945։
Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934։
Ուրմազյան Հ., Սյունիքը 9—10-րդ դարերում, Երևան, 1958։
Չամչյան Մ., Պատմություն Հայոց, հատոր Գ.։
Պողոսյան Ս., Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան 1956։
Պողոսյան Ս., Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում 9—13-րդ դդ., պրակ 4, Երևան, 1958։
Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939։
Տիրացյան Ա., Կիլիկյան հայկական պետության սեփական նավատորմիզ ունենալու հարցի շուրջը, «Էջմիածին», 1957, 2, էջ 43—49։
Տեր-Ղազարյան Հ., Հայկական Կիլիկիա, տեղագրություն, Անթիլիաս, Լիբանան, 1966։
Օրմանյան Մ., Ազգապատում, մասն Ա, Կ. Պոլիս, 1913, մասն Բ, Կ. Պոլիս, 1914։

Հոդվածներ ամսագրերից

Ալիշան Ղ., Մարաշու վանքին դատաստանագիրքը, «Բազմավէպ», 1848։
Ալիշան Ղ., Թորոս Բ, «Բազմավէպ», 1873, էջ 56—66։
Ալիշան Ղ., Սարվանտիկարի տեր Կոստանդինի շնորհագիրը Տեռոնյան օրդենին, 1271 թ., «Բազմավէպ», 1873, էջ 108—112։
Ալիշան Ղ., Սմբատ Գունդստաբլ Հայոց և Անսիզք Անտիոքայ, «Բազմավէպ», 1876, էջ 307—327։
Աբրահամյան Ե., Սարգիս Շնորհալին որպէս մեկնող, «Բազմավէպ», 1888։
Ակինյան Ա., Ակնարկ մը հայ իրաւանց պատմութեան վրայ և Յ. Կարստի նոր երկասիրությունները, «Հանդէս ամսօրեայ», 1907, էջ 339—344, 1908, էջ էջ 21—219։
Ակինյան «Քաջն Լիպարիտի պատմությունը տաղերու և զրույցներու մէջ», 1933, էջ 120—138, «Հանդէս ամսօրեայ»։
Ակինյան Ն., «Ականց կամ Ակների վանք», 1948, էջ 218—251։ «Հանդէս ամսօրեայ»։
Ակինյան Ն.. «Ակներ վանք», 1952։ «Հանդէս ամսօրեայ»։
Ակինյան Ն., Կիրակոս Գանձակեցի, «Հանդէս ամսօրեայ»։
Ակինյան Ն., «Ներսէս Լամբրոնացի», կյանքն ու գրական գործունեությունը, 1954, էջ 86—251, «Հանդէս ամսօրեայ»։

Ակինյան Ն., «Պահլաւունեաց և Լամբրոնի Հեթումեանց ազգարանությունն», «Հանդէս ամսօրեայ», 1954, № 1, էջ 3—79։
Ակինյան Ն., Ցուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական հայ վարժարանի ի Հռոմ, 1958, հունվար—ապրիլ, «Հանդէս ամսօրեայ»։
Ալգեբեան Հ. Յ., «Ժամանակագրությունն Էռնուլի և Բեռնարդ Գանձապետի», «Բազմավէպ», 1913, էջ 298—299։
«Արարատ», 1870, 1888, 1911։
«Լումայ», 1899։
«Հայաստան» ամսաթերթ, 1850, № 10։
«Հասկ» հայագիտական տարեգիրք, 1950—1951։
Հետազոտությունք Նախնեաց ռամկօրէնին վրայ, գրեց Հ. Ղ. Զ. (Դիրք վաստակոցի մասին), 1889, էջ 1—21, «Հանդէս ամսօրեայ»։
Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների Տեղեկագիր, № 4, 1946 թ.։
Յիշատակ Ռուբինեանց Երուսաղէմ և շրջակայք, «Հանդէս ամսօրեայ», 1898, էջ 37—38։
Ոսկյան Հ. Հ., Կիլիկիայի վանքերը, հոդվածաշարք, «Հանդէս ամսօրեայ», 1954, 1955, 1956 թ.։
Ս. Փրկչի վանուց արձանագրությունն ի Կիլիկիա, Մելիք Թեվեքել, «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 435—440։
Քյուրտյան Հ., «Կիլիկիա գրուած քանի մը հին ձեռագրաց Յիշատակարաններ», 1940, էջ 61—64, «Բազմավէպ»։

Ռուսերեն լեզվով օգտագործած գրականություն

Микаелян Г. Г., История Киликийского Армянского государства, Ереван, 1952.
Марр Н. Я., Сборник притч Вартана, ЧТ. СПб., 1898 г.
Адонц А. Н., Армения в эпоху Юстиниана, СПб., 1908 г.
Орбели И. А., Статьи, помещенные в сборн. «Памятники эпохи Руставели», Л., 1938 г.
Еремян С. Т., Опыт периодизации истории Армении эпохи феодализма, «Вопросы истории», № 7, за 1951 г.
Заборов М. А., Крестовые походы, М., 1956 г.
Бабаян Л. О., Социально-экономическая и политическая история Армении в XIII—XIV в., Ереван, 1962 (Афтореферат докторской диссертации).

Սկզբնաղբյուրներ օտար լեզուներով

1. Assises d'Antioche, trad. d'Alishan, Venise, 1876.
2. Assises de Jérusalém, ed. Beugnot (M. Le comte), Paris, 1841 et 1843.
3. *Abulfaradj sive Bar Hebraei*. Chronicon Syriacum, Lipsiae, 1789.
4. *Anna Comnena*, Alexiada, ed. Schopen, Bon., 1839, t. II, XII.
5. *Aboulfêda*, Geographie, tr. Guyard, P., 1848.
6. *Baronius*, Annales ecclesiastici, t. XX—XXV, R., 1867.

203—20

7. *Cedrenus S.* Corpus scriptorum historiae byzantinae, B., 1867.
8. Chronique de *Michel le Syrien*, ed. par Chabot, 1899—1905.
9. Chronique de *Froissart*, publ. Lucé, t. I, Paris, 1879.
10. *Dardel J.* Chronique d'Arménie (Rec. docum, arm. t. II . Paris, 1969 et 1906.
11. Extraits des historiens arabes des croisades, par M. Reinaud (traité de Leon III avec le Sultan Kelaoun), Paris, 1872.
12. *Guillaume de Tyr*, Paris, 1840. Recueil des Historiens des croisades, Hist. orienteaux.
13. *Karst J.*, Sempadscher Kodex, Strassburg, 1905.
14. *Langlois V.*, Le trésor de chartes d'Arménie, Venise, 1863.
15. *Makrizi*, Histoire des sultans Mamelouks d'Egypte par Quatremère. Paris, 1837.
16. *Pegoletti F.*, La pratica della mercatura, ed. by Allan Evans, Mass., 1937.
17. *Paoli S.*, Codice diplomatico del sacro militare ordine Gerosolimitano, Lucques, 1733—1737.
18. Recueil des Historiens des Croisades, Documents arméniens, T. I. Documents latins et français relatfs à l'Armenie. T. II.
19. Recueil des Historiens des Croisades, Historiens Occidenteaux, t. III.
20. *Rainaldi*. Annales ecclesiastici: Lucques, 1747—1758.
21. *Sanutus M.*, Liber secretorum fidelium crucis, Hannoviae, 1611.
22. *Marko Polo*, trad. A. Z. Charignon, Paris, 1924.
23. *Willebrand d'Oldenbourg*, Itinéraire, Hambourg, 1859.
24. *Марко Поло*, Путешествие, пер. Минаева, Л., 1940.
25. Сборник документов по социально-экономической истории Византии, М., 1951.

Ուսումնասիրություններ օտար լեզուներով

1. *Adonz N.*, L'aïeul des Rubeniens (Byzantion, t. X, Brux., 1935).
2. *Adonz N.*, Notes arméno-byzantines, Brux., 1935.
3. *Basmadjian K.*, Les Lusigans de Poitou au trône de la Petite Arménie. (Journal Asiatique, 10-éme serie, t. VII).
4. *Dulaurier E.*, Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite Arménie, „Journal Asiatique", 1861, 5-ème série, t. XVII et XVIII.
5. *Dulaurier E.*, Recherches sur la chronologie arménienne, technique et hissorique. T. 1. Paris, 1859.
6. *Dodu G.*, Histoire des Institutions dans le royaume Latin de Jérusaléme, Paris, 1894.
7. Encyclopedia Britannica, London, 1946, t. 6.
8. *Grousset R.*, Histoire des croisades et du royaume franc de Jérusaléme, v. I—III, Paris, 1936.

9. *Heyd W.*, Histoire du commerce du Levant au moyen âge, t. I—II, L., 1923.
10. Inscriptions grecques, romaines, byzantines et arméniennes de la Cilicie, ed. *V. Langlois*, Paris, 1867.
11. Journal Asiatique, 1849.
12. *Langlois V.*, Essai historique et critique sur la consitution sociale et politique de l'Arménie, St.-Petersbourg, 1860.
13. *Langlois V.*, Voyage dans la Cilicie, Paris, 1861.
14. *Langlois V.*, Numismatique de l'Arménie au moyen âge, P., 1855.
15. *Morgan J.*, de, Histoire du peuple arménien, P., 1919.
16. *Mas Latrie L.* de, Histoire de l'Ile de Ghypre sous la régne des Princes de la Maison Lusignan, 3 vol., Paris, 1861—1865.
17. *Macler*, Rapport sur une mission scientifique. Paris, 1910.
18. *Prawer*, Etudes des quelques problèmes agraires et sociaux d'une seigneurie Croisée au XIII siècle, „Byzantion", t. XIII, 1953.
19. Les Ruines de Lampron, „Revue de l'Oriente", 1860, t. 1, 12.
20. *Rey B.*, Les colonies franques de Syrie au XIIéme siècle, Paris, 1883.
21. *Rüdt-Collenberg W. H.*, The Rupenides, Hethumides and Lusignans Paris, 1963.
22. Revue de l'Orient Latin, t. II.
23. Revue Occidentale, t. III—IV.
24. *Smail R. C.*, Crusaders' castles of the 12 th century, Cambridge historical Journal, 1951, vol. X, № 2.
25. *Sayce A. H.*, Les Hittites, Histoire d'un Empire oublié, Paris, 1891.
26. *Slumberger G.*, L'Epopée byzantine à la fin de Xéme siècle, Paris, vol. 3, 1905.
27. *Tournebize F.*, Histoire politique et religieuse de l'Armenie, Paris, 1900.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգար՝ թագավոր 24
Աբեղյան Մ. 18, 218, 293
Աբլղարիբ Արծրունի՝ Տարսոնի իշխան 142, 143, 206
Աբլղարիբ՝ իշխան Պիրի (հյուսիսային Սիրիայում) 152
Աբլղարիբ՝ սպարապետ 65
Աբուլֆարաջ (Բար Հեբրեոս) 25, 190, 211, 250, 257
Աբուլֆեդա 106, 262
Ադամ դը Գաստոն՝ տեր Կաստիմ ամրոցի 176, 177
Ադամ՝ տեր Բաղրասի 82, 166
Ադոնց Ն. 8, 55, 57, 85, 98, 99, 198, 202, 224
Ալեքսանդր Մակեդոնացի 21
Ալեքսանդր Նևսկի 193
Ալեքսեյ Կոմնենոս՝ կայսր Բյուզանդիայի 44
Ալիծ՝ դուստր Ռուբեն Գ-ի 152
Ալիշան Ղ. 5, 7, 8, 17, 22, 25, 48, 54, 64, 80, 89, 110, 114, 115, 118, 120, 121, 163, 170, 174, 198, 217, 235, 262, 269
Ալպոյաճյան Ա. 8, 9, 37, 141, 142
Ակինյան Հ. 16
Աճառյան Հ. 99, 100, 224, 234, 242, 272
Ամատունի 68
Անդրանիկ (Անդրոնիկոս) Կոմնենոս՝ զորավար Բյուզանդիայի 242
Աննա Կոմնենոս 143
Աննենկոմ 265
Անտոն՝ գործավոր վանքի 87
Աշոտ՝ թագավոր 148
Ասլպեկ՝ պարոն 38
Ավգերյան Հ. 243
Ավդալբեգյան Թ. 283
Ավետիք Տիգրանակերտցի՝ ժամանակագիր 38
Ավշին՝ սելջուկյան զորավար 11-րդ դ. 204
Ատոմ՝ աբեղա 272, 297
Արեգ՝ տեր Համուսայի 166
Արիստակես Լաստիվերցի 15, 151, 204
Արկադիոս 70
Արսեն՝ գիտնական բյուզանդական 70
Աւգ Տեր-Տիրերան՝ տեր Ճկեր ամրոցի 170

Բաբկեն ծ. Վ. Գյուլեսերյան 207
Բագրատ՝ որդի գող Վասլի 152
Բագրատունի 19, 57, 58, 60, 96, 98, 99, 169, 285
Բահաթրյան Ս. 224
Բաղդին Բուրժսկի տե՛ս Բոլդուին
Բաղդին՝ գունդստաբլ 42, 65
Բաչու 32
Բասմաջյան Կ. 8
Բաստամյան Վ. 105
Բարթուղիմեոս՝ ատենադպիր 72
Բարթուղիմեոս Գրանդենտիոս՝ դոժ Վենետիկի 280
Բարխուդարյան Վ. 169, 202
Բարսեղ՝ ատենադպիր 72
Բարսեղ՝ արքեպրայր (Հեթում Բ-ի) եպիսկոպոս 92
Բարսեղ Բ՝ կայսր Բյուզանդիայի 141
Բարսեղ՝ իշխան Հայրենատեր-բերդատեր 181
Բարսեղ՝ եղբայր Հեթում Ա-ի, արքեպիսկոպոս Դրազարկի 174
Բարսեղ՝ նոտար 73

Բարսեղ (Վասիլ)՝ ջանցլեր 72
Բեռնարտ Դանձապետ՝ խաչակիր ժամանակագիր 24
Բիբարս (Պնդուխտար)՝ սուլթան Եգիպտոսի 34, 249, 276
Բոլդուին՝ խաչակիր իշխան Եդեսիայի 152, 185, 228, 242
Բոհեմոնդ՝ բրինձ Անտիոքի 68, 113
Բովան՝ ատենադպիր, թարգման 72
Բրոսսե Մ. 17

Գագիկ Բ, Բագրատունի՝ թագավոր 148
Գալանոս Կղեմես 66, 74, 93, 166, 170, 171, 173, 258
Գալստյան Ա. 13, 14, 23, 25, 46, 158, 243
Գարագաշյան Ա. 8
Գեդրենոս Գ. 141
Գիլյոմ դը Տիր 24, 42, 73, 149, 154, 184, 189, 204
Գոյներ՝ ձիավոր 113
Գվիտոն Լուսինյան՝ թագավոր 36, 57, 63, 168
Գրաֆտ Ալբրեխտ 17
Գրիգոր Ակներցի (Մաղաքիա Արեղա) 15, 21, 87
Գրիգոր Գ. Պահլավունի՝ կաթողիկոս 206
Գրիգոր եպիսկոպոս՝ ատենադպիր 72
Գրիգոր՝ երեց 38
Գրիգոր Զ Ապիրատ՝ կաթողիկոս 90
Գրիգոր Է Անավարզեցի՝ կաթողիկոս 209
Գրիգոր Մարաշեցի 117
Գրիգոր Նարեկացի 62
Գրիգոր՝ ջանցլեր 73
Գրիգոր՝ վարդապետ 87
Գրիգոր Բ Վկայասեր՝ կաթողիկոս 204
Գրիգոր Դ Տղա՝ կաթողիկոս 152, 212, 208, 262
Գրիգորիոս Զ՝ պապ 190
Գևորգ՝ իշխան Մեծքար ամրոցի 170

Դավիթ Բջնեցի՝ տնտես վանքի 87
Դարդել Հովհան 16, 23, 24, 52, 66, 78, 79, 84, 94, 100, 101, 111—113, 163, 165, 168, 169, 177, 178, 200, 227, 283
Դյուլորիե Է. 5, 11, 12, 18, 27, 48, 49, 67, 74—76, 99, 163, 165, 169, 176, 184, 217, 218, 228, 242, 262
Դյուկանժ 101
Դոդի ժ. 186, 187

Եագուպ (Հակոբ) Շահամիրա՝ Սսի (1375—1376 թթ.) եգիպտական մամլուկյան սուլթանության կուսակալ 37
Եզյան Կ. 24
Եղիշե 63
Եվստաֆիա Մոլեյնոս՝ մագիստրոս 141
Երեմյան Ս. 40, 202, 218, 234, 283

Զաբել՝ թագուհի 68, 79, 172, 189
Զաբել Լուսինյան 168
Զաբորով Մ. 186, 188, 255

Էնգելս Ֆ. 23, 46, 85—87, 102, 131, 132, 138, 160, 184, 203, 265, 267, 270—272
Էրնուլ՝ խաչակիր ժամանակագիր 24

Ըռնաղտին Սիր՝ ձիավոր 113

Թեոդոս՝ կայսր Բյուզանդիայի 21, 69, 81
Թովմա Արծրունի 29, 139, 140, 219
Թորոս Ա՝ իշխան 41, 42, 115, 148, 149, 152, 153, 205
Թորոս՝ արքունի կապիտան 66
Թորոս՝ գործավոր 87
Թորոս Բ՝ իշխանաց իշխան 41—44, 98, 114, 146, 149, 150, 153, 191, 206, 242, 250
Թորոս Գունդստաբլ 270
Թորոս՝ իշխան Եդեսիայի 185, 206
Թորոս իշխան՝ որդի Օշնի (14-րդ դ.-ի վերջին) 37
Թորոս՝ որդի Լևոն Գ թագավորի 108, 113
Թորոս՝ որդի Հեթում Բ թագավորի 108
Թուրքման՝ որդի Ղլիճ Ասլանի 250

Ժան դ՝ Իբելեն՝ խաչակիր օրենսդիր 120, 156, 157
Ժոֆրե՝ գրագիր 73

Իբն Խալլիքան 261
Ինոկենտիոս Գ՝ պապ 30, 188, 192, 215

Հալայան Ե. 174
Հանդլուա Վ. 5, 9—11, 17, 18, 23, 25—27, 31, 48—51, 153, 66—73, 76, 78, 79, 83, 84, 93, 97, 98, 101, 105, 107, 113, 121, 123, 126, 128, 133—135, 146, 153, 158—160, 163—165, 169, 172—178, 181, 184, 187—202, 217, 218, 235—237, 240, 242, 258, 261, 262, 264, 266, 277
Հենին Վ. Ի. 245
Հեռ 218
Հիպարիտ՝ սպարապետ 65, 116
Հուսինյան 11, 13, 36
Հեռն Ա Ռուբինյան՝ իշխանաց իշխան 148, 149
Հեռն Բ Ռուբինյան՝ թագավոր 8, 10, 12, 19, 30—32, 48—50, 53—55, 57—59, 67—69, 75, 82, 89—91, 96—98, 109—111, 114, 118—120, 122, 123, 134, 146, 152—157, 159—162, 164, 166—168, 170—177, 184, 188—195, 198, 201, 208—210, 213, 215, 225, 229, 239, 273, 276, 279
Հեռն Բ Ռուբինյան՝ իշխանաց իշխան 43, 53, 149
Հեռն Գ Հեթումյան՝ թագավոր 18, 19, 25—27, 53, 54, 60, 82, 108, 111, 126, 150, 161, 191, 251, 283, 290, 299
Հեռն Դ Հեթումյան՝ թագավոր 25, 191
Հեռն Ե Հեթումյան՝ թագավոր 24, 27, 34, 44, 53, 69, 121, 177
Հեռն Զ Լուսինյան՝ թագավոր 23, 24, 37, 63, 79, 111, 168, 227, 283
Հեռն Իմաստասեր՝ կայսր Բյուզանդիայի 70
Հեռն Համուսացի՝ սեպուհ 112
Հեռն Պարոն՝ տեր կապանի 176
Հեռն Ապլհասանանց՝ սպասալար 64

Խաչիկ Բ Անեցի՝ կաթողիկոս 203
Խաչիկյան Լ. 16, 58, 65, 69, 87, 122, 293
Խորաման՝ սուլթան Կարամանլիների 286
Խորենացի Մ. 74, 157, 268
Խորխորունի 68

Կայկաուզ (Քեյ-Քավուս)՝ սուլթան Իկոնիայի 225
Կանդակազեն (Կանդակուզեն) Հովհաննես՝ (1341—1345) կայսր Բյուզանդիայի 44
Կարամանլիներ 286
Կարապետ Բ կաթողիկոս 38, 260
Կարապետ՝ Սսի իշխան՝ թոռ Կոստանդին Դ-ի 37, 38
Կարապետ՝ քահանա 241
Կարստ Ժ. 13
Կիվի Լուզինյան՝ թագավոր Կիպրոսի 103
Կիրակոս Գանձակեցի 22, 30—32, 41, 62, 69, 78, 96, 133, 150, 168, 170, 180, 197, 201, 207, 209, 220, 227, 291, 292, 300
Կոստանդին Ա՝ իշխան 27, 44, 81, 148 149, 206
Կոստանդին Ա Բարձրբերդցի՝ կաթողիկոս 209
Կոստանդին Բարձրբերդցի՝ իշխան 55, 62, 165, 167, 189, 197, 199
Կոստանդին Դ՝ թագավոր 37, 79, 100, 113
Կոստանդին Ե՝ թագավոր 178, 227
Կոստանդին իշխան՝ թոռ Կոստանդին Դ-ի 37
Կոստանդին Կարսիլ՝ սեպուհ 112
Կոստանդին Հեթումյան՝ մեծ իշխան 36
Կոստանդին Մոնոմախ՝ կայսր Բյուզանդիայի 142, 143
Կոստանդին՝ պայլ 68
Կոստանդին՝ հայր Հեթում Ա-ի, պայլ 51, 62, 65, 69, 97, 120, 156, 157, 190, 209, 290, 291
Կոստանդին Սիր՝ ձիավոր 113
Կոստանդին՝ սպարապետ 65
Կոստանդին՝ իշխան Կարկառի 152
Կոստանդին իշխան՝ տեր Սարվանտիկարի 165, 192, 201
Կոստանդիանոս՝ կայսր Բյուզանդիայի 21
Կոստանդին՝ հյուրատես 87

Հալկամ Հեթումյան՝ իշխան 143
Հակոբ՝ կրոնավոր 24

Հակոբյան Ս. 177, 202, 218, 240, 274, 283, 285
Հակոբյան Վ. 17, 113, 180
Համդալլա Ղազվին 290
Հեթում Ա՝ թագավոր 18, 20, 32—34, 51, 53, 55, 64, 69, 79, 92, 97, 108—111, 120, 121, 156, 171, 172, 174, 190, 192, 194, 197, 200, 209, 235, 236, 239, 240, 274, 286, 287, 290
Հեթում՝ կապիտան արքունի 67
Հեթում՝ իշխան Սասունի 152
Հեթում Բ՝ տեր Լամբրոնի, Հայոց մեծաց ջամբրլայ 75
Հեթում Բ Հեթումյան՝ թագավոր 108, 113
Հեթում՝ որդի Օշին Ա-ի, Լամբրոնի իշխան 144
Հեթում՝ որդի Օշին Գ-ի, Լամբրոնի իշխան 110, 145
Հեթում՝ տեր Լամբրոնի, մեծ ջամբրլայ 75
Հեթում Մամիկոնյան 173
Հեթում՝ տեր Նիկրինիումի, սենեկապետ 75
Հեթում Նղրցի՝ պայլ 69
Հեթում՝ պատմիչ 15, 50, 92
Հեթում պարոն՝ հայր Կոստանդին Պայլի 178
Հեթում՝ սենեշալ 74
Հեթում՝ տեր Կորիկոսի, սպարապետ 65
Հեթումյան 13, 19, 44, 60, 88
Հեղի՝ եպիսկոպոս Դրազարկի 91
Հենրիխ Բ՝ թագավոր Անգլիայի 17
Հեռի Սեբաստիոս՝ տեր Կամարտիասի 170
Հյուրշման Ժ. Հ. 99
Հոնենց 178, 275
Հովհաննես արքեպիսկոպոս՝ ջանցլեր 72
Հովհաննես՝ առաջնորդ Գոներ անապատի 174
Հովհաննես՝ գրիչ 143, 261
Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի 96
Հովհաննես եպիսկոպոս՝ առաջնորդ Դրազարկի 211
Հովհաննես՝ երեց 38
Հովհաննես Երզնկացի 108
Հովհաննես Թլկուրանցի 116
Հովհաննես Դ՝ կաթողիկոս 68, 97
Հովհաննես Կոմնենոս՝ կայսր Բյուզանդիայի 149
Հովհաննես՝ պրոքսիմուս 75
Հովհաննես Զմշկիկ՝ կայսր Բյուզանդիայի 139
Հովհաննես՝ փակակալ 87
Հովհաննիսյան Ա. Գ. 12, 85, 94, 178, 183, 187, 193, 202, 293, 296
Հովսեփյանց Գ. 16, 44, 75, 79, 81, 89, 143—145, 150, 179, 205, 206, 241, 271
Հուլավյան 36, 290
Հուլավու խան 171
Հուսիկ՝ գրիչ 13-րդ դարում 62

Ղազան-խան 34—36
Ղլիճ Ասլան՝ սուլթան Իկոնիայի 250

Ճոսլին՝ խաչակիր իշխան Հռոմկլայի 207
Ճոֆրե՝ իշխան Հարոնիա քաղաքի 196
Ճոֆրե՝ տեր Սարվանտիկարի (13-րդ դ.) 165, 192

Մալխասյան Ս. 224, 272
Մակլեր Ֆ. 210
Մակրիզի 191
Մաղաքիա դպիր՝ 14—15-րդ դ. ժամանակագիր 37
Մամիկոնյան 81
Մանանդյան Հ. 49, 52, 57—58, 68, 84—85, 96, 98—99, 103, 183, 198, 202, 224, 234, 267, 272, 283
Մանգու-խան 33, 291
Մանուել Կոմնենոս՝ կայսր Բյուզանդիայի 98, 144
Մաս Լատրի 26, 65, 67, 75, 83, 125, 126, 258, 270
Մատթեոս Ուռհայեցի 15, 29, 41, 75, 87, 96, 100, 105, 139, 146, 148, 149, 151, 152, 183, 184, 186—188, 191, 203, 207, 208, 219, 242
Մարկո Պոլո 173, 263, 277
Մարր Ն. Յա. 18
Մարքս Կ. 23, 46, 87, 138, 160—161,

184, 192, 237, 271, 284, 287, 295
Միքայել Ասորի 48, 95, 139, 149, 150, 162, 163, 189, 191, 197, 201, 208, 209, 211, 215, 239
Միքայել՝ կայսր Բյուզանդիայի 143
Միքայելյան Դ. 7, 12—14, 30, 31, 93, 105, 219, 223, 257, 266, 291, 293
Մլեհ Ռուբինյան՝ իշխանաց իշխան 41, 43, 149, 150, 153, 191, 228, 250
Մխիթար Այրիվանեցի 15
Մխիթար Գոշ 13, 14, 105, 254, 268, 288
Մխիթար՝ միաբան Ս. Թորոս վանքի 210
Մորգան Ժակ դը 5, 12, 48, 49, 110, 118, 153, 159, 160, 185, 191, 217, 250, 252

Նաթանելյան 143, 170
Ներսես Լամբրոնացի 18, 42, 48, 50, 57, 58, 75, 89, 91, 93, 117—119, 144, 146, 173, 189, 208, 212, 220, 226, 229, 257, 262, 293, 295, 297
Ներսես Շնորհալի 18, 22, 48, 88, 104, 105, 109, 117, 144, 154, 155, 162, 205, 212, 221, 222, 226, 228, 237, 238, 241, 272, 290, 293, 295—297, 299
Նիկոփոր Գրիգորիս 24
Նուր էդ-դին՝ ամիրա Հալեբի 250

Շահնշահ՝ իշխան Սասունի 152
Շլյումբերժեր Դ. 141, 221
Շոնեբեկ՝ պատմաբան գերմանացի 110

Ոսկյան Հ. Հ. 9, 89, 90

Չամչյան Մ. 7, 62, 65, 66, 74, 166, 171, 173, 217, 219
Չորտուանել՝ իշխան Սասունի 152

Պաուլի Ս. 26, 172
Պեգոլոտտի Ֆ. 263, 277
Պետրոս Ա՝ թագավոր Կիպրոսի 168, 270
Պետրոս Գետադարձ՝ կաթողիկոս 203, 204
Պեմունդ՝ իշխան Անտիոքի 55, 118, 167, 242

Պերպերոժեն՝ (Կոստանդին Է. Պորփյուրոգենն) (912—959) կայսր Բյուզանդիայի 144
Պնդուխտար տե՛ս Բիբարս
Պողոսյան Ս. 169, 202, 218, 220, 240, 248, 252, 253, 268, 283, 299
Պրուդոն 265

Ջավախաշվիլի Ի. Ս. 101
Ջիվան՝ սպարապետ 65
Ջոն Մարգատ՝ ասպետ Երուսաղեմի 104

Ռաբուն՝ եպիսկոպոս Գռներ վանքի 92
Ռայմոնդ՝ սենեշալ 74
Ռայնալդի 26, 73
Ռաունդ Հ. 101
Ռենե Գրուսսե 185
Ռեյ Է. 104
Ռիմեր 74
Ռոմանոս Գ՝ կայսր Բյուզանդիայի 204
Ռուբեն Ա՝ իշխան 44, 148, 206
Ռուբեն Գ՝ իշխանաց իշխան 149, 150, 152, 154, 191, 198, 261
Ռուբեն-Ռայմոնդ 69, 109, 172, 189, 194
Ռուբինյան 9, 13, 19, 30, 41, 44, 45, 70, 207
Ռուբրուք Ուիլյամ 290
Ռուտ-Կոլենբերգ 13, 37
Ռօճել Տմունթ՝ խաչակիր իշխան 118, 167

Սահակ Պարթև՝ կաթողիկոս 292
Սահիբ Դիվանի 178
Սահմադին 178, 275
Սամուէլ Անեցի 15, 29, 41, 75, 87, 96, 100, 105, 139, 146, 148—152, 183, 184, 186, 188, 191, 203, 207, 208, 219, 242
Սամուելյան Խ. 58, 70, 117, 163, 164, 169, 218, 224, 226, 248, 253
Սանուտուս Ս. 204, 277
Սարգիս Շնորհալի 117, 150, 221, 227—229, 239, 296
Սարգսյան Բ. 16, 252
Սեյս Ն. Ա. 139
Սենեքերիմ՝ թագավոր Վասպուրականի 142, 219

Սեստինի Դ. 17
Սելվեստր 26
Սիպիլյան Կ. 17
Սիրատան (Սիր Ադան) 68, 74, 81, 166, 177
Սմբատ՝ տեր Ասկուրասի 166
Սմբատ՝ սենեսկալ և պրոքսիմոս 76
Սմբատ սպարապետ՝ պատմիչ և Դատաստանագիրք կազմող 5, 9—11, 17, 18, 23—27, 31, 48—51, 53, 66—73, 76, 78, 79, 83, 84, 93, 97, 98, 101, 105, 107, 113, 121, 123, 125, 126, 128, 133—135, 146, 153, 158—160, 163—165, 169, 172—178, 181, 184, 187—202, 217, 218, 235—237, 240, 242, 258, 277—281, 289
Սմեյլ Ռ. Ս. անգլիացի պատմաբան 298
Սյուրմելյան Ա. 170
Սոհին Գուլկարտ՝ մարաջախտ Լևոն Զ-ի 66, 111
Ստաբլ Հ. Ս. 101
Ստեփանոս՝ երեց 38
Ստեփանոս իշխան՝ Կոստանդին Դ-ի թոռան որդի 37, 38
Սուքիասյան Ա. 100

Վահան՝ երեց 38
Վահրամ՝ տեր Կորիկոսի 176, 177
Վահրամ՝ մարաջախտ 66
Վահրամ Ռաբունի 15, 18, 20—22, 60, 71, 72, 92, 132, 149, 150, 153, 163, 179, 205, 206, 209, 290, 295, 296
Վահրամ՝ իշխան Տարսոնի 97
Վասիլ Գող՝ իշխանաց իշխան 41, 44, 152, 205, 249
Վասիլ՝ մարաջախտ 66
Վասիլ՝ մառանպան 87
Վարդան Այգեկցի 150, 151, 205, 221, 229, 235, 295
Վարդան Բարձրբերդցի 29, 249, 260
Վիլհամ՝ թարգման արքունական 173
Վիլլեբրանտ Օլդենբուրգցի 24, 56, 109, 114, 135, 173, 192, 194, 218, 220, 257, 260

Տաշյան Հ. 16, 42
Տեր-Ավետիսյան Ս. 89
Տեր-Ղազարյան Հ. 89
Տեր-Ղևոնդյան Ա. 44
Տիրացյան Ա. 32
Տրդատ՝ թագավոր 21
Տուրնեպիզ Ֆ. 13, 107

Ուիմազյան Հ. 169, 202, 212
Ուլիվեր՝ ջանբոլայ 118
Ումեկ 178, 275
Ուսամ Իբն Մանկիզ 149

Փավստոս Բուզանդ 81

Քյուրտյան Հ. 18

Օլիվեր՝ խաչակիր իշխան 167
Օշին Ա՝ իշխան 143
Օշին Բ Հեթումյան՝ իշխան 144
Օշին Գ Հեթումյան՝ իշխան 110, 144, 146
Օշին Բակուրյանց՝ սպասալար 113
Օշին՝ գունդստաբլ տեր Գանջիի 166
Օշին՝ թագադիր 62
Օշին՝ թագավոր 27, 122, 190, 191
Օշին՝ իշխան, հայր Ներսես Լամբրոնացու 89, 91, 211
Օշին՝ տեր Կապանի 166
Օշին՝ տեր Կոպիտառի 166
Օշին՝ տեր Կորիկոսի 171, 177, 178
Օշին՝ եղբայր Հեթում Ա-ի 157
Օշին՝ պայլ 44, 68
Օշին պարոն՝ որդի Սմբատի 113
Օշին՝ պրոքսիմոս 76
Օշին՝ սենեշալ 74, 113
Օշին՝ սպարապետ և մարեշալ 65, 66
Օստեր՝ տեր Ճկերի 166
Օտտո դը Տարարիան 176
Օրբելի Հ. 293
Օրմանյան Մ. 8, 52, 217, 259

Ֆենիա՝ դուստր Հեթում Ա-ի 121, 172
Ֆիլիպ՝ թագավոր 68, 189
Ֆրանսիսկոս Սիր՝ սենեշալ 74
Ֆրիդրիխ Բարբարոսա 31

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադանա 35, 36, 52, 83, 93, 142, 149, 150, 153, 166, 171, 173, 174, 198, 211, 214
Ալեքսանդրետ 189, 277
Ակներ կամ Ականց վանք 90, 174
Ամուտ (Ամուտա) բերդ (Ադամոնդա) 150, 173, 192, 194, 201
Այաս (Լայաս) նավահանգիստ 36, 67, 83, 125, 126, 133, 173, 175, 262—264, 270, 277, 286
Անազարբա (Անաբարզա, Անավարզա) 17, 83, 88, 149, 179, 205, 211, 257
Անգլիա 24, 38, 46, 51, 78, 113
Անդրկովկաս 178
Անթաթ (Այնթապ) 274
Անի 29, 139, 257
Անիի Բագրատունյաց թագավորություն 24, 220
Անտիոք 78, 188, 189, 191, 215, 261, 274
Անտիոքի իշխանություն (դքսություն) 25, 42, 118, 153, 191, 250
Առակլեա 249
Առաջավոր Ասիա 29
Առյուծ բերդ 64, 171
Ասիա 29, 39, 46, 134, 262, 275—277
Ասկուրաս բերդ 62, 66, 166, 170
Ասորիք 30, 33, 35, 54, 106, 220
Աստուս բերդ 64, 171
Ավստրիա 192
Արեգ (Արեգնի) վանք 90
Արևելք 277
Արևմուտք 275, 277
Արեկուին վանք 211
Արծն 257
Արշակունյաց Հայաստան 57, 58, 60, 68, 96, 169, 177, 285
Արսուֆի (Արզուֆ) սենյորություն 104
Արքակաղին վանք 90, 211
Աքրա 34
Աֆրիկա 29, 262

Բաղրաս բերդ 82, 166
Բարձրբերդ 211
Բեռլին 26
Բիզե 279
Բյուզանդիա 29, 30, 41, 95, 145, 170, 221
Բոնելլի նավահանգիստ 277

Գաղղիա 112
Գամրաց երկիր (Գամիրք) 220
Գանձակ 143
Գանջի բերդ (Կանչի) 166, 171
Գաստիմ կամ Գաստոն ամրոց (Կաստիմ) 153, 173, 176, 188, 191
Գոներ վանք (անապատ) 92, 174, 213, 239
Գուգլակ բերդ (Կուկլակ) 264

Դամասկոս 209
Դրազակ վանք 72, 90, 91, 93, 174, 211

Եգիպտոս 25, 33, 54, 98, 191, 249, 264, 276
Եդեսիա 185
Եդեսիայի խաչակիր իշխանություն 118
Ենգեկուտ 211
Եվրոպա 11, 12, 25, 29, 38, 46, 108, 131, 134, 276, 277
Երուսաղեմ 115, 165, 186—188
Երուսաղեմի խաչակիր թագավորություն 51, 103, 117, 124, 127, 164, 172, 192, 196, 202, 213, 298

Զաքարյան 169
Զաֆրա նավահանգիստ 277

Թավրիզ 176, 277
Թիւրքի ուխտ 87

Իկոնիա 110, 168
Իկոնյան սուլթանություն 33, 194, 249
Իսավրիա՝ (Սավրիա) նահանգ 82
Իտալիա 37, 196, 266
Իրան 178, 290

Լագոնիա՝ նահանգ բյուզանդական 140
Լամբրոն 55, 62, 75, 78, 143, 144, 146, 165, 168, 170, 189, 197, 199, 206, 241
Լամբրոնի Օշինյան-Հեթումյան իշխանություն 142—146, 206
Լարանդա բերդ 173
Լիբանան 301
Լիկոնիա կամ Ջահան՝ նահանգ բյուզանդական 140
Լևանտ 46, 301

Մովք 87, 206, 212

Կահիրե (Գահիրե) 24, 78, 261
Կամարտեզիում 188, 189, 194, 201
Կամարտիաս 170
Կանամելլա նավահանգիստ 173, 189, 277
Կապադովկիա 87, 95, 138, 140, 141, 152, 176, 203, 220
Կապան բերդ և քաղաք 166, 176, 211
Կատալոն 279
Կարին 257
Կառկառ բերդ 152
Կարս 29, 139, 257
Կարսի Բագրատունյաց թագավորություն 220
Կեսարիա 32
Կիլիկիա 5, 7, 8, 10, 11, 13, 15, 18, 22—25, 29—32, 64, 115—117, 120, 128, 131, 133, 135, 138, 142, 146—149, 155, 184, 188—193, 197, 199, 204, 219—229, 247, 249—252, 255—257, 264, 266—268, 270, 274—281, 291, 294
Կիլիկիա Դաշտային 150, 183, 265
Կիլիկիա Լեռնային (Քարային Կիլիկիա) 30, 183, 265
Կիլիկյան Հայաստան 9, 16, 37, 49, 57, 58, 68, 97, 124, 301
Կիլիկյան հայկական թագավորություն 8, 9, 12, 17, 23, 29, 30, 32, 33, 35, 39, 41, 45—47, 51—53, 56, 70, 78, 119, 132, 147, 163, 185, 189, 190, 197, 208
Կիլիկյան Հայկական պետություն 8, 9, 12, 13, 23, 29, 40, 80, 93, 95, 106, 115, 122, 132, 136, 137, 156, 157, 164, 183, 216, 222, 223, 248, 249, 256, 257, 266, 269, 290, 301
Կիպրիում՝ նավահանգիստ 277
Կիպրոս 37, 54, 115, 120, 157, 178, 187—188, 269, 277, 301
Կիպրոսի թագավորություն (Լուզինյան) 36, 168
Կյուդնոս 261
Կոլիմոզոլ բերդ 148
Կոպիտար (Կոպիտաս) բերդ 166, 211
Կորիկոս (Կորիկոս) 44, 65, 83, 92, 120, 156, 169, 171, 173, 175—177, 277
Կոստանդնուպոլիս 141, 142, 150
Կոսիտաս բերդ 148
Կուվելբա ամրոց 165, 180, 189

Հալեբ (Հալեպ) 204, 250, 274
Համուսա (Համուս) 166
Հայաստան 5, 56, 58, 61, 63, 70, 99, 117, 131, 137, 139, 163, 165, 169, 178, 202, 203, 220, 222, 268, 275, 291, 294, 296, 301
Հարոնիա՝ քաղաք և բերդ 173, 192, 194, 196, 200, 287
Հեռավոր Արևելք 32—33
Հեթումյան իշխանություն 30, 41, 170
Հինից բերդ (Տարսոնի մոտ) 215
Հոոդոս 37
Հռոմ 11, 78, 187, 188, 254

Հռոմկլա (Ռոմկլա) 34, 87, 154, 155, 209
Հովանի՝ ագարակ 241
Հունաստան 254

Ճկեր ամրոց 166, 170, 173, 189

Մաղրիտ 26
Մալթա 26
Մալո (Մալուս) նավահանգիստ 277
Մամբիճ 139
Մամեստիա (Մոպսուեստիա, Մսիս) 83, 133, 142, 149, 173, 189, 211, 215
Մանիոն բերդ 171
Մաշկևոր (Մաշկավոր) 89, 153, 206
Մարաշ 41, 211, 228, 250
Մարնիշ բերդ 62
Մարսել 277
Մեծ Հայք 209
Մեծքար ամրոց 170, 211
Մեծքար ուխտ 90, 211
Մերձավոր Արևելք 32, 115, 117, 125, 192, 263, 276, 277, 301
Մերսին, նավահանգիստ 277
Միլան 26
Միջագետք 30, 33, 87, 106, 140, 152, 184, 220
Մլճ վանք 211
Մլուն (Մոլևոն) 173, 211
Մոնպելիե 76, 276
Մոնղոլիա 290
Մսիս (Մամեստիա, Մոպսուեստիա) 111, 150, 152, 153, 189, 192, 198, 201
Մուռանդնի բերդ 64, 171

Նեապոլ 26, 78
Նիկրինիում բերդ 75
Նորբերդ 188, 189, 194
Նովգորոդ 193

Շուղր 87

Չինաստան 263

Պաղեստին 33, 35, 54, 301
Պամֆիլիա 220
Պապատուլի 64, 171
Պապեռոն (Պապիրոն) 64, 143, 171, 215
Պառլահոյ (ասորական վանք Պառլահու) 205
Պերտուս (Բերդուս) 211
Պիր 152
Պիրամիս 36
Պորտելլո (Պորտելլա) 176
Պրեստրե 112, 270

Ջենովա 25, 27, 50, 133, 134, 260, 276

Ռուբինյան իշխանություն 41, 142, 146, 150, 151, 153, 170, 183, 205, 221

Սասուն 152
Սարատա ամրոց 41
Սարվանդիկար (Սարվանդիքար) 27, 113, 165, 192, 201
Սեբաստիա 139, 219
Սելևկիա՝ բյուզանդական նահանգ 152, 173, 188—190, 194, 211, 286
Սիկ ամրոց 64, 171
Սիս 26, 34—38, 42, 52, 70, 71, 83, 91, 93, 97, 109, 110, 124, 129, 131, 133, 166, 171, 173, 174, 192, 209, 210, 214, 226, 249, 257, 258, 260, 270, 273, 276, 286, 290, 299—301
Սիրիա 9, 10, 12, 14, 22, 23, 25, 95, 118, 139, 149, 152, 184, 204, 220, 301
Սիրիայի խաչակիր պետություններ 49, 54, 183, 262
Սիցիլիա 10, 27, 276
Սկևռա վանք (Սկևռա) 90, 91, 143, 211, 212
Սմբատայ Կլայ բերդ 64, 171
Սպանիա 24

Վահկա՝ քաղաք և բերդ 148, 150
Վան 257
Վաներ ամրոց 173, 175, 197
Վասպուրական 29, 139, 219
Վատիկան 26, 35, 261
Վենետիկ 17, 18, 25, 133, 134, 276, 280
Վրաստան 5, 141

Տիրոջ գյուղ 213, 239
Տլուք 87, 139
Տրիպոլիի խաչակիր իշխանություն 118, 188, 191
Տուրին 26

Փարիզ 26, 273
Փիլիպե քաղաք 211
Փոքր Ասիա 9, 29, 42, 75, 87, 138, 141, 183
Փոքր Հայաստան 263, 290
Փոքր Հայք 30, 42, 52

Քեսուն 41, 44
Քյումպետֆորդ ամրոց 192

Ֆարխնոց բերդ (Ֆարխնի) 64, 171
Ֆլորենցիա 277, 279
Ֆրանկստան 37, 38
Ֆրանսիա 24, 37, 38, 46, 78, 134, 196, 266

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ներածություն 5

Ուսումնասիրվող հարցի պատմությունից 15

Աղբյուրների տեսություն . . . . . 13—31

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Համառոտ ակնարկ Կիլիկիայի հայկական պետության 12—14-րդ դդ. քաղաքական պատմության

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պետական կարգը

1. Քաղաքական և պետական կառուցվածքը 11—12-րդ դդ. . 40
2. Կիլիկյան հայկական թագավորության կազմավորումը. միապետական կարգի առանձնահատկությունները 45
3. Գործակալություններ 54
4. Տեղական կառավարումը 80
5. Հոգևորականների մասնակցությունը երկրի կառավարմանը . 84
6. Բանակը 95
7. Իրավունք, դատարաններ 116

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ֆեոդալական հողատիրությունը Կիլիկյան Հայկական պետությունում 11—14-րդ դարերում

1. Ֆեոդալական հողատիրության առաջացման և զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին 11—12-րդ դարերում . 136
2. Ֆեոդալական հողատիրության առանձնահատկությունները 13—14-րդ դարերում։ Հողի գերագույն սեփականատիրական իրավունքի հարցը 156
   ա. Արքունական հողատիրություն 163
   բ. Իշխանական խոշոր հողատիրություն 175
   գ. Պարգևական հողատիրություն 183
   դ. Վանքապատկան հողատիրություն 202

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Նահագործվող դասակարգերը, նրանց սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը 12—14-րդ դարերում

1. Հարցի ուսումնասիրման վիճակը 217
2. Գյուղացիության սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը 12—14-րդ դարերում 222
3. Ստրկություն. ստրուկների սոցիալ-իրավական վիճակը . . 248
4. Քաղաքներ. քաղաքային բնակչություն. արհեստավորներ. ռամիկներ 256
5. Աշխատավորության շահագործման, դասակարգային պայքարի ձևերի մի քանի առանձնահատկությունները 284

Ցանկեր 302

Ցանկ օգտագործած սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների . . 302

Անձնանունների ցանկ 308

Տեղանունների ցանկ 314

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԵՎԱՐԻ ԲՈՌՆԱԶՅԱՆ
САРГИС ВАРДЕВАРОВИЧ БОРНАЗЯН

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ XII—XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ
Հրատ. խմբագիրներ Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ
Կազմը՝ նկարիչ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 06078 Հրատ. 3567 ԽՀԽ 1250 Պատվեր 203 Տպաքանակ 3000
Հանձնված է արտադրության 17/VI 1971 թ., ստորագրված է տպագրության 9/II 1973 թ., տպագր. 20,0 մամուլ, հրատ. 17,2 մամուլ։ Թուղթ № 1, 60×901/16։ Գինը 1 ռ. 96 կ.։
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության, 24